
Ա. ՎԱՍԻԼԵՎ

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԸ ՓՈԹՈՐԿԻ ԷՄԻԿԵԼՏՐՈՒԼՈՒՄ



9(55)
Վ-26

Ա. ՎԱՍԻԼԵՎ

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԸ ՓՈԹՈՐԿԻ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՒՄ

2 922

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1986

66. 4 (08)
Վ 262

Ռուս. թարգմ. Լ. Հ. ՄԿՐՏՉՅԱՆԸ

Ա. Մ. Վասիլև

Վ 262 Պարսից ծոցը փոթորիկի էպիկենտրոնում ռուս. թարգմ. Լ. Հ. Մկրտչյանը.— Եր.։ Հայաստան, 1986,— 360 էջ։

Գիտնական-արևելագետ և ժուռնալիստ Ա. Մ. Վասիլևն իր գրքում մանրամասն պատմում է Պարսից ծոցի գոտում տիրող իրադրության մասին. քննարկում է Արաբական թերակղզու երկրների իրադարձությունների զարգացումը, Իրանում շահի վարչակարգի տապալման նշանակությունը, նավթի և համաշխարհային քաղաքականության պրոբլեմների փոխադարձ կապը։ Մեծ ուշադրություն է դարձնում ԱՄՆ-ի կուրսի վերլուծությանը, որն ուղղված է Պարսից ծոցի գոտում հումքային պաշարների կողոպտմանը, այն բանին, որպեսզի այնտեղ հաստատի իր ռազմական ներկայությունը։

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար, որոնք հետաքրքրվում են ժամանակակից միջազգային դրությամբ։

0804000000
Վ ——————— 91. 86
701 (01) 86

66.4(08)

© Издательство Политической литературы, 1983
© Թարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1986

Դեռևս XX դարի սկզբին Պարսից ծոցի ափը իր տեսքով գրեթե նույնն էր, ինչպես մեր թվականությունից առաջ IV հարյուրամյակում նկարագրել է հույն պատմաբանը, որը Հնդկաստանից ճանապարհորդել է Ալեքսանդր Մակեդոնացու ծովակալ Նեարխի հետ։ Ավազոտ անապատներ և քարքարոտ սարահարթեր, ավազով կիսածածկված օազիսներ, հազվադեպ հանդիպող ուղտերով ու այծերով քոչվորներ, առագաստանավերով ճանապարհորդող ծովայիններ կամ մարգարիտ որոնողներ։ Կյանքը դանդաղ ընթանում էր կավաշեն գյուղերի տափակ տանիքների և քոչվորների՝ այծի մազից հյուսած սև վրանների տակ։

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուղտերի հեծելազորից բաղկացած երկու բանակների պայքարը օսմանյան պետության վասալ արաբական իշխանության տիրակալ Ջեբել-Շամարի և այն ժամանակ Անգլիայի դաշնակից, Սաուդյան Արաբիայի միջուկը դարձած մի այլ իշխանության էմիրի՝ էր-Ռիյադի միջև, հիշեցնում էր մինչիսլամական ժամանակների ճակատամարտերը։ Շամարների ցեղի ամենագեղեցիկ և աղնվազարմ աղջիկները հերթարձակ բազմում էին ուղտերի վրա և ճիչերով, ինչպես վաղմիջնադարյան Արաբիայի քուրմ-գուշակուհիները, ցեղակիցներին ոգեշնչում էին մարտերում։

Ջորս-հինգ տասնամյակ առաջ Կենտրոնական Արաբիայի բնակիչները անիվներ չէին օգտագործում։ Ճիշտ չէր լինի ասել, թե նրանք «չգիտեին, ինչ բան է անիվը», սակայն նրա բացակայությունը բավականաչափ ճիշտ էր բնութագրում այդ շրջանի արտադրական ուժերի զարգացման մակարդակը։

40-ական թվականներին Քուվեյթի շեյխը հրաժարվեց սառնարան գնել։ «Շա՞տ լավն է, բայց չափազանց թանկ է»,— իբր թե ասել է նա։ Հնարավոր է, որ դա զրույց է, առասպել, սակայն կարող էր և եղելություն լինել։

Դեռևս 60-ական թվականներին Հիջազի ստրկավաճառները, ինչպես անասուն, շուկաներում ցուցադրում էին «կենդանի ապ-

բանք»՝ աֆրիկացի պատանիներին ու աղջիկներին, որոնց հափշտակում էին իրենց հայրենիքում կամ խաբեությամբ առևանգում ուխտագնացության ժամանակ։

Ներկայումս Պարսից ծոցի ափերին երևան են գալիս ժամանակակից նավթահանության, նավթավերամշակման, քիմիական, ալյումինի, պողպատաձուլական ձեռնարկություններ, նորագույն նավահանգիստներ, օդանավակայաններ, քաղաքներ՝ համալսարաններով, ջրաթորման գործարաններով, սուպերմարկետներով։ Անապատներում ծաղկում են ավտոուղիների հանգույցների պսակաթերթերը։

Ծոցի ավազանում ընկած են ոչ սոցիալիստական երկրների հայտնաբերած նավթի պաշարների երկու երրորդը, իսկ նրա հանույթը ժամանակ առ ժամանակ տարեկան հասնում է մինչև մեկ միլիարդ տոննայի։ Նրա կանոնավոր մատակարարումներից է կախված Արևմտյան Եվրոպայի երկրների, Ճապոնիայի և այլ պետությունների էկոնոմիկայի նորմալ գործունեությունը։ Այստեղ գործում են կապիտալիստական աշխարհում ամենահզոր նավթային (էներգետիկ) կորպորացիաները, որոնք հայտնի են «յոթ քույրեր» անունով։ Դրանցից հինգը ամերիկյան են. «Էքսոն» (նախկին «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսի»), «Սթանդարդ օյլ օֆ Կալիֆոռնիա» («Սոկալ»), «Գալֆ օյլ», «Թեքսակո», «Մոբիլ օյլ», մեկը՝ անգլո-հոլանդական («Ռոյալ դաթչ-Շելլ»), մեկն էլ անգլիական («Բրիթիշ փեթրոլեում»)։ Պարսից ծոցի գոտին դարձավ երկու էներգետիկ ճգնաժամերի էպիկենտրոնը, որոնք 70-ական թվականներին ցնցեցին ոչ սոցիալիստական աշխարհը։

Նավթային միապետների եկամուտներն այնքան շատ են, որ նրանք դարձել են մուլտիմիլիարդատերեր, իսկ նրանց անձնական կարողությունը գերազանցում է Արևմուտքի ֆինանսական մագնատների հարստությանը։ Նավթային պետությունները դարձել են կապիտալի աշխարհի ամենախոշոր արտահանողները, իսկ նրանց կառավարողները միավորվել են միջազգային ֆինանսական օլիգարխիայում։ Սակայն, ասես «Հազար ու մի գիշեր» հեքիաթներից դուրս եկած պալատների կողքին, ժանգոտ երկաթից և հին արկղերից պատրաստված, ներգաղթներով լեփ-լեցուն խղճուկ հյուղակներ են։ Ավազոտ օազիսներում դաշտերը մշակվում են բրիչներով, իսկ քոչվորները, ինչպես առաջներում, ուղտեր ու այծեր են արածեցնում։

Մեր ժամանակներում Իրանի և Իրաքի միջև տեղի ունեցած

ռազմական գործողությունների ժամանակ գործադրվում են հարյուրավոր ինքնաթիռներ, հազարավոր տանկեր, հրթիռներ, հրանոթներ։

Արաբիայի վերևում պարեկություն են անում ԱՄՆ-ի ռազմական արդյունաբերության գիտատեխնիկական մտքի թանձրությամբ՝ էլեկտրոնային, հաշվիչ-լուծող սարքերով հագեցած, ամերիկացիների կողմից ղեկավարվող ԱՎԱԿՍ տիպի «թռչող ռադարները»։ Նրանք միացած են հրամանատարական, կապի և հսկողության ցամաքային կետերի հետ, օդանավակայանների և հրթիռային բազաների հետ, իսկ արբանյակների միջոցով՝ ԱՄՆ-ի շտաբների հետ, որտեղ պենտագոնյան հերթապահ գեներալներին դիսփլեյով հաղորդվում է փոփոխվող իրադրությունը։

Պարսից ծոցի գոտին գլխապտույտ արագ և հիվանդագին փոփոխությունների է ենթարկվում։

Տարբեր պատմական դարաշրջաններին պատկանող մարդիկ, առարկաներ, աշխատանքի գործիքներ, տնտեսական և սոցիալական հարաբերություններ, գաղափարախոսություններ գոյություն ունեն միասին, միաժամանակ, ընդհարվելով, խորտակվելով, կերպարանափոխվելով։ Պարսից ծոցի ավազանի երկրները ծանրաբեռնված են տարբեր բնույթի, ուժի և խորության տարաձայնություններով՝ և այնպիսիները, որոնք հազարամյա արմատներ ունեն, և այնպիսիները, որոնք բառացիորեն ծագել են վերջին տարիներին։ Նրանցում ներգրավված են գլխավոր իմպերիալիստական տերությունները և տեղական տոհմացեղային խմբավորումները, հետախուզական ծառայությունները և գաղտնի կրոնական համայնքները, տեղական միապետներն ու դիկտատորները, Արևմուտքի պետական գործիչները։

Որոշ երկրներում ազգային ազատագրության գաղափարները վերաճել են սոցիալիստական կողմնորոշման ձգտման, իսկ մյուս երկրներում՝ սոցիալ-քաղաքական շարժումներն օգտագործում են կրոնական, մուսուլմանական տարազներ, դեպի «ճշմարիտ իսլամին» վերադառնալու լոզունգներ։

Խորտակվում են կայսրություններ և թագավորություններ, տանջանքների ու ցավերի մեջ ծնվում են հանրապետություններ, թևակոխելով նոր սոցիալ-քաղաքական կարգերի որոնման դժվարին ուղին։

Իրադարձություններն այստեղ գրավում են բոլոր մայրցամաքների սևեռուն և մշտապես աճող ուշադրությունը, ուղղակի

համ անուղղակի ազդեցություն են գործում Արևմուտքի խոշոր-ագույն պետությունների տնտեսական զարգացման տեմպերի վրա, նրանց վճարման հաշվեկշռի և ինֆլյացիայի մակարդակի վրա, որոշ զարգացող երկրների վարչակարգերի կայունության վրա։

Արևմուտքը, սկզբում հանձին Մեծ Բրիտանիայի, այնուհետև՝ ԱՄՆ-ի, Պարսից ծոցի ավազանը տասնյակ տարիներ շարունակ համարում էր իր արգելոցը։ Նրա նշանակությունն այնքան մեծացավ, որ Վաշինգտոնում ամբողջ Մերձավոր և Միջին արևելքը հայտարարեցին «երրորդ կենտրոնական ստրատեգիական գոտի» Արևմտյան Եվրոպայի և Հեռավոր արևելքի հետ միասին։ Իսկ 1983 թվականի հունվարի սկզբներին ստեղծեցին հատուկ «կենտրոնական հրամանատարություն», որի գործողության ոլորտում ներառված է 19 երկիր հյուսիսում, Իրանից ու Աֆղանստանից սկսած մինչև Քենիան հարավում, Ամերիկյան «արագ ծավալման ուժերը» ստացան ռազմաշտաբային վերնաշենք և հստակորեն գրված նպատակ՝ պատրաստ լինել միջամտելու Ծոցի գոտուն։

Ամբողջ լայնատարած ռեգիոնը,— կենտրոնում Պարսից ծոցը,— որ գտնվում է երեք մայրցամաքների սահմանագծում, ըստ Պենտագոնի գլոբալ ծրագրերի պետք է վերածվի հակասովետական պլացդարմի։ Բնական է, որ Սովետական Միությունը չի կարող անտարբեր մնալ անմիջապես իր սահմաններից դեպի հարավ ընկած երկրներում կատարվող իրադարձությունների նկատմամբ։

Այսպիսով, մեր առջև Պարսից ծոցի գոտու դրության հետ կապված խնդրի ամուր կծիկ է դրված։ Փորձենք, եթե չքանդենք այն, ապա գոնե գտնենք նրա հիմնական թելերը։

1

«ՅՈՒՔ ՋՈՒՅՐԵՐԸ» ՕՊԵԿ-Ի ԴԵՄ

Միջազգային նավթային մոնոպոլիաներ

1859 թվականին ամերիկացի ֆերմերի որդի Գնդապետ մականունով մեխանիկ էդվին Դրեյքը Պենսիլվանիայում փացեց 23 մետր խորությամբ առաջին նավթահորը և հեղուկ վառելիք արդյունահանեց։ 1870 թվականին նրա համաշխարհային արտադրությունը կազմում էր մոտ 800 հազար տոննա, իսկ մեր դարի 80-ական թվականների սահմանագծում այն տարեկան հասավ շուրջ 3 միլիարդ տոննայի։

Նավթի գործածությունն սկսվեց կերոսինի լամպերի հայտնագործման շնորհիվ։ Կերոսինի առևտրով աճեց ամերիկյան «քույրերի» մեծամասնության նախամայրը՝ Ռոկֆելլերի հիմնադրած «Սթանդարդ օյլը»։ XX դարի առաջին տասնամյակում ռազմական, իսկ այնուհետև առևտրական նավատորմը իր հնոցներում սկսեց մազութ վառել։ Ներքին այրման շարժիչը նավթի գործում հեղափոխություն առաջ բերեց և բենզինի պահանջ առաջացրեց։ Հիմա բենզին են կլանում հարյուր միլիոնավոր շարժիչներ։ Առանց նավթամթերքի չի կարող յոլա գնալ ռազմական տեխնիկան՝ տանկերը, ինքնագնաց սարքավորումները, ինքնաթիռները, նավերը։ Մյուս վառելիքների համեմատությամբ նավթը շատ առավելություններ ունի. նրա ջերմատվությունը մեկուկես անգամ ավելի բարձր է, քան քարածխի ամենալավ տեսակներինը, հանույթի ինքնարժեքը ցածր է, փոխադրումը հեշտ ու էժան։ Նավթը, որպես հիմնական վառելիք, փոխարինեց ջերմաէլեկտրակայանների քարածխին։ Նավթից ստացվող քսու-

քային և տեխնիկական յուղերը բոլոր տեսակի մեխանիզմների համար շատ անհրաժեշտ նյութ են։ Քիմիական արդյունաբերության, տասնյակ հազարավոր նյութերի արտադրության համար՝ սկսած օճառից ու օծանելիքից մինչև ներկանյութերն ու պլաստմասսան, պայթուցիկ նյութերից մինչև կաուչուկը, սինթետիկ գործվածքներից մինչև պարարտանյութերը, դեղանյութերից մինչև արհեստական սպիտակուցը, գլխավոր հումքը նավթն ու գազն են։

Դարասկզբին «Սթանդարդ օյլը» ընկավ ԱՄՆ-ի հակատրեստային օրենսդրության տակ և բաժանվեց իրավաբանորեն անկախ երեք տասնյակ ընկերությունների, մնալով Ռոկֆելլերի տիրապետության կազմում։ Նրանցից գլխավորը ռոկֆելլերյան «քույրերն» են. «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսի» (այժմ «էքսոն»), «Մոբիլ օյլ» և «Սթանդարդ օյլ օֆ Կալիֆոռնիան»։ Ավելի ուշ ԱՄՆ-ում հայտնվեցին և աճեցին Մելլոնների «Գալֆ օյլը» և «Թեքսակոն», որոնցում կա և՛ Մորգանների, և՛ Ռոկֆելլերների կապիտալը։

XIX և XX դարերի սահմանագծում Սումատրայում անգլիական «Շել» ընկերությունը և հոլանդական «Ռոյալ դաֆչը» կընքեցին «հաշվով ամուսնություն», ծնունդ տալով վեցերորդ նավթային «քրոջը»՝ «Ռոյալ դաֆչ-Շելլին»։ Նորածնի կնքավազանի կողքին կանգնած էր հոլանդացի Հենրի Դետերդինգը, որը ղեկավարեց նույն ընկերության պրեզիդենտի պաշտոնը։ Նա ընդունեց անգլիական հպատակություն և հետագայում կարողացավ իր անվանը ավելացնել «սըր» նախածանցը։

«Բրիթիշ փեթրոլեում» յոթերորդ մոնոպոլիան ստեղծվեց անմիջապես Պարսից ծոցի գոտում, ուստի նրա պատմությանն արժե ավելի մանրամասն անդրադառնալ։

«Պարսից անապատի կիզիչ արևից չորացած, կնճռապատ դեմքով, տանջված, սակայն դեռևս աստծո և իր գաղափարի հանդեպ հավատով լի, ավելի ու ավելի հաճախ ծնրադրելով խաչի առջև, Դը Արսին շարունակում էր որոնումները»։ Նավթարդյունաբերության պատմության գծով արևմտյան պաշտոնական աղբյուրներից մեկը այսպես է զուսպ հեծկլտոցով պատմում այն մարդու արարքների ու սխրագործությունների մասին, որը իբրև թե «Պարսից ծոցի նավթի հայրն» է եղել։

Իրականում հարուստ գործամոլ Դը Արսին միայն մի անգամ է եղել Թեհրանում։ Կասկածելի է նույնիսկ, որ նա թեկուզև մեկ տակառ նավթ տեսած լինի, և եթե աղոթել է որևէ բանի, ապա՝ միայն ոսկե հորթին։

Դը Արսին առաջիններից մեկը հասկացավ, որ նոր դարը պետք է լողա մազութի ալիքների մեջ, և դա նրան հնարավորություն տվեց ձեռնարկել մի գործ, որն իսկապես նավթային տենդի բացիլները տեղափոխեց Պարսից ծոց։ Սրա համեմատությամբ անցյալ դարի Կալիֆոռնիայի, Ալյասկայի, Ավստրալիայի ոսկու տենդերը թեթև մրսածություն են թվում։

1901 թվականին Դը Արսին Իրանի շահից կոնցեսիա ձեռք բերեց։ Այն տարածությունը, որ նա ստացավ, գերազանցում էր Անգլիայի և Ֆրանսիայի տերիտորիաները միասին վերցրած։ Կոնցեսիոները պետք է անմիջապես իրանական կառավարությանն առձեռն վճարեր 20 հազար ֆունտ ստեռլինգ, իսկ այնուհետև՝ տարեկան տար շահույթի 16 տոկոսը։ Հիշենք այս թվերը, որպեսզի լավ զգանք, թե ինչպիսի ուևանշ կվերցնեն յոթանասուն տարի հետո նավթային երկրների կառավարությունները։

Առաջին նավթահորն անհաջող դուրս եկավ. նավթը գտան, սակայն երկու ամիս հետո այն ցամաքեց։ Ինժեներ Ռեյնոլդսը, ամրակազմ և համառ մի մարդ, սկսեց հորատել մի այլ տեղ։ Ծախսերն աճում էին, Դը Արսին արդեն կորցրեց համբերությունն ու հույսը, ստիպված եղավ բանկում գրավ դնել իր ոսկու հանքերի բաժնետոմսերը և բանակցություններ սկսեց կոնցեսիաները անգլիական «Բիրմա օյլ» ընկերությանը հանձնելու համար։

1908 թվականն էր։ Դեռևս նավթ չկար։ Սինդիկատի անդամները, որոնց Դը Արսին վաճառել էր բաժնետոմսերի հսկիչ ծրարը, Լոնդոնում հանդիպեցին, որպեսզի քննարկեն մոտալուտ հեռանկարները։ Նրանք որոշեցին, որ ժամանակն է վերջ դնել դրամ ծախսելուն։ Թեև Մեսջեդե Սոլեյմանի շրջանում (Սողոմոնի տաճար) հենց նոր նավթահոր էին բացել, Լոնդոնից հեռագիր ուղարկեցին Ռեյնոլդսին՝ որոնումները դադարեցնելու և սարքավորումները ապամոնտաժելու կարգադրությամբ։ Հեռագիրը ուղտով բերեցին Բաղդադից։ Ռեյնոլդսը չհնթարկվեց և շարունակեց գործել իր պատասխանատվությամբ։ 1908 թվականի մայիսին Մեսջեդե Սոլեյմանի շրջանում նավթի շատրվան խփեց՝ առաջինը Ծոցի գոտում։

Հարգանքով և երախտագիտությամբ հիշենք փառապանծ ու

անհայտ այն երկրաբաններին, ինժեներներին, բանվորներին, որոնք ավազե փոթորիկի ու վտանգների, ցրտի ու տապի, հիվանդության ու անհայտության միջով անապատներում նավթ էին փնտրում: Նրանց աշխատանքը սխրագործություն էր հանուն մարդկության տեխնիկական առաջընթացի: Նրանք պատասխանատու չեն այն բանի համար, թե նրանց աշխատանքը կամ հայտնագործությունն ինչպես են օգտագործել իմպերիալիստական կոնցեսիաների ժամանակներում:

1909 թվականին կազմակերպվեց անգլո-պարսկական նավթային ընկերությունը (ԱՊՆԸ), որտեղ «Բիրմա օյլը» դարձավ գլխավոր պարտնյորը՝ Դը Արսիի խմբին վճարելով մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ: Այնուհետև ԱՊՆԸ-ն անգլիական թագավորական նավատորմին վառելիք մատակարարելու պայմանագիր կնքեց: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ծովակալ Ֆիշերի և նրա մտերիմ ընկեր Ուինստոն Չերչիլի պընդմամբ, որն այն ժամանակ զբաղեցնում էր ծովակալության առաջին լորդի պաշտոնը, անգլիական կառավարությունը հսկողություն սահմանեց ԱՊՆԸ-ի վրա, գնելով բաժնետոմսերի 51 տոկոսը: Ծնվեց նավթային մի ընկերություն, որը հետագայում կոչվեց անգլո-իրանական (ԱԻՆԸ), իսկ հետո վերանվանվեց «Բրիթիշ փեթրոլեում»:

Տակավին մոլեգնում էին կրքերը իրանական նավթի շուրջը, երբ սկսվեց պայքարը կոնցեսիաների համար այն ժամանակ օսմանյան տերության մի մասը կազմող Վերին Միջագետքի՝ արևից շիկացած հարթավայրերում: Պայքարը գնում էր Բարձր Դռան բյուրոկրատական գրասենյակներում, Ստամբուլի Բերայի շրջանի բանսարկու-լևանտացիների սալոններում, Անգլիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի դիվանագիտական նստավայրերում: Միջագետքի կոնցեսիան կապված է Գալուստ Գյուլբենկյանի անվան հետ: Մի անգամ նա այցելեց Բաքվի իր հեռավոր ազգական Մանթաշևի հանքերը, և նրան գրավեց կարողություն կուտակելու միտքը: Նա արտասահմանյան ընկերությունների համար անփոխարինելի գործակալ էր, որովհետև ոչ միայն գիտեր սուլթանական պալատների և մինիստրությունների բոլոր ելումուտները, այլև լավ էր պատկերացնում, թե ում, ինչպես և որքանով կարելի է գնել: Անգլիացիները Գյուլբենկյանին դիմեցին այն ժամանակ, երբ ամերիկացիներին հաջողվեց առաջինը ստանալ կոնցեսիան: Գյուլբենկյանը հասավ այն բանին, որ կարողացավ ամերիկացիների համաձայնագիրը քանդել և կոնցեսիան հանձնել նրա մրցակիցների ձեռքը: Մի անգամ նա ասաց. «Նավթի բիզնեսմենները նման են կատվի, նրանց մլավոցից երբեք չես հասկանա՝ կռվո՞ւմ են նրանք, թե սիրում միմյանց»: Ինչ վերաբերում է իրեն, ապա նա միշտ կռվել է, և բոլորովին էլ ոչ դասական կանոններով: Պատերազմի նախօրեին ԱՊՆԸ-ն իր համար ապահովել էր ապագա ընկերության բաժնետոմսերի կեսը, «Ռոյալ դաթչ-Շելլը»՝ քառորդը, իսկ գերմանական խումբը՝ Միջագետքի նավթի ևս մեկ հավակնորդը, վերջին քառորդը: Անգլիական ընկերություններից յուրաքանչյուրն իր բաժնետոմսերից Գյուլբենկյանի «ծառայությունների» համար առանձնացրել էր 2,5 տոկոսը, և նա այսուհետև հայտնի դարձավ որպես «միստեր 5 տոկոս»:

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտությունը պայքարից դուրս մղեց գերմանական կապիտալը: Իրաքը իր նավթային հանքավայրերով դրվեց անգլիական խնամակալության տակ: Կոնցեսիայի գերմանական բաժինը հանձնեցին Ֆրանսիային՝ Մոսուլի վիլայեթի հավակնությունից հրաժարվելու և Ֆրանսիայի ենթամանդատային տերիտորիայի՝ Սիրիայի միջով նավթամուղ կառուցելու համար համաձայնություն տալու փոխարեն:

Այն ժամանակ գտնում էին կամ ձևացնում, իբրև թե ԱՄՆ-ում նավթի պաշարները ուր որ է վերջանալու վրա են, և այդ պատճառով է, որ ամերիկյան «քույրերը» նետվել են արտաքին շուկա: ԱՄՆ-ի սահմաններից դուրս բոլոր համեղ պատառները իբրև թե արդեն հափշտակել են անգլիացիները: 1919 թվականին անգլիացի բանկիր Էդգար Պաքեյը, գնահատելով Անգլիայի և ԱՄՆ-ի ուժերի հարաբերակցությունը, ամբարտավանորեն ասում էր. «Անգլիացիների դրությունը անխոցելի է: Բոլոր հայտնի նավթաղբյուրները, ԱՄՆ-ի սահմաններից դուրս բոլոր հնարավոր հանքավայրերը կա՛մ գտնվում են անգլիացիների ձեռքում, կա՛մ էնթակա են անգլիական կառավարմանն ու հսկողությանը, կա՛մ ֆինանսավորվում են անգլիական կապիտալով»: Ամերիկացիները գործողության մեջ դրեցին ծանր հրետանին՝ սեփական կառավարությունը: Հետևեց բարկացած նոտաների փոխանակումը Տորին օֆիսի և պետական դեպարտամենտի միջև: Բայց միայն 1928 թվականին, երբ արդեն Բաբա-Գուրգուրի հանքավայրում նավթի շատրվան խփեց, ընկերությունում, որը կոչվեց

«Իրաք փեթրոլեում», մշակվեց բաժնետոմսերի բաժանման սկզբունքը: 23,75 տոկոս ստացավ ԱԻՆՀ-ն, նույնքան էլ, «Ռոյալ դաթչ-Շելլը», «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլը» և ամերիկյան երկու ընկերություն միասին՝ «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսիին» և «Մոբիլ օյլը»: Գյուլբենկյանը պահպանեց իր 5 տոկոսը:

Մեծ ծախսերի հետ կապված պայքարից հոգնած՝ նավթային բիզնեսի մագնատները որոշեցին համաձայնության գալ միմյանց հետ: Նավթի գործերով վետերան Հենրի Դետերդինգը 1928 թվականին Շոտլանդիայում վարձակալել էր «էչնաքերրի» արիստոկրատական ամրոցը: Աշնանային մի օր «Ռոյալ դաթչ-Շելլիի» հիմնադիրն ու պրեզիդենտը «ընկերներին» հրավիրեց սպիտակ կաքավի որսի: Շուտով նրա մոտ ժամանեցին Ուոլտեր Թիգլը՝ «Ջերսիի» ղեկավարը, և ԱԻՆՀ-ի պրեզիդենտ Ջոն Քեդմենը: Նրանք որս անելու մեծ ցանկություն չցուցաբերեցին: Որսորդական հագուստներով նստել էին բոցկլտացող բուխարիկի առջև, հետաքրքրասերների աչքից ու ականջից պաշտպանված ամրոցի հաստ պատերով, և մշակում էին մի համաձայնագիր, որը դեռևս անհայտ էր կապիտալիստական արդյունաբերության պատմությանը: Երբ երեք «որսորդները» հեռացան ամրոցից, նավթային բիզնեսի գրքում նոր գլուխ սկսվեց: Նրանք պայմանավորվեցին գործել համատեղ: Հետագայում նրանց միացան «քույրերը»: Այսպես ծնվեց միջազգային նավթային կարտելը (համաձայնագիրը):

«Որսորդները» սահմանեցին աղբեցության ոլորտի բաշխման սկզբունքը ամբողջ աշխարհում, պայմանավորվեցին շահագործման համար միմյանց ներկայացնել նավթահանույթյան, վերամշակման և այլ ձեռնարկություններ՝ ինքնարժեքի վճարումով: Տարբեր համամասնություններով նրանք մասնակցում են հարյուրավոր ընկերություններում, շատ դեպքերում օգտվում մեկը մյուսի փոխադրամիջոցներից և առևտրի ցանցից: «Յոթ քույրերը» հանդես են գալիս որպես մեկ կազմակերպություն, եթե պետք է թշնամու դիմադրությունը կոտրել, լինեն դրանք մրցակիցներ, ամբողջ երկրներ կամ ժողովուրդներ, պահպանել բարձր գները, թալանել սպառողին:

Միջազգային նավթային կարտելի մասնակիցները Մերձավոր և Միջին արևելքում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում և Հարավարևելյան Ասիայում կոնցեսիայով կամ վարձակալությամբ ստացան մի քանի միլիոն քառակուսի կիլոմետր

տարածություն: «Յոթ քույրերը» արմատավորվեցին նավթ արտադրող և սպառող երկրների միջև, իր ժամանակին գրեթե ամբողջությամբ խլելով նավթի միջազգային կապիտալիստական շուկայի մենաշնորհը: Նրանք վերահսկում էին նավթի պաշարների և հանույթի մեծ մասը, նրա վերամշակման նշանակալից մասը և կապիտալիստական երկրների տանկերային նավատորմիղը:

Նույնիսկ ֆինանսական հսկաները, «աչքի ընկնող» միլիարդատերերը, ստիպված էին թանկ վճարել, եթե համարձակվում էին «յոթ քույրերին» մարտահրավեր նետել: Ահա մեկ միջադեպ... 50-ական թվականների կեսերին Սաուդ թագավորը որոշեց հույն մուլտիմիլիոնատեր Օնասիսին (որը հետագայում ամուսնացավ Ամերիկայի պրեզիդենտ Քեննեդիի այրու հետ) բացառիկ իրավունքներ տալ Սաուդյան Արաբիայից նավթի տեղափոխման համար: Սաուդյան չինովնիկները կաշառք էին ստացել և օգնել Օնանիսին: Սակայն միջազգային ընկերությունները ամբողջ աշխարհով մեկ առևտրական պատերազմ սկսեցին հույն բիզնեսմենի նկատմամբ, հանգիստ, սակայն ուժեղ բոյկոտ կազմակերպելով նրա նավերի դեմ, և ստիպեցին Օնասիսին անձնատուր լինել: «Ես կառանված շատ նավեր ունեի, բայց չէի կարողանում մարդիկ գտնել, որ բեռը փոխադրեին»,— շատ տարիներ հետո կգրի նա և իր գործարարական կարիերայում այդ պահը կգնահատի որպես ամենավատանգավորը:

ԱՄՆ-ի սահմաններից դուրս «յոթ քույրերը» մինչև 60-ական թվականները հսկում էին նավթի անցման ամբողջ ուղին՝ նավթի աշտարակից սկսած մինչև բենզակայան, ունեին հարյուրավոր դուստր ու թոռ ընկերություններ կապիտալիստական աշխարհի համարյա բոլոր երկրներում:

Ներկայումս զարգացող երկրներում կորցնելով հսկողությունը կոնցեսիաների և նավթի հանույթի մեծ մասի վրա, նավթի կորպորացիաները դուստր ընկերությունների միջոցով ղբաղվում են նավթի տեղափոխությամբ, վաճառքով կամ վերամշակմամբ: Այսպիսով, կարտելը հարկ է հավաքում գրեթե ողջ կապիտալիստական աշխարհի արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից և անհատ սպառողներից:

Նավթից ստացված վիթխարի եկամուտները «յոթ քույրերին» թույլ տվեցին թափանցել էկոնոմիկայի տարբեր ոլորտները, սերտ կապ հաստատել բանկերի հետ: Նրանք դարձան

ամենահզոր ֆինանսական կայսրությունների միջոցը, որոնք ընդգրկում են ապահովագրական ընկերությունները, քիմիական, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային, ավիացիոն, հրթիռատիեզերային և ատոմային արդյունաբերության խոշորագույն ֆիրմաները, ուժեղ դիրքեր են գրավում մետալուրգիայի, թղթի, անտառային և շաքարի արդյունաբերությունում, իշխում են երկաթուղիների, քարածխի հանքավայրերի, ավիաընկերությունների և ուրիշ ձեռնարկությունների վրա։

1980 թվականի օգոստոսին «Ֆորչյուն» հանդեսում հրապարակված կապիտալիստական աշխարհի 500 խոշորագույն ընկերությունների ցուցակի վերին մասը կարծես իրենից ներկայացնում է խոշորագույն նավթային կորպորացիաների ցանկը։ Առաջին չորսից երեք և առաջին տասից յոթ տեղերը զբաղեցնում են նավթային ֆիրմաները։

ԱՄՆ-ի սահմաններից դուրս գտնվող խոշորագույն ընկերությունների ցուցակում, որ կազմել էր «Ֆորչյուն» հանդեսը, գների աճով առաջ անցած նավթային արդյունաբերությունը գլխավորում էր արդյունաբերության մնացած բոլոր ճյուղերը՝ վաճառքի միջին աճով։ Այդպիսի թռիչքի շնորհիվ նավթային շատ կորպորացիաներ բարձրացան այդ ցուցակի վերին մասը։

«Ռոյալ դաթչ-Շելլը» իր թագավորության 24-րդ տարին թեվակոխեց որպես ԱՄՆ-ի սահմաններից դուրս գտնվող համար առաջին ընկերություն։

Հետևյալ տեղում, երկրորդ տարին անընդմեջ, «Բրիթիշ փեթրոլեումն» էր։ Նավթային մյուս ընկերությունները դրսևորեցին դեպի վեր շարժվելու մեծ ձգտում։ Իտալական էնի կառավարական ընկերությունը 10-րդ տեղից բարձրացավ 4-րդը, իսկ «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլը» 11-րդից՝ 6-րդը։ Ամենամեծ թռիչքը կատարեց «Բրիթիշ նեշընլ օյլը»։ Հյուսիսային ծովում նավթի հանույթի շնորհիվ նա 375-րդ տեղից անցավ 43-րդը։

70-ական թվականների վերջում 500 կորպորացիաներից ամենախոշոր մաքուր եկամուտները ունեին հինգ նավթային ընկերություն՝ «Ռոյալ դաթչ-Շելլը», «Բրիթիշ փեթրոլեումը», «Փեթրոլեում դե Վենեսուելան», «Էլֆ Ակիտենը» և «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլը»։ Այդ հինգ ընկերություններին բաժին էր ընկնում բոլոր 500 ֆիրմաների ընդհանուր շահույթի 32 տոկոսը։

Հաջորդ, 1981 թվականին ամերիկյան «Ֆորչյուն» հանդեսը

մայիսի 4-ի համարում տեղեկություններ տպագրեց 500 խոշորագույն ամերիկյան արդյունաբերական ընկերությունների մասին, որոնց ցուցակը հանդեսը ամեն տարի ինքն էր կազմում։ Պատմության մեջ առաջին անգամ միայն «էքսսոն» կորպորացիայի համախառն եկամուտը 1980 թվականին նշանակվեց 12-նիշանի թվերով՝ 103243000000 դոլար, տարեկան 30-տոկոսանոց վաճառահանման աճի դեպքում։ «Մոբիլ օյլը», որի վաճառահանման աճը ավելի մեծ էր, այսինքն՝ 33 տոկոս, բարձրացավ երկրորդ տեղը, նշանակալից չափով ետ մնալով «էքսսոնից», սակայն գերազանցելով «Ջեներալ մոտորսին» գրեթե երկու միլիարդ դոլարով։ «Ջեներալ մոտորսը» 1955 թվականից սկսած ցուցակում առաջին տեղն էր, մինչև որ «էքսսոնը» 1973 թվականին նավթի գների թռիչքից հետո դուրս մղեց նրան։ 70-ական թվականներին մնացած խոշոր նավթային ընկերությունները նույնպես սկսեցին ավելի աչքի ընկնող տեղեր գրավել։ 1974 թվականի ցուցակում յոթ նավթային ընկերություն տեղ զբաղեցրին առաջին քսանյակի մեջ և միայն «էքսսոնը» մտավ առաջին հնգյակը։ Այժմ առաջին քսան ամերիկյան խոշորագույն արդյունաբերական ընկերություններից 13-ը և առաջին հնգյակից չորսը նավթային կորպորացիաներ են։

Հաշվի առնելով, որ մեր ուշադրությունը կենտրոնացած է պարսից ծոցի ավազանի վրա, ամենից առաջ դիմենք «յոթ քույրերի» դիրքերին, որոնք, «Թայմ» հանդեսի խոսքերով, «շարունակում էին ղեկավարել» կապիտալիստական աշխարհը 70-ական թվականների վերջերին։ Նրանց դիրքերը վերջին տարիներին, անկասկած, ամրապնդվեցին։ Նրանք բոլորը բազմազգ ընկերություններ են. «Շելլը» գործում է ավելի քան 100 երկրներում, գրեթե նույնքան էլ՝ «էքսսոնը»։ «Քույրերը» այնքան հզոր են, որ նրանց սեփական ղեկավարները գտնում են, թե այդ թվերը վախեցնող են»— գրում է «Թայմը»։

Ռոկֆելլերների տոհմը, որն աճել է նավթի առևտրում և պահպանել է վերահսկողությունը կամ տիրապետող ազդեցությունը «էքսսոնի», «Մոբիլ օյլի», «Սոկալի» վրա, ընտանեկան բոլոր սինդիկատներից ամենախոշորն է, անհամեմատ գերազանցում է մնացած բոլորին։ Նրա խմբի մեջ մտնում են անձնական սերտ կապերով կապված «Չեյզ Մանհաթըն բանկը», Նյուտորքյան «Ֆըրսթ նեշընլ սիթի բանկը», «Քեմիքլ բանկ օֆ Չիկագոն», «Ֆըրսթ նեշընլ բանկ օֆ Չիկագոն»։ Այս քառյակը

մտնում է ամերիկյան բանկերի առաջին տասնյակի մեջ։ Ռոկֆելլերների սինդիկատը ընտանեկան առնչությունների, կապիտալի և կապերի շնորհիվ բացի նավթայիններից հսկում է նաև այնպիսի հսկաների, ինչպիսիք են «ԻԲՄ»-ն, «Դոու քեմիքլը», ավտոտրանսպորտային «Պան Ամերիքեն» ընկերությունը, «Պալմոլիվը», «Բորգ Ուորներ» կորպորացիան։ Ռոկֆելլերների ամբողջ տոհմը հսկում է առնվազն 500 միլիարդ դոլար ընդհանուր կապիտալով կորպորացիաների և ֆիրմաների, նրա համար աշխատում են ոչ պակաս 10 համալսարան և գիտահետազոտական կենտրոններ, հատուկ ֆոնդեր։

Նավթային մոնոպոլիաների ֆինանսական հզորությանը համապատասխանում է նրանց կշիռը հիմնական կապիտալիստական երկրների քաղաքական կյանքում։ Դեռևս 50-ական թվականներին ամերիկյան տնտեսագետ և սոցիոլոգ Օ'Կոննորը «Ֆինանսական մագնատների կայսրությունը» գրքում գրում է. «Կարևոր չէ, թե ով է իրականացնում այդ քաղաքականությունը... Ե՛վ հանրապետականները, և՛ դեմոկրատները ջուր են լցնում «Ջերսիի» ջրաղացին, որովհետև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը գտնվում է կորպորացիայի ծառայության մեջ, որը վերահսկում է աշխարհում ամենազգայուն, ամենակարևոր, ամենաանհրաժեշտ ապրանքը՝ նավթը... Եթե հաշվի առնենք, որ «Ջերսիի» դիրեկտորների խորհրդի կազմը անփոփոխ է, և որ նա մեծ ուշադրություն է դարձնում արտաքին քաղաքականությանը, ապա ԱՄՆ-ի պետական քարտուղարները կթվան սոսկ չվող թռչուններ, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտների գալն ու գնալը՝ էպիզոդիկ երևույթ «Ջերսիի» ճակատագրում։

Քառորդ դար անց արևմտագերմանական «Շպիգել» հանդեսը նշեց. «Դևիդ Ռոկֆելլերի համար... ԱՄՆ-ի պրեզիդենտի պաշտոնը իջեցում կլիներ։ Չէ որ ներկայումս նա օգտվում է անօրինակ իշխանությունից... Վերջին տարիների ընթացքում Դևիդ Ռոկֆելլերը գլխավորում է ընտիր հասարակության ակումբը, որը նշանակալից չափով որոշում է ամերիկյան արտաքին քաղաքականության կուրսը։ Հանդեսի խոսքերով, «Ռոկֆելլերները այժմ իրենց իշխանության գագաթնակետին են։ Նրանք ամերիկյան պետական-մոնոպոլիստական կապիտալի չթագադրված արքաներն են։ Ինչ էլ որ անեն ու ասեն ԱՄՆ-ի պրեզիդենտն ու մինիստրները, ինչի մասին էլ որ հաղորդվի հեռուստածրագրերում և թերթերում՝ ամենուր երևում է Ռոկֆելլերների երկիրը։ Նախկին պետական քարտուղար Հենրի Քիսինջերը, մինչև պրեզիդենտ Նիքսոնի խմբի մեջ մտնելը, ղեկավարում էր Նելսոն Ռոկֆելլերի «ուղեղային տրեստը»։ Դին Ռասկը, որը նույնպես իր ժամանակին ԱՄՆ-ի պետական քարտուղարն է եղել, դրանից առաջ գրավում էր Ռոկֆելլերի ֆոնդի պրեզիդենտի պաշտոնը։ Պետական դեպարտամենտում Ռասկի գրեթե բոլոր նախորդները, ընդհուպ մինչև Ջ. Ֆոստեր Դալլեսը, Ռոկֆելլերի տոհմին կապված են եղել ծառայությամբ, դրամով կամ ամուսնական կապերով։

«Եռակողմ հանձնաժողովի» (ոչ կառավարական օրգան ժամանակակից կապիտալիզմի՝ ԱՄՆ-ի, Արևմտյան Գերմանիայի, Ճապոնիայի գլխավոր կենտրոնների քաղաքականությունը կոորդինացնելու համար) կազմում Դևիդ Ռոկֆելլերը ապագա պրեզիդենտի պաշտոնի թեկնածուի համար նշեց Ջիմի Քարտերին։ Ազգային անվտանգության գծով պրեզիդենտ Քարտերի խորհրդական Զ. Բժեզինսկին գլխավորում էր «Եռակողմ հանձնաժողովը» և հայտնի էր որպես «ճուռակ» և անհաշտ հակակոմունիստ, «սառը պատերազմի» կողմնակից։ Գնահատելով իր կապերը Դևիդ Ռոկֆելլերի հետ՝ Բժեզինսկին ասում էր. «Դե, եթե լուրջ խոսենք, ես չեմ մտածում, թե կառավարում եմ... Եթե ուզում եք իմանալ, ես շարժափոկի նման մի բան եմ այնպիսի մարդկանց միջև, ինչպիսին դուք եք... որոնց էլիտան նշանակում է ու պաշտպանում, և նրանց միջև, ով փաստորեն իշխանություն ունի և օգտվում է նրանից»։

Ներողամիտ լինենք և՛ Օ' Կոննորի, և՛ «Շպիգելի» հրապարակախոսական սրամտության ու գնահատականների չափազանցության նկատմամբ։ Անտարակույս, ԱՄՆ-ի քաղաքականությունը մշակվում է ԱՄՆ-ի մոնոպոլիստական կապիտալի տարբեր ֆրակցիաների և խմբակցությունների, ձգտումների և շահերի բախումների սուր պայքարում։ Սակայն անվիճելի է հատկապես էներգետիկական կորպորացիաների և նրանց հիմքի վրա աճած ֆինանսական կայսրությունների հսկայական դերը այդ քաղաքականության սահմանման մեջ։

Կոնցեսիաները Ծոցի գոտում

Մոնոպոլիաների կարտելային համաձայնության բաղկացուցիչ մասը դարձավ այսպես կոչված «կարմիր գծի» վերաբերյալ պայմանավորվածությունը։ Այն վերաբերում էր Պարսից

ծոցի ավազանին: Ըստ այդ համաձայնության, «Իրաք փեթրոլեումի» մասնակիցները պարտավորվում էին Օսմանյան կայսրության նախկին տիրապետություններում ձեռք բերել նոր կոնցեսիաներ, միայն թե միասին ու նախկին համամասնությամբ: «Կարմիր գիծը» նախկին օսմանյան տիրապետությունները տարավ ոչ միայն Իրաք, այլև Սաուդյան Արաբիայի արևելյան շրջանները և Պարսից ծոցի իշխանությունները, չհաշված Քուվեյթը: «Կարմիր գծի» վերաբերյալ համաձայնությունը ցույց էր տալիս անգլիական և ամերիկյան մոնոպոլիաների միջև ուժերի հարաբերակցությունը այդ շրջանում 30-ական թվականների սկզբներին: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին անգլիացիները Պարսից ծոցի ավազանից արդյունահանում էին նավթի շուրջ 80 տոկոսը, իսկ ամերիկացիները՝ միայն 14: Նկատենք, սակայն, որ այն ժամանակ ասիական հանքավայրերն ընդհանրապես երկրորդական դեր էին խաղում լատինաամերիկյանի համեմատությամբ, ասենք նաև, որ ԱՄՆ-ը նշանակալից չափով ավելի շատ հեղուկ վառելիք էր արտահանում, քան ներմուծում:

Սակայն անգլիացիները, որոնք վերահսկում էին Իրանի և Իրաքի հանքավայրերը, ստրատեգիական խոշոր սխալ գործեցին, թույլ տալով ամերիկյան մրցակիցներին՝ հիմնավորվել Սաուդյան Արաբիայում:

Սաուդյան նավթի պատմությունը լի է անսպասելի շրջադարձերով: Նորզելանդացի մայոր Հոլմսը 20-ական թվականների սկզբում սերտ հարաբերություններ հաստատեց թագավորության հիմնադիր Աբդել Ազիզ Իբն Սաուդի հետ: Ջեոնարկիչը գործում էր լոնդոնյան բիզնեսմենների սինդիկատի անունից, որը զերծ չէր արկածախնդրական գույներից: Նրա խումբը ո՛չ ուժ ուներ, ո՛չ էլ ցանկություն ինքնուրույն նավթ հայթայթելու, այլ ուղղակի ջանկանում էր կոնցեսիաները թանկ գնով վերավաճառել: Եվ քանի որ նա գերադասում էր գործ ունենալ հատկապես ամերիկյան ընկերությունների հետ, ապա պարզ է, թե ով էր կանգնած նրա թիկունքում: Այն տարիներին Իբն Սաուդը Կենտրոնական և Արևելյան Արաբիայում գլխավորում էր մի փոքրիկ թագավորություն, դեռ չէր նվաճել Հիջազը, որտեղ գըտնըվում էին Մեքքան և Մեդինան, և դրամի խիստ կարիք էր զգում:

Մայոր Հոլմսը և նրա սինդիկատը 60 հազար քառակուսի

մղոն տարածությամբ նավթային կոնցեսիա ստացան: Հոլմսը այդ տարածքում, որտեղ գտնվում էին աշխարհի ամենահարուստ նավթահանքերը, երկրաբանական հետազոտություն և հորատում կատարելու իրավունքի համար պարտավորվեց Իբն Սաուդին վճարել 2,5 հազար ֆունտ ստեռլինգ (հիշենք նաև այս թիվը): Սակայն նա այդպես էլ նավթ չգտավ: Սինդիկատը դրամ չուներ, և նրա հետազոտությունը մնաց երեսի վրա: Հոլմսը այն ժամանակ չկարողացավ ամերիկյան խոշորագույն ընկերություններին համոզել, որ օգնեն իրեն: 1927 թվականից հետո նա դադարեցրեց վճարումները, և չբացահայտված հեքիաթային հարստությունները նրա ձեռքից դուրս թռան:

Ջեոներեց նորզելանդացին, այնուամենայնիվ, չհանգստացավ և ամերիկյան «Գալֆ օյլ» ընկերության համար կոնցեսիա ստացավ Բահրեյնում: Սակայն «Գալֆ օյլը» «կարմիր գծի» պայմանագրի մասնակից էր և ստիպված էր իր իրավունքները վաճառել «Սթանդարդ օյլ օֆ Կալիֆոռնիա («Սոկալ») ընկերությանը: Նոր կոնցեսիոները չգիտեր, որ Մերձավոր և Միջին արևելքում անգլիացիների հսկողության տակ գտնվող շրջաններում թույլատրվում էր գործել միայն անգլիական ֆիրմաներին: Երկու տարի շարունակ ամերիկյան «քույրը» գլուխ էր ջարդում ելք որոնելով և, վերջապես, գտավ: Ստեղծվեց «Բահրեյն փեթրոլեում» նրա դուստր ընկերությունը, որը գրանցվեց Կանադայում որպես անգլիական ֆիրմա: Նավթի առաջին շաոտըրվանը կղզում խփեց 1932 թվականին: Սակայն ամենակարեվոր խնդիրն այլ բան էր. այդ հայտնագործությունը թույլ տվեց ենթադրել, որ նավթի խոշորագույն ավազանն ընկած է նեղուցի մյուս կողմում, որը բաժանում էր Բահրեյնը Սաուդյան Արաբիայից:

«Սոկալը» կարողացավ կոնցեսիա ստանալ նաև Սաուդյան Արաբիայում: Անգլիացիները դիմադրում էին, բայց թույլ: 1933 թվականին համաձայնությունը ստորագրվեց: Հետաքրքիր է, որ ընկերությունը պարտավորվեց առաջին մուծումը կատարել ոսկով: Սակայն ԱՄՆ-ից ոսկի դուրս հանելու թույլտվությունը պետք է տար ամերիկյան գանձարանը: Սաուդացիները շտապեցնում էին: Այդ ժամանակ ընկերությունը վճռական քայլի դիմեց: Անգլիայի ազատ շուկայից գնեց 35 հազար ոսկի սովերեններ[1]: Ամերիկյան կանոններով դա անօրինական գոր-

[1] սովերեն— անգլիական ոսկեդրամ:

ծարք էր, բայց ո՛չ առաջին և ո՛չ էլ վերջին անգամ էին ամերիկյան ընկերությունները խախտում իրենց երկրի օրենքները։ Ոսկի սովերենները հասան Արաբիա, և վերջին ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ ընկերության ներկայացուցիչը սաուդյան ֆինանսների մինիստր Աբդալլահ Սուլեյմանի առջև մեկը մյուսի հետևից հաշվում էր ոսկե դրամները։

Այսպիսով, ամերիկյան բիզնեսը արմատավորվեց Սաուդյան Արաբիայում։ Որոշ ժամանակից հետո «Սոկալը» բաժնետոմսերի կեսը վաճառեց «Թեքսակոյին», և միասին նրանք ըստ ստեղծեցին «Արաբիեն-ամերիկեն օյլ քոմպանի»— ԱՐԱՄԿՈ-ն, որը դարձավ ամենախոշոր նավթահանող ընկերությունը աշխարհում։ Պայսից ծոցի գոտու դոները Միացյալ Նահանգների համար լայնորեն բացվեցին։ Անգլիական բացարձակ տիրապետությունը Ծոցում մոտենում էր իր ավարտին, սակայն սկզբունքորեն նոր իրադրությունը ստեղծվելու էր միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Քուվեյթում մրցակցության մի քանի ամիսներից հետո կոնցեսիան ստացավ «Քուվեյթ օյլը», որի բաժնետոմսերը հավասար բաժանեցին «ԱԻՆԸ» և «Գալֆ օյլը»։

Ամերիկյան ընկերությունները Սաուդյան Արաբիա ուղարկեցին որակյալ երկրաբանների և շուտով իմացան, թե ինչպիսի հանքավայրեր են բաժին ընկել իրենց և ինչ չնչին գնով։ Երբ սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, ԱՐԱՄԿՈ-ն որոշեց իր գաղտնիքը հայտնել պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտին։ Նրան համոզեցին, որ սաուդյան նավթը ԱՄՆ-ին պետք կգա հատկապես ապագայում։ Ռուզվելտը միջոցներ ձեռք առավ և 1943 թվականին լենդ-լիզի վարչակազմի ղեկավար Սթեթինիուսին նամակ գրեց։ «Սիրելի պարոն Սթեթինիուս,— գրում էր նա,— որպեսզի Ձեզ թույլ տան լենդ-լիզի գծով օգնություն կազմակերպել Սաուդյան Արաբիայի կառավարությանը, սույնով Ձեզ տեղեկացնում եմ, որ Սաուդյան Արաբիայի պաշտպանությունը կենսականորեն կարևոր է Միացյալ Նահանգների պաշտպանության համար»։

Ռուզվելտի կարգադրությամբ Սաուդյան Արաբիային մոտ 100 միլիոն դոլար տվեցին։ Նա ամերիկյան օգնությունը ստացավ «առանցքի պետությունների» դեմ մղվող պատերազմում ԱՄՆ-ի դաշնակիցներին համահավասար։ Իբն Սաուդի պալատի ֆինանսական կարիքները բավարարվեցին, և ԱՐԱՄԿՈ-ի կոնցեսիան փրկվեց։ Ընկերությունն այդ բոլորի համար մեկ ցենտ էլ չծախսեց։

1944—45 թվականների ձմռանը նախապատրաստվեց Ռուզվելտի և Իբն Սաուդի հանդիպումը։ Հանդիպումը որոշեցին անցկացնել ամերիկյան «Քուինսի» հածանավի վրա, Սուեզի ջրանցքի կենտրոնում՝ Մեծ Աղի լճում։ Ռուզվելտի և Իբն Սաուդի հանդիպումով սկիզբ դրվեց ամերիկյան քաղաքական, իսկ այնուհետև նաև ռազմական ազդեցությանը Թերակղզում։

Պատերազմից հետո ռոկֆելլերյան մյուս «քույրերը» իմանալով, թե ինչ է իրենից ներկայացնում սաուդյան նավթը, իրենց համար բաժին պահանջեցին։ ԱՐԱՄԿՈ-ի երկու մասնակիցներն էլ միջոցներ չունեին ֆինանսավորելու վիթխարի նախագծերը, մասնավորապես Միջերկրական ծովի ափին կառուցվող նավթուղու շինարարությունը, և նրանք համաձայնեցին համապատասխանաբար բաժնետոմսերի 30 և 10 տոկոսը զիջել «Ջերսի» և «Մոբիլ» ընկերություններին։ Անգլիացիները կատաղի դիմադրում էին, վկայակոչելով «կարմիր գծի» վերաբերյալ պայմանավորվածությունը։ Սակայն կապիտալիստական աշխարհում ուժերի հարաբերակցությունը փոխվել էր։ Գտնվեց ձևական պատճառ և, չնայած անգլիացիների կատաղությանը, ամերիկյան ընկերությունները, «Իրաք փեթրոլեումի» մասնակիցները, միացան երկու «քույրերին», որոնք արդեն գործում էին Սաուդյան Արաբիայում։ «Կարմիր գծի» վերաբերյալ համաձայնությունը մեռավ։

«Ֆիֆթի — ֆիֆթի»

Կարտելի մասնակիցները կոնցեսիաները բռնագրավեցին այն ժամանակ, երբ նավթով հարուստ երկրները գաղութներ էին կամ կիսագաղութներ։ Համաձայնագիրը չէր նախատեսում տեղական կապիտալի մասնակցությունը նավթի հետախուզության, հանույթի, տեղափոխության, վերամշակման և արտադրական կամ վաճառահանման այլ օպերացիաներին։ Նավթի արտահանության համար ընկերության նկատմամբ սահմանափակումներ չէին կիրառվում, և նրանք պարտավորված չէին թեկուզև շահույթի մի մասը վերաներդնել երկրների էկոնոմիկայում, որոնք տրամադրել էին կոնցեսիաները։ Դա թույլ տվեց «յոթ քույրե-

րին»՝ Պարսից ծոցի ավազանի պետությունները դարձնել իրենց հումքային բազաները։

Նավթային մոնոպոլիաների արտասահմանյան գործունեությունից առաջացած շահույթը, որը նրանք փոխանցում էին ազգային բանկերը, էական ներդրում էր մետրոպոլ երկրների վճարման հաշվեկշռի ակտիվում։ Կարտելի մասնակիցները նավթի և նավթամթերքների վճարման համար կիրառում էին դոլարը և ֆունտ ստեռլինգը։ Նրանք գերադասում էին հատկապես այդ վալյուտաներով իրականացնել իրենց բազմաթիվ ֆինանսական գործողությունները՝ մոբիլիզացնել և արագ տեղափոխել կապիտալները, բաժնետերերին վճարել շահաբաժնով, սարքավորումների մատակարարների հաշիվը մարել, տասնյակ երկրների մասնաճյուղերի միջև վճարումներ կատարել, մուծել կոնցեսիոն վճարները։ Դա, բնականաբար, ամրապնդում էր դոլարի և ֆունտ ստեռլինգի վիճակը միջազգային շուկայում։

Այն ժամանակ Պարսից ծոցի պետությունների կառավարողները չէին կարող իրենց նավթի նկատմամբ իրավունք բանեցնել։ Նրանց ձայնը չէր լսվում։ Իսկ նրանց, ովքեր խոսում էին ժողովրդի անունից փտեցնում էին բանտերում, ոչնչացնում։ Ընկերությունների թիկունքին կանգնած էին իմպերիալիստական պետությունները, իրենց ռազմաքաղաքական ողջ հզորությամբ։ Կոնցեսիաների ռազմական երաշխավոր անձը Պարսից ծոցի գոտում Անգլիան էր։ Դրան ավելացրած ո՛չ արաբները, ո՛չ էլ իրանցիները կադրեր, տեխնիկական գիտելիքներ, համոզմունքներ, առևտրական փորձ չունեին, որպեսզի ինքնուրույն կերպով շահագործեին իրենց հարստությունները։

Այնուամենայնիվ, 50-ական թվականների սկզբներին փոթորկի առաջին պոռթկումը ցնցեց Պարսից ծոցի ավազանը, որն ինչպես հարկն է կպայթի 20 տարի հետո։ 1951 թվականի մայիսին դոկտոր Մոսադիկի կառավարությունը ազգայնացրեց ԱԻՆԸ։ Դա վճռական համարձակ ակտ էր, որը Իրանի ժողովրդին վերադարձնում էր սեփական բնական հարստությունների նկատմամբ իր ինքնիշխան իրավունքը։ Մենք դեռ մանրամասն կպատմենք Իրանում կատարված իրադարձությունների մասին։

Սակայն նավթի ինքնուրույն վաճառահանման համար դեռևս հող չէր նախապատրաստվել։ Նավթային մյուս երկրները ոչ միայն սատար չեղան նրան, այլև շտապեցին հարստանալ

իրենց համար նպաստավոր իրավիճակից։ Մինչև վերջ բացէին նավթի ծորակները Քուվեյթում, Իրաքում, Սաուդյան Արաբիայում։ Անգլիացիները սաբոտաժի ենթարկեցին նավթաթորման գործարանի աշխատանքը Աբադանում և արգելք դրեցին արտաքին շուկայում Իրանի նավթի վաճառքի վրա, հայտարարելով այն «գողացված»։ Անգլիական ռազմական նավերը բացծովում բռնում էին Իրանից նավթ տեղափոխող տանկերները և բռնագրավում։ Վաշինգտոնը պաշտպանեց Լոնդոնին, թեև ոչ առանց ետին մտքի։

Բոյկոտի և բլոկադայի հետևանքով Իրանի նավթի վաճառքը արտաքին շուկայում գործնականում դադարեց, երկրում տիրեց ծանր ֆինանսատնտեսական ճգնաժամ։ 1953 թվականի օգոստոսին ԿՀՎ-ն Մոսադիկի դեմ դավադրություն կազմակերպեց, և նրա կառավարությունը տապալվեց։

Մեկ տարի հետո Իրանի վրին փաթաթվեց մի համաձայնագիր, ըստ որի Իրանի նավթի վերահսկողությունն անցավ արտասահմանյան մոնոպոլիաների կոնսորցիումի (խոշոր բանկերի) ձեռքը (հանույթի 54 տոկոսը վերահսկում էր անգլիական ու անգլո-հոլանդական կապիտալը, 40 տոկոսը՝ ամերիկյանը, 6-ը՝ ֆրանսիականը)։

Եթե 1950 թվականին մերձավորարևելյան նավթի հանույթում ամերիկյան կապիտալի բաժինը կազմում էր մոտ 40 տոկոս, ապա 1955 թվականին հասավ 60 տոկոսի։

Իրանի պայքարը իր ազգային հարստությունների համար, այնուամենայնիվ, «յոթ քույրերին» ցույց տվեց, որ վտանգավոր է անվերջ թալանել նավթով հարուստ երկրները, և որ ավելի լավ է շահույթի զգալի մասը կիսել նրանց կառավարող դասակարգերի հետ, դրանով իսկ ապահովելով նրանց համագործակցությունն ու աջակցությունը։ Նավթ արտահանողները մշակեցին եկամուտները բաշխելու նոր նորմաներ։ 50-ական թվականների սկզբում Ծոցի գոտում սահմանվեց «ֆիֆթի-ֆիֆթի» սկզբունքը, որը ձևականորեն նախատեսում էր հավասար մասերի բաժանել նավթի վաճառքից ստացված շահույթը այսպես կոչված «տեղեկատու» գների հիման վրա։ Չխորանալով հաշվարկների բարդ համակարգի մեջ, նշենք, սակայն, որ «քույրերը» օգտվում էին Պարսից ծոցի գոտու կառավարությունների այդ հարցերի վերաբերյալ անիրազեկությունից, շահույթի կեսի մեջ մտցնելով և՛ վարձակալության վճարը, և՛ շահույթներից

ստացված հատկացումները, որոնք ըստ իրենց վճարման ձևերի տարբեր են։ «Ֆիֆթի-ֆիֆթի» կանոնը Պարսից ծոցի ավազանում դարձավ կոնցեսիոն կառուցվածքի անկյունաքարերից մեկը։

Փաստորեն նոր սիստեմը նավթի տնօրեն երկրներին թողնում էր շահույթի 50 տոկոսից էլ պակաս։ Մոնոպոլ-կոնցեսիոն երկրները շահագրգռված էին նավթի վաճառքը կատարել ցածր գներով, քանի որ, հանձնելով այն իրենց մասնաճյուղերի ձեռքը, նրանք նավթի և նավթամթերքների շարժման հաջորդ փուլերում համապատասխանաբար շահույթները ավելացնում էին։ Հատկացումների մեխանիզմը «յոթ քույրերին» թույլ էր տալիս ստանալ ամենաբարձր օգուտ շուկայի իրավիճակի լավանալուց, իսկ վատանալու դեպքում՝ նավթի տերերի վրա դնել իրենց կորուստի զգալի մասը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նավթային աշխարհին սպասում էին նոր խոշոր հայտնագործություններ Լիբիայի և Ալժիրի անապատներում, Պայմանագրային Օմանի էկզոտիկ էմիրաթներում, Օմանի և Կատարի սուլթանություններում, Պարսից ծոցի ցամաքային շելֆի տակ Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի միջև գտնվող Չեզոք գոտում։ Նոր հայտնագործված հանքավայրերի մի մասը ընկավ «անկախ» ընկերությունների, այսպես կոչված «աութսայդերների» ձեռքը, սակայն նրանց մասին առանձին կխոսենք։

Աութսայդերներ

Դաժան գործելաձևով և միջոցների մեջ խտրություն չդնող գործարար Ժան Պոլ Գետտին բարգավաճեց ԱՄՆ-ի նավթային արդյունաբերությունում և կարողացավ դառնալ երկու խոշոր՝ «Գետտի օյլ» և «Թայդուոթեր» անկախ ընկերությունների տերը։ Նա նմանվում էր ծերունի Գյուլբենկյանին՝ իր արվեստի գործերի, սիրուհիների, պալատների հավաքածու կազմելու կրքոքով, և նրա նման աչքի էր ընկնում ծայրահեղ ժլատությամբ. իր հյուրերի սենյակներում վճարովի հեռախոսներ էր դնում։ Սակայն մրցակցության պայքարում նա կարող էր տասնյակ միլիոն դոլարներ վատնդի ենթարկել, եթե խոշոր որս էր տեսնում։ Գետտիի համար Ամերիկայի սահմանները նեղ էին, և նա գաղտնի հույս էր տածում մտնել միջազգային նավթային

բիզնեսի մեջ, որը վաղուց բաժանված էր «յոթ քույրերի» միջև։ Նա փորձեց կոնցեսիա ստանալ Իրանում կամ Իրաքում, բայց դա նրան չհաջողվեց։ Եգիպտոսը նրան հետանկարներ չէր խոստանում։ Ճիշտ այդ ժամանակ ԱՐԱՄԿՈ-ն իր Չեզոք գոտու կոնցեսիաները փոխանակում էր Պարսից ծոցի շելֆի հեքիաթային հարուստ տեղամասի հետ։

1948 թվականի նոյեմբերին կավաշեն էլ-Քուվեյթ քաղաքի մոտ գտնվող օդանավակայանից մի փոքրիկ մասնավոր ինքնաթիռ վեր բարձրացավ և ուղղվեց դեպի հարավ։ Նա թռավ ավազաբլուրների վրայով և հասավ Չեզոք գոտու բլուրներին։ Ինքնաթիռի մեջ գտնվում էր մի երկրաբան։ Կատարելով շրջանի սեյսմիկական հետախուզությունը՝ նա վերադարձավ էլ-Քուվեյթ և իր բոսին հեռագրեց. «Կառուցվածքը խոստումնալից է»։ Գետտին վճռեց, որ խաղը մոմի գինը կհանի։

Իհարկե, հայտնվեցին մրցակիցներ հանձինս ամերիկյան ընկերությունների, որոնք ստեղծել էին «Ամինոյլը» և Չեզոք գոտում կոնցեսիա ստացել Քուվեյթի կառավարությունից։ Դրա համար նրանք շեյխ Ահմեդին վճարեցին 7,5 միլիոն դոլար, խոստանալով հետագայում ավելի շատ հատկացումներ տրամադրել։ Գետտին դիմեց Չեզոք գոտու համատիրոջը՝ սաուդյան կառավարությանը և կոնցեսիայի իրավունք ստացավ, հետևաբար և ապագա ընկերության բաժնետոմսերի 50 տոկոսը այնպիսի պայմաններով, որ կատաղության հասցրեց միջազգային նավթային հսկաներին։ «Այդ համաձայնագիրը,— անհանգստանում էր «Ջերսիից» Հաուերդ Փեյջը,— կարող է ամեն ինչ փոխել Միջին արևելքում»։ Նա արդարացի էր, քանի որ համաձայնագիրը ցույց տվեց, թե որքան շահութաբեր է նավթային գործը, եթե «անկախականները» պատրաստ են իրենց բաժին կարկանդակի համար «յոթ քույրերից» անհամեմատ թանկ վճարել։ 1948 թվականին, երբ նավթն արդեն խփեց էլ-Խասի հանքահորից, ԱՐԱՄԿՈ-ն թագավորին փոխանցեց 28 միլիոն դոլար, իսկ Գետտին ներդրեց գրեթե 10 միլիոն՝ դեռևս չհայտնաբերված նավթի համար։ «Անկախականների» հայտնվելը գրեթե միաժամանակ իրանական ազգայնացման հետ՝ խոշոր ընկերություններին ստիպեց անցկացնել «ֆիֆթի-ֆիֆթի» սկզբունքը Ծոցի գոտում։ Ինչ վերաբերում է Գետտիին, ապա նա Չեզոք գոտու նավթով միլիարդատեր դարձավ։

Միջազգային նավթային արդյունաբերության մոնոպոլա-

ցումը «յոթ քույրերի» համար ապահովում էր վիթխարի շահույթներ։ Սակայն նա իր մեջ թաքցնում էր սեփական քայքայման գրավականը, որովհետև խոշոր շահի հնարավորությունը, ինչպես մագնիսը ձգում էր աութսայդերներին՝ ընկերություններ, որոնք գտնվում էին կարտելից դուրս։ Նրանց մեջ կային այնպիսիները, որոնց կշիռը անկարելի էր հաշվի չառնել։ Բազմաթիվ անկախ ամերիկյան կորպորացիաներ, օրինակ՝ «Սթանդարդ օյլ Ինդիանան», «Կոնթինենտալը», «Սինքլեր օյլը», «Սինթեզ սերվիսը», «Գետտի օյլը», իրենց վճարային մուտքերով և շրջանառությամբ գերազանցում էին Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի խոշորագույն ֆիրմաներին։ Այդ տարիներին «յոթ քույրերը» կարող էին տափկնոցի խաղալ նավթարդյունահանող երկրների անփորձ կառավարությունների հետ, թաքցնելով իրենց իսկական եկամուտները։ Սակայն աութսայդերները գիտեին Պարսից ծոցի գոտում գտնվող նավթային բիզնեսի ռեալ շահութաբերությունը։

«Անկախականները, բացի Չեզոք գոտուց, ստացան նաև իրանական նավթի կոնսորցիումին մասնակցելու ոչ մեծ բաժին, հետո կոնցեսիա ձեռք բերեցին իրանական շելֆում։ Սակայն նրանց հասած հաջողության ամենամեծ բաժինը ոչ թե Պարսից ծոցի ավազանում էր, այլ Լիբիայում։ Իհարկե, շատ հարցերում աութսայդերները գործում էին «յոթ քույրերի» հետ միասին։ Անկախ նավթարդյունաբերող ամերիկյան ասոցիացիայի պրեզիդենտ Ալեն Կալվերտը մի անգամ բերանից թռցրեց. «Յուրաքանչյուր անկախական իր հոգում գիտակցում է, որ ինքը չի կարող յոլա գնալ առանց խոշոր ընկերության։ Վերջիվերջո մենք բոլորս մի մեռոնով ենք կնքված»։

Կարտելի մեջ չմտնող ամերիկյան կորպորացիաների համար միջազգային նավթային բիզնեսի մեջ արմատավորվելը նշանակում էր ներամերիկյան մրցակցային պայքարը տարածել ԱՄՆ-ի սահմաններից դուրս։ Սակայն ճապոնական և եվրոպական աութսայդերների համար, որոնք զրկված էին հեղուկ վառելիքից, հաճախ էր դրվում «լինել, թե չլինելու» հարցը։ Նրանց աջակցում էին կառավարությունները։

Այժմ ճապոնական բիզնեսմենները, որոնք Ծոցի երկրների օդանավակայաններում միմյանց բարևում են խոր գլուխ տալով, զարմացնում են ոչ ավելի, քան ուղղակի սպասասրահի մեջ-տեղում աղոթքագորգը փռող գյուղացի-ֆելլահները։ 60-ական

թվականների վերջից Ճապոնիան դարձավ Պարսից ծոցի ավազանի երկրների առևտրական գլխավոր պարտնյորներից մեկը։ Այժմ նրանց շուկաները հեղեղված են ճապոնական լուսանկարչական ապարատներով, ժամացույցներով, ռադիոհաղորդիչներով, մագնիտաֆոններով, հաշվիչ տեխնիկայով, տրիկոտաժով։ Ավտոուղիներում ավելի ու ավելի շատ են հայտնվում «Դացուն», «Թոյոտա» ավտոմեքենաները։ Նրանք մրցակիցներին թուլացնում են և՛ որակով, և՛ էժան գներով։ Պարսից ծոց կատարած տնտեսական ներխուժման ետևում կանգնած են վիթխարի կոնցեռններ «Միցուին», «Մատուշիտոն», «Միցուբիսին»։ Ճապոնացիները միջոցներ են ներդնում նավթաքիմիական արդյունաբերություններում, հեղուկ գազ արտադրող գործարաններում, նավահանգիստների շինարարություններում և նավանորոգարաններում։

Գլխավորը, որ Ճապոնիային հետաքրքրում է այդ շրջանում, նավթն է։ Կապիտալիստական աշխարհի արդյունաբերական երկրորդ տերությունը հիմնականում կախված է հեղուկ վառելիքից, որը հայթայթվում է Պարսից ծոցի ավազանում։

Ճապոնացիները ուժ ու միջոց չխնայեցին, որպեսզի թափանցեն մինչ այդ իրենց համար արգելված բնագավառը։ Դեռևս 50-ական թվականներին ճապոնական կապիտալին հաջողվեց կոնցեսիաներ ձեռք բերել Չեզոք գոտու շելֆում, որտեղ նրանց է պատկանում «Արաբիեն օյլ քոմպանին», Աբու-Դաբիում «Միցուբիսի օյլ քոմպանին» թագավորությունից որպես կոնցեսիա ստացավ 6,5 հազար քառակուսի կիլոմետր տարածք։ Ճապոնական ֆիրմաների խումբը ձեռք բերեց «Աբու-Դաբի օյլ քոմպանին»։ Վերջապես, ամենամեծ արձագանքը գտավ 1972 թվականի գործարքը։ Ճապոնական ընկերությունը «Բրիթիշ փեթրոլեումից» 330 միլիոն ֆունտ ստեռլինգով գնեց «Աբու-Դաբի մարին էրիեզի» բաժնետոմսերի 22,5 տոկոսը։ Այդ ընկերությունը տարեկան արտադրում էր շուրջ 25 միլիոն տոննա և հույս ուներ հանույթը մեծացնել վեց անգամ։ «Բրիթիշ փեթրոլեումը» ստիպված էր վաճառել իր բաժնետոմսերի մի մասը (այնուամենայնիվ իր համար պահպանելով 27,5 տոկոսը) Հյուսիսային ծովում և Ալյասկայում հետախուզության ծախսերը ծածկելու համար։ Իյոշիտո Շիմոդոն՝ ճապոնական կառավարությանը պատկանող նավթային ընկերության պրեզիդենտը, այն ժամանակ հայտարարեց, որ այդ գործարքը Ճապոնիայի երկրների

ամբողջ նավթային քաղաքականության մեջ շրջադարձ էր նշանակում։ Իհարկե, հոկտեմբերյան պատերազմից հետո, 1973 թվականին, Աբու-Դաբիի կառավարությունը սահմանափակեց նավթի հանույթի աճը, և սենսացիոն գործարքը Ճապոնիային սպասվելիք շահաբաժինը չբերեց։

Իտալիան, ինչպես և Արևմտյան Գերմանիան, ո՛չ քարածուխ ուներ, ո՛չ էլ իր բաժինը կարտելում ու հյուսիսաֆրիկյան հանքավայրերում, ինչպես Ֆրանսիան։ Նա արևմտաեվրոպական երկրներից առավել ծանր էր զգում «յոթ քույրերի» լուծը։ 50-ական թվականների սկզբում Իտալիան ստեղծեց պետական նավթագազային ԷՆԻ կոնցեռնը, հույս ունենալով իր համար տեղ գտնել նավթային բիզնեսի արևի տակ։ ԷՆԻ-ի պրեզիդենտ Էնրիկո Մաթեին էլ հենց հնարեց «յոթ քույրեր» մականունը, որ կպավ կարտելի անդամներին։ Հնարամիտ ու ճարպիկ բիզնեսմենը իտալական Դիմադրության անդամներից մեկն էր, ձախ քրիստոնեական դեմոկրատ. նա դարձավ մոնոպոլիստական ընտանիքի աչքի փուշը, որը նրան մահու և կենաց կռիվ հայտարարեց։ Անհայտ մարդիկ փոստով նրան մահվան դատավճիռ ուղարկեցին։ Մահափորձի մի քանի անհաջող փորձերից հետո ԷՆԻ-ի ծառայողական ինքնաթիռը, որի մեջ էր Էնրիկո Մաթեին, 1962 թվականի հոկտեմբերին օդում պայթեց։ ԷՆԻ-ն ստացավ մի քանի երրորդական կարգի կոնցեսիաներ Մերձավոր և Միջին Արևելքում։

«Անկախների» գալուստը նշանակում էր նավթային կարտելի լիակատար տիրապետության վիժեցում։ 70-ական թվականների սկզբում առաջատարները ԱՄՆ-ի սահմաններում վերահսկում էին նավթի հանույթի գրեթե մեկ երրորդը և վերամշակության մեծ մասը։

«Անկախների» կնքած մի շարք նոր պայմանագրեր համաձայնագրի բնույթ ունեին և ոչ թե կոնցեսիայի, այսինքն՝ նավթային ընկերությունները ուղղակի կապալառուի դեր էին խաղում։ Ամբողջ հին գաղութատիրական կոնցեսիոն կառուցվածքը աստիճանաբար քայքայվեց։ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների կառավարությունները շատ անգամ էին պահանջել, որպեսզի գլխավոր կոնցեսիոներները իրենց թույլ տան մասնակցելու նավթարդյունահանող ընկերությանը։ Նրանց մշտապես մերժում էին։ Պարտնյորական շարժումը կատարեցին ֆրանսիական, իտալական, ճապոնական ֆիրմաները՝ որպես միջոց իրենց

գավթողականությունը դյուրացնելու համար։ Նոր եկվորները չհատանվեցին փոփոխելու կոնցեսիոն համաձայնագրի հին պայմանները, գիտենալով, որ շահույթի բարձր նորմաները, միևնույն է, կապահովվեն։

Պարսից ծոցի գոտու կառավարության ճնշման տակ «յոթ քույրերը» ստիպված էին վերադարձնել չօգտագործված կոնցեսիոն տարածքը։ 60-ական թվականների սկզբներին ԱՐԱՄԿՈ-ն Սաուդյան Արաբիայի կառավարությանը զիջեց սկզբնական շերջանում վարձակալած տարածության 75 տոկոսը։ Կատարում կոնցեսիան կրճատվեց մեկ երրորդով, Քուվեյթում՝ կիսով չափ, նույնիսկ Աբու-Դաբիում կառավարիչը կարողացավ ընկերությանը ստիպել՝ վերադարձնելու չօգտագործված տարածքը։ Բնականաբար, կոնցեսիոներները աշխատում էին գլխավոր հանքավայրերը իրենց ձեռքում պահել։

1961 թվականին Բաղդադը հայտարարեց, որ «Իրաք փեթրոլեում կոմպանիին» պրկում է իր տարածքի 99,5 տոկոսից, բացառությամբ այն հողերի, որտեղ հանույթ է կատարվում։ Հարվածը առավել ծանր էր, որովհետև ԻԿԿ-ն նույնպ գիտեր բրոնագրավված տարածքում նավթի մեծ պաշարների մասին։ Կոնֆլիկտը ձգվեց ամբողջ տասը տարի և վերջացավ Իրաքում ԻԿԿ-ի լրիվ կործանումով։

ՕՊԷԿ-ի ստեղծումը

1960 թվականի ամռանը «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսի» ընկերությունը մի քայլ արեց, որը, ինչպես երբեք, միավորեց Մերձավոր և Միջին արևելքի նավթ արտադրող պետություններին։ «Ջերսին» իջեցրեց միջինարևելյան նավթի տեղեկատուական գինը։ Շուտով մյուս խոշոր ընկերություններն էլ հետևեցին նրա օրինակին։ Բաղդադից մինչև Էր-Ռիյադ, Թեհրանից մինչև Քուվեյթ կառավարությունները ապշել էին արևահյուսակից, նրանց տիրել էր կատաղություն ու զայրույթ։ Նավթ արտադրող երկրները որոշեցին միավորվել և թույլ չտալ գների իջեցում, սահմանել տեղեկատու գնի նոր համակարգ, որի հիման վրա նավթային ընկերության շահույթներից կատարվում էին հատկացումներ։

Բաղդադում խորհրդակցություն տեղի ունեցավ, որը 1960 թվականի սեպտեմբերին հանգեցրեց նավթ արտահանող երկրը-

ների կազմակերպության կամ անգլերեն անվանման առաջին տառերով՝ ՕՊԷԿ-ի ստեղծմանը: Սկզբում դրա մեջ մտնում էին Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Վենեսուելան: Վերջում նրան միացան Աբու-Դաբին, Կատարը, Լիբիան, Ալժիրը, Ինդոնեզիան, Նիգերիան, Էկվադորը, Գաբոնը:

ՕՊԷԿ-ի անդամները պահանջեցին նավթի համար սահմանել հաստատուն տեղեկատու գին և այն բարձրացնել իր նախկին մակարդակին, որը չպետք է փոփոխել առանց արտահանող երկրների կառավարությունների հետ նախապես կոնսուլտացիա անելու: Պարսից ծոցի գոտու ՕՊԷԿ-ի մասնակիցների երկրորդ պահանջը այն էր, որպեսզի վարձակալության վճարը մտցվի ընկերության շահագործման ծախսերի մեջ և եկամտահարկը 50 տոկոսով հանվի մնացած գումարից: Դա նշանակում էր նավթ ունեցող երկրի բաժնի ավելացում տարեկան մի քանի տոկոսով, կամ մի քանի միլիոն դոլարով: Վերջապես, ՕՊԷԿ-ի անդամները հրաժարվեցին իրենց վրա վերցնել ընկերության առևտրական ծախսերի մի մասը:

Նկատի ունենալով իրադարձությունների հետագա ընթացքը՝ ՕՊԷԿ-ի պահանջները համեստ էին և դուրս չէին գալիս զուտ առևտրական շրջանակներից:

Քիչ մարդ էր հավատում, որ նորաստեղծ կազմակերպությունը կապրի: Անցյալում Մերձավոր և Միջին արևելքի երկրները շատ հաճախ էին փորձել համաձայնեցնելու իրենց գործողությունները, և շատ հաճախ էլ նրանց միավորումները, իմպերիալիստական ուժերի ճնշման, ներքին մրցակցության և պառակտման ազդեցության տակ, տապալվել էին: «Յոթ քույրերը», թեև ՕՊԷԿ-ի հայտնվելով անհանգստացան, հրաժարվեցին ճանաչել նոր իրականությունը: Նրանք այդ կարճատեսության համար հետագայում թանկ կվճարեն:

Միջազգային մոնոպոլիայի ներկայացուցիչները հայտարարեցին, որ բանակցությունները կվարեն միայն յուրաքանչյուր երկրի հետ առանձին, իսկ միավորված կազմակերպության հետ՝ երբեք: «Մենք չենք ընդունում այսպես կոչված ՕՊԷԿ-ը»,— «յոթ քույրերի» դիրքը ամփոփեց ԱՐԱՄԿՈ-ի պրեզիդենտ Բրաունը: Մոնոպոլիաների շտաբներում դեռևս չէին պատկերացնում, թե որքա՜ն դասեր քաղեցին արաբական երկրները և Իրանը քաղաքական, առևտրական ու տեխնիկական բնագավառի նախորդ պատմությունից:

Քանի դեռ միջազգային շուկայում համեմատաբար նավթի առատություն էր և պայմանները գնորդն էր թելադրում և ոչ թե վաճառողը, ՕՊԷԿ-ը սահմանափակվում էր, այսպես ասած, «տեղական նշանակության կոմիվներով»: Սակայն տարեցտարի նա կոլեկտիվ գործողության փորձ էր կուտակում, որը ցույց էր տալիս, թե որքան ձեռնտու է նույնիսկ տարբեր վարչակարգ ունեցող երկրների մասին հանդես գալ:

Նավթարդյունահանող երկրների քաղաքական կողմնորոշումը բոլորովին էլ միևնույն չէր միջազգային նավթային արդյունաբերության ճակատագրի համար: Մի շարք պետություններում ազգային-դեմոկրատական կարգերի հաստատումը էականորեն սահմանափակեց նրանց վրա «յոթ քույրերի» ազդեցության ոլորտը, ամբողջովին թուլացրեց մոնոպոլիաների դիրքերը Մերձավոր և Միջին արևելքում: Այդ տեսակետից Իսրայելի հաղթանակը Եգիպտոսի, Սիրիայի, Հորդանանի դեմ 1967 թվականի «վեցօրյա կռվում», որ, մասնավորապես, մղվում էր արաբական երկրներում առաջադիմական վարչակարգը տապալելու և նավթի մոնոպոլիաները ուժեղացնելու համար, հակառակ արդյունք տվեց: Ազգային-ազատագրական շարժումը նոր որակական և քանակական թռիչք կատարեց: Էականորեն փոփոխվեց ուժերի դասավորությունը: Մերձավոր և Միջին արևելքում, որպես հզոր էկոնոմիկական, քաղաքական և ռազմական շարժիչ ուժ, աճեց Սովետական Միության դերը, որը թույլ չի տալիս մոնոպոլիաներին՝ գործելու իրենց հայեցողությամբ:

Միապետական վարչակարգի կործանումը 1969 թվականին Լիբիայում չհապաղեց փոխել նրա փոխհարաբերությունը արտասահմանյան ընկերությունների հետ: 60-ական թվականների վերջում Լիբիայի հանրապետական կառավարությունը կոնցեսիոներներին առաջարկեց երկրին հատկացնել շահույթի ոչ թե 50, այլ 54—55 տոկոսը: Ի պատասխան կարուկ մերժման, Լիբիան 1970 թվականին կրճատեց մի քանի կոնցեսիոներների հանույթի թույլատրելի ծավալը: Այն պայմաններում, երբ չէր գործում Սուեզի ջրանցքը, իսկ տրանսարաբական նավթամուղը պայթյունից հետո շարքից դուրս էր եկել, կարտելը չհամարձակվեց բոյկոտի ենթարկել լիբիական նավթը, քանի որ այդ ժամանակ նրա վրա ընկած էր արևմտաեվրոպական սպառողների գրեթե մեկ հինգերորդ մասը: Ամերիկյան այն աուբասյդերները, որոնք արտասահմանում արդյունահանում էին միայն

լիբիական նավթը, այդ թվում նաև «Օքսիդենտալ փեթրոլեումը», «Կոնտինենտալը», առաջինն անձնատուր եղան։ Այնուհետև նահանջեցին և մյուսները։ Լիբիայի հաջողությունը շղթայական ռեակցիա առաջացրեց Մերձավոր և Միջին Արևելքում։ Ծոցի գոտու երկրները կոնցեսիոներներին ստիպեցին շահույթի համար նույնպիսի հարկ վճարել։ Նավթային բոլոր զարգացող երկրների եկամուտները 1970 թվականին ավելացան մոտ կես միլիարդ դոլարով։

1971 թվականի հունվարի 12-ին Պարսից ծոցի ավազանի ՕՊԷԿ-ի անդամները Թեհրանում բանակցություններ սկսեցին նավթային ընկերությանց ներկայացուցիչների հետ։ Արտահանող երկրները պահանջեցին ոչ միայն անմշակ նավթի վաճառքից ստացված շահույթի 55 տոկոսը, այլև նրա վրա ավելացրին տեղեկատու գները։ ՕՊԷԿ-ի անդամները որոշեցին նաև, որ բոլոր արտահանողները պետք է նավթի գինը բարձրացնեն հասանելի մակարդակի ամենաբարձր կետը։

«Նավթի բիզնեսը կանգնեց չափազանց լուրջ ճգնաժամի առջև,— հաջորդ օրը գրեց Լոնդոնի «Ֆայնենշըլ թայմս» թերթը։— Ըստ էության, նավթի մոնոպոլիաներին առաջին անգամ դեմ դուրս եկավ նավթ արտադրող երկրների միավորված խումբը և պատրաստ է բանակցություններ վարել միասնական շարքով։ Նավթի մոնոպոլիաները գործնականում խոսք չգտան առարկելու։ Նախընթաց ճգնաժամից հետո, որն առաջացել էր Սուեզի ջրանցքի փակումով և Մերձավոր արևելքում ձեռնարկությունների ազգայնացմամբ, նրանք զրկվեցին մանևրելու հնարավորությունից։ Ամբողջ տասը տարվա ընթացքում ՕՊԷԿ-ը չէր կարողանում հասնել իր սկզբնական նպատակին՝ բարձրացնել նավթի տեղեկատու գները։ Նախորդ տարվա (1970) դեպքերի փոփոխությունները արտացոլում էին համաշխարհային շուկայի վրա քաղաքական իրադրության դանդաղ փոփոխությունները, որոնք բարենպաստ էին ոչ թե գնորդների, այլ վաճառողների համար»։

Թեհրանի հանդիպումը իմպերիալիստական մոնոպոլիաների և զարգացող պետությունների միջև ընդունեց գլոբալ հակամարտության բնույթ։ Նավթային ընկերություններն ստիպված եղան համաձայնվել՝ կատարելու իրենց առաջադրված պահանջների մեծ մասը։ Նավթի գինը մեկ բարրելի համար բարձրացավ 25 ցենտով՝ հետագայում տարեկան ավելանալով 5 ցենտով։

Ծոցի բոլոր երկրներում սահմանվեց հարկ՝ շահույթի 55 տոկոսի չափով։ Բացի դրանից, ընկերությունները համաձայնվեցին, հաշվի առնելով ինֆլյացիան, տեղեկատու գինը տարեկան բարձրացնել 2,5 տոկոսով, սկսած 1971 թվականի հունիսի 1-ից մինչև 1975 թվականը ներառյալ։

Պարսից ծոցի գոտու երկրների հաջողությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց աշխարհի մյուս շրջաններում մոնոպոլիաների վրա հարձակվելու համար։ 1971 թվականի փետրվարին Ալժիրի կառավարությունը դեկրետ հրապարակեց բնական գազի բոլոր հանքավայրերը և խողովակաշարերը ազգայնացնելու մասին։ Միաժամանակ նա հայտարարեց, որ մինչև 51 տոկոսով բարձրացնում է երկրում նավթարդյունահանող ֆրանսիական ընկերությունում իր մասնակցության բաժինը։ Մեկ ամիս հետո վենեսուելան միակողմանի կարգով բարձրացրեց նավթի գինը։ Նավթի գները բարձրացան Միջերկրական ծովի գոտում, այնուհետև Նիգերիայում և Ինդոնեզիայում։

Այն ժամանակ շատերին թվում էր, որ «յոթ քույրերի» և նավթարդյունահանող երկրների միջև փոխհարաբերությունները դրամատիկորեն փոխվել են։ Սակայն երեք տարի էլ չանցած, նավթային աշխարհում տեղի կունենա իսկական հեղաշրջում, և այն ժամանակ 1971 թվականի համաձայնագիրը կհամարեն «հին կարգերի վերջին գործողություն»։ Ընդհանուր առմամբ նրանք ձեռք չվեցին ո՛չ կոնցեսիոն սիստեմին, ո՛չ մոնոպոլիաների հզորությանը, թեպետև ՕՊԷԿ-ի համար նշանակեցին մի քանի միլիարդ դոլարի օգուտ։

Ուժերի ընդհանուր հաշվեկշիռը դասավորվեց նավթարտադրողների օգտին։ ՕՊԷԿ-ի մասնակից երկրների կառավարությունները նոր տնտեսական իրադրությունից քաղաքական եզրակացություն արեցին։ 1972 թվականին սկսվեց նավթային կարտելի դեմ ՕՊԷԿ-ի պայքարի սկզբունքային նոր փուլը։ Արտահանող երկրները պահանջում էին՝ թույլ տալ կոնցեսիոն ընկերություններում ունենալ իրենց բաժինը, դա համարելով իրենց նավթային հարստությունների նկատմամբ լիակատար հսկողություն սահմանելու սկիզբը։

Այսպես արդեն 70-ական թվականների սկզբում Պարսից ծոցի գոտու երկրների առջև ծագեց իրենց ընդերքի հարստությունների նկատմամբ սուվերենությունը վերադարձնելու սուր պրոբլեմը։ Դա բացատրվում էր ոչ միայն ՕՊԷԿ-ի ան-

դամների համար բարենպաստ իրադրությամբ, որ ստեղծվել էր նավթի միջազգային շուկայում, այլև ամբողջ Մերձավոր և Միջին արևելքում ազգային-ազատագրական ուժերի օգտին եղած հետագա դրական տեղաշարժերով։

«Յոթ քույրերը» փորձում էին տապալել նավթարտահանող երկրների հարձակման նոր ալիքը, Թեհրանի և Տրիպոլի վրա ուևանշ վերցնել, ցուցադրել իրենց ուժը։ Հարվածի օբյեկտ ընտրվեց Իրաքը, որն այդ ժամանակ նավթի նկատմամբ առավել վճռական պահանջներ էր առաջադրել։ Կարտելին առանձնապես զայրացնում էր Իրաքի ազգային նավթային ընկերությունը։ 1972 թվականի գարնանը նա սկսեց նավթ արդյունահանել Հյուսիսային Ռումեյլում՝ 1961 թվականին «Իրաք փեթրոլեումից» բռնագրաված տարածքում։ Նրա մասնակիցները հյուսիսային նավթահանքերում պակասեցրին նավթի արտադրությունը, պատրվակ բերելով, թե միջերկրածովյան նավահանգիստներում իրաքյան նավթի բարձր տեղեկատու գները հանույթը դարձնում են անեկամտաբեր։ Նրանց պնդմամբ նավթի տեղափոխումը ձեռնտու էր միայն Պարսից ծոցից։ Համոզվելու համար «Իրաք փեթրոլեում» դուստր ընկերությունները նույնիսկ իրենց հարավային նավթահանքերում որոշ չափով ավելացրին նավթի հանույթը։ Դա բացահայտ սաբոտաժ էր։ 1972 թվականի առաջին չորս ամիսներին Իրաքի կորուստները կազմեցին ավելի քան 280 միլիոն դոլար։

1972 թվականի հունիսի 1-ին Իրաքի հանրապետության հեղափոխական հրամանատարության խորհուրդը ԻՓԿ-ի սեփականությունը ազգայնացնելու մասին օրենք ընդունեց։ Կիրկուկի շրջանի նավթահանքերը, նավթաթորման գործարանները, պոմպակայանները, խողովակաշարերը անցան Իրաքի տիրապետության տակ։ Սուեզի ջրանցքը Եգիպտոսի ձեռքն անցնելուց հետո դա ամենախոշոր ազգայնացումն էր Մերձավոր և Միջին արևելքում։ Օրենքը նախատեսում էր ազգայնացված հարստության արժեքը ընկերությանը փոխհատուցել՝ հանելով այն գումարը, որը նա պարտք էր Իրաքին հին հարկերի և վճարումների դիմաց։ Նույն օրը Սիրիայի պրեզիդենտը հայտարարեց այդ երկրի տերիտորիայում գտնվող ԻՓԿ-ի ամբողջ ունեցվածքի ազգայնացման մասին, ամենից առաջ խողովակաշարի երեք գծերի, որով նավթը Կիրկուկից տարվում էր Միջերկրական ծովի նավահանգիստները։

50-ական թվականների սկզբի իրանական տարբերակը հիշեցնող սցենարով ԻՓԿ մասնակիցները փորձում էին Իրաքը բլոկադայի ենթարկել, սակայն քաղաքական, տնտեսական և ռազմական իրադրությունն ուրիշ էր։ Ռազմական միջամտության հարց նույնիսկ չբարձրացվեց։ Ազգայնացված նավթը «գողացված» հայտարարելու փորձը այս անգամ աջակցություն չգտավ Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի կողմից։

Միջազգային շուկաներում հեղուկ վառելիքի պակաս էր զգացվում։ Սակայն ՕՊԷԿ-ի մյուս անդամները, եթե նույնիսկ համամիտ չէին Բաղդադի կառավարության քաղաքական հայացքներին, չէին ցանկանում նրա պարտությունը և մտադիր չէին գրավել իրաքյան նավթի շուկաները։ ԻՓԿ-ի ունեցվածքի ազգայնացումը, որպես «Իրաքի կենսական շահերը պաշտպանելու սուվերեն պետության օրինական գործողություն», միանգամուն կերպով արժանացավ ՕՊԷԿ-ի հավանությանը։

Իրաքը հաղթանակ տարավ «յոթ քույրերի» նկատմամբ։ Նրա հաջողությունն սկզբունքային նշանակություն ունեցավ։ Նա ցույց տվեց, որ համաշխարհային ասպարեզում և տնտեսական կոնյունկտուրայում ստեղծված ուժերի հարաբերակցության դեպքում գրեթե յուրաքանչյուր երկիր կարող է ազգայնացնել իր նավթային արդյունաբերությունը։

Պարտվելով Իրաքում, նավթային մոնոպոլիաները կոնցեռն-ընկերությունների գործունեության մեջ նավթարդյունահանող երկրների մասնակցության հարցում հանդես բերեցին առավելագույն համաձայնողականություն։ 1972 թվականին «յոթ քույրերը» Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Կատարի և Աբու-Դաբիի հետ պայմանագիր կնքեցին, համաձայն որի այդ երկրները 1973 թվականին ձեռք բերեցին կոնցեռնային ընկերության բաժնետոմսերի 25 տոկոսը։ Արաբական պետությունները կարող էին 1982 թվականին իրենց բաժինը հասցնել 51 տոկոսի։ Կարտելի անդամները հրաժարվեցին նավթահանքերը ղեկավարելու մենաշնորհի իրավունքից։ Սակայն, կնքելով «մասնակցելու մասին համաձայնագիրը», նրանք հույս ունեին ազատվել արտահանող երկրներից, թուլացնել ազգայնացման ալիքը, ժամանակ շահել և պայքարը տանել ավելի խաղաղ ձևով։ Ուստի Արևմուտքի պրոմոնոպոլիստական մամուլը թեթևացած շունչ քաշեց արաբական երկրների հետ բանակցությունների նպաստավոր արդյունքի վերաբերյալ հաղորդագրությունը լսելով։

Պարզվեց, որ վաղ էր ուրախանալ։ «Մասնակցելու մասին համաձայնագիրը» իրաքը մերժեց։ Նրան հետևեցին Լիբիան և Նիգերիան։ 1973 թվականի հունվարին իրանական պետությունը որոշեց իր հարաբերությունները փոխել կոնսորցիումի հետ, և Իրանի ազգային նավթային ընկերությունը մշտական ամբողջությամբ իր հսկողության տակ վերցրեց Մերձավոր և Միջին արևվելքի հնագույն կոնցեսիայով նավթի հանույթը, տեղափոխությունը, մշակումը, թեև պարտավորվել էր այն կոնսորցիումի մասնակիցներին հատկացնել 20—25 տարվա ընթացքում «ձեռնտու գներով»։ Սակայն դրանք չպետք է ավելի ցածր լինեին այն գներից, որոնք սահմանվել էին Օոցի այլ երկրների կողմից։

Նավթարդյունահանող երկրները տնտեսական ինքնուրույնության էին գնում տարբեր ճանապարհներով։ Նրանցից ոմանք կողմնակից էին մոնոպոլիաներին վտարել հեղափոխության միջոցով։ Մյուսները մերժում էին ազգայնացման մեթոդը, նախապատվությունը տալով աստիճանական վերափոխություններին։ Սակայն պարզ էր, որ կոնցեսիաները և նավթի պաշարների շահագործման կիսագաղութային մեթոդները իրենց սպառել էին։

Փայտե երկաթ

Միաժամանակ մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան երկրներում նավթի ազգայնացումը հիմնականում տարածվում էր անգլիական և ֆրանսիական կապիտալների վրա։ Սակայն 1973 թվականի ամռանը, իրաքի հաջող փորձից եղրակացություն անելով, Լիբիան հսկողություն սահմանեց «Օքսիդենտալ փեթրոլեում», «Օեյսիզ» և «Ամոսիզ» ընկերությունների վրա, իսկ սեպտեմբերի 1-ից՝ երկրի արտասահմանյան բոլոր նավթային ֆիրմաների վրա։ Շատերը ԱՄՆ-ում ինչպես հարկն է չգնահատեցին այդ «նախազգուշական համազարկերը», ենթադրելով, որ Ամերիկայի հիմնական շահերը Արաբիայում են, իսկ այնտեղ ոչ մի անսպասելի բան չպետք է որ լինի։ Մի՞թե «մասնակցության սիստեմը» մի քանի տարի առաջ չէր կարգավորել «յոթ քույրերի» բոլոր վեճերը թերակղզու չափավոր միապետության հետ։

Սակայն պրոբլեմը դուրս էր մնում նավթային ընկերությունների և կոնցեսիան ներկայացնող երկրների կառավարությունների փոխհարաբերությունների ոլորտից։ Այն շոշափում էր ամերիկյան դիրքորոշումը ամբողջ արաբական աշխարհում, որի

վրա չէր կարող չազդել Ամերիկայի դերը, որ նա ուներ արաբա-իսրայելական կոնֆլիկտում։

Վաշինգտոնյան ստրատեգները փորձում էին շենքը կառուցել «փայտե երկաթից»՝ համատեղել «ԱՄՆ-ի էներգետիկական անվտանգությունը» և նրանց նավթային մոնոպոլիաների շահերը Իսրայելի ագրեսիվ կուրսի աջակցությամբ։ Բայց եթե առաջինը պահանջում էր ամրապնդել հարաբերությունները արաբական երկրների հետ, թեկուզև այն պահպանողական պետությունների հետ, որտեղ գտնվում էին հիմնական նավթային հարստությունները, ապա երկրորդը աշխատում էր հակառակ ուղղությամբ։ ԱՄՆ-ի կառավարող շրջաններում շատերը ղգում էին այդպիսի քաղաքականության հակասականությունը։

1973 թվականի հոկտեմբերյան պատերազմի նախօրյակին Մերձավոր և Միջին արևելքի գծով ամերիկյան մասնագետները պետական դեպարտամենտի համար մշակեցին այսպես կոչված «միջին գիծ», որը կոչ էր անում ավելի շատ հաշվի առնել նոր իրադրությունը։ Նրանց կարծիքով, ԱՄՆ-ը պետք է անցկացներ «հավասարակշռված հարաբերության» քաղաքականություն ինչպես Իսրայելի, այնպես էլ արաբների հետ, չգրավել ո՛չ պրոիսրայելական, ո՛չ էլ պրոարաբական դիրքորոշում։ Թեև Վաշինգտոնն իր վրա պարտավորություն էր վերցրել «ապահովել Իսրայելի գոյությունը», սակայն ամերիկյան ղեկավարությունն ստիպված էր ընդունել, որ ԱՄՆ-ի ոչ բոլոր շահերն են համընկնում Իսրայելի շահերին։

Արտաքին սպառման համար նշանակված հայտարարություններին ամերիկյան նավթային ընկերությունների ներկայացուցիչներն սկսեցին «պրոարաբական» երանգ տալ։ «Մենք պետք է հանդես բերենք արաբական ժողովուրդներին հասկանալու ձգտում,— ասում էր, օրինակ, «Սթանդարդ օյլ օֆ Կալիֆոռնիայի» դիրեկտորական խորհրդի նախագահը։— Մենք պետք է աջակցենք Մերձավոր արևելքում խաղաղության հասնելու նրանց ձգտումներին»։ Թեև սիոնիստները հալածանք սկսեցին այդ ընկերության ղեկավարության դեմ, մյուս խոշորագույն կորպորացիաները, այդ թվում «Թեքսակոն» և «Մոբիլը», աջակցում էին նրանց։ Կարծես պատասխանելով նրանց, սենատոր Ջեկսոնը, ռազմարդյունաբերական կոմպլեքսի «ճուռակն» ու ներկայացուցիչը, հայտարարեց. «Ուժեղ Իսրայելը կենսական

կարևոր նշանակություն ունի Մերձավոր արևելքում և Պարսից ծոցի շրջանում ամերիկացիների շահերի համար»:

Այդ վեճը բոլորովին էլ չէր արտացոլում Վաշինգտոնում կիսաառասպելական «պրոարաբական լոբբիի» և միանգամայն իրական պրոիսրայելականի միջև եղած հակասությունները: Խոսքն ուղղակի մեթոդների ընտրության մասին էր: Ոմանք գրտնում էին, որ պետք է համաձայնության գալ արաբների հետ: Մյուսները հույսը դնում էին Իսրայելի հարվածային ուժի վրա, հույս ունենալով նրա օգնությամբ ետ շպրտել Արաբական արևվելքում ազգային-ազատագրական շարժումը, ռեգիոնում արմատավորել պրոարևմտյան կապիտուլյանտական վարչակարգեր, իսկ հետո որոշել նավթային գործերը: Երկրորդ տեսակետը հաղթեց, որը ամերիկյան կառավարող շրջաններին հանգեցրեց ստրատեգիական վրիպումների, որոնք հատկապես ցցուն դրսևորվեցին էներգետիկ ճգնաժամի պայմաններում:

2

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄ-Ի

էներգետիկ ճգնաժամի համար որպես պայթուցիչ ծառայեց արաբա-իսրայելական չորրորդ պատերազմը:

1973 թվականի հոկտեմբերի 13-ին արաբական երկրների նավթի մինիստրները հավաքվեցին Քուվեյթում: Պատերազմի յոթերորդ օրն էր: Սինայում և Գոլանի բարձունքներում վառվում էին տանկերը և ղոհվում մարդիկ: Մինիստրների առջև դրված էր ոչ միայն կռվի դաշտում արաբական բանակի պաշտպանության, այլև «նավթային զենքի» կիրառության հարցը: Արաբական երկրների լուրջ մտադրության վերաբերյալ բոլոր կասկածները ցրվեցին, երբ նրանք որոշեցին ամեն ամիս 5 տոկոսով կրճատել նավթի հանույթը այնքան ժամանակ, քանի դեռ իսրայելական զորքերը դուրս չեն եկել զավթած տարածքից: Իսկ գործնականում Սաուդյան Արաբիան և Քուվեյթը անմիջապես պակասեցրին նավթի հանույթը ավելի քան 10 տոկոսով:

Հոկտեմբերի 20—22-ը արաբական երկրները մեկը մյուսի հետևից նավթի մատակարարումները դադարեցնելու մասին հայտարարեցին Միացյալ Նահանգներին, որ Իսրայելին զենք էր մատակարարում, ապա նաև Հոլանդիային, որը իսրայելական դիրքորոշում ուներ: Հեղուկ վառելիքի հանույթը արաբական երկրներում պակասեց գրեթե մեկ երրորդով: Նրանք արգելք դրեցին նաև հումքի մատակարարումների վրա այն վերամշակող գործարաններին, որոնք սովորաբար նավթամթերքներ էին արտահանում ԱՄՆ կամ դրանք վաճառում էին ամերիկյան ռազմածովային նավատորմին: Արաբների հետ չգժտվելու հա-

մար Արևմտյան Եվրոպան գործնականում դադարեցրեց նավթամթերքների արտահանումը ԱՄՆ, այդ թվում նաև այն մթերքների, որոնք մշակվում էին ոչ արաբական հումքից:

Արաբական երկրների կոնֆերանսին ղուգահեռ Քուվեյթում հանդիպեցին Պարսից ծոցի գոտու, ներառյալ Իրանի նավթարդյունահանող պետությունների ներկայացուցիչները: Նրանք պայմանավորվեցին նավթի տեղեկատու գները բարձրացնել գրեթե 70 տոկոսով, իսկ դեկտեմբերին կրկնապատկեցին նաև նոր գինը:

Էմբարգո

«Եթե դուք մեր նկատմամբ թշնամաբար եք տրամադրված, նավթ չեք ստանա: Եթե դուք չեզոք եք՝ կստանաք, բայց ոչ այնքան, ինչքան ստանում էիք առաջ: Եթե դուք մեր նկատմամբ բարեկամաբար եք տրամադրված, կստանաք այնքան, որքան ստանում էիք առաջ»,— այսպես ամփոփեց էմբարգոյի քաղաքականությունը Սաուդյան Արաբիայի նավթի մինիստր Յամանիին:

Արաբները կապիտալիստական պետությունների զարգացմանը մոտենում էին տարբերակված: Նրանք Արևմտյան Եվրոպայի շատ երկրների և Ճապոնիային ամբողջությամբ չդադրեցրին մատակարարումը և առայժմ ձեռք չտվեցին կոնցեսիաներին: Միայն Իրաքը չորրորդ արաբա-իսրայելական պատերազմը սկսելու հաջորդ օրը ազդայնացրեց ամերիկյան եկամուտները «Բասրա փեթրոլեում»-ում, ինչպես նաև հոլանդական բաժինը նույն այդ ընկերության «Ռոյալ դաթչ-Շելլի» ծրարից:

Երբ արաբական երկրները որոշեցին նավթն օգտագործել արդարացի նպատակների հասնելու համար, Արևմուտքում նրանց մեղադրում էին, իբրև թե նրանք «քաղաքականացրել» են ազատ վաճառքի մթերքները: Այդպիսի կարծիքը միայն ծիծաղ էր հարուցում: Նավթը միշտ էլ «քաղաքականացված» է եղել: Հազիվ թե որևէ մեկը մոռացած լինի, թե ինչպես էին իմպերիալիստական պետությունները էսկադրաներ ուղարկում «յոթ քույրերի» շահերը պաշտպանելու համար, դեսանտներ իջեցնում, կազմակերպում հեղաշրջումներ և ճնշում ժողովուրդներին, որոնք փորձում էին հսկողություն սահմանել իրենց սեփական հարստությունների նկատմամբ: Ինչևէ, պատմության շրջանը փակվեց:

Եվ արդարացի էր ֆրանսիական «Էքսպրես» ամսագիրը, որն այն ժամանակ գրում էր. «Մերձավոր արևելքի երկրները ազատ են իրենց ռեսուրսներն օգտագործելու լավագույն եղանակով, իրենց շահերից ելնելով, նրանք իրավունք ունեն ըստ պահանջի բարձրացնել նավթի գները, պահպանել իրենց հանքավայրերը, իրենց բնական կապիտալը օգտագործել իրենց և ոչ թե մեր շահերից ելնելով: Դժգոհել այն բանի համար, որ նրանք մեզ պահում են «իրենց իշխանության տակ», նշանակում է մոռանալ, թե եվրոպացիները և ամերիկացիները ինչպես են իրենց պահել մնացած աշխարհի նկատմամբ հարյուրամյակների ընթացքում և շարունակում են պահել, երբ կարողանում են»:

Առաջներում արևմտյան ստրատեգիան հենվում էր այն նախադրյալի վրա, որը վեր էր ածվել աստվածքի. «Արաբները չեն կարող խմել իրենց նավթը»: Ենթադրվում էր, որ նրանք չեն կարող ապրել՝ առանց վաճառելու իրենց հումքը: Իսկապես, արաբական երկրներն ի վիճակի չեն օգտագործել իրենց արտադրած հեղուկ վառելիքի ճնշող մասը: Սակայն արաբական նավթային պետությունները իրենց փոքրաթիվ բնակչությամբ և Լիբիան այն ժամանակ արդեն ստեղծել էին ոսկու վիթխարի վալյուտային կուտակումներ և կարող էին երկար ժամանակ դիմանալ, ընդհանրապես առանց նավթ արդյունահանելու:

Արևմուտքում ենթադրում էին, որ էմբարգոյի հաջողության համար նրան պետք է մասնակցեն բոլոր նավթարտադրող երկրները: Այս անգամ միայն մի քանի խոշոր նավթարտադրողների մասնակցությունը նրանում ապահովեց արաբների հաջողությունը: Իրանը, որ աշխարհում երկրորդ հեղուկ վառելիք արտադրողն է, էմբարգոյին չմիացավ, թեև հայտարարեց, որ մտադիր չէ մեծ չափերով, քան որոշված է, ավելացնել հանույթը: Սակայն ամեն դեպքում նրա արտադրությունը չէր կարող ծածկել համաշխարհային շուկայում հարյուր միլիոնավոր տոննա արաբական նավթի պակասը:

Վերջապես, կարծիք կար, որ պրոամերիկյան համակրանքը «չափավոր» արաբական վարչակարգի նկատմամբ պետք է ավելի ուժեղ լինի նրանց «հակաիսրայելական» տրամադրվածությունից: Սակայն նույնիսկ արաբական երկրների պահպանողական կառավարությունները, նկատի ունենալով ստեղծված իրադրությունը, պետք է այդ պահին համագործակցեին հակաիսրայելական, հակաիմպերիալիստական հիմունքներով առաջադիմական

վարչակարգերի հետ: Մասսաների տրամադրությունը արաբական միապետներին մղում էին դեպի Սիրիայի, Եգիպտոսի, Իրաքի առավել վճռական աջակցությունը: Արաբական թերակղզու ոչ մի նավթային պետություն չէր կարող անտեսել արաբական այլ երկրներից եկած իր ներգաղթյալներին, հատկապես այնպիսի անհանգիստ տարրերի, ինչպիսին հարյուր հազարավոր պաղեստինցիներն են: Հաշվից չի կարելի դեն նետել նաև արաբական միապետների ազգայնական և կրոնական զգացմունքները:

Էմբարգոն իրականացնելու գործում մեծ դեր խաղացին հատկապես Ծոցի նավթային պետությունները: Միայն Սաուդյան Արաբիան հանույթն ավելացնելու համար այնպիսի նավթային ռեզերվներ և հնարավորություններ ուներ, որ կարող էր տապալել մնացած բոլոր նավթարտադրողների գործողությունները միասին վերցրած: Սակայն, չնայած Միացյալ Նահանգների հետ ունեցած սերտ կապերին, պարզվեց, որ տարաձայնությունները նրանց միջև ավելի շատ էին, քան երևում էր առաջին հայացքից:

Հոկտեմբերյան պատերազմից մի տարի առաջ Ֆեյսալ թագավորը ԱՄՆ-ին նախազգուշացրեց, որ արաբա-իսրայելական նոր կոնֆլիկտը վտանգավոր հետևանքների կհասցնի և անխուսափելի կդարձնի այն նախադրյալները, որոնք էր-Ռիյադը կպաշտպանի, եթե չհասնեն դրանց կարգավորմանը: Սակայն պատերազմն սկսվեց, հետևեցին Իսրայելին ամերիկյան զենք մատակարարելու համար «օդային կամուրջի» կազմակերպումը և պրեզիդենտ Նիքսոնի հայտարարությունը, որ ԱՄՆ-ը թեև Ավիվին ռազմական օգնություն ցույց կտա 2 միլիարդ 200 միլիոն դոլար գումարով: Ֆեյսալ թագավորը, ըստ երևույթին, չէր առարկում Պաղեստինում տարածքային որևէ փոփոխության դեմ: Սակայն, որպես «իսլամի սրբազան վայրերի պահապան», նա չէր կարող համաձայնվել Արևելյան Երուսաղեմը արաբներին վերադարձնելու պահանջին: Կար նաև անձնական գործոնը: Երբ Ֆեյսալը ասում էր, թե ինքը «ծեր է և կցանկանար մահվանից առաջ աղոթել Երուսաղեմի Օմարի մզկիթում», հնարավոր է, դա միայն պրոպագանդիստական ժեստ չէր: Բացի դրանից, նավթային էմբարգոն սաուդյան միապետությանը միջարաբական գործերում այնպիսի կշիռ տվեց, ինչպիսին երբեք առաջներում չէր ունեցել, չնայած թագավորության ազդեցության աճին, Եգիպտոսի պրեզիդենտ Նասերի մահից հետո:

Արաբական երկրները, նավթը որպես քաղաքական զենք օգտագործելով, իմպերիալիստական լագերին ստիպեցին հատուցել Իսրայելի զավթողական քաղաքականությանը ցույց տված բազմամյա օգնության համար: Նավթի հարցը խորացրեց տարաձայնությունները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի գծով նրա դաշնակիցների միջև: Արևմտյան երկրներից ոչ մեկը, բացի սալազարական Պորտուգալիայից, թույլ չտվեց իր տարածքով ամերիկյան զենքը փոխադրել Իսրայել:

Հոկտեմբերյան պատերազմի ժամանակ ամերիկյան զորքերը ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Արևմտյան Եվրոպայում, դրվեցին ռազմական բարձր պատրաստականության մակարդակի վրա, որը լուրջ քայլ էր դեպի Սովետական Միության հետ ռազմական առճակատումը: Այդ գործողությունները ձեռնարկեցին առանց դաշնակիցների հետ նախապես խորհրդակցելու, որը մեկ անգամ ևս ցույց տվեց, թե որքան քիչ է հաշվի նստում նրանց հետ ՆԱՏՕ-ի առաջատար տերությունը: Արևմտյան Եվրոպայով անցնող դժգոհության ալիքը Ատլանտիկայի վրայով առաջ բերեց հրապարակային փոխադարձ հայհոյանք: Այն արթնացրեց ԵՏՀ-ի այն շրջանների վիրավորված ինքնասիրությունը, որոնք վաղուց առաջ էին քաշել հետևյալ թեզիսը. «Ընդհանուր շուկան», որ աճել դարձել է տնտեսական հրսկա, չի կարող մնալ քաղաքական գաճաճ»: Բայց որպեսզի «տնտեսական հսկա» դառնա, ԵՏՀ-ին հարկավոր է նավթ»:

Այդ իրադրության պայմաններում Եվրոպական տնտեսական համագործակցության մասնակիցները հատկապես սուր կերպով անհրաժեշտություն զգացին արաբական երկրների աչքում Վաշինգտոնի պրոիսրայելական քաղաքականությունից անջրպետվել: 1973 թվականի նոյեմբերի 5-ին 10 պետություններ՝ արաբական երկրների նավթարտահանող կազմակերպության անդամները որոշեցին դեկտեմբերին արդյունահանումը սեպտեմբերի համեմատությամբ կրճատել 5 տոկոսով և 5 տոկոս էլ նոյեմբերի համեմատությամբ: Արևմտյան Եվրոպան անմիջապես արձագանքեց: Արդեն նոյեմբերի 6-ի առավոտյան ԵՏՀ-ի երկրների կառավարությունները հանդես եկան հայտարարությամբ Մերձավոր արևելքում ստեղծված վիճակի առթիվ: Նրանք արտահայտվեցին Անվտանգության խորհրդի բանաձևի կատարման օգտին, պահանջելով՝ մասնակից երկրների զորքերը վերադարձնելու այն դիրքերը, որ նրանք գրավում էին հոկտեմբե-

դի 22-ին: Հիշեցնենք, որ իսրայելական զորքերը հոկտեմբերի 22-ին խախտեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ Անվտանգության խորհրդի որոշումը և Եգիպտոսում որոշ հարձակողական գործողություններ ծավալեցին: ԵՏՀ-ն հայտարարեց նաև, որ անհրաժեշտ է իրականացնել Անվտանգության խորհրդի 1967 թվականի նոյեմբերի 22-ի բանաձևը իր բոլոր մասերով, ներառյալ 1967 թվականին օկուպացված արաբական տարածքի ազատագրումը:

Մինչև հոկտեմբերյան մերձավորարևելյան պատերազմը քաղաքական դիտորդները Ճապոնիայի արտաքին քաղաքականությունը գնահատեցին որպես «պրոիսրայելական»: Այդ դիրքորոշումը համապատասխանում էր Վաշինգտոնի կրտսեր պարտնյորի վիճակին: Սակայն 1973 թվականի նոյեմբերի վերջին Ճապոնիայի արտաքին գործերի մինիստրությունը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ սպառնում էր, թե Ճապոնիան «կվերանայի իր քաղաքականությունը Իսրայելի նկատմամբ», եթե վերջինս «իր զորքերը չհանի 1967 թվականի պատերազմի ժամանակ օկուպացրած տարածքից»: Տոկիոն ցանկություն հայտնեց լավ հարաբերություններ հաստատել նավթ արտահանող երկրների հետ Մերձավոր ու Միջին Արևելքում, և Ճապոնական կառավարությունը հապճեպ արաբական երկրներ ուղարկեց բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Սառն իրականություն

Կապիտալիստական աշխարհը այնուամենայնիվ ստիպված էր ընդհարվել հանգամանքների սառն իրականությանը, երբ չէր բավականացնում ջերմություն հաղորդող հումքը: Ցուրտ տներում, արդյունաբերության և ավտոտրանսպորտի առանձին ճյուղերի կաթվածահարությունը, գների աճը, նավթամթերքների քարտային սիստեմի կիրառումը արդյունաբերական կապիտալիստական երկրներում՝ այս բոլորը 1973/74 թվականի ձմռանը էներգետիկ սուվի դրսևորումներ էին: Ճգնաժամի թեժ պահին Արևմուտքի էկոնոմիկայի պրեզիդենտները, պրեմիեր մինիստրները և մինիստրները էներգետիկայի պրոբլեմներին նվիրեցին ընդարձակ դիմումներ և հարցազրույցներ: Ստեղծվեցին «ճգնաժամը հաղթահարելու շտաբներ», տեղի ունեցան աղգային և միջազգային մակարդակով փորձագետների խորհրդակցություններ:

«Մեզ սպասում է խավարի դարը», «Մոտալ հեռանկարներ», «էներգետիկական պատերազմ». Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում այսպիսի վերնագրերով թերթերը գրեթե ամեն օր հաղորդում էին վառելիքի տնտեսման նոր միջոցառումների մասին:

ԱՄՆ-ում սահմանափակեցին հեղուկ վառելիքի մատակարարումը հիմնարկություններին, բնակելի տներին ու դպրոցներին, հայտարարեցին նավթամթերքների նորմավորման պլանների և դրանց հարկերը բարձրացնելու մասին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ խիստ նորմաներ սահմանեցին:

ԱՄՆ-ի կոնգրեսը էներգետիկ ճգնաժամի կապակցությամբ պրեզիդենտին արտակարգ լիազորություններ տվեց: Բոլոր բնադավառներին արգելվեց քարածուխից նավթին անցնելը, ավիաընկերությունները կրճատեցին ուղերթերի քանակը, սահմանափակվեցին դպրոցների, հիմնարկությունների, խանութների աշխատանքի ժամերը: Բնակչությանը կոչ արեցին բնակելի տներում նվազեցնել ջերմաստիճանը, որպեսզի տնտեսեն էներգիան: Ամերիկացիները ավելացրին ցմամաքային շելֆից ստացվող հանույթը: ԱՄՆ-ում խոսում էին «նավթային մարտահրավերի» մասին, այն հավասարեցնելով ամենադժվար պրոբլեմներին, որոնց երբևիցե բախվել էր երկիրը:

«Ամերիկյան արդյունաբերությունը միշտ էլ արտակարգ շռայլել է էներգիան, որը չափազանց էժան էր, և հարկ չկար նրա մասին անհանգստանալ,— գրում էր «Ֆորչուն» հանդեսը:— Շնորհիվ նավթի էժանության, ԱՄՆ-ի վերամշակման արդյունաբերության կողմից գնվող էներգիայի արժեքը ընթացիկ գներով 1958-ից մինչև 1970 թվականը ավելացավ միայն 5 տոկոսով: Այնինչ մնացած բոլոր ծախսերը արագ մեծացան: Այսպիսով, ամենուրեք արդյունաբերողները հզոր խթան ստացան թանկ արժեցող աշխատանքը փոխարինել էժան էներգիայով: Այժմ ակնհայտ է, որ ամենադժվար դրության մեջ են գտնվում առավել էներգատարողունակ՝ նավթավերամշակման, ալյումինի, սննդի, քիմիական, ցեմենտի և թղթի, ճյուղերը: Նրանք ավելի արագ պետք է բարձրացնեն իրենց արտադրանքի գները»:

«Էներգիայի թանկացման առաջին իսկ արդյունքը,— նշում է հանդեսը,— կլինի բանվորների ռեալ աշխատավարձի իջեցումը»։

Նավթի մատակարարումների դադարեցումը Հոլանդիային ստիպեցին արգելել կիրակնօրյա բոլոր ուղևորությունները մասնավոր ավտոմեքենաներով։ Այն կինոժապավենները, որ կիրակի օրերին նկարահանվում էին Արևմտյան Գերմանիայի և Հոլանդիայի ավտոուղիներում, թվում էին Կրամերի «Վերջին ափին» ֆիլմի շարունակությունը, որտեղ պատկերված էր աշխարհը միջուկային պատերազմից հետո։

Արևմտաեվրոպական երկրներից մեկի պրեմիեր մինիստրը ցուցադրաբար երթևեկում էր հեծանիվով։ Հեծանիվների պահանջարկը Իտալիայում ծննդ սև շուկա՝ Եվրոպայում գրեթե մոռացված տրանսպորտի այդ միջոցի համար։

Փարիզի թանկ հյուրանոցների հումորից ոչ զուրկ տերերը հայտարարեցին. «Այն հաճախորդներին, ովքեր կժամանեն ձիով, վարսակը և խոտը կտրվի անվճար»։ Ֆրանսիական ավտոմոբիլային արդյունաբերությունը ստիպված էր մի քանի օրով դադարեցնել արտադրությունը։ Կառավարությունը ստիպված էր ավիաուղիներում կրճատել ուղերթների քանակը, կարճացնել հեռուստահաղորդումների ժամանակը, ճանապարհներին սահմանափակել արագությունը։

Բրիտանական հանքափորները հայտարարեցին, որ իրենք մտադիր չեն առանց համապատասխան պարգևատրության արտաժամյա աշխատել։ Գրեթե միաժամանակ գործադուլ սկսեց երկաթուղայինների պրոֆմիությունը, ձգտելով աշխատավարձի բարձրացման։ Պողպատաձուլական և քիմիական արդյունաբերությունը կրճատեց արտադրությունը։ Պահպանողականների կաբինետը դիմեց այնպիսի աննախադեպ միջոցի, ինչպիսին երեքօրյա աշխատանքային շաբաթվա սահմանումն է, միայն նրա համար, որպեսզի մերժի հանքագործների պահանջները՝ վճարել արտաժամյա աշխատած օրերի համար։ Անգլիական ավիաընկերությունները նվազեցրին Ատլանտիկայի վրայով կատարվող ուղերթների քանակը։ Լոնդոնում շատ ռեկլամների լույսերը հանգան։ Կառավարության կարգադրությամբ կրճատվեց բենզինի և վառելիքի այլ տեսակների մատակարարումը սպառողներին։

«Ճապոնական հրաշքը մնաց ետևում»,— դառնորեն հավաստիացրեց ճապոնական ամենաազդեցիկ ֆիրմաներից մեկի անհանգստացած պրեզիդենտը։

Ինչ-որ դատապարտվածության զգացումը չափազանցված էր։ Սակայն անկասկած էր, որ էներգետիկ ճգնաժամը ավելի վաղ էր սկսվել, քան սպասում էին։ Ըստ մասնագետների տեսության, այն պետք է սկսվեր միայն հաջորդ տասնամյակում։ «Ոչ մի երաժարձություն, սկսած երկրորդ համաշխարհային պատերազմից, միջազգային մասշտաբով այսքան լայն հետևանքներ չունեցավ,— գրեց «Թայմ» հանդեսը։— Հանկարծակի ի հայտ եկած վառելիքի պակասը արևմտյան երկրների կառավարություններին վերջապես ստիպեց հասկանալու, որ էժան էներգիայի առատության դարաշրջանը վերջացավ»։ Բայց արդյո՞ք միայն էներգիայի։

Երբ կապիտալիզմի գաղափարախոսները պատառոտում էին իրենց հագուստները, գլխներին մոխիր էին ցանում, ողբում էին Արևմուտքի բախտի համար, դժվար էր հավատալ նրանց անկեղծությանը։ Այնպիսի հումքի գների բարձրացումը, ինչպիսին նավթն է, արտացոլում է միայն համաշխարհային տնտեսության զարգացման տենդենցը։ Ռիկարդոյից սկսած մինչև Քեյնս դասական բուրժուական քաղաքատնտեսությունը նախազգուշացնում էր, որ վերամշակող արդյունաբերության արտադրանքի գները պետք է իջնեն, իսկ հումքինը՝ աճեն։ Վերջին տարիներին հակառակն է դիտվում։ «Հումքի հարաբերական գինը ընկել է 40 տոկոսով 1947—1951 թվականների ժամանակաշրջանի համեմատությամբ և չի աճել 1890 թվականից,— գրում էր 70-ական թվականների սկզբին ալժիրցի տնտեսագետ Թալյաքը։— Հիմա խոսում են նավթի գների բարձրացման մասին։ Սակայն արդյունաբերական ապրանքների գները վերջին տարիներին ավելացել են երեք անգամ»։ Այս ճանապարհով է տեղի ունենում զարգացող երկրների թալանը մի բուռ կապիտալիստական պետությունների կողմից։ «Զարգացած երկրների (կապիտալիզմի— Ա. Վ.) էկոնոմիկայի աճը կատարվում էր մասամբ քիչ զարգացած երկրների հաշվին,— խոստովանում էր «Մոնդ» թերթը։— Այդ աճը հիմնված էր կողոպուտի վրա»։

Համաշխարհային կապիտալիստական տնտեսության շրջանակներում զարգացող երկրների վրա է ընկնում անագի կոնցենտրատի, ծարիրի, քրոմի, վոլֆրամի, ալմաստի, մանգանի, պղնձի, բոքսիտների արտադրության նշանակալից մասը, ֆոսֆատների, կապարի, ցինկի մեծ բաժինը։ Եթե բոլոր երկրնե-

րում սկսեն նույնքան հանքանյութ օգտագործել, որքան ԱՄՆ-ը, ապա երկաթի, պղնձի, անագի համաշխարհային արտադրությունը պետք է մեծացվի տասնյակ անգամ: Արդյունաբերական կապիտալիստական ընկերության «արյան մատակարարման» խախտման վերաբերյալ անհանգստության առաջին ազդանշանները վերաբերում էին հումքի շատ տեսակներին: 40—60 տարվա ընթացքում կարող էին սպառվել մի շարք մետաղների պաշարներ, եթե նրանց սպառումը աճեր նախկին, արագացված տեմպերով:

Զարգացող երկրներում, որոնք մշտապես էժան հումք էին մատակարարում Արևմուտքի զարգացած պետություններին, հասկացան, որ իրենց բնական ռեսուրսների հաշվին հարստանում են ուրիշները: Հանքանյութերի մի շարք տեսակների հիմնական մատակարարումները իրականացնում էր պետությունների մի նեղ շրջան: Տեսնելով «կոլեկտիվ առևտրի» առավելությունը, նրանք փորձում էին միավորվել:

Պատմական ճշմարտությունը նրանց կողմն էր, սակայն հումքի մատակարարների և նախկին մետրոպոլիաների երկրների միջև ծագեց ուժերի իրական հարաբերակցության հարցը: Զարգացած կապիտալիստական աշխարհը կարող է իջեցնել շատ հումքային ապրանքների գները: Ի տարբերություն հեղուկ վառելիքի, որի պահպանությունն արդեն խիստ անհամատաբեր է, ստրատեգիական ռեզերվների ստեղծումը, օրինակ՝ հաղվագյուտ մետաղների, առանձնապես պրոբլեմ չէր առաջացնի: Ունենալով մի քանի տարվա պաշար, հումք արտադրողները կարող էին իրենց պայմանները փաթաթել ներմուծողների վրին: Եթե նրանց էկոնոմիկան կախված լիներ մեկ-երկու ապրանքի արտահանությունից, եթե պետական գանձարանը դատարկ էր, եթե քաղաքական վարչակարգերը գոյություն ունեին նույն այդ մետրոպոլիաների շնորհիվ, որոնց դեմ նրանք պատրաստվում էին պայքարել, ապա նրանց գործը հարյուր անգամ բարդ էր: Կապիտալիզմի տնտեսական ճգնաժամը 70-ական թվականների և 80-ական թվականների սկզբում նորից կտրուկ կերպով կիջեցնի հումքի գները:

Երբ հոկտեմբերյան պատերազմի առաջացրած փոշին ցրվեց, և արաբները էմբարգոն վերացրին, պարզվեց, որ գլխավոր պրոբլեմը ոչ թե նավթի պակասությունն է, այլ նրա թանկությունը: Ահա թե ինչպես էր գնահատում իրադրությունը «Զեյզ Մանհաթընի» ղեկավար Դևիդ Ռոկֆելլերը «Յու. Ս. Նյուս էնդ Ուորլդ ռիփորթ» հանդեսին տված հարցազրույցում».

Հարց: Ի՞նչ տեղի ունեցավ, այնուամենայնիվ, «նավթային մեծ ճգնաժամի» հետ:

Պատասխան: Ներկայումս մեզ մատակարարում են բավականաչափ շատ նավթ և բենզին: Շատերը, երևի, մտածեցին, որ իրենց խաբել են և նավթի ոչ մի պակասություն էլ չի եղել: Դա բացարձակապես կեղծ և ոչ ճիշտ տեսակետ է:

Հարց: Ինչո՞ւ:

Պատասխան: Բանն այն է, որ ճգնաժամի հետևանքով ստեղծված ծանր իրադրությունը (արաբական էմբարգոն անցյալ տարի արագացրեց դրա սկիզբը) ըստ էության անփոփոխ մնաց: Արդեն շատ տարիներ նավթի հանույթը չի բավարարում նրա աճող պահանջարկը:

Հարց: Դուք ասում եք, որ նավթի մատակարարումը ժամանակավորապես լավացել է: Ձեք կարծո՞ւմ, արդյոք, որ այն նորից կսրվի:

Պատասխան: Դա չի բացառվում: Ներկայումս ստեղծված դրությունը չպետք է մեզ հանգստացնի:

Հարց: Շատերը գտնում են, որ նավթի էմբարգոյի գլխավոր հետևանքը նավթի գների երեք-չորս անգամ բարձրացումն էր մոտ մեկ տարի առաջ եղած գների համեմատությամբ: Այդպե՞ս է արդյոք:

Պատասխան: Անպայման, դա հում նավթի նկատմամբ դրության ճիշտ գնահատական է, թեև նավթամթերքների գործն այլ է: Հում նավթի գները կտրուկ բարձրացան, և դրանց աճը տեղի ունեցավ չափազանց արագ: Դա առաջ բերեց վճարման հաշվեկշռի պրոբլեմը և, որ ամենակարևորն է, վալյուտային պաշարների տեղափոխությունը աշխարհի մի շրջանից մյուսը:

Հարց: Կմնա՞ն արդյոք նավթի գները մոտավորապես այնպիսին, ինչպիսին ներկայումս են:

Պատասխան: Ես կարծում եմ, մենք մեծ սխալ թույլ տված կլինենք, եթե հույս ունենանք, որ գները նշանակալից չափով կիջնեն: Գների իջեցումը դրական երևույթ կլիներ, բայց հազիվ թե դա տեղի ունենա: Մենք պետք է հասկանանք, որ

նավթամթերքների գինը, հատկապես Միացյալ Նահանգներում, չափազանց ցածր էր և կայուն երկար տարիներ: Կարելի է ասել, որ մենք ապրում էինք ապահովիկ: Գների բարձրացումը դարձավ անխուսափելի: Իհարկե, մենք չէինք սպասում, որ գները այսքան արագ կբարձրանան:

Հարց: 1974 թվականին նավթի ներմուծումը ԱՄՆ 8 միլիարդից հասել է 25 միլիարդ դոլարի: Ի վիճակի՞ ենք մենք արդյոք անվերջ դիմանալ դրամական միջոցների նման արտահոսքին:

Պատասխան: Իհարկե, մենք կգերադասեինք, որ դա տեղի չունենար: Դա մեզ համար պրոբլեմներ կստեղծի: Սակայն մենք գտնվում ենք բավական լավ վիճակում, քան մյուս արդյունաբերական զարգացած երկրները, քանի որ տոկոսային հարաբերությամբ ներմուծում ենք զգալիորեն քիչ նավթ: Բացի այդ, մենք էներգիայի ուրիշ աղբյուր ևս ունենք, մասնավորապես ածուխ, որի պաշարները ԱՄՆ-ում հսկայական են: Հետզհետե մենք կկարողանանք, եթե կամենանք, զգալիորեն ավելացնել ներքին էներգետիկ ռեսուրսների օգտագործումը:

Հարց: Իսկ ի՞նչ կանեն Ճապոնիան, Իտալիան, Ֆրանսիան, Հոլանդիան:

Պատասխան: Այդ երկրները պետք է հաշտվեն իրենց վալյուտային պաշարների զգալի մասը նավթարդյունահանող երկրներ փոխադրելու անխուսափելիության հետ: Այն պետություններում, որոնք չեն կարող էներգիայի նոր աղբյուրներ գտնել կամ կրճատել նավթի սպառումը, կենսական մակարդակը կիջնի...

Ռոկֆելլերների հզոր տոհմի անթագակիր գլխավորի կարծիքները թույլ են տալիս որոշ եզրակացություններ անել: Նախ և առաջ, էներգետիկ մոնոպոլիաները ողջունեցին գների բարձրացումը: Երկրորդ, նավթային ճգնաժամից ավելի մեծ կորուստ կրեցին Արևմտյան Եվրոպան և Ճապոնիան, քան ԱՄՆ-ը: Երրորդ, Արևմուտքի էկոնոմիկայի կառուցվածքային փոփոխության միջոցառումների և նավթի գների բարձրացման համար պետք է պատասխան տային սպառողները, գլխավորապես շարքային-

ները: Չորրորդ, էներգետիկ ընկերություններն իրենց նոր ներդրումների համար կարիք ունեին ակամուտների ավելի շատ աճի:

Հակա-ՕՊԷԿ

Նավթային ճգնաժամի գլխավոր դժվարությունները աշխատավորների ուսերին գցելու օպերացիան սքողելով՝ բուրժուական մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն եռանդուն կերպով համոզում էին բնակիչներին, որ այդ բոլորի մեղքը արաբական երկրներինն է: Նրանց գործողությունները կոչվում էին ոչ այլ կերպ, քան շանտաժ: Սակայն երբ էներգետիկ պրոբլեմներին լրված ուշադրություն դարձվեց, անսպասելիորեն վառ լույսը ընկավ «յոթ քույրերի» գործունեության վրա:

Մեկը մյուսի ետևից բացահայտվում էին այդ մոնոպոլիստական ընտանիքի դուստրերի կամ թոռների ձեռնարկությունների ամոթալի մեքենայությունները: «Նավթի գների բարձրացումը չի կարելի բացատրել միայն ճգնաժամով,— հայտարարեց ԳՖՀ-ի այն ժամանակվա կանցլեր Վիլլի Բրանդտը:— Դրա վրա շատերը իրենց ձեռքերը տաքացրին»: Պարզվեց, որ «յոթ քույրերը» օգտվեցին ինչպես իրենց, այնպես էլ արաբական երկրների գործողություններից առաջացած խառնաշփոթությունից, որպեսզի ուռճացնեն գները և թալանեն սպառողին: «Նավթի սովը» խեղդում էր Արևմուտքին, չնայած լեփ-լեցուն նավթապահեստարաններին և ծանրաբեռնված գործարաններին: Բորբոքվեց ամեն տեսակ «պակասի» հիստերիա: Նավթամթերքների գները դեպի վեր թռան, դրանց հետ միասին՝ նաև մոնոպոլիաների եկամուտները:

1974 թվականին «Էքսոնն» բաժնետոմսերի տերերը մասնական տաճարում հավաքվեցին իրենց ամենամյա ժողովին, որտեղ պատերից նայում էին անցյալի քարոզիչները՝ Կոնֆուցիուսը, Մովսեսը և Զրադաշտը, իսկ նրանց վերևում նեոնյան կարմիր տառերով փայլում էին նրանց կորպորացիաների անունները: Բաժնետերերը իմացան, որ իրենց եկամուտները հասել են 2,5 միլիարդ դոլարի, տարեկան ավելանալով 900 միլիոնով: Նիստերի դահլիճում լռություն էր: Միայն տաճարի մոտից անցնող բեռնատար ավտոմեքենաների բարձր սուլոցներն էին խախ-

ատում լռությունը: Այդ վարորդներն էին ցույց կազմակերպել՝ բողոքելով վառելիքի բարձր գների դեմ:

Նույնիսկ շատ բանների սովոր ամերիկացիները մտածմունքի մեջ ընկան, իմանալով, որ 1973 թվականին 21 նավթային ընկերություններ ստացել են շուրջ 10 միլիարդ դոլար շահույթ՝ երկու անգամ ավելի, քան ավտոմեքենաշինության և պողպատաձուլական կորպորացիաները: Նավթարդյունաբերության եկամուտները տարեկան բարձրացան շուրջ 60 տոկոսով:

Խոշոր նավթային ընկերությունները փորձում էին խուսափել իրենց վրա թափվող մեղադրանքներից: «Թեքսակո» ընկերության՝ 150 թերթերում տված հայտարարությունը բարբառում էր. «Մենք ոչինչ չենք թաքցնո՛ւմ»: Իսկ «Շելլը» 230 թերթերում հարց էր տալիս. «Մի՞թե որևիցե մեկը կարող է մեր շահույթները չափազանց համարել»: «Էքսոնի» ղեկավար Քեննեթ Ջեյմիզոնը Մանհաթընի կենտրոնում գտնվող 50-հարկանի գրասենյակում ընդունեց թղթակիցներին և հայտարարեց. «Ես կարծում եմ, որ մեր արդյունաբերությունը հիմա միայն մի բան է ասում. մեզ հանգիստ թողեք: Եկամուտների ավելացման ղգալի մասը մենք ստացել ենք Եվրոպայից և մասամբ Ճապոնիայից: Դա պայմանավորված է նրանով, որ վաճառքի ծավալը մեծացել է, ինչպես նաև բարձրացել են գները: Եվրոպական գները տարիների ընթացքում շատ ցածր մակարդակի վրա էին... Դե, իսկ հետո, քանի որ ստեղծվում է մի իրադրություն, երբ դժվարանում է մատակարարման հարցը, կիրառվում է պահանջարկի և առաջարկության օրենքը, և գները բարձրանում են: Դրա հետևանքով մեր գները Եվրոպայում ավելացան: Բայց դրանք բնավ էլ չափազանց բարձր մակարդակի վրա չեն գտնվում»:

Պարզ է, որ արաբական երկրները և Իրանը նավթի գները բարձրացրին ամենից առաջ սեփական շահերից ելնելով: Սակայն լավատեղյակ ամերիկյան ժուռնալիստ Ջեկ Անդերսոնը հայտնաբերեց շատ հետաքրքիր մի փաստ աշխարհի ամենախոշոր նավթարդյունահանող ընկերության՝ ԱՐԱՄԿՈ-ի գործունեության մասին: Նրա հետ ունեցած մանրամասն հարցազրույցը հրապարակեց վերջերս փակված լիբանանյան «Սկետչ» հանդեսը: Նրա նկարագրած պատկերը էականորեն տարբերվում է այն բանից, ինչ փորձում էին հասարակական կարծիքին ներշնչել նավթային տուզերը:

«Սկետչ»: Դուք կարո՞ղ եք ավելի մանրամասն պատմել գների հետ ԱՐԱՄԿՈ-ի մեքենայությունների մասին և ասել, թե ինչու նա դիմեց այդ քայլին:

Անդերսոն: Մենք կարողացանք ծանոթանալ նավթային կարտելի որոշ գաղտնի փաստաթղթերին: Դրանք ցույց են տալիս, որ ԱՐԱՄԿՈ-ն խրախուսում էր Միջին արևելքում նավթի գների բարձրացումը: Նա տնտեսական պատճառներ ուներ այդ բանն անելու համար: Նա ցանկանում էր շատ դրամ ձեռք բերել... Այդ դրամը նրան հարկավոր էր, որպեսզի ծավալի էներգիայի որոշ աղբյուրներ, որոնք հիմա ԱՄՆ-ում փակ են:

«Սկետչ»: Ինչպե՞ս էին գործում ԱՐԱՄԿՈ-ի մասնակիցները:

Անդերսոն: Այդ ընկերությունները 1973 թվականի հունիսին սաուդացիներին մղեցին այն բանին, որպեսզի նրանք իրենց հարկերը բարձրացնեն ԱՐԱՄԿՈ-ի վրա: Դա թույլ կտար գները բարձրացնել: Սակայն յուրաքանչյուր դոլարի համար, որ վճարում են Սաուդյան Արաբիային հարկի դիմաց, նրանք պետք է ամերիկյան կառավարությանը վճարեն մեկ դոլար պակաս:

Առաջներում «յոթ քույրերը» եկամտի հիմնական մասը ստանում էին հում նավթի հանույթից և վաճառքից, այսինքն՝ ՕՊԵԿ-ի մասնակիցների շահագործումից, թեև դուստր և թոռ ընկերությունները, նայած իրադրությանը, ինչպես հայտնի է, շահույթ էին կորզում շարժման տարբեր փուլերում և նավթի վերամշակումից: 40-ական թվականներին Պարսից ծոցի ավազանից ստացված յուրաքանչյուր 100 դոլար շահույթից ընկերությանը հասնում էր 82-ը, իսկ նավթ արտադրող երկրներին՝ 18-ը: «Ֆիֆթի-ֆիֆթիի» ժամանակաշրջանում այդ հարաբերությունը դարձավ 68 և 32, 1970 թվականին՝ 30 և 70: 1973 թվականի վերջին արտահանող երկրները ստանում էին արդեն գրեթե հում նավթի վաճառքից առաջացած ամբողջ եկամուտը: Հաջորդ տարին Արաբիայի նավթային երկրները մեկը մյուսի հետևից ավելացրին կոնցեսիոներական ընկերության մասնակցության բաժինը մինչև 60 տոկոսով, նույնիսկ եթե նման համար, իսկ հետո նրանց վրա լրիվ հսկողություն սահմանեցին: Մոտենում էր կոնցեսիոն սիստեմի վախճանը:

«Երբ կառավարությունները (ՕՊԵԿ— Ա. Վ.) լրիվ կամ մասնակիորեն իրենց ձեռքը կվերցնեն հանույթը և մեզ կզրկեն հում

նավթի վաճառքից ստացված եկամուտներից, մեր շահույթները կստացվեն փոխադրումից, վերամշակումից և բաշխումից»,— հայտարարեց «Ռոյալ դաթչ-Շելլի» գլխավոր դիրեկտոր Մակֆեյին։ Թեպետ նրա խոսքերը հայտնագործություն չէին, սակայն շատ են օգնում՝ բացատրելու կապիտալիստական աշխարհում ստեղծված իրադրությունը։

Եթե միջազգային ասպարեզում «յոթ քույրերի» դիրքերը ամբողջությամբ առած համեմատաբար թուլացան, ապա զարգացած կապիտալիստական երկրներում դրանք ամրապնդվեցին և՛ հարաբերական, և՛ բացարձակ իմաստով։

Միջազգային նավթային կարտելը նախ և առաջ ներկայացնում է ամերիկացիների շահերը, իսկ էներգետիկ ճգնաժամի պայմաններում ԱՄՆ-ի մոնոպոլիաները իրենց մրցակիցների համեմատությամբ գտնվում էին ավելի ձեռնտու պայմաններում։ Նրանք գիտական հետազոտություններով և փորձարարական-կոնստրուկտորական մշակումներով գտնվում են առջևի բնագծերում, ունեն գիտատեխնիկական նվաճումներից օգտվելու մեծ փորձ և ճկունություն, շատ կապիտալ և տարողունակ շուկա։ ԱՄՆ-ը ամենից շատ է ապահովված սեփական էներգիայով, իսկ դա նշանակում է, որ միջոցների տեղափոխությունը դեպի ՕՊԵԿ-ի երկրները տեղի է ունենում ամենից առաջ Ճապոնիայի և Արևմտյան Եվրոպայի հաշվին։

1974 թվականի սկզբում Վաշինգտոնը էներգետիկ ճգնաժամը աստիճանաբար վերացնելու պլան առաջարկեց։ Ամերիկյան վարչակարգի գլխավորը առաջարկեց ստեղծել նավթ ներմուծող երկրների կազմակերպություն՝ յուրատեսակ «հակա-ՕՊԵԿ»։

Սակայն էներգետիկ ճգնաժամը բոլորովին էլ չնպաստեց Արևմուտքի միավորվելուն։ «Եվրոպան վրդովված է Միացյալ Նահանգների վրա, իսկ Միացյալ Նահանգները զայրացած են Եվրոպայի վարքագծից,— արձանագրում էր «Նյուսուիկ» շաբաթաթերթը։— Մարդիկ իրարանցման մեջ են, որովհետև սարսափելի պատերազմին փոխարինելու է գալիս այս անկայուն աշխարհի խառնաշփոթությունը»։ Վաշինգտոնում ոչ առանց հիմքի վախենում էին, որ նավթի ծարավը հագեցնելու ցանկությունը արևմտաեվրոպական պետություններին կստիպի հեռանալ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությանն աջակցելուց, փնտրել ինքնուրույն կապեր և փոխզիջումներ անել նավթամատակարարներին։ Իր հերթին, Արևմտյան Եվրոպայի պետությունները և Ճապոնիան նույնպես վախենում էին, թե ԱՄՆ-ը, որտեղ ապրում են յոթ «քույրերից» հինգը, և որտեղ կախվածությունը նավթի ներմուծումից ավելի պակաս է, քան մյուսները, նավթի ներմուծումից ավելի պակաս է, քան մյուսները, աշխատում է միակողմանի օգուտներ քաղել կապիտալիստական աշխարհին համակած տնտեսական դժվարություններից։

Երբ Վաշինգտոնում սկսեցին խոսել նավթ սպառող երկրների համատեղ գործելու անհրաժեշտության մասին, ապա ամերիկյան պատճառաբանությունները զարմանալիորեն հիշեցնում էին «յոթ քույրերի» փաստարկներին։ «Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ սուր պակասի դեպքում հարկավոր է ունենալ նավթի բաշխման համաձայնեցված սիստեմ,— պնդում էր կարտելի նախագահ Մակֆեյին։— Հարկավոր է միավորել կառավարության ուժերը»։ Ուստի «հակա-ՕՊԵԿ» ստեղծելու կոչը շատերը հասկացան որպես միջազգային կապիտալիստական շուկայում ամերիկյան մոնոպոլիաների իշխող դիրքերը վերականգնելու և ուժեղացնելու ձգտում, իսկ Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի կառավարություններին ավելի ամուր կապել Վաշինգտոնին։

1974 թվականի փետրվարի 11—13-ին Ամերիկայի մայրաքաղաքում տեղի ունեցավ նավթ սպառող պետությունների՝ ԱՄՆ-ի, ԵՏՀ-ի երկրների, ինչպես նաև Ճապոնիայի, Կանադայի և Նորվեգիայի ներկայացուցիչների փակ խորհրդակցություն։ Քննարկում էին էներգետիկ ճգնաժամի սրված պրոբլեմները։ Սակայն խորհրդակցության նյութերը, կոմյունիկեն և նրա բազմաթիվ արձագանքները ցույց են տալիս, որ բանը միայն նավթը չէ։ Պայքար էր գնում կապիտալիստական աշխարհի ներսում ուժերի նոր տեղաբաշխման համար։ «Հազիվ թե հնարավոր լինի չափազանցել հիասթափության, նույնիսկ հուսահատության այն զգացումը, որ ճաշակեց ԱՄՆ-ի կառավարությունն այն պատճառով, որ նրա կարծիքով, դաշնակիցները տորպեդահարում էին ամերիկացիների փորձերը նավթ սպառող երկրների միասնական ճակատի ստեղծումն ապահովելու համար»,— խորհրդակցության ընթացքը մեկնաբանում էր լոնդոնյան «Թայմս» վաշինգտոնի թղթակիցը։

Միայն կես տարի անց, այսպես կոչված «էներգետիկայի գծով կոորդինացիոն խմբի» անդամները, որի մեջ մտնում էին վաշինգտոնյան խորհրդակցության 13 մասնակիցներ, նավթային

պրոբլեմի վերաբերյալ նախնական համաձայնության եկան: Նրանք որոշեցին էներգետիկ ճգնաժամը նորից սրվելու դեպքում նավթի սպառումը կրճատել 7—10 տոկոսով, միավորել հեղուկ վառելիքի իրենց ռեզերվները: 1974 թվականի նոյեմբերին զարգացած արդյունաբերություն ունեցող կապիտալիստական պետությունները հայտարարեցին Միջազգային էներգետիկ գործակալություն ստեղծելու մասին: Բայց Ֆրանսիան, Ֆինլանդիան և Հունաստանը հրաժարվեցին միանալ նրան:

1975 թվականին Վաշինգտոնը փորձեց ակտիվացնել Միջազգային էներգետիկ գործակալությունը, այն պայքարի գործուն զենք դարձնել զարգացող երկրների դեմ: Փետրվարի սկզբին տեղի ունեցած Փարիզի կոնֆերանսում գործակալության մասնակիցները նպատակ դրեցին կրճատել իրենց ներմուծումը 10 տոկոսով կամ տարեկան շուրջ 100 միլիոն տոննա, արագացնել էներգիայի այլ աղբյուրների զարգացումը և իջեցնել հեղուկ վառելիքի գները: Սակայն կոնֆերանսի կազմակերպիչները հաշվի էին առել, որ այդպիսի քաղաքականությունն իր մեջ թաքցնում է լուրջ հակասություններ, քանի որ ավելի էժան նավթը էներգիայի շատ տեսակներ կդարձնի անեկամտաբեր և հսկայական կապիտալ ներդրումները՝ անիմաստ: Եվ որպես ելք ենթադրվում էր ստիպել ՕՊԵԿ-ի անդամներին՝ իջեցնել իրենց հումքի գները, ներմուծող երկրների ներսում համապատասխան տարիֆների օգնությամբ դրանք պահել բարձր մակարդակի վրա: Այսպիսով, պետական մոնոպոլիստական կապիտալը կրկին իր տնօրինությամբ կստանար հում նավթի զգալի մասի արժեքը և կստիպեր տնտեսությունը վերակառուցելու համար վճարել մի կողմից զարգացող երկրներին, նավթ ներմուծողներին, մյուս կողմից՝ մասնավորապես սպառողներին Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում և Ճապոնիայում:

ՕՊԵԿ-ի մասնակիցները այն կարծիքին էին, որ նավթի գները պետք է կապել հիմնական ապրանքների գների հետ, որ արտահանում են արդյունաբերական կապիտալիստական պետությունները: 1975 թվականի մարտին Ալժիրի խորհրդակցությունում նրանք խաղաղ երկխոսության կոչեցին զարգացող և զարգացած երկրներին, որպեսզի հաստատեն միջազգային համագործակցություն՝ իրավահավասար և փոխշահավետ հիմքի վրա:

Արևմտյան Եվրոպան և Ճապոնիան փորձում էին ուղղակի

կոնտակտներ սահմանել նավթի սպառողների միջև, տվյալ փուլում խուսափելով նրանց հետ առճակատման մեջ մտնելուց: Զարգացած կապիտալիստական երկրները մեկը մյուսի հետևից, խուսափելով «յոթ քույրերի» միջնորդությունից, գործարք կընքեցին արդյունաբերական սարքավորումները, իսկ մի շարք դեպքերում նաև զենքը նավթով փոխանակելու համար: Արևմտյան Եվրոպայում քննարկում էին արաբական աշխարհի հետ ընդարձակ ռեգիոնալ համագործակցություն սկսելու մասին հարցը: Դրան դիմելու կոչերը նախկին գաղութատերերի շուրթերին ուղղակի աղերսալից էին հնչում: «Եվրոպացիները իմպերիալիստական ձգտումներ չունեն,— երդվում էր «Մոնդ» թերթը:— Նրանք ռազմական դաշինքների չեն ձգտում: Նրանք իրենց քաղաքակրթության որոշակի տիպի ժանդարմներ չեն համարում: Նրանք չունեն ազդեցության գոտի, որը հնարավոր լիներ պաշտպանել: Եվրոպան «երրորդ աշխարհին» կարող է նվիրել իր գիտական, տեխնոլոգիական գիտելիքները, արդյունաբերական տերությունների իրենց փորձը»:

Միացյալ Նահանգները ձգտում էին իրենց դիրքերը ամրապնդել ամենից առաջ Սաուդյան Արաբիայում՝ Ծոցի ավազանի նավթային գլխավոր շտեմարանում: Էր-Ռիյադը, իսրայելական զորքերը արաբական օկուպացված ոչ մեծ տարածքից հեռանալուց անմիջապես հետո, պնդում էր՝ նավթային էմբարգոն վերացնել, իսկ հետո կամպանիա սկսեց նավթի գները իջեցնելու օգտին: Դժվար է ասել՝ որքանով էին անկեղծ այդ ճիգերը: Համենայն դեպս, Սաուդյան Արաբիայում նավթի արտադրությունն այդ պահին չբարձրացավ այնքան, որպեսզի հեղուկ վառելիքի գինն ընկներ:

Ֆեյսալ թագավորը պնդում էր, որ Սաուդյան Արաբիայի սերտ կապերը Վաշինգտոնի հետ իբրև թե «օգնեցին արաբական գործին», միևնույն ժամանակ նրա կառավարությունը ԱՄՆ-ի հետ բանակցություններ սկսեց տեխնիկական և ռազմական համագործակցության մասին: 1974 թվականի հունիսին Սաուդյան Արաբիա այցելեց պրեզիդենտ Նիքսոնը: Նրան հետևեց ԱՄՆ-ի ֆինանսների մինիստր Ուիլյամ Սայմոնը: Նրանք երկուսն էլ ժպիտներ շռայլելով հավաստիացում ձեռք բերեցին, որ նավթը կշարունակի հոսել Միացյալ Նահանգներ աճող չափերով, և որ

սաուդացիները դրանից վաստակած միլիարդների մեծ մասը կներդնեն ԱՄՆ-ում:

1974 թվականի ամռանը ԱՄՆ-ի պետական քարտուղար Քիսինջերը և սաուդյան արքայազն Ֆահդ իբն Աբդել Ազիզը համաձայնագիր ստորագրեցին, որը, մասնավորապես, նախատեսում էր տնտեսական համագործակցության և անվտանգության հարցերի գծով միավորված հանձնաժողով ստեղծել: Քչերն էին կասկածում, որ խոսքը վերաբերում է ինչ-որ ռազմական դաշինքի:

Խոր արմատներ

Երբ 70-ական թվականների սահմանագծում հայտնվեցին էներգետիկ ճգնաժամը գուշակող առաջին տագնապալից ախտանշանները, Արևմուտքում «տեխնոլոգիական լավատեսները» հանգրստացնում էին հասարակական կարծիքը: Նրանք գտնում էին, որ հումքի առանձին տեսակների սպառման չափին համապատասխան նրա գները աստիճանաբար կաճեն, իսկ դա կխթանի նրա տնտեսմանը և բնության մեջ ավելի շատ տարածված փոխարինիչին անցնելուն: «XX դարի կանդիդների» այդ լավատեսությունը չհաստատվեց: Նավթային պատերազմը 70-ական թվականների առաջին կեսին ցույց տվեց, որ ոչ մի աստիճանականության, ոչ մի տարերային ինքնակարգավորման, պահանջարկի և առաջարկի համաձայնության մասին կապիտալիզմի պայմաններում խոսք անգամ լինել չի կարող: Սակայն էներգետիկ ճգնաժամի զարգացման գործում մեծ նշանակություն ունեցավ նաև այն փաստը, որ վառելիքի որոշ տեսակների համար ցիստեռնների հատակը երևում էր: Եթե արտադրողական ուժերի զարգացման պրոցեսը անվերջանալի է, ապա հանածո պաշարների որոշակի տեսակներ սահմանափակ են:

Մեր հարյուրամյակի առաջին կեսում էներգիայի համաշխարհային սպառումը մեծացավ երեք անգամ, դրանից հետո ընդամենը 20 տարվա ընթացքում դարձյալ երեք անգամ մեծացավ: Եթե ժամանակակից մարդուն վերադարձնենք դասական Հռոմի դարաշրջանը, ապա նրա սովորական էներգետիկ պահանջները բավարարելու համար հարկավոր կլինի ծախսել 80 մարդու մկանային ուժ: Անցած հարյուրամյակի սկզբում էներգիայի հիմնական աղբյուրը փայտն էր: Քարածուխը կապիտալիզմին կերակրում էր XIX դարի երկրորդ կեսում և XX դարի առաջին երեք տասնամյակում, այնուհետև դրան փոխարինեց հեղուկ և գազանման վառելիքը: 1929-ից մինչև 1970 թվականը քարածխի բաժինը համաշխարհային էներգետիկ հաշվեկշռում իջավ 80-ից մինչև 35 տոկոսով, իսկ նավթի և գազի տեսակարար կշիռը աճեց 19-ից մինչև 63 տոկոսով: 70-ական թվականների սկզբում Արևմտյան Եվրոպայում նավթը ծածկում էր էներգետիկ կարիքների շուրջ 60 տոկոսը, գազը՝ 9-ը, ԱՄՆ-ում՝ համապատասխանաբար 44 և 33, Ճապոնիայում նավթին բաժին էր ընկնում սպառվող էներգիայի 85 տոկոսը:

Նավթի և գազի պաշարների ինտենսիվ շահագործումը Հյուսիսային ծովի շելֆում այնպես էլ չկարողացավ լուծել Արևմտյան Եվրոպայի էներգետիկ պրոբլեմը: Հյուսիսային ծովը 80-ական թվականների սկզբին բավարարում էր նրա պահանջների մեկ հինգերորդ մասը: Դեղին ծովի և Տոնկինյան ծոցի ցամաքային շելֆերում պոտենցիալ հեռանկար ունեցող հանքավայրերում նավթի խոշոր պաշարներ դեռևս չեն հայտնաբերվել:

60-ական թվականներին բնորոշ նավթի հանույթի աճի տեմպերի դեպքում նրա արտադրությունը հարյուրամյակի վերջում կարող էր տարեկան հասնել 20 միլիարդ տոննայի: Կապիտալիստական աշխարհին, էներգիայի օգտագործման այդպիսի կառուցվածքի դեպքում, սպառնում էր նավթի պաշարների նվազում: Միջազգային մոնոպոլիաները, էներգետիկ հումքի ամենաէժան, ամենալավ տեսակների վրայից հանելով սերուցքը, անմտորեն վատնում են վառելիքի համեմատաբար մատչելի տեսակները, քայքայելով ապագայի զարգացման բազան:

Արաբական երկրների գործողությունների արդյունավետությունը նավթի ճակատում որոշվում էր նաև մեկ այլ հանգամանքով, որի մասին մենք թռուցիկ հիշեցրինք. հեղուկ վառելիքի հիմնական սպառողը կապիտալիստական աշխարհում՝ ԱՄՆ-ը, դարձավ նրա հիմնական ներմուծողը: Բացառությամբ Ալյասկայի, ամերիկյան նավթահորերի պոմպերը առաջին անգամ սկսեցին աշխատել լրիվ հզորությամբ և այնուամենայնիվ ի վիճակի չէին բավարարել հեղուկ վառելիքի երկրի պահանջարկը: 1973 թվականին երկիրը տարեկան ներմուծում էր 300 միլիոն տոննա նավթ: Այդ պայմաններում ԱՄՆ-ի էներգահաշվեկշռում կարևոր նշանակություն կարող են ունենալ (կամ ձեռք բերեն կրկին) բնական գազը, նավթաբեր թերթաքարերը, քարածուխը:

Գիտնականները հաշվարկված են արևի, քամու, երկրի ընդերքում բնական «վառելիքի» և ծովային մակընթացությունների էներգիան օգտագործելու նախագծերով: Այդ պլաններից մի քանիսը ժամանակի ընթացքում կտան իրենց պտուղները: Սակայն գլխավոր հույսը դրվում է միջուկային ռեակտորի վրա, թեև միջուկային էլեկտրակայաններն էլ իրենց պրոբլեմներն են ծնում:

Ինչ էլ որ լինի, դարավերջին նավթն ու գազը, ըստ երևույթին, ամբողջ համաշխարհային տնտեսության մեջ կմնան որպես գլխավոր էներգակրողները: Իսկ դա նշանակում է՝ պահպանել Պարսից ծոցի գոտու կարևորությունը իր հաղվագյուտ նավթի ու գազի հանքավայրերով:

3

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄ-II

«Վաղ աշուն»

Շատերը հարց էին տալիս. ինչպե՞ս պետք է արդյունաբերական Արևմուտքը ապահովի թանկացած էներգետիկ հումքի գնումների ֆինանսավորումը և փակի վճարումների հաշվեկշռի ճեղքվածքը: Կկարողանա՞ էներգիայի հուսալի աղբյուրներ գտնել ապագա զարգացման համար: Կկարողանա՞ արդյոք գլուխ հանել «նավթային դոլարների» հոսքից:

Ինչպես պարզվեց, 1974 թ. նավթի գինը չորս անգամ ավելանալուց հետո նրա հետագա բարձրացումը ետ էր մնում այդ շրջանում ինֆլյացիայի և դոլարի կուրսի անկման ընդհանուր տեմպերից, և նավթի իրական գինը իջավ: ՕՊԵԿ-ի երկրները հոսող միջոցների մեծ մասը կուլ գնաց Արևմուտքի երկրներում նրանց անզուսպ ծախքերի՝ զենքի, սպառման ապրանքների, արդյունաբերական սարքավորումների ներմուծման ճանապարհով: Զարգացող երկրների էկոնոմիկային հասցված հարվածը մեղմացավ: Անմիջապես Արևմուտքի ֆինանսական սիստեմին ուղղված «նավթային դոլարների» հոսքը, թեկուզև վիթխարի չափով աճած և բարդացած իրադրության պայմաններում, չվերածվեց այն մղձավանջին, որից շատերը վախենում էին 1974 թվականին: Սակայն այդ մասին կխոսենք առանձին:

ՕՊԵԿ-ի շատ մասնակիցներ 1977 թվականին արդեն ընթացիկ գործարքների գծով վճարային հաշվեկշիռների դեֆիցիտ ունեին:

«Վաղ աշնան» ընթացքում նավթի գինը մեծ չափով որոշեց

ինֆլյացիան, որը «խժռեց» արտահանող երկրների «նավթային դոլարների» ավելցուկները: Բնական է, որ արևմտյան պրոպագանդան՝ և՛ գիտնականները, և՛ պետական գործիչները ինֆլյացիայի մեջ մեղադրում էր հատկապես ՕՊԷԿ-ին, թեև ինֆլյացիան սկսվել էր էներգետիկ ճգնաժամից շատ առաջ, իսկ նավթի ծախսերի բաժինը Արևմուտքի համախառն արտադրանքում կազմում էր միայն մի քանի տոկոս: Ինֆլյացիայի պատճառները բարդ են և մինչև վերջ չեն պարզաբանված, սակայն այն դարձավ 60-ականի վերջի և 70-ական թվականների սկզբի կապիտալիստական էկոնոմիկայի տարբերիչ հատկանիշը: Նոր պայմաններում գները շարունակում էին աճել, և ոչ թե ընկնել, ինչպես նախկինում, նաև ճգնաժամերի ընթացքում, որը ստացավ «ստագֆլյացիա» անունը:

«Նշմարվում էր կարծես թե ինֆլյացիայի երկու մակարդակ,— գրում էին սովետական հետազոտողներ Ռ. Անդրեասյանը և Ա. Կազյուկովը:— Առաջինը՝ ավելի ցածր, զարգացած կապիտալիստական պետությունների ներքին շուկայում և նրանց միջև կատարվող առևտրում, երկրորդ՝ ավելի բարձր, ՕՊԷԿ-ի մասնակիցներին և զարգացող մյուս երկրներին մոնոպոլիաների կողմից ապրանքներ վաճառելիս: ՕՊԷԿ-ի տնտեսական հանձնաժողովի գնահատմամբ, ինֆլյացիայի ընդհանուր մակարդակը 1975 թ. հոկտեմբերից մինչև 1976 թ. նոյեմբերն ընկած ժամանակաընթացքում կազմեց շուրջ 27 տոկոս, իսկ ՕՊԷԿ-ի երկրների կողմից ներմուծվող ապրանքների գների աճը նույն այդ ժամանակամիջոցում բարձրացավ 35—40 տոկոսով: Նավթը շարունակում էր արժեքազրկվել, սպառնալիքի տակ դնելով շատ երկրների՝ ՕՊԷԿ-ի անդամների, զարգացման պլանների կատարումը»:

Նոր իրադրությունը հաղթահարելու համար ՕՊԷԿ-ի մասնակիցները սկսեցին նավթի հանույթը նվազեցնել և որոշեցին միաժամանակ բարձրացնել նրա գինը: 1975 թվականին նավթի հանույթը ՕՊԷԿ-ի երկրներում իջավ 13 տոկոսով, առաջին անգամ այն պակասեց Մերձավոր արևելքում: Իսկ նավթի գինը 1975 թվականի հոկտեմբերի 1-ից բարձրացավ 10 տոկոսով՝ մինչև 11,51 դոլար «արաբական թեթև» մեկ բարելի (159 լիտր) համար, որը հիմք էր ծառայում նավթի այլ տեսակների կամ այլ աշխարհագրական շրջանների հաշիվների համար:

Սաուդյան Արաբիայի և Իրանի շահերը գների հարցով ընդ-

հուպ մինչև 1977 թվականի ամառը բախվում էին: Շահական Իրանի վերնախավին չէին բավականացնում նույնիսկ կտրուկ կերպով աճող եկամուտները, նկատի առնելով վիթխարի կառուցները, սպառազինության ծախսերը, տնտեսական ծրագրերը: Ուստի Իրանը երկար ժամանակ ձգտում էր նավթը վաճառել որքան հնարավոր է թանկ գներով: Համանման դիրք էին գրավել ՕՊԷԿ-ի մնացած բոլոր մասնակիցները, բացառությամբ Սաուդյան Արաբիային հետևող Արաբական Միացյալ Էմիրությունները:

1976 թվականի երկրորդ կեսին աշխուժություն նկատվեց կապիտալիստական աշխարհի էկոնոմիկայում, որն սկսեց դանդաղ դուրս գալ ճգնաժամից: Հեղուկ վառելիքի պահանջարկը մեծացավ, և նրա հանույթը սկսեց աճել, ձգտելով 1974 թվականի մակարդակին: Աշնանը նավթի գները բարձրացան, և մեկ բարելի համար մի փոքր գերազանցեցին 11,51 դոլարի մակարդակը:

Այդ պայմաններում ՕՊԷԿ-ի մասնակիցների մեծ մասը հանդես եկավ արդեն 1976 թվականին նավթի գների պարտադիր բարձրացման օգտին:

ՕՊԷԿ-ի կոնֆերանսը տեղի ունեցավ 1976 թվականի դեկտեմբերին՝ Կատարի մայրաքաղաք Դոհայում: Մասնակիցների միջև սուր վիճաբանություններ եղան: Սաուդյան պատվիրակությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) ներկայացուցիչները համաձայնվեցին նավթի գինը բարձրացնել միայն 5 տոկոսով: ՕՊԷԿ-ի մնացած 11 մասնակիցները որոշեցին 1977 թվականին գները բարձրացնել 15 տոկոսով:

ՕՊԷԿ-ի պատմության մեջ առաջին անգամ մասնակիցները չկարողացան համաձայնության գալ այդքան կարևոր հարցի շուրջը: Ստեղծվեց այսպես կոչված երկհարկանի գների սիստեմ: Բացի այդ, Սաուդյան Արաբիան հայտարարեց, որ ինքը կսկսի ավելացնել հանույթը, որպեսզի թույլ չտա գների 5 տոկոսից ավելի բարձրացում: Այդ ժամանակ Սաուդյան Արաբիային և Արաբական Միացյալ Էմիրություններին բաժին էր ընկնում ՕՊԷԿ-ի ընդհանուր արտադրության մեկ երրորդը:

Սաուդյան Արաբիայի որոշումից ամենից առաջ շահեց ԱՄՆ-ը, քանի որ այդ պահին նա ապահովում էր հեղուկ վառելիքի ներմուծման չորրորդ մասը: Ամերիկյան «Նյուսուիք» հանդեսը 1977 թվականի հունիսին բացահայտեց Սաուդյան Արաբիայի նավթային քաղաքականությունը որոշող ևս մեկ պատճառ:

1975 թվականին էր-Ռիյադի և Վաշինգտոնի միջև գաղտնի համաձայնագիր կնքվեց. Սաուդյան Արաբիան խոստացավ իր եկամուտների կեսը ներդնել ամերիկյան կառավարության արժեթղթերում և թույլ չտալ նավթի գների տարեկան ավելի քան 5 տոկոս բարձրացում, իսկ ԱՄՆ-ը խոստացավ Սաուդյան Արաբիային մատակարարել զենք ու ռազմական այլ տեխնիկա և երաշխավորել նրա կառավարող տոհմին ռազմական օգնություն «ամեն մի սպառնալիքի դեմ»: Այդ համաձայնագիրը կնքվել էր պրեզիդենտ Ջ. Ֆորդի օրոք և հաստատվել Ջ. Քարտերի կողմից:

Փոխվեց սաուդյան կառավարիչների դիրքը նաև արաբների համար չափազանց կարևոր մի այլ հարցի կապակցությամբ: Դեռևս 1977 թվականի գարնանը այն ժամանակվա թագաժառանգ և պրեմիերի տեղակալ Ֆահդը պնդում էր, որ Սաուդյան Արաբիան կրկին կարող է դիմել նավթային էմբարգոյին, եթե ԱՄՆ-ը ճնշում չգործադրի Իսրայելի նկատմամբ հօգուտ արաբների: Սակայն մայիսին Վաշինգտոն այցելելուց հետո Ֆահդը հայտարարեց, որ իր երկիրը նավթը չի օգտագործի որպես զենք Մերձավոր արևելքում կարգավորման հասնելու համար:

1974 թվականի հուլիսի կեսին Ստոկհոլմի մոտակայքում տեղի ունեցավ ՕՊԵԿ-ի նոր կոնֆերանսը: Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի պատվիրակները հայտարարեցին, որ հուլիսի 1-ից 5 տոկոսով կբարձրացնեն իրենց նավթի գինը: Սակայն պայման դրեցին. ՕՊԵԿ-ի մնացած անդամները չեն մտնի 5-տոկոսանոց լրացուցիչ բարձրացման մեջ: Այսպիսով, նավթի գները բոլոր գլխավոր նավթարտահանող երկրներում նորից կհավասարվեին: Մնացած 11 պետությունները սրտի ցավով համաձայնվեցին այդ պահանջին, մեծ վնասներ կրելով: Գների երկհարկանի սիստեմից ժամանակավորապես հրաժարվեցին:

1977 թվականի աշնանը Արևմուտքի երկրներում արտադրության տեմպերը նորից ընկան: Թուլացավ նաև նավթի շուկայի իրավիճակը: Ավելի շատ հեղուկ վառելիք էին արդյունահանում Հյուսիսային ծովում և Մեքսիկայում, շարք մտավ Ալյասկայի նավթուղին: Գրեթե երեքամսյա հեղուկ վառելիքի պաշար կուտակելով, Արևմուտքի պետությունները իջեցրին նրա գնման չափերը: 1977 թվականի վերջին կապիտալիստական շուկայում տարվա հաշվով 125 տոննա նավթի ավելցուկ առաջացավ: Անգլիան, վերածվելով թեթև նավթ արտահանողի, հարված հասցրեց Ալժիրի, Լիբիայի և Նիգերիայի դիրքերին: Մազութը, որպես

կաթսայավառարանային վառելիք, սկսեց ավելի ու ավելի փոխարինվել բնական գազով և մասամբ քարածխով, որը դժվարացրեց ծանր նավթի վաճառքը Իրանից, Քուվեյթից, Վենեսուելայից: Նավթի մի մասը սկսեցին զեղչով վաճառել: Նավթի վաճառքի ՕՊԵԿ-ի բաժինը կապիտալիստական շուկայում որոշ չափով իջավ:

Ներմուծող երկրներում իրենց արտահայտությունը գտան նաև էներգիայի խնայողության գծով տարվող միջոցառումները: Էներգիայի սպառումը ՎՆՊ-ի միավորով կապիտալիստական աշխարհում կրճատվեց (նավթով վերահաշվարկված) մեկ հազար դոլարով՝ ՎՆՊ 1972 թվականին 1,5 տոննայից, 1977 թվականին՝ 1,38 տոննայից: Եթե 60-ական թվականներին նավթի սպառման աճի տեմպերը գերազանցում էին Արևմուտքի ՎՆՊ-ի ավելացման տեմպերը, ապա 70-ական թվականների վերջում նկատվում էր հակառակ տենդենցը:

Գնորդներն սկսեցին նավթի ներմուծման համար վճարել չափազանց «նիհար» դոլարներով, որը հատկապես շատ ձեռնտու էր Արևմտյան Եվրոպայի երկրներին և Ճապոնիային: Միևնույն քանակի արևմտագերմանական մարկով կամ ճապոնական իենով ձեռք էին բերում ավելի շատ դոլար և, հետևաբար, շատ նավթ:

ՕՊԵԿ-ի գլխավոր քարտուղար Ալի Ջեյդի գնահատմամբ 1978 թվականի գարնանը նավթի փաստացի գինը 25 տոկոսով ցածր էր, քան մեկ տարի առաջ: Այդ կապակցությամբ ՕՊԵԿ-ի մի շարք մասնակիցներ, ամենից առաջ Ալժիրը, Լիբիան, Իրաքը և Քուվեյթը, 1978 թվականի սկզբում առաջարկեցին հրաժարվել նավթի գինը ԱՄՆ-ի դոլարներով որոշելուց և անցնել կամ այսպես կոչված «Միջազգային վալյուտային ֆոնդի փոխառության հատուկ իրավունքին» (ՓՀի), կամ նավթի գնի նոր սահմանված սիստեմին, որը նախատեսում էր օգտագործել մի շարք արևմտյան վալյուտաների «կողովները»: Սակայն այդպես էլ չհաջողվեց դոլարը հաշվարկային այլ վալյուտայով փոխարինել:

Նավթի հանույթի գների և մակարդակի հարցը երկրորդ և երրորդ պլան մղեց նախկինում ամենակարևոր խնդիրը՝ արտասահմանյան կոնցեսիաների վրա նավթ արտադրող երկրների գերիշխանության իրավունքի սահմանումը: Ազգայնացումն արդեն դադարեց հայրենասերների և նացիոնալիստների համար մարտական լոզունգ լինել և վերածվեց արդյունահանող ընկե-

րությունների սեփականությունը նավթարդյունահանող երկրների կառավարությունների ձեռքը հանձնելու ձևերի ու պայմանների մասին գործարար բանակցությունների օբյեկտի: Մոնոպոլիաների ներկայացուցիչները կոնցեսիաները հանձնելու վերաբերյալ ակտերը ստորագրում էին ձեռքսեղմումներով և դեմքներին ժպիտ խաղացնելով: 1975 թվականի նախօրյակին Վենեսուելան լրիվ ազգայնացրեց հյուսիսամերիկյան կապիտալին պատկանող բոլոր ընկերությունների սեփականությունը: Դեկտեմբերին Քուվեյթը ստացավ «Քուվեյթ օյլ քոմփընիի» մնացած 40 տոկոսը: Նույն այդ ամսին Իրաքը ազգայնացրեց միջազգային նավթային կորպորացիաների մնացած ամբողջ սեփականությունը: Որոշ ժամանակ անց սաուդյան կառավարությունն ստացավ հետնման համար ամերիկացիների ձեռքում մնացած ԱՐԱՄԿՈ-ի 40 տոկոսը: Այս իրադարձությունները, որ տեղի ունեցան առանց շեփորների ու մեծ աղմուկի, ցույց տվեցին, թե «յոթ քույրերը» որքան են թուլացրել հսկողությունը նավթի հանույթի և վաճառքի վրա: Ուստի որոշ երկրներ՝ Ինդոնեզիան, Նիգերիան, ԱՄԷ-ն, նույնիսկ Լիբիան, չէին շտապում իրենց վերցնել արդյունահանող ընկերությունների սեփականության 100 տոկոսը:

70-ական թվականների սկզբում «յոթնյակը» վերահսկում էր ոչ սոցիալիստական երկրների նավթի մատակարարումների 60 տոկոսը, իսկ շուկայի մնացած մասը պատկանում էր այլ նավթային ընկերությունների, գործամոլների և կառավարություններին: Մոտ տասը տարի անց այդ համամասնությունը ճիշտ ու ճիշտ հակառակն էր երևում:

Սակայն սխալ կլիներ կարծել, թե իբր Արևմուտքի էներգետիկ կորպորացիաներն ընդհանրապես զրկվեցին իրենց նախկին նավթահանքերի վրա ունեցած ազդեցությունից: Որպես կանոն, նախկին կոնցեսիոներները վերածվեցին կապալառու ընկերությունների և տեխնիկական բնագավառում պահպանեցին զգալի ազդեցություն՝ կադրերի նախապատրաստությունից մինչև բարձրորակ մասնագիտացված սարքավորումների մատակարարումը և կառավարման կազմակերպումից մինչև ռացիոնալ շահագործումը: Նավթարդյունահանող երկրներն ուղղակի հնարավորություն չունեին նույնիսկ առասպելական դրամով ձեռք բերել տեխնիկական գիտելիքներ և սարքավորումներ գնել շուկաներից, որոնց վերահսկում էին միջազգային կորպորացիաները: Միայն նրանք, ովքեր դիմում էին Սովետական Միության համագործակցությա-

ծը (օրինակ՝ Իրաքում Հյուսիսային Ռումեյլը յուրացնելու ժամանակ), կարողացան յոլա գնալ առանց «յոթ քույրերի» կամ նրանց հետ կապված աուբսայդերների ծառայության: Նավթ արտադրողները այդպես էլ սեփական խոշոր տանկերային նավատորմ չստեղծեցին:

1974 թվականի դեկտեմբերի 20—24-ը Կարաբալեդում, Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասի մոտ, տեղի ունեցավ նավթ արտահանող երկրների կազմակերպության 50-րդ կոնֆերանսը: Նրա մասնակիցներից 13-ը երկար վիճաբանություններից հետո որոշում ընդունեցին նավթի այն ժամանակվա գները պահպանել ևս կես տարի: Արևմուտքում կարակասյան կոնֆերանսի արդյունքներին դիմավորեցին թեթևացած հոգով, այն ընդունելով որպես ծննդյան տոների թանկարժեք նվեր: «Նավթի գների սառեցումը,— գրում էր «Նյու Յորք թայմսը» 1977 թվականի դեկտեմբերի 22-ին,— Քարտերի կառավարության կարևոր հաղթանակն էր, որը կոնֆերանսից առաջ դիվանագիտական մեծ աշխատանք կատարեց գների աճը կանխելու համար»:

Սակայն այդպե՞ս է արդյոք: Իսկապե՞ս ԱՄՆ-ի կառավարությունը ձգտում էր իջեցնել նավթի գինը: Այդ հարցում արդյո՞ք համընկնում էին Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի դիրքերը մի կողմից, և ԱՄՆ-ինը՝ մյուս կողմից, ամբողջ մոնոպոլիստական կապիտալի և էներգետիկ կորպորացիաների դիրքերը: Ահա հենց այստեղ է թաղված շան գլուխը:

Արևմտյան Եվրոպայի երկրները և Ճապոնիան 70-ական թվականների սկզբում տնտեսական ճակատում իրենց ավագ դաշնակցին լրջորեն նեղեցին: Աշխատանքի արտադրողականությունը, գիտատեխնիկական հետազոտությունների և նախագծային աշխատանքների ծախսերը, կուտակելու համար առանձնացված կապիտալի բաժինը «Ընդհանուր շուկայի» երկրներում և Ճապոնիայում աճեցին ավելի արագ, քան ԱՄՆ-ում: Նման հաջողությունը մասամբ բացատրվում է նրանով, որ կապիտալիզմի այդ երկու կենտրոնները, որպես էներգետիկ հումք, անցան էժան նավթին: ԱՄՆ-ը, նստելով վիթխարի էներգետիկ ռեսուրսների վրա (չհաշված նավթն ու գազը), սեփական քարածխի, բիտումացված ավազի տեսքով, չկարողացավ այն բավականաչափ ընդլայնված կերպով շահագործել նավթի մրցակցության պատճառով: Նավթն ընդհանուր առմամբ մինչև 1973 թվականը ԱՄՆ-ում ավելի թանկ էր, քան Արևմտյան Եվրոպայում: Դա

կրկնակի անգամ վատացնում էր ամերիկյան էկոնոմիկայի մըրցակցությունը համաշխարհային շուկայում: Այդ պատճառով նավթի համաշխարհային գների քառապատկումը, ինչպես նկատել է Դևիդ Ռոկֆելլերը, ավելի շատ հարվածում էր Ամերիկայի դաշնակիցներին, քան իրեն՝ ԱՄՆ-ին:

Սակայն, ինչպես պարզվեց, քառապատիկ բարձրացումը բավական չէր, որպեսզի սկզբունքորեն փոխեր իրադրությունը: Արևմտյան Եվրոպայի զարգացած կապիտալիստական երկրները և Ճապոնիան կարողացան կուլ տալ «նավթային առաջին շոկի» հետևանքները: Նավթի նոր գները անբավարար դուրս եկան, որպեսզի Արևմուտքին ստիպեն արագացնել էներգիայի նոր աղբյուրների մշակումը, էականորեն նվազեցնել նավթի ներմուծումը, սկզբունքորեն փոփոխել տնտեսական կառուցվածքը: Նույնիսկ ճգնաժամից ծուլորեն դուրս գալը ուղեկցվում էր նավթի մեծ պահանջարկով:

Մի կարևոր հանգամանք ևս. 1974 թվականին առավելագույն մակարդակի հասնող էներգետիկ կորպորացիաների շահույթները 1975—1977 թվականներին կտրուկ իջան:

Ճգնաժամի հրահրում

Երբ 1973—1974 թվականներին նավթարդյունահանող երկրները բարձրացրին իրենց արտադրանքի գինը, Միացյալ Նահանգների պաշտոնական ներկայացուցիչները հրապարակայնորեն վրդովվեցին: Նրանց հույզերը, ինչպես պարզվեց, թելադրված էին հիմնականում «անձի պահպանության» նկատառումներով. անհրաժեշտ էր «աջակցել» դաշնակիցներին, որոնցից շատերը հայտնվել էին շատ դժվար կացության մեջ, և նրանց վստահեցնել ամերիկյան ավտոմոբիլիստների «հայրական հոգատարության հարցում»:

Փաստորեն մինչև 1973 թվականը ամերիկյան կորպորացիաները նավթարդյունահանող երկրների կառավարություններին դրդում էին զգալիորեն մեծացնել հում նավթի գինը: Պաշտոնական Վաշինգտոնը հրապարակորեն հավատացնում էր հակառակը: Սաուդյան Արաբիայի նավթարդյունաբերության մինիստրը ԱՄՆ-ի ֆինանսների մինիստր Ուիլյամ Սայմոնին գրում էր. «Մեզնից ինչ-որ մեկը մտածում է, որ Միացյալ Նահանգների կառավարությունը փաստորեն չի առարկում գների բարձրացման դեմ... Նույնիսկ կան մարդիկ, որոնք գտնում են, թե դուք գների այդպիսի բարձրացումը խրախուսում եք քաղաքական նկատառումներից ելնելով, իսկ հակառակ իմաստով ցանկացած պաշտոնական դիրքորոշումը ծառայում է միայն նրան, որպեսզի քողարկի այդ փաստը»:

«Այն, ինչ լավ է «Ջեներալ մոտորսի» համար, լավ է նաև Միացյալ Նահանգների համար»,— այս ցինիկ սկզբունքը իր համար օգտագործում էր ցանկացած կորպորացիան: Բարձր չէր արտասանվում, բայց համառորեն կյանք էր մտնում մի այլ սկզբունք. «Այն, ինչ լավ է Միացյալ Նահանգների համար, լավ է ամբողջ կապիտալիստական աշխարհի համար»:

Երբեմն պատահում է, սակայն, որ նույնիսկ խնամքով մըտածված գործողություններն անգամ իրականում անսպասելի հետևանք են ունենում: Ճիշտ նույնը պատահեց նաև Միացյալ Նահանգներին 1973—1974 թվականների նավթի համաշխարհային գների բարձրացումից հետո:

ԱՄՆ-ի վառելիք արդյունահանող արդյունաբերությունը հետագա տարիներին ետ մնաց իր իսկ ցուցանիշներից, որոնց հասել էր ճգնաժամից առաջ: 1977 թվականին ԱՄՆ-ում 60 միլիոն տոննա նավթ և 10 միլիարդ խորանարդ մետր գազ պակաս է արդյունահանվել, քան 1972 թվականին: Քարածխի հանույթի որոշ աճը չէր կարող ծածկել նավթագազային վառելիքի պակասը: Նավթի հետախուզված պաշարները հինգ տարվա մեջ իջան 20 տոկոսով և 1978 թվականի սկզբին կազմում էին, ներառյալ Ալյասկան, չորս միլիարդ տոննա: Դա համապատասխանում էր միայն երկրի նավթի հինգ տարվա պահանջարկին:

ԱՄՆ-ը ստիպված էր էներգամատակարարման դեֆիցիտը ծածկել ներմուծման միջոցով: 1972—1977 թվականների ընթացքում նավթի և նավթամթերքների ներմուծումը տարեկան 225 միլիոնից հասավ մինչև 420 միլիոն տոննայի, այսինքն՝ համարյա հեղուկ վառելիքի ընդհանուր պահանջարկի կեսին: Ներմուծման թռիչքը նավթի միջազգային աճող գների համեմատությամբ 1972—1977 թվականների ընթացքում վառելիքի ներմուծման արժեքը բարձրացրեց տարեկան 5-ից մինչև 45 միլիարդ դոլարի, 1977 թվականին ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռի դեֆիցիտը 20 միլիարդ դոլարից անցավ:

Սակայն նավթի ներմուծման ավելացումը այն ժամանակվա գոյություն ունեցող գներով ամերիկյան մոնոպոլիաներին թվում

էր ավելի ձեռնտու գործ, քան սեփական վառելիքաէներգետիկ պաշարների արագացված զարգացումը։

Նավթի ներմուծման ծախսերը ծածկելու համար, չհասցնելով ավելացնել իր ապրանքների արտահանումը, Միացյալ Նահանգները ներմուծվող նավթի մեծ մասի համար վճարում էր դոլարներով, գործնականում չունենալով ապրանքային ապահովություն։ Դոլարի կուրսն ընկավ։

ԱՄՆ-ի կառավարական հիմնարկությունների այն ժամանակվա կանխագուշակման համաձայն, երկրի էներգետիկ ինքնուրույնությունն ապահովելու համար, անհրաժեշտ էր մինչև 1985 թվականը էներգետիկայի մեջ ներդնել շուրջ 900 միլիարդ դոլար։ Իսկ որպեսզի այդ վիթխարի կապիտալ ներդրումները փոխհատուցվեին և շահույթ բերեին, ամերիկյան փորձագետների հաշվարկումներով, որ կատարվել է 70-ական թվականների կեսերին, էներգառեսուրսների մեծածախ գինը ԱՄՆ-ի ներսում պետք է սահմանափակվեր ոչ պակաս 100—120 դոլար՝ մեկ տոննայի համար վերահաշվարկված նավթով, այսինքն՝ 17—20 միլիարդ դոլար մեկ բարելի համար։ Սակայն էներգասպառող կորպորացիաները ուժեղ դիմադրում էին մեծածախ գների ցածր մակարդակի հետագա բարձրացմանը՝ 45—55 դոլար մեկ տոննայի համար։

Ահա, էներգետիկ կորպորացիաների և էներգասպառողների միջև պայքարի այս ֆոնի վրա, Սպիտակ տունը կոնգրեսից պահանջեց նավթի գների օրենսդրական բարձրացում, ծայրահեղ դեպքում, մինչև համաշխարհային մակարդակը՝ մեկ տոննայի համար 90 դոլար։ Սակայն նա հանդիպեց էներգասպառողների կորպորացիայի լոբբիստների վճռական դիմադրությանը, որոնք ոչ միայն չէին ցանկանում վառելիքի համար վճարել ավելի բարձր մեծածախ գներ, այլև վախենում էին էներգետիկ մոնոպոլիաների հզորության աճից։

Հենց այդ ժամանակ, 1977 թվականի առաջին կեսին, նավթի գալիք պակասի մասին խուճապ առաջացնող հաղորդագրություններ հայտնվեցին։ Եվ հատկապես ո՛չ երկարաժամկետ պլանում, ո՛չ դարի վերջում, այլ բառացիորեն 80-ական թվականների կեսին։

ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչությունը 1977 թվականի ապրիլին Սպիտակ տանը հայտնեց, որ 10 տարուց հետո իրը աշխարհը պետք է ավելի շատ նավթ սպառի, քան

արդյունահանի, իսկ դա կհանգեցնի նրա համատարած պակասին։ 1985 թվականին, նշվում էր պրեզիդենտ Քարտերին ուղղված ԿՀՎ-ի գաղտնի զեկուցագրում, նավթարդյունահանման աճը այլևս չպետք է համապատասխանի նրա պահանջարկի ավելացմանը, որը «վիթխարի չափերով առաջ» կմղի գների աճը, և 1990 թվականին միջազգային շուկայում մեկ բարելի համար կպահանջեն 36 դոլար և ոչ թե 12, ինչպես 1977 թվականին։ Հիշենք ԿՀՎ-ի անալիտիկների կանխագուշակությունը։

ԿՀՎ-ի զեկույցը կասկածի տակ դրեց ամերիկյան մեկ այլ գերատեսչության՝ ներքին գործերի մինիստրության տվյալները, ըստ որի աշխարհում կա մեկ տրիլիոն բարել (մոտ 170 միլիարդ տոննա) չբացահայտված նավթի պաշարներ։

Սպառողների շահերի պաշտպանության շարժման մասնակիցներից մեկը՝ Ռալֆ Նեյդերը, կասկածեց ԿՀՎ-ի զեկույցի հավաստիությանը։ «Նման է այն բանին, որ նավթ արտադրող երկրները, նավթային ընկերությունների հետ միասին, նվազեցնում են նավթի պաշարները, որպեսզի արդարացնեն գների բարձրացումը»,— ասաց նա։

Գրեթե միաժամանակ հրապարակվեց մի զեկուցագիր, որ պատրաստել էր Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը 15 երկրների փորձագետների մասնակցությամբ։ Զեկուցագիրը պնդում էր, որ կապիտալիստական աշխարհը «կբախվի նավթի պակասի կանխագուշակած աղետին» արդեն 1981 թվականին, եթե չիրականացվի «ռազմական մոբիլիզացիան» և միջոցներ չձեռնարկվեն էներգիայի խնայողության ու վառելիքի մյուս տեսակներին անցնելու համար։ Աղետը կպայթի, եթե նույնիսկ նավթի գինը բարձրանա 50 տոկոսով, իսկ ածուխի արտադրությունը կրկնապատկվի։

ԿՀՎ-ի և Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի զեկուցագրերը սենսացիոն պարզաբանման ենթարկվեցին ինֆորմացիայի օրգաններում և ուղեկցվեցին հազարավոր մեկնաբանություններով։ Բարձրացված աղմուկում համարյա աննկատելի անցան ոչ միայն Նեյդերի կասկածները, այլև երկու «մասնավոր կազմակերպությունների» հետազոտությունները, որտեղ վիճարկվում էր ԿՀՎ-ի գուշակությունը։

Նյու Յորքի ազգային էկոնոմիկական գիտահետազոտական ասոցիացիան իր վերլուծության մեջ նշում է, որ ԿՀՎ-ի տվյալները, «ինչպես և ենթադրվում էր, հարմար միտումնավոր մի

փաստաթուղթ է», որն օգտագործվեց այն բանի համար, որպեսզի ձեռք բերեին հասարակության կարծիքի աջակցությունը էներգետիկայի բնագավառում պրեզիդենտ Քարտերի առաջարկություններին: Դրանք նախատեսում էին բենզինի հարկերի բարձրացում, նավթի գների աճ:

Ռեսուրսների պրոբլեմը առավել լայն պլանով, ընդհուպ մինչև հարյուրամյակի վերջը ուսումնասիրելով, Կալիֆոռնիայում Ստանֆորդի գիտահետազոտական ինստիտուտը նշեց, որ «հում նավթի համաշխարհային պաշարների վիճակը դեռևս բավականին հուսալի է»:

Էներգետիկայի բնագավառի մի շարք անկախ մասնագետներ նույն կարծիքին էին, որոշ ժամանակ անց գրում էր «Նյու Յորք թայմս» թերթը: Սակայն վախի ազդեցությունը շարունակվում էր: «Փոթորիկը պետք է պայթի բոլորի համար, որ սկսվել է ինչ-որ տեղ 80-ական թվականներին և կշարունակվի ընդհուպ մինչև 90-ական թվականները»,— հայտարարեց այն ժամանակվա ԱՄՆ-ի էներգետիկայի մինիստր Շլեսինջերը: Նա պնդում էր, որ վրա հասնող ճգնաժամը 1985 թվականին նավթի իրական գինը կկրկնապատկի, անկախ բարձրացումներից, որոնք անհրաժեշտ են ինֆլյացիայի աճի տեմպերի հետ համընթաց գնալու համար: Հիշենք այս կանխագուշակումը ևս:

Կասկած չկա, որ նավթի փորձագետների վիճաբանություններին չափազանց ուշադիր հետևում էին ՕՊԷԿ-ի մասնակից երկրներում և անում էին իրենց եզրակացությունները: Դրանցից գլխավորն այն էր, որ 1974—1975 թվականներին սահմանված և ֆանտաստիկ բարձր թվացող հեղուկ վառելիքի գները բնավ այդպիսին չէին, այլ միայն համապատասխանում էին շուկայում պահանջարկի և առաջարկի իրական հարաբերակցությանը:

Դոյությոն ունեցող փաստերի և հաղորդումների վերլուծությունից ելնելով, դժվար է կտրականապես պնդել, թե «նավթային երկրորդ շոկը նախագծել էին նավթի մոնոպոլիաները և նրանց ԱՄՆ-ի կառավարության լիազորված անձինք, ՕՊԷԿ-ի կառավարությունների համաձայնությամբ: Նավթի գների բարձրացման վրա ազդել են մի շարք օբյեկտիվ գործոններ. ՕՊԷԿ-ի անդամների ձգտումը՝ վերացնել ինֆլյացիայի և այդ ժամանակաընթացքում դոլարի կուրսի անկման պատճառով առաջացած վնասը, էներգիայի սպառման աճը Արևմուտքի արդյունաբերական զարգացած երկրներում, սոցիալ-քաղաքական հուզումները

իրանում: Բայց այն, որ «երկրորդ շոկի», ինչպես և առաջինի ժամանակ, անշափ շատ վաստակեցին էներգետիկ մոնոպոլիաները, այն, որ հարվածը կրկին դիպավ Ճապոնիային և Արևմտյան Եվրոպային, ավելի, քան ԱՄՆ-ին, այն, որ նավթի բարձրացված գինը, վերջապես, էներգիայի ալտերնատիվ աղբյուրները դարձրեց շահութաբեր, այդ բոլորը կասկած չի հարուցում: Մենք չենք բացառում նաև այն բանի հնարավորությունը, որ «շոկային թերապիայի» օգնությամբ, ամերիկյան, ճապոնական և արևմտաեվրոպական սպառողների հաշվին, ամերիկյան մոնոպոլիաները որոշեցին վերջապես իրականացնել այդ խնդիրները:

Եվ նորից մեր հիշողության մեջ գրանցենք ԿՀՎ-ի «կանխագուշակած» նավթի մեկ բարելի ապագա գինը՝ 30 դոլար: Արդյո՞ք դա ուղղակի հրավեր չէր նավթի գինը ճիշտ ու ճիշտ այդ մակարդակին բարձրացնելու համար:

Երկրորդ նավթային շոկ

«Եթե Ջիմմի Քարտերը փորձեր նկարագրել իր ամենամղձավանջային օրերից մեկը, նա կկարողանար պատմել այն մասին, թե ինչպես երազում տեսավ արաբական մի խումբ նավթի մինիստրների, որոնք, գլխավերևներում ճոճելով սովետական հրացանները, Աբու Դաբիում «Հիլտոն» հյուրանոցի թենիսի հրապարակում դերվիշների պարն էին պարում այն կապակցությամբ, որ նրանք հենց նոր հայտարարել էին հում նավթի վիթխարի բարձր գների մասին,— 1979 թվականի հունվարին գրում էր ամերիկյան «Թայմ» հանդեսը:— Ցավոք, դա հեքիաթ չէր «Հազար ու մի գիշերից», այլ անցած շաբաթվա դաժան իրականություն: Արաբական մինիստրներից ոմանք իսկապես մասնակցում էին «հրացաններով պարին», տոնելով նավթարդյունահանող երկրների կազմակերպության կողմից, 1973 թվականից սկսած, նավթի գների վեցերորդ բարձրացումը»:

ՕՊԷԿ-ի մեջ մտնող 13 երկիր պայմանավորվեցին աստիճանաբար գները բարձրացնել 14,5 տոկոսով:

Մի կողմ թողնենք ամերիկյան հանդեսի՝ ՕՊԷԿ-ի մասնակից երկրների մինիստրներին ուղղված վիրավորական հարձակումները: Քննարկենք Ջիմմի Քարտերի «մղձավանջային» երազը: Նրա անձնական հեղինակության և վայրկենական քաղաքական օգուտի տեսակետից Աբու Դաբիի որոշումը իսկապես նրա հա-

մար թիկունքային հարված էր: Նա փորձում էր կամ ցույց էր տալիս, թե փորձում է հաղթահարել ինֆլյացիայի բարձր տեմպերը և չարագուշակ էկոնոմիկական կանխագուշակումները:

ՕՊԷԿ-ի որոշման հիմնական պատճառը պարզ էր. նավթ արտահանող երկրները ցանկանում էին վերականգնել իրենց գնողունակությունը, որ կորցրել էին դոլարի կուրսի կտրուկ անկման և արդյունաբերական ապրանքների գների աճի հետևանքով: Ջնայած նավթից ստացված հսկայական եկամուտներին, ՕՊԷԿ-ի անդամ ութ երկրներ արդեն 1978 թվականի առաջին կեսին դեֆիցիտ ունեին: Որպես մի ամբողջական խումբ՝ նրանք դարձան միջազգային խոշորագույն փոխառուներ. նրանց փոխառությունից ստացված և ավանդներից բռնագրաված ընդհանուր գումարը կազմում էր 5,2 միլիարդ դոլար: Գների բարձրացումը մի շարք պատճառներով տրամաբանական էր: «Եթե վերցնենք 18-ամսյա ժամանակաշրջանը,— ասում էր Կարլթոն Ջոնսը, Հյուստոնի էներգետիկ անալիզի խմբի ղեկավարը,— ապա պարզ կդառնա, որ գների բարձրացումը ԱՄՆ-ում փոքր է ինֆլյացիայի աճից և չի ծածկում դոլարի դևալվացիան այդ ժամանակաշրջանի համար»:

Բանը միայն ինֆլյացիայի և դոլարի կուրսի անկումը չէր: 1978 թվականի սեպտեմբերին Իրանում սկսվում էր հակաշահական հեղափոխություն, որի մասին մենք դեռ կպատմենք: Նավթի հանույթը երկրում այդ պահին կրճատվեց օրական 6 միլիոն բարելից մինչև 500 հազարից էլ պակաս: Թեև Սաուդյան Արաբիան փորձում էր պակասը լրացնել սեփական ավելցուկներով, սակայն դա էլ քիչ էր:

Սաուդացիների վարքագիծը բացատրվում էր նաև քաղաքական նկատառումներով: Մշտապես գտնվելով ձախ տրամադրված մի շարք արաբական պետությունների քննադատության կրակի տակ, սաուդացիները բարեկամացան Բաղդադի կոնֆերանսի իրենց հարևանների հետ, կոնֆերանս, որ հրավիրվել էր 1978 թվականի նոյեմբերին ի հակակշիռ քեմփդևիդյան համաձայնագրի: Սաուդյան Արաբիան, ինչպես նաև արաբական ուրիշ շատ երկրներ, մերժեց Քեմփ Դևիդը:

Թվում էր, եթե ՕՊԷԿ-ի երկրների կողմից նավթի գների բարձրացումը հազիվ ծածկում էր ինֆլյացիայի պատճառած կորուստը, ապա ինչի՞ համար էին դրամատիկական, ակներև հասարակայնության համար նախատեսված «մոտակա վտանգի»

մասին եղած աղաղակները: Սակայն խոշոր մոնոպոլիաների մամուլը սկսեց ճգնաժամի նույն հոգեբանական մթնոլորտը ստեղծել, որ բնորոշ էր 1973—74 թվականների ձմռան համար: Լուրեր տարածվեցին «պակասի», գների նոր աճի մասին, և բոլորը նետվեցին նավթի պաշարներ կուտակելու, որը, բնականաբար, նավթը թանկացրեց ավելի շուտ, քան որոշված էր Աբու Դաբիում: ՕՊԷԿ-ի մասնակիցները մեկը մյուսի հետևից սկսեցին հեռանալ Աբու Դաբիում ընդունված մակարդակից:

«Բոլորը նյարդային վիճակում են»՝ ասաց օրերս ներկայացուցիչների պալատի էներգետիկայի հարցերով հատուկ հանձնաժողովի անդամ կոնգրեսմեններից մեկը, և նույնիսկ մեծ նավթի աշխարհի իրադրությանը նետած թռուցիկ հայացքը հաստատում է տեղի ունեցող իրադարձությունների մռայլ գնահատականը,— գրում էր 1979 թվականի հունիսին «Նյուսուիկ» հանդեսը:— ՕՊԷԿ-ի նավթարդյունահանող երկրները շարունակում են աթուրմա խաղալ իրենց նավթի գների հետ, և ալժիրյան հում նավթը՝ 21 դոլար մեկ բարելի համար, որը գրեթե 50 տոկոսով բարձր է ՕՊԷԿ-ի նավթի «պաշտոնական» գնից, հանկարծակի պարզվեց, որ աշխարհում ամենաթանկն է: Փարիզում միջազգային էներգետիկ գործակալության անդամները բացահայտ անհանգստանում էին այն բանի համար, որ նավթի պակասը կդանդաղեցնի համաշխարհային էկոնոմիկայի աճը»:

1979 թ. հունիսին Տոկիոյում, Արևմուտքի խոշոր արդյունաբերական վեց այլ երկրների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ պրեզիդենտ Քարտերը հայտարարեց, որ Միացյալ Նահանգները պատրաստ են կոնկրետ սահման հաստատել՝ օրական 8,5 միլիոն բարել 1980 թվականի նավթի և նավթամթերքների ամերիկյան ներմուծման համար և ծրագրել ներմուծումը սահմանափակելու երկարաժամկետ մակարդակ: Այդ առաջարկությունները եղան այն ժամանակ, երբ յոթ երկրները, սկսած վերևներում իրենց ամենամյա տնտեսական հանդիպումից, փորձում էին միջոցներ մշակել, ինչպես իրենք էին անվանում, «երկրորդ էներգետիկ ճգնաժամը» հաղթահարելու համար:

Նավթի գների նոր բարձրացման մասին հաղորդումը Տոկիոյում ստացվեց այն պահին, երբ կառավարության ղեկավարներին ճաշկերույթի էին տալիս, որ նրանց պատվին կազմակերպել էր Ճապոնիայի կայսրը՝ թագավորական պալատի Մարգարտե դահլիճում:

Տոկիոյի հանդիպման մասնակիցները այն կարծիքին էին, որ պետք է դադարեցնել նավթի գնումների աճը, ավելի շատ միջոցներ ներդնել էներգիայի այլ աղբյուրներ շահագործելու համար, ընդլայնել ատոմային էներգետիկան և ՕՊԷԿ-ի հետ «երկխոսություն» սկսել՝ նավթի հուսալի մատակարարումն ապահովելու նպատակով:

Կապիտալիստական աշխարհի «մեծ յոթնյակը» չէր ցանկանա, որ Տոկիոյի բանակցությունները վերածվեին այն բանին, ինչ ճապոնացիները բնութագրում են «յամագուչի» բառով, որ նշանակում է դեղին վարդ, այսինքն՝ ոչ պարզ ուրվագիծ և ըստ էության գրեթե ոչինչ չնշանակող հանդիպում: Սակայն նրանք ընդհանուր հայտարարությունից այն կողմ չգնացին:

Միացյալ Նահանգներում հոգեկան խանգարումներն աճում էին: Ամերիկացիները մեծ քանակությամբ բենզին գնեցին, պլանավորեցին սահմանափակել վառելիքի վաճառքը, մեծ լիմուզիններից փոխադրվեցին փոքր ավտոմեքենաները: Այդ բոլորը սկսվեց Կալիֆոռնիայում, այնուհետև բենզինի խուճապը բռնեց ԱՄՆ-ի ամբողջ տարածքը: Կրկնվում էր 1973—74 թվականների ձմռանը տեղի ունեցած հոգեբանական մթնոլորտը:

Բախվելով ավտոմոբիլիստների ծեծկռտուքին, որոնք բենզալցման մի փակ կայանից մյուսն էին նետվում և, հերթի կանգնածներին ատրճանակի սպառնալիքի տակ պահելով, առանց հերթի բենզին էին լցնում, Կալիֆոռնիան նորմավորման իր սեփական սիստեմը մտցրեց: Բայց ամերիկյան կոնգրեսը մայիսի սկզբին պրեզիդենտ Քարտերին մերժեց ամբողջ երկրում նորմավորում մտցնելու ընդհանուր լիազորություններ տալ:

Սպառնալիք էր կախվել նաև Ամերիկայի ավտոմոբիլային արդյունաբերության գլխին: Արդեն մարտ և ապրիլ ամիսներին, այսինքն՝ մինչև Կալիֆոռնիայում խուճապն սկսվելը, մարդատար ավտոմեքենաների վաճառքը, հատկապես հզոր շարժիչներով հարմարավետ լիմուզիններինը, 1978 թվականի համեմատությամբ կրճատվեց մինչև 11,5 տոկոսով: «Խոշոր մարդատար ավտոմեքենաների արտադրությունը քայքայվել է»,— նշում էր «Կրայսլեր» ավտոմոբիլային ընկերության պրեզիդենտ Լի Այակոչան: Փոքրածավալ մոդելները, ընդհակառակը, շուկայում մեծ պահանջարկ էին վայելում: Նոր ռեկորդ սահմանվեց նաև արտասահմանյան մեքենաների վաճառքի բնագավառում՝ այն ընդգրկեց ԱՄՆ-ի շուկայի 22 տոկոսը: Հիշեցնենք, որ Ճապոնիան

արդեն մի քանի տարի հետո, հույսը դնելով խնայողական ավտոմեքենաների վրա, աշխարհում առաջին տեղը գրավեց դրանց արտադրության գծով:

Հանկարծակի առաջացած տարբեր նավթամթերքների պակասը յուրաքանչյուր առանձին երկրի վրա տարբեր կերպ ազդեց և կախված էր նրա ազգային նավթավերամշակման արտադրության հարաբերակցությունից ու մատակարարման ավանդական աղբյուրներից ինչպես նավթ, այնպես էլ նավթամթերքներ ստանալու դժվարության աստիճանից: Սակայն շատ երկրներում զգացվում էր այնպիսի թեթև նավթամթերքների պակաս, ինչպիսին բենզինն էր, կենցաղային և ավիացիոն վառելիքը: Ռեակտիվ շարժիչների համար վառելիքի պակասը աշխարհի խոշորագույն օդանավակայաններում որոշ ընկերությունների ստիպեց կրճատել իրենց կանոնավոր ուղերթերի քանակը, իսկ նավթամթերքների գների բարձրացումը հանգեցրեց նրան, որ ավիատրանսպորտային ընկերությունները տարիֆները արդեն մեծացրին առնվազն 5—7 տոկոսով:

Միասնական կայուն գների փոխարեն ՕՊԷԿ-ը հուլիսին նավթի ազատ աշխարհին մատուցեց հերթական անախորժ անակընկալը. նավթի գնի ամենացածր սահմանը մեկ բարելի համար փաստորեն որոշված էր 18 դոլար, իսկ վերինը՝ 23 դոլար 50 ցենտ: Ռոտերդամում «նավթի ազատ շուկայում» մեկ բարելի համար վերցնում էին 30 և 40 դոլար:

Բայց ահա «երկրորդ էներգետիկ ճգնաժամի» եռուն պահին Վաշինգտոնում հրապարակվեցին ԱՄՆ-ի 23 խոշորագույն նավթային ընկերությունների ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի շահույթների տվյալները: «Տակտի բացակայություն», «խընջույք ժանտախտի ժամանակ»,— բարբառում էին մեկնաբանությունների վերնագրերը: Պարզվում է, որ 23 ընկերությունների շահույթները անցած տարվա երկրորդ եռամսյակի համեմատությամբ աճել են 66 տոկոսով և կազմել են 5,5 միլիարդ դոլար: Նույն այդ ժամանակաշրջանում 367 առաջատար ամերիկյան ընկերությունների շահույթների աճը, որ ավանդաբար ստուգում է «Ուոլ-սթրիթ ջոռնըլ» թերթը, կազմում էր «ընդամենը» 20,3 տոկոս: Ամերիկյան «քույրերի» 1979 թվականի տարեկան հաշվետվությունից պարզ է դառնում, որ նրանց զուտ շահույթի աճի ինը տասներորդականը բերել է արտասահմանյան նավթի գործարքը: 1979 թվականին «Էքսոնն» առաջատար մոնոպոլիայի զուտ

շահույթը ԱՄՆ-ի էկոնոմիկայի պատմության մեջ առաջին անգամ բարձրացավ 4 միլիարդ դոլարի։ Սպիտակ տունը, դեմագոգիկ կերպով, ամեն հարմար առիթով պախարակելով նավթային ընկերությունների շահադիտական գործունեությունը, իրականում նրանց շահերին համապատասխան էներգետիկ քաղաքականություն էր վարում։

Վիճակագրության տվյալներով, 1979 թվականի ամռանը ԱՄՆ-ը ավելի շատ նավթ ուներ, քան 1978 թվականին, երբ բենզինի համար ոչ մի հերթ չկար, ոչ մի ակնարկ «նավթի սովի» մասին։ Ֆեդերալ առևտրական հանձնաժողովը մայիսի 30-ին հաղորդեց, որ 1979 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում բենզինի պաշարները 4—8 տոկոսով գերազանցել են նախորդ տարվա առաջին չորս ամիսների համապատասխան ցուցանիշները։ Նավթի ներմուծումը 1979 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում 10 տոկոսով գերազանցում էր անցած տարվա նույն ժամանակամիջոցի ցուցանիշները։

Այսպիսով, պարզ դարձավ, որ նավթի սովը արհեստականորեն ստեղծել են մոնոպոլիաները՝ իրանում ծավալված իրադարձությունների պատրվակով խիստ կրճատելով բենզինի մատակարարումները մանրածախ առևտրականներին։ Սակայն ամերիկյան ներմուծման մեջ իրանական նավթը կազմում էր 5 տոկոսից ոչ ավելի։ Նրա պակասը շատ արագ փոխհատուցվեց Սաուդյան Արաբիայից նավթի գնումներն ավելացնելով, մեծացնելով նավթի հանույթը Ալյասկայում և ուրիշ ավելի պակասեական աղբյուրների շնորհիվ։

Ինչպես գրում էր «Նեյշընն» հանդեսը, նման իրադարձությունը տեղի էր ունեցել նավթային ընկերությունների դավադրության և ԱՄՆ-ի էներգետիկայի մինիստրության թողտվության հետևանքով։ Դավադրության նպատակն էր խիստ բարձրացնել բենզինի գները, սկզբնական շրջանում այն հասցնելով մեկ գալոնի համար (1 գալոնը=3,78 լիտրի) մինչև մեկ դոլար։ Նավթային մոնոպոլիաները դա արդարացնում էին էներգետիկ ճգնաժամով, իսկ էներգետիկայի մինիստրությունը նրանց խրախուսում էր, պնդելով, որ բենզինի գների աճը բարիք է, որովհետև, երբ այդ վառելիքը ամերիկացիների գրպանին հարմար չլինի, նրանք կսկսեն տնտեսել այն, և ճգնաժամը, իբր, ինքն իրեն կվերանա։

Երբ Կարակասում 1979 թվականի դեկտեմբերին կրկին հա-

վաքվեցին ՕՊԵԿ-ի մինիստրները, Սաուդյան Արաբիան նավթը վաճառում էր մեկ բարելը 24 դոլարով, իսկ Լիբիան և Իրանը պնդում էին 30—35 դոլարի վրա։ Հավաքվածները այդպես էլ չկարողացան համաձայնության գալ միասնական գնի վերաբերյալ։

ՕՊԵԿ-ի մասնակիցները տեսնո՞ւմ էին արդյոք իրենց իսկական տեղը երկրի վրա այդ ժամանակաընթացքում։ Հասկանո՞ւմ էին արդյոք նրանք իրադրության ռեալությունը և իրենց խնդիրները։ 1980 թվականի մայիսին փարիզյան «Մաթեն» թերթում հրապարակված ՕՊԵԿ-ի ստրատեգիական հարցերով կոմիտեի գաղտնի զեկուցումը թույլ է տալիս այդ հարցերին ամբողջությամբ դրական պատասխանել։

ՕՊԵԿ-ի մասնակիցները ելնում էին նրանից, որ նավթի պահանջարկը ավելի դանդաղ կաճի, քան կանխագուշակվել էր, որ էներգիայի խնայողության քաղաքականությունն իր պտուղները կտա և որ ՕՊԵԿ-ի մեջ չմտնող երկրներից նավթի մատակարարումներն ավելի զգալի կլինեն, քան նախատեսված է։ Նրանք նկատի էին առնում նաև մեքսիկական հանքավայրերի յուրացման հնարավորությունը և Չինաստանում նավթահանքերի յուրացման ժամկետների լավատեսական գնահատումը։ Այդ վերլուծությունը ենթադրում էր նաև, որ նավթի արդյունահանման ծավալը ՕՊԵԿ-ի անդամ մի շարք երկրներում կմնա անփոփոխ։

Նավթային հզորությունը, ընդգծվում էր զեկուցման մեջ, չի օգտագործվել այն բանի համար, որպեսզի միջազգային ասպարեզում պատշաճ հեղինակություն ձեռք բերվի։ ՕՊԵԿ-ի անդամները առաջնակարգ դեր չէին խաղում, որի իրավունքը ունեին նրանք միջազգային ինստիտուտներում։ Օրինակ՝ միջազգային վալյուտային ֆոնդում և համաշխարհային բանկում նրանց ֆինանսական մասնակցության զգալի ավելացումը չէր ուղեկցվում համապատասխան փոփոխություններով այդ ինստիտուտների ընդունած որոշումների կառուցվածքի մեջ։ Դեռ ավելին, զարգացած կապիտալիստական պետությունները խանգարում էին ՕՊԵԿ-ի՝ զարգացող երկրների օգտին տնտեսական սիստեմում էական փոփոխությունների հասնելու փորձերին։ Հետևաբար, միայն նավթային հզորությունը բավական չէր էականորեն Արևմուտքի տնտեսական քաղաքականության վրա ազդելու համար։

1979 թվականի վերջում ՕՊԵԿ-ը օրական արդյունահանում

էր 31,5 միլիոն բարել, գրեթե այնքան, որքան ռեկորդային 1977 թվականին: Ներմուծող երկրները, ձգտելով իրենց ապահովել մատակարարման խանգարումներից, ինչպես դա տեղի ունեցավ իրանական հեղափոխության ժամանակ, նավթը գնում էին գրեթե ցանկացած գնով և պահեստավորում էին չտեսնված քանակով: 1980 թվականի սկզբին պահեստարանները բերնեբերան լիքն էին: Բարձր գները ազդեցին պահանջարկի վրա, իսկ ճգնաժամային երևույթները Արևմուտքի էկոնոմիկայում սպառնում էին շուկան էլ ավելի թուլացնել: Ուստի Քուվեյթը, Լիբիան, Նիգերիան և Վենեսուելան հանույթը կրճատեցին, որպեսզի այն համապատասխանեցվեր պահանջարկի անկմանը և կանխեր գների իջեցումը:

Պահպանելով միասնությունը՝ ՕՊԵԿ-ը կարող էր ավելի քիչ նավթ արդյունահանել, բայց դրա համար ստանալ առավելագույնը: Բանն այն է, որ արդյունահանման բնագավառում ճկունությունը տարբեր երկրների մոտ տարբեր է: Սաուդյան Արաբիան, որ այդ պահին օրական արդյունահանում էր 9,5 միլիոն բարել՝ ՕՊԵԿ-ի ընդհանուր արտադրության շուրջ մեկ երրորդը, միանգամայն կարող էր ապրել այդ հանույթի կեսից էլ պակաս շահույթով: Բայց այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ալժիրը, Վենեսուելան և Նիգերիան, ներքին զարգացման հեռանկարների համար հսկայական միջոցների կարիք ունեին, և նրանք ձգտում էին սեփական ռեսուրսներից որքան հնարավոր է արագ առավելագույն շահույթ կորզել:

Դեռ վերջերս, ամբողջությամբ 1979 թվականի և 1979/80-ի ձմռան ընթացքում, նավթի շուկան ապրանքի պակաս էր զգում, և ներմուծողները ծախսերի առջև կանգ չառան: Արևմտյան Եվրոպայում Ռոտերդամի նավթի ամենախոշոր բորսայում մեկ բարելի համար վերցնում էին մինչև 45 դոլար, որը զգալիորեն գերազանցում էր երկարաժամկետ պայմանագրերով սահմանված հեղուկ վառելիքի գինը:

Սակայն լարվածությունը, այնուամենայնիվ, ստեղծվում էր արհեստականորեն: Նավթի հանույթը ոչ սոցիալիստական երկրներում 1979 թվականին (2415 միլիոն տոննա) գերազանցում էր նախորդ տարվա մակարդակը (2306 միլիոն տոննա), իսկ ՕՊԵԿ-ի անդամ երկրներում այն 1462-ից հասավ մինչև 1535 միլիոն տոննայի: Վառելիքի սպառումը կապիտալիստական աշխարհում

մնաց նախկին մակարդակի վրա, իսկ ԱՄՆ-ում նույնիսկ 2 տոկոսով իջավ:

Նավթատենդի հերթական նոպան սկսվեց նրանով, որ Վաշինգտոնը Թեհրանի նկատմամբ արհեստականորեն սուր ճգնաժամ հրահրեց: Սպիտակ տան ռազմական սպառնալիքները Իրանի հասցեին՝ զինված ընդհարման վտանգ ստեղծեցին Պարսից ծոցի ավազանում: Արևմտաեվրոպական երկրները և Ճապոնիան վախենում էին դրա հետևանքով ընդհանրապես կորցնեն վառելիքի մատակարարման աղբյուրները: Չարաշահելով այդ վախը՝ էներգետիկ կորպորացիաները կրճատեցին հեղուկ վառելիքի կանոնավոր մատակարարումները սպառողներին, ուռճացրած գներով նրա վաճառքի մեջ ընդգրկելով Ռոտերդամի կեղծ ֆիրմաներին:

ՕՊԵԿ-ի մասնակիցները նույնպես գները բարձրացրին: Այդ ժամանակ ներմուծող երկրները սկսեցին մրցել իրենց առևտրական պաշարները լրացնելով, որպեսզի ավելի շատ նավթ գնեն թեկուզև ընթացիկ գներով և որքան հնարավոր է ապագայում քիչ վճարել դրա համար: Կուտակված ռեզերվները մի շարք երկրների կքավարարեին երեք-չորս ամիս: Շուկայում տարեկան հաշվարկումով հայտնվեց շուրջ 50 միլիոն տոննա նավթի ավելցուկ: Ռոտերդամում գները ցած սահեցին: «Վաճառողների շուկան» վերածվեց «գնորդների շուկայի»:

Սակայն 1980 թվականի փետրվարի սկզբին ՕՊԵԿ-ի բոլոր մասնակիցները մեկ բարելի գինը բարձրացրին 2—4 դոլարով: Հեղուկ վառելիքի միջին գինը մեկ բարելի համար սահմանվեց 30 դոլար, կամ տոննան 220 դոլար: 1980 թվականի գարնանը նավթի գինը կրկին վեր ցատկեց: Ապրիլի 1-ին Իրանը իր նավթի գինը բարձրացրեց մեկ բարելի համար մինչև 35 դոլար, մայիսի 14-ին Սաուդյան Արաբիան՝ 26-ից մինչև 28 դոլար, մայիսի 20-ին Լիբիան և Ալժիրը նույնպես գները բարձրացրին: Նրանց անմիջապես հետևեցին ՕՊԵԿ-ի մնացած անդամները: Այսպիսով նավթը թանկացավ երկու դոլարով: Արդյունքում միջին գինը մեկ բարելի համար կազմեց 32 դոլար կամ տոննան մոտ 230 դոլար, ընդ որում լիբիական նավթի մեկ բարելը վաճառվում էր արդեն 37 դոլարով, կամ տոննան 280 դոլարով: Հիշեցնենք, համաշխարհային էկոնոմիկայի մեջ 70-ական թվականներին մեկ բարել արաբական թեթև նավթի համար ընդունվել էր 1,9 դոլար:

1980 թվականի հունիսի 9—10-ին Ալժիր քաղաքում տեղի ունեցավ ՕՊԷԿ-ի 57-րդ կոնֆերանսը: Նավթի վիթխարի պաշարներ կուտակելով, Արևմուտքը կարողացավ իր համար ձեռնտու իրադրություն ստեղծել՝ առաջարկը բարձրացնել: ՕՊԷԿ-ի մի շարք երկրներ սկսեցին պակասեցնել հանույթը: Սակայն, չնայած նրա առատությանը, նրանք կարողացան մայիսին գների կրկին բարձրացնել:

ՕՊԷԿ-ի դժվարություններն ավելացան: Խիստ տարբերվում էին շահերը, քաղաքական վարչակարգերը, տնտեսական հնարավորությունները, բնակչության քանակը մասնակից երկրներում: Սաուդյան Արաբիայի կառավարող դասակարգը ԱՄՆ-ի հետ կապված էր ոչ միայն քաղաքական ու ռազմական բնագավառում: Արևմուտքի երկրներում ներդնելով տասնյակ միլիարդավոր դոլար՝ նա իրականում ավելի շատ էր շահագրգռված կապիտալիստական սիստեմի կայունությամբ, քան գների առավելագույն բարձրացմամբ: Սակայն, նավթի արդյունահանման հզոր հնարավորություն ունենալով՝ էր-Ռիյադը կարող էր իջեցնել նրա գները, սակայն իրականում ՕՊԷԿ-ի մնացած մասնակիցներից հետո անմիջապես բարձրացրեց:

«ՕՊԷԿ-ում գրեթե քաոս է տիրում,— գրեց «Բիզնես ուիքը» 1980 թվականի սեպտեմբերին:— Վիեննայում մինիստրների մակարդակով անցկացվող կոնֆերանսը սեպտեմբերի 17-ին վերջացավ լիակատար ձախողմամբ, և այնպիսի պրոբլեմի վերաբերյալ, ինչպիսին նավթի միասնական գների հաստատումն էր և երկարաժամկետ ստրատեգիայի մշակումը, մինիստրների միջև այժմ ավելի շատ տարաձայնություններ առաջացան, քան սկզբում էր...»:

Կասկած էր առաջացնում նաև սաուդյան նավթի գների իսկական մակարդակը: Ամերիկյան չորս ընկերություններ՝ ԱՐԱՄԿՈ-ի մասնակիցներ, Սաուդյան Արաբիայից նավթ էին գնում այնպիսի գներով, որ պաշտոնապես անհամեմատ ավելի ցածր էին, քան ՕՊԷԿ-ի մյուս անդամներինը, բայց վաճառում էին համաշխարհային գներով: Օգուտը տարեկան կազմում էր 7—14 միլիարդ: Եվ չափազանց մեծ ու անհիմն էր նավթային գործերում փորձված սաուդյան կառավարության՝ ամերիկյան քույրերին արված «նվերը»: Արդյո՞ք ամերիկյան կորպորացիաները սաուդյան նավթը չէին գնում համաշխարհային գներով, հայտարարելով, որ այն իբրև թե ավելի էժան արժե, նավթ արտահանող մնացած երկրներին ճնշելու համար: Ամերիկյան բանկերում արդյո՞ք նստվածք չտվեց սաուդյան արքայազնների հաշիվների տարբերությունը:

Անկասկած, մոնոպոլիաները սպեկուլյատիվ շահույթներ վաստակեցին մերձավորարևելյան նավթը վերավաճառելով Ռոտերդամի կանխիկ ապրանքների շուկայում, որտեղ նրա գինը այդ պահին ավելի բարձր էր, քան սահմանված էր երկարաժամկետ համաձայնագրով: Մինչ ՕՊԷԿ-ի մասնակիցները 1979 թվականին իրենց գները կհասցնեին Ռոտերդամի մակարդակին, մոնոպոլիաները, բրիտանական գործարար շրջանների օրգան «Փեթրոլեում էկոնոմիստ» տեղեկագրի գնահատությամբ, խաղագումարը հասցրին 3,5 միլիարդ դոլարի: Ֆրանսիական արդյունաբերության այն ժամանակվա մինիստր Անդրե Ժիրոն նույնիսկ կատաղությամբ գոչեց. «Պետք է գնդացրային կրակահերթի տակ գցել այդ կանխիկ ապրանքների շուկան»:

Մոլեգնող ինֆլյացիան ամենաուժեղ փաստարկն էր Սաուդյան Արաբիայի հակառակորդների ձեռքում: Ամերիկացի տնտեսագետ Գ. Մերքլեյնի հաշվարկներով, ՕՊԷԿ-ի երկրները 1977—1978 թվականներին ինֆլյացիայի պատճառով կորցրին 44 միլիարդ դոլար: 1980 թվականի դեկտեմբերին ՕՊԷԿ-ը նավթի գինը 10 տոկոսով բարձրացրեց, թեև նույն այդ տարին ապրանքների գինը կապիտալիստական աշխարհում ամբողջությամբ առած աճեց նվազագույնը 12 տոկոսով: Հեղուկ վառելիքի գների բարձրացումը ինքնին նույնպես նպաստեց ինֆլյացիային, բայց այն չգերազանցեց ընդհանուր համաշխարհային գների աճի 10—15 տոկոսին:

Այն ժամանակ, երբ իրանական նավթահանքերում նվազեց արտադրությունը, Իրաքում աճեց հանույթը՝ մոտավորապես օրական 2,5 միլիոն բարելից մինչև առնվազն 3,5 միլիոն բարելի: Իրաքը օգնեց նավթի համաշխարհային պակասը փոխհատուցել, որ առաջացրել էր Իրանում հանույթի ծավալի վիթխարի անկումով: Բաղդադը ՕՊԷԿ-ում Սաուդյան Արաբիայից հետո զբաղեցրեց երկրորդ տեղը, քանի որ նա կարող էր թույլ չտալ գների անկում, կրճատելով հանույթը, կամ ձեռք բերել չափավոր գներ, որ սպառնում էր շուկան խեղդել նավթի նոր մատակարարումներով: Ահա այս բոլորն էլ անհանգստացնում էր Վաշինգտոնին:

1980 թվականի սեպտեմբերին Իրաքի և Իրանի միջև բռ-

ներկվեց ողբերգական եղբայրասպան պատերազմ: Ամերիկյան ողջ պրոպագանդան և ԱՄՆ-ի հատուկ ծառայությունը աշխատում էին ավելի բորբոքել կրքերը և հակասությունները երկու նավթարտահանող երկրների միջև: Անկասկած է, որ և՛ մոնոպոլիաները, և՛ Վաշինգտոնը հնարավորություն էին ստեղծում Իրաքին հանել նրանց թվից, ովքեր որոշում էին ՕՊԷԿ-ի ընդհանուր քաղաքականությունը:

Մենք դեռ կանդրադառնանք կոնֆլիկտի ռազմական և քաղաքական կողմին, իսկ հիմա սահմանափակվենք նրա տնտեսական ասպեկտներով:

Ռազմական գործողությունների հենց սկզբից ռմբակոծությունները և հրետանային գնդակոծությունները ոչնչացրին ոչ միայն օդանավակայաններն ու ռազմական տեխնիկան, այլև շատ նավթավերամշակման գործարաններ, խողովակաշարեր, վառելիքի պահեստներ, այն տեղափոխելու նավահանգիստներ և որոշ չափով նաև նավթահանքեր: Տեղի էր ունենում երկու երկրների հիմնական հարստության փոխադարձ ոչնչացում, երկրներ, որոնք տալիս էին ֆինանսական զարգացման հիմնական աղբյուրը, առաջընթացի նյութական գրավականը հանդիսացող վալյուտային հասույթի մինչև ինը տասներորդական մասը:

Հետախուզված նավթի պաշարները Իրանում գնահատվում են 7,9 միլիարդ տոննա (կապիտալիստական աշխարհի պաշարների 10,5 տոկոսը), Իրաքում՝ 4,2 միլիարդ տոննա (5,6 տոկոսը): Իրաքում 1979 թվականին արդյունահանվել է 165 միլիոն տոննա հեղուկ վառելիք, իսկ արտահանվել է 156 միլիոն տոննա: Իրանում՝ համապատասխանաբար 156 և 110 միլիոն տոննա:

Իրանի հիմնական նավթահանքերը կենտրոնացված են Խուզիստանի հարավարևմտյան նահանգներում: Արտահանման գլխավոր նավահանգիստներն են Աբադանը և Խարք կղզին: Իրաքում նավթը արդյունահանում են երկրի հյուսիսում գտնվող Կիրկուկ և Մոսուլ քաղաքների շրջակայքում, ինչպես նաև հարավում, Բասրայի շրջանում: Արտահանվում է Պարսից ծոցում գտնվող Ֆաո նավահանգստի միջոցով, ինչպես նաև Սիրիայի և Թուրքիայի նավահանգիստներով անցնող խողովակաշարերով: Պատերազմի նախօրյակին Իրանում նավթավերամշակման գործարանների հզորությունը տարեկան կազմում էր 46 միլիոն տոննա, իսկ Իրաքում՝ 8,4 միլիոն տոննա: Ռմբակոծության և գնդակոծության հետևանքով մասամբ ոչնչացվեցին հիմնական խողովակաշարերը, նավթավերամշակման գործարանները Աբադանում, Թեհրանում, Բաղդադում և Բասրայում, պոմպակայանները, նավթային կառանատեղերը Աբադանում, Խարք կղզում և Ֆաոյում, շատ նավթապահեստարաններ:

Իրանական և իրաքյան նավթի արտահանության դադարեցումը ձևականորեն հեղուկ վառելիքի համաշխարհային շուկայի վրա ազդեցություն չթողեց: Այդ ժամանակ դիտվեց պահանջարկի նկատմամբ առաջարկի նկատելի բարձրացում՝ տարեկան մոտ 100—125 միլիոն տոննա: Ընդհարումից անմիջապես հետո Սաուդյան Արաբիան, Վենեսուելան, Նիգերիան, Արաբական Միացյալ Էմիրությունները և Քուվեյթը որոշեցին հանույթը ավելացնել, որպեսզի փոխհատուցեին երկու թշնամի երկրների մատակարարումների դադարեցումը: Զարգացած կապիտալիստական երկրները այդ ժամանակ վառելիքի մեծ պաշարներ կուտակեցին, որը սպառման ծավալով կբավարարեր երեք, չորս, նույնիսկ ավելի ամիսներ:

ԱՄՆ-ը իրանական նավթը դադարել էր ներմուծել դեռևս 1979 թվականից, իսկ Իրաքից ներմուծումը չէր հասնում նույնիսկ մեկ տոկոսի: Հեղուկ վառելիքի ներմուծման Իրաքի բաժինը «Ընդհանուր շուկայով» կազմում էր 10 տոկոս, իսկ Իրանինը՝ 4 տոկոս, Ճապոնիայի համար (1978 թվականին) այդ թվերը համապատասխանաբար կազմում էին 3 և 15 տոկոս: Իրանական և իրաքյան նավթի հիմնական սպառողները Արևմտյան Եվրոպայում Ֆրանսիան և Իտալիան էին (ներմուծման բաժինը՝ համապատասխանաբար 25 և 15 տոկոս): Չափազանց վատ վիճակի մեջ ընկան որոշ զարգացող երկրներ, որոնք բավական շատ նավթ էին արտահանում Իրանից ու Իրաքից և, ի տարբերություն Արևմուտքի, չկարողացան աղատ վաճառքի վառելիքի խոշոր պաշարներ կուտակել:

Արևմուտքում շատերը կասկածում էին, որ ՕՊԷԿ-ին կհաջողվի անցկացնել իրենց հերթական 59-րդ կոնֆերանսը: Թվում էր, թե ռազմական ընդհարումը Իրաքի և Իրանի միջև այդ կազմակերպությունը կպառակտի:

Սակայն 1980 թվականի դեկտեմբերի 15-ին Ինդոնեզիայի Բալի կղզում, այնուամենայնիվ, ՕՊԷԿ-ի հանդիպումը տեղի ունեցավ: Հակառակ այբբենական կարգի, Իրանի ու Իրաքի պատվիրակներին բաժանեցին, նրանց միջև նստեցնելով Ինդոնեզիայի

ներկայացուցիչներին: Իրանի պատվիրակը կողքի դատարկ աթոռին տեղավորեց Իրանի նավթարդյունաբերության մինիստր Թոնդգույանի նկարը, որին հոկտեմբերի վերջին գերի էին վերցրել Իրաքի զորքերը: Նիստի մթնոլորտը շիկացած էր: Մասնակիցների կարծիքները հաջորդ տարվա նավթի գների բարձրացման վերաբերյալ տարբեր էին: Ալժիրը, Լիբիան և Իրաքը համաձայն էին նրա կտրուկ բարձրացմանը, Վենեսուելան և Ինդոնեզիան՝ չափավոր աճի կողմնակից էին, Սաուդյան Արաբիան արդեն մինչև կոնֆերանսի սկսվելը իր նավթի գինը բարձրացրել էր մեկ բարելի համար 30-ից մինչև 32 դոլար և առաջարկում էր դրանով սահմանափակվել: Սակայն ՕՊԵԿ-ի անդամների ընդհանուր շահերը այդ պահին ավելի բարձր էին կանգնած տրամաձայնություններից. կոնֆերանսը հաջողությամբ վերջացավ, բառացիորեն երկրորդ օրը ՕՊԵԿ-ը սահմանեց նոր գներ՝ բարելը 32 դոլար (մեկ տոննան՝ 235 դոլար) «ստանդարտ» (արաբական թեթև) նավթի համար, ՕՊԵԿ-ի մասնակիցների համար առավելագույն բազային գինը՝ բարելը 36 դոլար (տոննան՝ 264) և ամենաբարձր գինը՝ մեկ բարելը 41 դոլար (տոննան՝ 301 դոլար): Համաշխարհային գները միջին չափով ավելացան 10 տոկոսով:

Մինչ շարունակում էին գների հետ աթուրմա խաղալ, և ՕՊԵԿ-ի մասնակիցները, «յոթ քույրերին» և ԱՄՆ-ի կառավարությանը գաղտնի բավարարելու համար, բարձրացրին գները, Արևմուտքի լիդերների սիրելի զբաղմունքը դարձավ ՕՊԵԿ-ի «եսամոլությանը» վերագրել իրենց բոլոր սոցիալ-տնտեսական տրամաձայնությունները: Ինֆլյացիա՞ն: Դե, իհարկե, նավթի գների աճի ուղղակի հետևանք էր (թեև արդյունաբերական Արևմուտքի նավթի ծախսերի բաժինը ՎՆՊ-ում կազմում էր ընդամենը մի քանի տոկոս): Նվազո՞ւմը: Բնականաբար, մեղավոր է նավթը, թեև տնտեսական ճգնաժամի ցիկլերը բնավ չէին համընկնում նավթի գների տատանումների հետ: Գործազրկությո՞ւնը: Դարձյալ «շերշե լյա ֆամ» նավթ արտադրող երկրներում: Իսկ միլիտարիզացման և սպառազինության վազքը իբր թե կապիտալիզմի խրոնիկ հիվանդությունները չեն, այլ ծառայում են «ազատ աշխարհը», մասնավորապես նրա էներգառեսուրսները «սովետական սպառնալիքից» պաշտպանելու համար:

Արևմուտքի լիդերների կարևոր հանդիպումները առանց նավթային գործերի քննարկման չէին անցնում: 1980 թվականի

հունիսին Փարիզում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության խորհրդի (ՏՀԶԿ) մինիստրների մակարդակով տեղի ունեցավ նիստ (ՏՀԶԿ-ի մեջ մտնում էին 24 երկրներ): Նրանք նշեցին, որ «ՏՀԶԿ-ի անդամ երկրներում զորաշղթկությունը մնում է չափազանց բարձր մակարդակի վրա, ինֆլյացիան խոր արմատացել է շատ երկրներում, հաշվեկշիռը առավելապես հավասարեցնելու և տնտեսական աճի ինֆլյացիայի վրա ավելի պակաս նպաստելու ուղղությամբ հետագա առաջընթացը կանգ առավ նավթի համաշխարհային գները լուրջ բարձրացնելու հետևանքով... Նավթի գների բարձրացումը 1979—1980 թվականներին համաշխարհային տնտեսությանը լուրջ վնաս հասցրեց: Բացի դրանից, 1973 թվականից գների երկու խոշոր և անսպասելի բարձրացումը արտացոլում են այն վտանգը, որ սպառնում է հետագա սոցիալ-տնտեսական զարգացմանը ամբողջ աշխարհում (կապիտալիստական՝ Ա. Վ.):

1980 թվականի հունիսի 22-ին և 23-ին, յոթ առաջատար կապիտալիստական երկրների լիդերները հանդիպելով Վենետիկում, հայտարարեցին. «Եթե մենք չենք կարող զբաղվել էներգետիկայի պրոբլեմներով, չենք կարող լուծել նաև մյուս պրոբլեմները: Մեկը մյուսին հաջորդող նավթի գների մի շարք զգալի բարձրացումները, որոնք ոչ մի կապ չունեին շուկայի պայմանների հետ և որոնց կուլմինացիան Ալժիրում նավթ ներմուծող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) մի շարք անդամների վերջերս ընդունած որոշումն էր, հանգեցրին ավելի մեծ ինֆլյացիայի և լուրջ անկման ու գործազրկության անխուսափելի սպառնալիքի արդյունաբերական երկրներում... Մենք պետք է խզենք գոյություն ունեցող կապերը տնտեսական աճի ու նավթի սպառման միջև, և մտադիր ենք հասնել դրան նոր տասնամյակում: Այդպիսի ստրատեգիան պահանջում է նավթի խնայողություն և հանույթի էական ավելացում, ինչպես նաև ալտերնատիվ էներգետիկ ռեսուրսների օգտագործում»:

«Մեր երկրներում նավթի խնայողության համար,— ասվում էր յոթնյակի» դեկլարացիայում,— մենք պայմանավորվեցինք նավթով աշխատող նոր էլեկտրաէներգետիկ կարողություններ չկառուցել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թելադրվում է բացառիկ հանգամանքներով, և եկանք այն եզրակացության, որ անհրաժեշտ է արագացնել նավթի բնագավառում աշխատողների տեղափոխությունը վառելիքի այլ տեսակների օբյեկտնե-

րի վրա։ Մենք մտադիր ենք ակտիվացնել ուժերը, ներառելով այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, հարկային-բյուջետային խթանիչների ստեղծումը, որպեսզի արագացնենք նավթի փոխադրինումը արդյունաբերության մեջ։ Մենք պետք է խրախուսենք նավթի խնայողություն բերող բնակելի և առևտրական շենքերի կապիտալ ներդրումները։ Տրանսպորտի բնագավառում մեր նպատակն այն է, որպեսզի արմատավորենք առավել խնայողաբեր ավտոմեքենաներ և տրանսպորտային այլ միջոցներ։ Մենք պետք է հենվենք վառելիքի այլ տեսակների վրա, անկախ նավթից, էներգետիկ կարիքները բավարարելու համար, որոնք պետք է պայմանավորվեն ապագա էկոնոմիկական աճով... Արտադրությունը մեծացնելու և էներգետիկ ռեսուրսներն օգտագործելու համար մեր կարողությունները, անկախ նավթից, մոտակա տասը տարվա ընթացքում գնահատվում են օրական մեկ բարել նավթի համար 15—20 միլիոն համարժեք մեծությամբ։ Մենք մտադիր ենք այդ կարողությունների իրացման համար ներգնել համաձայնեցված ջանքեր։ Այդ նպատակի համար մենք պետք է ձգտենք զգալիորեն ավելացնել քարածխի օգտագործումը և առավել լայնորեն օգտագործել միջուկային էներգիան միջին ժամկետային պլանում, իսկ ավելի երկարաժամկետ պլանում՝ նկատելիորեն մեծացնել սինթետիկ վառելիքի արտադրությունը, օգտագործել արևի էներգիան և այլ վերականգնողական էներգետիկ ռեսուրսներ։ Մենք մտադիր ենք միասին 1990 թվականի սկզբին կրկնապատկել քարածխի հանույթը և օգտագործումը։ Մենք ընդգծում ենք միջուկային էներգիայի կենսականորեն կարևոր ներդրումը առավել հուսալի էներգետիկ մատակարարման մեջ։ Միջուկային էներգիայի դերը անհրաժեշտ է մեծացնել»։

«Մեր ընդհանուր էներգետիկ ստրատեգիան կոչված է բավարարելու առաջիկա տասնամյակի պահանջները,— այնուհետև ասվում էր դեկլարացիայում։— Մենք համոզված ենք, որ նա կօգնի կրճատելու էներգետիկ ռեսուրսների, հատկապես նավթի պահանջարկը, առանց ընդհատելու տնտեսական աճը։ Մենք հույս ունենք, որ այդ ստրատեգիայի օգնությամբ նոր տասնամյակում էներգետիկ ռեսուրսների կոլեկտիվ սպառման և մեր երկրների տնտեսական աճի միջև հարաբերակցությունը կկրճատվի մոտավորապես մինչև 0,6%-ով, որ նավթի բաժինը էներգետիկ ռեսուրսների մեր ընդհանուր պահանջարկի մեջ այսօրվա դրությամբ 53 տոկոսից 1990 թվականին կկրճատվի մոտավորապես 40 տոկոսով, և որ 1990 թվականին նավթի մեր կոլեկտիվ սպառումը անհամեմատ պակաս կլինի այսօրվա մակարդակից, որը թույլ կտա ապահովել պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը տանելի գների դեպքում»։

1979—1980 թվականներին նավթի գները աճեցին երկուսուկես անգամ։ Երկու տարի շարունակ մամլված էին առաջիկա 20 տարում ենթադրվող փոփոխությունները։ Մեկ բարելի գինը 12—13 դոլարից 1978 թվականի վերջում բարձրացավ մինչև 32—40 տոկոսով։ Շատերը չէին ենթադրում, որ իրենք այդ մակարդակին կհասնեն նույնիսկ 2000 թվականին։ Բացարձակ չափերով նավթի արժեքի բարձրացումն ավելի շատ էր, քան 1973—1974 թվականներին, հարաբերականը՝ մոտավորապես նույնը։ 1978-ից մինչև 1980 թվականն ընկած ժամանակամիջոցում ՕՊԷԿ-ի երկրների ակտիվ մնացորդի 110-միլիարդանոց ավելացումը մոտավորապես նույնն էր, համեմատած արդյունաբերական աշխարհի գումարային ՎՆՊ-ի հետ, ինչ 1974 թվականին 60 միլիարդի (դոլարներով) ավելացումը 1973 թվականի դիմաց։ ՕՊԷԿ-ի ակտիվ մնացորդը ընթացիկ գործարքների գծով (ապրանքներ, ծառայություններ և մասնավորապես դրամային փոխանցումներ) 1980 թվականին հասավ 115 միլիարդ դոլարի։

1974—1978 թվականների «վաղ աշունը» Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի էներգասպառողների համար փոխարինվեց աշնանային անձրևներով, սառը քամու պոռթկումներով։ Բնակչության լայն զանգվածների համար դա նշանակում էր աճի դանդաղում կամ իրական կենսամակարդակի նվազում, Արևմտյան Եվրոպայի երկրների մեծամասնության և Ճապոնիայի համար նշանակում էր նրանց դիրքերի թուլացում ԱՄՆ-ի համեմատությամբ և նոր էներգետիկ (քարածխային) կախվածություն անմիջապես ԱՄՆ-ից կամ միջազգային էներգետիկ մոնոպոլիաներից (դրա մասին կխոսենք հետո)։

Արևմուտքի հակահարձակումը

«Փոփոխությունների նշանները միանգամայն համարժեք են,— գրում էր ամերիկյան «Նյուսուիկ» հանդեսը 1981 թվականի հունիսին։— Ամբողջ տարվա ընթացքում կանխիկ ապրանքների գները շուկայում իջնում էին։ Նավթի արտադրությունը կրճատ-

վում էր (և ոչ մեկ անգամ) գնորդների կողմից պահանջի բացակայության պատճառով: Արևմտյան կորպորացիաները կրկին վերադարձան իրենց խիստ առևտրական պրակտիկային: Երկար տարիների պակասից և գների տանջալից բարձրացումից հետո աշխարհը բառացիորեն լողում է նավթի մեջ, և պահեստարանները ամենուրեք գործնականում լիքն են»:

1981 թվականի մայիսի վերջին Ժնևում տեղի ունեցած ՕՊԷԿ-ի 60-րդ կոնֆերանսը արտաքուստ չէր տարբերվում նախկին խորհրդակցություններից. նույն փայլուն լիմուզինները, նույն կոստյումների և արաբական գլխարկների համակցությունը, նույն ֆոտոռեպորտյորների և ժուռնալիստների կոհորտան, մկանուտ թիկնապահների խումբը: Սակայն հաղթաթուղթը իրենց ձեռքում պահում էին Սաուդյան Արաբիայի օգնությամբ նավթ գնողները, և ոչ թե նրա արտադրողները:

Կոնֆերանսի մասնակիցները որոշեցին սառեցնել նավթի գինը, որ սահմանվել էր նախորդ կոնֆերանսում, 1980 թվականի դեկտեմբերին մեկ բարելի համար 36-ից մինչև 41 դոլար (տոննան՝ 264—301 դոլար) մակարդակով: Միայն Սաուդյան Արաբիան նշեց ավելի ցածր գին՝ մեկ բարելի համար 32 դոլար (տոննան՝ 235 դոլար): Միաժամանակ ՕՊԷԿ-ի անդամ երկրների մեծամասնությունը (բացի Սաուդյան Արաբիայից) հայտարարեց հունիսի 1-ից հեղուկ վառելիքի հանույթը 10 տոկոսով կրճատելու մտադրության մասին, որպեսզի վերացնեն նրա ավելցուկը կապիտալիստական շուկայում: Սակայն հեղուկ վառելիքի պահանջարկը նվազեց, և ՕՊԷԿ-ի մի շարք անդամների բյուջեները սկսեցին ճեղքվել:

Միայն 1981 թվականի հոկտեմբերին Ժնևի նոր կոնֆերանսում ձեռք բերվեց դժվար համաձայնություն: Բոլոր մասնակիցները, որպես բազային գին, «արաբական թեթև նավթի» համար ընդունեցին մեկ բարելը 34 դոլար: Սաուդյան Արաբիան խոստացավ հանույթը նվազեցնել: Սակայն առաջարկը, ինչպես միշտ, գերազանցում էր պահանջարկին ավելի քան 100—150 միլիոն տոննա տարեկան հաշվարկով, և ներմուծողները մեկը մյուսի հետևից սկսեցին զիջումներ անել ընդունված գնի նկատմամբ: Արևմուտքի երկրներում նավթի պաշարները կազմում էին ավելի քան 450 միլիոն տոննա:

Կապիտալիստական աշխարհը 1980 թվականից կրկին անկում ապրեց: Արևմուտքի երկրների համախառն ազգային արտադրանքը ընդհանուր առմամբ 1980 թվականին գործնականում չաճեց, իսկ ԱՄՆ-ում, Կանադայում և Անգլիայում իջավ: Անկումը շարունակվեց նաև 1981 թվականին, որն էլ կրճատեց վառելիքի սպառումը:

Համադրելով վառելիքի խնայողությունը, էներգիայի ալտերնատիվ աղբյուրները և մեքենաների արդյունավետության բարձրացումը՝ Արևմուտքը խիստ կրճատեց իր ախորժակը նավթի նկատմամբ: Հեղուկ վառելիքի պահանջարկը արևմտյան և զարգացող երկրներում 1979 թվականի առավելագույն բարձր մակարդակի համեմատությամբ նվազեց 10 տոկոսով: Ամենուրեք արդյունաբերական ձեռնարկություններն անցնում էին քարածխին, բնական գազին, տեղակայում էին ավելի խնայողական սարքավորումներ: Եթե 1960—1978 թվականներին նավթի սպառումը միջին չափով ավելացավ 5,3 տոկոսով, ապա 1979—1990 թվականների ընթացքում այդ տեմպերը նշված էր իջեցնել մինչև 0,3 տոկոսով: Արևմտյան Եվրոպայում նավթի բաժինը էներգահաշվեկշռում նվազեց 1979 թվականի 54,1 տոկոսից մինչև 1980 թվականի 51,8 տոկոսը: Միլիոնավոր սպառողներ գնում էին բենզին քիչ ծախսող մեքենաներ, բարելավում էին իրենց տների ջերմամեկուսացումը, միաժամանակ փրկելով դրամապահուստների պարունակությունը:

«Նավթի պահանջարկի կրճատումը իրենից ներկայացնում էր ավելի շատ տենդենց, քան անցողիկ երևույթ: Իրադարձությունների այդպիսի զարգացումը ուժեղացրեց խիստ, գուցեև անուղղելի ճեղքվածքը ՕՊԷԿ-ի կարտելի ներսում»,— պնդում էր «Նյուսուիկը» 1981 թվականի հունիսին:

Դրությունը համաշխարհային նավթի շուկայում իսկապես փոխվեց: «Դժվար է պատկերացնել,— գրում էր «Փեթրոլեում ինտելիջենս ուիքլի» շաբաթաթերթը,— որ այն պայմաններում, երբ ՕՊԷԿ-ի երկու խոշորագույն արտադրողները՝ Իրաքը և Իրանը, գործնականում նավթ չեն մատակարարում, շուկայում առաջվա նման առատություն է»:

Այդ ամենը բնավ չի նշանակում, թե ՕՊԷԿ-ը արդեն քայքայվել է: «Մեր մահվան մասին հաղորդումը խիստ չափազանցված է»,— հակաօպէկային տեսությունները մեկնաբանում էր Քուվեյթի նավթի մինիստրը, բառափոխելով Մարկ Տվենի հայտնի ասույթը:

Բևեռացումը ՕՊԷԿ-ի ներսում ուժեղանում էր: Նիգերիան,

Ալժիրը, Լիբիան և Ինդոնեզիան ընդհարվեցին կա՛մ իրենց նավթի արտահանումը կրճատելու, կա՛մ շահույթի ուրիշ աղբյուրներ գտնելու անհրաժեշտությունից ելնելով: Սաուդյան Արաբիան նախկին խաղն էր խաղում:

1979—1980 թվականներին նավթի գների նոր թռիչքը իսկապես Արևմուտքում արագացրեց (թեև ոչ այն չափով, ինչպես պնդում էր արևմտյան պրոպագանդան) տնտեսական անկման վրա հասնելը և շատ թանկ նստեց էներգասպառողների վրա: Գործնականում բոլոր սպառող երկրները պայքարում էին այն բանի համար, որպեսզի կրճատեն իրենց կախվածությունը նավթից և ՕՊԷԿ-ից: Բրազիլիան նկատի ուներ 7,5 միլիարդ դոլար ներդնել այն ծրագրի մեջ, որը բենզինը կփոխարինի այնպիսի վառելիքով, որի կազմում կլինի հայրենական շաքարեղեգի սպիրտը: Արևմտյան նավթային ընկերությունները և զարգացող երկրների կառավարությունները նավթ փնտրելու նպատակով փորեցին ռեկորդային թվի հասնող նավթահորեր, թեև այդպես էլ նոր խոշոր հանքավայրեր չհայտնաբերվեցին: Արագացվեց անցումը էներգիայի ալտերնատիվ աղբյուրներին: Հին թագավոր քարածուխը, որ էժան նավթը գահից ցած էր գցել 50-ական թվականներին, վերադառնում էր անթիվ քանակով գործարաններ և էլեկտրակայաններ: «Յոթ քույրերն» ու այլ կորպորացիաներ, որ առանց այն էլ ամուր դիրքեր ունեին քարածխի արդյունաբերության մեջ, միլիարդավոր դոլարներ ներդրեցին նոր հանքահորերում և ածխահանքերում: 80-ական թվականների սկզբում Արևմուտքի առաջատար արդյունաբերական երկրները օգտագործեցին գրեթե 1,3 միլիարդ տոննա քարածուխ. սպասվում էր, որ 1985 թվականին նրա օգտագործումը կաճի ավելի քան 20 տոկոսով: Ճապոնական մետալուրգիական արդյունաբերությունը նավթի օգտագործումը 1975 թվականի համեմատությամբ կիսով չափ կրճատեց, վառելով նավթի ու քարածխի խառնուրդ կամ մաքուր քարածուխ: Ջերմաէլեկտրակայանների համար քարածխի պահանջարկը Եվրոպայում առաջ բերեց նոր նավահանգիստների զարգացում՝ ԱՄՆ-ից, Ավստրալիայից և Հարավային Աֆրիկայից քարածուխ ընդունելու համար: Նավթի պահանջարկը կրճատվեց նաև բնական գազի օգտագործման շնորհիվ:

Թեև ոչ անմիջապես, նավթի պահանջարկի վրա զգալի ազդեցություն թողեց ավտոմեքենաների և տարբեր սարքավորումների խնայողության բարձրացումը: Միջազգային էներգետիկ գործակալությունը գտնում էր, որ 1980 թվականին նավթի սպառման կիսով չափ կրճատումը բացատրվում էր տնտեսական անկումով, բայց մնացած մասի կրճատման պատճառը «միանգամայն սպառողների նոր հոգեբանությունն էր»: Սկսեցին կապիտալ ներդրումները տալ էներգախնայողաբեր սարքավորումներին: Երկար տարիներ շռայլելով էներգիան՝ ԱՄՆ-ում լույս աշխարհ եկավ մի արդյունաբերություն, որը միջոցներ էր արտադրում էներգիան խնայելու համար. սարքավորումներ, որոնք էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործում են արդյունաբերական բանած գոլորշին, սարքեր, որոնք ավտոմատ կերպով անջատում են լույսը և օդի կոնդիցիոները, երբ մարդիկ դուրս են գալիս սենյակից, սարքավորում, որը առավելագույն էներգիա է քամում ծախսած յուրաքանչյուր դոլարից: Այդ սարքավորման պահանջարկը չափազանց մեծ էր: Օրական մեկ բարել նավթի խնայողությունը կարող էր միջին սպառողի համար վառելիքի հաշիվը տարեկան կրճատել 12 հազար դոլարով:

Մելլոնի ինստիտուտի անցկացրած հետազոտությունը եզրակացնում էր, որ նավթը, որի մեկ բարելը վաճառում էին 36 դոլարով, չէր կարող մրցակցել վառելիքի այլ տեսակների հետ օգտագործման շատ բնագավառներում:

Արևմուտքի ընդհանուր տնտեսական կոնյունկտուրան 1982—1983 թվականներին նավթ արտահանողների դեմ դասավորվեց: Ե՛վ տնտեսական ճգնաժամը, և՛ էներգիայի խնայողության միջոցառումները, և՛ վառելիքի ալտերնատիվ աղբյուրներին անցնելը նվազեցրին նավթի սպառումը սոցիալիստական երկրների սահմաններից դուրս 1979 թվականին շուրջ 2,5 միլիարդ տոննայից մինչև 1982 թվականը մոտ 2 միլիարդ տոննայի: Նավթի արդյունահանումը ՕՊԷԿ-ի մասնակից երկրներում նվազեց 1979 թվականի 1,5 միլիարդ տոննայից մինչև 1982 թվականը 956 միլիոն տոննայի, իսկ նրանց արտահանության բաժինը՝ նույն այդ ժամանակաընթացքում 88 տոկոսից մինչև 60 տոկոսի: Փոխարենը աճեց Մեքսիկայի, Անգլիայի, Նորվեգիայի բաժինը, որոնք իրենց հումքը առաջարկում էին ավելի էժան գնով: ՕՊԷԿ-ի մի շարք անդամներ նույնպես սկսեցին գներն իջեցնել:

1983 թվականի մարտին Լոնդոնում, երկար օրերի լարված բանավեճերից հետո, այդ կազմակերպության մասնակիցները համաձայնվեցին իրենց համար հարկադրական և հիվանդագին քայլի: Նրանք բազային գինը մեկ բարելի համար իջեցրին մոտ

15 տոկոսով՝ 34-ից մինչև 29 դոլարի, և որոշեցին իրենց արտադրության միագումար մակարդակը օրական մեկ բարելի համար 17,5 միլիոն, շուրջ 875 միլիոն տոննա մեկ տարվա հաշվով։ Ալժիրի տնտեսագետների հաշվարկումներով, ՕՊԵԿ-ի մասնակիցների տարեկան ընդհանուր կորուստը կազմում էր շուրջ 27 միլիարդ դոլար։

ՕՊԵԿ-ի որոշումը զարգացող երկրների այդ խմբի համար, անկասկած, նահանջ էր լուրջ կորուստներով՝ նրանց դիմակայող Արևմուտքում։ Սակայն և՛ էկոնոմիկայի, և՛ քաղաքականության տեսակետից գոյություն ուներ գործի մի ուրիշ կողմ ևս։ Ջնայած սուր հակասությանը, ՕՊԵԿ-ի անդամները կարողացան կարևոր համաձայնության գալ։ Արևմտյան գուշակությունները՝ կազմակերպության «քայքայման» մասին, չարդարացան։ Համաձայնեցվեցին ոչ միայն գները, այլև արտադրության սահմանված նորմաները մասնակիցների համար այն հաշվով, որ նրանց ռեալ ընդհանուր հանույթը օրական կազմեր մեկ բարելի համար ընդամենը 14 միլիոն։

Արևմտյան տնտեսագետների մեծ մասի կարծիքով նավթի պահանջարկի նվազումը ժամանակավոր գործ է։ Համաշխարհային էկոնոմիկային նավթը հարկավոր է, և նրա նկատմամբ պահանջարկը կրկին պետք է աճի։ Հարցն այն է՝ ՕՊԵԿ-ին կհաջողվի՞ արդյոք պահպանել իր միասնությունը առաջիկա դժվար ամիսներին։ Նա իր 22-ամյա պատմության մեջ կանգնած էր ամենալուրջ փորձության առջև։

Արևմտյան մամուլը տարիներ շարունակ հալածում էր ՕՊԵԿ-ին, տարիներ շարունակ նավթ արտահանողների ուսերին էր գցում կապիտալիստական աշխարհի բոլոր աղետների պատասխանատվությունը, միաժամանակ և՛ թմբուկ էր խփում, և՛ տագնապի շեփորներ փչում։ Մի կողմից, հաճույքով վայելում էր և ուռճացնում դժվարություններն ու հակասությունները զարգացող երկրների այն խմբի, որ համարձակվել էր մարտակոչ նետել Արևմուտքին, մյուս կողմից՝ կանխագուշակումներն ուղղակի հակասական էին։ Նավթի գների նույնիսկ հետագա աննշան իջեցումն անեկամտաբեր կդարձներ Հյուսիսային ծովում գտնվող շատ հանքավայրեր։ Եվ ոչ միայն դա։ Նավթի գների իջեցումը նշանակում էր նավթ սպառող ընկերությունների ժամանակավոր ռևանշ էներգետիկ ընկերությունների նկատմամբ, որոնց հզորությունը բնավ չէր ընկճվել։ Նավթի գների իջեցումը հարվածի տակ դրեց էներգիայի ալտերնատիվ աղբյուրներին անցնելու հնարավորությունը, թեև այդ պրոբլեմը այնքան էլ հասարակ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից։

Էներգիայով ինքնապահովվածությունը 70-ական թվականներին մեկնաբանվեց որպես «Միացյալ Նահանգների ազգային անվտանգությունը» բարձրացնելու պայմաններից մեկը։ Սակայն ամերիկյան էներգետիկ ծրագրերից առաջին երեքը չհաջողվեց։ Ռեյգանի վարչակարգի օրոք տնտեսական անկումը որոշ չափով պակասեցրեց նավթի ներմուծումը։ Սակայն ԱՄՆ-ը շարունակեց օգտագործել ուրիշի նավթը հսկայական չափերով, ներմուծելով ավելի շատ, քան Ճապոնիան և Ֆրանսիան միասին վերցրած։ ԱՄՆ-ում ներմուծման հաշվին ստեղծվեցին նաև նավթի խոշոր ռեզերվներ՝ աղահանքերում։

Էներգիայի ալտերնատիվ աղբյուրների յուրացումը պահանջում է հիրավի տիեզերական մասշտաբների կապիտալ ներդրումներ։ ԱՄՆ-ը անցած տասնամյակում նավթի և նավթամթերքների ներմուծման համար վճարեց շուրջ 340 միլիարդ դոլար։ Թվում է, թե վիթխարի գումարը է։ Սակայն Միացյալ Նահանգների էներգետիկ ինքնապահովվածության նվաճումները, ըստ ռոկֆելլերյան «Չեյզ Մանհաթըն» բանկի և «Էքսոն» նավթային մոնոպոլիաների հաշվարկի, երկրում մեկ տասնամյակի համար նստում էր ավելի քան 1000 միլիարդ դոլար, թեև սկզբում հիշատակում էին 900 միլիարդ թիվը։ Պայմանական օգուտը՝ ավելի քան 560—660 միլիարդ դոլարը, 2-3 անգամ գերազանցում է ԱՄՆ-ի անցած տասնամյակում գիտահետազոտական և փորձանախագծային աշխատանքների բոլոր ծախսերը, այսինքն՝ իր գիտատեխնիկական առաջընթացի ֆինանսավորումը։ Անհնար է վիթխարի միջոցներ ներդնել էներգետիկ ծրագրերի մեջ, առանց էականորեն դանդաղեցնելու էկոնոմիկայի ճյուղերի առաջընթացը։

Մեծ չափեր ընդունեց նաև էկոլոգիական պրոբլեմը։ Քարածխի, բիտումացված ավազի և դյուրավառ թերթաքարերի մշակումն ու օգտագործումը մեծ վնաս հասցրին լանդշաֆտին, մթնոլորտին, ջրի աղբյուրներին, մի բան, որ բոլորովին չի կարելի համեմատել նրա հետ, ինչ տեղի է ունենում նավթի հանույթի և օգտագործման ժամանակ։ Հասարակության դիմադրությունը, որ գնալով ավելի ու ավելի է պահանջում պահպանել շրջապատող

միջավայրը, կարող է խոչընդոտել էներգիայի նոր աղբյուրների, ներառյալ միջուկայինի, յուրացումը:

Էներգետիկ ճգնաժամը հաղթահարելու նախադրյալներ գոյություն ունեն, թեև մոնոպոլիաների շահամոլական քաղաքականությունը բարդացնում է այդ պրոցեսը: Պատմության ընթացքում մարդկությունը միշտ էլ գտել է ամենաբարդ պրոբլեմների լուծումը, որոնք դրվել են նրա առջև տարբեր դարաշրջաններում: Սակայն հաճախ այն ուղեկցվել կամ պայմանավորվել է հասարակական խոշոր ցնցումներով և փոփոխություններով:

4

ՕՊԷԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամերիկյան ֆինանսիստը սարսափելի երազ է տեսնում. սև աչքերով մի մարդ Նյու Յորքի Քենեդու անվան օդանավակայանում իջնում է ինքնաթիռից. նրա ճամպրուկում կան միլիարդ դոլարի չեկեր, որ ստորագրել են «Էքսոն» կամ «Թեքսակո» ընկերությունները: Նա գաղտնի հանդիպումներ է ունենում խոշորագույն կորպորացիաների բաժնետիրական հսկիչ ծրարներ ունեցողների հետ, և մի առավոտ էլ Միացյալ Նահանգներն իմանում են, որ ինչ-որ արաբական թագավորության կառավարիչ հսկողություն է սահմանել «Ջեներալ մոտորսի», «Յունայթիդ Սթեյթս սթիլի», կամ «Դյուպոնի», կամ այդ երեքի վրա միասին:

70-ական թվականների կեսերին Արևմուտքի ֆինանսաարդյունաբերական մագնատներին այդպես կամ գրեթե այդպես էր պատկերվում նավթ արտահանող երկրների կողմից եկող սպառնալիքը, որոնց ձեռքում էին կենտրոնացված առասպելականորեն աճող կապիտալները:

Գինը բաց է թողնվել շշից

Հեղուկ վառելիքի գինը 1974 թվականին 1973 թվականի հոկտեմբերի համեմատությամբ աճեց ավելի քան չորս անգամ: 1974 թվականին ՕՊԷԿ-ի անդամ պետությունների շահույթները հասան շուրջ 100 միլիարդ դոլարի: Դա նշանակում էր ֆինանսական միջոցների աննախադեպ տեղափոխում դեպի նավթ արտադրող երկրները, ավելի ճիշտ, նրանց իշխող դասակարգի ձեռքը:

Առաջին հայացքից ՕՊԷԿ-ի անդամների առջև արտադրողական ուժերի զարգացման արտակարգ նպաստավոր հեռանկարներ բացվեցին։ Նրանցից շատերը հարց դրեցին՝ արագ, պայթյունանման ավելացնել իրենց տնտեսական պոտենցիալը, հույս ունենալով ձեռքի մի շարժումով մի քանի տարվա ընթացքում հասնել զարգացած կապիտալիստական պետությունների մակարդակին։

Սակայն վիթխարի կապիտալները չկարողացան այդքան կարճ ժամկետում փոխել հետամնաց սոցիալական կառուցվածքը, լրացնել կադրերի պակասը, փորձի բացակայությունը, ինֆրակառուցվածքը, նավթարդյունահանող երկրների սակավամարդությունը։ Համեմատաբար ոչ քիչ բնակչություն ունեցող նույնիսկ այնպիսի պետությունների համար, որ ինդուստրացման գործում արդեն առաջին քայլերն են արել, ինչպես Իրաքը, Ալժիրը, Իրանը, դժվար է, իսկ երբեմն ուղղակի անհնար է անմիջապես «մարսել» ստացված միջոցները։ Միայն խիտ բնակեցված Ինդոնեզիան և Նիգերիան կարողացան կուլ տալ առանց մնացորդի։ Ինչ վերաբերում է Սաուդյան Արաբիային, Քուվեյթին, Աբու Դաբիին, Կատարին, ինչպես նաև Լիբիային, ապա նրանց մոտ առաջացան շատ խոշոր չափերի «ազատ» կապիտալներ։ Նույն 1974 թվականին 60 միլիարդ դոլար իր համար կիրառման տեղ չգտավ ապրանք հայթայթելու և սպասարկելու իմաստով և հեղեղեց միջազգային վալյուտաֆինանսական շուկաները։ Համեմատության համար նշենք, որ բոլոր կապիտալ ներդրումների ենթադրվող հաշվարկային արժեքի ընդհանուր գումարը արտասահմանում 1971 թվականին կազմում էր շուրջ 160 միլիարդ դոլար։ «Ջեներալ մոտորսի»՝ աշխարհում իր մեծությամբ երկրորդ կորպորացիայի բոլոր բաժնեթղթերը այն ժամանակ գնահատվում էին 15 միլիարդ դոլար։

Երկրի իշխող դասակարգի ձեռքում, մոտ 10 միլիոն մարդ ընդհանուր բնակչությամբ, կենտրոնացված էին չտեսնված չափերի միջոցներ։ Ասես շշերից բաց թողած ջինների նման միջազգային բեմահարթակում հայտնվեցին մագնատներ, որոնք կարծես թե ընդունակ էին մարտահրավեր նետելու կապիտալիստական բիզնեսի սյուներին։

Արևմտյան պրոպագանդան այդ երևույթի շուրջը փորձեց հիստերիա ստեղծել՝ ինդուստրիալ զարգացած երկրների տեղաբնիկներին վախեցնելով «արաբական վտանգով»։ «Մեզ գողթացում է սպառնում»,— տնքում էին Արևմտյան Եվրոպայի, Ճապոնիայի և նույնիսկ ԱՄՆ-ի նախկին գաղութատերերը։ ԱՄՆ-ի առևտրի նախկին մինիստր, իսկ այնուհետև «Լիմեն բրազերզ ինկ.» վարչության նախագահ Պիտերսոնը հայտարարում էր. «Աշխարհում տեղի է ունենում ֆունդամենտալ առաջխաղացում ուժի և հարստության հաշվեկշռում»։

«Անհապաղ հետևանքը (նավթային ճգնաժամի— Ա. Վ.), հավանական է, կլինի զարգացած երկրների և նավթ արտադրող երկրների միջև տնտեսական հզորության հաշվեկշռի փոփոխությունը (և հետևաբար, հնարավոր է, նաև քաղաքական և ռազմական հզորության),— գրում էր այն ժամանակ Արևմուտքի բուրժուական խոշոր պատմաբան, այժմ հանգուցյալ Առնոլդ Թոյնբին։ Արդյո՞ք սա բոլորն է։ Եթե այդպես է, ապա դա միայն կանխագուշակում է Միացյալ Նահանգների, (Արևմտյան) Եվրոպայի և Ճապոնիայի փոխարինումը նավթ արտադրող երկրներով՝ որպես աշխարհի ամենամեծ շահագործողներ»։

Ուոլսթրիթում կամ Սիթիում վատ սքողված նախանձով և թշնամանքով հաշվում էին ՕՊԷԿ-ի անդամների շահույթները և ուղիներ էին փնտրում, որպեսզի կարկատեն իրենց վճարային հաշվեկշիռների ճեղքվածքները։ Բայց դրա հետ միասին «մոռանում էին», որ շահագործման կես դարում միայն Պարսից ծոցի գոտու երկրներում մոնոպոլիաները նավթի հանույթից «վաստակեցին» տասնյակ միլիարդների զուտ շահույթ։ Նրանց շրջանառության մեջ դրած կապիտալները բազմապատկվեցին։ Ներմուծող երկրներում հարստացավ նաև պետական գանձարանը, որպես ակցիզային հարկ՝ վերցնելով նավթամթերքների մանրածախ գներ կեսից ոչ պակաս։

1960-ից մինչև 1973 թվականը ՕՊԷԿ-ի անդամներն իրենց հումքի դիմաց ստացան շուրջ 95 միլիարդ դոլար, իսկ զարգացած երկրների պետական-մոնոպոլիստական կապիտալը՝ 600—700 միլիարդ։ Նույն այդ ժամանակամիջոցում համադրելի կապիտալներ ներդրվեցին մեքենաշինության բոլոր ճյուղերում միասին վերցրած։ Այսպիսին էին ՕՊԷԿ-ի երկրներից հարստությունը դուրս քաշելու մասշտաբները մինչև էներգետիկ ճգնաժամը։ Հենց նավթահանության երկրների բաժինը նավթամթերքների վերջնական գնով համեմատաբար վերջերս չէր գերազանցում 7 տոկոսից։ Նույնիսկ արտասահմանյան ընկերությունների համար հարկերը ավելացնելուց և նավթի գինը չորս անգամ բարձրաց-

նելուց հետո այդ բաժինը կազմում էր ոչ ավելի, քան մեկ երրորդը այն բանի, որ Արևմտյան Եվրոպայում ավտոմոբիլիստը վճարում էր մեկ լիտր բենզինի համար:

Հիշեցնենք, որ ժամանակակից կապիտալիզմի մագնատների հետևում կանգնած են վիթխարի արտադրական ապարատ, բազմադարյան փորձ, բոլոր բնագավառներում պատրաստված կադրեր, ինֆորմացիայի միջոցներ, ֆինանսական հիմնարկությունների ճյուղավորված, կարգավորված ցանց, որտեղ աշխատում է ավելի շատ մասնագետ, քան կարող են չափահաս գրագետ մարդ հավաքել արաբական նավթային չորս երկրներում և Լիբիայում: Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել առանց ցավի, «անկոնֆլիկտ» կապիտալիստական աշխարհում տնտեսական հզորության կենտրոնների վերաբաշխումը ինչպես երկրի առանձին խմբերի, այնպես էլ միջազգային ֆինանսական կապիտալի ներսում: Հնարավո՞ր է արդյոք ենթադրել, որ ժամանակակից կապիտալիզմի ամբողջ տնտեսական և ռազմական մեքենան կնահանջի նոր մագնատների առջև, որ հայտնվել են մեծ աֆրիկասիական անապատներում:

Վերաշրջանառություն

Արևմուտքի երկրները մինչև «երկրորդ նավթային շոկը» ընդհանրապես կարողացան վերականգնել կամ բարելավել իրենց առևտրական և վճարային հաշվեկշիռների հավասարակշռությունը, «ընտելացնել» «նավթադոլարները» և դրանք օգտագործել իրենց նպատակների համար: Արտահանության խիստ ընդլայնման և էկոնոմիկայի որոշ կառուցվածքային վերակառուցումների պրոբլեմները իրականացվում էին մասսաների կենսամակարդակը իջեցնելու հաշվին, ճգնաժամի դժվարությունները գցում էին զարգացող երկրների վրա, ղեկավար շրջանների համաշխարհային ֆինանսական բուրժուազիայի շրջանակների մեջ մտցնելով մի շարք նավթ արտահանող երկրների:

Արևմուտքը խիստ բնութագրեց «նավթադոլարներն» օգտագործելու ոլորտը: ՕՊԵԿ-ի մասնակիցները կապիտալների «ավելցուկով» ստիպված էին մի շարք երկրների կառավարությունների վարկավորել, սկսած ԱՄՆ-ից, միջոցներ տեղադրել եվրադոլարային ավանդներում և առևտրական բանկերում, ձեռք բերել գանձարանների արժեթղթեր և տարբեր տեսակի անշարժ

գույք, փոխառություն տրամադրել ՄՎՖ, ՄԲՐՐ-ին կամ ավելացնել այնտեղ իրենց ավանդները: Արևմուտքում նավթ արտահանողների ներդրումները նրանց փաստորեն դարձրեց համաշխարհային կապիտալիստական սիստեմի պատանդները, նրա մեջ միավորեցին նրանց իշխող դասերին՝ որպես ենթակա ոչ լիիրավ ընկերակիցների:

«Նավթային դրամները» («նավթադոլարները») համաշխարհային վճարման շրջանառության մեջ վերադարձնելու պրոցեսը, որ որոշ դեպքերում նպատակ ուներ փոխհատուցել նավթ սպառող երկրների վճարման հաշվեկշիռների դեֆիցիտը, սկսեց կոչվել «վերաշրջանառություն»: Բուրժուական որոշ առանձին տնտեսագետների կարծիքով «վերաշրջանառություն» տերմինը «վարկ տրամադրել» կամ «ինվեստիցիա» տերմինի փոխարեն գործածելը հասկացվում էր, որ ՕՊԵԿ-ի անդամ երկրները ընտրության ուրիշ ելք չունեն:

Սկզբում նավթ արտահանողները, վախենալով, որ իրենց կուտակումները կվնասվեն, գերադասեցին կարճաժամկետ, ֆինանսիստների լեզվով արտահայտված, «բարձր իրացվելիք» ներդրումները: Այնուհետև առաջխաղացում տեղի ունեցավ դրանց երկարաժամկետ օգտագործման ուղղությամբ, որն ավելի բարձրը ու կայուն շահույթ էր ապահովում:

«Նույն ժամանակ նավթային դրամներն ավելի ինտենսիվորեն են դրվում արդյունաբերական և այլ ընկերությունների բաժնետոմսերի և փոխառության տոմսերի, ինչպես նաև զարգացած կապիտալիստական երկրներում անշարժ գույքի մեջ,— գրում է սովետական հետազոտող Դ. Սմիսլովը:— Դա հատկապես վերաբերում է «նավթադոլարների» մասնավոր տերերին: Նման ինվեստիցիաները մի շարք առավելություններ ունեն պետական արժեթղթերի ներդրումների համեմատությամբ, որոնց շահութաբերությունը աչքի չի ընկնում կայունությամբ և ընդհանուր առմամբ իջնում է, առավել ևս բանկային ավանդները և գանձատների պարտամուրհակները: Այդ ինվեստիցիաները հուսալիորեն պահպանում են վալյուտային կուտակումների իրական արժեքը համաշխարհային ինֆլյացիայի պայմաններում և ավելի բարձր եկամուտներ են բերում: Նավթադոլարների ինվեստիցիաների օգտագործումը աճում է նաև եվրոպական փոխառության շուկաներում, որտեղ նրա տերերին գրավում է արդյունաբերական զարգացած երկրների առաջնակարգ փոխառություն-

նելուց հետո այդ բաժինը կազմում էր ոչ ավելի, քան մեկ երրորդը այն բանի, որ Արևմտյան Եվրոպայում ավտոմոբիլիստը վճարում էր մեկ լիտր բենզինի համար:

Հիշեցնենք, որ ժամանակակից կապիտալիզմի մագնատների ետևում կանգնած են վիթխարի արտադրական ապարատ, բազմադարյան փորձ, բոլոր բնագավառներում պատրաստված կադրեր, ինֆորմացիայի միջոցներ, ֆինանսական հիմնարկությունների ճյուղավորված, կարգավորված ցանց, որտեղ աշխատում է ավելի շատ մասնագետ, քան կարող են չափահաս գրագետ մարդ հավաքել արաբական նավթային չորս երկրներում և Լիբիայում: Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել առանց ցավի, «անկոնֆլիկտ» կապիտալիստական աշխարհում տնտեսական հզորության կենտրոնների վերաբաշխումը ինչպես երկրի առանձին խմբերի, այնպես էլ միջազգային ֆինանսական կապիտալի ներսում: Հնարավո՞ր է արդյոք ենթադրել, որ ժամանակակից կապիտալիզմի ամբողջ տնտեսական և ռազմական մեքենան կհանձնի նոր մագնատների առջև, որ հայտնվել են մեծ աֆրիկասիական անապատներում:

Վերաշրջանառություն

Արևմուտքի երկրները մինչև «երկրորդ նավթային շոկը» ընդհանրապես կարողացան վերականգնել կամ բարելավել իրենց առևտրական և վճարային հաշվեկշիռների հավասարակշռությունը, «ընտելացնել» «նավթադոլարները» և դրանք օգտագործել իրենց նպատակների համար: Արտահանության խիստ ընդլայնման և էկոնոմիկայի որոշ կառուցվածքային վերակառուցումների պրոբլեմները իրականացվում էին մասսաների կենսամակարդակը իջեցնելու հաշվին, ճգնաժամի դժվարությունները գցում էին զարգացող երկրների վրա, ղեկավար շրջանների համաշխարհային ֆինանսական բուրժուազիայի շրջանակների մեջ մտցնելով մի շարք նավթ արտահանող երկրներ:

Արևմուտքը խիստ բնութագրեց «նավթադոլարներն» օգտագործելու ոլորտը: ՕՊԵԿ-ի մասնակիցները կապիտալների «ավելցուկով» ստիպված էին մի շարք երկրների կառավարությունների վարկավորել, սկսած ԱՄՆ-ից, միջոցներ տեղադրել եվրադոլարային ավանդներում և առևտրական բանկերում, ձեռք բերել գանձարանների արժեթղթեր և տարբեր տեսակի անշարժ

գույք, փոխառություն տրամադրել ՄՎՖ, ՄԲՐԲ-ին կամ ավելացնել այնտեղ իրենց ավանդները: Արևմուտքում նավթ արտահանողների ներդրումները նրանց փաստորեն դարձրեց համաշխարհային կապիտալիստական սիստեմի պատանդները, նրա մեջ միավորեցին նրանց իշխող դասերին՝ որպես ենթակա ոչ լիիրավ ընկերակիցների:

«Նավթային դրամները» («նավթադոլարները») համաշխարհային վճարման շրջանառության մեջ վերադարձնելու պրոցեսը, որ որոշ դեպքերում նպատակ ուներ փոխհատուցել նավթ սպառող երկրների վճարման հաշվեկշիռների դեֆիցիտը, սկսեց կոչվել «վերաշրջանառություն»: Բուրժուական որոշ առանձին տնտեսագետների կարծիքով «վերաշրջանառություն» տերմինը «վարկ տրամադրել» կամ «ինվեստիցիա» տերմինի փոխարեն գործածելը հասկացվում էր, որ ՕՊԵԿ-ի անդամ երկրները ընտրության ուրիշ ելք չունեն:

Սկզբում նավթ արտահանողները, վախենալով, որ իրենց կուտակումները կվնասվեն, գերադասեցին կարճաժամկետ, ֆինանսիստների լեզվով արտահայտված, «բարձր իրացվելիք» ներդրումները: Այնուհետև առաջխաղացում տեղի ունեցավ դրանց երկարաժամկետ օգտագործման ուղղությամբ, որն ավելի բարձր ու կայուն շահույթ էր ապահովում:

«Նույն ժամանակ նավթային դրամներն ավելի ինտենսիվորեն են դրվում արդյունաբերական և այլ ընկերությունների բաժնետոմսերի և փոխառության տոմսերի, ինչպես նաև զարգացած կապիտալիստական երկրներում անշարժ գույքի մեջ,— գրում է սովետական հետազոտող Դ. Սմիսլովը:— Դա հատկապես վերաբերում է «նավթադոլարների» մասնավոր տերերին: Նման ինվեստիցիաները մի շարք առավելություններ ունեն պետական արժեթղթերի ներդրումների համեմատությամբ, որոնց շահութաբերությունը աչքի չի ընկնում կայունությամբ և ընդհանուր առմամբ իջնում է, առավել ևս բանկային ավանդները և գանձատների պարտամուրհակները: Այդ ինվեստիցիաները հուսալիորեն պահպանում են վալյուտային կուտակումների իրական արժեքը համաշխարհային ինֆլյացիայի պայմաններում և ավելի բարձր եկամուտներ են բերում: Նավթադոլարների ինվեստիցիաների օգտագործումը աճում է նաև եվրոպական փոխառության շուկաներում, որտեղ նրա տերերին գրավում է արդյունաբերական զարգացած երկրների առաջնակարգ փոխառություն-

ների առկայությունը: Նավթ արտահանող երկրները աստիճանաբար ընդլայնում են նաև սեփական վալյուտաների մեջ փոխառության տոմսերի տրամադրումը: Այդ բոլոր ներդրումների բաժինը, միասին վերցրած (արտադրություն, անշարժ գույք, արդյունաբերական զարգացած և զարգացող երկրներին երկարաժամկետ փոխառություններ), նավթ արտահանող երկրների ակտիվ մնացորդի օգտագործման ընդհանուր գումարում 1974 թվականի 27,9 տոկոսից 1978 թվականին բարձրացավ մինչև 89,3 տոկոսի:

Կարելի է եզրակացնել, որ նավթ արտահանող երկրների վալյուտային ավելցուկների վերաշրջանառությունը «նավթային երկրորդ շոկից» առաջ ձեռք բերեց ավելի կայուն և, հետևաբար, Արևմուտքի համար պակաս պայթյունավտանգ բնույթ: Արդյունաբերական կապիտալիստական պետությունները կարողանում էին սահմանված չափով իրենց սեփական կարիքների համար օգտագործել նավթադրամների շարժումը, հատկապես որպես ներքին կապիտալ ներդրումները ֆինանսավորելու լրացուցիչ աղբյուր: Անգլիական «Բենքեր» հանդեսի կարծիքով նավթ արտահանող երկրների վալյուտային ավելցուկները վերաշրջանառության մեջ դնելու հետևանքով նրանք «շատ հարցերում... ֆինանսների ոլորտում կրկին Արևմուտքից կախված մնացին»: Երևույթների նման ընթացքը մի փոքր թեթևացավ նավթ արտահանող որոշ երկրների քաղաքականությամբ, ամենից առաջ Սաուդյան Արաբիայի, որոնք Արևմուտքի հետ համաձայնություն և համագործակցություն էին փնտրում:

«Բենքեր» հանդեսը գտնում էր, որ եթե 1973 թվականին ՕՊԷԿ-ի երկրները նավթային դրամների վերաշրջանառությունը կատարում էին գլխավորապես ամերիկյան բանկերի միջոցով, ընդլայնում էին «ԱՄՆ-ի ֆինանսական հզորության սահմանները», ապա 1978 թվականին, երբ այդ երկրները «սկսեցին զգալի մասշտաբներով դիվերսիֆիկացնել իրենց ունեցած դոլարի ակտիվները», վերածելով այն արևմտաեվրոպական մարկի, շվեյցարական ֆրանկի և ճապոնական իենի, նրանք «սկսեցին պատկերացնել այդ հզորության արտաքին սահմանները»: Նավթահանույթի երկրների կողմից ոսկու մեծաքանակ գնումները վկայում են Արևմուտքի բոլոր տեսակի վալյուտային սիստեմների նկատմամբ նրանց աճող անվստահությունը:

Նավթ արտահանող երկրների դոլարից ժամանակավոր նա-

հանջի պրոցեսի լրացուցիչ հարվածը եղավ ԱՄՆ-ի և Իրանի միջև ծագած սուր կոնֆլիկտը: Այդ կոնֆլիկտը, մասնավորապես, հանգեցրեց նրան, որ 1979 թվականի նոյեմբերի կեսերին Իրանը հայտարարեց ամերիկյան բանկերից և Եվրոպայի նրանց մասնաճյուղերից իրեն պատկանող 12 միլիարդ դոլար գումարի միջոցները հանելու և ուրիշ երկրների բանկերում տեղափոխելու մտադրության մասին: Դրան ի պատասխան Սպիտակ տունը Իրանի վրա ճնշում գործադրելու նպատակով որոշեց մեկուսացնել այդ երկրի բոլոր ֆինանսական ավուարները, որոնք գտնվում էին ԱՄՆ-ում և արտասահմանի նրանց բաժանմունքներում: Վաշինգտոնի ձեռնարկած քայլը ցուցադրեց, թե ՕՊԷԿ-ի մասնակից երկրների համար որքան իրական է իրենց դրամական կուտակումների նկատմամբ հսկողությունը կորցնելու վտանգը:

Սակայն ԱՄՆ-ի բանկերում զեղչման դրույքների ավելացումը և դոլարի կուրսի բարձրացումը կրկին խիստ ուժեղացրեց ներդրումների հոսքը այդ երկրում:

1979—1980 թվականների «նավթային երկրորդ շոկի» հետևանքով կրկին, ինչպես նաև 1974—1975 թվականներին, հարցառաջացավ «նավթադոլարները» վերաշրջանառության մեջ դնելու ուղիների և մեթոդների մասին: Աշխարհի խոշորագույն ֆինանսիստները նախազգուշացնում էին այն մասին, որ դժվար ժամանակներ են եկել: Դևիդ Ռոկֆելլերն ասաց. «Էկոնոմիկայի մեջ մեր առջև դավաճանորեն կանգնած է վտանգավոր ծովը, որ փչում է ֆինանսական փոթորկալի քամիներ, ընդունակ շուռ տալու նույնիսկ մեծ, անձնակազմով լավ համալրված նավերը»: Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախկին մինիստր Դենիս Հիլին 1980 թվականի փետրվարին նկարագրեց սահմռկեցուցիչ մի պատկեր. նավթի աճող գները սպառնում են սնանկացնել շատ երկրների, որի հետևանքով նրանք ընդունակ չեն լինի արևմտյան բանկերի պարտքերը վճարել: Իսկ դա, նրա խոսքերով, «կարող է սնանկացնել ամբողջ միջազգային բանկային սիստեմը»: Մշակվեց վատ սցենար. խոշոր պարտքեր ունեցող երկիրը իրեն հայտարարում է սնանկացած, որի հետևանքով սնանկանում են նաև նրան փոխառություն տվող բանկերը, առաջ բերելով 20-ական թվականների վերջի և 30-ական թվականների սկզբի մեծ ճգնաժամի նման փլուզումներ և սնանկացումների շղթայական ռեակցիա:

Սակայն դա հնչում էր կա՛մ որպես սպառնալիք զարգացող

երկրների հասցեին, կամ էլ նախազգուշացնում էր նավթ արտահանողներին՝ ավելի շատ վստահել Արևմուտքի ֆինանսական հիմնարկներին։ Նավթի արքաներին և շեյխերին ներշնչում էին, որ նրանց ներդրումները Արևմուտքում հուսալի կլինեն, իսկ դրա համար պետք է «օգնել» կապիտալիստական էկոնոմիկային։ Միաժամանակ վերաշրջանառության հաշվին տեղի էր ունենում զարգացած կապիտալիստական երկրների վճարային հաշվեկշիռների դեֆիցիտի և զարգացող երկրների անհուսալիորեն աճող դեֆիցիտի ֆինանսավորումը։

Նավթի գների նոր թռիչքից հետո ՕՊԷԿ-ի մասնակիցների վճարային հաշվեկշիռների ակտիվները 1970 թվականին կազմում էին 60 միլիարդ, իսկ 1980 թվականին՝ 100 միլիարդից ավելի։ Նրանց ինվալյուտային ներդրումները 1979 թվականի սկզբներին գնահատվում էին 226 միլիարդ, իսկ 1981 թվականի սկզբներին հասան մոտ 350 միլիարդ դոլարի (դրանից Սաուդյան Արաբիայինը՝ 118 միլիարդ, Քուվեյթինը՝ 67 միլիարդ, Արաբական Միացյալ Էմիրություններինը՝ 35 միլիարդ, Լիբիայինը՝ 25 միլիարդ, Կատարինը՝ 11 միլիարդ)։ Նշենք, որ նման պաշտոնական գնահատականներն անկախ տնտեսագետների հաշվարկներին չեն համընկնում։ Այդ ցուցանիշները Իրաքի և Իրանի համար հավասար էին համապատասխանորեն 50 և 32 միլիարդի, սակայն դրանք պատերազմը «կերավ»։ Միայն արտասահմանյան ներդրումների հասույթը ՕՊԷԿ-ի բոլոր մասնակիցների համար 1980 թվականին կազմում էր 27 միլիարդ դոլար (Սաուդյան Արաբիայինը՝ 10 միլիարդ, Քուվեյթինը՝ 6 միլիարդ դոլար)։ ՕՊԷԿ-ի բաժինը (գլխավորապես արաբական երկրներում) 1981 թվականին կազմում էր կապիտալիստական աշխարհի ոսկու վալյուտային ռեզերվների մեկ չորրորդ մասը։

Սպիտակ բուռնուսներով բանկիրները

70-ական թվականներին էներգետիկ ճգնաժամը օրակարգից դուրս չէր եկել։ Այն ուղղակի անցել էր ուրիշ բնագավառ և արտահայտվում էր երկարաժամկետ կարգի գործոններով, ազդեցություն թողնելով ինֆլյացիայի, հեղուկ վառելիք ներմուծող կապիտալիստական և զարգացող շատ երկրների վճարային և առևտրական հաշվեկշիռների դեֆիցիտի, կապիտալիստական երկրներում արտադրության իջեցման, գործազրկության, նավթի

և այլ ռեսուրսների համար միջիմպերիալիստական սրված պայքարի վրա։ Ձմռոնանալով իմպերիալիստական երկրների «ծայրահեղ միջոցներ» կիրառելու սպառնալիքի մասին, մենք պետք է ուշադիր նայենք նոր և հին ֆինանսական մագնատների միջև ձևավորվող հարաբերությունների էությանը։

Ամերիկյան մի բանկիր, 1974 թվականի գարնանը այցելելով Ոսկի գոտի, ասաց. «Վատագույն սխալը, որ կարող է անել Արևմուտքը, դա այն է, որ կարծում են, թե արաբները նստել են անապատի շուկայում և խոիր են հյուսում, առանց պատկերացնելու, թե ինչ բան է միջազգային ֆինանսը»։ Սակայն «պատկերացումից» մինչև իրական մասնակցությունը կամ հրսկողությունը՝ մեծ հեռավորություն է։

60-ական թվականներին Քուվեյթի էմիրը դիմեց միջազգային ֆինանսների բնագավառում խոշոր փորձագետ Յուջին Բլեքին՝ առաջնակարգ բանկիրներից կոնսուլտատիվ կոմիտե ստեղծելու խնդրանքով։ «Գլխավորը, որ մենք պետք է անեինք, դա այն էր, որ խանգարենք նրանց խելագարություն անել»,— հայտարարեց Բլեքը։ Բայց շուտով նա նկատեց, որ քուվեյթցիները, որոնք սովորական վաճառականներ էին, մարգարիտ որոնողներ և երբեմն էլ մաքսանենգներ, շուտ հասկացան բանկային գործի էությունը։ Մի քանի տարի հետո կոմիտեն դադարեց գործելուց, որովհետև քուվեյթցիները գտան, որ կարող են յոլա գնալ առանց նրա խորհուրդների։ Երկրում հայտնվեցին կապիտալ ներդրումների սեփական ինստիտուտներ։ Արաբական տնտեսական զարգացման Քուվեյթի ֆոնդը ստեղծվեց 1961 թվականի դեկտեմբերին։ Այն ժամանակ Քուվեյթը աշխատում էր ամրապնդել իր գոյությունը որպես անկախ պետություն, նրա կառավարությունը հաշվի էր առնում, որ արաբական երկրներում (բնակչությամբ ավելի շատ, բայց առանց կապիտալի) քննադատություն էր սկսվել նավթով հարուստ «բեդվին նորահարուստների» իշխանության հասցեին։ Քուվեյթի փոխառությունները համեմատաբար արտոնյալ պայմաններով տրամադրվում էին արաբական երկրներում տրանսպորտի, գյուղատնտեսության, էներգետիկայի զարգացմանը։ Քուվեյթի ֆոնդից միջոցներ ստացողների թվում էին Սուդանը, Թունիսը, Եգիպտոսը, Մարոկկոն, Հորդանանը, Սիրիան։ Քուվեյթի կառավարության նախաձեռնությամբ ստեղծված է միջազգային ֆինանսական կազմակերպություն՝ տնտեսական և սոցիալական զարգացման արաբական

ֆոնդ, որի անդամները գործնականում բոլոր արաբական երկրներն են։

1974 թվականին նրա տնօրինությանը հանձնվեց ավելի քան 2,5 միլիարդ դոլար, այնուհետև՝ էլ ավելի մեծ գումար։ Ֆոնդի իրավունքներն ընդլայնվել են, այնպես որ նա կարող է դրամ ներդնել նաև ոչ արաբական երկրներում։

Քուվեյթի կապիտալները ի՞նչ ուղիներով են հոսում արաբական աշխարհի սահմաններից դուրս։ Երկրում գործող արտասահմանյան բանկերից ամենախոշորների՝ «Ֆերսթ Նեշնըլ սիթիի», «Չեյզ Մանհաթընի» միջոցով։ Քուվեյթի կառավարության նավթի դեպարտամենտի դիրեկտոր Հալեդ Աբու Սուդը այսպես բնութագրեց նրանց գործունեությունը. «Հատկապես այդ բանկերն են ընտրում այն ֆիրման, որտեղ նրանք միջոցներ են ներդնում։ Նրանց ազատություն է տրված վաճառել և գնել բաժնետոմսեր, որպեսզի խուսափեն վնասներից և ավելի շատ շահույթ ստանան»։ Սակայն հաղիվ թե հարկ լինի հարցնել՝ այսպիսով, ո՞ւր են գնում Քուվեյթի կապիտալները։ Հայտնի է, որ «Ֆերսթ Նեշնըլ սիթիի» և «Չեյզ Մանհաթընի» ծառայություններից օգտվում են նրանց հետ կապված ամերիկյան էկոնոմիկայի ավելի քան 30 ճյուղերի կորպորացիաներ։

Իշխանապետությունում կան ընկերություններ նաև մասնավոր ներդրումներ կատարելու համար։ Դրանցից են՝ «Քուվեյթ ինվեստմենթը», «Քուվեյթ ֆորին թրեյդինգ, կոնտրակտինգ ընդ ինվենստմենթը» և «Քուվեյթ ինտերնեշնըլը»։ Նրանցից շատերն անշարժ գույք ունեն Եվրոպայում, Մերձավոր և Միջին արևելքում։ ԱՄՆ-ում, օրինակ, Հարավային Կարոլինայի մոտ, Կիավա կղզին, որտեղ տուրիստական և առողջարանական կենտրոններ են կառուցված, իրենց ձեռքն են գցել քուվեյթցիները։ Նրանք ներդրումներ են կատարում բանկերում, տրանսպորտային, ցամաքային ընկերություններում, աֆրիկյան հանքերում, Կանադայի ցեմենտի ձեռնարկություններում։ Նավթի թագավորության ֆինանսիստները դրամ են ներդրել Սուդանի տեքստիլ և դեղագործական ֆաբրիկաներում, Արևելյան Աֆրիկայի ձկնորսարաններում, Նիգերիայի լուցկու ֆաբրիկայում։ Մերձավոր և Միջին արևելքում «Հիլտոն», «Շերատոն», «Ինտերկոնթինենթըլ» և «Հոլիդեյ ին» հյուրանոցների մեծ մասը ֆինանսավորում են սաուդյան և քուվեյթյան բիզնեսմենները։

Աբու Դաբիի իշխանապետության վալյուտային ռեզերվները

ավելի մեծ արագությամբ աճեցին։ Էմիրություններում սկսեցին հայտնվել ճիշտ Քուվեյթի ինստիտուտներին նման ինստիտուտներ։ Ֆինանսների մինիստրը օգտվում էր այնպիսի հիմնարկների խորհուրդներից ու ծառայություններից, ինչպիսին «Յունիոն դը բանկ սյուիսն» էր և բրիտանական գաղութային կայսրության «Կրաուն էջենթս» հին բանակային կազմակերպությունը։ Կառավարությանն առընթեր ստեղծվեց ներդրումների գծով խորհուրդ՝ անգլիական «Վիլյամս ընդ Գլին» բանկի փոխպրեզիդենտ Ջոն Հոգգի գլխավորությամբ։ Նրա անդամներից էին «Մորգան գրենտի թրաստ» վարչության խորհրդատու Լոնգ Սթրիթ Հիլտոնը, ինվեստիցիաների գծով անգլիական խորհրդի կառավարիչ Ջոն Մորելը և «Բանկ դե լը էնդոշինի» գլխավոր դիրեկտորի տեղակալ կոմս Ժան դե Սեին։ Աբու Դաբիի ինվեստիցիաների գծով խորհրդի անդամները իրենք էին ընտրում, թե ուր ուղարկեն դրամը, ինչպիսի արժեթղթերով ներդնեն և արտասահմանյան որ բանկի միջոցով։ Մորգանի խումբը Աբու Դաբիի համար շուկա էր ապահովել ԱՄՆ-ում, Ֆլեմինգի խումբը՝ Մեծ Բրիտանիայում և Ճապոնիայում, «Բանկ դե լը էնդոշին»՝ Արևմտյան Եվրոպայում։

Սաուդացիները իրենց ռեզերվների մեծ մասը դոլար են դարձնում։ Նավթից ստացված եկամուտները ամբողջությամբ հանձնում են գլխավոր ֆինանսական կազմակերպությանը՝ Սաուդյան Արաբիայի վալյուտային գործակալությանը, որը կարծես կենտրոնական բանկ լինի։

Այն պահին, երբ գործակալությունը ԱՐԱՄԿՈ-ից վճարումներ է ստանում, անմիջապես օգտագործում է տելեքսը, որպեսզի իմանա՝ որտեղ են առավել բարձր տոկոսները։ Դոլարների մեծ մասը ուղղվում է Միացյալ Նահանգներ, որտեղ դրույքները բարձր են։ Որպես Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչներ հանդես են գալիս նույն «Մորգան գրենտին» և «Չեյզ Մանհաթընը»։

Սաուդյան Արաբիան դարձավ ամերիկյան բանկերի, կառավարական արժեթղթերի, էկոնոմիկայի և ԱՄՆ-ի անշարժ գույքի ամենախոշոր արտասահմանյան ավանդատուն։ Սաուդյան ինվեստիցիաների փաստացի չափերը, ըստ մի շարք աղբյուրների, զգալիորեն շատ են պաշտոնապես հայտարարվածներից։ (1978 թվականին միջազգային վալյուտային ֆոնդին ներկայացված գաղտնի զեկույցում Սաուդյան Արաբիան ինքն իր

միջազգային ինվեստիցիաները գնահատել է 133 միլիարդ դոլար: Մասնագետների կարծիքով այդ գումարը 1981 թվականի վերջում համենայն դեպս ավելացել է ևս 100 միլիարդ դոլարով: Այս թվերը խիստ տարբերվում են պաշտոնական տվյալներից:)

ԱՄՆ-ում արաբական կապիտալը կենտրոնանում է մի շարք խոշորագույն բանկերում, գլխավորապես Նյու Յորքի բանկերում: Ինչպես գրում է «Ֆորչուն» հանդեսը, վկայակոչելով արտաքին գործերով սենատի հանձնաժողովի անդամներից մեկին, ամենից հավանական է, որ արաբական ամբողջ ակտիվների 75 տոկոսը ԱՄՆ-ում կենտրոնացած է «Ֆերսթ Նեշնըլ սիթի բանկում», «Չեյզ Մանհաթըն բանկում» և «Մորգան գերենտի թրաստում»: Եթե դրանց ավելացվի «Քեմիքըլ բանկ օֆ Նյու Յորք», «Մենյուֆեկչուրերս Հանովեր թրաստ» և «Բանկ օֆ Ամերիքան», ապա համարձակ կարելի է հաստատել, որ այդ վեց բանկերը հսկում են երկրում արաբական ամբողջ կապիտալի ներդրումների 90 տոկոսը: Մնացած 10 տոկոսը, ֆեդերալ ռեզերվային սիստեմի կառավարող խորհրդի անդամ Ֆ. Կոոդուխոլի կարծիքով, գրտնըվում է ըստ ցուցակի ԱՄՆ-ի հաջորդ վեց բանկերի ձեռքում:

Ընդհուպ մինչև իրանական հեղափոխությունը «Չեյզ Մանհաթընը» իրանական կապիտալի օպերացիաների գծով համարվում էր առաջատար բանկը: Ամեն անգամ, երբ շահը և նրա կառավարությունը ֆինանսական խոշոր ծախսեր պահանջող որևէ գործարք էին կատարում, նրանք որպես բանկիր նշում էին «Չեյզ Մանհաթընին»: Ռոկֆելլերի այդ բանկը ֆինանսավորում էր Իրանի նավթային հարստությունների շահագործումը, նրա արդյունաբերության և սպառազինության ստեղծումը, շահական ՍԱՎԱԿ պահնորդական բաժնին անհրաժեշտ հանդերձանքով զինումը: Շահի կառավարման վերջում «Չեյզ Մանհաթըն բանկի» հաշվում կար մոտ 3 միլիարդ դոլար իրանական դրամ՝ գրեթե բանկերում եղած ավանդների ընդհանուր գումարի 8 տոկոսը: Շահը այդ բանկում էր տեղավորել 20—30 միլիոն դոլար գնահատվող իր սեփական ունեցվածքի մի մասը:

Ամերիկյան կառավարությունը հաշվի է առնում միայն այն ներդրումները, որոնք ունեն ազգային պատկանելություն: Սակայն շատ ներդրումներ կատարվում են փոխանձանց կամ կազմակերպությունների միջոցով: Տնտեսագետ Պ. Էրդմանը կոնգրեսին ներկայացրած իր զեկուցագրում նշում է, որ «նավթ արտահանող երկրները ԱՄՆ-ում ունեն նույնքան գաղտնի ներդրումներ, որքան և բացահայտ»: Այդպիսի քաղաքականությունը արաբական ավանդատուների համար երաշխիք է ապահովում նրանց ավանդների վրա հնարավոր կալանք դնելուց ամերիկյան արաբական առճակատման դեպքում, որը կարող է հանգեցնել նման քայլի դիմելու: Համենայն դեպս, հայտնի է, որ ՕՊԷԿ-ի անդամների արտասահմանյան ակտիվների 350 միլիարդ դոլարի ավելի քան կեսը բաժին է ընկնում ԱՄՆ-ին:

Ամերիկյան մամուլի տվյալներով, արաբական նավթային մագնատները, չսահմանափակվելով ԱՄՆ-ի բանկերում իրենց կապիտալները զետեղելով ավելի ակտիվորեն են զբաղվում, լրիվ կամ մասնակիորեն, մանր բանկերի ձեռքբերմամբ, հողի կամ անշարժ գույքի, հյուրանոցի, արդյունաբերական ձեռնարկությունների և այլնի գնումներով: Քուվեյթը բաժնետոմսերի ծրարներ ձեռք բերեց ԱՄՆ-ի բոլոր 500 ամենախոշոր կորպորացիաներից: Արաբական նավթ արտադրողների լրիվ կամ մասնակի հսկողության տակ գտնվող բանկերի թվին են պատկանում «Բենք օֆ զե կոմմոնուելս օֆ Միչիգան», «Մեյն բենք օֆ Հյուստոն», «Նեշնըլ բենք օֆ Ջորջիա», «Յունիոն Չելսիա Նեշնըլ բենք օֆ Նյու Յորք», «Սեքյուրիթի Նեշնըլ բենք օֆ Կալիֆոռնիա» և շատ ուրիշներ: Սակայն, ձեռք բերելով արաբական կապիտալները, այդ բանկերը մնացին ամերիկյան ֆինանսական սիստեմի ոլորտում:

Լոնդոնի դրամական շուկան միաժամանակ ներգրավում է Սաուդյան Արաբիայի և նավթային այլ պետությունների միջոցները: Ներդրված կապիտալների բավական բարձր տոկոսները, ֆունտ ստեռլինգով պաշտոնական ինվեստիցիաների համար «երաշխիքը», Սիթիի դրամական շուկայի ընդարձակությունը, ճկունությունն ու փորձառությունը, արաբական երկրների և Իրանի հետ ունեցած հին կապերը՝ այս բոլորը գործոններ են, որ աշխատում են միայն Լոնդոնի օգտին:

Փարիզը ֆինանսական մյուս կենտրոնն է, որի միջոցով կարգավորվում են արաբական «աղատ» կապիտալները: Հայտնի է, որ «Սոսիետե ժեներալը» և «Կրեդի լիոնեն» ստեղծեցին առաջին բազմազգ եվրոպա-արաբական կոնսորցիումը՝ «Բենք ֆրանկո-արաբ դը էնվեստիսմանը» և «Յունիոն դե բանկ արաբ է ֆրանսեզը»:

«Նավթադոլարների» վերաշրջանառության մեջ կարևոր դեր են խաղում Բենիլյուքսի և Շվեյցարիայի բանկերը։

Միջազգային բանկային մոնոպոլիաները, ձգտելով մոտ գտնվել «նավթային դրամների» աղբյուրներին, արաբական երկրներում բացում են իրենց մասնաճյուղերը։ Այնտեղ, որտեղ դա չի հաջողվում, նրանք երբեմն գործում են ազգային հիմնարկությունների ձևական ցուցանակի տակ, իսկ մի շարք դեպքերում տեղական բանկերին կաշկանդում են պայմանագրերով և երկարաժամկետ համաձայնագրերով։

Կատարում տասը բանկերից ինը պատկանում են արտասահմանցիներին, Բահրեյնում՝ տասնմեկից տասը։ Արաբական Միացյալ Էմիրություններում գոյություն ունի 50 բանկ, գրեթե բոլորն էլ արտասահմանյան։ Մերձավոր և Միջին Արևելքում մինչև 1975 թվականի քաղաքացիական պատերազմը ֆինանսական գործողությունների ցատկահարթակը Լիբանանն էր։ Ֆինանսական աշխարհում Բեյրութը համարվում էր արաբական մաքուր կապիտալի մշտական պահապանը։ Բեյրութում կար 73 բանկ, նրանցից 34-ը լիբանանյան են, մնացածները՝ ամերիկյան և արևմտաեվրոպական խոշորագույն բանկերի մասնաճյուղեր։ Այստեղից «ազատ» դրամները լողում էին դեպի Արևմուտք։ Սակայն քաղաքացիական պատերազմը, այնուհետև իսրայելական հարձակումները պայթեցրին Բեյրութի բանկային կենտրոնը։ Նրա դերը ինչ-որ չափով իր վրա վերցրեց Բահրեյնը։

«Նավթային դրամների» հոսքը դեպի Արևմուտքի զարգացած կապիտալիստական պետությունները օգնում է նրանց զարգացող երկրների հաշվին բուժել իրենց տնտեսական ցավերը, թեթևացնում է նրանց տնտեսական վերակառուցումը, օգնում պակասեցնելու վճարային հաշվեկշիռների դեֆիցիտը։

Նավթի գների աճը, հաճախ աղետալի, աղդում էր այդ հումքից զուրկ զարգացող երկրների տնտեսական վիճակի վրա։ Դա նրանց վճարային հաշվեկշռի խրոնիկական դեֆիցիտի (1980 թվականին ավելի քան 50 միլիարդ դոլար) հիմնական պատճառներից մեկն էր։ Բոլոր զարգացող երկրների պարտքը 80-ական թվականների սկզբին գերազանցում էր 500 միլիարդ դոլարից։ Արտասահմանյան վալյուտայում իրենց բոլոր եկամուտների մոտավորապես մեկ հինգերորդ մասը նրանք պետք է վճարեին միայն վարկի տոկոսների դիմաց։ Մի շարք միջազգային բանկեր արդեն հրաժարվում էին նրանց փոխառություն

տալ։ Իսկ ՄՎՖ-ի և ՄԲՐՐ-ի վարկերը տրվում էին հարկադրանքի պայմաններով, որ հավասար էր ֆինանսական ստրկության։ Սակայն մի շարք դեպքերում պարտքը հասավ այնպիսի հսկայական չափերի, որ պարտքատեր երկրները առանց դժվարության ստացան նոր վարկեր. նրանց սնանկացման վտանգը սարսափի մեջ էր պահում վարկատուներին։ Բրազիլիայի դեպքը, որը 80-ական թվականների սկզբին պարտք էր վերցրել 50 միլիարդ դոլար, կամ Մեքսիկայինը (80 միլիարդ) շատ ավելի տիպական են։ Նրանց ուղղակի չէին կարող նոր վարկեր չտալ, վախենալով կորցնել բոլորը։

Զարգացող շատ երկրներ ավելի մեծ ֆինանսական կախման մեջ են ընկնում Արևմուտքից։ Դանդաղում են նրանց տնտեսական զարգացման տեմպերը, իջնում է բնակչության կենսամակարդակը։ Այդ պայմաններում բավական համոզիչ է հնչում վառելիք ներմուծող զարգացող երկրների պահանջը ՕՊԷԿ-ի նկատմամբ՝ փոխհատուցել նրանց ծախսերի աճը։ Չէ որ նրանք ակտիվորեն աջակցեցին Արևմուտքի դեմ նավթ արտահանող պետությունների պայքարին, որոշակի ներդրում մտցնելով նրա հաջողության համար։

ՕՊԷԿ-ի մասնակիցները որոշ չափով ընդառաջեցին մյուս աղատազրված երկրներին, նրանց զգալի չափով ֆինանսական և տնտեսական օգնություն ցույց տալով։ 1980 թվականին նրա ընդհանուր ծավալը գերազանցեց 55 միլիարդ դոլարից, այն կազմեց ՕՊԷԿ-ի անդամների համախառն ազգային արտադրանքի 1,3 տոկոսը, համեմատած իր ՎՆՊ-ի 0,3 տոկոսի հետ, որ տրամադրել էր Արևմուտքը։ ՕՊԷԿ-ի օգնության ընդհանուր ծավալի 70 տոկոսը առաջանում էր արտոնյալ պայմաններում հիմնականում նվերների ճանապարհով։ Հիմնական դոնորները Պարսից ծոցի ավազանի պետություններն էին։ Միջոցները գալիս էին հիմնականում երկկողմանի կամ ռեգիոնալ հիմունքներով և մասնակիորեն՝ միջազգային վալյուտային ֆոնդի, վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, միջազգային ֆինանսական այլ ձեռնարկությունների միջոցով։ ՕՊԷԿ-ի օգնությունը, չնայած իր խոշոր չափերին, հազիվ է հասնում այդ գումարից արտահանվող ընդհանուր կապիտալի մեկ յոթերորդին։ Այն նպաստում է Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մյուս երկրներում մի շարք ֆինանսական և տնտեսական պրոբլեմների լուծելուն, բայց, իհարկե, չի փոխհատուցում նույ-

նիսկ նրանց ընդհանուր «նավթային դեֆիցիտի» կեսը: Բացի դրանից, այդ վերապահումը նույնպես մասնակիորեն է արվում, այն որոշվում է և՛ քաղաքական, և՛ կրոնական նկատառումներով:

Նվս մեկ էական տարր: ՕՊԷԿ-ի մասնակիցներն իրենց կապիտալները արտահանում են փոխատվական ձևով, և եթե այն անմիջապես չի ծածկում վճարային հաշվեկշռի դեֆիցիտը, ապա զարգացող երկրները իրենց տրամադրած միջոցների փոխարեն զարգացած կապիտալիստական երկրներից ներմուծում են պարենամթերք, սարքավորում, հումք: Այսպիսով, Արևմուտքը ՕՊԷԿ-ի հաշվին ֆինանսավորում է իր արտահանությունը դեպի զարգացող երկրներ, նրանց ավելի կապելով իրեն, «տնտեսելով» իր սեփական օգնությունից, իր ֆինանսական կենտրոնների միջոցով վարկավորելով նրանց ՕՊԷԿ-ի մասնակիցների կապիտալի վերաշրջանառության հաշվին:

Հնարավորությունների սահմանները

Արաբական կապիտալը հայտնվեց զարգացած կապիտալիստական երկրների հազարավոր խոշոր և մանր ընկերություններում: Սակայն ինչպիսի՞ն էր նրա դերը: Արաբական մագնատները արդյո՞ք ստացան հսկողության էլեմենտներ այն կորպորացիաներում, որոնց իրենք ֆինանսավորում էին: Պարզվում է մի բազմանշանակալից փաստ. նույնիսկ իրենց փորձով և ֆինանսական հիմնարկությունների համեմատաբար զարգացած համակարգով քուվեյթցիները ընկերության դիրեկտորների խորհրդում, որտեղ ներդրված են իրենց դրամները, չեն քվեարկում: Քուվեյթի կառավարության փոխարեն այդ բանն անում են «Ջեյլ Մանհաթընը» և «Ֆերսթ Նեշնըլը»:

Նշվում են արաբական շատ ֆինանսիստներ, որոնք չեն կարողանում օտարերկրյա ֆիրմաների վրա էական ազդեցություն գործել: «Նույնիսկ եթե մենք հսկողության տակ վերցնեինք «Ջեներալ Մոտորսին», ապա պետք է հաշվի առնեինք մի շատ կարևոր բան. մենք չենք համարվում, ասենք, «Ֆիատի» ներկայացուցիչները, որը կուլ տար այդ ձեռնարկությունը, ունենալով սեփական պլաններ և գաղափարներ, թե ինչպես ղեկավարել ավտոմոբիլային արդյունաբերությունը,— դատողություն էր անում «Քուվեյթի ինվեստմենտ կոմպանիի» գլխավոր դիրեկտորը Աբդել Լաթիֆ ալ-Համադը:— Եթե ես ձեռք բերեի, օրինակ, «Ինտերնեշնըլ բիզնես մաշինզը», հնարավորություն չէի ունենա ղեկավարելու այդ կորպորացիան: Բայց այնքան էլ կարևոր չէ, թե այդ ընկերության պրեզիդենտը արաբ կլինի, թե ոչ: Կարևորն այն է, որ այդ պրեզիդենտը ակտիվ դեր կատարի, անկախ իր ռասայից կամ ազգությունից»:

Ճիշտ է, որոշ արաբներ այլ կարծիքի են: Լիբանանցի Ռոժե Թամրազը, որը սովորում էր Հարվարդի բիզնեսի դպրոցում, հայտարարեց. «Ոչ մի պատճառ չկա, որը կարողանար մեզ արաբներիս, խանգարել հսկելու ամերիկյան ընկերություններին: Մենք կարող ենք օգտվել լավագույն մասնագետների, լավագույն տնտեսագետների ծառայություններից: Կարծում եմ, որ մենք սկզբունքորեն պետք է հսկողություն սահմանենք ամերիկյան որևէցե խոշոր ֆիրմաներից մեկի վրա»:

Ռոժե Թամրազը «սկզբունքորեն» փորձեց այդ բանն անել: Նա ձեռք բարձրացրեց ոչ թե ուրիշի, այլ «Լոկխիդ» ամերիկյան վիթխարի ավիատիեզերական ընկերության վրա: Նրա լիբանանյան «Ֆերսթ արաբիեն կորպորեյշն» բանկի միջոցով Ծոցի գոտու գործարարները փորձեցին 100 միլիոն դոլարով ձեռք բերել «Լոկխիդի» բաժնետոմսերի հսկիչ ծրարը, երբ ամերիկյան ֆիրման գտնվում էր սնանկացման եզրին և սաստիկ դրամի կարիք էր ղգում: Սակայն Թամրազի առաջարկը նույնիսկ չքննարկվեց ընկերության դիրեկտորների խորհրդում, թեև լիբանանյան բանկիրի ձայնը միանգամայն աղերսալից էր. «Մենք հավատացնում ենք, որ արաբական ավանդատուները չեն միջամտի ընկերության ամենօրյա ղեկավարմանը, չեն առարկի վարչության որոշումների դեմ, «Լոկխիդին» տրամադրելով հավասար իրավունք վարչության արաբական անդամների ընտրության ժամանակ»: Ի պատասխան նա լսեց միայն սառցային «ոչը»:

Թեև զարգացած կապիտալիստական երկրները հավանություն էին տալիս «նավթային դրամների» ներդրումներին, սակայն խիստ հսկողություն էին պահպանում իրենց էկոնոմիկայի գլխավոր բաժանմունքների վրա: Այսպես, 1974 թվականի վերջում Քուվեյթը ձեռք բերեց Արևմտյան Գերմանիայի «Դայմլեր-Բենց» հայտնի ավտոմոբիլային ընկերության բաժնետոմսերի 14 տոկոսը: Որոշ ժամանակ անց Իրանը փորձեց գնել նույն այդ ֆիրմայի բաժնետոմսերի մի մեծ ծրար, որը կնշանակեր, թե «Դայմլեր-Բենցի» հսկողությունը անցնում էր միջինարևելյան կապիտալի ձեռքը: Սակայն գործարքը խափանվեց: Ինքը ԳՖՀ-ի

այն ժամանակվա կանցլեր Հելմուտ Շմիդտը պնդեց, որպեսզի ԳՖՀ-ի բանկիրները «օգնեն» թուլացած ընկերությանը՝ գնեն այն բաժնետոմսերը, որի համար պայքարում էր Իրանը: «Մենք գոհ չէինք լինի, եթե մեր էկոնոմիկայի և՛ քաղաքական, և՛ սթրատեգիական կարևոր մեծ ճյուղերը ընկնեին օտարերկրյա հսկողության տակ»,— ասաց նա: ԳՖՀ-ի առաջավոր բանկիրներն ու արդյունաբերողները հավաքվեցին Դյուսելդորֆում և միջոցներ մշակեցին, որպեսզի խանգարեն «նավթային կապիտալների» առաջխաղացմանը արևմտագերմանական էկոնոմիկայի կարևոր բաժանմունքներում:

Երբ նույնպիսի հարցեր ծագեցին ԱՄՆ-ում, այն ժամանակվա ֆինանսների մինիստր Սայմոնը պարզաբանեց, որ նավթարտադրող երկրները ներդրումներ են անում ամերիկյան էկոնոմիկայի մեջ՝ համաձայնեցնելով ամերիկյան կառավարության հետ: ԱՄՆ-ում արաբական մագնատների «գործողությունների ազատությունը» սահմանափակված է խիստ շրջանակներով և դրված է գանձատան հսկողության տակ: Ամերիկյան արդյունաբերության մեջ օտարերկրյա ներդրումների համար արգելապատնեշ էր ծառայում ամենից առաջ «ռազմական գաղտնիքը պահելու ծրագիրը»: Պենտագոնի բոլոր կապալառուները պետք է հաշվետվություն ներկայացնեն ոչ ամերիկացիների ձեռքում գտնվող բաժնետոմսերի ծրարի չափերի մասին, և զրկվում են ռազմական պատվերներից, եթե օտարերկրյա կապիտալի բաժինը գերազանցում է նվազագույն մակարդակը: Այնպես որ «Լոկհիդի» վրա հարձակումը նախապես անհուսալի գործ էր:

Անգլիայում տեսուչի դեր էր կատարում «Բանկ օֆ Ինգլենդը»: Նրա հավանությունը պահանջվում էր յուրաքանչյուր գործարքի համար, որտեղ օտարերկրացիները ձեռք են բերում ընկերության բաժնետոմսերի ավելի քան 10 տոկոսը:

Որոշ դեպքերում արաբական կապիտալը այնուամենայնիվ հաղթահարում է իր առջև դրված արգելապատնեշը: Բայց իսկապես «բաժնետոմսերի հսկիչ ծրարի» ձեռք բերումը նշանակում է, որ այս կամ այն ֆիրման կդառնա «արաբական»: Դիմենք արաբական աշխարհի խոշորագույն մասնավոր ձեռնարկատերերից մեկին՝ Խաշոգջու գործունեությանը:

Սաուդի գործարարին հաջողվեց մոբիլիզացնել սաուդյան «ազատ» կապիտալների մի մասը և կալիֆոռնյան երկու բանկերում ձեռք բերել բաժնետոմսերի հսկիչ ծրարներ: Նա դրամը

ներդրեց Արիզոնի նահանգում անասունների բազմացման, կաթիֆոռնիայում ռեստորանների, բեռներ տեղափոխելու ընկերության և Նյու Յորքում մի քանի ֆիրմաների համար: Խաշոգջին ունի «ուղեղի տրեստ», որի կազմում գտնվում են երկու տասնյակ մարդ, որոնց մեծ մասը ամերիկացիներ են: Նրանցից ոմանց նա տարեկան վճարում է ավելի քան 100 հազար դոլար: Նա ցանկություն ուներ Սաուդյան Արաբիայում և արաբական աշխարհում արևմտյան տիպի կապիտալիզմ ներդնել: «Ես միացյալ Նահանգներին մեղադրում եմ այն բանում, որ իրենց սիստեմը չեն արտահանում մեզ մոտ»,— մորմոքում էր նա:

Սաուդյան մյուս բիզնեսմենը Սուլեյման Օլայանն է՝ Սաուդյան Արաբիայի ամենահզոր ֆիրմաներից մեկի հիմնադիրը: Համեմունքներ վաճառողի որդին, ավարտելով Բահրեյնի անգլիական դպրոցը, ԱՐԱՄԿՈ-ում վարձվեց որպես թարգմանիչ: Հետո վարորդ, կազմակերպեց սեփական տրանսպորտային գրասենյակ, հարստություն դիզեց տրանսարաբական նավթամուղի շինարարությունից: Այնուհետև նա զբաղվեց մթերքների առևտրով, շինարարությամբ, հողի սպեկուլյացիայով: Նրա խմբում ընդամենը 35 ընկերություն կար, որոնք գործում էին Սաուդյան Արաբիայում: Սուլեյման Օլայանը միջազգային ֆինանսական շուկայում հանդես էր գալիս արքայորդի Հալեդի՝ Աբդալահի որդու, թագավորության հիմնադրի եղբոր հետ:

«Օլայանի խումբը» Նյու Յորքում ղեկավարում է ոչ այլ ոք, քան ԱՄՆ-ի ֆինանսների նախկին մինիստր Ուիլյամ Սայմոնը: Օլայանի ներդրումները տարածվում են ամերիկյան ինը բանկերի վրա, ներառյալ «Չեյզ Մանհաթըն բանկը», որտեղից դուրս են գալիս նրա հիմնական ընկերությունների կառավարիչները, և «Ֆերսթ Չիկագո կորպորեյշնը»: Օլայանը Սաուդյան Արաբիայում «Սաուդի—Բրիտիշ բանկսի», Իսպանիայում «Սաուդի-Սպենիշ բանկի» նախագահն է, «Մորգան գրենֆեի թրասթի» միջազգային կոնսուլտացիոն կոմիտեի անդամ, միաժամանակ «Մոբիլ» դիրեկտորների խորհրդի անդամ, որտեղ նա բաժնետոմսերի մեծ ծրար ունի: Նրա կորպորացիան լայն հետաքրքրություններ ունի Հոնկոնգում և արևմտաեվրոպական մի շարք երկրներում: Սակայն հիմնականը ԱՄՆ-ում է, որտեղ նա գնել է ամերիկյան 60 ընկերություններում մասնակցելու իրավունք: Ի տարբերություն Խաշոգջու, Սուլեյման Օլայանը գերադասում է գործել կուլիսների ետևից, իր վրա ուշադրություն

չգրավելով ո՛չ անձնական ինքնաթիռներով, ո՛չ էլ ճչացող շքեղ ապրելակերպով։ Սակայն նրա զուտ եկամուտները միայն Սաուդյան Արաբիայում տարեկան կազմում են մինչև 300 միլիոն դոլար, և նա դրամը փոխադրում է ամենից առաջ Արևմուտքի երկրներում ներդնելու համար։ «Ջեյդ Մանհաթընում» նրա բաժինը զիջում է միայն Ռոկֆելլերի բաժնին։

Նրա չորս տղաները ավարտել են ամերիկյան համալսարանները և զբաղվում են բիզնեսով, իսկ նրա երրորդ, վերջին կինը ամերիկուհի է, ԱՐԱՄԿՈ-ի նախկին քարտուղարուհին։

Ովքե՞ր են նրանք, այդ բիզնեսմենները։ Սաուդացիներ կամ ամերիկացինե՞ր երկար զգեստներով, սաուդյան անձնագրերով։ Ո՞ւմ շահերն են նրանք պաշտպանում և ներկայացնում։ Սաուդացիների շահե՞րը ԱՄՆ-ում, թե ամերիկացիների շահերը Սաուդյան Արաբիայում և այլ երկրներում։

Խաշոգջու կոլեգան, սաուդացի միլիոնատեր Դեյթ Փարավոնը, Ֆեյսալ թագավորի խորհրդականի տղան, Դետրոյտի խոշոր բանկերից մեկում, որը տնօրինում էր 1 միլիարդ դոլարի, ձեռք բերեց բաժնետոմսերի հսկիչ ծրար։ Սաուդացին այն դարձրեց միջազգային ֆինանսական հիմնարկություն և բաժանմունք բացեց Մերձավոր արևելքում, որպեսզի արաբական կապիտալները կենտրոնացնի այնտեղ և դրանք ուղարկի Միացյալ Նահանգներ։ Այդպես են սերտաճում ամերիկյան և արաբական կապիտալները։

Դառնալով Արևմուտքի ֆինանսական աշխարհի կշռելի մասը՝ դրամական նոր տուզերը բնավ շահագրգռված չէին նրա կայունության խախտումով։ Նավթ արտահանողների համար ֆինանսական և վալյուտային պրոբլեմները այնքան բարդ էին թվում, որ նրանք ստիպված էին համագործակցել միջազգային վալյուտային ֆոնդի և խոշոր ֆինանսական բազմազգ տրեստների հետ։ Տեղական էկոնոմիկայի կողմից չսպառվող ամբողջ կապիտալը գնում է միջազգային ֆինանսական ցանց, բազմազգ կորպորացիաների տնօրինության տակ, որոնք հսկողություն են սահմանում նրանց շարժման միջոցների վրա և շրջանառության մեջ են դնում տնտեսապես զարգացած արևմտյան երկրներում կամ զարգացող երկրներին վարկեր են տալիս։ Այդ բազմազգ ֆինանսական հիմնարկներից ոմանք ունեն արաբական ցուցանակներ, բայց գործում են Արևմուտքի վալյուտաֆինանսական համակարգի շրջանակներում։

Այս ձևով օգտագործելով իրենց վալյուտային կուտակումները՝ նավթահանույթյան երկրները փաստորեն Արևմուտքի կառավարություններին տրամադրում են երկարաժամկետ վարկեր։ Գնելով արևմտյան բանկերի կամ կորպորացիաների արժեթղթերը՝ դրանով իսկ նրանց միջոցներ են տալիս խոշոր ինվեստիցիաների համար, իրենք մնալով կիսառենտատյով։

Արևմուտքի ֆինանսական կենտրոնները ստեղծվել են զարգացած ազգային վալյուտաֆինանսական հիմնարկների հիման վրա, և նրանցում օրգանապես միավորված են և՛ ճյուղավորված բանկային ինֆրակառուցվածքն իր փորձով, կադրերով ու տեխնիկական զինվածությամբ, և՛ խոշոր ֆոնդային բորսաներն ու ֆինանսական այլ ինստիտուտներ, և՛ միջազգային դեր խաղացող վալյուտաներն ազատ կոնվերսիայի ենթարկելու առկայությունը, և՛ թեկուզ համեմատաբար քաղաքական կայունությունը։ Պարսից ծոցի գոտում արագ թափով կազմավորվում են նոր, թեպետև երկրորդական, ֆինանսական կենտրոններ, ձևավորվում են շուկայի հիմնական տարրերը՝ բանկերը, ինվեստիցիոն (երկարատև ներդրումների) ընկերությունները, արժեթղթերի շուկաները, ամրապնդվում են որոշ ազգային վալյուտաներ։ Սահմանափակ չափով արաբական ֆինանսական կենտրոնները կարող են խաղալ ինքնուրույն, թեև ոչ որոշակի դեր։ Համաշխարհային կապիտալիստական ֆինանսների և վարկի բնագավառում Արևմուտքի գերիշխող դերը կապիտալիզմի հին ու նոր կենտրոնների միջև առաջացնում է փոխադարձ կախվածություն։

5

ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՆՈՐ ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

«Պուատիե ամերիկյան ձևով»

«Նոր Պուատիեի համար մեզ հարկավոր է նոր Կարլոս Մարտել»,— կոչ արեց բուրժուական մամուլը դեռևս 1974 թվականի սկզբին։ Հիշեցնենք, որ մեր թվականության VIII դարում ֆրանկյան ասպետները Մարտելի գլխավորությամբ Պուատիեի մոտ կանգնեցրին դեպի Եվրոպա արաբների առաջխաղացումը։ Ակնարկը հընչեց ոչ միայն որպես այլաբանություն։ Ո՛չ Վաշինգտոնում, ո՛չ արևմտաեվրոպական մայրաքաղաքներում չէր բացառվում մի խումբ զարգացող երկրների հետ հաշիվները մաքրելու հնարավորությունը, որոնք համարձակվել էին միջազգային ասպարեզում ինքնուրույն քաղաքականություն անցկացնել։

1974 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած ամերիկյան սենատի հատուկ ենթակոմիտեի գաղտնի նիստում էներգետիկայի գծով ֆեդերալ վարչության այն ժամանակվա դիրեկտոր Ջոն Սոխիլը հաստատեց, որ նավթ արտադրող երկրների քաղաքականությունը սպառնում է «ԱՄՆ-ի ազգային գոյությանը»։ «Հասնելով այդպիսի կետի,— իսկ մենք արդեն վաղուց անցել ենք այդ կետը,— մենք պետք է օգտվենք մեր տրամադրության տակ եղած գործողության բոլոր տարբերակներից, որպեսզի պաշտպանենք ազգային շահերը»,— ասաց նա։ Հիշեցնենք, որ ենթակոմիտեի գլուխ էր կանգնած «ճուռակ» Ջեկսոնը, և Սոխիլի կոչը ընդունելություն գտավ։ Որոշ ժամանակ նրա զեկուցումը լայն հասարակայնության համար մնաց որպես գաղտնիք։

1974 թվականի սեպտեմբերի վերջին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆորդը և պետական քարտուղար Քիսինջերը զգուշացրին նավթ արտահանող երկրներին, թեև քողարկված ձևով, որ նրանց գործողությունները կարող են հանգեցնել պատերազմի։ Դիմելով Դետրոյտի էներգետիկայի գծով համաշխարհային կոնֆերանսի մասնակիցներին, ԱՄՆ-ի պրեզիդենտը հայտարարեց.

«Պատմության ընթացքում ազգերը պատերազմներ են սկսել այնպիսի բնական բարիքի համար, ինչպիսին ջուրը կամ սնունդն է»։ «Դժվար է քննարկել էներգետիկ պրոբլեմը, առանց դիմելու ահեղ դատաստանի օրվա լեզվին,— շարունակեց նա։— Վտանգն ակներև է։ Այն մեծ է»։

Ամերիկյան մամուլը, փորձելով հոգեբանական ճնշում գործադրել նավթ արտադրողների վրա, բավականաչափ պարզ էր արտահայտվում։ «Նյուսուիկ» ամսագիրը սկսեց խոսել «ռազմական ինտերվենցիայի» մասին. «Արդյունավետ լինելու համար այն հարկավոր է ուղղել խոշոր նավթարտադրող Սաուդյան Արաբիայի դեմ» (ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակցի։— Ա. Վ.)։ Այդպիսի քայլը պետք է իրականացներ ԱՄՆ-ի 82-րդ ավիադիվիզիան, որ հատուկ նախապատրաստվել էր այդ տիպի գործողությունների համար, ինչպես նաև, հնարավոր է, ԱՄՆ-ի և Իսրայելի դաշնակիցների մի քանի ստորաբաժանումներ։

«Պուատիե ամերիկյան ձևով» այդպիսի տարբերակից որոշ մարդկանց շունչը կտրվեց։ Սակայն, ամսագիրն ինքը հավաստում էր, որ ինտերվենցիայի հետևանքները «աղետալի կլինեն»։ Նավթ արտադրող երկրներում հարմար գտան սպառնալիքին պատասխանել. «Մենք բավարար կրակային հզորություն չունենք, որպեսզի կռվենք նրանց դեմ, ում հրթիռները հասել են Լուսին,— հայտարարեց Քուվեյթի այն ժամանակվա ֆինանսների մինիստր Ատիկին։— Բայց մենք չենք հանձնվի։ Նրանք ստիպված կլինեն մեզ ուժով վերցնել, սակայն մենք այդ դեպքում ևս չենք հանձնվի»։ Սաուդյան Արաբիայի նավթի մինիստրը համոզված ասաց, որ նավթի երկրների դեմ ռազմական միջոցները անհնարին են. «Ռազմական գործողությունը կնշանակի արտադրության լուրջ անկում։ Դա հնարավոր կդարձնի համաշխարհային անկումը... Ոչ ոք չի կարող մտքովն իսկ անցկացնել այդպիսի հնարավորության մասին, եթե նրա խելքը գլխին է»։

Դատապարտելով նավթային աշխարհի դեմ ուղղված ռազ-

մական գործողությունների կոչերը, անցյալում պետական քարտուղարի տեղակալ, իսկ այժմ բանկիր Ջ. Բոլլը գրում էր, որ «սպառնալիքների ժամանակներն անցել են»: «Ներանցից ոչ մեկը, ով հասկանում է ժամանակակից ստրատեգիայի ռեալությունը, չի կարող լրջորեն ռազմական ավանտյուրա նախատեսել նավթ արտադրող շրջանները զավթելու համար,— ընդգծեց նա:— Դա հնացած երևակայություն է... Ռուսաստանի հայտնվելը որպես միջերկրածովյան իշխանություն՝ այդ հարցը օրակարգից հանում է... Այնպես որ եկեք դաժան փաստերի աչքերին ուղիղ նայենք. քանի որ Վաշինգտոնի ոչ մի կառավարություն չի պատրաստվում Միջին արևելքի նավթ արտադրող շրջանները դարձնել միջուկային Արմագեդոն, մենք պետք է դադարենք մոթիվրոթալ նման միջոցների մասին: Մեծ ազգերը երբեք չպետք է ակնարկեն այն սպառնալիքների մասին, որ երբեք մտադիր չեն իրականացնելու»:

Անցավ մի քանի շաբաթ, և «նյարդերի պատերազմը» լռեց:

Սակայն 1975 թվականի հունվարին «Քոմենտըրի» ամսագիրը, որ հրատարակում էր «ամերիկյան հրեական կոմիտեն», հրապարակեց Հոպկինսի համալսարանի միջազգային հարաբերությունների պրոֆեսոր Տակերի հոդվածը: Հեղինակը կրկին մանրամասն քննարկում էր Քուվեյթից մինչև Կատար, որտեղ արդյունահանվում է ՕՊԵԿ-ի անդամ երկրների նավթի 40 տոկոսը, Պարսից ծոցի արաբական ափը օկուպացնելու հնարավորությունը:

Մի քանի օր անց ԱՄՆ-ի պետական քարտուղար Քիսինջերը «Բիզնես ուիկ» հանդեսին տված հարցազրույցի ժամանակ անդրադարձավ այն հանգամանքների քննարկմանը, ըստ որի ԱՄՆ-ը կարող էր նավթի համար ռազմական գործողություններ սկսել Մերձավոր և Միջին արևելքում: Թեև նա ընդգծեց, որ ուժի կարելի է դիմել «ամենածայրահեղ հանգամանքներում», այնուամենայնիվ չբացառեց նրա իրագործման հնարավորությունը, եթե արդյունաբերական կապիտալիստական երկրներին սպառնար «իսկական խեղդամահություն»: Ամերիկյան կառավարության պատասխանատու քարտուղարը առաջին անգամ էր այդպիսի տոնով խոսում ռազմական գործողությունների հնարավորության մասին: Պրեզիդենտ Ֆորդը պաշտպանեց իր պետական քարտուղարին, իսկ պաշտպանության մինիստր Շլեսինջերը

հաստատեց, որ ամերիկյան զորքերի ափհանումը Պարսից ծոցի շրջանում «գործնականում իրագործելի է»:

Էներգետիկ ճգնաժամի և չկարգավորված արաբա-իսրայելական կոնֆլիկտի զուգակցությունն ստեղծել էր շատ վտանգավոր իրադրություն: Ֆրանսիական «Մոնդ» թերթը պատմում էր արաբական երկրների դեմ գործողությունների ևս մեկ տարբերակի մասին. քննկվում է արաբա-իսրայելական նոր պատերազմ. Թել Ավիվը սպառնում է ռմբակոծել նավթահանքերը. նրանց «պաշտպանելու» համար ԱՄՆ-ը օկուպացնում է Պարսից ծոցի արաբական ափը:

Սակայն, ինչպես ասում են, «հարթ էր թղթի վրա, բայց մոռացել էին խանդակների մասին»: «Նավթային խաչակրաց արշավանքին» մասնակցելուց սահմանազատվեցին ԱՄՆ-ի գրեթե բոլոր դաշնակիցները, արշավանքի կոչերը դատապարտեցին նաև ամերիկյան հեղինակավոր քաղաքական գործիչները: Պարզ դարձավ, որ արաբները ամերիկյան ինտերվենցիային զինված դիմադրություն ցույց կտային, որպես առաջին պատասխան՝ պայթեցնելով նավթահանքերը, և ուժի գործադրումը ողբերգական հետևանքներ կունենար: Դրությունը շիկացավ, և Վաշինգտոնում մոռացան նահանջի ազդանշան տալ: Քիսինջերը հունվարի վերջին անհրաժեշտ համարեց «պարզաբանել» իր կարծիքը: Նրա խոսքերով «ռազմական գործողությունները բոլորովին էլ հարմար չեն նավթի գները որոշելու հարցում», և նա ՕՊԵԿ-ի անդամներին երկխոսության կոչեց: Սպիտակ տան ներկայացուցիչը պաշտոնապես հերքեց այն պնդումը, թե ԱՄՆ-ը Միջին արևելքում գործողություններ սկսելու համար պատրաստում է երեք դիվիզիա: Նա հենվում էր պաշտպանության մինիստր Շլեսինջերի խոսքերի վրա, որը այդ լուրերն անվանեց «ապուշային»:

Պահակ փոխելը

Մինչև 70-ական թվականները Պարսից ծոցում Արևմուտքի շահերի գլխավոր պահապանը Մեծ Բրիտանիան էր: Ստիպված լինելով 1961 թվականին անկախություն տալ Քուվեյթին, իսկ 1967 թվականին՝ Հարավային Եմենին, նա իր գաղութատիրական դիրքերը պահպանեց Կատարից մինչև Օմանը ներառյալ: Համաշխարհային իմպերիալիստական սիստեմում Անգլիայի տե-

սակարար կշիռը շատ բաներում որոշվում էր Պարսից ծոցի գոտու նավթային հարստությունների շահագործմանը մասնակցելով, հեղուկ վառելիքի մատակարարումներին և լոնդոնյան բանկերում տեղական իշխանների ներդրումներին մասնակցելու հնարավորությամբ։ Սակայն Դաունինգ սթրիթում հասկացան, որ ժամանակը աշխատում է հակառակ Անգլիայի, և չափազանց երկար մնալ իշխանապետությունների՝ կնշանակեր իշխանությունը տալ ձախ կառավարություններին, ինչպես դա տեղի ունեցավ Ադենում։ Լոնդոնը որոշեց հեռանալ «իր հոժար կամքով», և 1971 թվականին անկախ դարձան Բահրեյնը, Կատարը և Արաբական Միացյալ Էմիրությունները (որի կազմում էին Աբու Դաբին, Դուբայան, Շարջին, Աջմանան, էլ-Ֆուջեյրան, Ումմ էլ Քայվայնան և մի փոքր ուշ Ռաս-էլ-Խայման)։ Որոշ ժամանակ անց Արաբական երկրների լիգայում և ՄԱԿ-ում ընդունվեց նաև Օմանի սուլթանությունը։

Անգլիային, իհարկե, ազդեցության լծակները մնացին նախկին պրոտեկտորատներում։ Նրա մի քանի հարյուր սպաներ և զինվորական այլ անձնակազմեր ծառայում էին իշխանապետությունների բանակներում, իսկ Օմանի զինված ուժերը գտնվում էին ուղղակի բրիտանական սպաների հրամանատարության ներքո։ Անգլիացիները մնացին անվտանգության ծառայությունների խորհրդատուներ մինիստրություններում, ֆինանսական հիմնարկություններում։ Սակայն Ծոցի գոտում մի շարք նոր ինքնուրույն արաբական պետությունների հայտնվելը նշանակում էր իրադրության էական փոփոխություն։ Գաղութային դարաշրջանը բառի հին իմաստով Պարսից ծոցի գոտում վերջացավ։

Սակայն հատկապես այդ հանգամանքը առաջ բերեց Վաշինգտոնի աճող անհանգստությունը, ինչպես նաև ձգտումը՝ ուժեղացնել իր դիրքերը ռեգիոնում պարտնյորի հաշվին։ «Իդեալական կլիներ անվտանգության այդ սիստեմը, որի ժամանակ Անգլիան կշարունակեր խաղալ գլխավոր ոստիկանի դեր, իսկ ԱՄՆ-ը կապահովեր համեմատաբար աննշան զինված ուժերի ռեզերվ Հնդկական օվկիանոսում»,— գրում էր ամերիկացի գիտնական և դիվանագետ Ռ. Սալլիվանը։ Այնուհետև նա բացահայտում էր գործի էությունը. «Իսկ եթե հնարավոր չլինի հենվել անգլո-ամերիկյան այդպիսի համագործակցության վրա, ապա արևմտյան և ամերիկյան կենսականորեն կարևոր շահերը կպահանջեն, որ ԱՄՆ-ը ինքը լցնի վակուումը»։ Հիշեցնենք, որ

1957 թվականին անգլիական ազդեցության թուլացումը Արաբական արևելքում դրդեց Վաշինգտոնին հռչակել «Դալես-Էյզենհաուերի դոկտրինան», որը ԱՄՆ-ի պրեզիդենտին լիազորում էր «անհրաժեշտության դեպքում» ամերիկյան զորքեր ուղարկել այնտեղ։

70-ական թվականների սկզբում ԱՄՆ-ը եկավ այն եզրակացության, որ «վակուումը լցնելու» պահը եկել է։ Շուրջ մեկ քառորդ դար Պարսից ծոցում էր գտնվում լողացող բազաներից և երկու էսկադրոնային ականակրից բաղկացած ամերիկյան ոչ մեծ նավատորմիղը։ Զգտելով նրանց համար հենակետ և ափային կառուցումներ ապահովել, ԱՄՆ-ը Բահրեյնի կառավարության հետ համաձայնագիր կնքեց ազատված բազաները (ընդամենը ուղիղ երկու ամիս անց անգլիացիների գնալուց հետո) օգտագործելու մասին։

Մերձավոր արևելքի և Հարավային Ասիայի գծով պետական քարտուղարի այն ժամանակվա օգնական Ջոզեֆ Սիսկոն Բահրեյնի հարցի քննարկման ժամանակ կոնգրեսում պնդում էր, թե իբր ամերիկյան զինված ուժերի բազավորումը Ծոցի գոտում կունենա «հոգեբանական և ռազմական նշանակություն» և «կծառայի որպես հանգստության աղբյուր»։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի աշխատակիցներից մեկը «Նյու Յորք թայմս» թերթին հայտարարել է, թե ամերիկյան նավատորմը «ստիպված է իր վրա վերցնել ներքին կարգուկանոնը պահպանելու որոշ ֆունկցիաներ, որոնք մինչ այդ ընկած էին անգլիացիների վրա»։

ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի կուտակումը Պարսից ծոցում և Հնդկական օվկիանոսում տեղի էր ունենում նրանց գլոբալ ստրատեգիայի շրջանակներում, որտեղ նավատորմի զարգացմանը առաջնակարգ նշանակություն էր տրվում։ «Ով տիրում է Նեպտունի եռաժանիին, նա տիրում է նաև աշխարհի թագին», այսպես էին բանաձևում ամերիկյան ստրատեգներն իրենց վերաբերմունքը ռազմածովային նավատորմի դերի հանդեպ։ 1971—1972 թվականներին ԱՄՆ-ի ռազմածովային ուժերը եռապատերազմյան ժամանակաշրջանում առաջին անգամ զինված ուժերի բոլոր տեսակների մեջ բյուջետային հատկացումների գծով դուրս եկան առաջին տեղը։

Հնդկական օվկիանոս ամերիկյան ռազմական թափանցումը ընդլայնելու գործում կարևոր դեր սկսեց խաղալ Ջագոս արշի-

պելագում գտնվող Դիեգո Գարսիա կղզին, որը գրեթե ընկած է հասարակածում: Կղզին համարվում էր Հնդկական օվկիանոսում անգլիական տիրապետության մի մասը, և անգլիացիները Դիեգո Գարսիայում ունեին ռազմական կառույցներ: Նոր բազան սկսեցին համատեղ օգտագործել ԱՄՆ-ը և Անգլիան: Թեև սկզբում օվկիանոսի կենտրոնում ընկած էկզոտիկ ատոլը (մարջանի մանեակաձև կղզի) հայտարարված էր միայն «կոմունիկացիոն կենտրոն», շուտով այն վերածեցին առաջնակարգ ռազմածովային և ռազմաօդային բազաների՝ վառելիքի պահեստներով, ցամաքային ստորաբաժանումների համար զորանոցներով, վերանորոգման արհեստանոցներով: Հիշեցնենք, որ Բահրեյնից և Մասիրից բացի, ԱՄՆ-ը և Անգլիան օգտագործում էին Հարավային Աֆրիկայում և Ավստրալիայում, հետագայում նաև մյուս երկրներում գտնվող բազաները:

Կայսերական ամբիցիայի, էներգետիկ մոնոպոլիաների շահադիտական հետաքրքրությունների, Վաշինգտոնի կողմից Պարսից ծոցին ցույց տրվող առաջնակարգ ստրատեգիական նշանակության զուգակցումը, այս ամենը դրդում էին ԱՄՆ-ին ռազմական ներխուժում կատարել այդ ռեգիոնը: Սակայն 1975—1978 թվականների իրադրության բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ ԱՄՆ-ը այն ժամանակ խուսափում էր ռազմական ինտերվենցիայից կամ ռազմական խոշոր ցույցերից Ծոցի գոտում: Ինչո՞վ էր դա պայմանավորված:

Ըստ երևույթին, խոսքը պատճառների մի ամբողջ կոմպլեքսի մասին է, ինչպես տեղական, այնպես էլ գլոբալ, ինչպես ռեգիոնալ, այնպես էլ ներքին ամերիկյան պլանով: «Վիետնամական սինդրոմը», այսինքն՝ ամերիկյան հասարակական կարծիքի մշտական նողկանքը ինտերվենցիանների հանդեպ պատմության մեջ առաջին անգամ Միացյալ Նահանգների կողմից պատերազմը տանուլ տալուց հետո ըստ երևույթին արժե դնել առաջին տեղում: Չափազանց թարմ էր ազգային խայտառակության և անարդար գործի համար տասնյակ հազարավոր երիտասարդ ամերիկացիների անխմաստ զոհվելու տպավորությունը, որ յուրաքանչյուրի տունն էր բերվել հեռուստաէկրանի միջոցով, որպեսզի զավթողական քաղաքականությունը ժողովրդականություն նվաճեր ԱՄՆ-ում այն տարիներին: «Վիետնամից հետո մենք մեզ պահում ենք արջի նման, որը երբևէ մեղրի համար մտել է փեթակը, մեղր չի գտել, բայց ամբողջությամբ խայթվել

է մեղուներից,— այն ժամանակ վաշինգտոնյան «իշխանության միջանցքներում» թագավորող տրամադրությունը այնպես էր բնութագրել սենատոր Հարտը:— Այժմ այդ արջը նոր փեթակներին շատ զգուշությամբ է նայում: Վիետնամի դասերից մեկն այն է, որ մենք պետք է ավելի զգույշ լինենք»:

«Վիետնամական սինդրոմի» կամ, այլ կերպ, «հնդկաչինյան խոմարի» վրա շերտավորվեց ուոթերգեյթյան գործը՝ ամերիկյան բուրժուական դեմոկրատիայի ճգնաժամի, փտածության և ԱՄՆ-ի քաղաքական ինստիտուտների ու քաղաքական իշխանության սիստեմների կաշառակերության վկայությունը: Հետևեց ինքնահանգստացման, ինքնախարազանման ժամանակաշրջանը, նպատակ ունենալով ապացուցել, իբր թե ամերիկյան վարչակազմը և քաղաքական սիստեմը կեղտոտ պատմությունից դուրս եկան «մաքրված»: Սակայն այն ժամանակ ստեղծված իրավիճակը էականորեն սահմանափակում էր հեռավոր ռեգիոնների գործին ռազմական ակտիվ միջամտության հնարավորությունը, թեկուզև այն պատճառով, որ թուլացել էր պրեզիդենտի իշխանությունը, որի միջոցով իրականացվում է արտաքին քաղաքականությունը:

Ճիշտ է, այն տարիներին ևս ամերիկյան կառավարող շրջաններում պայքար էր գնում երկու ուղղությունների միջև Պարսից ծոցի գոտու ստրատեգիայի հարցում. առաջինը ներկայացրին հիմնականում ուժի մեթոդի, այսինքն՝ ռազմական ճնշման կամ նույնիսկ այդ ռեգիոնի երկրները զավթելու կողմնակիցները, երկրորդը՝ նրանք, ովքեր շեշտը դնում էին «պարտնյորության», «փոխադարձ կախվածության» վրա, տեղական պահպանողական վարչակարգերը Վաշինգտոնի հետ քաղաքական, տնտեսական և ռազմական պլանով ամուր կապված կայուն «կրտսեր պարտնյորի» վերածելու վրա:

70-ական թվականների կեսերին ԱՄՆ-ի քաղաքական գիտության մեջ Պարսից ծոցում Արևմուտքի գծի վերաբերմամբ ժամանակավոր տոն էին տալիս «փոխադարձ կախվածության» և «պարտնյորության» կողմնակիցները, նրանց էլ լսում էր վարչակազմը: «Պարտնյորության» վերաբերյալ թեզիսը Նիքսոնի դոկտրինայի հիմնական տարրերից մեկն էր («գուամյան դոկտրինայի»), որն ԱՄՆ-ի կայսերական շահերի պաշտպանության խնդիրը դնում էր տեղական ուժեղ դաշնակիցների վրա: Պարսից ծոցի գոտուց Անգլիայի հեռանալուց հետո իմպերիալիզմի «կապալառուի» դերը իր վրա վերցրեց շահական Իրանը և այն հաս-

տատեց Օմանում ռազմական ինտերվենցիայով և Օմանի ազատագրության ժողովրդական ճակատի կողմից գլխավորող (որն այն ժամանակ հսկում էր Օմանի Դոֆար նահանգի մեծ մասը) ազգային-ազատագրական զինված շարժման ճնշումով: Մի շարք տարիների ընթացքում Իրանը բազմաթիվ անգամ մեծացրել է իր ռազմական բյուջեն:

Իրանը Պարսից ծոցի գոտում վերածվեց գլխավոր ռազմական ուժի, «ենթաիմպերիալիստական» պետության:

Պարսից ծոցի մյուս կողմում առավել սերտ էին դառնում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական կապերը Սաուդյան Արաբիայի հետ: Վերջինս ներգրավվեց սպառազինության մրցավազքի մեջ, 70-ական թվականների կեսերին, դառնալով Իրանից հետո ԱՄՆ-ի երկրորդ պատվիրատուն զենքի գնման գործում:

Թվում էր, թե ԱՄՆ-ի դիրքերը ամրապնդվում են նաև Արաբական արևելքի մի քանի այլ մասերում: Սադաթը Եգիպտոսում անարյուն հակահեղափոխություն կատարեց, որը նախադրյալներ ստեղծեց քեմպդևիդյան գործարքի՝ արաբական պետությունների հակաիմպերիալիստական, հակասիոնիստական ճակատից Եգիպտոսի դուրս գալու և ԱՄՆ—Իսրայել—Եգիպտոս եռյակ դաշինքի համար: Իսրայելը և սադաթյան Եգիպտոսը Մերձավոր և Միջին արևելքի արևմտյան մասում, շահական Իրանը՝ հյուսիսարևելյանում, որը ՍԵՆՏՕ-ի միջոցով կապված էր Պակիստանի և Թուրքիայի հետ, ԱՄՆ-ին բարեկամ միապետական սաուդյան վարչակարգը Արաբիայում՝ այսպիսի իրադրությունը առաջին հայացքից «աշխատում էր» Վաշինգտոնի համար և բացահայտ ուժի միջոցների դիմելու անհրաժեշտություն չէր զգացվում:

Վերջապես, վերջինն ըստ տեղի, բայց ոչ ըստ նշանակության, նավթի միջազգային շուկայի ժամանակավոր կայունացումը, Արևմուտքի երկրներում էկոնոմիկայի, թեպետև թույլ, վերելքը: Հենց դա էլ որոշակիորեն վերացնում էր Պարսից ծոցի գոտում «արտակարգ միջոցների» դիմելու պահանջի սրությունը:

Ամերիկյան քաղաքականության մեջ կորուկ բեկում նկատվեց Իրանի հետ կապված իրադարձությունների կապակցությամբ: Սակայն իրանական ճգնաժամը միայն պատրվակ էր, լրացուցիչ, թեև հզոր, հարված Պարսից ծոցի գոտում ԱՄՆ-ի կիրառած մեթոդները վերանայելու ուղղությամբ: Դրա խորքային հիմնական պատճառներն ընկած են Վաշինգտոնի գլոբալ արտաքին քաղա-

քական փիլիսոփայության էվոլյուցիայի, իշխանության գագաթնակետում գտնվող անսանձների ֆրակցիայի հաղթանակի, «սառը պատերազմի» ժամանակներին վերադառնալու փորձերի մեջ:

Փոփոխությունների շարժառիթները պարզաբանելու համար արժե հետևել, թեկուզև խիստ սխեմատիկորեն, ամերիկյան հետպատերազմյան պատմության որոշ փուլերին:

Ինտերվենցիա կատարելու կուրսի շարժառիթները

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում ԱՄՆ-ը կապիտալիստական աշխարհում առաջատար դիրք գրավեց: Այն ժամանակ Վաշինգտոնը անվերապահ համոզված էր, որ XX դարը պետք է «Ամերիկայի դար» լինի, բացեիբաց հայտարարում էր համաշխարհային տիրապետության հավակնության մասին: «Միացյալ Նահանգներից ավելի ուժեղ երկիր չկա. այդպիսի ուժ ունենալով, մենք պետք է մեզ վրա վերցնենք աշխարհի ղեկավարությունը»,— այսպիսին էր Տրումենի հայտարարությունը և աշխարհին տիրապետելու ծրագիրը: ԱՄՆ-ի տնտեսական գերակշռությունը այնքան ակներև էր, որ սոցիալիստական երկրների սահմաններից դուրս ոչ ոք չփորձեց Վաշինգտոնի քաղաքական և ռազմական նկրտումների դեմ դուրս գալ: Միացյալ Նահանգների ռազմական հզորությունը, միջուկային զենքի ժամանակավոր մենաշնորհի զուգակցությամբ, թվում է, պատրաստ էր կապիտալիզմի դիրքերը վերականգնել համարյա ամբողջ երկրագնդում, Վաշինգտոնի հակառակորդների համեմատական թուլությունը կապիտալիստական աշխարհում ծնեց ուժի նկատմամբ հափշտակվածություն և կուրություն:

Ամերիկյան ստրատեգներին թվում էր, թե Սովետական Միությունը պատերազմի քայքայումից և կորուստներից հետո շուտ չի վերականգնվի, իսկ պատերազմի ժամանակ ջախջախված հակառակորդները և պատերազմից թուլացած դաշնակիցները Եվրոպայում ու Ասիայում ստիպված կլինեն ենթարկվել ԱՄՆ-ի թելադրանքին: Հայտնի հրապարակախոս Ու. Լիպմանը գրում է. «Այդ ժամանակ Միացյալ Նահանգները թվում էին ամենահզորը: Նրանք տիրապետում էին միջուկային մենաշնորհին և հավասարը չունեցող հարստության ու տնտեսական հզորության: Ամերիկյան հզորությունը և ամերիկյան հնարավորությունները այդ շրջանում այնքան մեծ էին, որ բառացիորեն հարբեցրել էին...»: Հատկապես այդ ժամանակ ծագեց, շարու-

նակում է Լիպմանը, «վիթխարի գաղափարը» այն մասին, որ «ամբողջ աշխարհը իրենից ներկայացնում է ամերիկյան շահերի կենսական կարևոր ոլորտը, որը պետք է պաշտպանել զենքի միջոցով»:

Նույնիսկ այն տարիներին նման հավակնությունները հիմք չունեին, սակայն ԱՄՆ-ի կառավարող շրջանները գործում էին այնպես, իբր ուժերի նոր դասավորությունը նրանց համար ապահովում էր անվիճելի համաշխարհային հեգեմոնիա:

Ճշմարիտ է, արդեն 50-ական թվականներին պարզ դարձավ, որ աշխարհում ուժերի հարաբերակցությունը փոխվում է ոչ հօգուտ ԱՄՆ-ի, և ոչ ռազմաքաղաքական կամ տնտեսական ճնշումը, ոչ ղինված միջամտությունը ուրիշ երկրների գործերին չեն կարող կանգնեցնել այդ առաջընթացը:

ՍՍՀՄ-ի տնտեսական դիրքերի ամրապնդումը, գիտատեխնիկական նվաճումները, հրթիռամիջուկային զենքի ստեղծումը, սոցիալիստական մյուս երկրների զարգացումը, իմպերիալիզմի գաղութային սիստեմի սկսված խորտակումը, տնտեսական ուժերի հարաբերակցության փոփոխությունը հենց կապիտալիստական աշխարհի ներսում՝ այս բոլոր պրոցեսները սասանեցին ԱՄՆ-ի գլոբալ դիրքերը:

60-ական թվականների սահմանագծում ամերիկյան գլոբալ դիրքերը ամրապնդելու ծավալուն ծրագրով հանդես եկավ պրեզիդենտ Ջ. Քենեդին: Պրեզիդենտի պաշտոնն ընդունելիս 1961 թվականի հունվարին արտասանած իր ճառում նա հայտարարեց, որ ԱՄՆ-ը ամբողջ աշխարհում հանուն ամերիկյան շահերի պաշտպանության «կվճարի ցանկացած գինը, կտանի ամեն մի ծանրություն, կհաղթահարի ամեն մի դժվարություն, կաջակցի ամեն մի կողմնակցի և կդիմակայի ամեն մի հակառակորդի»: Քենեդիի օրոք սկսվեց վիետնամական գործերի մեջ սողոսկելը, որը Ջոնսոնի օրոք ռազմական ինտերվենցիայի լայն բնույթ ընդունեց և վերջացավ պարտությամբ:

70-ական թվականներն իրենց հետ բերեցին ԱՄՆ-ի տնտեսական կացության կտրուկ վատացում: Այդ տասնամյակի առաջին կեսում բռնկվեց տնտեսական երկու ճգնաժամ, այդ թվում 1974—1975 թվականների ճգնաժամը, որը ամենախորն էր հետպատերազմյան պատմության ընթացքում:

ԱՄՆ-ի գլոբալ դիրքերի վրա կարևորագույն ներգործություն թողեց ՍՍՀՄ-ի տնտեսական հզորության և պաշտպանունակության, միջազգային քաղաքական հեղինակության, ամբողջ սոցիալիստական համագործակցության, հետագա ամրապնդումը: Չնայած սպառազինության աճին, Վաշինգտոնին չհաջողվեց իր օգտին փոխել երկու երկրների ռազմական հզորության հարաբերակցությունը: Նա ստիպված էր խոստովանել, որ Սովետական Միությունը հրթիռամիջուկային զենքի բնագավառում հասել է փաստացի հավասարության, որ այդպիսի զենքի գործադրումով պատերազմը ԱՄՆ-ի համար կլինի ինքնասպանություն ու արտաքին քաղաքական կուրսը մշակելիս անհրաժեշտ է ելնել դրանից: 70-ական թվականների միջազգային իրադրության հիմնական տարրը դարձավ լիցքաթափման շրջադարձը, ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների լավացումը: Դա շատ կարևոր առաջխաղացում էր համաշխարհային քաղաքականության մեջ, որը միջազգային համագործակցության լայն հնարավորություններ էր բացում:

Ի տարբերություն Ջ. Քենեդու, որը պնդում էր, թե ԱՄՆ-ը պատրաստ է «վճարել ցանկացած գինը», պաշտպանելու իր գլոբալ շահերը, պրեզիդենտ Նիքսոնը առաջ քաշեց ավելի համեստ պահանջներ. «Ամերիկան աշխարհի կապիտալիստական մասի գործերի վիճակի համար չի կարող և չի նշի պլաններ, մշակի բոլոր ծրագրերը, կատարի բոլոր որոշումները և ամբողջությամբ իր վրա վերցնի պատասխանատվությունը»:

60-ական և 70-ական թվականների սահմանագծում ստեղծվեցին ժամանակակից կապիտալիզմի երեք ինտերնացիոնալ միահյուսված կենտրոններ՝ Միացյալ Նահանգներ, Արևմտյան Եվրոպա, ամենից առաջ «Ընդհանուր շուկան», և Ճապոնիա: Այդ կենտրոններից յուրաքանչյուրը ձգտում է իր համար համաշխարհային կապիտալիստական տնտեսությունում ապահովել առավել ամուր դիրքեր: Կապիտալիստական մյուս գլխավոր երկրներում արտադրության ավելի արագ աճի շնորհիվ նրանց էկոնոմիկայի զարգացման մակարդակները զգալիորեն մոտեցան: ԱՄՆ-ը, որ առաջ բնակչության մեկ շնչին ընկնող ազգային համախառն արտադրանքի արտադրության գծով աշխարհում գրավում էր առաջին տեղը, տեղափոխվեց չորրորդ տեղը: ԵՏՀ-ն (Եվրոպական տնտեսական համագործակցություն) ամբողջությամբ վերցրած ազգային համախառն արտադրանքով հավասարվեց ԱՄՆ-ին:

«Նյու Յորք Թայմս» թերթը ստիպված էր խոստովանել.

«Ամերիկյան հարյուրամյակը այդպես էլ չեղավ... Միացյալ Նահանգները փորձում էին հափշտակել մի այնպիսի պատառ, որը բացահայտորեն նրանց ատամների բանը չէր»:

Հարվարդի համալսարանի ռուսական հետազոտությունների կենտրոնի աշխատակից Ռիչարդ Բառնետը գրում էր. «Պակս— Ամերիկանի դարաշրջանն ավարտվեց: Միացյալ Նահանգները, աշխարհում դեռևս մնալով ամենահզոր երկիրը, արդեն չեն կարող համաշխարհային կառավարողի դեր խաղալ, ինչը նրանց հաջողվում էր, երբ պատերազմից թուլացած Եվրոպան և Ճապոնիան ավելի զիջող էին իրենց նկատմամբ տարբեր ձևերի ամերիկյան ներգործությունից, իսկ Սովետական Միությունը, թեև արդեն հսկա էր, բացահայտորեն դեռևս թույլ էր...»:

Սակայն ԱՄՆ-ի ռազմարդյունաբերական կոմպլեքսը չէր կարգավորում ո՛չ Սովետական Միության հետ ստրատեգիական հավասարությունը, ո՛չ սպառազինությունների մրցավազքի սահմանափակումը, քանի որ այդ բոլորը սպառնալիքի տակ էին դնում ռազմական հատկացումներից ստացված նրա շահույթները: Ամերիկյան կառավարող շատ շրջաններում դժգոհություն էին առաջացնում աշխարհում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները, որոնք ավելի ակտիվացան լիցքաթափման, սոցիալիզմի դիրքերի ամրապնդման, ազգային-ազատագրական շարժման մի շարք հաջողությունների, հակամիլիտարիստական ուժերի ամրապնդման պայմաններում:

Վաշինգտոնում ավելի հաճախ էին խոսում այն մասին, որ ԱՄՆ-ը պահպանում է վիթխարի տնտեսական և ֆինանսական հզորություն, զգալի գերակշռություն գլխավոր մրցակիցների նկատմամբ, տիրապետող դեր համաշխարհային կապիտալիստական տնտեսության գիտատեխնիկական առաջընթացը որոշող մի շարք կարևորագույն ճյուղերում: Այնտեղ զայրույթով էին ընդունում կապիտալիստական աշխարհում միջպետական հարաբերությունների բնույթի փոփոխությունները, երբ անհրաժեշտ էր լինում փոխհամաձայնություն փնտրել ուրիշ երկրների հետ կամ նույնիսկ երբեմն որոշակի զիջումներ անել, փոխանակ բոլորին իր կամքը թելադրելու: ԱՄՆ-ի կառավարող պետական շատ գործիչների զայրացնում էր այն, որ զարգացող երկրների դեմ գնալով դժվարանում է հրետանավակի և ծովային հետևակի կիրառումը:

Այդ բոլորը ամերիկյան ներքին մի շարք գործոնների հետ

միասին առաջ բերեց ամերիկյան կառավարող վերնախավի ագրեսիվ, ռեակցիոն թևի արտասովոր ակտիվացում, որը ամբողջ ճակատով մեկ դաժան քաղաքական և պրոպագանդիստական հարձակման անցավ միջազգային լարվածության լիցքաթափման դեմ, ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դեմ, ԱՄՆ-ի համար անցանկալի կուրս անցկացնող զարգացող երկրների դեմ:

ԱՄՆ-ի կառավարող ընտրախավի տրամադրության վրա մեծ ազդեցություն ունեցավ բնական ռեսուրսների պրոբլեմի սրվածությունը: Միացյալ Նահանգները՝ աշխարհի բնական ռեսուրսներով ամենահարուստ երկրներից մեկը, իր պատմության մեջ առաջին անգամ բախվեց նրա խիստ նկատելի պակասությանը: Լոնդոնի «Էքոնոմիստ» հանդեսը այդ կապակցությամբ նշում էր. «ԱՄՆ-ը, որ առաջ ավելի քան ապահովված էր հումքի շատ տեսակներով, ավելի ու ավելի է կախվածության մեջ ընկնում ամենաանհրաժեշտ մատակարարումներից, հատկապես նավթից, հաճախակի ոչ բարեկամ օտարերկրյա պետություններից»: Թեև Վաշինգտոնում սկսեցին հաճախ քննարկել երկրների աճող «փոխադարձ կախվածությունը» որպես դարաշրջանի դրոշ, Մերձավոր արևելքի նավթից աճող կախվածությունը այնտեղ ընդունեցին որպես անթույլատրելի «վիրավորանք»: Դրա հիման վրա Պարսից ծոցի գոտում սկսեցին ձեռք բերել «հատուկ իրավունքներ»: Իմպերիալիստական պահանջները վերածնվեցին այնպիսի թունդ տեսքով, որ այն լիովին կարելի էր XIX դարի վերջի բրիտանական գաղութատիրության գաղափարախոսների բերանը դնել:

Արհեստականորեն հարմար մթնոլորտ էր ստեղծվում այն կոնցեպցիաների համար, որի համաձայն ԱՄՆ-ի ռազմական և տնտեսական հզորությունն անհրաժեշտ էր ընթացքի մեջ դնել կոպիտ և ուղղագիծ, իր կամքը փաթաթելով մեկի վզին և վախ ներշնչելով մյուսին: Տեղի էր ունենում շրջադարձ լիցքաթափությունից դեպի լարվածություն և սպառազինությունների մրցավազք, համագործակցությունից դեպի առճակատում, Սովետական Միության հետ ստրատեգիական հավասարության ընդունումից դեպի ռազմական գերազանցության հասնելու փորձերը: Զարգացող երկրների հետ ունեցած հարաբերություններում դա նշանակում էր անցում դեմագոգիկ կոչերից դեպի համագործակցու-

թյուն՝ հարկադրանքի և շանտաժի փոխադարձ կախվածության պայմաններում։

ԱՄՆ-ը ճնշող ռազմական գերազանցություն էր պահպանում իր դաշնակից-ախոյանների վրա։ Այդ պատճառով ամերիկյան կառավարող շրջաններում հայտնվեց հեգեմոնի նախկին դերը վերադարձնելու գայթակղությունը, ոչ թե ներքին պրոբլեմները լուծելու ճանապարհով, ոչ թե իր տնտեսական կառուցվածքը կատարելագործելու ճանապարհով, այլ ռազմական ճնշման միջոցով, մասնավորապես այն շրջաններում, որտեղից նավթ էր մատակարարվում։ Իրեն շուլալելով ռազմական պլանի դաշնակիցներին՝ «սովետական ռազմական սպառնալիքի» ճիչերի տակ, Վաշինգտոնը միաժամանակ որոշեց ճապոնիային ու Արևմտյան Եվրոպային նավթով սնող փողրակը զավթելու փորձ անել։

Այդ ուղղությամբ գործնական քայլերը ձեռնարկվել էին դեռ շատ առաջ այն բանից, երբ Իրանում զգացին երկրաշարժ գուշակող առաջին ստորերկրյա հարվածները։

Դեռևս 1977 թվականի սեպտեմբերին հայտնի դարձավ պրեզիդենտ Քարտերի գաղտնի դիրեկտիվը, որը նախատեսում էր ընդլայնել Միացյալ Նահանգների ստրատեգիական խնդիրները, դրա մեջ ներառելով Պարսից ծոցի, հատկապես Իրանի պաշտպանությունը հնարավոր «օտարերկրյա ագրեսիայից»։ Քարտերը այդ հուշագիրը ստորագրեց 1977 թվականի օգոստոսի վերջին, այն բանից հետո, երբ Անվտանգության ազգային խորհուրդը այդ հարցն ուսումնասիրեց վեց ամսվա ընթացքում և Իրանին ու նավթի նրա ընդարձակ պաշարներին ամերիկյան ստրատեգիական պլանավորման մեջ նոր նշանակություն տվեց, որոշվեց Պարսից ծոցի ավազանում ռազմական ներդրումներ անցկացնել.... «սովետական հնարավոր հարձակման» պատրվակով։

Իր հուշագրում պրեզիդենտը նաև հրամայեց ապահովել «մոբիլ ուժերի» պատրաստությունը հարձակման դեպքում Մերձավոր արևելքը և Հարավային Կորեան «պաշտպանելու» համար, թեև բոլորովին վերջերս նա առաջարկում էր մեծ տերությունների զինված ուժերը դուրս բերել Հնդկական օվկիանոսից։

Մոտավորապես նույն այդ ժամանակ որոշվեց ստեղծել «արագ ծավալման կորպուս»՝ Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում, բայց գլխավորապես Պարսից ծոցի գոտում գործելու համար։

1978 թվականի փետրվարի 23-ին պաշտպանության մինիստր Գ. Բրաունը Լոս Անջելեսի միջազգային գործերի խորհրդում հանդես եկավ Մերձավոր արևելքի և Ասիայի համար ԱՄՆ-ի ռազմական «նոր» դոկտրինայի շարադրանքով։ Ելույթում, որը տեղական մամուլը գնահատեց որպես «կառավարության բոլոր ելույթներից ամենադաժանը», Բրաունը շեշտը հատուկ դրեց ամերիկյան «ռազմական շահերի» վրա. ինչպես նա արտահայտվեց «ծայրահեղ փոփոխական» Մերձավոր արևելքի և Պարսից ծոցի շրջանում։ Նա հայտարարեց, որ նրանք դուրս են գալիս արաբա-իսրայելական խնդիրների շրջանակից և անմիջականորեն կապված են նավթի հետ։ «Քանի որ այդ շրջանում են գտնվում աշխարհի նավթի վիթխարի պաշարները, Մերձավոր արևելքը և Պարսից ծոցը,— պնդեց պենտագոնի շեֆը,— չի կարելի բաժանել մեր անվտանգությունից, ՆԱՏՕ-ի և Ասիայի մեր դաշնակիցների անվտանգությունից»։ ԱՄՆ-ը, շարունակեց նա,— «մտադիր է պահպանել նավթի հանույթն ու դրա մատակարարումը սպառող երկրներին» և այդ նպատակով պլանավորում է Մերձավոր արևելքում ու Պարսից ծոցի շրջանում տեղավորել իր զինված ուժերը՝ բաղկացած ավելի քան երեք դիվիզիայից, որոնք «կարողանան արագ կողմնորոշվել այդ շրջանում անկարգություն լինելու դեպքում»։

«Նեյշն» հանդեսը այդ կապակցությամբ գրեց, որ «սպառազինությունների հսկողության» պատրվակով ԱՄՆ-ը «պատրաստվում է Մերձավոր արևելքում կամ Պարսից ծոցում հնարավոր ինտերվենցիայի»։ Մի ուրիշ շաբաթաթերթ՝ «Յունայթեդ Սթեյթս նյուս ընդ Ուորլդ ռիփորթը» հաղորդեց, որ ԱՄՆ-ը արդեն սկսել է «ընտիր հարվածային զինված ուժերի ստեղծումը, որոնք պատրաստ են առաջին իսկ ազդանշանով հարձակվել աշխարհի ցանկացած շրջանի վրա»։ Խոսքը «արագ ծավալման ուժերի» մասին էր։

1978 թվականը, երբ շահը դեռ գահընկեց չէր արվել և դեռ ՍՍՀՄ-ի զինվորական սահմանափակ կոնտինգենտը Աֆղանստան չէր մտել նրան դրսի սպառնալիքից պաշտպանելու համար, կարևոր ուղենիշ դարձավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ նրա ագրեսիվ միտումների խիստ ուժեղացման գործում։ Հատկապես այդ թվականին ՆԱՏՕ-ն սպառազինու-

թյան աճի երկարաժամկետ ծրագիր ընդունեց։ Նույն այդ թվականին ԱՄՆ-ի «կենսական կարևոր շահերի» գոտու մեջ բացահայտորեն մտցվեց Պարսից ծոցը։

Այսպիսով, Վաշինգտոնը արդեն բոլոր պայմանները պատրաստում Պարսից ծոցի գոտում հնարավոր ինտերվենցիայի համար, երբ ծավալվեցին Իրանի ահեղ իրադարձությունները։

6

ԻՐԱՆ. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՑՆՑՈՒՄՆԵՐ

Պրեզիդենտ Քարտերը և Իրանի շահը Թեհրանի Նիավարանի պալատում միասին դիմավորեցին նոր՝ 1978 թվականը։ Մբթնոլորտը անկաշկանդ էր և սրտաբաց։ Քարտերը պարեց շահի կնոջ՝ Ֆարախի, և շահի քրոջ՝ արքայադուստր Աշրաֆի հետ։

«Իրանը,— հայտարարեց պրեզիդենտը իր պաշտոնական բաժակաճառում,— շահի հիանալի ղեկավարման շնորհիվ աշխարհի ամենաանհանգիստ շրջաններից մեկում համարվում է կայունության կղզյակ»։ «Աշխարհում չկա այնպիսի պետական գործիչ, որի նկատմամբ ես ավելի շատ երախտապարտություն և անձնական կապվածություն տածեի,— ասաց Քարտերը։— Դա զգալի չափով ձերդ մեծության ծառայությունն է և այն հարգանքի, հիացմունքի ու սիրո արդյունքը, որ տածում է ժողովուրդը ձեր նկատմամբ»։

Մեկ տարուց մի քիչ անց վախից ճզմված դիկտատորը, շրջապատված համընդհանուր արհամարհանքով և ատելությամբ, կյանքը փրկելով՝ փախավ Իրանից։

Եվ ինչպես պատահեց, որ այն հասարակության մեջ, որը 1978 թվականին ԿՀՎ-ի զեկույցի համաձայն «շատ հեռու էր հեղափոխական իրադրությունից», իսկ նրա քաղաքացիները «ընդունակ չէին լուրջ քաղաքական ելույթներին», ժողովրդական հեղափոխությունը տաշեղի նման ոչնչացրեց շահական վարչակարգը։

Այդ հարցին պատասխանելու համար արժե մի հայացք գցել թեկուզև 50-ական թվականների սկզբի Իրանի պատմու-

թյանը, երբ ԱՄՆ-ը իրանցիների վզին փաթաթեց փլուզվող միապետությունը։ Արդեն այն ժամանակ Իրանը Ռեզա շահի և նրա դեռևս անզոր որդու՝ Մոհամեդ Ռեզա Փահլավու կառավարումից երեք տասնամյակ հետո խոր ճգնաժամ էր ապրում։ Ուժեղ կենտրոնացված ռազմաբյուրոկրատական ապարատի օգնությամբ միապետական իշխանությունը, հակված դեպի «արդիականացումը», փորձում էր «ռեֆորմներ» անցկացնել էկոնոմիկայի, լուսավորության, մշակույթի բնագավառներում։ Սակայն թեպետ խոսքով բուրժուական ոգով վերափոխություններ հռչակեցին, իրականում դրանք զուտ կոսմետիկական ռեֆորմներ էին, որոնք նպատակ ունեին ամրապնդել ֆեոդալակալվածատիրական շրջանների իշխանությունը։ Իրանում զարգանում էր կապիտալիզմը, բայց դա կեղծ կապիտալիզմ էր, կիսագաղութային տիպի ձևափոխված «կապիտալիզմ» տնտեսության, քաղաքականության, իրավունքի, գաղափարախոսության, ապրելակերպի բնագավառում խճճված ավանդական ձևերով։ Եվ ԱԻՆԸ-ի (Անգլո-իրանական նավթային ընկերություն) օգնությամբ, և՛ անիրավահավասար շուկայական կապերի միջոցով իմպերիալիստական տերությունները թալանում էին Իրանը՝ զրկելով նրան նույնիսկ սահմանափակ զարգացման հնարավորությունից։

Ապրելու համար կառավարող դասը պետք է պատրաստ լիներ ինքնակերպարանափոխության, ինչպես դա տեղի ունեցավ անցյալ դարի 60—70-ական թվականներին Ճապոնիայում։ Սակայն այնտեղ դրա համար անհրաժեշտ ներքին ազդակներ չկային։ Ինքնապահպանման միակ եղանակը, որ նա գիտեր, դա բռնությունն էր, օպոզիցիայի ճնշումը, չհիմնավորված քիչ թե շատ համոզիչ դեմագոգիայով, սոսկ երկրի ներսի աջակցությանը՝ արտաքին օգնության պայմաններում։ Ռեզա շահը, որը սկզբունքորեն դեմ չէր ամրապնդելու երկրի անկախությունը, կողմնորոշվեց դեպի նացիստական Գերմանիան, իսկ նրա որդին՝ սկզբում դեպի Անգլիան, այնուհետև՝ ԱՄՆ-ը։

«Այաքս» օպերացիան

1949 թվականի հոկտեմբերին կառավարության նկատմամբ օպոզիցիոն տրամադրությամբ համակված իրանական երկու տասնյակ հասարակական գործիչներ՝ փաստաբաններ, ժուռնալիստներ, հոգևորականության ներկայացուցիչներ, նստեցին շահի պա-

լատի բեստում և հացադուլ հայտարարեցին։ Բեստը անձեռնմխելի ապաստարան է (հիմնականում՝ մզկիթ), որտեղ իշխանության կողմից հետապնդվող անձը չի կարող բռնվել։ Օպոզիցիոներները բողոքում էին կառավարության կողմից պառլամենտի ստորին պալատի՝ մեջլիսի ընտրությունների խարդախության դեմ։ Խումբը ղեկավարում էր հարյուրավոր գյուղերի տեր, նշանավոր և հարուստ ընտանիքի պատկանող դոկտոր Մոհամեդ Մոսադիկը։

Եվրոպական կրթություն ստացած իրավագետը հայտնի դարձավ դեռևս 20-ական թվականներին, բայց երկրում Ռեզա շահի բռնապետական ռեժիմի վերականգնումից հետո հեռացավ քաղաքական ակտիվ գործունեությունից։ «Թեև նա արդեն ծեր էր, երբ վերադարձավ քաղաքական ասպարեզ, սակայն (և դա վառ վկայությունն էր նրա խելքի ու տաղանդի) շուտով իրանական երիտասարդ մտավորականության կուռքը դարձավ,— գրեց Մ. Մաշկին իր «Իրանը պայքարի մեջ» գրքում։— Նրանց ամենից առաջ հիացնում էր այն համառությունը, որով նա մերժում էր փոխզիջում կատարել Ռեզա շահի դիկտատուրային, նրա երկարատև և համառ պայքարը ամեն տեսակ ժառանգական առանձնաշնորհների դեմ, օտարերկրյա քայքայող ազդեցությունից Իրանն ազատելու նրա հաստատ վճռականությունը»։

Բեստում նստած խումբը խիստ հեղհեղուկ կառուցվածք և ծրագիր ունեցող Ազգային ճակատի լիբերալ-դեմոկրատական կազմակերպության միջուկն էր։

Հասնելով ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելուն, Ազգային ճակատը 1950 թվականի փետրվարին մեջլիսի կրկնակի ընտրությունների ժամանակ թեհրանից անցկացրեց իր ութ անդամներին։ Նրանց ժողովրդականությունն արագ աճեց, քանի որ հիմնական խնդիրը մեջլիսում նրանք համարում էին ԱԻՆԸ-ի ազգայնացումը, ինչպես նաև ներքին լիբերալ-դեմոկրատական վերափոխությունները, շահական իշխանության որոշակի սահմանափակումները։

Այդ ժամանակ ԱԻՆԸ դարձավ իմպերիալիզմի անվիճելի խորհրդանիշը և իրանցիների ատելության օբյեկտը։ Նրա կոնցեսիոն տարածքը հավասար էր 259 հազար քառակուսի կիլոմետրի։ Շահագործվում էր աշխարհում ամենաարտադրողական 300-ից ավելի նավթահոր։ Ընկերությանն էին պատկանում տարեկան 25 միլիոն տոննա արտադրողականությամբ Աբադանի նավթավերամշակման գործարանները, շուրջ 2700 կիլոմետր երկարությամբ

խողովակաշարերը, ավելի քան 100 խոշոր տանկերներ։ Ահնը ուներ իր օդանավակայանները, երկաթուղային ճանապարհները, նավահանգիստներ, ծովային և օդային տրանսպորտ, սեփական ոստիկանություն։

1951 թվականի մարտի 7-ին պրեմիեր-մինիստր գեներալ Ռազմարան սպանվեց մզկիթի պարիսպների մոտ։ Նա հակամերիկյան տրամադրություն ուներ։ Մարտի 11-ին պրեմիեր-մինիստրի պաշտոնում նշանակվեց ԱՄՆ-ում Իրանի նախկին դեսպան Հուսեյին Ալան։ Մոտ կանգնած լինելով շահի պալատին՝ նա կողմնորոշվեց դեպի Վաշինգտոնը և Անգլիան։ Սակայն հակաշահական և հակաիմպերիալիստական ելույթների աճող ալիքը կոտրել չհաջողվեց։

Մարտին և ապրիլին մեջլիսը և սենատը միաձայն հավանություն տվեցին անգլո-իրանական նավթային ընկերության ազգայնացման վերաբերյալ օրենքին։ Դա ամբողջ նախկին գաղութատիրական սիստեմին ուղղված մարտահրավեր էր, որը կարող է համեմատվել միայն հինգ տարի անց նասերյան Եգիպտոսի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացման հետ։ Անգլիան իրանական նավթը հայտարարեց «գողացված» և նավեր ուղարկեց Իրանը ռազմածովային շրջափակման ենթարկելու համար։

Ահնը հանկարծակի դադարեցրեց դոտացիա վճարել իրանցի նավթագործներին, որի պատճառով նավթահանքերում գործադուլ սկսվեց։ Հուսեյին Ալայի հրամանով զորքերը սկսեցին կրակել գործադուլավորների վրա, սպանելով և վիրավորելով տասնյակ բանվորների։ Սակայն գործադուլը շարունակվում էր։ Թեհրանում, Իսպահանում և մյուս քաղաքներում տեղի էին ունենում գործադուլներ և զանգվածային ցույցեր։ Ահնը ստիպված էր բանվորներին զիջումներ անել։ «Արևմուտքի հավատարիմ բարեկամը» հրաժարական տվեց։

Ապրիլի 29-ին նոր պրեմիեր-մինիստր հաստատվեց Ազգային ճակատի առաջնորդ յոթանասունամյա Մոհամեդ Մոսադիկը։

Հաղիվ ամերիկյան վարչակազմի գլուխն անցած՝ «էյզենհաուերը, որը, Իդենի վկայությամբ, վախով էր համակված «կոմունիստական Իրանի» նկատմամբ, հավանություն տվեց Մոսադիկին մեկուսացնելու որոշմանը։ Պետական քարտուղար Դալեսը հայտարարեց. ԱՄՆ-ը անհնարին գտավ գործ ունենալ Մոսադիկի հետ։ Հեղաշրջումը պետք է ղեկավարեր 56-ամյա գեներալ Ֆազոլա Զահեդին, որին արտաքին գործերի մինիստրի պաշտոնից հեռացրել էին 1951 թվականի հուլիսին։ Նա հենվում էր շահին կողմնակից մի քանի հարյուր սպաների վրա։ Սակայն դավադրության թելերը բռնել էր ոչ թե նա, այլ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը։

ԿՀՎ-ի մերձավորարևելյան բաժնի պետ Քերմիթ Ռուզվելտը՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտի թոռը, համաձայնեցնելով հեղաշրջման պլանը, 1953 թվականի մարտին գաղտնի մեկնեց Իրան։ Օպերացիան հաստատեցին պետական քարտուղար Ջոն Ֆոստեր Դալեսը, նրա եղբայրը՝ ԿՀՎ-ի դիրեկտոր Ալեն Դալեսը և պետական քարտուղարի տեղակալ, ԿՀՎ-ի նախկին դիրեկտոր գեներալ Ուոլտեր Բեդել Սմիթը։ Էյզենհաուերը, ինչպես հետագայում գրեց Ռուզվելտը, լիովին համաձայն էր նրանց հետ։ Առաջիկա օպերացիան անվանեցին «Այաքս»։

Հուլիսի վերջին Ք. Ռուզվելտը կրկին ժամանեց Իրան կեղծ անձնագրով և թաքնվեց լեռներում գտնվող շքեղ ամառանոցում, կապ պահպանելով շահի պալատի և գեներալ Ֆազոլա Զահեդու հետ։ Դավադրությանը ակտիվորեն մասնակցում էր նաև Զահեդու որդին՝ Վաշինգտոնում Իրանի ապագա դեսպանը։ Այդ օրերին Թեհրանում հայտնվեց բրիգադային գեներալ Նորման Շվարցկոպֆը, որը մի քանի տարի առաջ ղեկավարում էր իրանական ոստիկանության ու ժանդարմերիայի վերակառուցումը և լավ կապերի մեջ էր նրանց հետ։

ԱՄՆ-ի զինվորական միսիան շահի կողմնակից զորամասերին մատակարարում էր անհրաժեշտ ամեն ինչ՝ զենքից սկսած մինչև բեռնատարներ ու զրահամեքենաներ։

Օգոստոսին ԿՀՎ-ն վճռեց, որ գործելու ժամանակն է։

Օգոստոսի 13-ին շահը Քերմիթ Ռուզվելտի և Շվարցկոպֆի խորհրդով գաղտնի հրաման ստորագրեց Մոսադիկին հեռացնելու և կառավարության գլուխ գեներալ Զահեդիին նշանակելու մասին։ Սակայն հեղաշրջման պլանը ընկավ մամուլի ձեռքը և ամբողջ աշխարհը ցնցեց։ Օգոստոսի 15-ի լույս 16-ի գիշերը շահի գվարդիայի մի քանի սպաներ փոխգնդապետ Նասիրի գլխավորությամբ փորձեցին ձերբակալել Մոսադիկին, բայց իրենք բռնվեցին պրեմիերի պահակախմբի կողմից։ Իմանալով այդ մասին, շահը հաջորդ առավոտյան իր պալատից փախավ Կասպիական ծովափ և ոչ մեծ ինքնաթիռով վայրէջք կատարեց Բաղդադում՝ անգլիացիների հովանավորության ներքո։

Թվում էր, թե դավադրությունը ձախողվեց։ Թեհրանում

մոլեգնում էին հակամիապետական ցույցերը։ Սակայն Մոսադիկը ձախերից ավելի շատ էր վախենում, քան շահի կողմնակից սպաներից։ Կառավարությունը բանտարկեց մի քանի հարյուր ցուցարարների, իսկ օգոստոսի 18-ին ազատեց ավելի շուտ բանտարկված դավադիրներին՝ իր կողմնակիցների շարքերում շփոթություն առաջ բերելով։ Մոսադիկի համար, ինչպես գրում էր ֆրանսիական «Մոնդը» 1953 թվականի սեպտեմբերին, «գերադասելի էր ամեն մի վճիռ, բացի ծայրահեղ ձախ տարրերի միջոցով ձեռք բերված հաղթանակից...»։

Գեներալ Զահեդին Ռուզվելտի և Շվարցկոպֆի ազդանշանով օգոստոսի 19-ի առավոտյան Թեհրանի հարավային թաղամասերից դուրս բերեց ապադասակարգային տարրերից կազմված ծախու ամբոխին, որոնք ձախ և դեմոկրատական ուժերի ջարդ կազմակերպեցին։ Շահին հավատարիմ դիվիզիաները ծայրամասերից մոտեցրին մայրաքաղաքին։ Շահին կողմնակից սպաները ձերբակալեցին Մոսադիկին։

1953 թվականի դեկտեմբերին ռազմական տրիբունալը Մոսադիկին դատապարտեց երեք տարվա բանտարկության։ Ազատվելուց հետո և ընդհուպ մինչև իր մահը, 1967 թվականը, նա ապրում էր Թեհրանի մոտ գտնվող մի գյուղում, ոստիկանության հսկողության ներքո։

Նշանավոր հակաիմպերիալիստական ակտը՝ ԱԻՆԸ-ի ազգայնացումը, և՛ Անգլիային ու ԱՄՆ-ին, շահին, իրանական ռեակցիային Մոսադիկի նետած մարտահրավերը, և՛ ռեֆորմի փորձերը, այս բոլորը նրա անունը շրջապատեցին ազգային շահերին անձնուրաց ծառայության լուսապսակով։

1953 թվականի հեղաշրջումից հետո շահական վարչակարգը փաստորեն արգելեց բոլոր կուսակցություններն ու քաղաքական կազմակերպությունները, ճնշեց նույնիսկ 1941 թվականից գոյություն ունեցող բուրժուադեմոկրատական ազատության սաղմերը։ 1957 թվականին որոշ շրջաններում, ընդհուպ նաև մայրաքաղաքում, ռազմական դրությունը վերացվեց։ Սակայն միաժամանակ ամերիկյան և իսրայելական հատուկ ծառայությունների օգնությամբ ստեղծվեց գաղտնի ոստիկանություն՝ անվտանգության և ինֆորմացիայի կազմակերպություն՝ ՍԱՎԱԿ, որը հսկողություն էր սահմանում մամուլի և քաղաքական տրամադրությունների վրա։ 70-ական թվականների կեսերին ՍԱՎԱԿում հաշվվում էին 40—50 հազար մշտական ծառայողներ և մի

քանի հարյուր հազար լրտուներ։ Նրա տանջարաններով անցել են տասնյակ հազարավոր մարդիկ, որոնց կասկածել են շահական վարչակարգի նկատմամբ ամենափոքր օպոզիցիայի մեջ։ Նրանք ենթարկվել են սոսկալի տանջանքների և ծաղրուծանակի։ Նրանցից հազարավորները զոհվել են։

1954 թվականին Իրանի հետ նավթի վերաբերյալ կնքվեց նոր համաձայնագիր, այս անգամ ոչ թե ԱԻՆԸ-ի, այլ միջազգային նավթային կոնսորցիումի հետ։ Նոր ընկերությունում ԱԻՆԸ, այսուհետև՝ «Բրիթիշ փեթրոլեում», ստանում էր բաժնետոմսերի 40 տոկոսը (և համապատասխան փոխհատուցում մյուս մասնակիցներից), «Ռոյալ դաթչ-Շելլը»՝ 14 տոկոսը, ամերիկյան հինգ «քույրերը»՝ 35 տոկոսը, 5 տոկոսը գնում էր ամերիկյան «անկախ» ընկերություններին և 6 տոկոսը՝ «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլին»։ Իրանական ազգային նավթային ընկերությունը (ԻԱՆԸ) այդ պահին միայն ձևականորեն դարձավ նավթային արդյունաբերության իրավաբանական սեփականատեր, հնարավորություն չունենալով որոշել ո՛չ իր արտադրանքի գինը, ո՛չ հանույթի մակարդակը։ Նավթից ստացված եկամուտները «ֆիֆթի-ֆիֆթիի» սկզբունքով պետք է բաժանվեին կառավարության և կոնսորցիումի միջև։

Քաղաքական և ռազմաստրատեգիական բնագավառներում շահը սկսեց հատուցել իր «պարտքը» ԿՀՎ-ին և հատկապես Վաշինգտոնին։ 1955 թվականի վերջում Իրանը մտավ Անգլիայի և Վաշինգտոնի կողմից ստեղծված Բաղդադի պակտի մեջ (1959 թվականից՝ ՍԵՆՏՕ), իսկ 1959 թվականին երկկողմանի ռազմական համաձայնություն կնքեց ԱՄՆ-ի հետ։ Նրա տարածքում հայտնվեցին ամերիկյան ռազմական բազաներ՝ հատկապես ՍՍՀՄ-ի դեմ էլեկտրոնային հետախուզություն անցկացնելու համար։

Իրանը մշտապես նավթ էր մատակարարում Իսրայելին և դարձավ նրա զենքի մշտական գնորդը։

Պարսից ծոցի ավազանում, հատկապես անգլիական զորքերի դուրս գալուց հետո, Թեհրանը իր վրա վերցրեց Արևմուտքի շահերի պաշտպանության ժանդարմի դերը և ի հաստատումն Օմանի սուլթանության ուղարկեց էքսպեդիցիոն կորպուսը։ Շահը շատ կարճ ժամկետում ԱՄՆ-ին տվեց (հենց ամերիկյան) ռեակտիվ ինքնաթիռներ, երբ դրանք անհրաժեշտ եղան Վիետնամում պատերազմ մղելու համար։ Վաշինգտոնի խնդրանքով

նա գաղտնի զենք էր մատակարարում Սոմալիին՝ հեղափոխական Եթովպիայի դեմ պատերազմելու համար, և զենք էր փոխադրում Չադ՝ ամերիկամետ խմբավորումների համար։

Վաշինգտոնը հմտորեն օգտագործում էր շահի հիվանդագին պատվախնդրությունը և նրա մեծարվելու մոլուցքը, որպեսզի Իրանը, սենատոր Էդվարդ Քենեդու արտահայտությամբ, դարձներ «սպառազինությունների մրցավազքի հաշիշամոլ»։ Եթե երկու տասնամյակում, 1950 թվականից մինչև 1969 թվականը, ռազմական ներդրումները Իրանում գնահատվում էին 757 միլիոն դոլար, ապա հեղափոխությանը նախորդող 10 տարվա ընթացքում դրանք գերազանցեցին 18 միլիարդից։ 1972 թվականի մայիսին պրեզիդենտ Նիքսոնը Թեհրանում ստորագրեց գաղտնի համաձայնագիր, որով ԱՄՆ-ը պարտավորվում էր Իրանին մատակարարել ժամանակակից ցանկացած զենք։ Փաստորեն իրանական դրամով վճարվում էին նոր զենքի մի քանի տեսակների փորձարկումները, որոնք դեռևս պաշտոնապես չէին փորձարկվել ամերիկյան բանակում։ 70-ական թվականների կեսերին շահական վարչակարգը դարձավ ամերիկյան զենքի աշխարհի ամենախոշոր ներմուծողը։ 1973—1978 թվականներին շահը գնեց և պատվիրեց 19 միլիարդ դոլարի ամերիկյան զենք, իսկ 1978 թվականին ռազմական նորագույն տեխնիկայի համար ևս 15 միլիարդի հայտ ներկայացրեց։ 1979 թվականին Իրանում կար 50 հազար ամերիկացի, հիմնականում զինվորական խորհրդատուներ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մինչև 1975 թվականը ԱՄՆ-ում մարտական պատրաստություն են անցել 11 հազար իրանական զինծառայողներ։ 1979 թվականի սկզբին ԱՄՆ-ում սովորում էին 2260 իրանական զինվորներ։ Թեհրանում էր տեղավորված ԿՀՎ-ի ռեզիդենտուրայի շտաբակայանը։ ԿՀՎ-ի նախկին դիրեկտոր Ռիչարդ Հելմսը մինչև 1976 թվականը Թեհրանում դեսպան էր։ Դիվանագիտական գործունեությունից բացի Հելմսը իրականացնում էր Իրանի և ԱՄՆ-ի հատուկ ծառայության գործունեության կոորդինացումը։

Վարչակարգի ճգնաժամը սաստկանում է

Ե՛վ շահին շրջապատող ամենահեռատես մարդիկ, և՛ ամերիկյան որոշ խորհրդատուներ հասկանում էին, որ օպոզիցիան ճնշելով՝ վարչակարգը արմատահան չարեց նրա սոցիալական

հիմքերը։ ԿՀՎ-ի օգնությամբ շահը իրեն վերադարձրեց «սիրամարգի գահը» (թանկարժեք քարերով պատրաստված դրվագազարդ գահի վրա պատկերված էր սիրամարգի պոչը)։ Իր կառավարման համեմատաբար երկար տարիների ընթացքում նա դեսուդեն էր նետվում՝ փնտրելով մի քաղաքական կառուցվածք, որ ապահովեր իշխանության կայունությունը և ընդլայներ նրա հասարակական բազան։

Ռեֆորմները, որոնց վերամբարձորեն և անհամեստաբար անվանեցին «սպիտակ հեղափոխություն», իսկ հետո՝ «շահի և ժողովրդի հեղափոխություն», Իրանում սկսվեցին 60-ական թվականների սկզբին։ Այդ ժամանակ բանվոր դասակարգը քաղաքականապես կազմակերպված չէր, իսկ նրա ավանգարդը՝ Թուդեի կուսակցությունը, ռեպրեսիաների, բանտարկությունների, զանգվածային ֆիզիկական բնաջնջման հետևանքով խիստ թուլացել էր։ Իրանական տարատոհմիկ մտավորականների և նրանց ակտիվ մասի, շուկայի* աղդեցությանը չենթարկվող քաղաքային մանր բուրժուազիայի խավերը, այսինքն՝ նրանք, ովքեր Ազգային ճակատի հենարանն էին, կազմալուծվել էին։ Մուսուլմանական հոգևորականությունը դեռևս ընդունակ չէր լուրջ ախոյան դառնալ կառավարությանը։ Փոփոխությունների և վերափոխությունների վերաբերյալ պահանջները ծեծում էին դրռները, սակայն նրանք բախվում էին ֆեոդալական իշխանությունների դիմադրությանը։

Նման վիճակը անտանելի էր դառնում, և դա հասկանում էին «վերնախավի» ներկայացուցիչներից ոմանք։ Նրանք սկսեցին ռեֆորմներ անցկացնել, նպատակ ունենալով կրկին հասարակության արդիականացման խաբուսիկ տպավորություն ստեղծել, ընդլայնել վարչակարգի սոցիալական բազան, փորձել ապահովել կապիտալիզմի տիրապետությունը տնտեսական և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, առանց փոխելու կառավարման բռնապետական բնույթը։ Ռեֆորմի կազմակերպիչները հույս ունեին ապակողմնորոշել պետական իշխանությունը, կտրել նրան ֆեոդալականլվածատիրական հիմքերից և իրանական իր ողջ առանձնահատկությամբ նրան դարձնել բուրժուական շահերի օբյեկտիվ արտահայտիչ։ Պետությունը

* Հիշեցնենք, որ մուսուլմանական Արևելքում շուկան մի ամբողջ սոցիալ-տնտեսական ֆենոմեն է և ոչ թե միայն առևտուր անելու վայր։

Իրանի, ինչպես նաև Մերձավոր և Միջին արևելքի մի շարք երկրների պայմաններում ուշած-չուշած փորձում էր իր վրա վերցնել բուրժուական վերափոխությունների բռնի իրագործման ֆունկցիան: Վերափոխությունների գլխավոր բաղադրիչ մասը ագրարային ռեֆորմն էր, որի ընթացքում խոշոր կալվածատերերից որպես փրկագին վերցնում էին հողի մի մասը, իսկ հողագործներին մղում էին կապիտալիստական ձեռնարկատիրության ուղին:

Իրանական բուրժուազիայի այն մասը, որին մեծ վերապահությամբ կարելի է անվանել «ազգային», սկզբում չէր ցանկանում կապիտալ ներդնել արդյունաբերության զարգացման համար: Նա զգալի շահույթներ էր ստանում արտահանման-ներմուծման օպերացիաներից և բավարարվում էր դրանով, փաստորեն հանդես գալով որպես գործակալ, լավագույն դեպքում՝ միջազգային խոշոր կապիտալի կրտսեր ընկերակից: Տիրելով նավթի աճող շահույթներին՝ պետությունը միջոցներն ուղղում էր դեպի ինֆրակառուցվածքի, երկաթուղային և խճուղային ճանապարհների, հեռուստակոմունիկացիաների, ամբարտակների և ոռոգման կառույցների, օդային և ջրային տրանսպորտի, ծանր արդյունաբերության զարգացումը: 70-ական թվականների կեսերին էկոնոմիկայի մեջ պետական սեկտորին բաժին էր ընկնում ընդհանուր կապիտալ ներդրումների երկու երրորդը, արդյունաբերական արտադրության կեսից ավելին, ներմուծության մոտավորապես կեսը և արտահանության մեկ երրորդը (առանց նավթի):

Իրանի ազգային արդյունաբերությունը օտարերկրյա մրցակցությունից պաշտպանված էր մաքսատուրքերով: Պետությունը նրա համար մտցրել էր զանազան հարկային արտոնություններ, բացել իր փոխառության ծորակները: Նոր ֆորմացիայի բիզնեսմենները սկսեցին տեղավորվել սոցիալական հիերարխիայի վերևում, շքեղ առանձնատները լցնելով հին գորգերի հավաքածուներով, միջնադարյան մանրանկարներով, թանգարանային զենքերով: Եթե 1960 թվականին Իրանում 5 միլիարդ դոլար շրջանառություն ունեցող ոչ մի ձեռնարկություն չկար, ապա 70-ական թվականներին այդպիսի մասնավոր ձեռնարկությունները հաշվվում էին ավելի քան հարյուրներով:

Կաշառակեր վարչակարգի գոյության փաստն իսկ բուրժուազիայի զարգացումը դատապարտել էր դեֆորմացիայի: «Հազ-

վագյուտ արդյունաբերական կամ առևտրական ձեռնարկություններ Իրանում բացվել են առանց շահի օրհնության,— գրում էր ամերիկյան հետազոտող Մարվին Զոնիսը «Իրանի քաղաքական ընտրախավը» գրքում»:— Այդ օրհնանքը ապահովելու համար հաճախ շահին էին նվիրվում նոր ձեռնարկության բաժնետոմսերի մի մասը: Մի այլ դեպքում շահը կամ թագավորական ընտանիքի անդամները անձնական միջոցները ներդնում են տեղական առևտրական ձեռնարկություններում: Արդյունքը լինում է այն, որ Փահլավու ընտանիքի յուրաքանչյուր անդամ օրինական ձայն ունի Իրանի գրեթե ամբողջ արդյունաբերության և առևտրի կառավարման մեջ»:

Եթե բուրժուական հետազոտողի ճշմարիտ դիտողությունները զարտուղի լեզվից վերածեն համընդհանուր մատչելի լեզվի, ապա դա կնշանակի, որ շահը և նրան շրջապատողները սեփական գրպաններն էին լցնում երկրի ամբողջ առևտրաարդյունաբերական գործունեությունից ստացված հարկերն ու կաշառքները:

Նույն ձևով գողանում և կաշառք էր վերցնում ամբողջ միապետության պետական ապարատը, չմոռանալով հանցագործ գործողությունները ծածկել վերամբարձ խոսքերով և շահին գովերգող լոզունգներով:

Իրանում տնտեսական և քաղաքական իշխանություն ուներ համարյա հազար ընտանիք: Ընդհանուր կամ, ավելի ճիշտ, գլխավոր գիծը նրա ներկայացուցիչներից մեծ մասի համար կառավարությանը, պալատին կից քաղաքացիական կամ զինվորական վարչական ծառայությունն էր, ուստի Իրանի պայմաններում «ընտրախավը» դարձավ պետական ապարատում բարձր էշելոնի հոմանիշը:

Շահական Իրանում ամենաազդեցիկ մարդիկ, որպես կանոն, բյուրոկրատիայի ներկայացուցիչներն էին: Մինչև ռեֆորմը «ընտրախավի» կշիռն ու ազդեցությունը որոշվում էին խոշոր հողային սեփականություններով՝ պետական մեքենայի ներսում դրված պաշտոնների զուգակցությամբ: 60-ական թվականներին նախկին բազան զգալիորեն խախտվեց: Հին հողատիրական արիստոկրատիան որոշ չափով ետ քաշվեց հօգուտ վարչակարգին ծախված «ռազնոչինեցների», տեխնոկրատների, «միջին խավի» ներկայացուցիչների թվից շահի կողմից նկատի առնված և գուրգուրված դուրսպրծուկների: Սակայն կարևոր է

նշել, որ Զոնիսի տվյալներով, շուկայական այդ գործարարների ղավակները, այսինքն՝ բուրժուազիայի ներկայացուցիչները, կազմում էին երկրի ամենաազդեցիկ մարդկանց ընդհանուր թվի մեկ հինգերորդից էլ պակաս։

«Ընտրախավի» հարստացման հիմնական աղբյուրը՝ նավթային եկամուտները, գտնվում էր կառավարության ձեռքում, և նրա հսկողությունը իրականացնում էին շահն ու նրա շրջապատողները։ Ուստի «հազար հոգուց բաղկացած ընտանիքը» ավելի շատ կախված էր պետական իշխանությունից, քան երբևէ եղել էր։

Հարստության բաշխումը կատարվում էր մերձավոր, և միջինարևելյան բռնապետության ավանդույթներին համապատասխան՝ վերևից ներքև, նվերների, ձեռնտու կապալների, ուղղակի և մասսայական կաշառակերության միջոցով։

Այո, իրանական քաղաքական վարչակարգի կենսունակության համար նրա բյուրոկրատական «ընտրախավը» պետք է ինչ-որ կերպ կատարելագործվեր, կերպարանափոխվեր, որոշ ռեֆորմներ անցկացներ՝ թեկուզև սոսկ թղթի վրա հայտարարված։ Սակայն պետական մեքենայի բյուրոկրատական կարծրախարիսխը այնքան ուժեղ էր, հասարակության ամենատարբրական պահանջարկների և իշխանություն ունեցողների կողմից նրանց պատասխանի միջև ետադարձ կապի սիստեմն այնքան ջլատված, որ բոլոր տեսակի, նույնիսկ «վերևից» ընդունված բարի որոշումները կամ չէին հասնում «ներքևիններին», կամ կիրառվում էին աղավաղված տեսքով։ Մեռնող բյուրոկրատիայի յուրաքանչյուր միջոցառում հանգեցնում էր ինքնապարտության։ Նրա պորտաբուծությունը բացարձակ էր և աղաղակող։

Երբ Իրանի նավթից ստացված եկամուտները կտրուկ կերպով աճեցին, դրանք շատ աննշան չափով էին գնում հասարակության ռեալ կարիքների բավարարմանը, սակայն մեծ մասամբ ուղղակի նշանակում էին քառապատկել, տասնապատկել գանձագողությունը, սաստկացնել բյուրոկրատիայի պորտաբույծ բնույթը։ Իրանի պետական մեքենան միայն մեկ պատասխան գիտեր հասունացող ժողովրդական հեղափոխության համար՝ ռեպրեսիաներ, և պատմականորեն դատապարտված էր։

Պատմության խոլուրդը խորն էր փորել։

Հեղուկ վառելիքի գների թռիչքի հետևանքով 1973 թվականից հետո նավթից ստացված իրանական կառավարության եկամուտները 1972 թվականի համեմատությամբ 1975 թվականին

ավելացան գրեթե 10 անգամ։ 1977 թվականին դրանք հասան 23 միլիարդ դոլարի (երկրի ազգային համախառն արտադրանքի համարյա 40 տոկոսը, բյուջեի եկամուտների գրեթե 80 տոկոսը)։ 1972—1977 թվականների ընթացքում Իրանը նավթի արտահանումից ստացավ գրեթե 90 միլիարդ դոլար։ Այդ գումարը այնքան խոշոր էր, որ, չնայած գողությամբ և կաշառքներից առաջացած հսկայական կորուստներին, չնայած սպառազինության ծախսերին, երկրում բուռն թափով աճեց էկոնոմիկան։ Ճիշտ է, «զարգացման» ձևական բարձր թվերի տակ թաքնված էր հենց նավթի գների աճը, բայց, այնուամենայնիվ, Իրանը իրականում ագրարայինից վերածվել էր ինդուստրիալ-ագրարային երկրի։

Իրանում հայտնվեցին մետալուրգիական, մեքենաշինական, նավթաքիմիական գործարաններ, ավտոմոբիլահավաքման և տրակտորահավաքման ձեռնարկություններ, գազի և ալյումինի արդյունաբերություն, գյուղատնտեսական գործիքների ձեռնարկություն, հիմնադրվեց նավաշինություն և ինքնաթիռաշինություն, քայլեր արվեցին ատոմային էներգետիկայի ստեղծման համար։ 1960-ից մինչև 1975 թվականը արդյունաբերական բանվորների թիվը աճեց երկու անգամ։ Ինդուստրացումը «իրանական ձևով» ոչ թե թուլացրեց, այլ ուժեղացրեց Իրանի տնտեսական կախվածությունը զարգացած կապիտալիստական երկրներից։

Միաժամանակ, չնայած ինդուստրացման որոշ հաջողություններին, իրանական հասկացողությամբ, «խոշոր» ձեռնարկությունները 250 հազար մանր ձեռնարկությունների և արհեստանոցների ծովում մնացին որպես կղզյակներ։ 70-ական թվականների կեսերին ժամանակակից բնագավառներում գրեթե 2,5 միլիոն մարդուց զբաղված էին մոտ 100 հազար բանվոր։ Մեխանիկական կամ էլեկտրական շարժիչներ ունեցող ձեռնարկություններում զբաղված էին ընդամենը 700 հազար մարդ։ Ավելի քան 1 միլիոն մարդ աշխատում էր տնայնագործական արհեստանոցներում, որոնք հիմնված էին ձեռքի աշխատանքի կամ պարզունակ հաստոցների օգտագործման վրա։

Իրանական իրադարձությունների առանձնահատկությունն այն էր, որ ցածր, ամենամասսայական առևտրաարհեստագործական խավերը ոչ պարտադիր և ոչ միշտ էին կապիտալիզմ ծնում, ընդհակառակը, հաճախակի պահածոյացնում էին,

նոր հասարակական-պատմական պայմաններում վերականգնում նախկին արտադրահարաբերությունները: Դրա վկայությունը, թեև կերպարանափոխված, միջնադարյան արտադրամասերը և իրանական շուկայում գիլդիայի կայուն պահպանումն էր:

Ավանդական հասարակական կառուցվածքները քայքայվում էին, կերպարանափոխվում, սակայն հաճախ ուղղակի չէին փոխարինվում նորով: Ժողովրդագրական պոռթկումը, միգրացիան (հեղափոխությանը նախորդող տասը տարվա ընթացքում՝ 5 միլիոն), ուղեկցվելով կեղծ քաղաքակենտրոնացմամբ, քաղաքային ավանդական կառուցվածքը հանգեցրին հիվանդագին ուռճացման: Սակայն միաժամանակ օտարերկրյա ապրանքների մեծաքանակ ներմուծումը և արդյունաբերության ժամանակակից բնագավառների մրցակցությունը պայթեցնում էին նրանց արտադրական բազան: Սոցիալական անհավասարությունն ուժեղանում էր:

«Հեռանալով ավանդական կացութաձևից, գյուղական գաղթականները համալրում էին քաղաքային բնակչության ցածր և մասամբ միջին խավերը, շատ դեպքերում տարբեր սոցիալական խմբերի միջև գրավելով որևէ միջին դիրք,— գրում է սովետական պատմաբան Ս. Աղաևը:— Ջրկված լինելով արդյունաբերական արտադրության ոլորտում ընդգրկվելու հնարավորությունից (ձեռնարկություններում սահմանափակ զբաղվածության պատճառով), նրանցից շատերը գյուղական տնային արհեստների ավանդական բազայի վրա հիմնում էին մանր տնայնագործական արհեստանոցներ, կրպակներ և այլն... Ցածր և միջին քաղաքային սոցիալական խավերի կազմում և նրա սահմաններում գյուղական գաղթականները պահպանում էին յուրահատուկ արտադրական և սոցիալ-հոգեբանական գծերը: Միավորվելով համայնքներում, որոնք առաջանում էին մզկիթների բազայի վրա, նրանք մեծ մասամբ նպաստում էին իսլամի սկզբավոր վերածննդին, հետագայում ինչպես գրում էր «Ունիտա» թերթը 1980 թ. մայիսի 24-ին, դառնալով, գլխավոր դրոշը «այն սոցիալական ուժերի, որոնք իրանական հեղափոխության հիմնական մասնակիցներն էին՝ ընչազուրկ գյուղացիների, որոնք վերջին տասնհինգ տարվա ընթացքում տեղափոխվել էին խոշոր քաղաքները, այն «նոր դասի», որը դեռևս չէր կարելի նույնացնել ո՛չ լյումպեն-պրոլետարիատի, ո՛չ մանր բուրժուազիայի,

ո՛չ բնակչության աշխատավոր խավերի (բանվորների, գյուղացիների) հետ»:

Ունևոր գյուղացիների խավը, որը վեր էր ածվել ֆերմերների և Իրանի գյուղատնտեսական արտադրանքի նշանակալից մասի մատակարարների, նույնպես վարչակարգի հենարանը չդարձավ, որովհետև զգում էր գիշատիչ բյուրոկրատական ապարատի ճնշումը և գտնվում էր թշնամաբար տրամադրված մուսուլմանական հոգևորականության ազդեցության տակ:

Իրանի տնտեսական զարգացմանը, չնայած նրա աճող ֆինանսական հնարավորություններին, մեծ վնաս էին հասցնում վիթխարի ռազմական ծախսերը: Առանձին տարիների դրանք հասնում էին գրեթե պետական բյուջեի մեկ երրորդին: Ռազմական ինֆրակառուցվածքը և զինված ուժերը շեղում էին լավագույն, ամենաորակյալ ինժեներներին, տեխնիկներին և բանվորներին:

Արդեն 70-ական թվականների կեսերին Իրանի վճարման հաշվեկշիռը դարձավ դեֆիցիտային: Ինֆլյացիան տարեկան հասավ 20—30 տոկոսի և խիստ հարվածեց բնակչության մեծ մասի ռեալ եկամուտներին, այն 54 տոկոս ընտանիքներին, որոնք «աղքատության շեմից» էլ ցածր էին կանգնած: Առատորեն ծաղկում էր հատկապես հողի և անշարժ գույքի սպեկուլյացիան:

Գերբնակեցված քաղաքներում չէին բավականացնում բնակարանները, ջուրը, էլեկտրականությունը, տրանսպորտը:

Որպես չափից դուրս սնանկ մարդ, շահը ստորագրում էր մուրհակները՝ ժողովրդին խոստումներ տալիս, որոնք չէր կարող և չէր ցանկանում կատարել: «Աճող սպասումների հեղափոխությունը» վերածվեց «խաբված հույսերի հեղափոխության»: Հարվածը անցավ նաև «միջին քաղաքային խավերի» վրայով, որոնք տառապում էին ապրուստի թանկությունից:

Տնտեսական ճգնաժամը նավթային եկամուտների ոսկու անձրևի տակ, մասսաների զրկանքները վերնախավերի լպիրշ հարստացման պայմաններում, դեռևս նորերով չփոխարինված հասարակական ավանդական կապերի խորտակումը, այս բոլորը ստեղծում էին արտասովոր սոցիալական լարվածություն:

«Սպիտակ հեղափոխության» տարիներին շահական վարչակարգը այդպես էլ չկարողացավ իր համար որոշ չափով սոցիալական բազա ապահովել և հենվում էր ՍԱՎԱԿ-ի պատժիչ ապարատի, բանակի, ոստիկանության վրա: Վարչակարգի մակերե-

սային ռեֆորմների դեմ հանդես էին գալիս ամենատարբեր ուժեր։ Խոշոր կալվածատերերը և ցեղերի խաները բացահայտ, մի շարք դեպքերում զինված դիմադրություն ցույց տվին ագրարային ռեֆորմին։ Կրոնական շատ առաջնորդներ Ռուհոլլա Մուսավի Խոմեյնիի գլխավորությամբ հայտարարեցին, որ ռեֆորմները չեն համապատասխանում իսլամի պատվիրաններին։ Նրանց զայրացնում էր նույնիսկ կանանց ձևականորեն ընտրական իրավունք տալը։ Աջ օպոզիցիան օբյեկտիվորեն միացավ Ազգային ճակատին կամ ձախ կազմակերպություններին հակադրվող մտավորականությանը, ուսանողության, ծառայողների, առևտրականների, արհեստավորների և բանվորների շարժմանը, ընդդեմ շահական բռնակալության։ Դեմոկրատական շարժումը պահանջում էր չեզոքության քաղաքականության անցկացում, հրաժարում Արևմուտքի նկատմամբ միակողմանի կողմնորոշումից և հարաբերությունների բարելավում Սովետական Միության հետ։ Հոգևորականությունը քննադատում էր այն օրենքը, ըստ որի ամերիկյան զինծառայողները ենթակա չէին իրանական դատարանով դատապարտվելու։

1963 թվականի գարնանն ու ամռանը հոգևորականությունը գլխավորեց հակակառավարական վիթխարի ելույթներ, որոնց հետ իշխանությունները դաժան հաշվեհարդար տեսան։ Հարյուրավոր, գուցեև հազարավոր մարդիկ սպանվեցին։ Բազմաթիվ խոշոր աստվածաբաններ ձերբակալվեցին, տանջանքների և նույնիսկ մահապատժի ենթարկվեցին։

Հակաշահական շարժումը բացահայտորեն ժամանակավորապես անցավ իշխանության ներկայացուցիչների դեմ ուղղված առանձին տեռորիստական ակտերի ոլորտը։

«60-ական թվականներին և 70-ական թվականների առաջին կեսին քաղաքային բնակչության մեջ ամենամեծ քաղաքական ակտիվություն հանդես բերեց ուսանողությունը, որի թիվը 1961-ից մինչև 1975 թվականը մեծացավ 5,6 անգամ (չհաշված արտասահմանում սովորողներին),— գրում է Ս. Աղաևը։— Նրա կազմում այդ ժամանակ «քաղաքային միջին խավի» ներկայացուցիչների տեսակարար կշիռը զգալիորեն գերազանցեց այլ սոցիալական խավերից դուրս եկածների բաժինը։ Աշխատանքի տեղավորման պրոբլեմների, Իրանում տիրող քաղաքական կլիմայի և հոգեբանական մթնոլորտի հետևանքով շատ ուսանողներ ուսումն ավարտելուց հետո գերադասում էին հեռանալ երկրից, իսկ արտասահմանում սովորողները հրաժարվում էին վերադառնալ հայրենիք...

Իրանում ուսանողական շարժման աճի բնորոշ գիծը տվյալ ժամանակաշրջանում համարվում էր նրանց մեջ գիտական սոցիալիզմի գաղափարների տարածումը, որին մի շարք դեպքերում միանում էին իսլամական կրոնի դոգմաները։ Ռազմատեխնիկական դաժան ճնշման պայմաններում, որը սաստկացնում էր երիտասարդությանը հատուկ «հեղափոխական անհամբերությունը», այդ գաղափարները իրանական ուսանողական շարժման մեջ բեկվում էին ձախ ռադիկալ տրամադրությունների պրիզմայի միջով, որը պայմանավորվում էր պարտիզանական կռիվների մեթոդներով և տեռորի տակտիկայով։

Այդ տիպի խոշոր խմբավորումներից էին «Զարիկխայե ֆեդայիե խալգե Իրան» («Իրանական ժողովրդի համար իրենց զոհաբերող պարտիզաններ») կազմակերպությունը, որն իրեն անվանում էր մարքս-լենինյան, և «իսլամասոցիալիստական», «իսլամամարքսիստական» ուղղության «Մոջահեդինե խալգե Իրան» («Իրանական ժողովրդի սուրբ գործի համար պայքարող մարտիկներ») կազմակերպությունը։ Երկու կազմակերպությունների մեջ ուսանողների հետ միասին մտնում էին մտավորականներ, մանր առևտրականներ, արհեստավորներ, ինչպես նաև բանվորներ։ Սկսած 70-ական թվականների երկրորդ կեսից, «մոջահեդինների» և «ֆիդայիների» խմբավորումները փաստորեն հրաժարվեցին ռազմական գործողություններից և նվիրվեցին ընդհատակյա պայքարին։ Մարքսիստական գաղափարների ազդեցության տակ նրանք աստիճանաբար վերածվեցին հեղափոխական-դեմոկրատական տիպի կազմակերպության»։

Ձախ երիտասարդական կազմակերպությունների շարժումը աջակցություն գտավ օպոզիցիոն մտավորականության մի մասի կողմից։ Որպես արձագանք շահի կողմից Իրանի վրին փաթաթած կեղծ արդիականացման՝ մտավորականության որոշ ներկայացուցիչների մեջ ի հայտ եկան նաև հակաարևմտյան տրամադրություններ, երկիրն ԱՄՆ-ի ճնշող տիրապետությունից ազատելու, ազգային անկախությունը, մշակույթը և ավանդույթները պահպանելու, «մուսուլմանական քաղաքակրթության արժեքները» հասարակությանը վերադարձնելու պահանջներ։

Իրանի հիմնական օպոզիցիոն շարժումները կրոնական

երանգ ստացան։ Իսլամը դարձավ հակամիապետական, հակաիմպերիալիստական հեղափոխության նորագույն ժամանակների հզվագույտ շարժիչ ուժը, որը հանգեցրեց աստվածապետական վարչակարգի ստեղծմանը։ Ուստի ավելորդ չի լինի թեկուզև համառոտակի կանգ առնել ինչպես Իրանի, այնպես էլ այդ ռեգիոնի մյուս երկրների հասարակական-քաղաքական կյանքում «իսլամական գործոնի» դերի վրա։

Իսլամը և քաղաքական պայքարը

Ժամանակակից մուսուլմանական շարժումների քաղաքական գունավորումը բարդ է և ենթակա մշտական փոփոխության։ Մուսուլմանական երկրների սոցիալական կառուցվածքը ամորֆ է, դասակարգային սահմանները հեղեղված են, հասարակությունը կրում է բազմակացութաձև բնույթ։ Գյուղացիությունը, քաղաքի մանր բուրժուազիան, կիսապրոլետարական խավերը կազմում են բնակչության մեծ մասը և սոցիալական միջավայր են ծառայում հոգևորական ուժեղ զգացմունքների համար։ Իսլամին դավանող երկրի քաղաքական վարչակարգերը տրված են լայն սպեկտրով՝ հեղափոխական-դեմոկրատականից մինչև ֆեոդալական-աստվածապետականը։ Իսլամի կանաչ դրոշը (կանաչը մուսուլմանության հիմնադիր Մուհամեդի սիրած գույնն է) կարող է հովանի լինել ինչպես իմպերիալիզմի և ֆեոդալիզմի, այնպես էլ պահպանողականների, թունդ հետադիմականների դեմ պայքարողներին։ «Իսլամի դրոշի ներքո կարող է ծավալվել ազատագրական պայքար,— ասված է կուսակցության XXVI համագումարում տված ՍՄԿԿ Կենտկոմի զեկուցման մեջ։— Այդ մասին է վկայում պատմության փորձը, այն էլ ոչ վաղուցվա։ Բայց դա ասում է, որ իսլամական լոզունգներով փետրազարդվում է նաև հակահեղափոխական խռովություն բարձրացնող ռեակցիան։ Հետևաբար, կարևորն այն է, թե ինչպիսին է այս կամ այն շարժման իրական բովանդակությունը»։

Եվրոպական գաղութատիրության թափանցումը մուսուլմանական երկրները՝ XIX—XX դարերի սահմանագծում հանգցրեց նրանց անկախության լրիվ կամ մասնակի կորստին։ Որպես պատասխան այդ պատմական մարտահրավերի՝ մուսուլմանական հասարակության մեջ ձևավորվեցին երեք գլխավոր հոսանք-

ներ, որոնք գիտակցում էին փոփոխությունների անհրաժեշտությունը՝ սոցիալ-տնտեսական հետամնացությունը հաղթահարելու, ազգային անկախությունը վերականգնելու կամ պահպանելու համար։

Մոդեռնիստ «եվրոպեիստները» Արևմտյան Եվրոպայի բուրժուական հասարակության օրինակով պահանջում էին սոցիալ-քաղաքական կառուցվածքի վճռական վերափոխություններ։ Նրանք կոչ էին անում հրաժարվել իսլամի ժառանգությունից, գտնելով, որ դա է իրենց երկրի հետամնացության, ռազմական և տնտեսական թուլության պատճառը։ Նրանք կոչ էին անում քնակչությանը «եվրոպականանալ», հաղորդակցվելով արևմտաեվրոպական կապիտալիստական քաղաքակրթությանը։ Այդ հոսանքի ամենաաչքի ընկնող ներկայացուցիչը դարձավ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը՝ հանրապետական Թուրքիայի հիմնադիրը, ինչպես նաև քեմալականները, նրա կողմնակիցները, որոնք հրաժարվեցին ավանդույթներից, կրոնական ինստիտուտներն անջատեցին պետությունից և արգելեցին կրոնն օգտագործել քաղաքական նպատակներով։

Մյուս հոսանքի ներկայացուցիչները չափավոր ռեֆորմատորներն էին, որին հարում էին չափավոր իսլամականները։ Նրանց ծրագրի էությունը հետևյալն էր՝ յուրացնել արևմտյան, այսինքն՝ կապիտալիստական քաղաքակրթության տեխնիկական նվաճումները, որոշ չափով բարեփոխել իսլամական ինստիտուտները, հիմնարկները, ավանդույթները և դրանով իսկ ուղի հարթել առաջադիմության համար, չհրաժարվելով սեփական ժառանգությունից։ Այդ հոսանքի առաջնորդների թվին էր պատկանում Ջեմալ ադ-Դին ալ-Աֆղանին՝ հիմնադիրը «պանիսլամիզմի» գաղափարախոսության, որով զինվել էր Օսմանյան կայսրության կառավարող դասը իր կործանման նախօրյակին։

Ծայրահեղ հնավանդականները՝ մուսուլմանական ուղղափառները, մերժում էին Արևմուտքի ողջ հոգևոր և հասարակական արժեքները, արևմտյան քաղաքակրթության ամբողջ նվաճումները, «համաձայնելով» ընդունել միայն նրա տեխնիկական և զինվորական կազմակերպությունը։ Նրանց համար հարցը այն չէր, որ բարեփոխեն իսլամը, այլ վերադառնան ետ՝ դեպի նրա «սկզբնական մաքրությունը», վերականգնել այն տեսքով, ինչպես գոյություն է ունեցել իր հայտնվելուց հետո առաջին երեք դարերում (մ. թ. VII—X դար)։ Օգտագործելով այդ հո-

սանքներից մեկը (վահաբիզմ), Մերձավոր արևելքի ամենահետամնաց շրջանում մեր դարի 20-ական թվականներին ստեղծվեց, օրինակ, Սաուդյան Արաբիան։

Սակայն այդ երեք հոսանքներից որևէ մեկին պատկանելն իսկ, որոնց միջև սահմանները խիստ պայմանական էին, բնավ չէր նշանակում հստակ քաղաքական համոզմունք ունենալ։ Աթաթյուրքը փաստորեն ճանապարհ էր մաքրում Թուրքիան կապիտալիստական զարգացման ուղիով տանելու համար։ Բայց միաժամանակ նա հանդես էր գալիս որպես իր ժամանակաշրջանի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ և որպես Սովետական Միության հետ համագործակցելու կողմնակից։ Եգիպտոսում 50—60-ական թվականներին պրեզիդենտ Նասերը կողմնորոշվեց դեպի սոցիալիզմը, արդյունավետ համագործակցություն հաստատեց Սովետական Միության հետ, կատարեց հասարակական զգալի վերափոխություններ, թեև շատ ավանդական կարգերի կապավ ավելի պակաս չափով, քան Աթաթյուրքը։ Նրանց հակառակ Իրանում Ռեզա շահը, ինչպես նաև նրա որդի Մոհամեդ Ռեզան, որոնք նույնպես իրենց համարում էին «մոդեռնիստներ», «եվրոպականացումն» անցկացնում էին միայն մի նպատակով՝ ուժեղացնել իրենց բռնակալական իշխանությունը։

Պատմականորեն իսլամը բոլորովին էլ միայն ծիսակարգ, դավանանք կամ պաշտամունքային առանձնահատկությունների շարք չէ։ Այն զարդարում կամ սրբագործում է ինստիտուտները, սեփականության, քաղաքական և սոցիալ-տնտեսական կարգերի, իրավունքի, փիլիսոփայության, կենցաղային կարգավորման, բարոյագիտության, սոցիալական հոգեբանության հատուկ ձևերը, այն հարյուր միլիոնավոր մարդկանց ապրելակերպն է։ Որպես այդպիսին իսլամը պատկանում է դասակարգային հասարակության ամենահզոր և կայուն կրոնագաղափարախոսական սիստեմների թվին։

Գաղափարախոսությունների փոփոխումը մարդկության և առանձին ժողովուրդների պատմության մեջ միայն մեծագույն հեղաշրջումների հետևանք է։ Ավելի պակաս կարևոր սոցիալական հոսանքները, որպես կանոն, օգտագործում են հին, ստուգված գաղափարախոսական զգեստներ, դրանք շուռ տալով, հարմարեցնելով իրենց կարիքներին, շեշտը դնելով մեկի վրա, անտեսելով մյուսները։ Իսլամի գաղափարախոսությունն ինքը հարուստ հող է տալիս այն օգտագործելու տարբեր հասարակական

հոսանքների համար։ Նրա առանձնահատկությունը հոգևոր և աշխարհիկ սկզբունքների միաձուլությունն է կրոնական իշխանության տեսական առաջնության հետ։ Պատմականորեն այնպես է դասավորվել, որ ընդհուպ մինչև իմպերիալիզմի դարաշրջանի սկիզբը սոցիալ-քաղաքական և կատակլիզմները մուսուլմանական երկրներում առաջացել են կրոնական շրջանակներում, իրենց արտացոլումը գտնելով բազմաթիվ «հերետիկոսություններում» և աղանդներում, բայց առանց խախտելու իսլամի ամբողջականությունը որպես սիստեմ։

Իսլամի մեջ, որն իր ծագման հենց սկզբից, մասնավորապես, եղել է դասակարգային հասարակության գաղափարախոսությունը, միաժամանակ միշտ հնչել է ուժեղ էգալիտարիստական (հավասարար) լարը։ Ե՛վ Ղուրանի մեջ, և՛ կրոնական ավանդույթներում քիչ կոչեր չկան ավելի արդար հասարակություն ստեղծելու, շահագործումը և դասակարգային ճնշումը նվազեցնելու, չքավորների վիճակը թեթևացնելու մասին։ Հատկապես իսլամի այս կողմը կարողացան օգտագործել և օգտագործում են ձախ մուսուլմանական կազմակերպությունները։

Մտավորականության, «միջին խավերի» և բանվորների հեղափոխական մասը մուսուլմանական երկրներում ծանոթացավ մեր դարաշրջանի առաջադեմ գաղափարներին և զինվեց դրանցով՝ ձևափոխելով կոնկրետ պայմաններին համապատասխան։ Մի շարք երկրներում ստեղծվեցին կոմունիստական և հեղափոխադեմոկրատական կուսակցություններ։ Նրանք հանդես են գալիս հօգուտ մուսուլմանական կազմակերպությունների, հավատացյալ լայն մասսաների հետ համագործակցության՝ աշխատավորներին շահագործողների ճնշումից ազատագրելու, սոցիալ-տնտեսական առաջընթացի շարժման ուղու, անկախության ամրապնդման և իմպերիալիզմի ու գաղութատիրության դեմ պայքարի պահանջների հիման վրա։

Հեղափոխական դեմոկրատները հաճախ են դիմում իսլամին մի շարք սոցիալական վերափոխումներ բացատրելու համար, մասնավորապես, կալվածատիրական հողերը գյուղացիներին բաժանելիս։ Այդպիսի քաղաքականությունը ընդունելություն և աջակցություն է գտնում ինչպես մասսաների, այնպես էլ շատ կրոնական գործիչների մոտ, հեշտացնում է որոշ ներքին բարեփոխություններ։ Ապացուցելով ազգային ռեֆորմների համապատասխանությունը իսլամի դոգմաների հետ, Ալժիրի պրե-

վիդենտ (այժմ հանգուցյալ) Հ. Բումեդիենը նշում էր, որ չկան կրոնական արգելքներ, որոնք խանգարեն հողը արդարացի բաժանելուն: Ընդհակառակը, Ղուրանում կա մի դրույթ, որտեղ ասվում է. մարդիկ համատեղ տիրում են կրակին, այսինքն՝ էներգիային, արոտավայրերին, այսինքն՝ հողին և ջրին:

Սակայն իսլամի գաղափարախոսությունն ընդարձակ դիմանոց է տրամադրում ունևորների իշխանությանը: Շահագործողական դասակարգերը աշխատում են կրոնն օգտագործել իրենց արտոնություններն արդարացնելու և պաշտպանելու համար, սրբագործելու փոքրամասնության կողմից մեծամասնությանը ճնշելու սիստեմի դոգմաները: Նրանք միավորվում, երբեմն էլ միաձուլվում են կղերականության շրջանների հետ, որպեսզի համատեղ ջանքերով մասսաներին հեռու պահեն ճնշման ու կեղեքման դեմ մղվող պայքարից:

Մուսուլմանական երկրների բուրժուազիան մեր դարաշրջանի կոնկրետ պատմական պայմաններում բնավ ոչ միշտ է ձգտում աշխարհիկ գաղափարախոսության տարածմանը և հասարակական կյանքի ապակրոնականացմանը, ինչպես դա արեց արևմտաեվրոպական բուրժուազիան իր վերելքի ժամանակաշրջանում: Հաճախ հակառակն է լինում: Նա իսլամի մեջ, հատկապես նրա դրույթներում, որոնք ուղղված են շահագործման և դասակարգային հասարակության հարաբերությունների սրբագործմանը, տեսնում է արգելք առաջադիմական, ավելի շուտ կոմունիստական գաղափարների տարածման դեմ: Մուսուլմանական երկրների մեծ մասում կոմունիստական կուսակցությունները օրենքից դուրս են, հետապնդվում են, ենթարկվում բռնությունների: Բավական է հետևենք իրադարձությունների զարգացմանը, ասենք, Պակիստանում, որպեսզի դրանում համոզվենք: Իսլամական հիմքի վրա հասարակական-քաղաքական և տնտեսական սիստեմի վերափոխման ծրագրի հռչակումը ռազմական վարչակարգի կողմից ծառայում է ռեակցիայի ամրապնդմանը, թեև ծայրահեղ կղերականներն այն անբավարար էին համարում: Մուսուլմանական հասարակական ինստիտուտների ներդրումը կոչված է սրբագործելու և օրինականացնելու Պակիստանի կառավարող դասակարգերի կոնգլոմերատի՝ ռազմական բյուրոկրատիայի վերնախավի, խոշոր հողային մագնատների, արդյունաբերական-ֆինանսական և առևտրական խոշոր բուրժուազիայի իշխանությունը: Իշխանությունները երկրում

դիտավորյալ բորբոքում էին կրոնական ֆանատիզմը, որն ուղղված էր ինչպես «հինդուիստական» Հնդկաստանի, այնպես էլ «սոցիալիստական Աֆղանստանի» դեմ:

Կրոնական զգացմունքների վերելքը, կրոնական գունավորմամբ քաղաքական շարժման բացարձակ ուժեղացումը, իսլամի կորուկ «քաղաքականացումը» առաջացան մի շարք պատճառներից:

Իրանում, ինչպես նաև մուսուլմանական մյուս երկրներում, բնակչության զգալի մասը ուղղակի կամ անուղղակի կերպով կապված է մինչկապիտալիստական կացութաձևի հետ և մեծ մասամբ անգրագետ է: Մուսուլմանական ավանդույթները, սովորույթները, ինստիտուտները, հավատալիքները, ըստ էության, հասարակական կենցաղի և գիտակցության նրան ծանոթ միակ ձևերն են: Նրա համար բնական է, կրոնական ձևով արտահայտել իր սոցիալ-քաղաքական ձգտումները, բողոքը ընդդեմ ճնշման: Վ. Ի. Լենինը գրում է, որ «կրոնական կեղևի տակ քաղաքական բողոքի հանդես գալը մի երևույթ է, որը զարգացման որոշ աստիճանում հատուկ է բոլոր ժողովուրդներին*»:

Բնակչության լայն խավերի տնտեսական դրությունը և սոցիալական ստատուսը, կապված կապիտալիստական երկրների զարգացման հետ, վատանում է, որը երիտասարդ պետություններում ընթանում է այլանդակ, հատկապես հիվանդագին ձևով: Իմպերիալիստական միջամտությունը, կապիտալիստական հարաբերությունների արմատավորումը նշանակում են նաև հարձակում աշխատավորների բարոյաէթիկական նորմերի վրա, որը մշակվել է կրոնական ավանդույթների շրջանակներում: Այդ պայմաններում զարգացող շատ երկրներում բնակչության լայն խավերը իսլամի մեջ գտնում են բողոքի ձև դրսից նրանց պարտադրված ոսկե հորթի առջև խոնարհվելու ապրելակերպի «ընտրախավի» կողմից ստեղծված և ամրապնդված հարստության ու աղքատության միջև ճեղքվածքի հետագա խորացման, ազգային մշակույթի ճնշման, բռնության քարոզի, բարոյազրկության դեմ: Իմպերիալիզմի և նեոգաղութարարության դեմ կրոնին հակված մարտիկները իրենց հաջորդներին ներշնչում են աշխատասիրություն, ժուժկալություն, մուսուլմանական ձև տալով դրանց և օգտագործելով հենց իսլամի հավասարապաշ-

* Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 288:

տական կողմը: Արժե նշել, որ մուսուլմանական հոգևորականության մեջ հանդիպում են շատերը, ովքեր անկեղծորեն հավատում են իսլամի առաքինություններին և արժեքներին, սոցիալական արդարության հատուկ մուսուլմանական հասարակության ստեղծման հնարավորությանը:

Մուսուլմանական երկրներում ոչ միայն կրթություն ստանալու իրավունքից զրկված մասսաները, այլև կրթված խավերի ներկայացուցիչներից շատերը, ի վիճակի չլինելով իրենց արդեն մշակված ապրելակերպը և Արևմտյան Եվրոպայում կամ ԱՄՆ-ում քաղած բուրժուական հասարակության իդեալները հաշտեցնել ընտանեկան և հասարակական ավանդույթների հետ, զգում են որոշակի հոգեկան չլսատում: Հասարակական և պետական ինստիտուտները, որոնք ստեղծվել են արևմտաեվրոպական և ամերիկյան օրինակով, հաճախ միջոց են ծառայում մոնոպոլիստական կապիտալի ներթափանցման համար ի վնաս ազգային բուրժուազիայի: Այդ պատճառով կրթված խավերի տարատոհմիկ մտավորականության մեծ մասը, որ օբյեկտիվորեն արտահայտում է ազգային բուրժուազիայի շահերը, դիմում է մուսուլմանական ավանդական արժեքներին, փորձելով նրանց մեջ գտնել այսօրվա պրոբլեմների պատասխանները, իսկ մուսուլմանական ինստիտուտներում՝ իր գործունեության համար հարմար ձևեր: Առաջ են քաշվում իսլամական «նոր տնտեսական կարգի» գաղափարները:

Պատմագիտության մեջ այն հարցը, թե իսլամը ինքնըստինքյան խոչընդոտ է եղել կապիտալիստական հարաբերություններին, մնում է չլուծված: Արգասաբեր կլինի՞ արդյոք մուսուլմանական իրավական և այլ նորմերի կիրառումը ուղիներ մաքրելու «ազգային կապիտալիզմի» համար, դժվար է ասել. դա ցույց կտա հասարակական-պատմական փորձը:

Կրոնական ձևերով զգեստավորված հակաարևմտյան տրամադրությունները, այդ թվում արևմտյան ապրելակերպի դատապարտումը, նրա արտաքին դրսևորումները համարժեք չեն սոցիալիստական գաղափարների նկատմամբ համակրանքի տարածմանը: Մուսուլմանական ակտիվիստները միաժամանակ կարող են թշնամի լինել և՛ Արևմուտքին, և՛ սոցիալիստական երկրներին: Քաղաքական գունավորմամբ մուսուլմանական շարժումները, որպես կանոն, համասեռ չեն: Նրանցում կարող են զուգակցվել երկու կողմ. առաջադիմական՝ հակաիմպերիալիս-

տական, հակամոնոպոլիստական ու հակաֆեոդալական, և հետադիմական՝ հակակոմունիստական, հակասովետական, հակասոցիալիստական: Բնական է, որ այդ քաղաքական դիրքորոշումն ինքնին և նրա դրսևորումը կախված են կոնկրետ սոցիալ-քաղաքական, ազգային և միջազգային պայմաններից:

Ուշադրություն դարձնելով քաղաքական պայքարի առանձնահատկությանը, մուսուլմանական երկրներում մենք թուլություն ենք հայտնաբերում «աշխարհիկ» հեղափոխական կամ նույնիսկ ուղղակի դեմոկրատական կազմակերպություններից շատերի մեջ: Դա բացատրվում էր ինչպես սոցիալական հիմքի սահմանափակությամբ, այնպես էլ նրանով, որ պահպանողական կամ հետադիմական վարչակարգեր ունեցող պետություններում նրանք ենթարկվում էին անխնա ճնշումների, երբեմն ոչնչանում էին ֆիզիկապես, ինչպես շահական Իրանում: Ուստի տեղին է կրկնել, որ հեղափոխական-դեմոկրատական ձգտումները ուզած-չուզած դրսևորվում են կրոնական գունավորում ունեցող կազմակերպությունների միջոցով:

Իրանի հեղափոխական հոսանքին որպես ժամանակավոր դաշնակիցներ միաձուլվեցին հակաշահական, հակաիմպերիալիստական հիմք ունեցող տարբեր սոցիալական ուժեր: Հաճախ հակադիր շահերով տարբեր դասակարգեր առաջ էին քաշում սեփական պահանջները, իսկ «ճշմարիտ իսլամին» վերադառնալու լոզունգները հաճախ հասկանում և մեկնաբանում էին յուրովի: Իրանում հեղափոխական իրադրություն առաջացավ, երբ վերնախավը չկարողացավ երկիրը նախկինի պես ղեկավարել, իսկ մասսաները չէին ցանկանում ապրել առաջվա նման: Այդ պայմաններում որոշակի փուլում առաջնությունն իր վրա վերցրեց շիա հոգևորականությունը:

Շիա հոգևորականությունը մասսաների վրա ներգործում էր մզկիթների միջոցով, որոնց թիվը Իրանում հասնում է ավելի քան 80 հազարի: Այստեղ մարդիկ ոչ միայն աղոթում էին, լսում քարոզներ, այլև ինֆորմացիա էին լսում ներքին քաղաքական իրադարձությունների և նրանց գնահատականների վերաբերյալ, մոլլաների հետ բանավեճերի մեջ մտնում: Մզկիթներում ձևավորվում էր ոչ պաշտոնական հասարակական կարծիք: Իրենց դժգոհությունը կառավարությունից, կաշառակերությունից և հասարակության բարոյալքումից բացահայտորեն արտա-

Հայտում էին միայն փաստորեն անձեռնմխելիության ստատուսից օգտվող մզկիթներում։

Իրանում մուսուլման հոգևորականության հենարանը աստվածաբան-ուլեմներն են՝ Ղուրանի մեկնաբանները, մուսուլմանական կանոնիկ իրավունքի և շիաների ավանդույթների գիտակները։ Նրանք երկարատև նախապատրաստություն են անցկացնում Իրանի աստվածաբանական ուսումնարաններում՝ Քումում և Մաշհադում, կամ Իրաքում՝ Նաջաֆում և Քերբելայում։

Ուլեմների բարձր խավը բաղկացած է մուջթահիդներից։ Աստվածաբանական գիտելիքների հետ միասին նրանք պետք է ունենան նաև անձնական արժանիքներ, որը հավատացյալների աչքում նրանց օժտում է սրբության լուսապսակով։ Նախքան մուջթահիդի կոչմանն արժանանալը, նրանք բանավոր և գրավոր շարադրում են կյանքի և մարդկանց վարքագծի վերաբերյալ իրենց դոգմայական գիտելիքներն ու հայացքները, մեկնաբանում են շիաների ավանդույթները, քարոզում են մզկիթներում, քաղաքային շուկաներում։ Ամենահեղինակավոր մուջթահիդները Ղուրանի և կրոնական ավանդույթների հիման վրա կարող են արտահայտել իրենց կարծիքը կրոնական և հասարակական-քաղաքական հարցերի վերաբերյալ, որոշումներ կայացնել, որով պետք է ղեկավարվեն համայնքի անդամները։

Երբ մուջթահիդը բացառիկ հարգանք է ձեռք բերում, նրան շնորհվում է այաթոլլայի աստիճան («աստծո նշան», կամ «աստվածային խորհրդանշան»)։ Իրանում հոգևորականության մոտ 180 հազար ներկայացուցիչներից շուրջ 100-ը այաթոլլա են։

Հոգևորականության ամենաբազմաքանակ, ցածր շերտերը կազմում են մոլլա-քարոզիչները, որոնք ծագում են ամենատարբեր հասարակական խավերից։ Սովորաբար մոլլաները համարվում են հայտնի մուջթահիդների և այաթոլլաների աշակերտները կամ հետևորդները։

Շիա հոգևորականության առանձնահատկությունն այն է, որ գտնվում է պետական պաշտոնական կառուցվածքից դուրս, մեկուսացված է աշխարհիկ իշխանությունից։ «Եթե ուղղափառ (սուննիներ) իսլամը թույլ է տալիս ղեկավարի (խալիֆի) ընտրովիության և ճանաչում է աշխարհիկ իշխանության սուվերենությունը, ապա շիա հոգևորականությունը այդ հարցում անհաշտ դիրք է գրավում, հենվելով իր ուսմունքի հիմնական

դոկտրինայի (ավելի ճիշտ՝ դավանանքի։— Ա. Վ.) վրա,— գրում է սովետական պատմաբան Ե. Դորոշենկոն։— Շիաների ուսմունքի համաձայն, որ առաջացել է VII—IX դարերում, միայն Մուհամեդ մարգարեի «սուրբ ընտանիքի» անմիջական ժառանգները կարող են դառնալ մուսուլմանական համայնքի ղեկավարներ... մուսուլման-շիաների ճշմարիտ, «կատարյալ» ղեկավարներ համարվում էին 12 իմամները, մարգարեի ընտանիքի ժառանգները, որոնք իմաստուն էին, սուրբ, բացարձակ գիտելիքների տեր, որ ստացել էին մարգարեից և Մուհամեդից, անցել է նրա հորեղբոր տղային ու փեսային՝ շիաների առաջին իմամ Ալիին, Ալիի որդիներին՝ Հասանին ու Հուսեյնին և մնացած ինը իմամներին... Շիաների մեջ հատուկ նշանակություն ունի մեսիական ուսմունքը։ Այն ծագել է IX—X դարերում... Այդ ուսմունքը հայտարարում է, որ վերջին, տասներկուերորդ իմամ Մահդին (մեսիա) գաղտնի անհետացել է, «թաքնված է», «կենդանի համբարձվել է երկինք» (874 և 878 թվականների միջև) որտեղ կմնա մինչև ահեղ դատաստանի օրը, որպեսզի, վերադառնալով երկիր, ըստ իսլամի, ճշմարիտ արդարություն սահմանի»։ Մինչև այսօր իմամ Մահդին իր «թաքստոցից» ղեկավարում է շիաների համայնքը... Սակայն տասներկուերորդ իմամի «թաքնված» ժամանակ Մահդիի կամքը պետք է կատարեն նրա հավատարիմ անձինք կամ կուսակալները (նաիբները)։

«Այդ ուսմունքը շիա հոգևորականության վերնախավին թույլ էր տալիս բացարձակորեն կամ գաղտնի իշխանության հավակնություն ունենալ կամ ծայրահեղ դեպքում մասնակցել պետության մեջ գերագույն իշխանության իրականացմանը,— շարունակում է Ե. Դորոշենկոն։— Իմամի «թաքնված» լինելու վերաբերյալ ուսմունքը, այսպիսով, իր մեջ պարունակում էր «պայթուցիչ» պոտենցիալ, քանի որ թույլ էր տալիս շահի՝ «ուղուրպատորի» և բռնապետի դեմ օպոզիցիոն շարժմանը տալ օրինականություն և դրանով մոլեռանդ հավատացյալ շիաներին ներգրավել մասնակցելու շարժմանը։ Սակայն դոգմանները «թաքնված» իմամի և աշխարհիկ տիրակալի «ապօրինության» վերաբերյալ ինքնին հազիվ թե ոգևորեին ժողովրդական մասսաներին, եթե դրանք չուղեկցվեին սոցիալական արդարության քարոզներով, որոնք հիմնավորվում էին Ղուրանի սուրահների և այաթների (բանաստեղծությունների) մեջբերումներով՝ «չու-

նևորներին օգնելու, հարուստներին պատժելու» և այլնի անհրաժեշտության մասին»:

Դեռևս XIX դարում շիա հոգևորականությունը հանդես էր գալիս միապետական իշխանության դեմ, օտար միջամտության դեմ ի պաշտպանություն «ճշմարիտ իսլամի» և նրա ավանդույթների: Կրոնական գործիչները մերժում էին և՛ արևմտյան տիպի ռեֆորմները, և՛ արևմտյան մշակույթը, և՛ բացարձակ բռնապետությունը, որը նրանց աչքում ծառայում էր գաղութային իշխանության շահերին: Սակայն 1953 թվականին շիա հոգևորականությունը հանդես եկավ Թուդեի կուսակցության և ձախ ուժերի դեմ, նրանց մեղադրելով «անաստվածության» համար:

Շիա հոգևորականության հակակոմունիզմը կա և մնում է նրա համոզմունքների բաղկացուցիչ մասը: Առաջադիմության և դեմոկրատիայի վերաբերյալ գաղափարները մերժվեցին որպես Արևմուտքից ներմուծված և օտարերկրյա պետությունների կողմից երկրի ստրկացումը քողարկելու նպատակ հետապնդող կոնցեպցիաներ:

Իրանի ավանդական աստվածաբանների կողքին կային շիաների առաջադիմական հոսանքի մտածողներ: Սակայն նրանք վճռական ազդեցություն չթողեցին իրանցիների մտայնության վրա: Ամենահայտնի «ձախ» այաթոլլա էր Մահմուդ Թալեգանին (1910—1979), որը դեմ դուրս եկավ այն օրենքներին, որոնք ապահովում էին մի դասակարգի տիրապետությունը մյուսի վրա և ճնշվածների շահագործումը:

Ռեզա շահին հաջողվեց թուլացնել շիաների վերնախավի ազդեցությունը:

Նա անխնա ոչնչացրեց հոգևորականության թվին պատկանող ակտիվ օպոզիցիոներներին, սահմանափակեց նրանց դերը դատավարության և կրթության ասպարեզում, կրճատեց մուհարրամ ամսին կատարվող սգո ծեսերը ի հիջրատակ մարգարեի թոռան՝ Հուսեյնի, տանջալից մահվան: Հոգևորականությունը շահի լուռ թշնամին էր, և դեռևս 1941 թվականին Ռուհոլլա Խոմեյնին գրում էր. «Մուսուլմանի առաջին պարտականությունը ապստամբությունն է բռնակալության դեմ»:

«Սպիտակ հեղափոխությունը» ավելի շատ սահմանափակեց հոգևորականության դերը կրթության և դատավարության մեջ: Սակայն գլխավոր հարվածը հասցրեց նրա տնտեսական շահե-

րին: Ագրարային ռեֆորմը տարածվեց հոգևորականության նյութական բարեկեցության հիմքը կազմող վակուֆային խոշոր հողատարածությունների վրա: Երբ 70-ական թվականների կեսերին փորձ արվեց կրճատել շուկայի սպեկուլյատիվ գործունեությունը, դա ազդեց նաև նրանց հետ կապված հոգևորականության եկամուտների վրա: Բացի դրանից, 1978 թվականին կառավարությունը մերժեց պետական նպաստ տալ հոգևորականությանը:

Հոգևորականության միջավայրում ավելի ու ավելի բարձր էին հնչում «սոցիալական արդարություն» վերականգնելու «հարստությունը արդարացի բաշխելու», ապօրինությունն ու կաշառակերությունը վերացնելու, բանկերում տոկոսների դանձումը արգելելու պահանջները:

Հասարակական մոդելի բնակչությանը խորթ դրսից և «վերևից» ներմուծված կեղծ արդիականացման քայքայիչ գործունեությունը հարվածեց սոցիալ-հոգեբանական մթնոլորտում վաղուց ստեղծված ավանդական հիմքերին և սահմանակարգերին: Այսպես, գյուղում սոցիալական ապահովության ֆունկցիա կատարող փոխադարձ օգնության և աջակցության ագրարային վերափոխությունների ընթացքում հին ձևերի քայքայումը գյուղական բնակչության մեծաքանակ զանգվածներին զրկեց այն առավելություններից, որոնք բխում էին ավանդական հարաբերություններից, փոխարենը նրանց տալով միայն խորթացածություն քաղաքային կյանքի նկատմամբ կապիտալիստական ինդուստրացման պայմաններում,— գրում է Ս. Աղաևը: Կայուն հոգևոր ավանդույթների և ինքնօրինակ մշակութային արժեքների բուռն խորտակումը ստեղծեց մի տեսակ վակուում, որը, բնականաբար, սկսեց լցվել նրանով, ինչ վերջում մնացել էր «կյանքն» կրոնից.

«Իսլամն ամեն ինչ է»,— մշտապես ասում էր Խոմեյնին: Նվ իսլամը իրոք նրա համար և՛ մարդու բարոյական ինքնակատարելագործման միջոց էր, և՛ հասարակության սոցիալական վերակառուցման զենք: Իսկ և՛ մեկը, և՛ մյուսը նա դիտում էր սերտ փոխադարձ կապի մեջ:

Խիստ քննադատելով արևմտյան քաղաքակրթությունը, ամբողջությամբ մերժելով բուրժուական ապրելակերպը և կապիտալիստական առաջադիմությունը՝ իր մարդկային անհատականության մասնատումով, քաղաքակենտրոնացմամբ և այլն,

Խոմեյնին ժխտում է նաև համաշխարհային սոցիալիզմի նվաճումները, որոնք ըստ նրա ծագել էին աթեիստական հիմքի վրա։ «Ո՛չ աջին, ո՛չ ձախին, այլ իսլամին», «Ո՛չ Արևմուտքին, ո՛չ Արևելքին, այլ իսլամին»,— ասում էր նա, և շատերը կրկնում էին նրան։

Հոգևորականության հեղինակությանը նպաստում էին ոչ միայն հավասարապաշտության լոզունգները և բնակչության լայն խավերի հետ սերտ կապը, այլև այն տանջանքի լուսապսակը, որ ստեղծվել էր իշխանությունների ճնշամիջոցներով, կրոնական գործիչներին ընդհուպ մինչև բանտարկության, կտտանքների, գնդակահարության ենթարկելով։ Մզկիթների միջոցով տարածվում էին հակաշահական գրականություն և մագնիտաֆոնային ձայնագրություններ։

«Քանի որ Իրանում ավանդական հասարակական ինստիտուտների ոչնչացումը չէր ուղեկցվում ժամանակակից քաղաքական (ավելի ճիշտ՝ սոցիալ-քաղաքական։— Ա. Վ.) հիմնարկների ստեղծումով, որոնք ծագում էին սոցիալական անհավասարության նոր հիմքի վրա, տնտեսական անհաջողությունները... և կաշառակերությունը նպաստավոր հող ստեղծեցին բնակչության զգալի մասին՝ կրոնական ավանդույթներին վերադառնալու համար,— շարունակում է Ս. Աղաևը։— Բնակչության լայն զանգվածների համար իսլամի հոգևոր արժեքների մեջ մարմնավորվում էր բարոյական, էթիկական, մարդասիրական և սոցիալական կարգուկանոնի այն կոմպլեքսը, որտեղ արտահայտվում էր նրանց բողոքը ընդդեմ անօրինականության և կամայականության, բարոյազրկության և կաշառակերության, անհատի աստիճանական անկման և մասսաներից իշխանության խորթացածության, ընդդեմ կուտակելու պաշտամունքի և սոցիալական անհավասարության աճի»։

Հոգևորականության կողմից հակադիկտատորական և հակաիմպերիալիստական օպոզիցիայի առաջնորդի դերի կատարմանը շատ բաներում նպաստեց նաև շիաների «դեմոկրատական» կազմակերպությունը։ Նրա համար բնորոշ է ձևական հիերարխիայի և կենտրոնացած մարմինների բացակայությունը որոշումներ ընդունելիս։ «Բոլոր դեմոկրատական ազատությունների ճնշման պայմաններում, երբ մզկիթները միակ միջոցն էին և ապաստարանը ազատ խոսել-արտահայտվելու համար, կրոնական ցանցը, բնականաբար, պատրաստի կազմակերպություն

դարձավ շահի կառավարության օպոզիցիայի համար, շիա հոգևորականությունը՝ հակաբռնապետական գաղափարախոսության կրողը, ուստիև համաժողովրդական բողոքի գլխավոր ղեպանակը, իսկ այաթոլլաները... առաջնորդներ, որոնց շուրջը համախմբվեցին հասարակական լայն խավերը»,— գրում է Ս. Աղաևը։

60-ական թվականների սկզբներին Խոմեյնին հանդես եկավ շահի ռեֆորմների դեմ, շահին անվանելով «սատանա» և «շահագործող», որի համար և բանտարկվեց։ Դա առիթներից մեկը եղավ 1963 թվականի հունիսին Թեհրանում տեղի ունեցած մասսաների անհաջող ելույթի, որը ճնշվեց զենքի միջոցով։ Շահը միջնորդի միջոցով նրան ազատություն առաջարկեց, պայմանով, որ նա Քումից փոխադրվի Մեշհադ։ Խոմեյնին պատասխանեց. «Իսլամի ուսմունքը բարձր է շահի իշխանությունից, և իմ ու շահի ճանապարհները տարբեր են»։ Դրանից հետո շահն անձամբ Խոմեյնիին ասաց. «Ինձ մի՛ ստիպի, որ ես հագնեմ հորս կոշիկը», և որպես պատասխան լսեց. «Հորդ կոշիկը քեզ մի քանի համարով մեծ է»։ Շահը կատաղեց, սակայն, վախենալով հավատացյալներից, հրամայեց ազատել Խոմեյնիին։ Կես տարվա լռությունից հետո այաթոլլան իշխանությանը մեղադրեց պառլամենտական ընտրությունների ժամանակ կատարած խարդախության համար և ենթարկվեց ութամսյա տնային բանտարկության։ 1964 թվականին Խոմեյնիին մեղադրեցին ամերիկյան ռազմական խորհրդատուներին դիվանագիտական անձեռնմխելիության ստատուս տալու համար։ Նույն տարվա նոյեմբերին նրան աքսորեցին Թուրքիա, որտեղ ապրեց 11 ամիս, իսկ հետո փոխադրվեց Իրաք։ Դա այն ժամանակ էր, երբ նորից սրվել էին իրանա-իրաքյան հակասությունները, և Բաղդադի կառավարությունը Խոմեյնիին ապաստան տվեց, որպեսզի Թեհրանի վրա ճնշում գործադրի։ 1977 թվականի նոյեմբերին Խոմեյնիի ատելությունը շահի նկատմամբ նաև անձնական հիմք ստացավ. Նրա որդին՝ Մուսթաֆան, հանկարծակի մահացավ իրեն անհայտ մարդկանց, ըստ երևույթին ՍԱՎԱԿ-ի գործակալների այցելությունից անմիջապես մի քանի ժամ հետո։ Բացի դրանից, այդ ժամանակ Բաղդադը որոշեց ազատվել Խոմեյնիից։ Նա մեկնեց Ֆրանսիա և բնակություն հաստատեց Փարիզի մերձակայքում։

Իսլամական քաղաքական հեղափոխության առաջնահերթ

խնդիրներից մեկը այաթոլլան հայտարարեց իսլամական երկրներում «հակաիսլամական բնույթ» կրող կառավարման և կառավարության ամեն մի ձևի լրիվ լիկվիդացում, «բնաջնջում»։ Ամեն մի աշխարհիկ իշխանություն, ինչ ձևով էլ որ այն իրականացվի, համարվում է աթեիստական իշխանություն, «սատանայի գործ»։

Այաթոլլան գտնում էր, որ «թեև իսլամը պարզ բացատրություն չի տալիս մեր օրերի համար տասներկուերորդ իմամի «թաքնված» ժամանակամիջոցի կառավարման ձևերի մասին, ելնելով Ղուրանի պատվիրաններից, շիաների ավանդություններից և իսլամի միջնադարյան մտածողների մեծ գաղափարներից, կարելի է ենթադրել, որ մուսուլմանական համայնքի կառավարման իդեալը համարվում է իսլամական հանրապետությունը»,— գրում է Ե. Դորոշենկոն։

Հակաիմպերիալիստական պրոպագանդայի հիմքը դարձավ «ջիհադի» սկզբունքը, այսինքն՝ սրբազան պատերազմը բոլոր «անհավատների» դեմ։ Շահի, նրա մերձավորների և օտարերկրյա գաղութարարների նկատմամբ խոմեյնին կիրառում էր նաև Ղուրանի մեջ գրված «թագութի» արտահայտությունը, որը նշանակում է «սատանայի ծառա»։

Շահի և նրա տիրոջ՝ ամերիկյան իմպերիալիզմի, դեմ անհաշտ պայքար մղելու անհրաժեշտությունը դարձավ շիա հոգևորականության քաղաքական պրոպագանդայի առանցքը։

7

ԻՐԱՆ. «ՍԻՐԱՄԱՐԳԻ ԳԱՀԻ» ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

Վարչակարգի հոգեվարքի ջղաձգությունները

Բանտարկությունները, տանջանքները, սպանությունները իրանում չկարողացան ետ պահել աճող հուզմունքները։ 1977 թվականի սկզբին շահը որոշեց օպոզիցիային աննշան զիջումներ անել, թույլ տալ խոսքի որոշ ազատություն։ 1977 թվականի ապրիլից սկսեցին հասարակությանը թույլատրել մասնակցելու որոշ քաղաքական դատական պրոցեսների, իսկ ռազմական տրիբունալներում երբեմն թույլատրել քաղաքացիական դատապաշտպաններին։ Չի բացառվում նաև, որ շահը, հավանաբար, ճիշտ չի հասկացել Վաշինգտոնից եկող ազդանշանները, որտեղ պրեզիդենտ Քարտերը դեմագոգորեն պահանջում էր «մարդու իրավունքների» պահպանում։ Շահը հույս ուներ դժգոհությունը թուլացնել իր բռնապետության ճակատի կոսմետիկական նորոգումով, բայց օպոզիցիայի առաջին իսկ լեգալ ելույթները նրա հիմքում խոր ճաքեր հայտնաբերեցին։ Գրողները, պրոֆեսորները, իրավաբանները սկսեցին բաց նամակներ ու պետիցիաներ գրել, պահանջելով խոսքի իսկական ազատություն, օրինականության վերականգնում։ 1977 թվականի վերջին մտավորականության և «միջին խավերի» ներկայացուցիչները արդեն ստեղծեցին իրենց կազմակերպությունները, որոնք անցկացնում էին հավաքույթներ և պրեսկոնֆերանսներ։ 1977 թվականի հոկտեմբերից ուսանողները համարյա անընդմեջ կազմակերպում էին ցույցեր և գործադուլներ։

Վարչակարգի համար ամենասարսափելին կրոնական օպոզիցիայի աճն էր, որի ետևից գնում էին մասսաները: Նաջաֆից այաթոլլա Խոմեյնին կատաղի համոզվածությամբ հավատացյալներին կոչ էր անում տապալել շահի բռնապետությունը, ազատվել ամերիկացիների ճնշումից, ազատել քաղաքական բանտարկյալներին, ցրել ՍԱՎԱԿ-ը, կրճատել ռազմական բյուջեն: Այդ պահանջների ժողովրդականությունը նրա կողմն էր ձգում նաև այնպիսի կրոնական և աշխարհիկ գործիչների, որոնք չէին ընդունում նրա արմատական հայացքները:

1978 թվականի հունվարի 7-ին «Էթելաաթ» պաշտոնական թերթը վիրավորական հարձակումներով լի հոդված հրապարակեց այաթոլլայի դեմ: Հունվարի 9-ին Քում քաղաքում հոգևորականության կոչով կրոնական ուսումնական հաստատությունների չորս հազար ուսանող դուրս եկան հակակառավարական ցույցի: Զորքերը կրակ բացեցին ցուցարարների վրա՝ սպանելով և վիրավորելով հարյուրավոր մարդկանց:

Դա ժողովրդական հեղափոխության սկիզբը եղավ Իրանում: 40 օր հետո, երբ մուսուլմանական սովորության համաձայն նշում են սգո ավարտը, հակաշահական լոզունգներով փողոց դուրս եկան հարյուր հազարավոր մարդիկ, գործադուլ արեցին շուկաները: Զորքերի հետ ընդհարումները նոր զոհեր տվեցին: Հանուն հավատի շիաների նահատակվելու ավանդույթները, «սատանայի ծառաներից» երկրի ազատագրումը իրանցիներին մղում էին ավելի վճռական գործողությունների: Բոլոր 40 օրերին, իսկ հետո ավելի հաճախ, փողոցները ողողվում էին հակաշահական ցույցերով:

Կրոնամիստիկական սպասումների ընդհանուր ահեղ մթնոլորտը ավելի լարեցին բնական աղետները՝ երկրաշարժերը, որոնք հազարավոր կյանքեր տարան:

Շահը դիմեց նոր զիջումների, 1978 թվականի հունիսին պաշտոնից հեռացրեց ՍԱՎԱԿ-ի շեֆին՝ սադիստ ու մարդասպան Նեմաթոլլա Նասիրիին, փոխեց մի շարք մինիստրների ու չինովնիկների: Մամուլը դադարեցրեց հոգևորականության դեմ կազմակերպված կամպանիան, փակվեցին խաղատները, վերականգնվեց մուսուլմանական թվականությունը, թերթերը առաջին էջերում սկսեցին տպագրել Խոմեյնիի մեծ դիմանկարները:

Իշխանությունների շփոթվածությունը միայն խրախուսեց ժողովրդական ելույթները: Օգոստոսի 19-ին Աբադանի «Ռեքս»

կինոթատրոնում հրդեհ բռնկվեց, ամենասարսափելիներից մեկը, որ երբևիցե կատարվել է XX դարում. պարզվեց, որ դռները փակ են դրսից, համարյա 500 մարդ ողջ-ողջ այրվեցին, խեղդվեցին կամ ոտնատակ եղան: Ժողովուրդը այդ ողբերգությունը վերագրեց ՍԱՎԱԿ-ի գործակալներին: Ատելությունը շահի հանդեպ շիկացավ: 1978 թվականի սեպտեմբերի սկզբին համարյա բոլոր քաղաքներում տեղի ունեցան մասսայական հակաշահական ցույցեր: Նկատվեցին ցուցարարների հետ զինվորների եղբայրացման առաջին դեպքերը: Սեպտեմբերի 8-ին կառավարությունը հայտարարեց ռազմական դրություն, բայց հենց նույն օրը Թեհրանի փողոցները հեղեղվեցին էլեկտրականացված ամբոխներով, որոնք պատրաստ էին հանուն հավատի ընդունել մարտիրոսի լուսապսակը: Զորքերը մայրաքաղաքը ողողեցին արյան վտակներով: Այդ օրը, որ կոչվեց «սև ուրբաթ», օպոզիցիայի տվյալներով սպանվեց մի քանի հազար մարդ:

Բայց շահի բռնապետությունն արդեն փլվում էր: Ցույցերը տեղի էին ունենում համարյա ամեն օր: Ապստամբում էին նավթի և արդյունաբերության այլ ճյուղերի, տրանսպորտի, կապի, բանկերի, մի շարք մինիստրությունների և գերատեսչությունների, մասնավոր հիմնարկությունների բանվորներն ու ծառայողները, ուսուցիչները, ուսանողները: Թեհրանի օդանավակայանը լեփ-լեցուն էր երկրից փախչող հարուստ իրանցիներով, արտասահման էր փոխադրվում օրական 20—50 միլիոն դոլար: Նավթի արտահանումը խիստ ընկավ:

Ֆրանսիայում գտնվող այաթոլլա Խոմեյնին առանց փոխզիջման պահանջում էր շահի տապալում: Ջափավոր օպոզիցիանների ներկայացուցիչների, «լիբերալացման» և «սահմանադրական միապետության» կողմնակիցների ձայները մասսաների մեջ պաշտպանություն չէին գտնում:

Նոյեմբերի սկզբին Թեհրանի գործարար կենտրոնում և մայրաքաղաքի մի շարք այլ շրջաններում հրդեհներ ծագեցին: Բանակը չմիջամտեց: Ամբոխը հարձակվեց բանկերի վրա, որտեղ, 1978 թվականի դեկտեմբերի 4-ին լույս տեսած «Թայմ» ամսագրի խոսքերով, «մուսուլմանական ծայրահեղականները տեսնում են արևմուտքի քայքայման խորհրդանիշը, իսկ ձախերը՝ կապիտալիստական շահագործման առաջադիրքերը»: Միայն մեկ օրվա ընթացքում, 1978 թվականի նոյեմբերի 5-ին, երկրում 7 հազար բանկային բաժանմունքներից 1400-ը ենթարկվեցին

հարձակման։ Ցուցարարները հրկիզում էին շենքերը, փաստաթղթերից խարույկներ էին սարքում, կոմպյուտերների ժապավենները ծվեն-ծվեն էին անում ու գցում կրակը։ Կողոպտվեցին հարուստ խանութները։

Նոյեմբերի 6-ին շահը ստեղծեց ռազմական կառավարություն-շտաբի պետ գեներալ Գ. Ազխարիի գլխավորությամբ, հրամայեց ձերբակալել վարչակազմի մի շարք նշանավոր գործիչների, որոնց թվում նախկին պրեմիեր մինիստր Ա. Խովեյդին և Ն. Նասիրիին՝ ՍԱՎԱԿ-ի նախկին շեֆին, որը 12 տարի ղեկավարում էր այդ գաղտնի ոստիկանությունը։ Շահը արդեն չէր վերահսկում իրադրությանը, անընդհատ ամերիկացիներից օգնություն էր խնդրում, իրար հակասող կարգադրություններ էր տալիս գեներալներին, որոնք պահանջում էին ճզմել ելույթները ցանկացած արյան գնով։

Մասսաների գլխավոր լոզունգների մեջ, «իսլամական հանրապետություն» ստեղծելու պահանջների կողքին, ավելի ու ավելի հաճախ էին լսվում կոչեր՝ «Յանկինե՛ր, կորե՛ք ձեր տները», «Իմպերիալիստնե՛ր, դո՛ւրս Իրանից»։

Այդ ժամանակ Իրանում կային գրեթե 41 հազար ամերիկյան քաղաքացիներ։ Նրանք դարձան իրանցիների բացառիկ ատելության օբյեկտ։ «Անիծված յանկիներ»,— ասված էր թռուցիկների մեջ,— դուք բոլորդ գիտեք շահի գազանությունների մասին։ Թեև բոլոր լիբերալ մարդիկ դատապարտում են դահճին, դուք ձեր անիծյալ պրեզիդենտի հետ միասին օժանդակում եք նրան։ Ահա թե ինչի համար է ամբողջ իրանական ժողովուրդը ատում ձեզ»։ Սկսվեց ամերիկյան քաղաքացիների մասսայական փախուստը Իրանից։

Դեկտեմբերի սկզբից նավթահանքերում նորից բռնկվեցին մասսայական գործադուլները, չնայած որ կառավարությունը քարձրացրել էր աշխատավարձը։ Արդյունաբերական պրոլետարիատը համարյա ամենուրեք մերժում էր վերևից իրենց վզին փաթաթվող արհմիության ղեկավարներին և ստեղծում էր սեփական մարտական գործադուլային ու գործարանային կոմիտեներ։

Մասսաների մեջ որոշակի ազդեցություն ունեին «ֆիդայիների» և «մոջահեդինների» կազմակերպությունները։ Նրանց կողմնակիցների թիվը աճում էր։ Բայց հոգևորական առաջնորդների ազդեցությունը «ֆիդայիներին» և «մոջահեդիններին»

դրդում էր գործել ընդհանուր պայքարի հունում, հիմնականում խաղաղ միջոցներով, չնայած նրանց բջիջները զինվում և երբեմն էլ ձեռնարկում էին մարտական գործողություններ։

1978 թվականի դեկտեմբերի 11—12-ին, աշուրի՝ մուսուլմանական սգի օրերին, հակայական ցույցերը անցան բացառապես խաղաղ և կարգապահ։ Բանակը չհամարձակվեց ձեռք տալ նրանց։

Դրամայի վերջին գործողությունը

1978 թվականի դեկտեմբերի վերջին ամերիկացիների խորհրդով շահը առաջարկեց Շահպուր Բախտիարին, որը Ազգային ճակատի ղեկավարությունում գրավում էր երկրորդ տեղը, կազմել կառավարություն։ Դա եղավ նշանակալի զիջումների գնով չափավոր օպոզիցիայի հետ փոխզիջման հասնելու վերջին ուշացած փորձը։ Բախտիարը խոստացավ վերանայել ռազմական ժամանակի օրենքները, տալ մամուլի և կուսակցական գործունեության ազատություն, ազատել քաղաքական բանտարկյալներին, լուծարքի ենթարկել ՍԱՎԱԿ-ը, դադարեցնել նավթի վաճառքը Իսրայելին և Հարավաֆրիկյան Հանրապետությանը, դուրս գալ ՍԵՆՏՕ-ի կազմից, հրաժարվել Պարսից ծոցում Իրանի «ժանդարմի» դեր կատարելուց, չեղյալ հայտարարել զենքի գնման պայմանագրերի մեծ մասը։ Բախտիարը հայտարարեց, որ շահը շուտով կմեկնի արտասահման։

Չնայած Ազգային ճակատը իր շարքերից հեռացրեց պրեմիեր նշանակված Բախտիարին, նա կառավարությունը կազմեց տեխնոկրատներից, որը հենց սկզբից էլ անզոր գտնվեց։

1978 թվականի դեկտեմբերի վերջին և 1979 թվականի հունվարի սկզբին ցուցարարները ավելի հաճախ էին ընդհարվում զորքերի հետ, երբեմն զինաթափելով ամբողջ ստորաբաժանումներ։ Զինվորները ավելի հաճախ էին հրաժարվում հրամանները կատարելուց, դասալքում էին բանակը։

«Ամբողջ շաբաթվա ընթացքում մայրաքաղաքը և Իրանի շատ խոշոր քաղաքներ կազմալուծվել էին ցուցարարների պարտիզանական տակտիկայից, որոնք պահանջում էին տապալել շահին։ Գոչելով «Մահ շահին» և «Մեզ չեն վախեցնի ձեր թնդանոթներն ու տանկերը» լոզունգները՝ նրանք ամբողջ օրերով կռիվ էին մղում բանակի դեմ,— գրում էր 1979 թվականի հունվարի

8-ին «Նյուսուիկը»։— Հաջորդ օրը անկարգություններն ուժեղացան, մայրաքաղաքում սկիզբ դնելով, հաշված նոյեմբերի սկզբից, ամենաարյունահեղ հինգ օրերի բախումներին։ Ուսանողները Թեհրանի կենտրոնում հարձակվեցին մոտերքում գտնվող ամերիկյան դեսպանատան վրա։ Բացականչելով «Շահը ամերիկացիների կապովի շունն է» և «Մահ Ջիմմի Քարտերին» լոզունգները՝ նրանք քարկոծեցին դեսպանատան շենքը, այրեցին դեսպանության «շևրոլե» ավտոմեքենան, որ կանգնած էր գլխավոր դարպասի մոտ, և փորձեցին գրոհով մտնել դեսպանության տերիտորիան շրջապատող բարձր քարե պարիսպներից ներս... Շաբաթվա վերջում մեկը մյուսի հետևից անապատում հանգան գազի շահերը և նավթի արդյունահանումը դադարեցվեց։ Բենզինը սկսեցին տալ քարտերով»։

Բախտիարի կառավարությանը բոլորն արհամարհում էին։ Խոմեյնին մեջլիսի դեպուտատներին և ռեգենտության խորհրդի անդամներին առաջարկեց հրաժարական տալ։ Շատերն այդպես էլ արեցին։

Ջընդհատվող գործադուլային շարժմանը մասնակցում էին 3—4 միլիոն բանվոր և ծառայող։ Նրանց ղեկավարում էր Իրանի պետական և հասարակական կազմակերպությունների կենտրոնական կոորդինացիոն խորհուրդը, որը միավորում էր հիսունից ավելի մինիստրությունների, հիմնարկների և ընկերությունների ներկայացուցիչների։ Աշխատում էին միայն որոշ գործարաններ, ֆաբրիկաներ և հիմնարկներ, որոնք սպասարկում էին բնակչության անմիջական կարիքները։

Գործադուլ հայտարարեցին բոլոր մինիստրությունների և պրեմիեր մինիստրի գրասենյակի ծառայողները։ Երբեմն ցույցի էր դուրս գալիս համարյա Թեհրանի ամբողջ բնակչությունը։ Դրանց մասնակցում էին համազգեստ հագած զինծառայողների մեծ խմբեր։

Երկրում ստեղծվեց երկիշխանություն։ Բախտիարի կառավարության կողքին, որը հենվում էր ավելի ու ավելի անհուսալի բանակի օժանդակության վրա, ամենուրեք գործում էին հեղափոխական իսլամական կոմիտեներ, հաճախ մզկիթների շտաբակայանների հետ միասին։

Հունվարի 16-ին շահը փախավ Եգիպտոս։

1979 թվականի փետրվարի 1-ին Խոմեյնին վերադարձավ

Թեհրան, որին խանդավառ դիմավորեց ամբողջ մայրաքաղաքի բնակչությունը։

Հենց նույն օրը Թեհրանում ստեղծվեց Խոմեյնիի նշանակած և իրական իշխանություն դարձած իսլամական հեղափոխության ժամանակավոր կոմիտե։ Ե՛վ իսլամական հեղափոխական կոմիտեները, և՛ ձախ ռադիկալ խմբավորումները առանց վերևից եկող ցուցմունքների ուժեղ թափով զինվում էին, մեծ մասամբ հեղափոխության կողմն անցնող զորամասերի օգնությամբ, պատրաստվելով վերջին գոտեմարտին շահի կառավարության դեմ։

«Իսլամական հեղափոխական ուժերի և որոշ ձախ խմբերի միջև ապագա կոնֆլիկտների նշանները ի հայտ եկան արդեն շահի արտասահման մեկնելուց մի քանի օր հետո կազմակերպված մասսայական ցույցերի ժամանակ,— գրում է Ս. Աղաևը։— Ի պատասխան կրոնական շրջանների առաջ քաշած լոզունգների՝ «Մենք չենք սիրում ո՛չ ձախերին, ո՛չ աջերին», «Միակ կուսակցությունը, որ մենք ընդունում ենք, դա Ալլահի կուսակցությունն է», «Ֆիդայիները», օրինակ, առաջադրեցին «Ո՛չ Ալլահին կողմ, ո՛չ Ալլահին դեմ» լոզունգը։ Նրանցից մի քանիսը ուղղակի ասում էին, որ շահի դիկտատուրայից ազատվեցին ոչ նրա համար, որ ընկնեն իսլամական դիկտատուրայի իշխանության տակ»։

Փետրվարի 5-ին Խոմեյնին հայտարարեց Բազարգանի գլխավորությամբ ժամանակավոր հեղափոխական կառավարության ստեղծման մասին։

1979 թվականի փետրվարի 9-ի երեկոյան շահի գվարդիայի ստորաբաժանումները հարձակում գործեցին Թեհրանի մոտ գտնվող ռազմաօդային ուժերի ուսումնական բազայի վրա, որտեղ հաղթեցին հեղափոխական սպաներն ու կուրսանտները։ Դա դատապարտվածների անհուսալի, հանդուգն փորձ էր՝ շուռ տալ հեղափոխության ընթացքը, կատարել ռազմական հեղաշրջում։ Նույն գիշերը «մոջահեդինները» և «ֆիդայիները» շրջապատեցին բազան, կռվի բռնվեցին շահի գվարդիայի հետ և փետրվարի 10-ի առավոտյան ջախջախեցին նրան։ Փետրվարի 11-ին մայրաքաղաքում մարտեր էին մղում «մոջահեդինների» և «ֆիդայիների» զինված ջոկատները, ինչպես նաև կոմունիստներն ու Բախտիարին հավատարիմ զորամասերը։ Իրանի բարձրագույն ռազմական խորհուրդը հրաման արձակեց բոլոր բանա-

կային ստորաբաժանումները ևս տանել զորանոցները և հատարարեց հեղափոխությանը օժանդակելու մասին: Դա գեներալների կապիտուլյացիան էր:

Զինված ելույթը տեղի ունեցավ տարերայնորեն, առանց Խոմեյնիի հրամանի ու գիտության: Ինքը՝ Բազարգանը 1979 թվականի մարտին խոստովանեց. «Մեզ համակեց իրադարձությունների ալիքը, և մենք հանկարծակի հայտնվեցինք իշխանության գլուխ, չհասցնելով նույնիսկ ուշքի գալ: Մենք դրան բոլորովին նախապատրաստված չէինք»:

Հակամիապետական և հակաիմպերիալիստական հեղափոխությունն ավարտվեց, «Սիրամարգի գահը» փլվեց:

Իրանական նոր կառավարությունը հայտարարեց, որ ինքը դուրս է գալիս ՍԵՆՏՕ-ից, որը այդ պահից դադարեց գոյություն ունենալ, հրաժարվեց Պարսից ծոցում «ժանդարմի» իր դերից, լուծեց մի շարք ռազմական և քաղաքացիական պայմանագրեր Ամերիկայի և իմպերիալիստական մյուս պետությունների հետ, չեղյալ հայտարարեց միջազգային նավթային կոնսորցիումի հետ համաձայնագիրը, դադարեցրեց նավթի մատակարարումը պրոիմպերիալիստական և ռասիստական վարչակարգերին:

Բնութագրելով իրանական իրադարձությունները՝ սովետական հետազոտող Ռ. Ա. Ուլյանովսկին այդ հեղափոխությունը իր շարժիչ ուժերով, պայքարի մեթոդներով և սոցիալական արդարության համընդհանուր պահանջներով բնորոշեց որպես ժողովրդական, ուստի և դեմոկրատական, ըստ հիմնական ուղղվածության՝ որպես հակամիապետական, հակաիմպերիալիստական և խիստ հակաամերիկյան, ըստ սոցիալական էության՝ որպես բուրժուական (քանի որ այնտեղ երևան եկած որոշակի հակակապիտալիստական միտումները դեռևս մնացել են չօգտագործված), ըստ գաղափարախոսության և շիա աստվածաբանների ղեկավար դերի՝ որպես իսլամական»:

Ռ. Ուլյանովսկին այնուհետև գրում է. «Իրանական հեղափոխության բարդ և բազմապլանային պրոբլեմների բազմակողմանի և մանրազնին վերլուծությունը հնարավոր է միայն երկար և տքնաջան ուսումնասիրության միջոցով»:

Իրանական հեղափոխության առանձնահատկության վրա ուշադրություն են դարձրել նաև ուրիշ հեղինակներ: Դիմենք Ա. Աղաևի կարծիքին:

«Արևմուտքի օրինակով արագացված կապիտալիստական մոդեռնացման (կեղծ մոդեռնացման:— Ա. Վ.) պրոցեսը առաջ բերեց ավանդական սոցիալական կառուցվածքի կատաղի պատասխան ռեակցիան: Սակայն ավանդականության և մոդեռնացման հարաբերակցությունը ներկայացավ ոչ թե որպես ինչ-որ հնամենի հասարակության և «ժամանակակից» մոդելի հակամարտություն, այլ որպես վատ արտահայտված ազգային զարգացման ուղու համար միանգամայն կոնկրետ կապիտալիստական փորձով պայմանավորված պայքար վեստերնացման («արևմտականացման»:— Ա. Վ.) «վերևից» փաթաթված քաղաքակա-նության դեմ, որն ընդունակ չէ իսկապես մոդեռնացնել արևմտյան հասարակությունը սոցիալական առաջընթացի հիրավի ժամանակակից պահանջների լույսի ներքո: Պատմական զարգացման երկու համեմատաբար դեղինտեգրացված փուլերի ժամանակով կրճատված փոխհատումը Իրանի սոցիալ-քաղաքական ասպարեզում համարյա միաժամանակ որոշեց տարբեր դարաշրջաններին պատկանող այնպիսի գաղափարախոսական հոսանքներ, ինչպիսիք են կրոնական ռեֆորմացիան, իսլամասիրությունը, արևմտականությունը, ձախ ռադիկալիզմը և այլն»:

«Սիրամարգի գահի» խորտակումից հետո հեղափոխության մասնակիցների շարքերում հիմնական քաղաքական և սոցիալ-տնտեսական պրոբլեմների ուղղությամբ սկսվեցին խիստ տարաձայնություններ, որը նրանց զինված պայքարի հասցրեց: Դրսևորվեցին Իրանի դասակարգային կառուցվածքի խայտաբղետությունը, բուրժուական հիմքի վրա դասակարգային գոյացումների պրոցեսների անկատարությունը, երկրի բազմազգ բնույթը:

Մտավորականության և «միջին խավի» շատ ներկայացուցիչներ առաջ քաշեցին պահանջներ, որոնք տատանվում էին բուրժուադեմոկրատականի և սոցիալիստականի միջև: Հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչները («ֆիդայիներ», «մոջահեդիններ») իրենց տարբերությամբ հանդերձ կողմնակից էին ազգային դեմոկրատական պետության ստեղծմանը, որն ընդունակ լիներ իրանական հասարակությանը տանել ոչ կապիտալիստական զարգացման ուղիով: Ազգային ճակատի և բուրժուա-լիբերալ հոսանքի մյուս քաղաքական խմբավորումների կողմնակիցները ցանկանում էին ճանապարհ մաքրել ազգային կապիտալիզմի, կապիտալիստական մոդեռնացման համար, բայց

առանց շահական վարչակարգի շրջանների, պահանջում էին «դե
մոկրատական» կամ «դեմոկրատական իսլամական հանրապետու
թյան» հաստատում, որը ձևով մոտ է բուրժուական դեմոկրա
տիային: Ոչ երկար ժամանակ գոյություն ունեցած ձախ ցենտրիս
տական բնույթի ազգային-դեմոկրատական ճակատ որոշ մաս
նակիցներ գտնում էին, որ արևմտյան տիպի բուրժուական դե
մոկրատիան ամբողջովին ժխտող իսլամի ուսմունքի հիման վրա
հասարակության ստեղծման կուրսի մեջ թաքնված է «Իրանում
ֆաշիստական վարչակարգ ստեղծելու» սպառնալիքը:

Երբ հոգևորականությունը, իշխանությունն իր ձեռքը վերց
նելով, սկսեց հասարակության վզին փաթաթել հարյուրամյակ
ների ընթացքում ստեղծված կրոնական կանոնները: Նա ընդու
նեց արևմտյան տեխնոլոգիան, ռազմական տեխնիկան և կազ
մակերպությունը, սակայն ամբողջությամբ մերժեց հասարակա
կան կառուցվածքի արևմտյան բոլոր ձևերը, գաղափարախոսու
թյունը, իրավունքը, մշակույթը, իսկ այնուհետև սկսեց հար
վածել ձախ, դեմոկրատական ուժերին:

Սուգ Վաշինգտոնում

*1980 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 30-ը «Վաշինգտոն
պոստ» թերթում հրապարակվեց հոդվածների մի շարք, որոնք
հազվագյուտ անկեղծությամբ պատմում էին Քարտերի կառա
վարության վերաբերմունքի մասին՝ Իրանի հեղափոխական իրա
դարձությունների նկատմամբ: Կեղտոտ սպիտակեղենի այդ հա
սարակական լվացքի «գերխնդիրը» պարզ էր. վարկաբեկել Քար
տերին պրեզիդենտական ընտրությունների հենց նախօրյակին:
Սակայն Իրանի հետ կապված վաշինգտոնյան «իշխանության
միջանցքներում» տեղի ունեցած տևական և բարդ պայքարի
մանրամասները, որ ստացել էր թերթը գաղտնի աղբյուրներից,
վատ չէր բնորոշում Վաշինգտոնի քաղաքականության խոր
գաղտնիքները:*

*Շահի անկումը, գրում էր թերթը, ուղեկցվեց պրեզիդենտի
գլխավոր խորհրդականների միջև դաժան պայքարով, որոնք
ձգտելով վերահսկողություն սահմանել արտաքին քաղաքակա
նության վրա, իրենց կանխագուշակումներում թեքվում էին մեկ
այս, մեկ այն կողմ, իրենց տարաձայնություններով կաշկան
դելով քաղաքականությունը: Ազգային անվտանգության գծով
պրեզիդենտի խորհրդական, Զբիգնև Բժեզինսկին, լինելով ան-*

*հաշտ մարդ, վճռականորեն դիմադրում էր մոտեցող «անմիտ»
վախճանին, պահանջում էր ամենադաժան քաղաքական կուրս և
ի վերջո այնուամենայնիվ հաղթեց բոլորին, ովքեր ավելի պարզ
էին տեսնում ապագան: Վենսը զբաղված լինելով այլ գործերով,
մասնավորապես սպառազինության վերաբերյալ Սովետական
Միության հետ բանակցություններով և եգիպտա-իսրայելական
սեպարատ բանակցություններով, տարօրինակ կերպով չէր
լսում տագնապի ազդանշանները հենց պետական դեպարտա
մենտում, երբ դեռևս շատ ուշ չէր որևիցե ազդեցություն գործելու
իրադարձությունների վրա: Եվ ամերիկյան հետախուզությունը,
դատելով ամեն ինչից, դաշնակից երկրներում մասսանների դժ
գոհության իսկական մասշտաբների գնահատման հարցում
դարձյալ լուրջ վրիպում թույլ տվեց:*

*Մոտավորապես օգոստոսին Վաշինգտոնում շատ ազդեցիկ
մարդկանց կաբինետներում հայտնվեց Իրանի դրության վերա
բերյալ ԿՀՎ-ի վերլուծության հերթական նախագիծը: Այն կոչ
վում էր «Իրան. հեռանկարները մինչև 1985 թվականը ներառ
յալ», և այդ զեկուցագրում ասվում էր. «Իրանում չկա հեղա
փոխական կամ նույնիսկ «նախահեղափոխական» իրադրու
թյուն»:*

*Պետական դեպարտամենտում Իրանի վերաբերյալ հետա
խուզական տվյալների վերլուծության գծով մասնագետ Ջորջ
Գրիֆինը գրեց նախագծի վերաբերյալ իր դիտողությունները,
անհամաձայնություն արտահայտելով զեկուցագրի եզրակացու
թյունների հետ: Գրիֆինը խորհրդակցել էր Իրանի գծով փորձ
ված մասնագետ Քերմիտ Ռուզվելտի հետ, որն ասել էր, թե
շահը, ըստ էության, թույլ մարդ է, «ոչ լիարժեք անձնավորու
թյուն», և որ նա դժվար կացությունում կտատանվի և հանձնե
կերի «կամազրկություն»: Քանի որ այդպիսի կարծիք էր հայտ
նվել, ԿՀՎ-ի վերլուծողը՝ զեկուցագրի հեղինակը, նրան շրջա
նառությունից հանել էր:*

*Աբադանի «Ռեքս» կինոթատրոնի հրդեհը Իրանում ոչ միայն
օժանդակեց օպոզիցիոն խմբերի համախմբվելուն, այլև շահի
վրա մեծ ներգործություն թողեց՝ նրան հանելով հավասարա
կշռությունից: Սալլիվենը այն ժամանակ նոր էր վերադարձել
Վաշինգտոնից և հանկարծ տեսավ, որ շահը վստահ չէ իր ուժե
րին, որ նրան թվում է, թե այլևս ոչինչ չի օգնի:*

Սեպտեմբերի 8-ին, հետագայում այդ օրը կոչվեց «սև ուր-

բաթ», շահի զորքերը Թեհրանի ժալե հրապարակում կրակ բացեցին ցուցարարների վրա։ Կառավարության հաղորդմամբ սպանվեց 86 մարդ, օպոզիցիայի կարծիքով սպանվածների թիվը մի քանի հազարից անցնում էր։

Քիմմի Քարտերը ցուցարարների հետ հաշվեհարդարի մասին իմացավ Քեմփ Դևիդում, որտեղ նա, Անվար Սադաթը և Մենահեմ Բեգինը սկսեցին իրենց սեպարատ գործարքը ձևակերպելու հանդիպումը։ Մերձավոր արևելքի գործերով պետական քարտուղարի օգնական Հարոլդ Սոնդերսը պրեզիդենտին ասաց, որ շահը Իրանում առաջվա նման իր ձեռքում է պահում կառավարման սանձերը։ Քարտերը զանգահարեց Թեհրան, որ արյունով էր ողողված, և շահին առաջարկեց իր օգնությունը։ Ամերիկյան ստրատեգները շահի ուժ գործադրելու պատրաստակամությունը գնահատեցին որպես լավ նշան։ Սալլիվենը նշեց, որ ռազմական դրություն մտցնելը վկայում է, որ շահը կրկին իր ուժերի նկատմամբ վստահություն է ձեռք բերել, և զուշակում էր, որ չնայած այն հաղորդմանը, թե բանակի բարոյական ոգին ընկնում է, շահը և նրա զորականները կկարողանան հաղթահարել այդ ճգնաժամը։

Պենտագոնը համաձայնվեց այդ կարծիքի հետ, իսկ պաշտպանության մինիստրության հետախուզական վարչությունն այդ ժամանակ զեկույց հրապարակեց, որտեղ ասված էր, որ, «ինչպես ենթադրում են, շահը իշխանության գլուխ կանգնած կմնա մոտակա տասը տարվա ընթացքում»։

Հոկտեմբերին Սալլիվենը, որը բոլորովին վերջերս այնպես լավատեսորեն էր գնահատում շահի դիրքերը, նորից սկսեց վախենալ, թե իրադարձությունները հսկողությունից դուրս են գալիս։ Իրանական գեներալները սկսեցին պայմանավորվել այն մասին, որպեսզի ամեն ինչ վերցնեն իրենց ձեռքը և երկիրը կառավարեն շահի անունից։

Երբ Սալլիվենը և Իրանում անգլիական դեսպան Անտոնի Փարսոնսը հանդիպեցին շահի հետ, նրանք տեսան, որ շահը վճռական գործողությունների ընդունակ չէ։ Շահը, որ ավելի շատ նման էր շփոթված չինովնիկի, քան գոռոզ միապետի, խնդրեց իրեն խորհուրդ տալ։ Ո՞ւմ պետք է նշանակի և ինչ պաշտոններ։ Պե՞տք է արդյոք իշխանությունը հանձնել զինվորական կառավարությանը։ Զինվորականներին արդյոք թույլ տա՞ ուժ գործադրել, հարկավո՞ր են արդյոք խիստ միջոցները։

Շահի խոսքերով, Վաշինգտոնում Իրանի դեսպան Զահեդին գալիս է Թեհրան՝ լուր բերելով Բժեզինսկուց այն մասին, որ Քարտերի կառավարությունը բառացիորեն պաշտպանում է այն բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են Իրանում կարգուկանոնը վերականգնելու համար։ Բայց ո՞ւր է անմիջական օգնությունը, որ խոստացել է իրեն Միացյալ Նահանգները,— հարցնում էր շահը։

Իրանի դեսպան Զահեդին աշխատում էր ձեռք բերել շահին աջակցելու Քարտերի նոր հայտարարությունը։ Նա կապվեց Բժեզինսկու հետ, զգուշացրեց Ամերիկայում գտնվող շահի մյուս բարեկամներին, այդ թվում նաև Դևիդ Ռոկֆելլերին, Հենրի Քիսինջերին և Ջոն Մաքլոյին։ Ռոկֆելլերը և Բժեզինսկին փորձեցին կապվել մամուլի և կոնգրեսի ներկայացուցիչների հետ, որպեսզի կառավարության վրա ճնշում գործադրեն, նախազգուշացնելով այն մասին, որ Իրանը առանց շահի բավականին արագ «կոմունիստական երկիր» կդառնա։

Նոյեմբերի սկզբին Քարտերը Բժեզինսկուն կարգադրեց զանգահարել շահին և ասել, որ ինքը պաշտպանում է նրան։ Բժեզինսկին նույն երեկոյան զանգահարեց շահին և ասաց, որ Քարտերը հավանություն է տալիս «ցանկացած միջոցի, ինչ նա անհրաժեշտ է համարում գործադրել խաղաղությունը պահպանելու համար»։ Բժեզինսկին կոչ արեց շահին՝ «հարձակվել» ցուցարարների վրա։

Նոյեմբերի 5-ին կաբինետի կազմում չափավոր օպոզիցիայի անդամներ ընդգրկելու շահի փորձերը կանգնեցին փակուղու առջև, երբ Քարիմ Սանջաբին՝ Ազգային ճակատի ղեկավարներից մեկը, Խոմեյնիի հետ միասին պահանջեց, որ շահը հեռանա։

Թեհրանը բոցերի մեջ էր։ Շահն ասաց, որ պետք է թույլ տալ ղեկավորներին՝ իրենց ձեռքը վերցնեն կառավարման սանձերը։ Կազմավորվեց Ազխարիի զինվորական կառավարությունը։ Երկար ժամանակվա ընթացքում շահն առաջին անգամ, Սալլիվենի խոսքերով, թվում է, տիրապետեց իրեն և տրամադրված էր վճռականորեն։ Շահն ասաց, որ նախորդ օրը երեկոյան իրեն զանգահարել է Նելսոն Ռոկֆելլերը, որը խորհուրդ է տվել լինել խիստ, և Քիսինջերը Զահեդիի միջոցով հաղորդել է նրան, որ, միգուցե, ժամանակն է նորից ձերբակալելու բոլոր քաղաքական բանտարկյալներին, որոնք ազատ էին արձակվել։ Շահի եր-

կու դեսպաններին հայտարարեց, որ ինքը համոզված է մի բանում. եթե զինվորական կառավարությունը չվերահսկի կարգուկանոնը, իր՝ շահի համար ամեն ինչ կորած է։

1978 թվականի նոյեմբերին Իրանում ԱՄՆ-ի դեսպան Սալլիվենը Վաշինգտոն՝ ԱՄՆ-ի պետական քարտուղարին գաղտնի հեռագիր ուղարկեց։ Նա թախանձալից պահանջում էր փոխել ամերիկյան քաղաքականությունը պաշարման մեջ գտնվող շահի նկատմամբ։ Իրանում հեղափոխության շիկացումն աճեց, այն տպավորությունն ստեղծվեց, որ շահը դատապարտված է, և որ առաջին շարք է քաշվում, չնայած իր ծեր հասակին, այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնին, որի անձնական հատկությունների և հայացքների վերաբերյալ ամերիկյան քաղաքականության մշակման համար պատասխանատու գործիչները իրականում ոչինչ չգիտեին։

Դեկտեմբերի սկզբին, մուհառամի ժամանակ, ցույցից հետո շահը մնաց գահին։ Սալլիվենը հեռագիր ուղարկեց, որտեղ գրում էր, որ շահն ապրեց ամենադժվար պահերը։ «Անմիջական քաղաքական ճգնաժամը վերջացավ»,— ասված էր այդ հեռագրում։ Քարտերը դեկտեմբերի 12-ի մամուլի կոնֆերանսում ասաց. «Ես կարծում եմ, որ շահը Իրանում կմնա իշխանության գլուխ, որ այսօրվա դժվարությունները կլուծվեն։ Աղետի կանխագուշակությունները, որոնցով հանդես եկան տարբեր գործիչներ, բոլորովին չարդարացան։ Շահն օգտվում է մեր աջակցությունից, նա օգտվում է նաև մեր վստահությունից»։ Պրեզիդենտը հերթական հարձակումը կատարեց ՍՍՀՄ-ի հասցեին։

Դեկտեմբերի 20-ին շահի զինվորական կառավարությունը ղեկավարող գեներալը սրտի ոչ մեծ նոպա ունեցավ, և Սալլիվենին ասաց, որ այլևս չի կարող կատարել իր պարտականությունները։

Սալլիվենը, համոզված լինելով, որ զինվորական կառավարության մեջ պառակտում տեղի կունենա, եթե որոշակի պայմանավորվածության չհասնեն օպոզիցիայի հետ, հեռագրեց Վաշինգտոն և առաջարկեց շտապ Փարիզ ուղարկել բարձրաստիճան մի ներկայացուցիչ՝ Խոմեյնիի հետ հանդիպելու համար։

Թեհրանում շահի վիճակը շարունակում էր վատանալ։ Ցույցերը դառնում էին ավելի հաճախակի։

Շահի զինվորական ղեկավարները պահանջեցին գործի անցնել։ Նրանք պնդեցին, որ շահը իրենց միջից մեկին՝ գեներալ Գուլյամ Օվեյսիին, նշանակի կառավարության գլուխ։

Շահը, ինչպես բազմիցս պատահել էր իրանական ճգնաժամի ընթացքում, խորհրդի համար դիմեց ԱՄՆ-ին, կանչելով Սալլիվենին։ Ի՞նչ անել։

Վենսը համոզվեց, որ, չնայած շահի հետագա թուլացմանը, իրանական միապետի նկատմամբ Քարտերի աջակցությունը մնում է անսասան։

Շահին, պնդում էր Վենսը, հարկավոր է համոզել, որ հրաժարվի գահից։ Եթե հրաժարվի, նրան պետք է առաջարկել երկրից հեռանալ։

Քարտերը Վենսին ասաց, որ ինքը մտադիր չէ ուրիշ երկրի ղեկավարին առաջարկել գահից հրաժարվել։ Վենսն ասաց, որ շահը, դատելով ամեն ինչից, խնդրում է իրեն խորհուրդ տալ, և անգլիացիները ուր որ է խորհուրդ կտան նրան՝ արձակուրդ գնալ։ Վերջ ի վերջո Քարտերը համաձայնեց։

Անգլիայի արտաքին գործերի նախկին մինիստր լորդ Ջորջ Բրաունը, որը շահի թագավորության առաջին տարիներին բարեկամական կապերի մեջ էր նրա հետ, գաղտնի Թեհրան ժամանեց և շահին ասաց, որ նա պետք է հրաժարվի իշխանությունից։ Շահն առաջին անգամ համաձայնեց, որ ինքը պետք է հեռանա Իրանից։ Նույն այդ օրը, ավելի ուշ, շահը պաշտոնապես խնդրեց Բախտիարին՝ իր վրա վերցնել պրեմիեր մինիստրի ֆունկցիաները և քաղաքացիական նոր կառավարություն կազմել։

Մինչդեռ բանակցություններ էին գնում, որպեսզի շահը թողնի Իրանը և կառավարման ղեկը անցնի Բախտիարին, գեներալներից մեկը՝ այն է Մանուչեհր Խոսրոուդադը, բացեիբաց հայտնեց շահին իշխանության գլուխ պահելու նպատակով կատարվելիք «պետական հեղաշրջման» պլանի գոյության մասին։ Գեներալ Ամիր Հուսեյն Ռաբին և մի քանի ավելի երիտասարդ գեներալներ համաձայնեցին, որպեսզի շահը մեկնի, սակայն ցանկանում էին ճնշել շահի օպոզիցիան, քանի որ ամբողջ իշխանությունը պատկանում էր Բախտիարին։

Գեներալների մշակած յուրաքանչյուր սցենար պահանջում էր ԱՄՆ-ի աջակցությունը, և Իրանի զինվորական ներկայացուցիչները մեկը մյուսի ետևից սկսեցին դիմել ԱՄՆ-ին համապատասխան հավաստիացումների համար։

Դեկտեմբերի վերջին Բժեզինսկին առաջարկեց, որ ամերիկյան «Քոնսթելեյշընն» ավիակիրը իր 80 ինքնաթիռներով և 5 հազար նավաստիներով ու օդաչուներով փոխադրվի Պարսից ծոցի շրջան, որպեսզի ցուցադրեն ամերիկյան ներկայությունը և շահագրգռվածությունը Իրանի գործերում: Ազգային անվտանգության հարցերով օգնականը շարադրեց «ճգնաժամի աղեղները» իր տեսությունը, ըստ որի իսլամի երկրների հանգստության բացակայությունը բացատրում էր «սովետական բանսարկություններով»:

Պետական քարտուղար Սայրուս Վենսը ապացուցում էր, որ «Քոնսթելեյշընն» ավիակրի փոխադրումը Պարսից ծոցի շրջան ավելի արժանահավատ կդարձնի Իրանի համար կատարվող սովետական ռադիոհաղորդումները, որոնք գուշակում էին, որ ԱՄՆ-ը ինտերվենցիա կձեռնարկի շահին աջակցելու համար: Պաշտպանության մինիստր Հարոլդ Բրաունը գրավեց միջին դիրք: Վերջիվերջո Քարտերը «Քոնսթելեյշընը» ուղարկեց Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասը, Սինգապուրից ոչ շատ հեռու:

Իրան ուղարկվեց Եվրոպայում ԱՄՆ-ի զինված ուժերի հրամանատար գեներալ Ալեքսանդր Հեյգի այն ժամանակվա տեղակալ գեներալ Ռոբերտ Հայզերը, որպեսզի գնահատի ռազմական հեղաշրջման հնարավորությունները: Հայզերը Թեհրան ժամանեց նոյեմբերի 3-ին: Ժամանումից գրեթե անմիջապես հետո նա հայտարերեց, որ իրանական յոթ գեներալներ մտածել են հենց որ շահը Իրանից մեկնի, կառավարության հսկողությունը վերցնեն իրենց ձեռքը: Ջորքերն ավելի ու ավելի էին մոլեգնում ցույցերը ճնշելու ժամանակ:

Երկրում դրությունն ավելի էր բարդանում:

Հունվարի 13-ի երեկոյան, երբ շահը օրեցօր պատրաստվում էր մեկնել Իրանից, Բախտիարի կառավարությունը կործանման եզրին էր: Հայզերը գտնում էր, որ շղթաներից պետք է արձակել գեներալներին, և իր կարծիքը հայտնեց Բրաունին:

1979 թվականի հունվարի 16-ին շահը մեկնեց Իրանից: Ժողովուրդը հրճվանքի մեջ էր: Շահը մեկնեց Ասուան, որտեղ նրան խնդրել էր այցելել եգիպտոսի պրեզիդենտ Անվար Սադաթը:

Բժեզինսկին գտնում էր, որ շահը առաջվա նման մնում է այն առանցքը, որի շուրջը կարելի է համախմբել իրանական զինվորական ղեկավարներին, և որ ավելի լավ է նա գտնվի մոտերքում, երբ նպաստավոր պահը գա: Բժեզինսկին, ինչպես նախկինում, ընդգծում էր հսկողությունը կոմունիստների ձեռքն անցնելու վտանգը, եթե Խոմեյնիի կրոնական ֆանատիկոսները Իրանում անցնեն իշխանության գլուխ: Վենսը, ընդհակառակը, ապացուցում էր, որ, չնայած ձախ արմատականների խիստ հոգատարությանը համայնքների և բանվորական կազմակերպությունների վրա, ինքը Խոմեյնին թունդ հակակոմունիստ է: Նա ասում էր, որ այաթոլլան կարող է դառնալ կոմունիստական վարչակարգի դեմ ամենահուսալի հենարանը և նույնիսկ, հնարավոր է, կսկսի համագործակցել Վաշինգտոնի հետ:

Միաժամանակ գեներալ Հայզերը համառորեն առաջարկում էր Պենտագոնի շտաբների պետերի կոմիտեին՝ ստիպել իրանական զինվորականությանը գործել, լինի դա Բախտիարի միջոցով կամ առանց նրա օգնության: Եթե զինվորականությունը չկսի գործել մոտակա ժամանակներում, մինչև Խոմեյնիի Իրան ժամանելը, ասում էր նա, չափազանց ուշ կլինի: Պաշտպանության մինիստր Բրաունը Իրանում գտնվող իր ներկայացուցչին կրկին հարց տվեց. «Ժամանակը չէ՞ արդյոք ռազմական հեղաշրջում կատարելու»:

Սակայն Հայզերը աստիճանաբար սկսեց կարծիքը փոխել իրանական գեներալների վերաբերյալ: Նա հաղորդեց, որ զինվորականությունն ի վիճակի է երկրում իր ձեռքը վերցնել իշխանությունը, սակայն նա փորձ չունի և չի կարող երկիրը կառավարել: Նա գտնում էր, որ նպատակահարմար է աջակցել Բախտիարին:

Փետրվարի 1-ին տեղի ունեցավ այաթոլլա Խոմեյնիի հանդիսավոր ժամանումը Թեհրան. նրան դիմավորեցին բուռն ցույցերով:

Վերադառնալով Վաշինգտոն՝ Հայզերը պրեզիդենտ Քարտերին, Բրաունին և Վենսին հայտնեց իրադարձությունների մասին: Նա պնդում էր, որ զինվորական հրամանատարությունը դեռևս գոյություն ունի և պատրաստ է ցույցերը ճնշել, եթե Բախտիարը այդպիսի հրաման տա:

Թեհրանում այաթոլլա Խոմեյնին բազարգանին նշանակեց իր ժամանակավոր հեղափոխական կառավարության պրեմիեր մինիստր: Իսկ Իրանի երկնքում թռչում էին գեներալ Ռաբիի ենթակայության տակ գտնվող ուղղաթիռներն ու ինքնաթիռները:

Երեք օր անց խռովություն բարձրացրած ՌՕՈՒ-ի մի խումբ

սպաներ և շարքայիններ գրավեցին տանկերը և հարձակվեցին Բախտիարի զինված ուժերի շտաբակայանի վրա: Այնտեղ գրաված ամերիկյան զինվորական տասնյակ խորհրդականներ ձերբակալվեցին: Նրանց ազատեցին հաջորդ առավոտյան, երբ Բազարգանը եկավ այնտեղ նրանց փրկելու համար:

Գեներալ Ռաբին պատրաստվում էր հեղաշրջում կազմակերպել և զինվորականության անունից իր ձեռքը վերցնել պետության կառավարումը:

Այդ գիշեր Վաշինգտոնից զանգահարեցին Սալլիվենին և նրան հաղորդեցին Բժեզինսկու հեռախոսագիրը, որտեղ նա հարցնում էր, թե հաջողվե՞ց արդյոք զինվորական հեղաշրջումը, կարողացա՞վ արդյոք զինվորականությունն իր ձեռքում պահել իշխանությունը և տապալել հեղափոխությունը: Ի պատասխան դրա դեսպանն անպարկեշտ հայհոյեց և հարցրեց. «Թարգմանե՞մ լեհերեն»:

Շահի գվարդիայի ջախջախումից հետո գեներալները հրաժարվեցին պայքարից: Իսլամական հեղափոխությունը հաղթեց:

«Վաշինգտոն պոստ» թերթը լոում էր, այնինչ հենց 1978 թվականի նոյեմբերին Սպիտակ տանը լրջորեն քննարկվում էին իրանական գործերին ռազմական միջամտություն ցույց տալու պլանները: Վաշինգտոնում իրենց հարց էին տալիս, չդրդե՞լ արդյոք Իրան «հրավիրելու» ամերիկյան զորքերին և օգտվել այդ «հրավերքից»: Բայց ինչպիսի՞ն կլինի ՍՍՀՄ-ի վերաբերմունքը: Եթե որևէ մեկը հույս ուներ, որ Սովետական Միությունը անտարբեր կմնա անմիջապես իր հարավային սահմաններում գտնվող պետության իրադարձությունների հանդեպ, ապա դրանք խորտակվեցին սովետական ղեկավարության 1978 թվականի նոյեմբերի 18-ի հեղինակավոր հայտարարությամբ.

«...Հաղորդագրություններ են երևում, այդ թվում ռազմական միջամտության հնարավորության մասին (Իրանում:— Ա. Վ.) որոշ առանձին տերությունների կողմից: Ընդ որում չի կարող ուշադրություն չգրավել այն փաստը, որ այդ պետությունների պաշտոնական անձինք փաստորեն չեն ժխտում նման հաղորդագրությունը: Եթե նրանք ժխտում էլ են Իրանի ներքին գործերին միջամտելու փորձերը, ինչպես օրերս այդ արեց ԱՄՆ-ի պրեզիդենտը, ապա իսկույն վերապահություն է արվում, որը բոլորովին չի բացառում այդպիսի միջամտության հնարավորությունը համապատասխան պատրվակով:

Սովետական Միությունը, որը Իրանի հետ ավանդաբար պահպանում է բարիդրացիական հարաբերություններ, վճռականորեն հայտարարում է, որ ինքը դեմ է Իրանի ներքին գործերին միջամտելուն, ում կողմից, ինչ ձևով և ինչ պատրվակով ուղում է լինի այն: Այդ երկրում տեղի են ունենում զուտ ներքին կարգի իրադարձություններ, և դրա հետ կապված հարցերը պետք է լուծվեն իրենց՝ իրանցիների կողմից: Բոլոր պետությունները պետք է հենվեն ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ինչպես նաև ուրիշ միջազգային հիմնադիր փաստաթղթերում նշված սկզբունքների վրա, պետք է հարգեն Իրանի և իրանական ժողովրդի անկախությունն ու սուվերենությունը:

Պետք է պարզ լինի նաև այն, որ յուրաքանչյուր, առավել ևս ռազմական միջամտություն Իրանի գործերին՝ պետություն, որն անմիջապես սահմանակից է Սովետական Միությանը, ՍՍՀՄ-ը կդիտի որպես իր անվտանգության շահերի շոշափում»:

8

«ՔԱՐՏԵՐԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ»

«Եվրոպայում և Մերձավոր արևելքում... Ամերիկան դիտում եմ որպես խելակորույս մի փիղ, որը մոլորվել է և տրորում է բանջարաեռոցները»:

ԱՄՆ-ի պետական քարտուղարի նախկին տեղակալ, բանկիր Ջ. Բոլլ

Վախի ուժգնացումը

Երբ 1979 թվականի հունվարին ընկճված, շփոթված և մահացու հիվանդ շահն արդեն ինքնաթիռ էր պատրաստում Իրանից փախչելու համար, Վաշինգտոնում տենդորեն հաշվում էին քաղաքական, տնտեսական, ռազմավարատեգիական վնասները այդ երկիրը կորցնելու դեպքում և շտապ քավության նոխազ էին փնտրում: Բոլորի համար պարզ էր, որ իրանական հեղափոխությունը տեղի ունեցավ ներքին պատճառների հետևանքով և, մասնավորապես, պատասխան էր ամերիկյան քաղաքականությանը: Սակայն խոստովանել, դա նշանակում էր ընդունել իր արտաքին քաղաքականության մի շարք հիմնորոշ կոնցեպցիաների պատմական դատապարտվածությունը: Շտապ պահանջվում էր ամերիկյան դժբախտությունների սկզբնապատճառը փնտրել «սովետական դավերի և մեքենայությունների» մեջ և դրանում համոզել ԱՄՆ-ի հասարակական կարծիքին, իսկ այնուհետև մյուս երկրներին:

Հենց այն ժամանակ թերթերի և ամսագրերի էջերը սկսեց զբաղեցնել կատաղի «ռուսական արջը», որը պատրաստվում է կուլ տալ քնքուշ Արևմտյան Եվրոպային և չարագործ կերուխու-

մի ժամանակ խմել մերձավորարևելյան նավթը: Այդ բնավ ոչ օրիգինալ պրոպագանդիստական գծի և՛ փաստերը, և՛ պատճառաբանությունները կազում էին, թեև բավականաչափ հույզեր առաջացրին:

Ամերիկյան «Թայմ» շաբաթաթերթը 1979 թվականի հունվարի 15-ի համարում դիմեց հենց նման պատկերի: Նրա կազմի վրա պատկերված է մեր մոլորակի այն մասը, որ ընդգրկում է Պակիստանը, Աֆղանստանը, Իրանը, Մերձավոր արևելքը, Եթովպիան: Կիսալուսնաձև կորացած այդ շերտի վրա, Պարսից ծոցի հետ միասին վերևից կախվել է չար և ագահ աչքերով արջի գլուխը: Համարի հիմնական նյութը գնում է «Ճգնաժամերի աղեղը» վերնագրի տակ: «Կասկածից վեր է, որ Սովետական Միությունը շահագրգռված է իր ազդեցությունը տարածել Ընդնաժամով բռնված ողջ գոտու վրա,— գրում էր «Թայմը»:— Գործերի վիճակը այնքան էլ չի փոխվել ցարիզմի ժամանակներից սկսած: 1775 թվականին հրապարակվեց Պետրոս Մեծի վերջին կամքը, որտեղ նա ռուսական թագավորներին կտակում էր. որքան հնարավոր է մոտեցեք Կոստանդնուպոլսին և Հընդկաստանին: Ով իշխում է այնտեղ, նա կլինի աշխարհի տիրակալը...»:

Այնուհետև «Թայմը» շարադրում է Պետրոս Առաջինի բացահայտ կեղծ «քաղաքական կտակը»: «Այն մոգոնված էր XVIII դարում ֆրանսիացի արկածախնդիր դը Սոնի կողմից,— նշում է սովետական պատմաբան Ֆ. Նեստերովը:— Կեղծիքը առաջին անգամ հրապարակվեց ոչ թե 1775 թվականին, այլ 1812-ին անձամբ ֆրանսիական կայսեր ցուցումով, որը ցանկանալով արդարացնել իր ագրեսիան Ռուսաստանի դեմ, վկայակոչում էր ռուսական «զավթողական մտադրությունները»: XIX դարում պատմաբանները մերկացրին կեղծարարությունը, ընդ որում տարբեր երկրների մասնագետների կարծիքը, այդ թվում նաև ֆրանսիացիներինը, այդ հարցում միասնական էր: 1941 թվականի նոյեմբերին «Պետրոս Առաջինի վերջին կամքը» միաժամանակ հայտնվեց «երրորդ ռայխի» մի քանի թերթերի էջերում, իսկ դրանից 40 տարի անց այդ ստի էստաֆետը խլեց հարգանքի հավակնություն ունեցող ամերիկյան ամսագիրը: Ընդ որում փորձեր էին արվում կեղծ բացատրություն տալ համաշխարհային ասպարեզում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքին, ստվեր գցել ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականության

վրա, վերածնել «սովետական ռազմական սպառնալիքի» մասին առասպելը։

«Ռուսական արջը կարող է մեզ ճզմել»,— գոռում էին ֆրանսիական աջ թերթերը։ Բրիտանական Բի-բի-սի կորպորացիան պատրաստեց և հեռուստատեսության էկրաններում ցուցադրեց «Արջը շեմքին է» զրպարտչական հեռուստաֆիլմը, որտեղ Սովետական Միությունը ներկայացված է որպես ագրեսիվ տերություն։

Այդ ամբողջ աղմուկ-աղաղակը բացարձակորեն կապ չուներ Պարսից ծոցի ավազանում տեղի ունեցող իրադրության հետ։ Այն ապահովում էր պրոպագանդիստական քողարկումը լիցքաթափումից դեպի առճակատում տանող այն արտաքին քաղաքական շրջադարձի համար, որի մասին մենք արդեն գրել ենք։ Առավել կարճաժամկետ պլանով «սովետական ռազմական սպառնալիքով» վախեցնելը նախատեսված էր Արևմտյան Եվրոպայում միջին հեռավորության միջուկային նոր հրթիռների տեղադրման վերաբերյալ ՆԱՏՕ-ի դեկտեմբերյան (1979 թվականի) որոշման նախապատրաստության համար։

Սակայն վերադառնանք Պարսից ծոցի ավազանում տեղի ունեցող իրադրությանը և «Թայմ» հանդեսի հիշատակված համարին։

«Ճգնաժամի աղեղը տարածվում է Հնդկական օվկիանոսի ափի երկարությամբ և բաղկացած է սոցիալական ու քաղաքական անկայուն կառուցվածք ունեցող երկրներից, մեզ համար շատ կարևոր այն շրջանում, որ սպառնում է հիմա կտրուկտոր լինել,— գրում էր հանդեսը։— Քաղաքական քաոսը, որը կարող է ծագել դրա հետևանքով, միանգամայն կարող են լրացնել այն տարրերը, ովքեր թշնամի են մեր արժեքներին և համակրում են մեր հակառակորդներին։ Ավելի լայն ընդգրկումով ճգնաժամի այդ աղեղը, ինչպես այն պատկերանում է ազգային անվտանգության գծով պրեզիդենտ Քարտերի օգնականին, ձգվում է Հնդկաչինից մինչև Աֆրիկայի հարավային վերջավորությունը։ Գործնականում, սակայն, Բժեզինսկին նկատի ունի այն երկրները, որոնք տեղադրված են Սովետական Միության հարավային թևում, Հնդկաստանից մինչև Թուրքիա, այնուհետև դեպի հարավ, Արաբական թերակղզուց մինչ Աֆրիկյան եղջյուրի շրջանը։

Այդ աղեղի ծանրության կենտրոնը համարվում է Իրանը, որը

նավթի արտադրությամբ աշխարհում գրավում է չորրորդ տեղը և երկու տասնամյակից ավելի է Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի ռազմական ու տնտեսական հզորության պատվարն է։ Այժմ Մոհամեդ Ռեզա Փահլավի շահի կառավարումը վերջանում է։ Սակայն ինչպիսի կառավարություն էլ անցնի իշխանության գլուխ այդ ստրատեգիական տեսակետից չափազանց կարևոր երկրում, դա անպայման կանդրադառնա ամբողջ շրջանի քաղաքականության և ամբողջ աշխարհի գեոպոլիտիկայի վրա»։

Այնուհետև տեսության հեղինակները կայսերական ստրատեգներին հատուկ անսահման մեծամտությամբ, չգարշելով ստից և փաստերի խեղաթյուրումից, պիտակներ են կպցնում մի ամբողջ շարք երկրների և ժողովուրդների վրա, հաշվի չնստելով այն բանի հետ, թե դա որքան վիրավորական կարող է հնչել։

«Ճգնաժամով բռնված շրջանի տարածքը հսկայական է։ Այն ներառում է Հնդկաստանը, որը երբևէ եղել է խիտ բնակեցված դեմոկրատական պետությունը աշխարհում, իսկ հիմա դարձել է քաղաքականապես միմյանցից անջատված, անհանգիստ, անգործունակ կառավարությամբ մի երկիր, որը ծվատվում է ներքին երկպառակություններից. աղքատ Բանգլադեշը. անկայուն Պակիստանը, որտեղ ոչ ազդեցիկ ռազմական վարչակարգը ներկայումս մտածում է այն մասին, որպեսզի մահապատժի ենթարկի տապալված պրեմիեր մինիստր Զուլֆիկար Ալի Բհուտտոյին, ինքնակալ, բայց փայլուն քաղաքական գործչին, որը իր երկիրը բարձրացրեց փլատակներից, այն բանից հետո, երբ 1971 թվականին Հնդկաստանը նրան ջախջախիչ հարված էր հասցրել. հյուսիս-արևմուտքում՝ Աֆղանստանը, որտեղ կառավարությունը անցյալ տարի գրավելով իշխանությունը, աշխատում է իր հսկողությանը ենթարկել բազմաթիվ ցեղերից բաղկացած, աշխարհում ամենաչկառավարվող հասարակություններից մեկին. արևմուտքում՝ Թուրքիան, որը ծվատվում է կրոնական անմիաբանությունից և քայքայվում սոցիալական կայունության բացակայությունից։ Անմիջապես Իրանից դեպի հարավ, Պարսից ծոցի հակառակ կողմում Սաուդյան Արաբիան է, որի ավանդական միապետական կարգերը դեռևս մնում են անձեռնմխելի, բայց որը, այնուամենայնիվ, չափազանց խոցելի է։ Եգիպտոսը, որին սննդակությունից փրկում են Սաուդյան Արաբիայի դրամական ներարկումները, բախվում է չափից ավելի խիտ բնակչություն ունեցող քաղաքներում սկսված հուզումների պրոբ-

չեմին։ Հարավում գտնվում է Սուդանը իր չափավոր կառավարությամբ, որ հազիվ է փրկվել պետական հեղաշրջման երկու անհաջող փորձերից, որին դրդել էր ռադիկալ Լիբիան։ Սաուդյան Արաբիայի հարավային թևում ընկած է Հարավային Եմենը, որի ռադիկալ կառավարությունը խրախուսում է հարևան Օմանում ծավալվող հուիների։ Կարմիր ծովի հակառակ ափին, Աֆրիկյան եղջյուրի շրջանում, Եթովպական վարչակարգն է, որ դըլխավորում է փոխգնդապետ Մենգիստու Մարիամը։ Մտորելով Հնդկական օվկիանոսի ավազանում գտնվող երկրների անցած շաբաթվա բարդ պրոբլեմի շուրջ, Բժեզինսկին եզրափակեց. «Պետք է հիմար կամ միամիտ լինել, որպեսզի չտեսնել հորիզոնում կուտակվող մռայլ ամպերը»։

Այդ ամպերի բնույթը զարմանալիորեն փոխվում է երկրից երկիր։ Նավթով հարուստ մի շարք երկրներ, ինչպիսիք են Իրանը, Սաուդյան Արաբիան և նույնիսկ Իրաքը, սկսեցին ավելի դժվար կառավարվել «նավթադոլարների» պատճառով։ Մյուսները սարսափելի աղքատ են։ Երրորդները, ինչպես նաև «երրորդ աշխարհի» մեծ մասը, էկոնոմիկայի տեսակետից բավականաչափ զարգացած չէին։ Ամբողջ շրջանի բնորոշ գիծը ներքին խոցելիությունն է, որն առաջացել է այն բանից, որ դրանք ընկած են ստրատեգիական տեսակետից շատ կարևոր տարածքի կենտրոնում»։

Իսկ ո՞րտեղ մնաց «Պետրոս Մեծի կտակով» ղեկված Սովետական Միությունը։ Ո՞րտեղ է հանգստության գլխավոր խոռվողը։ Ահա նա.

«Թեև անհերքելի ապացույցներ չկան այն բանի համար, թե ռուսները Իրանում քայքայիչ գործունեություն են տանում, ցանկանալով շահից ազատվել, կամ որ նրանք գաղտնի փորձում են տապալել մյուս վարչակարգերը «ճգնաժամի աղեղի» շրջաններում, բայց միանգամայն հնարավոր է՞, որ ժամանակի ընթացքում Սովետական Միությունում նավթը պակասի, որը նրան անհրաժեշտ է իր զարգացող էկոնոմիկան վառելիքով ապահովելու համար։ Այսպիսով, 80-ական թվականներին այդ շրջանը հեշտությամբ կարող է դառնալ միջազգային կոնֆլիկտի կենտրոն։ Միացյալ Նահանգները, տվյալ պահին, հավանաբար, պատրաստ չեն այն բանին, որպեսզի ընդունեն նման մարտահրավերը»։

Փայլուն և անբասիր տրամաբանություն է. «ռուսների քայ-

քայլ գործունեության» ապացույցներ չկան, ՍՍՀՄ-ը առայժմ նավթի ամենախոշոր արտահանողն է, բայց «հնարավոր է», որ շուտով նրան չբավականացնի վառելիքը, և այդ ժամանակ նա, միգուցե, սկսի շարժվել դեպի Պարսից ծոց։ ԱՄՆ-ը պետք է պատրաստվի «նման մարտահրավերի»։ Փաստեր չկան, բայց դրանք կարող են լինել, իսկ եթե այդպես է, ուրեմն պետք է գործել։

«Ամերիկյան ստրատեգներին, հնարավոր է, ամենից շատ անհանգստացնում է այն, որ Իրանում տեղի ունեցող բարդությունները կարող են անմիջապես ներգործել Սաուդյան Արաբիայի վրա,— գրեց «Թայմը»։— Իրենք՝ սաուդացիները գտնում են, որ նրանց շրջապատում են թշնամական վարչակարգերը, հարավարևմուտքում՝ Եթովպիան, հարավում՝ Հարավային Եմենը, հյուսիսում՝ Աֆղանստանը իր նոր ձախ կառավարությամբ, իսկ Պարսից ծոցի հակառակ կողմում՝ Իրանը, ծվատված քաղաքացիական խռովություններից։ Սաուդացիները վախենում են, որ անբարյացակամ հարևանները կարող են խեղդել Սաուդյան Արաբիային, փակելով նրա ելքը դեպի ծով (Պարսից ծոցի գետաբերանը և մուտքը դեպի Կարմիր ծով) և սպառնալիք ստեղծել նավթահանքերի համար։ Ջնայած Սաուդյան Արաբիայի և Արևմուտքի վերջին ժամանակների տարաձայնություններին, նրա քաղաքականությունն առաջվա նման մնում է հակակոմունիստական և հակասովետական»։

«Ի՞նչ ընդհանուր բան կա «ճգնաժամի աղեղի» մյուս գըլխավոր երկրների միջև,— հռետորական հարց է տալիս հանդեսը և պատասխանում.— Աննկայունությունը, մուսուլմանական կրոնը, ուժեղ նացիոնալիզմը, և գրեթե ուրիշ ոչինչ։ Որքան էլ տարօրինակ է, ամենից շատ նմանություն կա Եգիպտոսի և Իրանի միջև, թեև առաջին երկիրը ընդունված է անվանել «Մերձավոր արևելքի հավիտենական հիվանդը», իսկ երկրորդը, չնայած այսօրվա գժտություններին, ունի այնպիսի տնտեսական պոտենցիալ, որը կարող է նրան թույլ տալ մնալու տվյալ շրջանի մասշտաբով գերիշխող տերություն։

Իրաքը, որը նավթի քանակով Մերձավոր արևելքում գրավում է չորրորդ տեղը, բացի 700 մղոն երկարությամբ սահմանից, Իրանի հետ ընդհանուր շատ բան ունի, մասնավորապես, այնտեղ, ինչպես նաև Իրանում, բնակչության մեծ մասը մուսուլման-շիաներ են։ Իրաքը նույնպես տնտեսական զարգացման

Հանդուգն ծրագիր է մշակել, և այնտեղ նույնպես մեծ իշխանություն ունի ոստիկանությունը։ Սակայն իրաքցիները քիչ շանսեր ունեն այն բանի համար, որպեսզի արտահայտեն իրենց անբավականությունը կառավարությունից։ Բաղդադի վարչակարգը բարեկամական հարաբերություններ է պահպանում Մոսկվայի հետ, թեև իրաքյան նացիոնալիզմը խանգարում է նրանց միջև ավելի սերտ հարաբերություններ ստեղծելուն։ Իրաքցիները կամաց-կամաց ամրապնդում են բարեկամությունը և համագործակցությունը պահպանողական սաուդացիների հետ։ Պաշտոնապես արաբական երկրների պետությունների և կառավարությունների ղեկավարների խորհրդակցությունը Բաղդադում հրավիրվել էր այն բանի համար, որպեսզի քննարկեին Քեմփ Դևիդում ձեռք բերված պայմանավորվածությունը։ Պրագմատիզմի ևս մեկ հաղթանակ ցուցադրելով գաղափարախոսության նկատմամբ, Իրաքը փորձեց կանխապես ապահովել Իրանի հետ համագործակցությունը՝ երկրի հյուսիսային մասում քրդերի խռովությունը ճնշելու համար։ Վարելով մոլի հակախորհրդայական և հակաամերիկյան արտաքին քաղաքականություն՝ նա դեմ չէր առևտրական գործարքներ կնքել ամերիկյան ֆիրմաների հետ։

Իրադրությունը Պակիստանում չափազանց անկայուն է։ Պակիստանը կառավարում է մուսուլման-պուրիստ գեներալ Մոհամեդ Զիյա-ուլ-Հակը։ «Ինձ անհանգստացնում է այն,— ասում է արևմտյան դիվանագետներից մեկը,— որ այդ երկրում կարող է գտնվել իրենց քաղաքին, պակիստանյան բանակի արմատական ինչ-որ մայոր կամ գնդապետ։ Մի գեղեցիկ օր կարթնանանք և կհայտնաբերենք, որ նա գրավել է Զիյա-ուլ-Հակի տեղը, և համարձակվում եմ ձեզ հավաստիացնել, որ Պակիստանը միակ երկիրը չի լինի, որտեղ դրա հետևանքով կխախտվի հավասարակշռությունը»։

Սովորաբար ազդեցիկ շաբաթաթերթերում տպագրված նման հոդվածներում թաքնված է ոչ միայն մոտակա ժամանակի գործողությունների ծրագիրը և նրա պրոպագանդիստական արդյունքացումը, այլև «գերխնդիրը»։ Ներկա հոդվածում այն թաքնված է մի նախադասության մեջ. «Ինչ վերաբերում է Քարտերի կառավարությանը, նրա գործունեության պատմությունն իրենից ներկայացնում է, համենայն դեպս առաջին հայացքից, լիակատար շփոթության և անզորության տխուր տեսարան»։ Հանդեսը, արտահայտելով ամերիկյան կառավարող վերնախավի աջ շրջանների կարծիքը, Քարտերի վարչակազմին մղում էր ոչ միայն ավելի դաժան և արկածախնդրական արտաքին քաղաքական կուրսի, այլև կամաց-կամաց հասարակական կարծիք էր նախապատրաստում էլ ավելի աջ կառավարության անցնելու համար։ Այդ միտքը հաստատում է «Վաշինգտոն պոստ» թերթում 1979 թվականի հունվարի սկզբին տեսաբան-«ճուռակների» Ռ. Էվանսի և Ռ. Նովակի հրապարակած հոդվածը, որոնք մասնագիտացել են հակասովետական ռազմական պսիխոզ հրահրելու մեջ։ «Անցած շաբաթ պրեզիդենտը գաղտնի հրաման արձակեց, որպեսզի ամերիկյան ՌՇՈՒ-ի 7-րդ նավատորմի կազմում գտնվող ավիակիր օպերատիվ միավորումը Ֆիլիպինների բազայից մեկնի Հնդկական օվկիանոս, որպես ուշացած նախազգուշացում այն բանի, որ Արևմուտքը հատուկ հետաքրքրություն է հանդես բերում Իրանի հանդեպ»,— հաղորդեցին նրանք։ Անգլիայի պահպանողական կառավարության նախկին պրեմիեր մինիստր Հարոլդ Մակմիլանը Լոնդոնում «Ատլանտիկ Ռիչֆիլդ» ընկերության ներկայացուցիչների համար կազմակերպված ոչ պաշտոնական ճաշկերույթի ժամանակ հայտարարեց. «Արևմուտքի համար դրությունը այնքան վատ է, որքան դա հնարավոր է, և քանի գնում ավելի է վատանում։ Եվրոպացիները գործ ունեն ամերիկյան ամենաթույլ կառավարության հետ, որ ես տեսել եմ իմ ամբողջ կյանքի ընթացքում»։

Ավելի քան մեկ ամիս անց, 1972 թվականի փետրվարի 12-ին, նույն հեղինակների նոր սադրիչ հոդվածը.

«Մի բարձրաստիճան ամերիկացի պաշտոնյա վերջերս վերադարձավ Սաուդյան Արաբիայից և արեց հետևյալ գաղտնի նախազգուշացումը. Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքը, ցնցված Իրանում ԱՄՆ-ի աղետալի անհաջողություններից, կորցրել է վստահությունը Ջիմմի Քարտերի Վաշինգտոնի նկատմամբ։ Ամերիկայի համար ամենաանգնահատելի, նավթ ունեցող դաշնակից՝ Սաուդյան Արաբիայից եկած այդ տագնապալի լուրը պարզաբանում է, թե ինչու է պրեզիդենտը որոշել էր-Ռիյադ ուղարկել պաշտպանության մինիստր Հարոլդ Բրաունին։ Նա Պենտագոնի առաջին ղեկավարներից էր, որ այցելեց անապատի այդ թագավորությունը»։

Երբ Հ. Բրաունը վերադարձավ Մերձավոր արևելքի մի շարք երկրներ կատարած ուղևորությունից, նա Ջ. Շլեսինջերի հետ

միասին կտրականապես պնդում էր Պարսից ծոցի շրջանը ամերիկյան ռազմական ուժեր ուղարկելու անհրաժեշտության մասին։

Ձգտելով փակել «ստրատեգիական ճեղքվածքը», որ առաջացել էր ամերիկյան դիրքերում Մերձավոր և Միջին արևելքում «սիրամարգի գահի» կործանումից հետո, Վաշինգտոնը այստեղ սկսեց կենտրոնացնել իր ռազմական ուժերը։ Զափազանց ուշադիր վերաբերմունք սկսեցին դրսևորել այդ ռեգիոնում մնացած դաշնակիցների կամ հաճախորդների մասնավորապես Իսրայելի և, Եգիպտոսի նկատմամբ։ Եվ Թել Ավիվն ու Կահիրեն ամերիկյան կոչերին վերաբերվեցին «խելացիորեն» և պատրաստակամություն հայտնեցին աջակցել ամերիկյան քաղաքականությանը այդ ռեգիոնում։ Իսրայելի և Եգիպտոսի միջև տարաձայնությունները ծագեցին հիմնականում այն հարցի վերաբերյալ, թե ով ինչ տեղ կզրավի նախագծվող ալյանսի և գնի մեջ, որը նրանք ձգտում էին շահել դրանից։

Թեև շահական վարչակարգի անկումը թուլացրեց Իսրայելի դիրքերը ռեգիոնում, այն ավելի մեծացրեց Թել Ավիվի արժեքը Վաշինգտոնի աչքում։ Հանձին Իրանի՝ Իսրայելը կորցրեց միակ բարեկամական պետությանը Մերձավոր և Միջին արևելքում, զրկվեց իրանական նավթի մատակարարումներից (նախկինում՝ նրա սպառման 60 տոկոսը)։ Այդ պատճառով Թել Ավիվում սկսեցին ընդգծել ամերիկա-իսրայելական տնտեսական, քաղաքական և ստրատեգիական շահերի ընդհանրությունը, պարծենալ «իրենց վարչակարգի կայունությամբ», «իրենց բանակի հզորությամբ», որն ընդունակ է, իսրայելական զեկավարների խոսքերով, ավելի լավ և արդյունավետ ապահովել «համագործակցությունը Արևմուտքի շահերը պաշտպանելիս», քան ցանկացած «չափավոր» արաբական պետության բանակ։ Որպես «ԱՄՆ-ի ամենահուսալի դաշնակից», Իսրայելը ակնկալում էր ամերիկյան օգնության առյուծի բաժինը։

Իրեն 300 F-16 կործանիչ, հարյուրավոր տանկեր, հազարավոր զրահամեքենաներ, հրթիռներ և այլ մարտական տեխնիկա մատակարարելու խնդրանքով ԱՄՆ-ին դիմել էր նաև Եգիպտոսը, ենթադրելով, որ Վաշինգտոնը, զբաղված լինելով նոր հավատարիմ հաճախորդներ փնտրելով, նույնքան իր կարիքն ունի, որքան Իսրայելի։

Ռեգիոնում Իսրայելին համարելով իր ամենագլխավոր դաշնակիցը, ԱՄՆ-ը զգում էր նաև կենտրոնական, ամենախոշոր և ուժեղ արաբական պետության՝ Եգիպտոսի կարիքը։ Նա շատ անհրաժեշտ էր Վաշինգտոնին նաև որպես կապող օղակ նույն այդ Իսրայելի և պրոամերիկյան կողմնորոշում ունեցող արաբական երկրների միջև։ «Թել Ավիվ—Կահիրե» առանցքը պետք է դառնար պրոամերիկյան ռազմաքաղաքական խմբավորման հիմքը Մերձավոր արևելքում։

Դրա համար ԱՄՆ-ը արագացրեց 1979 թվականի մարտին Հաշտության կնքումը Կահիրեի և Թել Ավիվի միջև։ Սինայի նկատմամբ տահմանափակ սուվերենություն ստանալու համար Եգիպտոսը հրաժարվեց պաղեստինցիներին աջակցելուց և ամբողջ ծավալով հարաբերություններ հաստատեց Իսրայելի հետ։ Դա հանգեցրեց Եգիպտոսի հետ արաբական երկրների մեծ մասի դիվանագիտական հարաբերությունների խզմանը և Մերձավոր արևելքում նրա դերի լիակատար մեկուսացմանը։

Ի տարբերություն Կահիրեի, արաբական երկրների մեծ մասը, այդ թվում նաև պահպանողականները, չէին վստահում և նույնիսկ դատապարտում էին Իսրայելի հետ Եգիպտոսի սեպարատ խաղաղության պայմանագիրը և ռազմաքաղաքական միության ստեղծման պլանները, որտեղ Իսրայելին տրվում էր գերիշխող դեր։ «Չափավոր» արաբական պետություններին իսրայել-եգիպտական համաձայնությանը միացնելու փորձերը հաջողությամբ չպսակվեցին։

Դեռևս 1979 թվականի մարտ ամսից, այսինքն՝ մինչև Իրանում ամերիկյան պատանդների պրոբլեմի առաջանալը, մինչև աֆղանական իրադարձությունները, Ազգային անվտանգության խորհուրդը և շտաբների պետերի կոմիտեն արդեն սկսեցին քննարկել պարբերաբար Պարսից ծոցի շրջանը ծովային հետևակով և ավիացիայով ռազմանավերի ջոկատներ ուղարկելու, ինչպես նաև Հնդկական օվկիանոսում ևս մեկ մշտական ստրատեգիական ավիակիր խումբ ստեղծելու պլանները։ Ընդլայնվեցին Դիեգո-Գարսիայի բազաները, փնտրում էին նորերը։

ԱՄՆ-ը սկսեց կազմալուծել Հնդկական օվկիանոսը ապառազմականացնելու վերաբերյալ և՛ Սովետական Միության հետ համաձայնության գալու բանակցությունները, և՛ միջազգային կոնֆերանսները։

Հնդկական օվկիանոսում առանձին նավատորմ ստեղծելու պլանները քննարկվել են ԱՄՆ-ում դեռևս 60-ական թվա-

կաններին և 70-ական թվականների սկզբին։ Սակայն այն ժամանակ դրանից հրաժարվեցին, առաջին հերթին ֆինանսական նկատառումներից ելնելով։

Սակայն ռազմածովային ուժերի օգտագործումը միշտ էլ եղել է ամերիկյան գլոբալ քաղաքականության մի մասը։ Վաշինգտոնում Բրուքինգի ինստիտուտի տվյալներով 1946 թվականից մինչև 1975 թվականը ԱՄՆ-ը իր զինված ուժերը 215 անգամ օգտագործել է սահմանից դուրս, ընդ որում 177 դեպքում՝ ՌՕՈՒ-ի ծավալմամբ ինչպես «դիվանագիտական» (ուժերի ցուցադրում), այնպես էլ ռազմական խնդիրներ իրականացնելու համար։

Ամերիկյան ՌՕՈՒ-ի մերձավորարևելյան օպերատիվ միավորումը ստեղծվեց 1948 թվականին, երեք ոչ մեծ ամերիկյան նավեր տեղավորվեցին Բահրայնում։ 1972 թվականի հունվարից Սուեզից դեպի արևելք ընկած շրջանը հանձնվեց 7-րդ (խաղաղօվկիանոսյան) նավատորմի զոնայի պատասխանատվությանը, իսկ Արևելյան Միջերկրական ծովը Սուեզից դեպի արևմուտք շրջանի՝ 6-րդ նավատորմի զոնայի պատասխանատվությանը։ Հիշեցնենք, որ այն ժամանակ Սուեզի ջրանցքը դեռևս փակ էր։ Հնդկական օվկիանոսի ավազանում անցկացվում էին զորախաղեր ու զինավարժություններ ԱՄՆ-ի ՆԱՏՕ-ի, ՍԵՆՏՕ-ի և ԱՆԶՅՈՒՍ-ի բլոկների նրա դաշնակից երկրների նավերի մասնակցությամբ։ 1971-ից մինչև 1979 թվականի հուլիսը Հնդկական օվկիանոսում եղել են ամերիկյան 18 ավիակիր միավորումներ, և ավելի քան 20 անգամ ամերիկյան նավերը շտապել են այստեղ՝ «ուժերը ցուցադրելու» ընդդեմ առաջինյա, այդ թվում արաբական, պետությունների։

1979 թվականին, համաձայն դեռևս 1977 թվականին Քարտերի ստորագրած ՊԴ-18 գաղտնի հրահանգի, լրիվ թափով ընթանում էր «արագ ծավալման ուժերի» կազմավորումը։ Ինչպես գրում էր ամերիկյան նշանավոր մասնագետ Մ. Քլերը, որը վերլուծում էր «Միլիտարիզմը և զինաթափումը» հետազոտական ծրագիրը, խոսքը գնում էր Վաշինգտոնի համար ոչ ձեռնտու փոփոխությունների դեպքում «օտարերկրյա պետության սահմաններում ներխուժելու և նրա տարածքը օկուպացնելու համար հատուկ ուժեր ստեղծելու բավականին հին նախագծի» մասին։ Պենտագոնի լեզվով, գրում էր Մ. Քլերը, դա նշանակում է, որ նման ուժերը պետք է ընդունակ լինեն, «ճնշելով զինված դիմադրությունը, թափանցելու մեծ հեռավորության վրա գտնվող թշնամու գրաված տերիտորիան»։

«Արագ ծավալման ուժերը» կարող էին մարտի մեջ նետվել «ԱՄՆ-ի համար կենսական կարևոր շրջաններում ներքին անկարգություններ» առաջանալու, Արևմուտքին նավթ մատակարարելու կարևոր ուղիների շրջափակման և «թշնամական ուժերի ներխուժման» դեպքում։ ԱՄՆ-ի համար ամենահարմար տարբերակը նախատեսում էր, որ Մերձավոր արևելքում «որևէ նավթարդյունահանող երկիր կխնդրի ԱՄՆ-ի միջամտությունը», սակայն առանց այդ խնդրանքի էլ ինտերվենտների զորքերը պետք է պատրաստ լինեն «արագորեն արձագանքելու ուղղակի սպառնալիքին»։

Նոր հին կոնցեպցիաներ

Իր պրեզիդենտության սկզբում Ջ. Քարտերը, անդրադառնալով Վիետնամում ինտերվենցիայի դառը փորձին, ասել է. «Մենք կրակի օգնությամբ պայքարում էինք կրակի դեմ, չմտածելով, որ կրակը ավելի լավ է հանգցնել ջրով։ Այդ մոտեցումը տապալվեց, և Վիետնամը օրինակ է ծառայում նրա մտավոր և բարոյական աղքատության»։ Երեք տարի անց ամերիկյան վարչակազմի ղեկավարը առաջ քաշեց կայսերական հավակնությունների վրա հիմնված իր սեփական դոկտրինան։ Այն շարադրված էր «Երկրի դրության մասին» ուղերձի մեջ, որը կոնգրեսին էր ուղարկվել 1980 թվականի հունվարի 23-ին։

Դոկտրինան հռչակվեց պրոպագանդայի խլացնող նվագակցությամբ, որը փորձում էր այն տպավորությունն ստեղծել, իբրև թե «ռուսական արջը» կամ «մուսուլմանական ֆանատիկոսները» ուր որ է կկտրեն Պարսից ծոցի նավթի հոսքը։

«Ժամանակի ընթացքում ամբողջ աշխարհի կախվածությունը Պարսից ծոցի նավթից, հավանական է, կաճի,— գրում էր ԱՄՆ-ի պրեզիդենտը կոնգրեսին հղած իր ուղերձում։— Մեզ կամ ուրիշներին նավթ մատակարարելուց հրաժարվելը սպառնալիքի տակ կդնի մեր անվտանգությունը և կառաջացնի էլ ավելի խոր տնտեսական ճգնաժամ, քան 50 տարի առաջ տեղի ունեցած մեծ դեպրեսիան էր։ Անցյալ տարի մենք սկսեցինք ընդլայնել մեր զինված ուժերի փոխադրման հնարավորությունը դեպի Պարսից ծոց, իսկ հիմա ուսումնասիրում ենք այդ շրջանում ռազ-

մական օբյեկտների առավել ակտիվ օգտագործման հնարավորությունը։ Մենք ավելացրինք մեր ռազմածովային ներկայությունը Հնդկական օվկիանոսում։ Մեր արագ ծավալման ուժերը... կարելի էր օգտագործել Պարսից ծոցի և Հարավարևմտյան Ասիայի շրջանի բարեկամ կառավարություններին աջակցելու համար, ինչպես նաև մյուս շրջաններում... Նավթի այդ հոսքի հանդեպ կրկնակի սպառնալիքը,— ռեգիոնալ կայունության բացակայության հետևանքով, իսկ այժմ նաև Սովետական Միության կողմից ենթադրվող,— պահանջում է, որպեսզի մենք ամուր պաշտպանենք մեզ համար կենսականորեն կարևոր շահերը, երբ նրանց վտանգ է սպառնում»։

Սովորաբար ԱՄՆ-ի պրեզիդենտների նման ուղերձները վերաբերում են գլխավորապես ներքին հարցերին։ Բայց այս անգամ ներքին սոցիալ-տնտեսական պրոբլեմները թվարկված էին կարծես ոտքի վրա։ Հիմնական ուշադրությունը դարձված ռազմաստրատեգիական խնդիրներին։ «Սառեցնելով» OCB-2 պայմանագրի վավերացումը՝ կառավարությունը ավելացրեց ռազմական գերատեսչության բյուջեն։

Դեմոկրատների վարչակազմի ռազմամոլությունը պայմանավորված էր, ինչպես արդեն նշվել է, ԱՄՆ-ի կառավարող դասի և նրա կողմից վերահսկվող ինֆորմացիայի մարմինների դեպի աջ ընդհանուր տեղաշարժով, որոնք տապավորություն էին ստեղծում Քարտերի կառավարության թուլության մասին։ Պրեզիդենտը ջանում էր «ուռա հայրենասիրությամբ» գերազանցել հանրապետական հակառակորդներին նախընտրական մրցավազքի ընթացքում։

«Երկրի դրության մասին» ուղերձում հայտարարված մշիոցառումները նախատեսում էին նախօրոք հայտարարված Հընդկական օվկիանոսի ապառազմականացման կուրսի փոխարեն ԱՄՆ-ի «ռազմածովային ուժերի առկայության մեծացում և ուժեղացում», ինչպես նաև ծովային և օդային բազաների ստեղծում՝ «Աֆրիկայի հյուսիսարևելյան շրջանում և Պարսից ծոցում մեր ուժերի օգտագործման համար». Պակիստանին ռազմական և տնտեսական լրացուցիչ օգնության տրամադրում և «այդ շրջանի մյուս երկրների հետ քաղաքական և ռազմական կապերի հետագա ուժեղացում». «համատեղ անվտանգության կառուցվածքի» ստեղծում. զինապարտների զորակոչման վերականգնում՝ «շտապ զորահավաք կատարելու նպատակով, եթե

այդպիսի անհրաժեշտություն ծագի». արտաբահմանում 42վ-ի դիվերսիոն գործողությունների ընդլայնում։

Վաշինգտոնի՝ ուրիշ երկրների և ժողովուրդների ճակատագրերը տնօրինելու դերի հավակնությունը, որ ամբապնդվում էր ռազմական հզորության օգտագործման սպառնալիքով, արտահայտվում էր բավական բացահայտորեն։ Դրանք ոչ նոր էին, ոչ էլ յուրօրինակ։ Ուսումնասիրողները իսկույն նկատեցին Քարտերի ուղերձի նմանությունը 1947 թվականին Տրումենի և 1957-ին էյզենհաուերի առաջ քաշած դոկտրինաների հետ։

«Վերածնելով «սառը պատերազմը»,— գրում էր «Նյուսուիք» հանդեսը,— և Հարավարևմտյան Ասիայում կիրառելով ռազմական սանձահարման դոկտրինան, պրեզիդենտ Քարտերը իրեն երևակայում էր Հարրի Տրումենի ժառանգորդը։ Տրումենի ամերիկյան օգնության ծրագրի 4-րդ կետը տարածվում էր մասնավորապես առանձին երկրների վրա և նրանց կառավարությունների խնդրանքով, իսկ «Քարտերի դոկտրինան» ենթադրում էր ԱՄՆ-ի «ռազմական հովանոցը» փաթաթել միանգամից մի խումբ պետությունների վրին, հատկապես Պարսից ծոցի ավազանում»։

«Միացյալ Նահանգներն իր ազգային շահերի և համընդհանուր խաղաղության համար կենսականորեն անհրաժեշտ է համարում ազգերի անկախության և ամբողջականության պահպանումը Մերձավոր արևելքում... Եվ այդ նպատակի համար պատրաստ է կիրառել «զինված ուժեր»։ Թվում է, թե այս խոսքերը վերցված են «Քարտերի դոկտրինայից», իրականում դրանք հղչակված են «էյզենհաուերի դոկտրինայում» 1957 թվականին, որը հանդեցրեց ամերիկյան ինտերվենցիային Լիբանանում, անգլիականին՝ Հորդանանում, Իրանի սպառազինությանը, ՍԵՆՏՕ-ի բլոկի ուժեղացմանը և վերջիվերջո նախկին կուրսի լիակատար կործանման։

Երկու դոկտրինաներին մերձեցնում էին և՛ պրոիմպերիալիստական վարչակարգերի պաշտպանության գաղափարը, և՛ ճնշումը անկախության կուրս վարող երկրների վրա, և՛ սոցիալիստական պետությունների դեմ գործողություններ վարելու համար պլացդարմի ստեղծումը։

Էյզենհաուերը սահմանեց ԱՄՆ-ի պարտավորությունները. «օգտագործել ռազմական ուժերը՝ օգնություն ցույց տալու ամեն մի երկրի կամ մի խումբ երկրների» միայն այն դեպքում, եթե նրանք խնդրեն այդպիսին, և միայն «միջազգային կոմունիզմի

հսկողության տակ գտնվող պետությունների կողմից զինված ագրեսիան կասեցնելու պատրվակով»։ Քարտերը այդպիսի «իրավունք» էր վերապահել իրենց առանց նույնիսկ որևէ պետության կողմից օգնության համար ԱՄՆ-ին դիմելու և ոչ միայն նրա դեմ «զինված ագրեսիայի» դեպքում, այլև «Պարսից ծոցի շրջանում հսկողություն սահմանելու որևէ կողմնակի ուժի ամեն մի փորձի դեպքում»։

«Քարտերի դոկտրինայի» մեջ դիտմամբ չի նշվում, թե ինչ պետք է հասկանալ Պարսից ծոցի գոտում «որևէ կողմնակի ուժի կողմից հսկողություն սահմանելու փորձ» ասելով և ինչպիսի շրջանակներով է սահմանափակվում այդ շրջանը, որ մրցնում է «ԱՄՆ-ի շահերի համար կենսականորեն անհրաժեշտ ոլորտի մեջ»,— գրում է սովետական պատմաբան Լ. Մեդվեդկոն։— Պարզ է, որ այդպիսի անորոշ և բազմանշանակ ձևակերպումների նպատակն է՝ օգտագործել... քաղաքական իրադարձությունները, որոնք վերաբերում են միջպետական հարաբերություններին կամ սոցիալական փոփոխություններին այդ ռեգիոնում, ԱՄՆ-ի ուղղակի զինված ագրեսիայի համար»։

«Քարտերի դոկտրինայի» ամենավտանգավոր մանրամասներից մեկը հենց այն է, որ ԱՄՆ-ը իսկապես այդ պահին ի վիճակի չէր սովորական միջոցներով Պարսից ծոցի ավազանում լայն մասշտաբի ինտերվենցիա սկսելու համար։ «Արագ ծավալման ուժերը» արդեն ստեղծվել էին, բայց պատրաստ չէին անհապաղ գործողություններին։ Ուստի Պարսից ծոցը «բոլոր միջոցներով» պաշտպանելու մտադրության վերաբերյալ պրեզիդենտի հայտարարությունը ԱՄՆ-ի ստրատեգիական պարտավորությունների պլանում այդ շրջանը դրեց Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի կողքին։ Վերածնվեց «կենտրոնացած հատուցման» դալեսյան գաղափարների տարբերակը։ «Դա, ըստ երևույթին, ենթադրում է միջուկային հովանոցի տարածումը այդ ամբողջ շրջանում, քանի որ մեր մնացած ռազմական հնարավորությունները մոտակա հեռանկարում խիստ սահմանափակ են,— գրում էր ամերիկյան «Ջոռնել օֆ քոմմերս» թերթը։— Քարտերը ինչ-որ միջուկային վերջնագիր ձևակերպեց այն իմաստով, որ ավազի վրայի գիծը, որ քաշել էր նա Պարսից ծոցի գոտու շուրջը, կարելի է պաշտպանել միայն միջուկային զենքով... Պենտագոնը ստիպված էր կրկին ընդգծել սահմանափակ միջուկային պատերազմի դոկտրինան, ազդարարելով հակառա-

կորդի ռազմական օբյեկտներին մասնակի միջուկային հարվածներ հասցնելու ԱՄՆ-ի պատրաստակամության մասին... Այդ օպերացիաները կարելի է իրականացնել ինքնաթիռների օգնությամբ, որոնք բազավորված են Արաբական ծովում գտնվող ամերիկյան ավիակիրների վրա։ Հիրավի սահմանափակ միջուկային պատերազմի այդ ստրատեգիայի վախեցնող տարրը, որը միշտ առաջ է բերել ամերիկացիների տագնապը, այն է, որ պաշտպանության մինիստր Բրաունը համոզված չէ, թե ընդհանրապես հնարավոր է նման տիպի սահմանափակ պատերազմ մղել։ Բերենք նրա խոսքերը. «Ես բնավ էլ համոզված չեմ, թե այն օպերացիան, որ սկզբում կլինի ստրատեգիական ուժերի ցուցադրում կամ նույնիսկ խիստ վերահսկողության ենթարկվող ուժերի կիրառում ավելի լայն նպատակների համար, կհաջողվի զսպել և թույլ չտալ նրան վերաճելու ոտոտալ ջերմամիջուկային պատերազմի»։ Պենտագոնը նույնիսկ սկսել է վերանայել հակառակորդի նավթահանքերը խլելու համար նեյտրոնային զենքի օգտագործման հարցը, առանց որևէ լուրջ նյութական վնաս պատճառելու նրան»։

Պրեզիդենտ Տրումենի կողմից Եվրոպան, իսկ էյզենհաուերի կողմից Մերձավոր և Միջին Արևելքը ԱՄՆ-ի համար «կենսականորեն անհրաժեշտ շահերի» ոլորտն ընդգրկելը այստեղ հանգեցրեց ռազմական դաշինքի՝ ամերիկյան հովանու ներքո ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի ստեղծմանը։ Եվ այս անգամ Վաշինգտոնը, գիտակցելով, որ ԱՄՆ-ի զինված ուժերը Պարսից ծոցի ավազանում սահմանափակված են, փորձեց ստեղծել ինչ-որ ձևի ռազմական դաշնակցություն։

Գործնական քայլեր

«Նոր ստրատեգիայի» հռչակումից մի շաբաթ էլ չանցած Քարտերը ամերիկյան թերթերի մի խումբ խմբագիրների հետ զրուցելիս խոստովանեց, որ դրա իրականացման համար «Միացյալ Նահանգներին անհրաժեշտ կլինի ստանալ այն ամբողջ օգնությունը, ինչ հնարավոր է ստանալ իր հին ու նոր բարեկամներից», քանի որ ԱՄՆ-ը այդ շրջանում «բավականաչափ ռազմական հզորություն և բավականաչափ ռազմական առկայություն չունի, որպեսզի միակողմանիորեն ապահովի նրա պաշտպանությունը»։ Պենտագոնում գտնում էին, որ առկա ամերիկ-

յան ուժերը, որոնք հնարավոր է փոխադրել Պարսից ծոցի շրջան, բավարար չեն հարյուր հազարավոր քառակուսի կիլոմետրերով անապատում ցրված նավթահանքերը զրավելու համար։ Ուստի 1980 թվականի փետրվարին հույժ շտապ Եվրոպա, Մերձավոր արևելք, Պարսից ծոցի շրջան և Աֆրիկա ուղարկվեցին ամերիկյան կառավարության բարձրաստիճան էմիսարներ, որպեսզի, «նյուսուիկ» հանդեսի արտահայտությամբ, «միս աճեցնեն քարտերյան դոկտրինայի կմախքին»։

«Ռեգիոնալ մարիոնետներին ռազմական օգնություն ցույց տալը սովորաբար դիտվում է որպես միջոց արտաքին սպառնալիքներից պաշտպանվելու և ներքին քաղաքական կարգերին աջակցելու համար,— գրում էր «Ջոռնել օֆ քոմմերսը»։— Վիետնամից և Իրանից հետո կորավ վստահությունը այն բանի, թե ԱՄՆ-ի մատակարարած զենքը ընդունակ է այդ գործում օգնելու։ Ամեն դեպքում Քարտերի կառավարությունը մտադիր է կարճաժամկետ ծրագրում ամրապնդել անվտանգությունը Պարսից ծոցի շրջանում զենքի նոր խոշոր մատակարարումների և պաշտպանական պարտավորությունների օգնությամբ, որոնք, ինչպես նա հույս ունի, կհանգեցնեն առավել պաշտոնական ռեգիոնալ պաշտպանական համաձայնագրերի ստեղծմանը Մերձավոր արևելքում Ամերիկայի կարևորագույն դաշնակիցների միջև։

Սակայն Իրանում նույնիսկ պահպանողական մուսուլմանական վարչակարգերը վախենում էին Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի հետ չափազանց սերտ համագործակցությունից, հաշվի առնելով բնակչության խիստ հակաամերիկյան տրամադրությունը։ Այդ տեսակետից բնորոշ է Սաուդյան Արաբիայի դիրքը։ Ողջունելով ամերիկյան ռազմական ներկայությունը այդ շրջանի «հորիզոնի հետևում», էր-Ռիյադը մերժեց ռազմական բազաներն անմիջապես Սաուդյան Արաբիայի տարածքում պաշտոնապես տեղադրելու գաղափարը։

Այդ ժամանակ ԱՄՆ-ը փորձեց հնարավորություն ստանալ մուտք գործելու դեպի Օմանի, Սոմալիի, Քենիայի, Եգիպտոսի բազանները, հույս ունենալով այնտեղ բավարարվել ամերիկյան փոքրաթիվ զինծառայողներով, սակայն փոխարենը ստեղծել ճարտարական տեխնիկայով և ռազմական ինֆրակառուցվածքով ընդարձակ պահեստներ, որոնք պատրաստ կլինեն օգտագործելու «արագ ծավալման ուժերի» կողմից։ Պարսից ծոցի գոտու

և Կարմիր ծովի ավազանի մի շարք ծովային նավահանգիստներում նախատեսված էր պահել «լողացող զինանոց»՝ տանկերով, հրետանիով և ծանր տեխնիկայի այլ տեսակներով բեռնավորված փոխադրանավեր, որպեսզի այդ շրջան ժամանած զորքերը իսկույնևէթ կարողանան օգտվել դրանցից։

Ամերիկյան գործակալները նորից մեկնեցին Մերձավոր արևելքի, Աֆրիկայի և Արևմտյան Եվրոպայի երկրները, փորձելով «Քարտերի դոկտրինայի» կողմնակիցներ հավաքագրել, իսկ ամերիկյան ռազմածովային ուժերի զարգացումը Հնդկական օվկիանոսում հասավ աննախադեպ չափերի։ 1979 թվականի ապրիլի 1-ին ամերիկյան ռազմանավերի ընդհանուր թիվը Հնդկական օվկիանոսում հասավ 31 միավորի, ներառյալ երկու ավիակիր, հրթիռային հածանավեր և ֆրեգատներ՝ 24 հազար զինծառայողներով։ Նրանց մեծ մասը երթևեկում էր անմիջապես Պարսից ծոցի գոտու մոտակայքում։

1980 թվականի մարտին Պենտագոնը պաշտոնապես հայտարարեց, որ «արագ ծավալման» հարյուր հազարանոց կորպուսը ստեղծվել է՝ սկսել է գործել նրա շտաբկայանը։ Մարտի կեսերին արդեն Արաբական ծով ժամանեցին մի քանի տասնյակ դեսանտային նավեր և 1800 ծովային հետևակայիններ։ Ինչպես հաղորդել է «Վաշինգտոն պոստ» թերթը, «պաշտպանության մինիստր Բրաունի ցուցումով Պենտագոնը ձեռնարկեց Պարսից ծոցի ականապատման մանրամասն սխեմայի նախապատրաստությանը»։

Դիեգո-Գարսիա կղզում՝ Հնդկական օվկիանոսում Պենտագոնի գլխավոր բազայում, շուրջ 25 քառակուսի կիլոմետր մակերեսով արդեն կառուցվել են չորս տասնյակ օբյեկտներ, կառանացցեր՝ ցանկացած ջրատարողության մարտական նավերի համար, «B-52» ռմբակոծիչներ ընդունել թույլատրող մինչև չորս կիլոմետր երկարություն ունեցող թռիչքավայրէջքային գոտի, ռազմամթերքների պահեստներ և ավիակիր միավորումներին ու ստորջրյա նավակներին ապահովելու համար մինչև 100 հազար տոննա տարողության վառելիքաքսուքային նյութեր... Բազայում տեղավորեցին հեռավոր շառավղով գործողության ռմբակոծիչների և հետախուզական ինքնաթիռների մի քանի էսկադրիլիա։ Բազայի անձնակազմը 1980 թվականի հունվարի 1-ին հաշվվում էր 1100 մարդ։ Դիեգո-Գարսիա կղզում արագորեն առաջ էր գնում ռազմական համալիրի հետագա ընդլայնումը։

Արդեն մի քանի տարի Պենտագոնը օգտագործում էր օմանական Մասիրու կղզին, որն ընկած է Արաբական թերակղզու ափերին, Պարսից ծոցի մատույցներում: Այդ կղզում ընդլայնվեցին անգլիացիների կողմից ամերիկացիներին տրամադրվող ռազմական կառույցները: Մարտի վերջին Սոմալին ստիպված էր խոստովանել, որ ամերիկյան զինված ուժերին Ադենի ծոցում գտնվող բերքերում բազա է տրամադրել: Քենիայի նավահանգիստներում հայտնվեցին ամերիկյան ռազմական նավերը:

ԱՄՆ-ի զինված ուժերին իր տարածքում մի շարք ռազմական կառույցներ և այլ օբյեկտներ տրամադրեց Ավստրալիան: Մարտի կեսերին Ավստրալիայի պրեմիեր մինիստր Մ. Ֆրեյզերը պատրաստակամություն հայտնեց Միացյալ Նահանգներին մշտական օգտագործման տալ մայրցամաքի արևմտյան ափին գտնվող Կոկբեռն-Սաունդ ռազմածովային բազան: Ավստրալիայի կառավարությունը որոշեց Հնդկական օվկիանոս ուղարկել իր «Մելբուռն» ավիակիրը մի խումբ նավերի ուղեկցությամբ:

Ապրիլի սկզբին հրապարակված անգլիական «Պաշտպանության հարցերով սպիտակ գիրքը» հաղորդում էր Մեծ Բրիտանիայի ռազմանավերը ուղարկելու մասին, իբրև թե «Սուեզից արևելք» ընկած շրջաններում ՆԱՏՕ-ի երկրների և նրա դաշնակիցների «շահերը պաշտպանելու» նպատակով:

Հնդկական օվկիանոսում Ֆրանսիայի համագործակցության վրա մեծ հույսեր էին կապում Վաշինգտոնում: Այդ երկիրը 70-ական թվականներից Հնդկական օվկիանոսում զգալի ուժեր էր պահում Կարմիր ծովում. նախկին Ջիբուտի գաղութի նավահանգստում ուներ զորքերի բավական պատկառելի քանակազմ՝ մի քանի հազար զինվոր: ԱՄՆ-ում հույս ունեին, որ «արտակարգ պարագաներում» հնարավոր կլինի այդ շրջանում Ֆրանսիայի հետ գործողությունները կոորդինացնել:

«Հրետանավակների նորոգված դիվանագիտության» կիրառման ընդլայնմանը հանգեցնող գործոններից մեկը համարվում է ժամանակակից ռազմածովային նավատորմիղի (դրանց այնպիսի բնութագրերի շնորհիվ, ինչպիսիք են արագաշարժությունը, գործնականում երկրագնդի ցանկացած կետին հասնելու հնարավորությունը, ամենաարդիական զինվածությամբ, նեբռայալ նաև հրթիռամիջուկային զենքով հանդերձված լինելը, ամենատարբեր ռազմաքաղաքական խնդիրներ կատարելու ընդունակությունը,— գրում են սովետական հետազոտողներ Յու. Բար-

սեղովը և Ե. Նիկոլսկայան:— Այն հանգամանքը որ, լինելով «լողացող տարածք», նավը խորհրդանշում է պետության ռազմական հզորությունը, այն օգտակար է դարձնում մոլորակի ամենատարբեր կետերում արագորեն կիրառելու համար: Ռազմատեխնիկական առաջընթացի շնորհիվ էական վերափոխության ենթարկվեցին «հրետանավակների դիվանագիտության» նյութական միջոցները: Երբեմնի գծանավերի տեղը գրավեցին ավիակիրները, հրթիռային նավերը, ատոմային սուզանավերը, ավիացիայով ուղեկցվող նավերի արմադան»:

Տեղի էր ունենում «արագ ծավալման ուժերի» զարգացում: Պենտագոնին մոտ կանգնած «Ավիեյշըն ուիք էնդ սփեյս թեքնոլոջի» հանդեսը հաղորդում էր, որ 1980 թվականի հուլիսին Նաթա անապատային նահանգի տարածքում անցկացվեցին «արագ ծավալման ուժերի» իրենց ստեղծման ժամանակից ի վեր ամենախոշոր զինավարժությունները: Այդ զորախաղերը, որին մասնակցում էին հատուկ ստորաբաժանումների մեծ թվով ցամաքային զորքեր, ինչպես նաև ավելի քան 150 ինքնաթիռ, անցկացվում էին «Ռեդ Ֆլեգ» ծածկանունն ունեցող ԱՄՆ-ի ՌՕՈՒ-ի մարտական նախապատրաստության ծրագրի շրջանակներում: Զորախաղերի ընթացքում «մարտական գործողությունները» ղեկավարելիս հիմնական դեր խաղացին ԱՎԱԿՍ-ի հեռահար հայտնաբերման և ուղղորդման համակարգի հատուկ ինքնաթիռները: Նևադայում անցկացվող զորախաղերը ներկայացվում էին այսպես կոչված «մերձավորարևելյան սցենարով»:

1980 թվականի նոյեմբերին Եգիպտոսի տարածքում անցկացվեցին ամերիկա-եգիպտական ռազմական համատեղ զորավարժություններ: Դրանց մասնակցում էին «արագ ծավալման ուժերի» քանակակազմը՝ թվով 1400 մարդ, ավիացիան, հրետանին, ավտոտրանսպորտային միջոցները: Կահիրե ժամանեց «արագ ծավալման ուժերի» հրամանատար գեներալ լեյտենանտ Փոլ Քելլին, որը հետևում էր ամերիկա-եգիպտական զորախաղերի ընթացքին՝ 1980 թվականի հունվարին սկսված համատեղ զորավարժություններից արդեն երրորդին և առաջինին, որին մասնակցում էին ցամաքային զորքերը:

Ամերիկյան մամուլը հաղորդեց, որ «արագ ծավալման ուժերի» քանակը որոշված էր հասցնել մինչև 200 հազար զինվորի, գումարած 100 հազար պահեստայիններ: Որպես Պենտագոնի այդ մարտական զորամասերի հիմնամաս առանձնացրին

երեք դիվիզիա՝ 82-րդ հրետանայինը, 101-րդ օդադրոհայինն և 24-րդ հետևակայինը (մեքենայացված), ինչպես նաև ծովային հետևակի և նրան հատկացված ինքնաթիռների մեկ դիվիզիա։ Անհրաժեշտության դեպքում որոշված էր նաև օգտագործել երկու դիվերսիոն-դեսանտային գումարտակ և հատուկ նշանակության զորքերի երկու խումբ։ «Արագ ծավալման ուժերի» տրամադրության տակ դրված էին մի քանի էսկադրիլիա տակտիկական կործանիչներ և «B-52» ռմբակոծիչների էսկադրիլիան։ Ցուցակում մտցված էին ՌՕՈՒ-ի ռազմական-տրանսպորտային ավիացիայի հրամանատարական կազմից բաղկացած ստորաբաժանումը, ՌՄՆ-ի բեռնանավատորմիդի նավեր ու սակրավոր զորքերին աջակցող ստորաբաժանումներ, կապի և սանիտարական զորամասերի զորքեր։

«Քարտերի դոկտրինայի» իրականացումը Միացյալ Նահանգների կողմից չուշացավ։ Սակայն, ինչպես պարզվեց, Վաշինգտոնը առանց հարսի հարսանիք էր պատրաստում։ Նրա պլանները և հատկապես հրապարակային արտահայտությունները սարսափի մեջ գցեցին Պարսից ծոցի գոտու այն պետությունների կառավարողներին, որոնց ԱՄՆ-ը պատրաստվում էր «պաշտպանել»։

Ամերիկյան Յունայթեդ պրես ինտերնեյշնըլ գործակալությունը 1980 թվականի մարտին տարածեց իր թղթակցի ակնարկը, որը պատմում էր Պարսից ծոցի պետություններին վերաբերմունքը Միացյալ Նահանգների քաղաքականության նկատմամբ։ «Քուվեյթի արտաքին գործերի մինիստր շեյխ Սաբահ ալ-Ահմեդ ալ-Ջաբեր աս-Սաբահը, կռացած սեղանին, դանդաղ տարուբերում է գլուխը,— գրում էր թղթակիցը։— Նրա ձայնի մեջ զգացվում է պետական գործչի զրգռվածությունը, որն զգում է, որ իրեն չեն հասկանում։ «Նավթը գնում է անխափան, ուղղակի հիանալի է՛,— ասում է նա։— Ուրեմն էլ ինչի՞ համար են այդ բոլոր հիմարությունները սարքում մեր շրջանում»։

Այսօրվա դրությամբ Պարսից ծոցի երկրների ղեկավարները լրջորեն անհանգստացած են, սակայն բնավ ոչ նրա համար, որ սովետական զորքերը մտել են Աֆղանստան։ Նրանց տեսակետով, դա նրանց անմիջականորեն չի սպառնում։ Տագնապ է ներշնչում, նրանց խոսքերով, պրեզիդենտ Քարտերի «արտակարգ ռեակցիան» աֆղանական ճգնաժամի վերաբերյալ և նրա կողմից միանգամայն անհարգալից վերաբերմունքը այդ շրջանի պետությունների շահերի ու ակնկալումների նկատմամբ»։

«Քուվեյթում, Արաբական Միացյալ Էմիրություններում և Կատարում ամեն քայլափոխի կարելի է հայտնաբերել ԱՄՆ-ի և Պարսից ծոցի երկրների միջև փոխըմբռնման բացակայության վկայություն աֆղանական հարցի կարևորության աստիճանի նկատմամբ,— շարունակում է նա։— Ասացեք միայն Աֆղանստանի մասին, և ձեզ տեղնուտեղը մատնացույց կանեն «երուսաղեմի օկուպացիան»։ Փորձեք շշնջալ. «սովետական ագրեսիա», և ձեզ կպատասխանեն. «իսրայելական ագրեսիա»։ Ջգուշությամբ արտահայտվեք նավթահանքերի վերաբերյալ «սովետական սպառնալիքի» մասին, և մոտակա լուսամուտից ձեզ ցույց կտան առաջվա պես Ծոցում վհհորեն լողացող սուպերտանկերները»։

«Ուրեմն ի՞նչ են ուզում նրանք (ամերիկացիները) մեզնից,— հարցնում է շեյխ Սաբահը։— Ինչո՞ւ են զորք ուղարկում Ծոց նրա պաշտպանության համար։ Ումի՞ց են պաշտպանում։ Մենք չենք վախենում Ռուսաստանից։ Դրանում մենք համոզված ենք 100 տոկոսով»։

Պրեզիդենտ Քարտերի խոսքերով՝ Պարսից ծոցի շրջանի երկրներին անհրաժեշտ է միավորվել Սովետական Միությունից «անվտանգ սիստեմի» շրջանակներում և ընդունել ամերիկյան ծովային հետևակի ու ռազմանավերի «պաշտպանությունը»։ Ինչպես գտնում են Պարսից ծոցի երկրների ղեկավարները, այդպիսի քաղաքականությունը սխալ էր և անխոհեմ։ Պարսից ծոցի երկրներում համոզված էին, որ ամերիկյան զորքերի նույնիսկ սիմվոլիկ ներկայությունը կամ ռազմական բազաների շինարարությունը կարող է միայն անկայունացնել մինչ այդ խաղաղ շրջանը։

Ստրատեգիական տեսակետից կարևոր Օրմուզի նեղուցից ոչ հեռու, Օմանի Մասիրա կղզում ամերիկյան առաջավոր բազայի շինարարության վերաբերյալ որոշումը, որն արդեն կոնկրետ գործ էր դարձել և ոչ թե քաղաքական հայտարարություն, «բարձրացրեց դրույքները»։ Քուվեյթի, Կատարի և Արաբական Միացյալ Էմիրությունների ղեկավարները կա՛մ մասնավոր ձևով, կա՛մ հրապարակորեն դատապարտեցին ԱՄՆ-ի և Օմանի միջև կնքված համաձայնագիրը։ Արաբական Միացյալ Էմիրություններում ենթադրում էին, որ Օմանի բազան ավելի շուտ նախատեսված

է սուլթան Քաբուսի ոչ կայուն գահը պաշտպանելու համար, քան Օմմուղի նեղուցը, որին ոչ ոք երբեք չի սպառնացել։

«Տեղի ղեկավարները բաղաններին վերաբերվում են ինչպես ժանտախտին,— նկատեց Քուվեյթում արևմտյան դիվանագետներից մեկը։— Նրանք ուղղակի ասում են. «Ո՛չ, ազատեցեք, դա մեզ պետք չէ։ Նրանք վախենում են ԱՄՆ-ի հետ չափազանց սերտ կապերից, քանի որ դա ձեռնտու է նրանց հակառակորդներին և՛ արտաքսահմանում, և՛ տանը, միաժամանակ նրանք հավատացած էին, որ Միացյալ Նահանգները իրենց չեն պաշտպանի հետևանքներից»։

Իսրայելի հետ ԱՄՆ-ի սերտ կապերի և Պաղեստինի ժողովրդին օրինական իրավունքներ տրամադրելու հարցում Քեմփ Ավիվից զիջումներ կորզելու նրանց չկամության պատճառով Ծոցի երկրների ղեկավարներից ոչ մեկի համար անվտանգ չէ ազդարարել իր բարեկամությունը Վաշինգտոնի հետ։ Քանի դեռ չի լուծվել պաղեստինյան պրոբլեմը, ամերիկա-իսրայելական կապերը խոչընդոտ կլինեն Վաշինգտոնի և Պարսից ծոցի բոլոր երկրների միջև բացահայտ ռազմական համագործակցությանը, բացառությամբ, թերևս, միայն առավել պահպանողականների»։

Ողջախոհ ձայներ էին հնչում նաև հենց Միացյալ Նահանգներում։ Սովետա-ամերիկյան հարաբերությունների գծով հայտնի մասնագետ Ջ. Քենանը արտասահմանյան գործերով սենատի հանձնաժողովում հայտարարեց, որ Քարտերի կառավարությունը չափազանցում է Պարսից ծոցի և Պակիստանի նավթահանքերին վերաբերող հնարավոր սպառնալիքը, որ իբր թե ստեղծվել է Աֆղանստանում սովետների ներկայությամբ։ Նրա կարծիքով, երկրի «բարձր» շահերը պահանջում են, որպեսզի Թույլ չտանք այդ «տագնապալից զրույցները» Հարավարևմտյան Ասիայում պատերազմի հանգեցնի ՍՍՀՄ-ի հետ։ Նա կոչ արեց ռազմական միջոցառումների և կոնֆլիկտի հնարավորության վերաբերյալ «պաշտոնական հայտարարությունների մեջ հանդես բերել չափազանց մեծ զսպվածություն»։ Քենանը նաև ասաց, որ ոչ մի փաստ չկա այն մասին, թե ՍՍՀՄ-ը Աֆղանստան մտնելով մտադիր է Պարսից ծոցի նավթահանքերը գրավելու փորձ անել, և որ այդպիսի գործողությունները «բոլորովին հավանական չեն»։

«Քարտերի դոկտրինան» հանդիպեց առավել խիստ քննադատության։ Համալսարաններում ուսանողները գոչում էին

«Գրողը տանի՛»։ Մենք չենք գնա պատերազմելու Քեքսակոյի համար»։ Սենատոր Էդվարդ Քենեդին նախազգուշացնում էր, որ պատերազմը Ծոցում կնշանակեր «հեռուստատեսությամբ ամեն երեկո հաշվել Ամերիկայի զոհված զավակներին»։ Նահանգապետ Էդմունդ Բրաունը ծափահարությունների արժանացավ, երբ ասաց, թե Քարտերն ու Քենեդին փորձում են արտաքին քաղաքական զվարճություններով խուսափել ներքին պրոբլեմների պատասխանատվությունից։

Եթե Սպիտակ տունը իսկապես մտահոգված էր Պարսից ծոցում անվտանգությունը վերականգնելու և նավթի մատակարարումների հուսալիությունն ապահովելու խնդրով, ապա նա կարող էր համապատասխան բազա գտնել այդ հարցի վերաբերյալ Սովետական Միության հետ կոնկրետ առաջարկություններում համաձայնվելու համար։ Սովետական ղեկավարությունը 1980 թվականի դեկտեմբերի 10-ին հայտարարեց. «Մենք առաջարկում ենք ԱՄՆ-ին, արևմտյան մյուս տերություններին, Չինաստանին, Ճապոնիային, բոլոր այն պետություններին, որոնք դրա նկատմամբ հետաքրքրություն հանդես կբերեն, համաձայնվել հետևյալ փոխադարձ պարտավորություններում.

— չստեղծել օտարերկրյա ռազմական բազաներ Պարսից ծոցի շրջանում և նրան հարող կղզիներում. այնտեղ չտեղադրել միջուկային կամ որևէ այլ մասսայական ոչնչացման զենք.

— չօգտագործել և ուժի գործադրմամբ չսպառնալ Պարսից ծոցի շրջանի երկրներին, չխառնվել նրանց ներքին գործերին.

— հարգել Պարսից ծոցի շրջանի պետությունների ընտրած չմիանալու statusը. նրանց չներգրավել ռազմական խմբավորումների մեջ միջուկային պետությունների մասնակցությամբ.

— հարգել այդ շրջանի պետությունների սուվերեն իրավունքները նրանց բնական ռեսուրսների նկատմամբ.

— չստեղծել որևէ խոչընդոտ կամ սպառնալիք նորմալ առևտրական փոխանակության և այդ շրջանի պետություններին աշխարհի մյուս երկրների հետ կապող ծովային կոմունիկացիաներն օգտագործելու նկատմամբ։

Մենք ենթադրում ենք, որ այդ տեսակ պայմանավորվածությունը, որի լիիրավ մասնակիցները, բնականաբար, կլինեն

իրենք՝ տվյալ շրջանի պետությունները, կհամապատասխաներ նրանց կենսական շահերին։

ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի նրա դաշնակիցները գերադասեցին լռությամբ մատնել սովետական այդ նախաձեռնությունը, հույս ունենալով ձեռքերն ազատել Պարսից ծոցի գոտում իրենց հեգեմոնիան հաստատելու կամ վերականգնելու համար։

9

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ

1979 թվականի հոկտեմբերի 22-ին նախկին շահը մեկնեց Նյու-Յորքի հոսպիտալներից մեկը՝ բուժվելու։ Երբ այդ լուրը հասավ Իրան, երկրում սկսեց ուժգնորեն աճել հակաամերիկյան տրամադրությունը։ Մի՞թե ամերիկյան կառավարությունն իր վարմունքով ուղղակի հովանավորություն չդրսևորեց երկրից փախած նախկին դիկտատորի, իր զոհերի արյամբ շաղախված հանցագործի նկատմամբ։ Մի՞թե Սպիտակ տունը չարհամարհեց նախկին շահին հանձնելու և իրանական ժողովրդին պատկանող նրա թալանած հարստությունը վերադարձնելու իրանական կառավարության օրինական պահանջները։ Ամերիկյան վարչակազմի այդ որոշման իբր զուտ մարդասիրական բնույթի «փաստարկները» միաձայն հերքվեցին. չէ որ վերջիվերջո շահը կարող էր գնել և՛ բժշկական սարքավորումներ, և՛ մասնագետների ծառայությունը, մնալով Բահամներում կամ Եգիպտոսում։

Դեսպանատան գրավումը

Հոկտեմբերի 31-ին Իրանի կառավարությունը պաշտոնական բողոք հայտնեց Վաշինգտոնին։ Իսկ նոյեմբերի 4-ին միլիոնավոր մարդիկ իրանական քաղաքների փողոցները դուրս եկան գոչելով. «Մա՛հ, շահին։ Մա՛հ Քարտերին։ Կորի՛ Ամերիկա՛ն»։

Նույն այդ օրը 400 իրանցի ուսանողներ, իրենց հռչակելով «իմամ Խոմեյնիի հետևորդներ», խուժեցին ամերիկյան դեսպանատուն։ Դա նախապատրաստված գործողություն էր, քա-

նի որ նրանք ունեին դեսպանատան հատակագիծը և գործողության հստակ ծրագիր։ Ամերիկայում գիշեր էր։

Դիշերվա ժամը երեքին պետական դեպարտամենտի հերթապահը սովորական միջազգային հեռախոսով հիստերիկ ճիչ լսեց. «Ամբոխը գրավում է դեսպանատո՞ւնը», բայց խոսողը ավելացրեց. «Ցուցարարները, թվում է, մտադիր չեն ուժ գործադրել»։ Երեք ժամից հետո դեսպանության ամբողջ շենքը գրավվեց, բայց ամերիկացիները հասցրեցին ոչնչացնել իրենց անվանարկող փաստաթղթերի մեծ մասը։

Դեսպանատան գրավումը միայն արտաքին քաղաքական ուղղվածության գործողություն չէր։ Այն արտացոլում էր հակաշահական հեղափոխություն կատարած բանակի ուժերի պառակտումը, սոցիալ-քաղաքական տարբեր միտումներ արտահայտող խմբավորումների պայքարը հանուն իշխանության։

Սակայն այս թեման մենք դիտավորյալ դուրս ենք թողնում մեր գրքի շրջանակներից։ Համենայն դեպս, հաջորդ օրը պրեմիեր մինիստր Բազարգանը, որը համարվում էր պրոարևմտյան «լիբերալ» և ԱՄՆ-ի հետ փոխզիջման կողմնակից, հրաժարական տվեց։ Նրա դիրքերը հենց սկզբից էլ թույլ էին, քանի որ Իրանը ղեկավարում էին Խոմեյնին և նրա կողմնակիցները։ Դեռ սեպտեմբերին Բազարգանը, ելույթ ունենալով հեռուստատեսությամբ, հայտարարեց. «Մեր կառավարությունը դանակ է առանց սայրի»։ Նրա ճակատագիրը, ըստ էության, վաղուց էր որոշված, երբ Ալժիրում ազգային տոնի ժամանակ նա հանդիպում ունեցավ Բժեզինսկու հետ առանց Իսլամական հեղափոխական խորհրդի թույլտվության։ Թեհրանի թերթերը նրան մեղադրեցին որպես «դավաճանի»։

Պետական դեպարտամենտում քաղաքական գծով պետական քարտուղարի տեղակալ Դևիդ Նյուսոմը և մերձավորարևելյան գործերով պետական քարտուղարի օգնական Հարոլդ Սոնդերսը փորձում էին վերլուծել իրադրությունը։ Առավոտվա 5-ին անկողնուց հանեցին պետական քարտուղար Սայրուս Վենսին, մի քիչ ավելի ուշ Քեմփ-Դևիդում՝ Քարտերին։ Տագնապահար խումբը հավաքվեց պետական դեպարտամենտում։

Առավոտ շուտ խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին Քարտերը, նրա մերձավոր օգնականներ Համիլտոն Ջորդանը և Ջորդի Պաուելը, պաշտպանության մինիստր Հա-

րոլդ Բրաունը և շտաբների պետերի կոմիտեի ներկայացուցիչները, որոշվեց հրաժարվել Իրանին անմիջապես հարվածելուց։

1979 թվականի նոյեմբերի 19-ին «Նյուսուիկը» գրեց. «Երբ վարչակազմը շահին թույլ տվեց գալ բուժվելու, նա գիտեր, որ կլինեն պատասխան միջոցառումներ»։ Գիտեր, բայց թույլ տվեց, բացարձակորեն ճգնաժամ հրահրելով։ Ամերիկյան դիվանագետները Թեհրանում, համենայն դեպս, նրանք, ովքեր ԿՀՎ-ի անմիջական գործակալները չէին, ուղղակի խաղալիք դարձան նրանց ձեռքերում, ովքեր ամերիկյան քաղաքականության էին վարում՝ կուլիսների ետևում։

Շաբաթվա վերջում ԱՄՆ-ի դեսպանատունը գրաված ուսանողները հրապարակեցին երկու փափկանկատ փաստաթղթերի բովանդակությունը, որոնք դեսպանատան աշխատակիցները չէին հասցրել ոչնչացնել։ Դրանցից հետևում էր, որ կառավարությունը առնվազն դեռ ամռանը քննարկել է «անխուսափելի քայլի» ընդունման հնարավորությունը, այսինքն՝ շահին թույլ տալ մեկնելու ԱՄՆ։ Սպիտակ տունը խոստովանեց, որ ինքը իսկապես պարզել է, թե Իրանը ինչպես կարճագանքի շահին ապաստարան տրամադրելու փաստին։ Ամերիկյան կառավարության մի բարձրաստիճան պաշտոնական անձ «Թայմ» հանդեսի թղթակցին հաղորդեց, որ «Հենրի Քիսինջերը, «Չեյզ Մանհաթըն» բանկի նախագահ Դևիդ Ռոկֆելլերը և Միջազգային հարաբերությունների խորհուրդը պարզորոշ ցանկություն հայտնեցին, որ շահը ապրի Ամերիկայում»։

Միաժամանակ Անվտանգության ազգային խորհուրդը գրեթե անընդմեջ նիստ էր անում։ Շաբաթվա վերջին Քարտերը հետաձգեց Կանադա կատարելիք ուղևորությունը, որպեսզի անմիջականորեն զբաղվի ճգնաժամից դուրս գալու որոնումներով։

«Կառավարության, և անձամբ պրեզիդենտ Քարտերի, համար Թեհրանում ամերիկյան դեսպանատան գրավումը մղձավանջ էր...— գրում էր «Թայմը» նոյեմբերի 19-ի համարում։— Այդ ճգնաժամը ինչպես էլ որ վերջանա, պետք է մտածել, կասստկացնի ամբողջ աշխարհի առջև ստեղծված ԱՄՆ-ի լիակատար անօգնականության տպավորությունը»։

Պաշտպանության նախկին մինիստր և էներգետիկայի նախկին մինիստր Ջեյմս Շլեսինջերը նոյեմբերին «Թայմ» հանդեսին տված հարցազրույցի ժամանակ ասաց. «Աշխարհը միացյալ Նահանգներին ավելի շատ կհարգեր, եթե մենք մշտական

վրիպումներ չանեինք և ամեն մի քայլի համար ներողություն չխնդրեինք։ Այդպիսի վարքագիծը միայն ավելի կհաստատի մեր թուլության համբավը։ Իր ողջ խենթությամբ հանդերձ այաթոլլան չէր համարձակվի գրավել սովետական դեսպանատունը։ Բանն այն է, որ Սովետական Միությունը ոչ մի դեպքում ձեռքերը ծալած չէր նստի, եթե իրադարձությունները այդպիսի ընթացք ստանային։ Նախ, նա այդպիսի բնավորություն չունի, և երկրորդ, նա հնարավորություն ունի ստիպելու, որ իր հետ հաշվի նստեն։ Ըստ էության, ինչպես ասել է Նիքսոնը, «եթե մենք նպատակ ենք դրել դառնալ ողորմելի, անօգնական հսկա, պետք է ասել, որ դա մեզ միանգամայն հաջողվում է»։

Ինչ վերաբերում է Քարտերին, նշեց Հանդեսը, նա գիտեր, որ Իրանում ԱՄՆ-ի դիրքերի սահմանափակումը անխուսափելիորեն կբարդացնի «արդյունավետ ղեկավարման» նրա պրոբլեմը և կնվազեցնի վերընտրվելու նրա հավանականությունը։

Չմոռանանք, որ «Թայմ» հանդեսը ամեն կերպ աջ էր մղում Քարտերի վարչակազմին և վարկաբեկում էր նրան շովինիստորեն տրամադրված քաղքենու աչքում։

Իրանցիները հրաժարվեցին բանակցություններ վարել ամերիկյան արդարադատության նախկին մինիստր Ռամսի Քլարկի հետ, որին Թեհրան էր ուղարկել Քարտերը, և նույնիսկ միջնորդություն առաջարկող ՕՕՊ-ի հետ։ Իսլամական հեղափոխական խորհուրդը, այնուամենայնիվ, հայտարարեց. «Մենք կաշխատենք, որ ամերիկացիները չսպանվեն»։

Իրանցիները Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Ալժիրի և Սիրիայի դիվանագետներին թույլատրեցին այցելել դեսպանատուն և խոսել պատանդների հետ։ «Իհարկե, նրանք հոգնած տեսք ունեն,— այցելությունից հետո հայտարարեցին դիվանագետները,— սակայն, ըստ մեր տպավորության, նրանց ֆիզիկական վիճակը ընդհանուր առմամբ լավ է»։

Բանխազրը, որը այդ պահին դարձել էր Իրանի արտաքին գործերի մինիստր, հայտարարեց, որ ոչ մի բանակցություն հնարավոր չէ, մինչև ամերիկացիները շահին չհանձնեն։

Պատանդների ճակատագրին լարված ուշադրությամբ հետևում էին ոչ միայն ԱՄՆ-ում և Իրանում, այլև մյուս երկրներում։ Երկու երկրների միջև տեղի ունեցած կոնֆլիկտը սպառնում էր ռազմական գործողությունների պայթյունով։ Լարվածությունը ավելի էր սրում նավթի գործոնը։ Իրանական ճգնաժամը բարձրացրեց նավթի գները։ Ամբողջ կապիտալիստական աշխարհում սկսվեցին հեղուկ վառելիքի խուճապային գնումները։

Բուն Իրանում ժողովրդական զայրույթը, որպես կանոն, բռնության չվերածվեց օտարերկրացիների նկատմամբ։ Ամերիկյան ժուռնալիստներին և ֆոտոռեպորտյորներին, հեռուստատեսային օպերատորներին, որոնք ցուցարարների ամբոխի միջից ճանապարհ էին բացում դեպի ամերիկյան դեսպանատուն, չէին վիրավորում։ Դեսպանատան ամբողջ արտաքին պատերը ծածկված էին վիետնամում, Կուբայում, Տաիլանդում, Չիլիում, Նիկարագուայում, Պաղեստինում և միապետության ժամանակների Իրանում Ամերիկայի Միացյալ Նահանգների կամ նրանց դեմ ծակալների կողմից կատարված գազանությունները պատկերող պլակատներով ու լուսանկարներով։ Սակայն բնակչությունը տարբերում էր ամերիկյան ժողովրդին իր կառավարությունից։

Ինքը Խոմեյնին այդ տեսակետից իր հրապարակային ելույթներով և հարցազրույցներով տոն էր տալիս։

Շփոթվածություն և գազազածություն Վաշինգտոնում

Ինֆորմացիայի օրգանները անպատկառորեն ձեռնածություն էին անում ԱՄՆ-ի հասարակական կարծիքի հետ, ատելություն առաջացնելով Իրանի հանդեպ, բորբոքելով շովինիստական տրամադրությունները։ 25 տարի շարունակ նրանք շահին նկարագրել էին որպես «լուսավորված միապետի», որը ձգտում է զարգացնել իր երկիրը, որին խանգարում էր «կարմիրների» և «սևերի», մարքսիստների և խավարամիտ մոլլաների համատեղ օպոզիցիան։ Եվ ահա այդ մոլլաները հաղթանակ տարան, դեռևս 1979 թվականի ամռանը լրջորեն գրում էր «Վաշինգտոն քոուտերլի» հանդեսը, «միայն այն պատճառով, որ շահը քաջություն չունեցավ թափելու իր հպատակների արյունը»։

Պատանդների գրավումը, միանգամայն բնականորեն, ԱՄՆ-ում խիստ կտրուկ հակազդեցություն առաջ բերեց։ Մամուլում հայտնվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնք վրեժխնդրության կոչ էին անում ընդդեմ իրանցիների «ֆանատիզմի», և Խոմեյնիի ծաղրանկարները։ Ձեռներեց ֆաբրիկատերերը սկսեցին թողարկել մայկաներ, որոնց վրա վիրավորական և կոպիտ արտահայտություններ էին տպված Խոմեյնիի հասցեին։ Համալսարանների մի քանի հանրակացարաններում ուսանողները այ-

բեցին իշխանական հանրապետության դրոշը և տանջեցին «խոմեյնականը» իրենց ընկերներին, որոնք հրաժարվում էին ամբողջ ձայնով գոռալ. «Դեհ եկեք խորովենք իրանցիներին»: «Ուռահայրենասերները» իրանցիներին անխնա ծեծեցին Վաշինգտոնում, Լոս Անջելեսում, Հյուստոնում և մյուս քաղաքներում:

«Նյու Յորք դեյլի նյուս» թերթը 1979 թվականի նոյեմբերի 23-ին աղաղակող սադրանքի և շովինիզմի օրինակ բովանդակող հոդված տպագրեց. «75 տարի առաջ պրեզիդենտական ընտրությունների նախօրյակին Թեոդոր Ռուզվելտը ընդհարվեց դիվանագիտական ճգնաժամի հետ, երբ մուսուլմանական ցեղի առաջնորդը առևանգեց ամերիկյան բիզնեսմեններին ու նրա ընտանիքի անդամներին և սպառնաց նրանց սպանել, փրկագին պահանջելով Մարոկկոյի սուլթանից:

Բերբերական ցեղի առաջնորդ Ռայսուլին ենթադրում էր, որ Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան (առևանգվածներից մեկը անգլուհպատակ էր) բավականաչափ ճնշում կգործադրեն Մարոկկոյի սուլթանի վրա, որպեսզի վերջինս բավարարի նրա պահանջները, և մասնավորապես նրան վճարի 70 հազար դոլար ու կառավարական զորքերը դուրս հանի այդ ցեղին պատկանող հողերից:

Ամբողջ մեկ ամիս շարունակվող լարված բանակցություններից հետո Ռուզվելտը, դիմելով «մեծ մահակի» բնորոշ քաղաքականությանը, այդ շրջանն ուղարկեց ռազմանավերի երկու ջոկատ:

Որքան այդ լարված իրադրությունը մոտենում էր իր գագաթնակետին, Ռայսուլին, որը մինչ այդ արդեն կտրել էր իր պատանդներից մի քանիսի վերջավորություններն ու գլուխը, սպառնում էր սպանել ամերիկացուն և նրա ընտանիքի անդամներին:

Այդ ժամանակ ամերիկյան չորս գծանավ և այլ նավեր գտնվում էին Տանժերի նավահանգստում, իսկ մյուս նավերը ուղղություն էին վերցրել դեպի այդ նավահանգիստը: Ռուզվելտը ցուցում տվեց պետական քարտուղար Ջոն Հեյին՝ վերջնագիր ներկայացնել սուլթանին. «ԱՄՆ-ի կառավարությունը ցանկանում է ամերիկացիներին ստանալ կենդանի կամ Ռայսուլիին մեռած»:

Ռայսուլին ազատեց այդ ամերիկացուն ու մյուս պատանդներին և, անձամբ ուղեկցեց նրանց, իսկ Ռուզվելտը, իհարկե, հինգ

ամիս հետո հաղթեց պրեզիդենտական ընտրությունների ժամանակ:

Մենք հույս ունենք, որ, երբ ամերիկյան «Միդուեյ» և «Քիտի Հոք» ավիակիրները գնդակի հասողությամբ մոտենան Քոմ սրբազան քաղաքին, որտեղ գտնվում է այաթոլլան, Քարտերը կուղարկի իր հեռագիրը. «Այս երկրի կառավարությունը ցանկանում է ստանալ պատանդներին կենդանի կամ այաթոլլային մեռած»:

Ստորացված և գաղազած ամերիկյան կառավարությունը հաշվում էր անհապաղ գործողության պատրաստ ուժերը. հատուկ նշանակության զորամասերից բաղկացած մի գումարտակ Արևմտյան Գերմանիայում, պարաշյուտիստների մի գումարտակ Իտալիայում, «F-4» կործանիչների մի էսկադրիլիա Թուրքիայում, ամերիկյան 6-րդ նավատորմի 1200 ծովային հետևակով 40 նավ Միջերկրական ծովում, 3 նավ Պարսից ծոցում, 2 նավ Կարաչիում, 7 պահականավերով մեկ ավիակիր Սեյշելյան կղզիներում: Շատ չէ՞ 35 միլիոնանոց երկրի դեմ: Ուժ, բավականաչափ ուժ չկար: Փոխարենը Հնդկական օվկիանոսի հյուսիս-արևմտյան մասում նավատորմի արագ ծավալման համար պատրվակ կար: Փոխարենը առիթ կար Ամերիկայի հասարակական կարծիքը շուռ տալու անզուսպ շովինիզմի կողմը: Բուժվել «վիետնամական սինդրոմից», կրկին բացահայտորեն իր վրա վերցնել համաշխարհային ժանդարմի դերը: Պատճառ կար հարկատուների գրպանից կողոպել տասնյակ միլիարդներ՝ ղենքի նոր տեսակների և համակարգերի համար: Սակայն անձամբ Քարտերի համար հիվանդագին հարցը մոտեցող ընտրություններն էին:

Պատանդների հարցը վարչակազմի առաջնության ցուցակում ընկավ ինչ-որ երրորդ-չորրորդ տեղը:

Նոյեմբերի 21-ին Սպիտակ տանը տեղի ունեցավ ԱՄՆ-ի պրեզիդենտի հերթական խորհրդակցությունն իր բարձրաստիճան օգնականների և կաբինետի անդամների հետ, որտեղ կրկին քննարկվեց ամերիկա-իրանական հարաբերությունների ճգնաժամը: Խորհրդակցությանը մասնակցում էին պաշտպանության մինիստր Բրաունը և շտաբների պետերի կոմիտեի նախագահ գեներալ Ջոունսը:

Սպիտակ տան հրապարակած կարճ հայտարարության մեջ ընդգծվում էր, որ բացի խաղաղ միջոցներից, Միացյալ Նա-

հանգները պրոբլեմը լուծելու համար «ունեն նաև այլ միջոցներ»: Տեսաբանները այդ հայտարարությունը գնահատեցին որպես Միացյալ Նահանգների կողմից Իրանի նկատմամբ զինված ուժ գործադրելու ուղղակի սպառնալիք: Վկայակոչելով պետական դեպարտամենտի պաշտոնական անձանց՝ ՅՈՒՊ-ի գործակալությունը նշեց, որ պրեզիդենտ Քարտերը «վերանայել է քաղաքականությունը և ուսումնասիրում է ճգնաժամը ռազմական միջոցներով լուծելու հնարավորությունը»: Այդ ժամանակ էլ որոշում ընդունվեց «պատանդներին փրկելու» օպերացիայի վերաբերյալ, որը խայտառակ ձևով տապալվեց 1980 թվականի ապրիլին:

ԱՄՆ-ի պրեզիդենտի կարգադրությամբ Ֆիլիպիններում գտնվող Սուբիկ Բեյ ռազմածովային բազայից Հնդկական օվկիանոս ուղևորվեց մարտական նավերի ևս մեկ խումբ, այդ թվում նաև «Քիտի Հոկ» ավիակիրը՝ 85 ինքնաթիռով: Ավիակիրն ուղեկցում էին հինգ նավ: Նրանք պետք է միանային արդեն Հնդկական օվկիանոսում նավարկող ավիակիրների խմբին:

Հաջորդ օրը, նոյեմբերի 22-ին, Իրանի մայրաքաղաքում տեղի ունեցավ հակաամերիկյան ցույց, որին մասնակցեց շուրջ 3 միլիոն մարդ: Միտինգին հավաքված հարյուր հազար թեհրանցիներ բանաձև ընդունեցին, որտեղ ամերիկյան իմպերիալիզմը անվանվեց իրանական ժողովրդի «համար առաջին թշնամին»:

Ըստ մուսուլմանական լուսնային օրացույցի 1400 թվականը թևակոխելու կապակցությամբ ելույթ ունենալով ռադիոյով և հեռուստատեսությամբ՝ այաթոլլա Խոմեյնին կրկին հայտարարեց, որ Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատունը փաստորեն «լրտեսական որջ» է եղել: Խոմեյնին տարակուսանք հայտնեց այն բանի կապակցությամբ, թե ԱՄՆ-ի կառավարությունը մարդու իրավունքների մասին շաղակրատանքը ինչպես կարող է համատեղել շահական բռնապետությանն աջակցելու և հենց շահին պաշտպանելու հետ: ԱՄՆ-ը,— ասաց նա,— փորձում է ռազմական և տնտեսական սանկցիաներով մեզ վախեցնել, բայց մենք ոչ մի քայլ չենք նահանջի:

Մեքքայից (Սաուդյան Արաբիա) հաղորդում ստացվեց անհայտ ապստամբների կողմից իսլամի գլխավոր սրբավայրի՝ Ալ-Խարամ մզկիթի և Քաբայի գրավման մասին: Պակիստանի մայրաքաղաքում ամբոխը գրավել էր ԱՄՆ-ի դեսպանատունը:

Այս հաղորդումները ուժեղացրին իրարանցումն ու լարվածությունը (սակայն դրանց մասին մանրամասն կպատմենք ավելի ուշ):

Նոյեմբերի վերջին ուսանողների գրաված ԱՄՆ-ի դեսպանատան շենքի առջև գրեթե գիշեր-ցերեկ ցույցեր էին տեղի ունենում և նրանց հիմնական լոզունգներն էին. «Մա՛հ Քարտերին», «Ամերիկացիների թաթերից կաթում է ընկածների արյունը», «Խոմեյնին պայքարում է, իսկ Քարտերը դողում», «Շահին կախաղան է սպասվում»: Իրանի հարավային առափի երկարությամբ սկսվեցին «պաշտպանական միջոցառումներ»:

«Պրեզիդենտ Քարտերը, որ մի կողմ էր դրել մնացած գործերը, որպեսզի լրջորեն զբաղվեր իրանական ճգնաժամով, կատաղության մեջ է, գրեց «Թայմ» հանդեսը դեկտեմբերի 3-ի համարում:— Նա աշխատում էր դա ցույց չտալ հրապարակորեն, սակայն չէր թաքցնում իր մերձավոր օգնականներից: Հեռագայում նա ստացավ այաթոլլա Խոմեյնիի ճառի լրիվ տեքստը՝ ԿՀՎ-ի թարգմանությամբ, որը թունոտ ծաղր էր պարունակում: Պրեզիդենտը, ասում էր Խոմեյնին, «գիտե, որ ինքը իզուր է թմբկահարում: Քարտերը չի համարձակվի ռազմական գործողություններ ձեռնարկել»: Երբ պրեզիդենտը այդ մասին լսեց, նա, ինչպես պատմել է նրա օգնականներից մեկը, «այնպես ուժգին սեղմեց ատամները, որ ծնոտները սպիտակեցին»: Նրա հակազդեցությունը զայրույթի շրջանակներից դուրս եկավ: Քարտերը և նրա օգնականները այդ ճառը ընկալեցին այնպես, որ այաթոլլան ամերիկյան զսպվածությունը բացատրում է որպես նշան այն բանի, թե ԱՄՆ-ը վախենում է որևէ միջոց ձեռնարկել: Նրանք միաձայն եկան այն կարծիքին, թե նրան պետք է հակառակը համոզել: «...Այն պահին, երբ պրեզիդենտը դուրս եկավ Սպիտակ տան առջևի բացատը, պետական դեպարտամենտը կազմեց հայտարարության տեքստը, որը պարունակում էր թեև քողարկված, բայց որոշակի ռազմական սպառնալիք»:

Սակայն նավատորմի ուղարկումը Պարսից ծոց և Վաշինգտոնի սպառնալից հայտարարությունը ոչ միայն չղսպեց Իրանի ժողովրդին, այլև, ընդհակառակը, ավելի կատաղեցրեց: Դեսպանատունը գրաված ցուցարարները հաղորդեցին, որ իրենք ականապատել են բոլոր սենյակները, որտեղ գտնվում են պատանդները, և հայտարարեցին. «Հենց որ հայտնի դառնա ամե-

րիկյան նավերի որևիցե կասկածելի զորաշարժերի մասին, մենք կպայթեցնենք դեսպանատունը և կսպանենք բոլոր պատանդներին»: Խոմեյնին, ելույթ ունենալով հեռուստատեսությամբ, ավելացրեց. «Ես ոչ մի կասկած չունեմ, որ նրանք այդ բանը կանեն»: Դա համընկավ մուհառամ ամսվա սկսվելու հետ, որ նշում էին մուսուլման շիաները: Մի տարի առաջ այն նշանավորեց մասսայական ցույցերի սկիզբը, որոնք վերջիվերջո հանգեցրին շահի տապալմանը, և դրա շնորհիվ այդ տոնակատարությունը ձեռք բերեց հեղափոխական երանգ: Ոգևորված այդ դուգադիպությունից, տասնյակ հազարավոր մարդիկ շրջապատեցին դեսպանատունը: Նրանք այնպիսի կատաղության էին հասել, որ նույնիսկ դեսպանատունը գրաված ուսանողները մեգաֆոնով ամբոխին խաղաղվելու կոչ արեցին: Մի քանի ցուցարարներ հագել էին մուսուլմանական սգո շորեր, ի նշան նահատակվելու պատրաստակամության: Ինքը Խոմեյնին իրանական հեռուստատեսությամբ հայտարարեց, որ եթե գործը հասնի ամերիկյան ռազմական հարձակման, «ես չեմ կարող հսկել» նրանց գործողությունները, ովքեր գրավել են դեսպանատունը:

Դեսպանատունը գրավելուց շուրջ երեք շաբաթ անց իրանցիները ազատեցին 13 մարդ՝ 5 կին և 8 սև ամերիկացի: Մյուսները մնացին:

Դեկտեմբերի 5-ին «Պրավդան» տպագրեց «Հանդես բերել խոհեմություն և զսպվածություն» վերնագրով հոդվածը, որտեղ, մասնավորապես, գրում էր.

«Ամերիկյան մամուլի էջերից և կոնգրեսի ամբիոնից կարելի է լսել մեկը մյուսից ռազմաշունչ հայտարարություններ և կոչեր: Խլվում են «պատժել», վճռականորեն «խրատել» և «խելքի բերել» Իրանին պահանջները... Սպիտակ տան հայտարարությունների մեջ ավելի ու ավելի հազվադեպ են խոսում այժմյան ամերիկա-իրանական ճգնաժամից դուրս գալու խաղաղ միջոցներ փնտրելու մտադրությունների մասին և ավելի հաճախ են երևան գալիս «գործողության այլ տարբերակներ», որոնց ԱՄՆ-ը իբր թե ստիպված է դիմելու:

Դիվանագիտական ելույթները, որոնց դիմում էին ամերիկյան ներկայացուցիչները ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում կամ միջազգային դատարանում, ինչպես խոստովանում է ԱՄՆ-ը, առաջին հերթին պետք է համոզեին ամերիկյան և միջազգային հասարակությանը, որ ԱՄՆ-ը իբր թե «սպառել է» կոնֆլիկտը

կարգավորելու խաղաղ միջոցները և բացի ուժ գործադրելուց, ուրիշ ելք չունի ստեղծված դրությունից դուրս գալու համար:

Ուժ գործադրելու նախապատրաստությունը հաստատող փաստերը բավականին շատ էին: Մերձավոր և Միջին արևելքի շրջանում, որոնք անմիջապես հարում են Իրանին, ձգվում են ռազմածովային, ռազմաօդային, դեսանտային ուժերը... Հաղորդում կա, որ Պենտագոնը Իրանի դեմ գործողություն ծավալելիս պատրաստվում է հենվել Իսրայելի վրա, օգտագործել Եգիպտոսի և Հնդկական օվկիանոսի բազաները... Ահա է Իրանի վրա կոպիտ ռազմաքաղաքական ճնշում՝ ռազմական տեսակետից աշխարհում ամենահզոր պետություններից մեկի կողմից... Միացյալ Նահանգները, որ Անվտանգության խորհրդի մշտական անդամ է և, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության, նրա մյուս անդամների հետ միասին գլխավոր պատասխանատվություն է կրում խաղաղությունը պահպանելու համար, ըստ էության դիմում է շանտաժի ուրիշ սուվերեն պետության նկատմամբ: Փոխանակ զսպվածության, պատասխանատվության և սառնասրտության օրինակ ցույց տա ստեղծված իրադրության պայմաններում, կրկնապատկի ջանքերը խելացի ելք գտնելու ստեղծված դրությունից, թույլ չտալով հույզերին ափերից դուրս գալ, ԱՄՆ-ի որոշակի շրջանակներում ավելի շատ են թեքվում ուժի կողմը:

Պնդում են, որ դա տեղի է ունենում ի պատասխան միջազգային իրավունքի կանոններին հակառակ Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատան անձնակազմին որպես պատանդ կալանավորելուն: Անվիճելի է, որ ամերիկյան դեսպանատան գրավումը ինքնին չի համապատասխանում դիվանագիտական արտոնությունները և անձեռնմխելիությունը հարգելու վերաբերյալ միջազգային կոնվենցիային: Չի կարելի, սակայն, այդ գործողությունն անջատել ամերիկա-իրանական հարաբերությունների ընդհանուր կոնտեքստից, մոռանալ Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի կատարած գործողությունների մասին, որոնք ոչ մի կերպ չեն համապատասխանում իրավունքի և բարոյականության նորմերին:

Մի՞թե միջազգային իրավունքին չեն հակասում ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների գործողությունները, որոնք 1953 թվականին կազմակերպեցին Իրանի օրինական կառավարության տապալումը և իրանական ժողովրդի վզին ևս քառորդ դար փութաթեցին շահի կամայականությունն ու անօրինականությունը: Արդյո՞ք ընդհանուր շատ բան կա միջազգային իրավունքի և վա-

շինգտոնի այն շրջանների այժմյան դիրքավորման միջև, որոնք մերժում են շահին հանձնելու և նրա թալանած միլիարդների հասնող հարստությունը երկրին վերադարձնելու իրանական ժողովրդի պահանջները։

Սան Ֆրանցիսկոյի հեռուստատեսությամբ հարցազրույցի ժամանակ սենատոր է. Քենեդին ասաց. «Շահը գլխավորում էր մարդկության պատմության մեջ ամենադաժան վարչակարգերից մեկը։ Ինչպես կարելի է արդարացնել Միացյալ Նահանգներին, երբ նա ընդունում է մի մարդու, որը ցանկանում էր գալ և այստեղ մնալ Իրանից կողոպտած իր անհաշիվ միլիարդ դոլարներով»։ «Միացյալ Նահանգները պատսպարում է մարդասպանին և կողոպտիչին,— հայտարարեց ՄԱԿ-ի ԱՄՆ-ի նախկին ներկայացուցիչ է. Յանգը։— Ուստի տրամաբանական է, որ իրանական ժողովուրդը պահանջում է՝ շահին վռնդել Իրան, որպեսզի իր կատարած չարագործությունների համար դատի տան նրան»։

Շահին չհանձնելը ԱՄՆ-ում ինչ-որ մեկի կողմից հայտարարվել է համարյա թե «ազգային պատվի գործ»։ Սակայն հանցագործին պատսպարելը բնավ չի բարձրացնում երկրի պատիվն ու հեղինակությունը։

Միջազգային իրավունքը, ինչպես նաև ամեն մի իրավունք ընդհանրապես երկդիմի ստանդարտ չի ճանաչում։ Դիվանագիտական ներկայացուցիչների անձեռնմխելիության սկզբունքի անվիճելիությունը չի կարող արդարացում, առավել ևս պատրվակ ծառայել անկախ, այլ սկզբունքի պետության սուվերենությունը խախտելու համար, սկզբունք, որը կազմում է ամբողջ միջազգային իրավունքի միջուկը»։

Դեկտեմբերի վերջին նախկին շահը ընտանիքով Տեխասի Նահանգի Սան Անտոնիոյի մոտ գտնվող Քելլի ավիաբազայում նստեց ՌՕՈՒ-ի հրթիռային ինքնաթիռ և թռավ դեպի Պանամայի ջրանցքի գոտի։

ԱՄՆ-ի պաշտոնական անձինք երկար էին որոնում այն երկիրը, որը ապաստան կտար շահին այն բանից հետո, երբ Մեքսիկան նոյեմբերին հայտարարեց, որ շահին թույլ չի տա վերադառնալ իր տարածքը։ Վերջապես Պանաման պատրաստակամություն հայտնեց ընդունել գահընկեց արված միապետին։

Ըստ երևույթին Վաշինգտոնը հույս ուներ, որ շահի մեկնումը կօգնի պատանդների ազատմանը, բայց սխալվեց։

Արևմտյան Եվրոպա կատարած իր երկօրյա այցելության ժամանակ պետական քարտուղար Վենսը շոշափեց ԱՄՆ-ի դաշնակիցների դիրքերը, հույս ունենալով ստիպել նրանց՝ տնտեսական միջոցներ ձեռք առնել ընդդեմ Իրանի։ Նա խորհրդակցեց կառավարությունների ղեկավարների հետ Լոնդոնում, Փարիզում, Հռոմում և Բոննում, իսկ վերջում նաև Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի խորհրդի նստաշրջանում։ Արևմտաեվրոպական կառավարությունները դեռևս մինչ այդ էլ դատապարտում էին պատանդների գրավումը, բայց նրանցից շատերը խիստ կախված էին իրանական նավթից և չէին ցանկանում աջակցել որևէ գործողության, որոնք կարող էին Իրանին դրդել դադարեցնելու նավթի մատակարարումը։ Արևմտաեվրոպացիները հասկացնել տվեցին, որ ԱՄՆ-ի պատանդներին ազատելու համար կարող էին ուժեղացնել տնտեսական ճնշումը, առանց զինված միջոցների դիմելու։

1978 թվականին ամերիկյան արտահանումը Իրան տարեկան հասնում էր մոտ 3,7 միլիարդ դոլարի և ներառում էր Իրանի կողմից ներմուծվող ամբողջ մթերքների 25 տոկոսը, ինչպես նաև իրանական զենքի և կապիտալ սարքավորումների պահեստային մասերի մեծ մասը։ Այդ բոլոր մատակարարումները պատանդների գրավումից հետո դադարեցվեցին։ Ամերիկյան կառավարության ներկայացուցիչը հայտարարեց. «Մենք ենթադրում ենք, որ արդեն մեկ ամիս հետո իրանցիները կսկսեն սառչել և սովի մատնվել»։

Սակայն Իրանը գտավ պարենամթերքի շատ ալտերնատիվ աղբյուրներ։ Ավստրալիական կառավարությունը, թեև նա ԱՄՆ-ին պաշտպանում էր պատանդների հարցում, շարունակում էր միս ու ցորեն արտահանել Իրան. միայն 1979 թվականին այդ մթերքների արտահանության արժեքը կազմեց 140 միլիոն դոլար։ Իրանը Թուրքիայից ներմուծում էր ձու, Ռումինիայից՝ թրուշնի միս, Տաիլանդից՝ բրինձ։ Ամերիկյան դեղանյութերի մատակարարման դադարեցումը Թեհրանը փոխհատուցում էր Ճապոնիայից զանազան դեղեր գնելով՝ սկսած ասպիրինից և վերջացրած հակաբիոտիկներով։ Ավտոպահեստամասեր Իրանը հայթայթում էր ինչ-որ մի երրորդ երկրից, «Ջեներալ մոտորսի» հավաքման գործարաններից։ Իհարկե, տնտեսական դժվարությունները և պակասությունները աճում էին, սակայն դա չէր կարող ազդել Իրանի արտաքին քաղաքական դիրքերի վրա։

«Թայմ» հանդեսը հունվարի 7-ի համարում գետեղեց մի հարցազրույց, որ նրան տվել էր այաթոլլա Խոմեյնին Քոմում։

Հարց։ Ամերիկյան տրամադրությունները Իրանում շատ ուժեղ են։ Ամերիկացիները, իրենց կողմից, ամբողջ զայրույթը թափում են Իրանի վրա։ Դուք ինչպե՞ս եք գնահատում Ճգնաժամի կարգավորումից հետո երկկողմանի հարաբերությունների հեռանկարները, ինչպիսի ձև էլ որ այն ընդունի։

Պատասխան։ Իրանցիների զայրույթը ուղղված է ոչ թե ամերիկյան ժողովրդի, այլ ամերիկյան կառավարության դեմ։ Երբ իրանցիները իրենց լոզունգներում և հայտարարություններում հիշատակում են Ամերիկային, նրանք նկատի ունեն ոչ թե ժողովրդին, այլ ԱՄՆ-ի կառավարությանը...

Որոշման ճգնաժամը

Պատանդների նկատմամբ ճգնաժամը ձգձգվում էր։ Կողմերի դիրքերն անհաշտ էին երևում։ Դրությունը բարդանում էր նրանով, որ ԱՄՆ-ում պատանդների գրավումը, ինչպես նշեցինք, ցանկալի առիթ էր երկրի քաղաքական կյանքի ամբողջ առանցքը դեպի աջ տեղափոխելու և շովինիզմ բորբոքելու համար։ Հունվարին Քարտերը հռչակեց կայսերական հավակնությամբ լի իր դոկտրինան։ ԱՄՆ-ի ռազմական հզորության աճը Հնդկական օվկիանոսում շարունակվում էր։ Քարտերը պատանդներին ազատելու գործում դեռևս հավատում էր ավանտյուրայի դրական ելքին, որ խիստ գաղտնի պատրաստում էր ամերիկյան վարչակազմը։ Ամեն դեպքում մի շարք ծանրակշիռ պատճառներով Վաշինգտոնի վերաբերմունքը պատանդների խնդրի նկատմամբ առնվազն երկդիմի էր։

«Պրեզիդենտ Քարտերի վարքագծի որոշ ասպեկտներ պատանդների գրավումից հետո պատված են խորհրդավորությամբ,— գրում էր «Մոնդը» 1980 թվականի հունիսին։— Ինչո՞ւ նա շահին թույլատրեց վերադառնալ ԱՄՆ հակառակ իր խորհրդականների շատերի հանձնարարականներին։ Ինչո՞ւ Սպիտակ տանտերը համաձայնեց բանակցություններ վարել պատանդներին ազատելու վերաբերյալ։ Եթե դա «շանտաժ» էր «տեռորիստների» կողմից, ապա հարկավոր էր անհապաղ որպես պատասխան ուժ գործադրել կամ թեկուզ հրաժարվել ամեն մի բանակցություն վարելուց այնքան ժամանակ, քանի դեռ տեռորիստները չեն դադարեցնի «միջազգային իրավունքի խախտումը»։ Եվ, ընդհակառակը, եթե դու ընդունում ես հակառակորդի ուժը, ապա կարելի է որոշ զիջումներ անել նրան։ Սակայն մի քանի ամսվա շփումներից, բանակցություններից և «աչք փակելու համար համաձայնությունից» հետո ստեղծվեց այն տպավորությունը, որ Վաշինգտոնը չի ցանկանում (կամ չի կարողանում) բավարարել իրանցիների պահանջներից և ոչ մեկը՝ ոչ իմամ Խոմեյնիի պահանջները, ո՛չ էլ նույնիսկ պրեզիդենտ Բանիսադրի համեմատաբար չափավոր պահանջները»։

Իրանում նախկին շահին դատի տալու հնարավորությանը պակաս նշանակություն չէին տալիս, քան նրան հանձնելու և նրա կողմից թալանված հարստությունները վերադարձնելու պահանջներին։ Սակայն ամերիկյան ղեկավարները մերժեցին դատավարության հենց սկզբունքը, ենթադրելով, որ այն կդառնա «վտանգավոր նախադեպ» մյուս պետությունների ղեկավարների համար։ Վաշինգտոնը անուշադրության մատնեց Բանիսադրի առաջարկությունը՝ պատասխանատվություն կրել շահական վարչակարգի կատարած չարագործությունների համար, պարտավորվել այլևս չխառնվել Իրանի գործերին և արգելք չդնել շահին հանձնելու և նրա ունեցվածքը Իրանին վերադարձնելու գործին։

1980 թվականի մարտին շահի մեկնումը Պանամայից Եգիպտոս, ընդամենը մի քանի ժամ առաջ այն բանից հետո, երբ Իրանը կարողացավ ներկայացնել նրա բանտարկությունը հիմնավորող փաստաթղթերը, Թեհրանում հաստատեց Վաշինգտոնի «երկդիմի խաղի» կապակցությամբ եղած կասկածը։ Մոհամեդ Ռեզային Եգիպտոս էին ուղարկել այն ինքնաթիռով, որը վարձել էր Քարտերի մերձավոր աշխատակիցներից մեկը։

Դրությունը պարզ էր. ԱՄՆ-ը, ինչպես դա հաստատեց Սպիտակ տան բարձրաստիճան ներկայացուցիչը, բոլոր ուժերով ձգտում էր խանգարել շահի չարագործությունների լրջորեն քննությանը, որովհետև չափազանց շատ ամերիկյան բարձրաստիճան գործիչներ էին կապված այդ կեղտոտ գործին և ոչ մի դեպքում չէր ցանկանում որևէ պատասխանատվություն կրել նրանց համար։

Կոնգրեսը միանգամայն համերաշխ էր կառավարության հետ, ինչը և ապացուցեց ներկայացուցիչների պալատի անդամ Ջորջ Հենսենի՝ այդ մութ գործի վրա լույս սփռելու ապարդյուն փորձը։

Այդահոյի նահանգից այդ պահպանողական հանրապետականը սեփական նախաձեռնությամբ 1979 թվականի դեկտեմբերին մեկնեց Թեհրան՝ պատանդների ազատմանն աջակցելու համար։

Նա վերադարձավ ցնցված այն բոլորից, ինչ իմացավ մարդու իրավունքների խախտման, տնտեսական չարաշահումների, հին վարչակարգի ծախվածության մասին, որի հետ կապված էին իր համաքաղաքացիներից ոմանք։ Նա պահանջեց քննություն սկսել, նրա խոսքերով ասած, ոչ այնքան այն բանի համար, որ հանգստացնի իրանցիներին, որքան նրա համար, որ պաշտպանի Ամերիկայի պատիվը, ինչպես նաև նրա բարոյական և դեմոկրատական ավանդույթները։ Նրա կուսակցության անդամները, նրա գործընկերների մեծ մասը, որոշ թերթեր սկսեցին ծաղրել նրան, մեղադրել էժան ժողովրդականություն փնտրելու համար, արհամարհելով նրա բերած փաստաթղթերը։

ԿՀՎ-ի և ՍԱՎԱԿ-ի սերտ համագործակցությունը Վաշինգտոնում ամենաարգելված թեման էր։ Չէ որ հակառակ դեպքում ԿՀՎ-ի գլխին կկախվի, ըստ սենատոր Էդվարդ Քենեդու, այն մեղադրանքը, որ նա աջակցել է «իշխանության գլուխ անցնելու արյունոտ ռեպրեսիաներ կիրառող և մարդու իրավունքները ոտնահարող պատմության մեջ ամենադաժան վարչակարգին»։ Համենայն դեպս, Իրանում 1953 թվականի հեղաշրջման մասին դավադրության կազմակերպչի՝ Կ. Ռուզվելտի գրած գիրքը լույս տեսնելուց անմիջապես հետո վաճառքից հանվեց։

Հետաքննությունը կհարկադրեր ոչ միայն ԿՀՎ-ի ղեկավարներին, այլև Քիսինջերին և նրա հաջորդին՝ Անվտանգության ազգային խորհրդի գլուխ կանգնած Բժեզինսկուն, բացատրություն տալ ՍԱՎԱԿ-ին ամերիկյան տարածքում գործողությունների ազատություն տրամադրելու կապակցությամբ։

Նման «անմաքրաբարո», իսկ երբեմն էլ անօրինական հարաբերությունները, ինչպես Հենսենն էր ասում, պաշտպանում էին ոչ միայն երկու երկրների անվտանգության ծառայությունները։ Բանկային, գործարար, քաղաքային և կառավարական շրջանները (որոնք, ի միջի այլոց, միահյուսվել էին միմյանց) հետաքննության դեպքում ջրից չոր դուրս չէին գա։ Փոխանակ պաշտոնական լոբբի ստեղծելու, որը գրանցված է ամերիկյան օրենսդրությամբ, շահական վարչակարգը առավել ճարպիկ դուրս եկավ. նա իր համար կանխապես պաշտպանություն էր

ապահովել, ավելի ճիշտ՝ ուղղակի կաշառել էր պառլամենտի գործիչներին, պաշտոնաթող բարձրաստիճան սպաներին, նախկին մինիստրներին, համալսարանի պրոֆեսորներին, ազդեցիկ ժուռնալիստներին։

Թեհրանի իշխանությունների ներկայացրած փաստաթղթերում, Իրանում և ԱՄՆ-ում «Վաշինգտոն պոստ», «Նյու Յորք Թայմս» և ուրիշ թերթերի հավաքած նյութերում, Ջորջ Հենսենի կոնգրեսում ունեցած մի շարք ելույթներում հիշատակվում են շատ նշանավոր գործիչների անուններ, որոնք օգտվում էին «բարերարություններից», ավելի ճիշտ Փահլավու կաշառքներից։ Նրանցից էին՝ Հենրի Քիսինջերը, Դևիդ Ռոկֆելլերը, նախկին փոխպրեզիդենտ Սպիրո Ագնյուն, նախկին պետական քարտուղար Ուիլյամ Ռոջերսը, ֆինանսների մինիստր Ուիլյամ Միլլերը, Լոս Անջելեսի քաղաքապետուհի Բրեդլին, Մերլինդի նահանգապետ Պիեռ Դյուպոն, ներկայացուցիչների պալատի անդամ Լարի Մակդոնալդը, Վերակազմության և զարգացման միջազգային բանկի նախկին կառավարիչ Ջոն Մաքլոյը և նույնիսկ նախկին պրեզիդենտ Ջերալդ Ֆորդը։

Նրանցից շատերը, մասնավորապես սենատոր Ջավիտսի կինը, ստանում էին պատկառելի նյութական բարիքներ, հասկանալի է, «հաշիվ չտալով» այն բանում, որ իրենց հրապարակը և կապերը թույլ էին տալիս շահին՝ ամրապնդել բարեկամությունը հարկավոր մարդկանց հետ։

Ռոկֆելլերը և Քիսինջերը չէին ժխտում այդպիսի բարեկամության առկայությունը։ «Չեյզ Մանհաթըն բանկի» ղեկավարը և նախկին պետական քարտուղարը խոստովանում էին, որ շատ են դիմել վարչակազմին, փորձելով նախկին շահին Ամերիկա վերադարձնել։ Ոմանք, ինչպես օրինակ, պետական քարտուղարի նախկին տեղակալ Բոլլը, նրանց մեղադրում էին այն բանի համար, որ նրանք «կոպիտ ճնշում» են գործադրել պրեզիդենտ Քարտերի նկատմամբ, հասկանալով, սակայն, դրա հետ կապված ամբողջ վտանգը։ Ինչ-որ մեկը պնդում էր, որ նրանք դիտավորյալ փորձում էին ճգնաժամ ստեղծել «Չեյզ Մանհաթըն բանկի» շահերը հաջողությամբ պաշտպանելու համար, որոնք նրանք խառնում էին ԱՄՆ-ի շահերի հետ։

Փահլավու դինաստիայի անկումից հետո Ուոլթրիտին պատած տագնապը անսպասելիորեն մեղմացավ հունվարի 14-ի առավոտյան։ Ռադիոյի և հեռուստատեսության հաղորդավար-

ները այդ օրը հիմնարկները բացվելուց դեռ շատ առաջ հայտարարեցին պրեզիդենտ Քարտերի աննախադեպ որոշումը ամերիկյան բանկերում և արտասահմանի նրա մասնաճյուղերում գտնվող իրանական ավուարները սառեցնելու մասին։ «Այդպիսի միջոցառումը ոչ բոլորի համար էր անսպասելի,— գրում էր «Մոնդը»։— Իրազեկներից ոմանք, որոնց մեջ էր, անկասկած, նաև «Չեյզ Մանհաթըն բանկի» վարչության նախագահ Դևիդ Ռոկֆելլերը, գիտեին, որ այդ միջոցառումը ֆինանսների մինիստրությունում ուսումնասիրվել էր նոյեմբերի 4-ին Թեհրանում պատանդներին գրավելուց դեռևս շատ առաջ։ Դա կոչված էր օգնելու բանկերին «աղետի» պայմաններում։

«Չեյզ Մանհաթընը», նավթից ստացվող մուտքի հիմնական շտեմարանը, տարեկան կատարում էր 20 միլիարդ դոլարի հասնող մի կլոր գումարի գործառնություն։ Մյուս կազմակերպությունների հետ միասին նա ֆինանսավորեց բազմաթիվ նախագծեր, որոնցից ոչ բոլորն էին Իրանին օգուտ բերում։ Թեհրանի պնդումով, այդ բանկի միջոցով էին իրականացվում շահի ընտանիքի անդամների շահադիտական կամ խարդախ գործողությունները։ Բանկը կառավարում էր շահի առասպելական հարստությունները, որին մեղադրում էին այն բանի համար, որ նա յուրացրել է 10—20 միլիարդ դոլարի հասնող պետական միջոցները։ Այդ բանկը իրանական կառավարությանը կամ շահի կեղծ մասնավոր ընկերություններին նաև վարկ էր տալիս բացարձակ անօրինական պայմաններով։

Ամերիկյան շատ մասնավոր ընկերություններ, որոնք քիչ օգուտ չէին կորզում «նավթադոլարներին» ռեինվեստիցիաներից, ավելացնում էին իրենց հաշիվները, դրանց ամրացնելով նաև քողարկված ձևով «միջնորդադրամը» կամ կաշառքը, որ վճարում էին շահի վարչակարգի երևելի ներկայացուցիչները, մատակարարում էին տեղական պայմանների համար ոչ պիտանի տեխնիկա, ստանում էին կանխավճարներ՝ չիրականացված կամ չեղյալ հայտարարված պայմանագրերով։

Եթե ամերիկյան արդյունաբերության այնպիսի հսկաները, ինչպիսիք են «Բեչլը», «Նորթրոպը», «Բեչթելը», «Լոկխիդը», «Վեսթինհաուզը», «Դյուպոն դե Նեմուրը», «Գրումանը» և «Չեներալ մոտորսը», իրանական հեղափոխության պատճառով ընկան դժվար կացության մեջ, ապա «Չեյզ Մանհաթընը», որոշ մասնագետների կարծիքով, համարյա թե կանգնեց սնանկության եզրին կամ այդպիսին էր ներկայացնում իրադրությունը։ Ուստի բանկի դիրեկցիան ոչ առանց թեթևության իմացավ պրեզիդենտ Քարտերի աննախադեպ որոշման մասին՝ որպես «ճընշմիջոց» սառեցնել շուրջ 8 միլիարդ դոլար իրանական ավուարներ և դրանով իսկ, «նյու յորք թայմսի» կարծիքով, վերջ դնել սկսված «մղձավանջին»։

«Արծվի մագիլները»

Տեղի էին ունենում բանակցություններ, ցույցեր, մամուլի կոնֆերանսներ և զորավարժություններ։ Իսկ Պենտագոնի և ԿՀՎ-ի ընդերքում դիվերսիոն գործողությունների գծով մասնագետները ավանտյուրա էին պատրաստում «պատանդներին փրկելու» համար։ Դրա պլանավորումը, Զ. Բժեզինսկու խոստովանությամբ, սկսվել էր պատանդների գրավումից արդեն երկու օր հետո։

Դրա ձախողումից մի քանի շաբաթ անց արևմտագերմանական «Շպիգել» շաբաթաթերթը Պենտագոնի հատուկ զեկույցի հիման վրա այդ մասին մանրամասն հաշվետվություն հրապարակեց։

Հինգ ամիս և երեք օր ամերիկյան ռազմական մեքենան, որ զբաղված էր օպերացիայի նախապատրաստությամբ, աշխատում էր անբասիր։ Պլանավորմանը և նյութական ապահովությանը, հատուկ խմբի գործողությունների մշակմանը և այդ գործողությունն իրականացնելու համար հետախուզական տվյալների հավաքմանը վերաբերող ամենափոքր մանրամասները պահվում էին խիստ գաղտնի։ Եվ ահա եկավ վճռական օրը՝ ապրիլի 25-ը...

Ձախողված գործողության և նրան ուղեկցող իրադրության Պենտագոնի հետագայում կազմած մանրամասն նկարագրությունը ասես վերցված էր կինոդեդեկտիվից, որը իր սյուժեի բարդությամբ բավական առաջ էր անցել Չեյմս Բոնդի արկածների մասին ամեն մի ֆիլմից։

Հազիվ թե երբևէ այդքան խնամքով նման օպերացիա մշակված լիներ։ Հազիվ թե ընդհանրապես երբևէ պլանավորվեր այդքան համարձակ միջոցառում։ Չէ որ, որպեսզի իրանցիների ձեռքից փրկեին պատանդներին, հեռավոր Ամերիկայի հատուկ խմբերը պետք է հաղթահարեին օդային հազարավոր կիլոմետրեր, թափանցեին իրենց նկատմամբ թշնամաբար տրամա-

դրված շուրջ հինգմիլիոնանոց բնակչությամբ քաղաքը, իսկ այնուհետև դուրս գալ այնտեղից։

Արդեն 1979 թվականի նոյեմբերի 21-ին, ինչպես երևում է Պենտագոնի զեկույցից, սկիզբ դրվեց պատանդներին փրկելու համար հույժ գաղտնի օպերացիայի նախապատրաստությունը՝ նրանց համար ուղղաթիռների և անձնակազմի ընտրությունը։

Պատանդներին ազատելու օպերացիան որոշված էր սկսել ամերիկյան «Նիմից» ավիակրից, որը 1980 թվականի հունվարից գտնվում էր Պարսից ծոցի ափերի մոտերքում,— նշված էր շտաբների պետերի կոմիտեի զեկույցում։ Սակայն «Նիմիցից» մեկնարկ վերցնող ուղղաթիռները ի վիճակի չէին առանց վայրէջքի հաղթահարել մինչև Թեհրան ընկած տարածությունը, ուստի անհրաժեշտ եղավ Իրանի մայրաքաղաքից հարավ-արևելք 100 կիլոմետրի վրա նախատեսել միջանկյալ վայրէջքային հրապարակ, որտեղ հնարավոր էր լցավորել ուղղաթիռները։

Այդպիսի հրապարակը պետք է բավականաչափ մեծ լիներ, հարթ և կոշտ ծածկույթ ունենար, որպեսզի նրա վրա կարողանային վայրէջք կատարել ոչ միայն ութ ուղղաթիռ, այլև վառելիքով և սարքավորումներով հանդերձված վեց տրանսպորտային ինքնաթիռ, և, բացի դրանից, գտնվեր աննկատելի տեղում, բայց բավական նկատելի ու տեսանելի լիներ վերևից։

Արբանյակներից ստացված մանրամասն քարտեզի և լուսանկարների օգնությամբ ամերիկացիները ընտրեցին նշված պահանջները բավարարող շրջան, և այն անվանեցին «№ 1 անապատ»։ Սակայն նույնիսկ այդպիսի իդեալական տեղը, ասված էր զեկուցման մեջ, «ուներ լուրջ թերություն. կողքից անցնում էր թույլ ծածկույթով ճանապարհ»։

Տրանսպորտային ինքնաթիռներն ընտրելիս նկատի էին առնում, որ դրանք լինեն նույն այն տիպի, ինչպիսին իրանականն է։ Որևէ բան պատահելիս հավանականությունը, թե իրանցիները վատ բան կասկածեն, քիչ կլիներ։ Վճռվեց օգտագործել «C-130» ինքնաթիռները։

1979 թվականի նոյեմբերին «RH-53» վեց ուղղաթիռ տեղափոխվեց Արաբական ծովում երթևեկող «Քիտի Հոկ» ամերիկյան ավիակրի վրա։ 1980 թվականի հունվարին դրանք վերաբազավորվեցին «Նիմից» ավիակրի վրա, որտեղից պետք է իրականացվեր օպերացիայի անմիջական ղեկավարությունը։

Երկու ուրիշ «RH-53» ուղղաթիռներ այդ ժամանակ արդեն գտնվում էին «Նիմիցի» վրա։

Ուղղաթիռի անձնակազմը ընտրվել էր փորձված օդաչուներից, որոնցից շատերը (ինչպես, օրինակ, հետագայում զոհված Ռիչարդ Բեքը) արդեն մասնակցել էին համարձակ օպերացիաների։ «Ընտրվել են ամենալավ օդաչուները»,— ասված էր Պենտագոնի զեկուցագրի մեջ։

«RH-53»-ով վարժական թռիչքները անցկացվում էին դեռևս 1979 թվականի դեկտեմբերին Լաս-Վեգասի մոտերքում և Արիզոնի անապատի վրայով. այնտեղ բնական պայմանները մոտավորապես նույնն էին, ինչպիսին Իրանինն էր։ (Թեհրանում կառուցված ԱՄՆ-ի դեսպանատան ճիշտ պատճենը հանդիսացող շենքի վրայով կատարվել էր շուրջ 20 փորձ, պատանդներին ազատելու գործողությունները մշակելու համար)։ 1980 թվականի հունվարին սկսվեցին վարժական թռիչքները «Նիմիցից»։

Տեղանքի հետազոտությունը, որ նշանակված էր որպես «№ 1 անապատ», լավ արդյունքներ տվեց։ Ապրիլի 12-ին այնտեղ վայրէջք կատարեց «C-130» վեցյակից մեկը։ Մի քանի ժամում, որի ընթացքում ինքնաթիռը մնաց իրանական տարածքում, օդաչուները մոտակայքում ոչ մի կենդանի շունչ չտեսան։ Նրանք հանգիստ հողի մեջ ցուցանշաններ խփեցին «C-130» վեց ինքնաթիռների պլանավորված ապագա վայրէջքի համար և հողից փորձանմուշներ վերցրին, որոնք պետք է թույլ տային որոշելու՝ հնարավո՞ր է արդյոք տվյալ շրջանում հատուկ անձնակազմով, ծանր հանդերձանքով և վառելիքի պաշարով տրանսպորտային ինքնաթիռների գիշերային վայրէջքը։ Փորձը դրական արդյունք տվեց։

Օպերացիան որոշված էր կատարել ապրիլի 24-ին։ Ապրիլի 20-ից ուղղաթիռների ամբողջ անձնակազմը և մեխանիկները գտնվում էին «Նիմիցի» վրա։

Հնարավոր վտանգի գործոնը առավելագույն չափով վերացնելու համար ուղղաթիռները բառացիորեն սարքավորված էին էլեկտրոնային և նավագնացության նորագույն սարքավորումներով։ Բոլոր դետալները և հանգույցները, որոնք, ինչպես պարզվեց, չորս հինգերորդով սպառել էին ժամանակի պաշարները, փոխարինվեցին։

Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը օդերևութաբանները դու-

շակեցին գրեթե պարզ երկինք, լավ տեսանելիություն, առանձին բարձր ամպեր և նպաստավոր քամի։ Այսինքն՝ ամեն ինչ վկայում էր այն մասին, որ եղանակը չի խանգարի պլանավորված օպերացիային։ Թռիչքի երթուղուց 80 կիլոմետր հեռավորության վրա առաջացած ամպրոպային ճակատը խոչընդոտ չհամարեցին։ Ամեն ինչ փայլուն էր դասավորվել։ Սպասում էին միայն օպերացիան սկսելու հրամանին։ Ի վերջո հրամանը տրվեց։

Առաջին խոչընդոտը տեղի ունեցավ դեռ մեկնարկից առաջ։ «Նիմիցի» վրա հանկարծ ոչ այս ոչ այն հակահրդեհային սարքավորումներից մեկը գործի ընկավ, որը հինգ ուղղաթիռ պարուրեց ծովի ջրով և փրփուրով։ Հարկավոր եղավ մաքրել և նորից ստուգել ուղղաթիռների բոլոր համակարգերը և ստուգողական թռիչքներ կատարել։ Օդաչունները ոչ մի կասկածելի բան չհայտնաբերեցին։

Ապրիլի 24-ի օրվա երկրորդ կեսին, թռչելով անհայտ օդանավակայանից, դեպի «№ 1 անապատ» ուղղությունն վերցրին տրանսպորտային ինքնաթիռները։ (Վեց տրանսպորտային «C-130» ինքնաթիռ, կոմանդոսի ստորաբաժանումներով, տարբեր հանդերձանքով և վառելիքով, Եգիպտոսում գտնվող օդանավակայանից օդ բարձրացան, 1980 թվականի հունիսի 30-ին հաղորդեց ամերիկյան «Նյուսուիք» հանդեսը։) 19. 30-ին «Նիմիցից» օդ բարձրացան ութ ուղղաթիռ։

Արդեն մի քանի րոպե անց այն բանից հետո, ինչ առաջին տրանսպորտային «C-130» ինքնաթիռը վայրէջք կատարեց «№ 1 անապատում», ճանապարհին, որը, ինչպես հաստատեցին, միշտ դատարկ էր լինում, հանկարծ հայտնվեց ուղևորներով լցված տեղական ավտոբուսը։ Կրակոցներով ավտոբուսը կանգնեցրին, և բոլոր 44 ուղևորներին, այդ թվում ծերերին ու երեխաներին, կապանավորեցին։ Որոշ ժամանակ անց ճանապարհին դղրդոցով հայտնվեց մի ավտոցիստեռն, որի ետևից շարժվում էր ավտոսայլակը։ Զինվորները ավտոմատներից բենզատարի վրա կրակ բացեցին, և այն բռնկվեց վառ բոցով։ Վարորդը հասցրեց խցիկից դուրս ցատկել և թռչել ավտոսայլակի ոտնակին, որը արդեն շուռ էր եկել հակառակ ուղղությամբ։ Չնայած ավտոմատի կրակահերթերին, ավտոսայլակը անհետացավ մթության մեջ։ Այդպես անսպասելի հայտնվեցին ձեռնարկվող գործողության ականատեսները։ Հաջորդ ժամերին «№ 1 անապատի» շրջանում ամեն

ինչ լուռ էր։ Ուղղաթիռների ժամանելուն սպասում էին կեսգիշերին։ Նշանակված ժամանակը լրացավ, բայց նրանք դեռևս չկային։

Իսկ երկնքում տեղի էր ունենում հետևյալը։ Օդաչուները իրենց մեքենաները վարում էին առանց ռադիոկապի, օգտվելով միայն տեսողական կողմնորոշումից։ Ինչպես և պլանավորվել էր, թռիչքից մոտ երկու ժամ հետո փոքր բարձրության վրա նրանք հասնում են առափին։ Հանկարծ № 6 ուղղաթիռի խցիկի հսկիչ լամպը սկսում է ազդանշան տալ այն մասին, որ տանող պտուտակի թևերից մեկը սպառնում է ցրիվ գալ։

Օդաչուն որոշում է վայրէջք կատարել։ Վերջին թռչող № 8 ուղղաթիռը նույնպես վայրէջք է կատարում։ Թևը զննելուց հետո համոզվում են, որ այն իսկապես վնասված է։ № 6 ուղղաթիռի անձնակազմը, իր հետ վերցնելով գաղտնի փաստաթղթերը, փոխադրվում է № 8 ուղղաթիռ։ Ութ ուղղաթիռներից մնում է յոթը։ Օպերացիայի հաջողության համար պահանջվում էր վեցից ոչ պակաս։

Այդ ժամանակ առջևից թռչող վեց ուղղաթիռները հայտնվում են ավազի փոթորկի գոտում։ Գետնի կողմնորոշիչները կորցնում են։ Քանի որ ռադիոկապը միացնել արգելված էր, անձնակազմերը գրեթե ոչինչ չգիտեին մեկը մյուսի մասին։ Ըստ օպերացիայի պլանի, ավազի փոթորկի գոտում գործողություններ չէին նախատեսված։ Իսկ դա այն ամպրոպային ճակատի հետևանքն էր, որին ուշադրություն չէին դարձրել։

Մոտավորապես 30 րոպե անց անսարքություններ են առաջանում № 5 ուղղաթիռի էլեկտրասնուցման համակարգում։ Ինչոր մեկի կողմից անփութորեն անկյուն շպրտված համազգեստը մեկուսացնում է էլեկտրագեներատորի սառեցումը, որի հետևանքով շարքից դուրս է գալիս զգայուն նավագնացության համակարգը։ № 5 ուղղաթիռը ամբողջովին կտրվում է մնացած խմբից։ Վառելանյութի պաշարը դեռևս բավարար էր, որպեսզի ետ դառնային, հասնեին «Նիմիցին»։ Օդաչուն վստահ չէր։ Կկարողանա՞ արդյոք առանց շարքից դուրս եկած նավագնացության համակարգի հաղթահարել իր առջև ընկած լեռնաշղթան։ Ուստի № 5 ուղղաթիռը վերադառնում է ավիակրի վրա։

Այսպիսով, օդում մնում են վեց ուղղաթիռ՝ նվազագույն թիվ օպերացիան հաջողությամբ կատարելու համար։ Հանկարծ № 2 ուղղաթիռի հիդրավլիկ համակարգում առաջանում են անսար-

քություններ, տեղի է ունենում հեղուկի հոսակորուստ։ Այնուամենայնիվ օդաչուն իր պատասխանատվությամբ շարունակում է մեքենան վարել նախկին ուղղությամբ՝ դեպի «№ 1 անապատի» շրջանը։

Համաձայն պլանի, ուղղաթիռները պետք է վայրէջք կատարեն նշված տեղում կեսգիշերին։ Սակայն նրանք այնտեղ հայտնվում են հետևյալ հերթականությամբ՝ 0,50 և 1,40-ի միջև եղած ժամանակամիջոցում։ Կորչում է գիշերվա թանկագին ժամանակի մեկուկես ժամից ավելին, այնպես որ ուղղաթիռների լցավորումը և հանդերձանքի բեռնավորումը կատարվում է հապճեպ։ Բացի դրանից, «արշավախմբի» ղեկավար Չարլզ Բեքուիտը ժամանում է նախավերջին ուղղաթիռով և սկզբում ենթադրում էր, որ օպերացիայի հաջողությանը ոչինչ չի խանգարում, քանի որ անապատում վայրէջք են կատարել վեց մեքենա։

Սակայն № 2 ուղղաթիռի անձնակազմը, զննելով մեքենան, համոզվում է, որ հիդրավլիկ համակարգի անսարքությունը վերացումը մի քանի ժամ կպահանջի։ Պարզվում է, որ ջարդվել է ալյումինե մանեկը (որին հասնելը չափազանց դժվար է), վնասելով խողովակաշարը, որով մատուցվում է հիդրավլիկ հեղուկը։ Վերջինիս հոսքի պատճառով տաքացել ու վնասվել էր պոմպը։ Այժմ ուղղաթիռները հաշվարկային թվից պակաս մնացին։

Չարլզ Բեքուիտը հասկացավ, որ օպերացիան պետք է ընդհատել։ Օպերացիայի մյուս ղեկավարները, որոնց հետ կապը վերականգնվեց, այդ թվում, ինչպես հաստատում են, եգիպտոսում գտնվող «հատուկ նշանակության ուժերի» հրամանատար Ջեյմս Վոթը, նրա հետ համաձայնվեցին։ Ռադիոյով տեղեկացրին ԱՄՆ-ի պրեզիդենտ Քարտերին, որը ժամը 2-ն անց 10 րոպեին կարգադրեց «ավարտի» ազդանշան տալ։ Բոլոր ուղղաթիռները գիշերվա քողի տակ պետք է անմիջապես վերադառնային «Նիմիցի» վրա, իսկ տրանսպորտային ինքնաթիռները՝ իրենց բազան։ Եվ, թերևս, ոչ ոք ոչինչ չէր իմանա, եթե օպերացիան դադարեցնելիս վթար տեղի չունենար։

«C-130»-ի բաքում, որից լցավորվում էր № 4 ուղղաթիռը, վերջացավ պահեստի վառելիքը։ Ուստի այն պետք է վերալցավորվեր մյուս ինքնաթիռից, որի կողքին գտնվում էր թռչելու պատրաստ № 3 ուղղաթիռը։ Հանկարծ ուժեղ քամի սկսվեց, և № 3 ուղղաթիռը, որ արդեն կորվել էր գետնից, այնպես ուժեղ թեքվեց, որ թևով հարվածեց «C-130» ինքնաթիռի ձախ թևին։

Նույն ակնթարթին պայթյուն լսվեց։ Ինքնաթիռում գտնվող քառասուն մարդը կարողացան վթարային դռնակից դուրս թռչել, սակայն «C-130»-ի անձնակազմի հինգ անդամ և «RH-53»-ի անձնակազմի երեք անդամ զոհվեցին։ Մնացած ուղղաթիռների օդաչուները շտապ կանգնեցրին շարժիչները և վազեցին դեպքի վայրը։ Որոշվեց բոլոր մարդկանց նստեցնել ինքնաթիռները, քանի որ (ասված է Պենտագոնի զեկուցման մեջ) «ժամանակը և վառելիքը կրիտիկական գործոններ դարձան»։

Ականատես խավարում բեռնավորված ինքնաթիռները բարձրանում են օդ։

Այսպիսով, ավելի քան հինգ ամսվա նախապատրաստությունից հետո օպերացիան տապալվեց։

«16. 20-ին (Վաշինգտոնի ժամանակով) ես Բրաունից տեղեկություն ստացա այն մասին, որ հանդիպման տեղում ամեն ինչ կարգին է,— երկու տարի անց գրում է Զ. Բժեզինսկին «Նյու Յորք թայմս մեգազին» հանդեսում։— 16. 45-ին ամեն ինչ կտրուկ փոխվեց։ Զանգահարեց Բրաունը և ասաց. «Իմ կարծիքով, օպերացիան պետք է չեղյալ հայտարարել։ «№ 1 անապատում» ուղղաթիռներից մեկի հիդրավլիկ համակարգի մեջ բարդություն առաջացավ։ Այսպիսով մեզ մնում է անհրաժեշտ նվազագույն վեց ուղղաթիռներից էլ պակաս։ Կարելի է օգտագործել տրանսպորտային ինքնաթիռները, որպեսզի մեր մարդկանց դուրս բերեն «№ 1 անապատից»։

Ես անմիջապես գնացի Զվածև կաբինետը։ Քարտերի խորհրդակցում էր Քրիստոֆերի և Սպիտակ տան իրավախորհրդատու Լլոյդ Քաթլերի հետ։ Ես կաբինետ մտա 16. 50-ին և ասացի պրեզիդենտին, որ պետք է նրա հետ խոսեմ անմիջապես և առանձին։ Նրան պատմեցի նորությունների և պատճառների մասին, թե ինչու, Բրաունի կարծիքով, պետք է օպերացիան դադարեցնել։ Քարտերը փնթփնթաց. «Դրողը տանի»։

Պրեզիդենտը Բրաունի հետ կապվեց 16. 55-ին։ Նա խընդրեց Բրաունին շարադրել օպերացիայի հրամանատարի կարծիքը, որից հետո ես լսեցի, ինչպես պրեզիդենտն ասաց. «Այդ դեպքում համաձայնվենք նրա հետ»։

Նա լռափողը դրեց, նայեց ինձ և հաստատեց, որ օպերացիան չեղյալ է հայտարարվում։ Դրանից հետո նա գլուխը բռնեց և այդպես նստեց մի քանի վայրկյան։ Քարտերը, երևի, հաս-

կանում էր, թե հենց հիմա ինչպիսի անձնական, ինչպես նաև քաղաքական, աղետ կրեց ինքը։

17. 15-ին պրեզիդենտին զանգահարեց գեներալ Ջոունսը, հաղորդելով, որ ուղղաթիռներից մեկը բախվել է «C-130»-ին ու այրվել, և որ կան զոհեր։ Քարտերի տեսքն այնպիսին էր, ասես դանակով հարվածեցին։ Նա Վենսին, Քրիստոֆերին և Պաուելին ցուցում տվեց մամուլի համար հայտարարություն նախապատրաստել օպերացիայի ձախողման մասին։ Շուտով մեզ հետ կապվեց Թերները, ասելով, թե պետք է ձեռնպահ մնալ հրապարակային հայտարարություններից, քանի դեռ ինքը չի համոզվել, որ իր մարդիկ (ԿՀՎ-ի գործակալները) Իրանում անվտանգության մեջ են»։

Ռազմական հարցերի գծով արևմտագերմանական փորձագետ Ուլրիխ Ալբրեխտին հաջողվեց ծանոթանալ Թեհրանում ամերիկյան պատանդներին ազատելու անհաջող փորձերին վերաբերող փաստաթղթերի բնագրերին։ Փաստաթղթերը թույլ են տալիս պատկերացնել այն իրադարձությունները, որ, համաձայն պլանի, պետք է տեղի ունենային ուղղաթիռները «№ 1 անապատում» վերալցավորելուց հետո, մի խելացնոր ձեռնարկում, որին այդպես էլ վիճակված չէր իրականանալու։

Ուղղաթիռները պետք է կրկին օդ բարձրանային ապրիլի 25-ին տեղական ժամանակով ժամը 1-ն անց 3 րոպեին։ Ժամը 2-ն անց 15 րոպեից մինչև առավոտվա 3-ն ընկած ժամանակամիջոցում նրանց անհրաժեշտ էր Գերմսարի մոտերքում, Թեհրանից 80 կիլոմետրի վրա, խոշոր երկաթուղային հանգույցի մոտ, դեսանտ իջեցնել, որին հանձնարարված էր պատանդներին ազատել։ Այնուհետև ուղղաթիռները ուղղություն կվերցնեին դեպի հյուսիս-արևելք և 15 րոպե թռիչքից հետո (3 ժամ 30 րոպեից ոչ ուշ) վայրէջք կկատարեին հեռավոր բարձրլեռնային հարթավայրում։

Այդ հարթավայրում նրանց անհրաժեշտ էր մնալ շուրջ 22 ժամ։ Կեսգիշերին ուղղաթիռները պետք է մեկնարկ վերցնեին Թեհրանի ուղղությամբ։ Ուղղաթիռներով ժամանած «կոմանդոս» ստորաբաժանումը ապրիլի 25-ի ամբողջ օրը պետք է թաքնված մնար դատարկ գարաժում, որը տեղավորված էր ուղղաթիռների վայրէջքի տեղից 700 մետր հեռավորության վրա։

Ձրո ժամին հատուկ ջոկատը պետք է դուրս գար իր թաքստոցից և մեքենաներով մուտք գործեր Թեհրան։ Ենթադրվում

էր մոտենալ դեսպանատանը նրբանցքի կողմից և անմիջապես գրոհել։ Զինվորներով լցված մեքենաներից մեկը պետք է ուղղվեր դեպի արտաքին գործերի մինիստրության շենքը, որպեսզի ազատեր այնտեղ գտնվող երեք պատանդներին։ Այդ պահին ուղղաթիռները արդեն կլինեին Թեհրանի ճանապարհին։ Նրանցից չորսը պետք է վայրէջք կատարեին դեսպանատան դիմաց գտնվող Ամջադիե մարզադաշտում և վերցնեին պատանդներին, ինչպես նաև մարդկանց այն խմբին, որոնց վրա էր դրված պատանդների ազատագրումը։ Դեսպանատան ամբողջ օպերացիային տրված էր 30 րոպե։ Այդ ժամանակաընթացքում երկու ուղղաթիռներ պետք է շարունակեին պտտվել քաղաքի վրա. մեկը պետք է կատարեր կոորդինացիոն կենտրոնի դերը, մյուսի խնդիրն այն էր, որպեսզի վերցներ Իրանի արտգործմինիստրության շենքում գտնվող ամերիկյան երեք պատանդներին և նրանց ազատագրող խմբին։

Ամերիկացիները, ըստ երևույթին, ենթադրում էին, որ օպերացիայի այդ փուլում կարող է ընդհարում ծագել իրանական ստորաբաժանումների հետ և փոխհրաձգություն սկսվել։ Ուստի նկատի էր առնված նույնիսկ ծանր կորուստների հավանականությունը։

Ապրիլի 26-ին ժամը 2-ն անց 30 րոպեին ուղղաթիռները պատանդներով և հատուկ անձնակազմերով պետք է ուղղություն վերցնեին դեպի հարավ-արևմուտք և 60 րոպե թռիչքից հետո ժամանեին Մանսարի օդանավակայանը։ Այնտեղ բոլորը պետք է փոխադրվեին իրենց սպասող և ամեն վայրկյան թռչելու պատրաստ տրանսպորտային «C-130» ինքնաթիռները։ Նախատեսվում էր, որ մինչև լուսաբաց բոլոր ամերիկացիները կլինեն Իրանի տարածքի սահմաններից դուրս։

Եթե օդային հարձակման վտանգ սպառնար (իրանական ՌՕՈՒ-ի կողմից), ուղղաթիռները կարող էին «F-14» գերձայնային ինքնաթիռներից (ազդակոչը՝ «արագաթև արծիվ») կամ «Ֆանտոմ» կործանիչներից (ազդակոչը՝ «օձ») պայմանական ազդանշանով օգնություն խնդրել։

Իրադրությունը բարդանալու դեպքում ենթադրվում էր օգնության կանչել «A-6» կործանիչ-ռմբակոծիչներին, որոնք հատուկ հարմարեցված էին գիշերային պայմաններում մարտական գործողությունների համար, կամ «A-7» ինքնաթիռներին, որոնք նշանակված էին ցամաքային զորքերի գործողություններին

աջակցելու համար։ Ընդ որում այդ ինքնաթիռները նախօրոք պետք է մեկնարկ վերցնեին «Նիմից» և «Կորալ սի» ավիակիրներից, հետևաբար նրանք պետք է գտնվեին Իրանի տարածքում, որպեսզի ժամանակին օգնություն ցույց տային։

Ամերիկյան բարձրաստիճան գործիչների այս բոլոր նախապատրաստություններն ու հետագա հայտարարությունները վկայում են այն մասին, որ Սպիտակ տունը, Պենտագոնը և ԿՀՎ-ն զինված օպերացիա էին պլանավորում, որը դուրս էր գալիս «պատանդներին ազատելու օպերացիայի» շրջանակներից։ Հենց վաշինգտոնյան աղբյուրներից մամուլին հասած տեղեկությունները հաստատում են, որ մարտական պատրաստության էին բերված խոշոր դիվերսիոն ջոկատներ, որոնց ԱՄՆ-ից վաղօրոք ուղարկել էին Իրան։ Հատուկ դեր էր հատկացված «հինգերորդ շարասյանը», որը բաղկացած էր շահի վարչակարգի կողմնակիցներից։ «Մենք լավ նեցուկ ունեինք ուղղակի Իրանի մայրաքաղաքում»,— Ֆրանս Պրես գործակալության թղթակցին։ հայտարարեց անհայտ մնալ ցանկացող ամերիկյան մի գեներալ։ Ամերիկյան «կոմանդոսի» հայտնվելը Թեհրանում պետք է որ ազդանշան ծառայեր մի քանի հազար հատուկ վարժեցրած և նախօրոք Իրան ուղարկված գործակալների՝ տապալված շահի կողմնակիցների հարձակման համար... Այսպիսով, այդ զինված գործողությունը միայն «պատանդներին ազատելու օպերացիա» չէր, այլ մի մասը Վաշինգտոնի եռանդուն ջանքերի, ուղղված, ըստ էության, այն բանի, որ երկրում պետական հեղաշրջում կատարի։

Օպերացիայի պլանը իրագործելու համար ԱՄՆ-ի կառավարությունը իրականացրեց խնամքով մշակված մի կամպանիա, խաբելով ոչ միայն Իրանին, այլև ամբողջ աշխարհին։ Նախապատրաստվող օպերացիան գաղտնի պահելու և առավելագույն չափով նրա հաջողությունն ապահովելու համար վարչակազմը խոսքով և գործով աշխարհի ուշադրությունը բևեռեց մայիսի կեսերի վրա, ակնարկելով, որ միայն այդ ժամկետից հետո զգալիորեն կմեծանա Իրանի դեմ զինված գործողությունների սկսելու հնարավորությունը։

Իրանում ԱՄՆ-ի ռազմական ավանտյուրայի ձախողումից հետո իմամ Խոմեյնին հայտարարությամբ դիմեց իրանական ժողովրդին։ «Քարտերը պետք է իմանա,— ասաց Խոմեյնին,— որ եթե այդ խումբը Թեհրանում հարձակվելու լրտեսական բնի

վրա (ԱՄՆ-ի դեսպանատան։— Ա. Վ.), ապա այժմ և՛ հարձակվողները, և՛ բոլոր 50 պատանդները արդեն կգտնվեին դժոխքի ճանապարհին»։

Խոմեյնին ցուցում տվեց բանակին, ժանդարմերիային, ոստիկանությանը և «իսլամական հեղափոխության պահապանների» կորպուսին՝ լինել մարտական պատրաստության մեջ, հրամայեց անհրաժեշտության դեպքում հավաքագրել քաղաքացիական բնակչությանը՝ պաշտպանության համար։

Թեհրանի հեռատեսությունը ցուցադրեց ռեպորտաժ Իրանում ԱՄՆ-ի ձախողված ռազմական օպերացիայի մասնակիցների ինը դիակների փոխադրման մասին, այնտեղից, ուր իջել էր ամերիկյան դեսանտը։ Զբաղված լինելով այդ հարցի վերաբերյալ այաթոլլա Խոմեյնիի կարգադրությունների կատարմամբ, այաթոլլա Խալխալին հայտարարեց, որ դեսանտ իջեցրած տեղում հայտնաբերված են առնվազն ևս 20 մարդու ածխացած մարմնի մասեր։

Հետաքննության ընթացքում, հավատացնում էր Խալխալին, հաստատված է, որ վայրէջք են կատարել 18 ամերիկյան «C-130» ինքնաթիռ, որից յուրաքանչյուրում նվազագույնը եղել է 180 մարդ, ինչպես նաև դեսանտին մասնակցություն են ունեցել 20 ուղղաթիռ, որոնցից յուրաքանչյուրը կարող էր տեղափոխել մինչև 50 մարդ։ Այսպիսով, ընդամենը ամերիկյան դեսանտին մասնակցել են, նրա խոսքերով, շուրջ 3 հազար մարդ։ Խալխալին ենթադրություն արեց, որ դեսանտայինները պլանավորել էին նաև գերի վերցնել իմամ Խոմեյնիին։

Պրեզիդենտ Քարտերը փորձում էր շահաբաժին կորզել նույնիսկ խայտառակ կերպով տապալված օպերացիայից։ Նա հրապարակորեն շնորհակալ եմ ձեզնից, որ դուք ակնառու

կերպով ցուցադրեցիք այդ ուժը»: Դրա կողքին պատանդների կյանքը մանր դրամի էր նման: Ինչպես հաղորդեց Էյ-բի-սի հեռուստաընկերությունը, այդ ավանտյուրան ըստ ամենայնի կարող էր վերջանալ նրանցից շատերի կործանումով:

Օպերացիային տվել էին «Արծվի մագիլներ» ծածկանունը: Սպիտակ տունը և Պենտագոնը ցանկանում էին ցուցադրել իրենց «մագիլների» ուժը: Սակայն մագիլները ջարդվեցին:

«Ուժի անձնապաստանությունը» (սենատոր Ֆուլբրայթի արտահայտությունը) դիմադրության հանդիպեց առավել ռեալիստորեն մտածող մարդկանց, նույնիսկ վարչակազմի բարձր էշելոնի կողմից: «Բավական լայնորեն տարածվեց սխալ կարծիքը այն մասին, թե Ամերիկան կարող է տիրապետել մի հզորության, որ նրան թույլ կտա աշխարհը դարձնել այնպիսին, ինչպիսին մենք կցանկանայինք տեսնել,— ասաց ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Ս. Վենսը պաշտոնաթող լինելուց հետո, որպես բողոքի նշան Իրանում զինված ավանտյուրայի դեմ:— Այդպիսի հնացած պատկերացումը որոշվում է ավելի շուտ հայրենաբաղձությամբ, քան այսօրվա ռեալ իրականությամբ»:

Սենատոր Է. Քենեդին Քարտերին մեղադրում էր նրա համար, որ նա, ամբողջ ազգը մշտապես պահելով էլեկտրականացված վիճակում և դրանով իսկ մարդկանց ուշադրությունը շեղելով հենց ԱՄՆ-ում տիրող խոր ճգնաժամային երևույթներից՝ տնտեսական անկարգությունից, ինֆլյացիայից, գործազրկությունից, իրադրությունը օգտագործում էր զուտ կոնյունկտուրային նախընտրական նկատառումներից ելնելով: «Պրեզիդենտի քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ իմ որդու ճակատագիրը կախված է մազից: Միակ բանը, որ այժմ հուզում է Քարտերին, դա Սպիտակ տան համար նախընտրական պայքարն է»,— այսպիսի դաժան մեղադրանք ներկայացրեց այն ժամանակ հեռուստախցիկի առջև հեկեկացող պատանդներից մեկի մայրը՝ Ս. Ռոուզենը:

Ավարտ

Պատանդների հետ կապված ճգնաժամի հետագա զարգացումը տեղի ունեցավ ոչ այնքան դրամատիկորեն: 1980 թվականի հունիսին Կահիրեի զինվորական հոսպիտալում քաղցկեղից մահացավ նախկին շահը: Թաղմանը ներկա էին ոչ միայն նրա բազմաթիվ զոհերի ուրվականները: Հուղարկավորությանը մասնակցում էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի և Մարոկկոյի պաշտոնական ներկայացուցիչները: Սակայն, ինչպես հեգնորեն նկատել է փարիզյան «Մաթեն» թերթը, արարողությունը շատ ճոխ էր, «միայն ժողովուրդն ու վիշտն էին բացակայում»: Իրանական մամուլը պնդում էր, որ նախկին շահի մահը, որը բեռ էր Վաշինգտոնի համար, արագացրին ԿՀՎ-ի գործակալները՝ նրա բուժմանը միջամտելով: Շահը,— գրում է «Էթելաաթ» թերթը,— մեջտեղից վերացվեց մեջլիսում պատանդների վերաբերյալ հարցի քննարկման նախօրյակին: Արտասահմանյան մամուլը, իր հերթին, հաղորդեց, որ հիվանդության ընթացքում մահացու ազդեցություն գործեց մեծ չափերով քիմիական դեղանյութերի օգտագործումը:

Պատանդների հետ կապված պատմության ավարտը վրա հասավ ճիշտ այն պահին, երբ ԱՄՆ-ի նոր պրեզիդենտ Ռ. Ռեյգանը կապիտոլիումի աստիճանների վրա երդում էր տալիս: Այդ ժամանակ Թեհրանի օդանավակայանից օդ բարձրացան ինքնաթիռները՝ տանելով ամերիկյան 52 պատանդների: Հունվարի 20-ի գիշերը, լույս 21-ին նրանց հասցրեցին ԳՖՀ-ի տարածքում գտնվող ամերիկյան Վիսբադեն ռազմաօդային բազան:

Ինչպես պաշտոնապես հաղորդել են Թեհրանից, ԱՄՆ-ի պարտավորության փոխարեն՝ հրաժարվել Իրանի ներքին գործերին,— ուղղակի կամ անուղղակի քաղաքական կամ ռազմական,— միջամտելուց, վերադարձնել իրանական ժողովրդին պատկանող ամերիկյան բանկերում սառեցված միջոցների մի մասը, մնացած մասը հանձնելով միջազգային արբիտրաժի դատին, վերացնել տնտեսական էմբարգոն, իրանական կողմը համաձայնվեց ազատել 52 ամերիկացիներին: Պատանդներին ազատելու վերաբերյալ համաձայնագրի պայմանների համաձայն ԱՄՆ-ը նորից գործառնության մեջ դրեց գրեթե 8 միլիարդ դոլար գումարով իրանական եկամուտները, որոնք փոխադրվեցին անգլիական բանկ՝ Ալժիրի կենտրոնական բանկի տրամադրության տակ: Այդ գումարի մեծ մասը թողնվեց ամերիկյան և եվրոպական բանկերին՝ Իրանի պարտքերը վճարելու համար, իսկ ինքը Իրանը ստացավ 2,9 միլիարդ դոլար: ԱՄՆ-ը համաձայնեց Իրանին հանձնել 400 միլիոն դոլարի ռազմական գույք և 500

միլիոն դոլարի այլ սարքավորումներ, որոնց համար ժամանակին Իրանը վճարել էր։

Սակայն ԱՄՆ-ում, Իրանի տվյալներով, մնացին իրանական ուրիշ ավուրներ ևս՝ առնվազն 6 միլիարդ դոլար արժողությամբ։

Պատանդները հեռացան Թեհրանից։ Սակայն հրթիռային հածանավերը, որ ուղարկվել էին Հնդկական օվկիանոս, իբրև թե նրանց «պաշտպանելու» համար, մնացին։ Արաբական ծովի հյուսիսային մասում, իրանական ափերի մոտ առաջվա նման երթևեկում են ամերիկյան երկու ավիակիր հարվածային խումբ՝ բաղկացած 33 նավից, այդ թվում՝ երեք դեսանտային։ Նորից սկսեց պատվել «սովետական ռազմական սպառնալիքի» վերաբերյալ պրոպագանդիստական հին վերսիան։ «Նյու Յորք դեյլի նյուսը» գրեց. «Իրանում ամերիկյան պատանդներին ազատելու վերաբերյալ համաձայնագիրը արձակեց Ռոնալդ Ռեյգանի ձեռքերը և թույլ տվեց անցնել Պարսից ծոցում Սովետական Միության զավթողական սպառնալիքից Միացյալ Նահանգների պաշտպանությունը ամրապնդելու կենսականորեն անհրաժեշտ խնդրի լուծմանը... Ռեյգանը այժմ հնարավորություն կստանա ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել ամերիկյան ռազմածովային և ռազմաօդային ուժերի համար այդ շրջանում, ինչպես նաև Սոմալիում, Քենիայում և Օմանում բազաներ ստանալու քարտերյան պլանը իրագործելու վրա»։

Անգլիական «Ռեյտեր» գործակալությունը Պենտագոնից ստացված տեղեկությունների հիման վրա հաղորդեց. «Թեև պատանդներն ազատվեցին և հեռացան Իրանի տարածքից, Միացյալ Նահանգները երբեք չի վերադառնա այն դրությանը, երբ ամերիկյան մերձավորարևելյան նավատորմը Պարսից ծոցի շրջանում բաղկացած էր չորսից հինգ ֆրեգատներից և էսկադրոնային ականակիրներից»։ ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը նավթով հարուստ այդ շրջանում (Պարսից ծոցի), նշում էր «Ռեյտեր» գործակալությունը, չի կրճատվի, առավել ևս հիմա, երբ Վաշինգտոնում իշխանության գլուխ անցավ հանրապետական նոր վարչակազմը, որը հանդես է գալիս ամերիկյան ռազմական հզորության համատարած աճի օգտին։

Ամերիկյան վարչակազմի հետագա քաղաքականությունը հաստատեց այդ մեկնաբանությունը։ Սակայն աչքաթող չե՞ն

արել արդյոք Ռեյգանի ռազմագետները այն, ինչ անտեսել էին նաև նրա բոլոր նախորդները. Պարսից ծոցի գոտու ժողովուրդների կամքը և նրանց ունեցած հնարավորությունները ամերիկյան քաղաքականությանը հակազդել այնպես, որ նրանց շահերը չզրհաբերվեն Վաշինգտոնի կայսերական պատվախնդրությանը։

10

ԻՐԱՆ — ԻՐԱՔ

ԱՆԻՄԱՍՏ, ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Խոշոր ծավալի մարտական գործողությունները Իրանի և Իրաքի միջև ծագեցին 1980 թվականի սեպտեմբերի 22-ին և հեռուստատեսության էկրանների վրա, հարյուր միլիոնավոր դիտողների առջև երևաց նրա մասնակիցների համար դաժան և անիմաստ ռազմական կոնֆլիկտի պատկերը։ Հրետանային մեծամարտերին փոխարինում էին ավիացիայի գրոհները։ Ջոհվում էին հազարավոր զինվորներ և խաղաղ բնակիչներ։ Ոչնչանում էին քաղաքներ, գյուղեր, արդյունաբերական ձեռնարկություններ։ Մարտերի առաջին շաբաթում օդից ռմբակոծության ենթարկվեցին Բաղդադն ու Թեհրանը։ Երկու կողմերն էլ հարվածներ հասցրին նավթային օբյեկտներին։ Կեղտաներնջագույն բոցերի լեզուն և վառվող նավթապահեստարանների սև ծուխը ծածկել էին հորիզոնը։

Ձգձգվող պատերազմից առաջացած տնտեսական վնասը յուրաքանչյուր կողմի համար հաշվվում էր միլիարդավոր դոլարներով։ Ձախողվեցին զարգացման պլանները, իջավ բնակչության կենսամակարդակը, էկոնոմիկան ետ շպրտվեց։

Արտասահմանյան մամուլի տվյալներով, կոնֆլիկտի սկզբում Իրանի և Իրաքի կանոնավոր զինված ուժերը մոտավորապես հավասար քանակի էին՝ 300 հազարական մարդ։ Ճշմարիտ է, իրանական բանակը կոնֆլիկտի նախօրյակին դասալքության պատճառով կորցրեց գրեթե իր կազմի կեսը և կենտրոնացած էր Իրաքի սահմանից բավական հեռավորության վրա,

բայց իրանական իշխանությունը, բացի կանոնավոր զորամասերից, ռազմաճակատ ուղարկեց մեծաքանակ աշխարհազորայինների՝ «իսլամական հեղափոխության պահապան» ջոկատների։ Իրաքի բանակում կար 2700 տանկ և հազար հրանոթ ընդդեմ իրանական բանակի 1500 տանկի և հազար հրանոթի։ Զգալիորեն քանակական առավելություն ուներ իրանական ավիացիան՝ 440 մարտական ինքնաթիռ ընդդեմ 330 իրաքյանի. Սակայն ամերիկյան արտադրության իրանական կործանիչ-ռմբակոծիչների մեծ մասն օդ բարձրանալ չկարողացավ պահեստային մասերի պակասի պատճառով, որի մատակարարումը կրճատվել էր Վաշինգտոնի կողմից։

Իրաքի զինված ուժերը հարձակում ծավալեցին սահմանի հարավային տեղամասում, Դիզֆուլի, Ահվազի, Խորամշահրի, Աբադանի ուղղությամբ և Խուզիստանի նահանգի մյուս կենտրոններում, որոնք տալիս են Իրանի նավթահանման ինը տասնորդական մասը, ինչպես նաև Կասրե-Շիրինի և Մեհրանի շրջաններում, և սկզբում կարողացան առաջ շարժվել, գրավելով մի քանի հազար քառակուսի կիլոմետր տարածություն։

Սակայն, չնայած առաջին օրերի կորուստներին և անհաջողություններին, իրանական զորքերը ցուցաբերում էին համառ դիմադրություն։ Իրանի ռազմաօդային ուժերը բավական շոշափելի հարվածներ հասցրին Իրաքի թիկունքային օբյեկտներին, իսկ իրանական ուղղաթիռները ակտիվորեն մասնակցում էին ցամաքային զորամասերի գործողություններին։ Առաջին իսկ շաբաթից Իրանի ներսում տեղի ունեցավ դրության նկատելի համախմբում։ Մրցակցող խմբավորումներից շատերը ժամանակավորապես մի կողմ դրեցին իրենց տարաձայնությունները արտաքին վտանգի առջև։

Կոնֆլիկտը ձգձգվող բնույթ ընդունեց։

«Փաստերի մեծ մասը ցույց է տալիս, որ իմպերիալիստական ծառայությունները, սխալ տեղեկություններ տարածելով, սերմանելով անվստահություն, կասկածամտություն, թշնամություն, մասնակցեցին Իրանի և Իրաքի միջև վաղուցվա և միաժամանակ մարած տարածքային վեճերի հրահրմանը,— գրեց «Պրավդան» 1980 թվականի նոյեմբերի 3-ին։— Դրա էությունը տվյալ փուլում հետևյալն է։ 1975 թվականի մարտին Ալժիրում երկու երկրների միջև կնքվեց համաձայնագիր, որի համաձայն իրանա-իրաքյան սահմանը անցնում էր Շաթ-էլ-Արաբ գետի ոչ

թե արևելյան (իրանական) ափով, որը հարավում բաժանում է երկու երկրներին, այլ հեղեղատահունով, հունի ամենախոր մասի կենտրոնով: Դրա փոխարեն Իրանը դադարեց աջակցել Իրաքի տարածքում գործող քրդական ապստամբներին: 1975 թվականի հունիսին Բաղդադում երկու երկրների միջև ստորագրվեցին սահմանների բաժանման և բարիդրացիական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիրը և սահմանները նշող արձանագրությունը: Սակայն... Բաղդադի հայտարարության համաձայն, դեռևս շահի ժամանակ նրան չէին հանձնվել որոշ հողեր: Պահանջելով դրանց հանձնումը և Իրաքի համար դեպի ծովը ելք ծառայող Շաթ-էլ-Արաբի լիակատար անկախությունը, Բաղդադում սեպտեմբերի 17-ին Ալժիրի համաձայնագիրը չեղյալ հայտարարեցին:

Իրանում միապետության տապալումից անմիջապես հետո սկսելով իրար դեմ գրգռել Իրանի և Իրաքի ժողովուրդներին, իմպերիալիզմի ուժերը վատ թաքցրած գոհունակությամբ դիմավորեցին պատերազմի բռնկումը և այժմ փորձում են պահպանել ներկայիս փակուղային իրադրությունը: Ինչպես հայտնի է, Թեհրանը հրաժարվում է բանակցություններ սկսել այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնել ստատուս-քվոն և իրաքյան զորքերը չեն հեռացել նրա տարածքից, իսկ Իրաքը որպես նախապայման առաջ է քաշում ընդունել իր պահանջները, հայտարարելով, որ ինքը իրանական հողերի նկատմամբ ոչ մի հավակնություն չունի»:

Ժամանակը նորանոր փաստեր էր բերում կոնֆլիկտը բորբոքելու Վաշինգտոնի մասնակցության մասին: 1980 թվականի հոկտեմբերի վերջին Ամերիկայի կողմնակից փարիզյան «Ֆիգարոն» գրեց, որ նույն թվականի հունիսին Զ. Բժեզինսկին, մեկնելով Մերձավոր արևելք, դիմեց «բացառիկ հմուտ սադրանքի», Իրանին և Իրաքին միմյանց դեմ գրգռելու նպատակով: Միաժամանակ «զարտուղի ճանապարհով» գործում էր նաև ԿՀՎ-ն: «Ամերիկյան զորավարժությունները,— զմայլված գրում էր «Ֆիգարոն»,— սկսվել են խիստ գաղտնի և իրենց հնարամտությամբ արժանի են Մաքիավելիին այն իմաստով, որ, անկախ իրադարձությունների ընթացքից, Վաշինգտոնը պետք է շահի»:

«Արևմուտքը, հնարավոր է, Իրանի հաշվին Իրաքի ուժեղացումից շահի,— գրում էր անգլիական «Գարդիանը»:— Չի բացառված, որ զինված ընդհարումը ճակատագրական լինի Իրանում խոմեյնիի վարչակարգի համար, և Արևմուտքը պետք է դրան պատրաստ լինի»:

«Շիաների ուսմունքի հուզառատ և արյունռուշտ իսլամականությունը, որ քարոզում է այաթոլլա Խոմեյնին, սպառնում է Բաղդադի ղեկավարներին,— կրկնում էր նրան «Կոտիդեն դը Պարին»:— Նրանք պատկանում են սուննիներին և ղեկավարում են մի երկիր, որտեղ շիաները մի քիչ ավելի շատ են, քան սուննիները: Վկայություն կա, որ երկու երկրներն էլ գործակալներ ուղարկել և զենք մատակարարել հակառակ բանակին, որպեսզի գրգռեն մեկը մյուսի դեմ: Իրաքցիները պաշտպանում էին Խուզիստանի արաբների պահանջները, իսկ իրանցիները օգտագործում էին իբրև թե Իրաքում շիաների հանդեպ եղած խտրականությունը: Նացիոնալիզմի և կրոնական անմիաբանության մեքենայությունների այդ խառնուրդը շատ պայթյունավտանգ է: Առաջներում պայթյունից հաջողվում էր խուսափել միայն «պաքս ամերիքանի» ոգով կատարվող կարգավորման շնորհիվ, որ պարտադրվել էր շահի միջնորդությամբ»:

Վաշինգտոնի և նրա օգնականների կարոտը Պարսից ծոցի գոտում «պաքս ամերիքանի» վերաբերյալ այնքան ուժեղ էր, որ այն վերադարձնելու համար ցավալի չէր, ոչ Իրանի, ոչ էլ Իրաքի կործանումը: Փոխադարձաբար երկու կողմերին էլ թուլացնող իրանա-իրաքյան կոնֆլիկտը, անկասկած, օգուտ էր Վաշինգտոնին: Իրաքը արաբական պետությունների ճակատի ակտիվ մասնակիցներից մեկն էր, որ դեմ էր դուրս եկել ԱՄՆ-ի կողմից Եգիպտոսի և Իսրայելի միջև նախապատրաստվող քեմփ-դևիդյան սեպարատ գործարքին: Իրաքի արյունաքամ լինելը, նրա ռեսուրսների շեղումը ազգային խնդիրների կատարումից և իսրայելական ագրեսիայի հետևանքները վերացնելու պայքարից ձեռնտու էր և՛ ԱՄՆ-ին, և՛ Իսրայելին: Արդեն դա թուլացնում էր հակաքեմփդևիդյան ճամբարը, անուղղակի կերպով վնաս հասցնելով պաղեստինյան դիմադրության շարժմանը: Բորբոքելով կոնֆլիկտը՝ ԱՄՆ-ը և նրա պարտնյորները ձգտում էին ճեղքել Քեմփ-Դևիդի հակառակորդների ընդհանուր արաբական ճակատը, կռվեցնել նրա մասնակիցներին, ներքաշելով ոչ պետքական մրցակցության մեջ: Շուտով արևմտյան պրոպագանդան սկսեց տարաձայնություններ բորբոքել Իրաքի և Սիրիայի միջև: Վաշինգտոնը ուրիշի ձեռքերով ցանկանում էր

«պատժել» նաև հեղափոխություն կատարած իրանական ժողովրդին, պայթեցնել Իրանում ստեղծված նոր վարչակարգը, փորձել իշխանության գլուխ կանգնեցնել ամերիկյան դրածոներին կամ թեհրանը ներքաշել ամերիկյան ազդեցության ոլորտի մեջ: ԱՄՆ-ի կառավարող շրջանները մեկ խնդիր ևս ունեին: Ամերիկյան մամուլը և Վաշինգտոնի ղեկավար գործիչները ավելի հաճախ էին հայտարարում, որ ԱՄՆ-ը, իբր թե, պատրաստ է Իրանին տրամադրել ռազմական տեխնիկայի պահեստամասեր, վերացնել ամերիկա-իրանական առևտրի էմբարգոն և նորից գործառնության մեջ դնել Իրանին պատկանող միլիարդավոր դոլարները, պատանդներին ազատելու պայմանով: Դա կարող էր ցնցող հաղթաթուղթ ծառայել Քարտերի ձեռքում, որ այնքան անհրաժեշտ էր նրան ԱՄՆ-ում նախընտրական մրցությունում հաղթելու համար, որը նա բացարձակորեն տանուլ տվեց ավարտական փուլում:

Իրանա-իրաքյան կոնֆլիկտը գործնականորեն չազդեց ԱՄՆ-ում նավթի մատակարարումների վրա: Իրանից հեղուկ վառելիքի ամերիկյան ներմուծումը այդ ժամանակաշրջանում հավասարվել էր զրոյի, իսկ Իրաքից՝ կազմում էր ԱՄՆ-ում նավթի սպառման մեկ տոկոսից էլ պակաս: Իրաքից և Իրանից նավթի արտահանումը դադարեցնելու պատճառով, որը կազմում էր այդ հումքի համաշխարհային արտահանության տասներորդ մասը, տուժեցին զարգացող երկրները՝ Հնդկաստանը, Բրազիլիան, Շրի Լանկան, ավելի քիչ՝ զարգացածները՝ Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան: Սակայն իրականում նավթամատակարարման ուղիները զինված գործողությունների հետևանքով չէին ընդհատվել: Ե՛վ Իրանը, և՛ Իրաքը պատրաստակամություն հայտնեցին երաշխավորելու տանկերների անվտանգ անցումը և կատարեցին իրենց խոստումը:

Սակայն, չնայած այդ բոլորին, ԱՄՆ-ը չհապաղեց նորից խիստ ուժեղացնել իր «ռազմական ներկայությունը» Ծոցի գոտում և նրա մատույցներում: Արաբիայի նավթային պետություններին «պաշտպանելու» պատրվակով այստեղ ուղարկվեցին ԱՎԱԿՍ տիպի «թռչող ռադարներ», իսկ Սաուդյան Արաբիայում տեղավորեցին խոշոր ռադիոլոկացիոն կայան և հազարից ավելի ամերիկյան զինծառայողներ:

1980 թվականի հոկտեմբերի վերջին, էյութ ունենալով ռադիոյով, Ջ. Քարտերը հայտարարեց, որ նրա վարչակազմը

արդեն ընդունել է «անհրաժեշտ բոլոր միջոցները», որպեսզի հնարավորություն ունենա «արագորեն անդրադառնալ» Պարսից ծոցի շրջանին: «Մենք,— ասաց պրեզիդենտը,— այնտեղ տեղադրել ենք ռազմական տեխնիկա և հանդերձանք 12 հազար ծովային հետևակի համար և ռազմամթերք՝ 500 ինքնաթիռների համար: Մենք հասել ենք պայմանավորվածության՝ ռազմական օբյեկտները հինգ տարբեր շրջաններում օգտագործելու համար: Մենք Հնդկական օվկիանոսում տեղադրել ենք հարվածային միավորումների երկու ավիակիր: Նրանք մեզ գերազանցություն են տալիս և՛ օդում, և՛ ծովում, ինչը թույլ է տալիս գործել ակնթարթորեն»: Հոկտեմբերի վերջին Մալակայի նեղուցով Հընդկական օվկիանոս մտավ ամերիկյան երրորդ ավիակիրների միավորումը:

Վաշինգտոնը ձգտում էր իր գործողություններին մասնակից դարձնել դաշնակիցներին և պարտնյորներին: Արաբական ծովի ջրերն ակոսում էին ֆրանսիական երկու տասնյակ ռազմանավեր: Այստեղ էր ուղղվում ավստրալիական ռազմածովային ուժերի ավիակիր միավորումը: ԱՄՆ-ի նավատորմի հետ միասին գործում էին անգլիական էսկադրոնային ականակիրները և ֆրեգատները: Դեռևս 1980 թվականի սեպտեմբերի վերջին, այն բանից հետո, երբ իրանա-իրաքյան կոնֆլիկտը լայն չափեր ընդունեց, շուտով մամուլում տեղեկություններ հայտնվեցին «Պարսից ծոցում և Օմանի նեղուցում ազատ նավարկությունը պահպանելու համար» միջազգային ռազմածովային միավորում ստեղծելու առթիվ Վաշինգտոնի և նրա դաշնակիցների փակ խորհրդակցության մասին: Այնուհետև փակ խորհրդակցության մասին տեղեկությունները մամուլի էջերից անհետացան, որպեսզի չհուզեն հասարակայնությանը, իսկ ինքը՝ պլանը, իրականում, կենսագործվեց: Չէ որ Օմանի նեղուցի և Կարմիր ծովի ջրերն ակոսող 60-ից ավելի մարտական նավերի մեջ, որոնք պատրաստ էին ուղղակիորեն միջամտելու Պարսից ծոցի երկրների գործերին, ամերիկյան նավերի կողքին գտնվում էին նաև անգլիական, ֆրանսիական, ավստրալիական նավերը: Նորից սկսեցին խոսել ԱՄՆ-ի հովանու տակ Պարսից ծոցի ափի պետություններից ռեգիոնալ ռազմական պակտ ստեղծելու մասին:

Իրանա-իրաքյան կոնֆլիկտի պատրվակով Միացյալ Նահանգների և Սաուդյան Արաբիայի միջև արագացվեց ռազմա-

կան կապերի զարգացումը: Սաուդացիներին ամենից շատ վախեցնում էին Իրաքի և Իրանի միջև տեղի ունեցող պատերազմը նրանց նավթահանքերի վրա տարածվելու վտանգով: «Այժմ, երբ սաուդյան զեկավարները համաձայնվեցին իրենց տարածքում ամերիկյան որևէ ռազմական քանակակազմի ներկայությանն, նրանց համար շատ դժվար կլինի ռազմական և դիվանագիտական բնագավառներում հեռու մնալ Միացյալ Նահանգների քաղաքականությունից,— գոհունակությամբ գրում էր «Ուոլսթրիտ ջոռնալը»:— Իսկ ԱՄՆ-ը, ինչպես պետք է ենթադրել, ուժեղ ճնշում կգործադրի, ձգտելով բացահայտ ռազմական կապերի պահպանման»:

Միևնույն ժամանակ ռազմական գործողությունները շարունակվում էին, մերթ սրվելով, մերթ «տարօրինակ պատերազմի» բնույթ կրելով: Մայրաքաղաքների ռմբակոծումները դադարեցվեցին: Ռազմաճակատները ժամանակավորապես կայունացան: Ե՛վ Իրաքը, և՛ Իրանը կարողացան կարգավորել միջազգային շուկայից լրացուցիչ ռազմական հանդերձանքի, մթերքների և տեխնիկայի հայթայթումը: Նրանք վերսկսեցին նույնիսկ նավթի սահմանափակ արտահանությունը: Սակայն պատերազմը առաջվա նման խլում էր հազարավոր կյանքեր, նվազեցնում պաշարները:

«Վերջին երկու ամսում Իրաքի դժվարությունները սաստկացրին իրանական բանակի աստիճանական վերակառուցումը,— գրում էր անգլիական «Ֆայնենշըլ թայմսը» 1981 թվականի փետրվարին:— Վերականգնվեց կարգապահությունը կանոնավոր բանակի շատ զորամասերում, և այժմ հրամանատարական կազմը գումարտակի, բրիգադի և դիվիզիայի մակարդակով գործում է: Սպառազինության նշանակությունը այս պատերազմում չափազանցված է: Ամենավճռական գործոնը համարվում է բարոյական ոգին և զորքերի ու հեղափոխության պահապանների կուվելու պատրաստակամությունը: Բարոյական ոգին բարձրացնելու համար իրանական իշխանությունները արագորեն սահմանեցին տարբեր տեսակի հատուկ վճարումներ, թոշակներ և դիմեցին նույնիսկ ետմահու հերթական կոչումներ տալուն: Սակայն թիկունքի ապահովությունն առաջացնում էր է՛լ ավելի մեծ պրոբլեմներ, քան նոր մատակարարումները: Հանդերձանքը հաճախ գտնվում էր զենքի հսկայական պահեստներում, որ կառուցել էր շահը: Դրա գտնելը և պահանջված ժամանակին ռազմաճակատի հարկ եղած տեղամասը հասցնելը դժվար խնդիր էր: Պրեզիդենտ Սադամ Հուսեյնը առաջվա պես պնդում է, որ «պատերազմի շարունակումը կհանգեցնի Իրանի ներքին քաղաքական դրության ճգնաժամի, երկրի ներսում պայթյունի և պայթարի»: Այս ամենը կարող է տեղի ունենալ, բայց պարտադիր չէ, որ Իրաքին օգուտ բերի: Պատերազմը գրեթե միակ հարցն է, որտեղ իրանցիները միաբան են: Իրանական ոչ մի լիդեր չէր կարող քաղաքականապես ողջամիտ համարվել, եթե նա առաջարկեր պատերազմը դադարեցնել բանակցությունների միջոցով:

Իրաքը որոշ չափով ձեռք բերեց արաբական համերաշխությունը նրա գործի կապակցությամբ, հատկապես Հորդանանի թագավոր Հուսեյնի կողմից, թեև Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի նավթարդյունահանող մյուս երկրները չէին ցանկանում, որ կողմերից որևէ մեկը պատերազմից հաղթող դուրս գա և այդպիսով դառնա չափազանց ուժեղ հարևան: Բասրի կուսակցության համար հատկապես կարևոր էր Իրաքում բնակչության մեծամասնություն կազմող շիաների համայնքի դժգոհության բացակայությունը:

Իրաքցիների համար պրոբլեմը իրենց բանակի կամ էկոնոմիկայի կորուստները չեն, ոչ էլ ներքին դժգոհությունը: Կարևորն այն էր, որ նրանք թերագնահատեցին թշնամուն, որի հետ կրում էին: Փոխանակ Իրանում ապակայունացնելու այաթոլլա Խոմեյնիի վիճակը, նրանք բաժան-բաժան խմբավորումների ուժերը կենտրոնացրին: Ուստի, բանակցություններ սկսելու Իրաքի բոլոր փորձերը մերժվում են:

Իրանա-իրաքյան պատերազմը սկսվելուց ուղիղ մեկ տարի հետո «Ֆայնենշըլ թայմսը» 1981 թվականի սեպտեմբերի 22-ի համարում գրեց.

«12-ամսյա պատերազմից հետո, որի ընթացքում սպանվեցին կամ վիրավորվեցին գրեթե 100 հազար մարդ, այն տպավորությունն է ստեղծվում, որ Պարսից ծոցում սկսված պատերազմը ո՛չ կարելի է շահել, ո՛չ էլ դադարեցնել: Չնայած տընտեսական և քաղաքական ռեսուրսների մշտական հյուծվածությանը, երկրներից ոչ մեկը ի վիճակի չէ կարգավորում պարտադրել կամ կրակը դադարեցնելու համաձայնություն տալ:

Պրեզիդենտ Սադամ Հուսեյնը հույսը դրեց արագ հաղթանակի վրա և տանուլ տվեց: Սակայն նրա քաղաքական իշխա-

նությունը երկրում և վերջին մի քանի տարիների սոցիալական լուրջ նվաճումները նշանակում էին, որ անհաջողության համար պետք է հատուցել ավելի շուտ հեռավոր, և ոչ թե մոտ ապագայում: Իրաքը կորցրեց 14-ից մինչև 18 հազար սպանված, և, հավանաբար, 35—45 հազար մարդ էլ վիրավորվեց: Նա զավթել է մի քանի հազար քառակուսի կիլոմետր իրանական տարածք, սակայն ստիպված է ընդունել, որ առավել կարևոր տարածքային նպատակը՝ Շաթ-էլ Արաբ ջրային ուղիների վերահսկողությունը, նրա համար մնում է անհասանելի:

Հուսեյնի առաջխաղացումը դադարեց անցյալ (1980 թ.) տարվա նոյեմբերին, երբ նրա լավագույն զորքերը մի քանի շաբաթվա արյունահեղ մարտերից հետո գրավեցին Իրանի Խորամշահի նավահանգիստը: Սակայն իրանական «հեղափոխության պահապանները» ստիպեցին իրաքցիներին թանկ վճարել Խորամշահրի վրա հսկողություն սահմանելու համար, իսկ այնուհետև թույլ չտվեցին նրանց գրավել հյուսիսում գտնվող Սուսենգերդը:

Ըստ երևույթին, ոչ մի հեռանկար չկա շուտով խաղաղություն հաստատելու համար, քանի որ Իրանը ձգտում է ոչնչացնել և ռազմական պարտության մատնել Իրաքին, մինչդեռ Իրաքը տարածքային զիջումների հույս ունի սահմանամերձ շրջաններում: Նշենք, որ Իրանում, հատկապես պատերազմից առավել վնասված շրջաններում, այնպիսի մեծ քաղաքներում, ինչպիսին են Ահվազը, Քերմանշահը և Դիզֆուլը, ինչպես նաև 1 միլիոնից ավելի փախստականների միջև հաղթանակը (կամ ծայրահեղ դեպքում պատվավոր խաղաղությունը) թվում է ավելի կարևոր է, քան անողոք քաղաքական տարաձայնությունները, որոնք կանխորոշում են կյանքը հյուսիսում և երկրի կենտրոնում:

Մայրաքաղաքում և քաղաքների մեծ մասում ռազմական գործողությունների դադուց հետու օդային հարձակումներից առաջացած տագնապը, դրա հետ միասին նաև լուսաքողարկումները անհետացել են ամիսներ առաջ: Միայն փողոցների անջատած լապտերներն են հիշեցնում այն մասին, թե ինչ-որ տեղ դեռ շարունակվում է պատերազմը: Մթերքների մատակարարումը առաջվա նման բավարար է, թեև, իհարկե, ոչ այնքան առատ, ինչպես պատերազմից առաջ: Մթերաքարտերն ու քվոտները, ինչպես նաև կառավարական բաշխման կենտրոնները օգնեցին աղքատների համար մեղմացնելու ռազմական ինֆլյացիայի ծավալումը:

Մի տարի առաջ, երբ սկսվեց պատերազմը, թվում էր, թե Իրանը հազիվ կարողանա հաղթահարել այն: Ներքին հակասությունները իսկական քաղաքացիական պատերազմի վերածվեցին, և սպանությունների հետևանքով զոհվեց այժմյան հիմնական ղեկավարության մեծ մասը:

Այնուամենայնիվ այդ բոլորի ֆոնի վրա իրանական ուժերը՝ կանոնավոր բանակը, «հեղափոխության պահապանները» և աշխարհազորի անդամները, պատերազմ էին մղում Պարսից ծոցում: Իրանական զորքերը պատերազմի առաջին փուլում ծանր կորուստներ կրեցին:

Երբ Իրաքը կորցրեց նախաձեռնությունը, Իրանը երկարատև դադարի հնարավորություն ստացավ և կարողացավ վերակառուցել իր ղինված ուժերը: Այդ բոլորը արվեց բավական հաջողությամբ, և հիմա ասում են, որ ռազմաճակատների մեծ մասում իրանական զորքերը քանակով հավասար են կամ գերազանցում են իրաքյան զորքերին»:

1982 թվականի ապրիլ-մայիսին հաջող մարտական գործողությունների շնորհիվ իրանական զորքերը դուրս եկան դեպի պետական սահմանները: Սակայն 1982 թվականի և 1983 թվականի առաջին կեսին խոշոր հարձակողական գործողություններ իրականացնելու իրանական զորքերի բազմաթիվ փորձերը լուրջ հաջողություններ չբերեցին:

Ստեղծվեց պատային վիճակ: Պատերազմը շարունակում էր երկու կողմից նորանոր զոհեր տանել: «Այսօրվա դրությամբ դժվար է դատել զոհերի ընդհանուր քանակի մասին,— գրեց «Կրասնայա զվեզդան» 1983 թվականի հունիսի 8-ին:— Պատերազմի առաջին երկու տարվա ընթացքում դրանց թիվը, արտասահմանյան մամուլի տվյալներով, երկու կողմից կազմում էր շուրջ 300 հազար սպանված և 370 հազար վիրավոր: (Հնարավոր է, որ այս թվերը չափազանցված են:— Ա. Վ.:) Կարմիր խաչի միջազգային կոմիտեն հաղորդեց, որ, իրանական իշխանությունների տվյալներով, Իրանում գտնվում են 45—50 հազար իրաքյան ռազմագերիներ: Իրաքում կոմիտեն գրանցել է մոտ յոթ հազար իրանական ռազմագերի: Իրանում գրեթե ամբողջովին ավերվեցին Աբադանը, Խորամշահրը, Ահվազը, Դիզֆուլը և մի շարք այլ քաղաքներ:

Պարսից ծոցի երկրներում լուրջ անհանգստություն առաջ բերեց մարտական գործողությունների հետևանքով իրանական

Նովրուզ նավթահանքերի շարքից դուրս գալը (ծոցի հյուսիսային ափից դեպի հարավ 100 կիլոմետրի վրա)։ Ահա արդեն շուրջ երեք ամիս ամեն օր հարյուրավոր տոննա նավթ թափվում է ծոցի ջրերը, ստեղծելով վիթխարի և անընդհատ ավելացող նավթային կեղտաբիծ»։

Այդ եղբայրասպան պատերազմին վերջ դնելու միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, չմիացած պետություններ, Իսլամական կոնֆերանսի կազմակերպություն) փորձերը և միջնորդական առաքելությունները ընդհուպ մինչև 1983 թվականը ոչ մի արդյունք չտվեցին։ Հաշտեցնել Թեհրանին և Բաղդադին, խաղաղություն հաստատել նրանց միջև՝ դեռևս չի հաջողվում։

1983 թվականի հունիսի սկզբում Իրաքի արտաքին գործերի մինիստր Տ. Ազիզը հայտարարեց ՄԱԿ-ի հովանու տակ Իրանի հետ հաշտություն կնքելու Իրաքի պատրաստակամության մասին, որով երկու կողմերն էլ պարտավորվում են վնաս չհասցընել քաղաքներին և գյուղերին։ Իրաքի ղեկավարները համառորեն սկսեցին խաղաղության կոչ անել, նշելով, որ Իրաքն ու Իրանը հարևան պետություններ են և նրանցից ոչ մեկը չի կարող անտեսել այդ փաստը ոչ հիմա, ոչ էլ ապագայում։

Մեծ էին կոնֆլիկտի բացասական հետևանքները և՛ միջազգային ասպարեզում, մասնավորապես չմիանալու շարժման մեջ, և՛ արաբական աշխարհում։ Սիրիան և Լիբիան հանդես եկան Իրանի պաշտպանության դերում, իսկ Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը որոշեցին զորավիգ լինել Իրաքին։ Դա, բնականաբար, սրեց երկրների միջև գոյություն ունեցող հակասությունը։

Դրա փոխարեն կոնֆլիկտից իրենց ձեռքերն էին տաքացնում Վաշինգտոնն ու Թել Ավիվը։ Հենց նրանք էին կրակի վրա յուղ լցնում, ձգձգելով պատերազմը, հյուծելով երկու կողմերին էլ։ Իսրայելն ու ԱՄՆ-ը, ինչպես հաղորդում է արտասահմանյան մամուլը, սկսեցին Իրանին օգնել սպառազինությամբ և պահեստամասերով, ականջի հետ գցելով նրա հակասիոնիստական և հակաամերիկյան ելույթները։

Սովետական Միության, եղբայրական սոցիալիստական երկրների կարծիքով Իրանի և Իրաքի համար ամենախելացի քայլը կլինի անմիջապես վերջ դնել այդ անիմաստ արյունահեղությանը։ Ինչպես ասված է 1983 թվականի հունվարին Պրագայում Վարշավայի պայմանագրի մասնակից պետությունների ընդունած քաղաքական դեկլարացիայում, «խորհրդակցությանը ներկայացած պետությունները հանդես են գալիս Իրանի և Իրաքի միջև պատերազմը դադարեցնելու և բանակցությունների ճանապարհով նրանց միջև վիճելի հարցերը կարգավորելու օգտին»։ Այդ դիրքորոշումը բազմաթիվ անգամ հաստատել է սովետական ղեկավարությունը։

11

ՌԵՅԳԱՆԸ ԽՍՏԱՑՆՈՒՄ Է ԿՈՒՐՍԸ

1981 թվականի հունվարին Վաշինգտոնում վարչակազմի փոփոխությունը, թեև ոչ միանգամից, ազդեց ամերիկյան քաղաքականության վրա Հարավարևմտյան Ասիայում։

Իր կրկնաբևեռ տիեզերածնության մեջ, ճիշտ հին իրանցիների նման, պրեզիդենտ Ռ. Ռեյգանը աշխարհը տեսնում էր՝ բաժանված «բարության կենտրոնակետի» ի դեմս ԱՄՆ-ի, և «չարության կենտրոնակետի» ի դեմս, բնականաբար, ՍՍՀՄ-ի։ «Հուլզերի յուրաքանչյուր օջախում ներթափանցիր բավական խոր, և դու կհայտնաբերես Սովետական Միությունը, որը հունցում է իր սատանայական դեղաթուրը»,— բարբառում էր նա ամենալուրջ տեսքով։ Ուստի Սպիտակ տան ղեկավարը պատրաստ էր մարտի նետել «արագ ծավալման ուժերը»՝ պաշտպանելու համար նրանց, ովքեր արդեն հասկանում են, որ իրենց սպառնում է «համաշխարհային չարիքը»։ Իսկ նրանք, ովքեր դեռ չեն գիտակցել, պետք է սովորեն և հասկանան այդ ճշմարտությունը... երբ կօկուպացվեն ամերիկյան զորքերի կողմից։ Սպիտակ տան վարչակազմը քննարկում էր կամ ցույց էր տալիս, որ քննարկում է Պարսից ծոցի գոտում ստեղծված իրադրությունը նման «քաղաքական փիլիսոփայության» լույսի տակ։

Սովետական Միությունում իրենց հաշիվ են տալիս այն մասին, թե ԱՄՆ-ի նոր կառավարությունը ինչպիսի վտանգավոր միտումներ է դրսևորում ամերիկյան քաղաքականության մեջ, բայց չեն հրաժարվում պրոբլեմի լուծման կոնստրուկտիվ որոնումներից, որ ծագել է Պարսից ծոցի գոտում։

«...Մենք միանգամայն այլ հայացքներ ունենք այն հարցում, թե իրոք, ինչպես կարող է ապահովվել Պարսից ծոցի շրջանի և նրա մատույցների խաղաղությունը,— ասված է կուսակցության XXVI համագումարում ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ։— Փոխանակ այնտեղ կենտրոնացնելու նորանոր ծովային և օդային արմադաներ, զորք և սպառազինություն, մենք առաջարկում ենք վերացնել այդտեղից պատերազմական սպառնալիքը, կնքելով միջազգային համաձայնություն։ Համատեղ ջանքերով, հաշվի առնելով բոլոր կողմերի օրինական շահերը, այդ շրջանում կարելի է ստեղծել կայունության և հանգստության իրադրություն։ Կարելի է երաշխավորել ռեգիոնի պետությունների սուվերեն իրավունքները և այն մնացած աշխարհի հետ կապող ծովային և այլ կոմունիկացիաների անվտանգությունը։ Այսպիսին է վերջերս Սովետական Միության առաջ քաշած առաջարկությունների իմաստը։

Այս նախաձեռնությունը լայն պաշտպանություն գտավ աշխարհում, այդ թվում Պարսից ծոցի մի շարք պետությունների կողմից։ Ի միջի այլոց, գտնվեցին նաև սովետական առաջարկության հակառակորդներ. դժվար չէ գուշակել, թե ում համբարում։ Մենք կկամենայինք հույս հայտնել, որ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մյուս երկրների կառավարությունները հանգիստ և անկանխակալ կշռադատեն այդ ամբողջ հարցը, որպեսզի կարելի լիներ միասին գտնել բոլորի համար ընդունելի լուծում։

Այդ հարցի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերելը կարող էր նաև սկիզբ դնել Համաշխարհային օվկիանոսի տարբեր շրջաններում ռազմական ներկայությունը նվազեցնելու շատ կարևոր պրոցեսին»։

Վաշինգտոնում գերադասում են գործել ուղղակի հակառակ ուղղությամբ։

Կայսերական բարքեր

Նյութական բազայի հարմարեցումը Վաշինգտոնի կայսերական տիրակալական ձգտումներին արագ թափով առաջ էր գնում։ «Վիետնամական պատերազմի ժամանակներից սկսած ռազմածովային հզորության վիթխարի աճի հետևանքով ԱՄՆ-ը դարձավ խոշոր ռազմածովային պետություն Հնդկական օվկիանոսում,— գրեց «Նյու Յորք թայմսը» 1981 թվականի ապրիլին։—

համար Պակիստանին տարեկան տրամադրում էին մինչև 1 միլիարդ դոլար: Բացի դրանից, Պակիստան էին հոսում Սաուդյան Արաբիայում աշխատող 250 հազար վտարանդիների դրամական փոխադրումները:

Ծոցի գոտու գործերի նկատմամբ Ռեյգանի վարչակազմի սեփական մոտեցման ձևակերպումը գնում էր երկու ուղղությամբ: Նրանցից մեկը ենթադրում էր եգիպտոսից մինչև Պակիստան, Իսրայելի մասնակցությամբ ստեղծել հակասովետական ռեգիոնալ դաշինք: Ենթադրվում էր, որ արաբական կառավարությունները պետք է փակի տակ դնեն և՛ արաբա-իսրայելական կոնֆլիկտի լուծումը, և՛ պաղեստինյան պրոբլեմը, և միավորվեն Իսրայելի հետ, Վաշինգտոնի ղեկավարությամբ, ընդդեմ «սովետական սպառնալիքի»: Նման պլանները անհաջողության մատնվեցին, սկսած 50-ական թվականների սկզբի Միջինարևելյան հրամանատարության նախագծերից: Նույնիսկ արաբ միապետները, որոնք իրենց շահերի նկատմամբ սպառնալիք էին տեսնում Իսրայելում, համենայն դեպս չվարկաբեկեցին իրենց, հանդես գալով նրանց հետ միևնույն լծվածքում: 1981 թվականի ապրիլից Վաշինգտոնից եկող այդ տիպի դաշնակցության դիմելու նոր կոչերը հնչեցին որպես ձայն բարբառո հանապատի:

Երկրորդ ուղղությունը «Քարտերի դոկտրինայի» էական մանրամասներից մեկի լրացումն էր: 1981 թվականի հոկտեմբերին Ռեյգանը հայտարարեց, որ ԱՄՆ-ը «թույլ չի տա» Սաուդյան Արաբիային՝ «դառնալ նոր Իրան», թույլ չի տա ընկնել նրանց ձեռքը, «ովքեր կարող էին դադարեցնել Արևմուտքին անհրաժեշտ նավթի մատակարարումները»: Որպեսզի այդ հայտարարությունը պրեզիդենտի հռետորական բացականչություններից մեկը չհաշվեն, ամերիկյան ինֆորմացիայի օրգանները սկսեցին այն խիստ ընդգծել: «Պրեզիդենտ Ռեյգանի հիշատակությունը Իրանի հուզումների մասին, որի հետևանքով 1979 թվականին տապալվեց Մոհամեդ Ռեզա Փահլավի շահը, ընդհանուր կարծիքով նշանակում էր, որ պրեզիդենտը Սաուդյան Արաբիային խոստանում է աջակցել վարչակարգի դեմ ուղղված ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հակառակորդների պայքարում,— գրում էր «Նյու Յորք Թայմսը»:— Պրեզիդենտի օգնականներից մեկի խոսքերով, Ռեյգանը դրան էլ ձգտում էր... Ըստ Ռեյգանի արտահայտությունների կտրուկ տոնը, և՛ կոնգրեսի հանգիստ ռեակցիան այդ արտահայտությունների նկատմամբ արտացոլում էին

վաշինգտոնում քաղաքական տրամադրությունների փոփոխությունն այն չափով, որքանով Վիետնամի մասին հիշողությունը տեղը զիջում էր Աֆղանստանում տեղի ունեցող իրադարձությունների մտահոգությանը (?): Կոնգրեսը սկսեց միանգամայն դիտավորյալ վերացնել սահմանափակումները, որ վիետնամական կամպանիայի ժամանակ արտաքին քաղաքականության բնագավառում դրված էին պրեզիդենտական լիազորությունների վրա»:

1981 թվականի հոկտեմբերի 4-ին ԱՄՆ-ի պաշտպանության մինիստր Կասպար Ուայնբերգերը «Դեմքով դեպի երկիրը» ծրագրով հարցազրույց ունեցավ:

Հարց: Պաշտպանության մինիստր Ուայնբերգեր, ինչպես այս շաբաթ հայտարարեց պրեզիդենտ Ռեյգանը, մեր երկիրը թույլ չի տա, որպեսզի սաուդյան նավթահանքերը ընկնեն ոչ բարեկամական ձեռքեր: Նշանակո՞ւմ է դա արդյոք, որ Միացյալ Նահանգները գործի կդնեն զինված ուժերը, եթե այն տապալվորություն ստեղծվի, թե Սաուդյան Արաբիան գտնվում է ներքին հեղափոխության եզրին, նման այն բանին, ինչ տեղի ունեցավ Իրանում:

Պատասխան: Իմ կարծիքով, նա կոնկրետ նկատի է ունեցել հետևյալը: Եթե Սաուդյան Արաբիայում տեղի ունենա ներքին հեղափոխություն հիշեցնող ինչ-որ բան, իսկ մենք դա համարում ենք քիչ հավանական, ապա նա չի վարվի այնպես, ինչպես մենք վարվեցինք այդ դեպքում Իրանի հետ, այսինքն՝ պասսիվ կերպով մի կողմ կանգնեցինք և փաստորեն գոյություն ունեցող իրանական կառավարությանը և ամբողջ աշխարհին ցույց տվեցինք, որ Միացյալ Նահանգները ոչինչ չեն անի օգնության համար: Եթե դրա նման մի բան տեղի ունենար Սաուդյան Արաբիայում, ապա, հաշվի առնելով այդ երկրի նշանակությունը, հաշվի առնելով այն փաստը, որ այնտեղ իշխանության գլուխ կանգնած է մեր նկատմամբ միանգամայն բարեկամաբար տրամադրված կառավարություն, պրեզիդենտ Ռեյգանը հասկացնել է տալիս, որ նա այդպես չի վարվի: Մենք միանգամայն պարզորոշ ցույց կտանք, որ նրանց օգնության կգնանք իբր թե ցանկացած եղանակով՝ կախված նրանց ցանկությունից... Ըստ իս, այն հանգամանքները, որոնց մասին մենք խոսում ենք, մի իրադրություն է, երբ առկա կլինեն հուզումների նշանները, ներքին հուզումների, և երբ սաուդյան կա-

ռավարությունից կստացվեն օգնելու վերաբերյալ խնդրանքներ։ Ինչպես հայտարարեց պրեզիդենտը, այս անգամ այդ խնդրանքներին պատասխան կտրվեն։

Երբեք Վաշինգտոնը դեռևս այդպես բացահայտորեն ուրիշ երկրների հանդեպ ինտերվենցիայի պատրաստակամություն չէր հայտնել՝ իրեն ոչ հաճելի ժողովրդական շարժումները ճնշելու նպատակով։

Ամերիկյան քաղաքականության մեջ «վիետնամական սինդրոմին» վերջ տրվեց։

Երկու օր էլ չէր անցել, երբ Վաշինգտոնը հարկադրված եղավ ցուցադրել իր զինված մկանները իրադարձություններն անսպասելիորեն շրջվելու կապակցությամբ մի երկրում, որին համարում էին հավատարիմ դաշնակից. դա Եգիպտոսում էր։

1981 թվականի հոկտեմբերի 6-ին 1973 թվականի արաբա-իսրայելական պատերազմի սկսվելու տարեդարձի և եգիպտացիների կողմից Սուեզի ջրանցքը մարտանցելու կապակցությամբ Կահիրեում կազմակերպվեց հերթական տոնական շքահանդես։ Եգիպտոսի պրեզիդենտ Մուհամեդ Անվար Սադաթը, մարշալական համազգեստով, կառավարության անդամները և բազմաթիվ հյուրեր, քայլելուց հոգնած զորքերը, նայում էին վերև, որտեղ թռչում էին ռազմական ինքնաթիռները։ Կողքից անցնում էին հրետանային քարշակները։ Կառավարական տրիբունայի դիմաց հանկարծ կանգնեց մի մեքենա, այնտեղից դուրս թռան զինվորական համազգեստ հագած մի քանի մարդ և վազեցին դեպի տրիբունա, որտեղ գտնվում էր պրեզիդենտը։ Մի ակընթարթի հետո հարձակվողները ավտոմատներից կրակ բացեցին և նռնակներ նետեցին, որոնք, սակայն, չպայթեցին։ Պրեզիդենտի շփոթված պահակախումբը կրակ բացեց քառասուն վայրկյան անց, բայց արդեն ուշ էր։ Անվար Սադաթն ընկած էր՝ գնդակներով ծակծկված։ Անգիտակից վիճակում ուղղաթիռով Ալ-Մաադի զինվորական հոսպիտալ հասցնելուց հետո, նույն այն հոսպիտալը, որտեղ վերջերս մեռել էր Իրանի նախկին շահը, Սադաթը վախճանվեց։

Սադաթի մահը խառնեց Ամերիկայի խաղաքարտերը Մերձավոր և Միջին Արևելքում։ Ի՞նչ կլինի քեմփդևիդյան համաձայնագրի ճակատագիրը։ Ինչպե՞ս կզարգանան իրադարձությունները Եգիպտոսում։ Դուրս չի՞ գա այն արդյոք ամերիկյան ուղեծրից։

Գլուխ չե՞ն բարձրացնի արդյոք այնտեղ ազգային-դեմոկրատական ուժերը։ Դրանք կրոնական պատյանով քողարկված հակիմպերիալիստական ժողովրդական շարժման առաջին ճայթյունները չէի՞ն արդյոք (չէ որ հարձակվողները պատկանում էին «Ատ տակֆիր վալ-խիգրա» ծայրահեղական կրոնական ազանդին)։ Այս և մյուս հարցերը տագնապահար տալիս էին Վաշինգտոնում և արևմտյան մի շարք մայրաքաղաքներում։ Ամերիկա-եգիպտական հարաբերություններում և Մերձավոր ու Միջին Արևելքի քաղաքական պատկերում չափազանց շատ բան էր կապված Սադաթի անձնավորության հետ։ Սադաթի սպանությունը, ինչպես գրում էր «Նյու Յորք թայմսը», հիշեցրեց այն ցնցման մասին, որ ապրեց ամերիկյան վարչակազմը Իրանի շահին տապալելու պահին։

ԱՄՆ-ը իրադարձություններին վերաբերվեց ակնհայտ կայսերական ոգով։ Միջերկրական ծովի արևելյան մասում եգիպտական և լիբանանյան ափերին մոտեցան ամերիկյան տասնյակ ռազմական նավեր՝ ինքնաթիռներով և դեսանտայիններով։ Պենտագոնը մարտական պատրաստության վիճակի բերեց «արագ ծավալման ուժերը», այդ թվում նաև ԱՄՆ-ի տարածքում տեղադրված զորամասերը։

Սադաթի թաղման ժամանակ Սուդանի պրեզիդենտ Ջ. Նիմեյրին կոչ արեց «կանխող հարված» հասցնել Լիբիային, որը իբր թե սպառնում է Սուդանին և Եգիպտոսին։ Վաշինգտոնի պաշտոնական ներկայացուցիչները հայտարարեցին, որ կաջակցեն իրենց դաշնակցին, և ամերիկյան պատվիրակությունը մեկնեց Խարտում, որպեսզի հրատապ ռազմական մատակարարումների վերաբերյալ համաձայնագիր կնքի։ Լրացուցիչ ռազմական օգնություն խոստացան նաև Եգիպտոսին։ ԱՄՆ-ը ձգտում էր տապավորություն ստեղծել, իբրև թե քաղաքական ասպարեզից Սադաթի անհետանալուց հետո Եգիպտոսին որևէ մեկը սպառնում է, և, հետևաբար, ամերիկացիները պարտավոր են նրան «պաշտպանել»։

1981 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին Եգիպտոսի, Սուդանի, Սոմալիի և Օմանի տարածքներում անկցացվեցին ռազմական զորավարժություններ «Բրայթ սթար» («Վառ աստղ») ծածկանվամբ։ Եգիպտոսում «արագ ծավալման ուժերի» կողմից դրան մասնակցում էին 4 հազար ամերիկյան զինվոր և սպա, ինչպես նաև եգիպտական զորամասերը, ամերիկյան տակտիկա-

կան և ստրատեգիական ավիացիան, եգիպտական ինքնաթիռները։ Ամերիկյան զորքերի մի քանի փոքր ստորաբաժանումներ զորավարժություններ անցկացրին Սուդանում, Օմանում, Սոմալիում։ Նրանց նպատակը գործի ոչ միայն ռազմատեխնիկական կողմն էր, այլև, համաձայն Վաշինգտոնի հայտարարության, ամերիկյան օդային հզորության ազդու ցուցադրումը», դաշնակիցների «աջակցելու» և նրանց «պաշտպանելու» պատրաստակամությունը, բնականաբար, «սովետական սպառնալիքից»։

Սադաթի սպանությունից, ինչպես նաև շահի տապալումից հետո, իրենց շուրջը նայելով, Վաշինգտոնում կրկին դիմեցին Իսրայելին որպես ամենահուսալի, թեև քմահաճ, դաշնակցի և օգնականի։ 1981 թվականի նոյեմբերի 22-ին, ելույթ ունենալով ռադիոյով, Պենտագոնի շեֆ Կ. Ուայնբերգերը հայտարարեց, որ ԱՄՆ-ը պետք է իր զինված ուժերը կենտրոնացնի ռեգիոնում Իսրայելի հետ «ստրատեգիական դաշինքի» շրջանակներում։ ԱՄՆ-ը մտադիր էր նրա տարածքը և ռազմական ուժերը օգտագործել իր ռազմաստրատեգիական նպատակների համար, ինչպես նաև «պաշտպանել» (կարդա՝ գրավել) Պարսից ծոցի նավթահանքերը։ Ամերիկա-իսրայելական ռազմական դաշնակցության ձևական քայլը դարձավ «ստրատեգիական համագործակցության բնագավառում փոխադարձ ըմբռնման հուշագիրը», որը կնքվեց 1981 թվականի նոյեմբերի 30-ին։ Եվ Քեմփ-Դևիդը, և «հուշագիրը» Իսրայելի համար ճանապարհ բացեցին 1982 թվականի ամռանը Լիբանան ներխուժելու համար։

1982 թվականի ապրիլին Սինայից դուրս հանված իսրայելական օկուպացիոն զորքերին փոխարինեցին այսպես կոչված «բազմազգ ուժերը»։ Նրանց գլխավոր հիմնամասը ամերիկյան ընտիր զորամասն էր, 82-րդ օդադեսանտային դիվիզիայի կազմից, որ ընդգրկված էր «արագ ծավալման ուժերի մեջ»։ Վաշինգտոնը ստրատեգիական կարևոր պլացդարմ ստացավ Սուեզի ջրանցքից ոչ հեռու, Արաբական թերակղզու մատույցներում Ասիայի և Աֆրիկայի սահմանագծում։ «Բազմազգ ուժերի» մեջ Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Հոլանդիայի ստորաբաժանումների մասնակցությունը նշանակում էր ՆԱՏՕ-ի մի քարբ անդամների ուղղակի աջակցություն Միացյալ Նահանգներին։ Ջիրականացա՞վ արդյոք ՆԱՏՕ-ի գործողությունների աշխարհագրական գոտին ընդլայնելու և Հարավարևմտյան Ասիայում

արևմտաեվրոպական դաշնակիցներին որպես օժանդակ ուժ ամերիկյան քաղաքականությանը միացնելու վերաբերյալ Վաշինգտոնի վաղեմի պլանը։

Արևմտաեվրոպական դաշնակիցների դերը

Արդեն տափակ կրկնություն էր դարձել ամբողջ արևմտաեվրոպական էկոնոմիկան նորմալ գործելու համար Պարսից ծոցի ավազանի նավթի մատակարարումների կարևորության մասին միտքը։ Միայն Մեծ Բրիտանիան և Նորվեգիան Հյուսիսային ծովի շելֆից հեղուկ վառելիքի հանույթի շնորհիվ կարողացան ազատվել այդ հումքը լրիվ ներմուծելու կախվածությունից։ Սակայն Արևմտյան Եվրոպայի մնացած երկրներում, այդ թվում նաև ԳՖՀ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, կախվածությունը արաբական նավթի ներմուծումից պահպանվում է։ Չնայած վառելիքը խնայելու բոլոր ջանքերին, չնայած էկոնոմիկայի ողջ կառուցվածքը վերափոխելու առաջադրված համազգային խընդրին, նկատի առնելով, որ վերջին տասնամյակում հեղուկ վառելիքը քսան անգամ թանկացել է, նավթի օգտագործումը մոտակա տարիներին Արևմտյան Եվրոպայում չի պակասի, թեև նրա բաժինը էներգահաշվեկշռում կընկնի։ Արևմտյան Եվրոպան ստիպված կլինի ներմուծել ծայրահեղ դեպքում նավթի նույն քանակը, ինչքան հիմա է ներմուծում, այսինքն՝ տարեկան մոտ 450 միլիոն տոննա։ Դա նշանակում է, որ նավթի գործոնի դերը արևմտյան երկրների արտաքին քաղաքականությունը որոշելիս մնում է խիստ էական։

Սակայն արևմտաեվրոպական մայրաքաղաքներում և Վաշինգտոնում կապիտալիստական աշխարհի նավթի պրոբլեմի հանդեպ վերաբերմունքը տարբեր է թեկուզև այն պատճառով, որ Միացյալ Նահանգների և արևմտաեվրոպական դաշնակիցների կախվածությունը էներգիայի արտաքին աղբյուրներից տարբեր է։

Տնտեսական պոտենցիալով դառնալով ժամանակակից իմպերիալիզմի ամենախոշոր կենտրոններից մեկը՝ արևմտաեվրոպական «տասնյակը» չազատվեց իր էկոնոմիկայի, առաջին հերթին էներգետիկայի համար էականորեն կարևոր մի շարք ոլորտների ներմուծման կախվածությունից։ Մինչև հիմա Միացյալ Նահանգների կախվածությունը Պարսից ծոցի ավազանի

նավթի ներմուծումից մնում է 15—16 տոկոսի մակարդակին։ Միևնույն ժամանակ Արևմտյան Եվրոպայում այդ կախվածությունը հավասար է 67 տոկոսի։

Ինչ վերաբերում է մոտակա տասնամյակի էներգետիկային, Արևմտյան Եվրոպայի դիրքերը, այնուամենայնիվ, մնում են թույլ, քան Միացյալ Նահանգների դիրքերը։ Քարածխի, բիտումային ավազների կամ նավթային թերթաքարերի պաշարները գտնվում են հիմնականում Հյուսիսային Ամերիկայում կամ Ավստրալիայում։ Իր էներգիայի աղբյուրները դիվերսիֆիկացնելու համար արևմտաեվրոպական երկրները դիմում են քարածխի ներմուծման, որը մրցունակ դարձավ նավթի գների բարձրացման կապակցությամբ։ Ենթադրվում է, որ մինչև հարյուրամյակի վերջը քարածխի ներմուծումը ԱՄՆ-ից և Ավստրալիայից Արևմտյան Եվրոպա կարող է հասնել կեսմիլիարդ տոննայի։

Երբ խոսում են ՕՊԵԿ-ի անդամ երկրներից, առաջին հերթին Պարսից ծոցի ավազանից, արևմտաեվրոպական «տասնյակի» համար նավթի ներմուծման կարևորության մասին, ապա մոռանում են նայել մեդալի հակառակ կողմը։ Խոսքը նաև դեպի ՕՊԵԿ-ի երկրները, ամենից առաջ Մերձավոր և Միջին արևելք, արևմտաեվրոպական ապրանքների վիթխարի արտահանության մասին է։ «Տասնյակի» առևտրական փոխանակությունը ՕՊԵԿ-ի մասնակից երկրների հետ այժմ համեմատվում է նրա և Միացյալ Նահանգների առևտրական շրջանառության հետ։ Դա նշանակում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական առաջնության էական վերաբաշխում՝ այդ շուկաներում արևմտաեվրոպական դիրքերի պաշտպանության իմաստով։

Վերջապես, մի հանգամանք ևս։ Արևմտաեվրոպական երկրները հանդես եկան որպես այսպես կոչված «ավելցուկ» «նավթադոլարների» ձգողականության գլխավոր կենտրոններից մեկը, «նավթադոլարներ», որ կուտակվել էին մեծ նավթային պոտենցիալ և սակավաթիվ բնակչություն ունեցող մի շարք երկրներում։ Արևմտաեվրոպական դրամային շուկայում «նավթադոլարները» պահպանելու և նորերը ներգրավելու հարցը դարձավ «տասնյակի» երկրների մերձավորարևելյան քաղաքականության և ԱՄՆ-ի հետ նրանց փոխհարաբերությունների ներգործության բաղադրիչ մասը։

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ս. Հոֆմանը «Անհավասար դաշնակիցներ» գրքում գրում է. «Նավթի գների պարբերական բարձրացման պրոցեսի բնորոշ հետևանքը դարձավ շեշտերի հայտնի տեղաշարժերը ԱՄՆ—Արևմտյան Եվրոպա հարաբերությունների կոնտեքստում։ Երկկողմանի բնույթ կրող պրոբլեմները իրենց տեղը զիջեցին գլոբալ հարցերին, ինչպիսիք են նոր վալյուտային սիստեմը, նավթի գինը և նրա հետ կապված վճարման դժվարությունները. նավթի գնի և արդյունաբերական ապրանքների միջև եղած հարաբերակցությունը. էներգիայի աղբյուրների ալտերնատիվ տեխնոլոգիան. ատոմային զենքի տարածման պրոբլեմը. տնտեսական ճգնաժամը և արաբա-իսրայելական կոնֆլիկտը։ Այս բոլոր օբյեկտիվ փոփոխությունները հանգեցրին Ատլանտիկայի երկու ափերի վերաբերյալ ըմբռնումների վերանայման... Արևմտյան Եվրոպան հանկարծ իմացավ իր կախվածությունը ԱՄՆ-ից (ինֆլյացիա, անկում) և ՕՊԵԿ-ի երկրներից»։

Բրուկինգի ինստիտուտի նախապատրաստած «Ազգային առաջնության որոշումը 80-ական թվականների ծրագիրն է» ժողովածուում դրված էր, մասնավորապես, ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի փոխհարաբերությունների հարցը։ «Արևմտաեվրոպական երկրներից ոչ մեկը, ի տարբերություն ԱՄՆ-ի, իշխանությունը շահից այսքոլլա խոմեյնիին անցնելը չէր դիտում որպես լուրջ սպառնալիք Արևմուտքի շահերին, որը կարդարացներ շահին ազատելու ջանքերը,— գրում էին մենագրության հեղինակները։— Մերձավոր և Միջին արևելքում տիրող իրադրության նկատմամբ ԱՄՆ-ի ու Արևմտյան Եվրոպայի վերաբերմունքը հակասական է։ Արևմտյան Եվրոպան կանգնած է նավթ արտադրող երկրների հետ երկկողմանի կապեր հաստատելու գայթակղության առջև, որոնք կերաշխավորեն նավթ ձեռք բերել նույնիսկ այն դեպքում, եթե ԱՄՆ-ի ոչ ճիշտ քաղաքականությունը այդ ռեգիոնում առաջ բերի հերթական ճգնաժամ։ Պարսից ծոցի երկրների հետ բանակցություններ վարելու վերաբերյալ եվրոպական համագործակցության առաջարկությունները արվեցին նման մտադրության շրջանակներում... Ինչ վերաբերում է քաղաքական-էկոնոմիկական ոլորտին, ապա այստեղ ատլանտյան դաշնակիցների միջև միշտ գոյություն ունեն և ունեցել են մրցակցության տարրեր։ Հումքային ռեսուրսների աղբյուրների տարբերությունը, հետևաբար նաև նրանց խոցելությունը հանգեցնում են տարբեր տեսակետների, մոտեցում-

ների առաջացման, հատկապես այն բանում, ինչ վերաբերում է էներգետիկայի պրոբլեմին: Այդ տարածաշրջանների մասնաբները և նշանակությունը ուժեղացան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայի տնտեսական և քաղաքական վերականգնմանը համապատասխան»:

«Նավթային գործոնի» բոլոր բաղադրիչների ներգործությունը Արևմտյան Եվրոպայի երկրների վրա խորն էր ու բազմակողմանի: Բնական է, որ իրադարձությունների զարգացումը Հարավարևմտյան Ասիայում և ամերիկյան քաղաքականությունն այդ ռեգիոնում գտնվում են և՛ քաղաքական լիդերների, և՛ արևմտաեվրոպական երկրների հասարակայնության լարված ուշադրության կենտրոնում:

Տնտեսական շահերի ծավալն իսկ ենթադրում է արևմտաեվրոպական մայրաքաղաքների կողմից քաղաքական կապերը Մերձավոր և Միջին արևելքի երկրների հետ ամրապնդելու ուղիների ակտիվ որոնումներ: Արևմտաեվրոպական կառավարությունները փորձում էին այսպես կոչված եվրոպա-արաբական երկխոսության շրջանակներում մշակել Հարավարևմտյան Ասիայի պետությունների հետ փոխհարաբերությունների այնպիսի բանաձևեր, որոնք արևմտաեվրոպական կապիտալի համար ապահովեին տնտեսական գործունեության արտոնյալ պայմաններ: Արաբական մի շարք պետություններում դեռևս մի քանի տարի առաջ նման պլանները հանդիպեցին հակաառաջարկների, որոնց նպատակը արևմտաեվրոպական երկրներին մերձավորարևելյան կոնֆլիկտի մեջ արաբների կողմը ներգրավելն էր: Արաբա-իսրայելական կոնֆլիկտի և Մերձավոր ու Միջին արևելքի մի շարք այլ պրոբլեմների վերաբերյալ իր դիրքերը որոշելու անհրաժեշտությունը բախում էր դուռը: Սակայն, ձգտելով մոնոպոլացնել հսկողությունը մերձավորարևելյան կոնֆլիկտի ընթացքի վրա, այդ ռեգիոնում իր նեոգաղութատիրական տիրապետությունը հաստատելու շահերից ելնելով, Վաշինգտոնը կարծես թե ամերիկա-իսրայելա-եգիպտական բանակցությունների փակ դռների վրա ցուցանակ կախեց՝ «Չանհանգստացնել»: Իրանի դեմ ԱՄՆ-ի սանկցիաներին միանալու փորձը արևմտաեվրոպական մայրաքաղաքներին ցույց տվեց Վաշինգտոնի քաղաքականության հետ միությունը կազմելու վտանգավորությունը: Միաժամանակ անդրօվկիանոսյան պատրոնի նկատմամբ ղեկավարության հնազանդությունը բնավ էլ ԱՄՆ-ին հետ չէր պահում ռազմական ավանտյուրաներից:

1979—1981 թվականներին արևմտաեվրոպական մայրաքաղաքներում Մերձավոր և Միջին արևելքի վերաբերյալ «սեփական գաղափարների» ի հայտ գալը բացատրվում էր նրանով, որ Եվրոպայի տնտեսական խորհրդի (ԵՏԽ), երկրները չէին կամենում մասնակից դառնալ այդ ռեգիոնում ամերիկյան քաղաքականության հնարավոր սնանկությանը:

Արևմտաեվրոպական երկրները հայտնվեցին բարդ իրադրության մեջ. եթե նրանք ուղղակի հետևեին Վաշինգտոնի քաղաքականության ընթացքին, ապա իրենց վրա կհարուցեին արաբական երկրների զայրույթը, հնարավոր է նաև կոնկրետ սանկցիաները: Բացահայտ սահմանազատումը Վաշինգտոնից նրանց համար վտանգավոր էր: Իհարկե, արևմտաեվրոպական երկրները զգալի ճանապարհ անցան, սկսած 1973 թվականի համաներդ զեկլարացիայից արաբա-իսրայելական պատերազմի թեժ տեղ պահին, երբ նրանք Իսրայելին կոչ էին անում իր զորքերը դուրս հանել 1967 թվականին օկուպացրած արաբական հողերից, և վերջացրած 1980 թվականի հայտարարությամբ, որ ընդունվել էր Վենետիկում և Լյուքսեմբուրգում կայացած «Ընդհանուր շուկայի» ղեկավարների խորհրդակցություններում: ԵՏԽ-ի լիդերները ավելի շատ հակված էին այն բանին, որ քեմփդևիդյան կուրսը մերձավորարևելյան կարգավորման պրոցեսը կկանգնեցնի փակուղու առջև: Քեմփդևիդյան կուրսը Մերձավոր և Միջին արևելքում նորից սրեց իրադրությունը, որը հարցականի տակ դրեց նաև նավթի մատակարարումների հաստատունությունը և Արևմտյան Եվրոպայի շուկայի համար կարևորագույն կայունությունը:

Արևմտաեվրոպական մամուլի տվյալների համաձայն, ԵՏԽ-ի լիդերները զգուշությամբ սկսեցին առաջարկություններ անել, որոնք կարող էին Քեմփ-Դևիդին թվալ երկընտրանքային: Նրանք արտահայտվեցին իսրայելական զորքերը 1967 թվականին օկուպացված արաբական ամբողջ տարածքից, այդ թվում Արևելյան Երուսաղեմից դուրս հանելու օգտին, պաղեստինցիների համար ինքնորոշման իրավունքի ճանաչման օգտին, մըտցընելով նույնիսկ ինքնուրույն պաղեստինյան պետություն ստեղծելու տարբերակը, թեև խիստ մշուշապատ արտահայտություններով, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակեր-

պությունը բանակցությունների պրոցեսին ներգավելու օգտին։

Սակայն Արևմտյան Եվրոպան կես ճանապարհին կանգ առավ։ Կորցնելով հավատը ամերիկյան քաղաքականության հանդեպ Պարսից ծոցի ավազանում և Հարավարևմտյան Ասիայում ամբողջությամբ, նա այդպես էլ 80-ական թվականների սկզբին չմշակեց իր սեփական քաղաքականությունը։ Արաբական մի շարք երկրներում և պաղեստինցիների շրջանում արևմտաեվրոպական գաղափարները քննադատվեցին, քանի որ նրանք պարզ չէին խոսում ինքնուրույն պետություն ստեղծելու պաղեստինցիների իրավունքի և Պաղեստինը ՊԱԿ-ի կողմից որպես արաբական ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին։ Սակայն նույնիսկ արևմտաեվրոպական նախագծերում պաղեստինցիներին և նրանց ներկայացուցչության ճակատագրին վերաբերող արմատական տարբերի բացակայությունը չէր ազատի նրան, ինչպես Վաշինգտոնի, այնպես էլ Թել Ավիվի խիստ բացասական վերաբերմունքից։ Արևմտյան Եվրոպայի «ինքնուրույն նախաձեռնության» գաղափարը Մերձավոր արևելքում չամրապնդվեց կոնկրետ քաղաքական քայլերով։ Արևմտյան Եվրոպան այդ ռեգիոնում տվյալ ժամանակաշրջանում այդպես էլ սեփական ձայն չստացավ։

Նույնքան երկդիմի և հակասական էր ԱՄՆ-ի արևմտաեվրոպական դաշնակիցների մոտեցումը Վաշինգտոնի՝ Հարավարևմտյան Ասիայում Արևմուտքի առաջնությունը վերանայելու պետական քարտուղար Հեյգի արտահայտած գաղափարների նկատմամբ։ Չէ որ նա առաջարկեց, ինչպես մենք արդեն նշեցինք, երկրորդ պլան մղել մրեձավորարևելյան կարգավորման որոնումները, ներառյալ պաղեստինցիների վերաբերյալ հարցը, հանուն Արևմուտքի և այդ ռեգիոնի պրոարևմտյան երկրների «համերաշխության»՝ ընդդեմ «սովետական սպառնալիքի»։

Արևմտաեվրոպական դաշնակիցներին Հարավարևմտյան Ասիայում իր ռազմական ավանտյուրաներին մասնակից դարձնելու Վաշինգտոնի մտադրությունը նոր չէր։ Դեռևս մի քանի տարի առաջ, այսպես ասած, որպես «մաքսիմում ծրագիր», Վաշինգտոնում մտադրվել էին Հարավարևմտյան Ասիայում անցկացնել ՆԱՏՕ-ի գործողությունների ոլորտի ընդլայնման հին պլանը։ Սակայն ԱՄՆ-ի եվրոպական դաշնակիցները, որոնցից շատերը չէին մոռացել իրենց պարտությունը գաղութային պատերազմներում, չէին ցանկանում խճճվել ամերիկյան ռազմական ավանտյուրայի մեջ։ Հարավարևմտյան Ասիայում ամերիկյան քաղաքականության հանդեպ արևմտաեվրոպացիների սառը վերաբերմունքում թաքնված էր նաև խոր արմատացած անվստահությունը Վաշինգտոնի հայտարարության անկեղծության նկատմամբ, որ իբր թե նա ղեկավարվում է ամբողջությամբ Արևմուտքի շահերից ելնելով, և ոչ թե սեփական կայսերական պատավախնդրությամբ։ Իրանական ճգնաժամի բորբոքումը Արևմտյան Եվրոպային վնաս հասցրեց ամենից առաջ նավթի գնի աճով։ Եվրոպայի տնտեսական դիրքերը թուլացել էին, իսկ ԱՄՆ-ինը՝ ուժեղացել։ Արևմտաեվրոպական երկրները Իրանի դեմ պատրաստվող սանկցիաներին միացան միայն բազմաթիվ ամիսներ հետո Վաշինգտոնի ճնշման տակ և բառացիորեն պատանդներին ազատելու հաջորդ օրը այդ սանկցիաները չեղյալ հայտարարեցին։

Երկարաժամկետ պլանում չհրաժարվելով «մաքսիմում ծրագրից», Վաշինգտոնը արագացրեց «մինիմում ծրագրերը»։ ՆԱՏՕ-ի երկրները նրա ծրագրով պետք է «ավելի ակտիվ դեր խաղային Պարսից ծոցի ռեգիոնի անվտանգության համակարգի ստեղծման գործում», մասնավորապես «Եվրոպայում ռազմական հզորությունը մեծացնելու ներդրումների» ճանապարհով, որպեսզի ամերիկյան զորքերին ազատեին՝ ուրիշ շրջաններում գործելու համար։ 1980 թվականի մայիսին ՆԱՏՕ-ի ռազմական պլանավորման կոմիտեի նստաշրջաններում այդ ծրագիրը փաթաթվեց դաշնակիցների վզին։ «Պարտականությունների բաշխման» կոնցեպցիան իրենից ներկայացնում էր ՆԱՏՕ-ի կայունացած կառուցվածքը աշխարհի փոփոխված պայմաններին հարմարեցնելու փորձ։ Սակայն արևմտաեվրոպացիները և ամերիկացիները այդ կոնցեպցիան տարբեր կերպ էին հասկանում. առաջիններն այն համարում էին Հյուսիսատլանտյան բլոկի մեջ սեփական քաղաքական ստատուսը բարձրացնելու միջոց, երկրորդները՝ դաշնակիցների վրա լրացուցիչ ծանրություն բարդելու միջոց։

Ինչպես այդ, այնպես էլ ուրիշ հարցերի վերաբերյալ Վաշինգտոնի ճնշումը դաշնակիցների վրա քանի գնում ավելի դաժանանում էր։ Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ զինված ուժերի հրամանատար ամերիկյան գեներալ Բ. Ռոջերսը 1981 թվականի գարնանը արևմտաեվրոպական դաշնակիցներին կոչ արեց՝ պաշտպանել ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր արևելքում։

Ըստ նրա, արևմտաեվրոպական երկրները կարող էին «խեղդվել երրորդ աշխարհում», մասնավորապես Հարավարևմտյան Ասիայում տեղի ունեցող «ընդհարումների և հուզումների հետևանքով»։

Արևմտյան Եվրոպայի որոշակի պրոատլանտյան շրջաններում Վաշինգտոնի կոչերը բարյացակամ արձագանք գտան։ 1981 թվականին Փարիզում, Բոննում և Լոնդոնում արտաքին քաղաքականության հարցերի գծով գիտահետազոտական կենտրոնները միջազգային հարաբերությունների ամերիկյան խորհրդի հետ միասին կոչ արեցին ստեղծել «կոլեկտիվ մեխանիզմ», «սպառնալիքը կանխելու համատեղ գործողություններ՝ «երրորդ աշխարհում» Արևմուտքի անվտանգությունն ապահովելու համար»։ Առաջին հերթին նկատի էր առնվել Հարավարևմտյան Ասիան։ Այս «կոլեկտիվ մեխանիզմում» գլխավոր դերը պետք է խաղային ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Արևմտյան Գերմանիան, ինչպես նաև Ճապոնիան։ Պրոատլանտյան շրջանները սկսեցին առաջ քաշել «արագ ծավալման բազմազգ ուժերի» ստեղծման գաղափարը։ Այն բրիտանական պահպանողականների քիմքով էր։ Անգլիայի պրեմիեր մինիստր Մ. Թետչերը հայտարարեց. «Մենք հիմա քննարկում ենք «արագ ծավալման ուժերի» ստեղծման հնարավորությունը, որպեսզի դրանք օգտագործենք վտանգի դեպքում որտեղ էլ որ այն լինի»։

Բայց դրա փոխարեն արևմտաեվրոպական մի շարք մայրաքաղաքներում արձագանք գտան Սինայում, իսկ այնուհետև Լիբանանում «բազմազգ» ուժեր ստեղծելուն մասնակցելու կոչերը, որը նշանակում էր ՆԱՏՕ-ին ուղղակի ներքաշել Մերձավոր և Միջին արևելքի գործերի մեջ։

«Տասնյակի» երկրներում չի դադարում պայքարը «ատլանտյան Արևմտյան Եվրոպայի» և «եվրոպական Արևմտյան Եվրոպայի» կողմնակիցների միջև։ Առաջինները հանդես են գալիս հօգուտ այն բանի, որպեսզի ՆԱՏՕ-ի գծով եվրոպական դաշնակիցները շարունակեն ենթարկվել անդրօվկիանոսյան պատրոնին։ Երկրորդները ձգտում են, որպեսզի Արևմտյան Եվրոպայի երկրները ԱՄՆ-ի հետ խոսեն «որպես հավասարի», պաշտպանեն սեփական շահերը։ Արևմտաեվրոպական երկրների կառավարող շրջաններում կան թե մեկ, և թե մյուս քաղաքական կուրսի կողմնակիցներ, և դա վերաբերում է բոլոր գլոբալ միջազգային պրոբլեմներին, այդ թվում նաև լարվածու-

թյան թուլացման ճակատագրին, սպառազինության մրցավազքի սահմանափակման միջոցառումներին, Արևելք—Արևմուտք տնտեսական կապերին, էներգետիկ քաղաքականությանը, Հարավարևմտյան Ասիայում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ եղած վերաբերմունքին։

Ճապոնիայի և ՕՏՀ-ի ճնշման տակ հարկադրված լինելով նահանջել համաշխարհային շուկայում, ԱՄՆ-ը նրանց համեմատությամբ պահպանեց մի շատ կարևոր առավելություն՝ ռազմական հզորությունը և իր մրցակիցներին էներգետիկ ռեսուրսներ մատակարարելու ուղիների ու միջոցների հսկողությունը. Ուստի իրականացնելով ռազմական ներթափանցումը Մերձավոր և Միջին արևելք, Վաշինգտոնը դրան համապատասխան իր գործողություններն ուղղեց այդ ռեգիոնի ժողովրդի դեմ, իրենց հանքային հարստությունները սեփական շահերի համար տնօրինելու նրանց իրավունքի դեմ, ինչը և դեմ էր Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի շահերին։ Իսկ ամերիկյան դաշնակիցների դիմադրությունը, թեև ոչ հետևողական, նրանց ամերիկյան ավանտյուրաների մեջ ներքաշելու փորձերին, առաջանում է ինչպես ամերիկյան գործողությունների չնախատեսված հետևանքների նկատմամբ նրանց վախով, այնպես էլ միջազգային գործերում քաղաքական մտածողության ավելի հասուն մակարդակով և մեծ փորձով։ Սակայն ոչ միայն դրանով։ Ըստ երևույթին, Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում զգում են, որ նրանց ավագ պարտնյորի «Արևմուտքի շահերի» համար բացահայտ և մեծախոստում հոգատարությունը իրականում հոգատարություն է ամերիկյան իմպերիալիզմի սեփական շահերի նկատմամբ, ի վնաս իր դաշնակիցների։ Սակայն, չցանկանալով հանուն «ատլանտյան համերաշխության» կիսել ամերիկյան ավանտյուրաների, սխալների, անհաջողությունների բեռը, ՆԱՏՕ-ի գծով արևմտաեվրոպական դաշնակիցները (ինչպես և Ճապոնիան), այնուամենայնիվ, «սեփական ձայն» չստացան Մերձավոր արևելքում, հանդես բերեցին անհետևողականություն ու երկդիմաբանություն, բայց, ՆԱՏՕ-ի շրջանակներում ենթարկվելով բլոկի կարգապահությանը, նրանք ավելի շատ էին ջննում Վաշինգտոնին։ ՆԱՏՕ-ի բարձրագույն մարմինները մի շարք որոշումներ ընդունեցին, որոնք փաստորեն ընդլայնեցին այդ դաշնակցության գործողությունների շրջանը։

Քանի դեռ ուշադրությունը սևեռված էր Եգիպտոսում և նրա շուրջը ծավալվող իրադարձություններին, իր հարևանների դեմ ուղղված Իսրայելի ագրեսիվ գործողություններին, Հնդկական օվկիանոսում ամերիկյան ուժերի բացահայտ ամրապնդմանը, անմիջապես Սաուդյան Արաբիայում և Թերակղզու մյուս նավթային պետություններում արագորեն, թեև առայժմ աննկատ, ներդրվում էր ամերիկյան ռազմական մեքենան: Այդ ներդրման շատ կարևորագույն մանրամասնությունների վրա անսպասելիորեն լույս սփռվեց 1981 թվականի ամռանը և աշնանը, մի բան, որը առաջ ներում ծածկված էր գաղտնիության անթափանց շղարշով: Դա տեղի ունեցավ ամերիկյան օրենսդրական մարմիններում և նրանց շուրջը ծավալված պայքարի կապակցությամբ Սաուդյան Արաբիային զենք և ռազմական տեխնիկա, ներառյալ 8,5 միլիարդ դոլար արժողությամբ ԱՎԱԿՍի 5 «թռչող ռադարներ» մատակարարելու գործարքի առիթով:

ԱՄՆ-ի սենատի հավանությանն արժանացած այդ գործարքը շատերը գնահատեցին որպես համակայսերական քաղաքականության հաղթանակը կառավարող դասի սիոնիստորեն տրամադրված մասի ավելի նեղ շահերի նկատմամբ: Աղմուկը, որ իբր թե Սաուդյան Արաբիային արված մատակարարումները սպառնում են Իսրայելին, հենց սկզբից էլ արհեստական էր ու կեղծ: ԱՎԱԿՍները Սաուդյան Արաբիա կժամանեն միայն 1985 թվականին: Նավթով հարուստ թագավորությունում չկան և չեն լինի այն բոլոր մասնագետները, որ անհրաժեշտ են այդ բարդ էլեկտրոնային համակարգի սպասարկման համար, և դրանք փաստորեն կմնան ամերիկյան հսկողության տակ:

Սակայն բանը միայն դա չէ: ԱՎԱԿՍները, որոնք ձեռք են բերվել էր-Ռիյադի կողմից, առաջին հերթին պետք է ծառայեն տեղեկությունների և հետազոտության ամերիկյան գլոբալ համակարգին: ԱՎԱԿՍների և մյուս ռազմական տեխնիկայի միջոցով կատարվող բոլոր գործարքները մնում են Վաշինգտոնի ագրեսիվ կուրսի շրջանակներում, որի նպատակն է իր «ռազմական ներկայությունը» ընդլայնել անմիջապես ՍՍՀՄ-ի հարավային սահմաններին մոտ ընկած գոտում:

«Մենք կարող ենք պատրաստել մեր պահանջներին համապատասխան թռիչքավայրէջքային գոտիներ, ստեղծել հանդերձանքի և զենքի պաշարներ,— ժուռնալիստներին հայտարարեց ԱՄՆ-ի պետական քարտուղարի օգնական Բաքլին: Այսօր ԱՎԱԿՍներ սպասարկող տեխնիկները վաղը կարող են նույն հաջողությամբ աշխատել «արագ ծավալման ուժերի» ինքնաթիռներում»: Ինչպես հայտարարեց Բաքլին, ԱՄՆ-ը պահպանում է ԱՎԱԿՍներն օգտագործելու վերահսկողությունը և «թույլ չի տալիս սաուդացիներին՝ հսկելու իսրայելական ավիացիային»:

1981 թվականի հոկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի սենատը 52 ձայնով ընդդեմ 48-ի հավանություն տվեց Սաուդյան Արաբիային ԱՎԱԿՍ հետախուզական ինքնաթիռներ և ռազմական այլ տեխնիկա վաճառելու վերաբերյալ կառավարության որոշմանը: «Վաճառելով ԱՎԱԿՍները՝ մենք վերջակետ դրեցինք մեր արտաքին քաղաքականության «եվիետնամական» դարաշրջանին», նշեց այն ժամանակ «Նյուսուիկ» հանդեսը:

Մեկնաբանելով քվեարկության արդյունքները՝ «Թայմ» հանդեսը նշում էր, որ «հնարավոր է, ԱՎԱԿՍները վաճառելու ամենակարևոր հետևանքը լինի արաբական պետությունների նկատմամբ Իսրայելի ռազմական գերազանցության պահպանումը»: Իսրայելի միլիտարիստական մեքենայի համար արդեն պատրաստված էր 2,2 միլիարդից ավելի լրացուցիչ «խրախուսական օգնություն», որ ամեն տարի Թել Ավիվին էր տրամադրում ԱՄՆ-ը:

1973 թվականին Վիետնամում ամերիկացիների պարտվելու թարմ տպավորության տակ ԱՄՆ-ի կոնգրեսը հատուկ օրենք ընդունեց պրեզիդենտի լիազորությունները սահմանափակելու վերաբերյալ, որով արգելվում էր նրան առանց կոնգրեսի համաձայնության որոշման ԱՄՆ-ի զինված ուժերը արտասահմանում ներգրավել ռազմական գործողությունների մեջ: Վետո դրվեց նաև առանց կոնգրեսի համաձայնության ուրիշ երկրներին «պաշտպանելու ամեն մի պարտավորության» վրա:

«Քարտերի դոկտրինան» միայն սկիզբն էր «վիետնամական սինդրոմից» «ազատվելու» համար: «Այժմ Ռեյգանի վարչակազմը,— նշում էր «Նյու Յորք թայմսը»,— ընդլայնում է Քարտերի դոկտրինան, դրա մեջ ներառելով ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքի շրջանը»:

«Սաուդյան Արաբիային նախազգուշացման և նշանառության ռադիոլոկացիոն համակարգով (ԱՎԱԿՍ) ինքնաթիռներ վաճառելու Ռեյգանի կառավարության որոշումը կանխագուշակում

է Մերձավոր արևելքի նավթահանքերի համար հեռուն գնացող պաշտպանական ստրատեգիա, որի մասին կոնգրեսում մտքերի փոխանակության ժամանակ ոչ մի անգամ չի խոսվել. դա Սաուդյան Արաբիայում պահեստային բազաների շինարարության փառասիրական պլանն է, բազաներ, որոնք լրիվ սարքավորված են և օգտագործման են սպասում ամերիկյան ուժերի կողմից,— գրում էր «Վաշինգտոն պոստը» 1981 թվականի նոյեմբերի 2-ին։ — Այդ գաղտնի ստրատեգիան, որ մշակվել և կյանք է մտել կառավարությունների պաշտոնական անձանց կողմից, ամերիկյան «արագ ծավալման ուժերին» թույլ է տալիս շարժվել «հորիզոնից այն կողմ», դեպի այդ առաջավոր բազաները և նախապես ստեղծված նյութական պաշարները, եթե ինչ-որ թշնամական ուժեր փորձեն գրավել Պարսից ծոցի նավթահանքերը»։

Պենտագոնի ներքին օգտագործման փաստաթղթերից մեկի և այլ աղբյուրների համաձայն, հող էր նախապատրաստվել ՀՕՊ-ի ռեգիոնալ ցանցի համար, որտեղ գլխավոր դերը հատկացվում էր Սաուդյան Արաբիային և որը պոտենցիալ կերպով պետք է իրեն միացներ այնպիսի պետություններ, ինչպիսիք են Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Օմանը, Բահրեյնը և Կատարը։

Ըստ «ամերիկյան դիվանագիտական և ռազմական աղբյուրների,— հաղորդում էր «Վաշինգտոն պոստը»,— Սաուդյան Արաբիայի և ԱՄՆ-ի միջև պայմանավորվածությունը ծագեց խիստ գաղտնի բանակցությունների հետևանքով, որ տեղի էին ունենում վերջին երկու տարում։ Դա կոմպլեքս պլան է, որի նպատակն էր օգնել Սաուդյան Արաբիային ղեկավարման նուրբ էլեկտրոնային համակարգ ունեցող ռազմական օբյեկտների շինարարության գործում, որը այդ երկրի պաշտպանությանը մասնակցող ամերիկյան ուժերի համար կարող է դառնալ նյարդային կենտրոն»։

Երկու կառավարությունների միջև համաձայնեցված կոնկրետ պայմանները, որպես գաղտնի բանավոր պայմանավորվածություն, ձևակերպվեցին 1981 թվականի փետրվարի վերջին Սաուդյան Արաբիայում ամերիկյան զինվորական խմբի ղեկավար գեներալ-մայոր Ջառլզ Դոնելիի և Սաուդյան Արաբիայի ռազմաօդային ուժերի հրամանատար, թագավորական ընտանիքի ազդեցիկ անդամ, գնդապետ Ֆահդի Աբդուլայի կողմից։

Այդ պլանը ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի պաշտոնական

անձանց թույլ տվեց պաշտոնական դիվանագիտական համաձայնագրի բացակայության դեպքում մերժել այդ ստրատեգիայի մանրամասները, նույն այդ ժամանակ կյանքի կոչելով նրա բազմաթիվ բարդ տարրերը։

ԱՎԱԿՍ կողային համակարգի հինգ ինքնաթիռների վաճառքը, որի կապակցությամբ այդքան վեճեր եղան, ընդամենը մի փոքր մասն էր այն ամենի, ինչ նախատեսված էր, գրում էր «Վաշինգտոն պոստը»։ Պայմանավորվածության էությունը հետևյալն էր. եթե Ամերիկան Սաուդյան Արաբիային վաճառի նորագույն ռազմական տեխնիկա, վերջինս կկառուցի հրամանատարական և ռազմածովային օբյեկտների ընդարձակ ցանց, ինչպես նաև ՀՕՊ-ի օբյեկտներ, որոնց դերը լուրջ ռեգիոնալ զինված կոնֆլիկտի ժամանակ ամերիկյան ուժերին աջակցելու համար բավական մեծ է։ «Ամերիկյան և օտարերկրյա աղբյուրներից ստացված տվյալների համաձայն, այդ ստրատեգիան մտածված է տարբեր սպառնալիքներ կասեցնելու համար՝ տեղական ապստամբական գործողություններից մինչև որևէ խոշոր պետության կողմից տոտալ պատերազմը»,— նշում էր Թերթը։

Վերջին հաշվով, համաձայն այդ տեղեկությունների, Սաուդյան Արաբիան Միացյալ Նահանգներին թույլատրեց ամերիկյան սպեցիֆիկացիայով իր տարածքում ամերիկյան ինժեներների կողմից կառուցված օբյեկտներում ստեղծել ռազմական տեխնիկայի, ռազմամթերքների և այլ նյութերի, ներառյալ նավթամթերքների ավելի քան երեք ամսվա պաշար։ Միլիարդ դոլարի արժողությամբ այդ տեխնիկայի նշանակալից մասը պետք է վճարի Սաուդյան Արաբիան, սակայն այն պետք է համապատասխանի ամերիկյան հրամանատարության պահանջներին ռազմական գործողությունների պայմաններում։

Որպես այդ պայմանավորվածության կարևոր տարր ԱՄՆ-ը որոշեց ստեղծել հրամանատարական նշանակության և կապի ճկուն համակարգ («C—3», կամ «հրաման, հսկողություն, կոմունիկացիա»), որը էր-Ռիյադում գտնվող կենտրոնական շտաբը կմիացնի ամբողջ երկրով մեկ տարածված վեց կամ ավելի ռեգիոնալ օպերատիվ շտաբների հետ։ Այդ համակարգի օգնությամբ որոշված էր միավորել Սաուդյան Արաբիային պատկանող F—15» կործանիչները, ԱՎԱԿՍ համակարգի նոր ինքնաթիռները, զենիթային հրթիռները և ցամաքային ռադիոլոկացիոն կայանների ընդարձակ ցանցը։

Սաուդյան Արաբիան Ամերիկայի հսկողությամբ պետք է օգտագործեր ՀՕՊ-ի համակարգի համար նախատեսված նոր տեխնիկան, որը վաղուց դուրս էր եկել երկրի սահմաններից և ներգրավել Պարսից ծոցի նավթային այլ պետություններ: Մերձավոր արևելքի գծով պաշտպանության մինիստրի տեղակալ գեներալ մայոր Ռիչարդ Սեկորդը «Վաշինգտոն պոստին» տրամադրեց Պենտագոնի մի փաստաթուղթ, որտեղ ասվում էր, որ ԱՎԱԿՍ համակարգի ինքնաթիռների վաճառքը «հող է նախապատրաստում՝ Պարսից ծոցի ամբողջ շրջանի համար ԱՄՆ-ի աջակցությամբ ստեղծել ՀՕՊ-ի ինչ-որ ռեգիոնալ համակարգ»:

Հենց սկզբից Պենտագոնի ստրատեգները խոստովանեցին, որ «արագ ծավալման ուժերը» այդ պահին իրենց տրամադրության տակ ոչ բավականաչափ օդատրանսպորտային պոտենցիալ ունեին, ոչ էլ մատակարարման անհրաժեշտ առաջավոր համակարգեր, որպեսզի ի վիճակի լինեին զորքերը և պաշարները արագ նետել Պարսից ծոցի շրջան և վարել որոշ չափով երկարատև պատերազմ: Մերձավոր արևելքի ամերիկյան մյուս նոր բազաները, ներառյալ Ռաս-Բանասի բազաները, գտնվում էին նավթահանքերի տարածքից հեռու:

Պենտագոնի «թեմատիկ փաստաթուղթը», որը նախապատրաստվել էր ԱՎԱԿՍների մասին մտքերի փոխանակության համար, բայց լայն տարածում չէր ստացել, հաստատում էր «պաշտպանության միասնական ռեգիոնալ համակարգի ստեղծման ուղիով գնալու» ցանկություն: «Ամերիկյան և օտարերկրյա իրաղեկ անձանց կարծիքով դա փաստորեն հավասարազոր կլինի ընդդեմ ՍՍՀՄ-ի նրա հարավարևմտյան սահմաններում նոր ռեգիոնալ ռազմական դաշինք ստեղծելուն, ի լրումն Արևմտաքում ՆԱՏՕ-ի պաշտպանության համակարգի»,— գրում է «Վաշինգտոն պոստը»:

Սաուդյան Արաբիան որոշեց ստեղծել անհամեմատ խիստ ճյուղավորված ռազմական ինֆրակառուցվածք, քան պահանջվում էր նրա սեփական կարիքների համար, հավաստում էր թերթը: Դրանից հետո, եթե նրա հարևանները համաձայնության գան կամ որևէ լուրջ ճգնաժամ սպառնա Պարսից ծոցի անվտանգությանը, Սաուդյան Արաբիայի տեխնիկան արդեն տեղում կլինի և «կարելի է օգնության կանչել ամերիկյան դաշնակցին», կամ էլ այդ դաշնակիցը կժամանի առանց սաուդյան կառավարության խնդրանքի:

էր-Ռիյադը սկսեց դրամ ծախսել պաշտպանական հատկացումներից, որոնք, ինչպես ենթադրում են ամերիկյան և օտարերկրյա իրազեկ անձինք, մոտակա տասնամյակում պետք է կազմեն 35-ից մինչև 60 միլիարդ դոլար՝ «արագ ծավալման ուժերի» համար գործնականում բազաներ նախապատրաստելու նպատակով:

Վաշինգտոնի տեսանկյունից, ձեռք բերված պայմանավորվածությունը իրենից ներկայացնում է իրանական հեղափոխության հետևանքով ամերիկյան դիրքերում առաջացած ճեղքը լրացնելու ընդունակ նոր ռեգիոնալ դաշինք ստեղծելու անկյունաքարը: ԱՄՆ-ում հույս ունեն երբևէ այդ դաշինքին միացնել նաև Եգիպտոսին: Իսկ առայժմ հիմնական հույսը կապում էին պակիստանյան զինված ուժերի հետ:

«Այդ շրջանում ոչ մի երկիր համաձայն չէ խաղալ ժամանակ իր մոտ ամերիկյան բազաներ ունենալ,— ասաց Քոմերը՝ նախ քարտերի կառավարության պաշտպանության մինիստրի նախկին օգնականը:— Այդ երկրները պատրաստ են մեզ թույլ տալ ապահովելու ամբողջ տեխնիկական օգնությունը, մշակել բոլոր համակարգերը, դրանք պահել կարգին վիճակում, ապահովել իրենց աջակցությունը, նույնիսկ շահագործել իրենց, սակայն ոչ ամերիկյան զրոշի ներքո»:

1981 թվականի փետրվարին Սաուդյան Արաբիան իր վրա վերցրեց Պարսից ծոցի երկրների համագործակցությամբ և Քուվեյթի, Կատարի, Բահրեյնի, Օմանի ու Արաբական Միացյալ Էմիրությունների մասնակցությամբ խորհուրդ ստեղծելու նախաձեռնությունը: Վաշինգտոնը անմիջապես ճնշում գործադրեց, որպեսզի այդ խորհրդին հաղորդեր զուտ ռազմական բովանդակություն, և միաժամանակ փորձեց մյուս պետությունների ՀՕՊ-ի համակարգերը միացնել միասնական համակարգի մեջ: Այդպիսի ավելի ընդարձակ ռեգիոնալ համակարգի ստեղծման հեռանկարը արագացրեց «C-3» պլանի իրագործման միջոցառումները: Պենտագոնում մասնագետները արդեն հաշվել էին, թե ինչպես տեղադրեն «C-3» համակարգը, որն ընդունակ է ի մի բերել Սաուդյան Արաբիայի, ԱՄՆ-ի և ռեգիոնալ մյուս պետությունների ուժերը: Առաջին վերլուծությունը ցույց տվեց, որ այն կարող է արժենալ մինչև 5 միլիարդ դոլար, բնականաբար, սաուդացիների գրպանից: ԱՄՆ-ը մտադրվել էր նաև այդ համակարգին միացնել լրտեսական արբանյակներ, «SR—71

Բլեկբըրդ» հետախուզական ինքնաթիռներ, «E-2C ավիակիր բազավորման հետախուզական ինքնաթիռներ:

Թե որքան լայն գործունեություն էր ծավալել Պենտագոնը, պարզ դարձավ, երբ 1983 թվականի հունվարի 1-ին ստեղծվեց այսպես կոչված «կենտրոնական հրամանատարություն» (Սենտկոմ), որը ժամանակավորապես տեղավորվեց Ֆլորիդայի նահանգի Տամպա քաղաքի ավիաբազայում: Պենտագոնի այդ ստորաբաժանման գործողության ոլորտում ընդգրկված էր 19 պետություն՝ Աֆղանստանը, Պակիստանը, Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Բահրեյնը, ԱՄԷ-ն, Կատարը, Սաուդյան Արաբիան, Օմանը, ԵԱՀ-ը, ԵԺԴՀ-ը, Եգիպտոսը, Հորդանանը, Սուդանը, Եթովպիան, Ջիբուտին, Սոմալին, Քենիան, ինչպես նաև Հնդկական օվկիանոսի զգալի մասը, այդ թվում Պարսից ծոցը և Կարմիր ծովը:

Ինչ վերաբերում է Իսրայելին, Լիբանանին և Սիրիային, ապա դրանք պատկանում են ԳՖՀ-ում գտնվող Եվրոպայի ամերիկյան զինված ուժերի հրամանատարության շտաբի գործողության գոտուն:

Հայտարարվեց, որ «կենտրոնական հրամանատարության» տրամադրության տակ դրված են «արագ ծավալման ուժերը», Հնդկական օվկիանոսի ավազանում գտնվող ԱՄՆ-ի ռազմական բազաները, ավիակիրների խումբը: Սենտկոմի գործողությունների տարածման շրջանն ընկած է երեք մայրցամաքների սահմանագծում, անմիջապես ՍՍՀՄ-ի սահմաններից հարավ: Խոսքը ոչ թե ուղղակի «արագ ծավալման ուժերի» համար ռազմական շտաբի վերնաշենք ստեղծելու մասին էր, այլ ռեգիոնի երկրների գործերին միջամտելու և Սովետական Միության հետ առճակատման համար պատրաստի մեխանիզմի հայտնվելու մասին:

ԱՄՆ-ի պաշտպանության մինիստր Ուայնբերգերը պաշտոնապես հայտարարեց, որ «արագ ծավալման ուժերը» «ինքնաբերաբար կողմնորոշված են դեպի նավթահանքերը», նկատի ունենալով Արաբական թերակղզու երկրները:

Վաշինգտոնում ոմանց թվում էր, թե ամբողջ Արաբիան, բացառությամբ Դեմոկրատական Եմենի, որ ամբողջապես ուսումնասիրված է կոմպյուտերներով և վերարտադրված պենտագոնյան գեներալների դիսփլեյների վրա, դարձել է Տեխասի կամ Օկլահոմայի նման հատուկ, որոշ չափով էկզոտիկ ստատուս: Սակայն բանն այն է, որ ամերիկյան մամուլը ցանկալին իրողության տեղ էր ընդունում: Դա վերաբերում էր նույնիսկ արաբական կառավարություններին, որոնք հակված չէին ամերիկյան մարիոնետների դեր խաղալ, էլ չենք խոսում արդեն բնակչության տրամադրության մասին: Վաշինգտոնյան ստրատեգները ավելի ու ավելի հաճախ են հիշում, որ իրենք գործ ունեն ոչ միայն անապատների, նավթահանքերի, խողովակաշարերի, նավահանգիստների ու ռազմական բազաների հետ, այլև սոցիալական ու տնտեսական պրոբլեմներով ծանրաբեռնված մի հասարակության հետ, որը կորցրել է կայունությունը գլխապտուցյտ արագ փոփոխությունների պրոցեսում:

12

ԱՐԱԲԻԱՆ ԱՐԽԱԻԶՄԻ ԵՎ ԱՅԾՄԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Լուսնային օրացույցով Հիջրայից հետո, երբ իսլամի հիմնադիր Մուհամեդը Մեքքայից փախավ Մեդինա, մի տարեթիվ, որը դարձավ մուսուլմանական թվականության սկիզբը, ուղիղ 1400 տարի անց Սաուդյան Արաբիայում տեղի ունեցավ մի իրադարձություն, որը բառացիորեն ցնցեց ամբողջ մուսուլմանական աշխարհը: Հիջրայի XV դարի առաջին օրը, որը համապատասխանում է 1979 թվականի նոյեմբերի 20-ին, մի քանի հարյուր զինված ապստամբներ գրավեցին իսլամի գլխավոր սրբավայրը՝ Մեքքայի Ալ Խարամ մզկիթը: Հիշեցնենք, որ նրա բակի կենտրոնում խորանարդի ձև ունեցող շենքի՝ Քաաբիի անկյունում ամրացված է սև գույնի մի քար: Ամբողջ աշխարհի մուսուլմանները օրական հինգ անգամ աղոթքի ժամանակ դեմքները շրջում են Քաաբիի ուղղությամբ: Նրանք իրենց ամբողջ կյանքի ընթացքում թեկուզև մեկ անգամ պետք է ուխտագնացություն կատարեն դեպի Մեքքա:

Շվարած սաուդյան իշխանությունները արտաքին աշխարհին հաղորդեցին միայն «կողոպտիչների հրոսակախմբի», «իսլամը ուրացողների» կողմից Ալ Խարամը զավթելու փաստի մասին: Բազմիցս խեղաթյուրված ինֆորմացիան «կողոպտիչներին» դարձրել էր «ամերիկա-իսրայելական դեսանտ», որ իբր թե իջեցրել են «Քաաբը Թեհրանում գտնվող ամերիկյան պատանդների հետ փոխանակելու» նպատակով: Երբ հաղորդագրությունն այդ ձևով հասավ մինչև Իսլամաբադ, հազարավոր պակիստանցիներ ոչնչացրին ամերիկյան դեսպանատան պահակախմբին, գրավեցին այն և հրդեհեցին: Դեսպանատան աշխատակիցները, չհաշված

մի քանի զոհվածների, հավաքվեցին վերջին հարկի անձեռնմխելի սենյակում: Շենքն այրվում էր, և ամերիկյան դիվանագետներին սպառնում էր տապակվելու վտանգը, երբ ժամանակին վրա հասան պակիստանյան զորքերն ու ամբոխին ցրեցին արցունքաբեր գաղով: Քաաբը գրավելուն ամերիկացիների և իսրայելցիների մասնակցության հերքումը միայն ԱՄՆ-ի ներկայացուցչություններին փրկեց նման ճակատագրից տասնյակ մուսուլմանական երկրներում:

Մեքքայի գլխավոր մզկիթի զինված գրավումը անարգանք և սրբապղծություն էր, քանի որ բռնությունը որպես այդպիսին Ալ Խարամում մուսուլմանների համար անհանդուրժելի է: Նույնիսկ, երբ Աբդել Ազիզ իբն Սաուդի՝ այժմյան Սաուդյան Արաբիայի հիմնադրի, ֆանատիկ զինվորները 1924 թվականին գրավեցին Մեքքան, նրանք քաղաքի փողոցներով քայլում էին հրացանների փողերն իջեցրած՝ ցուցադրելով ակնածալից հարգանք իսլամի գլխավոր սրբավայրի նկատմամբ:

Իրեն «մեսիա»— «մահդի» հռչակած, ապստամբների հոգևոր առաջնորդ Մուհամեդ ալ-Կահտանին հայտարարեց, որ շարժման նպատակն է «իսլամը մաքրել», «ազատել երկիրը թագավորական ընտանիքից և ծախու աստվածաբան-ուլեմաներից, որոնք հոգում են միայն իրենց պաշտոնների ու իրենց արտոնությունների մասին»: Ոգևորված նրա քարոզներից, ապստամբները՝ կրոնական ֆանատիկոսները, գործում էին անձնվիրությամբ, քանի որ նրանք կարծում էին, թե երկրագունդը կճեղքվի կարգուկանոնի պահապանների ոտքերի տակ և կուլ կտա նրանց, իսկ բնակչությունը կսկսի միանալ ապստամբներին:

Նրանց մզկիթից դուրս քշելու համար կառավարական զորքերը գործադրեցին արցունքաբեր գազերով ռումբեր ու թնդանոթներ: Ի պատասխան ապստամբները կրակում էին տանիքներից և մինարեթներից: Նրանց հուսահատ դիմադրությունը տևեց երկու շաբաթ և, ըստ իշխանությունների, մի քանի տասնյակ մարդկային կյանք խլվեց, իսկ ըստ ականատեսների՝ մի քանի հարյուր: Զոհվածների մեջ էր նաև ինքը՝ «մեսիան»: Այդ խմբի քաղաքական պարագլուխ 47-ամյա Ջուհայման ալ-Օթեյբիին գլխատեցին իր 62 ընկերների հետ միասին 1980 թվականի հունվարի 9-ին: Սակայն նրա կողմնակիցները մնացին: Էր-Ռիյադի համալսարանի պատերին շատ անգամ երևում են մակագրություններ.

«Ջուհայմա՛ն, մեր նահատակ, ինչո՞ւ դու գլուխով չվերցրեցիր պալատները: Պայքարը դեռ նոր է սկսվում»:

Ապստամբների միստիկաքաղաքական նպատակները բավականին աղոտ էին, սակայն Ջուհայմանի հակակառավարական կոչերը ուշադիր ունկնդիրներ գտան: Նրա ճառերը, որ բարձրախոսներով տրանսլյացիայի էին ենթարկվում մզկիթի տանիքից, ձայնագրվում էր մագնիտաֆոնի ժապավենների վրա և տարածվում բնակչության մեջ:

Պաշտոնական շրջանները նվազեցնում էին Մեքքայի մի-ջադեպի նշանակությունը: «Մզկիթը գրաված խումբը ուխտադրուժ մարդկանց մի հանցախումբ է, որը ճիշտ չի մեկնաբանում իսլամը,— ասաց այն ժամանակվա գահաժառանգ Ֆահդը «Նյուսուիկ» հանդեսի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ:— Նա վնաս չի պատճառել Սաուդյան Արաբիայի անվտանգությանը և կայունությանը»: Սակայն գաղտնի կարգով որոշ արքայորդիներ խոստովանում էին հակառակը:

Դեռևս օգոստոսին Սաուդյան Արաբիայի կառավարությանը հայտնի դարձավ, որ կանոնավոր բանակում ստեղծվում են գաղտնի բջիջներ, որոնք մաքսանենգ ճանապարհով զենք են ներմուծում, և որ որոշ երիտասարդ արքայորդիների մեջ նկատվում է դժգոհություն, 1979 թվականի նոյեմբերի վերջին գրում էր անգլիական լավատեղյակ «Ֆորին ռիփորթ» տեղեկագիրը: Դեպի երկիր զենքի հոսքը դադարեցնելու համար սաուդյան իշխանությունները Լիբանանից և Սիրիայից եկող ապրանքներով բարձած բեռնատար ավտոմեքենաների շարասյուներին արգելեցին անցնել Սաուդյան Արաբիայի տարածքով:

Սեպտեմբերին անվտանգության միջոցառումները ուժեղացվեցին: Անվտանգության ծառայությունը կատարեց մի շարք բանտարկություններ, հատկապես ՌՕՈՒ-ի, տանկային և հետևակային զորամասերի սպաներից: Հաստատվեց, որ 10 երիտասարդ իրանցիներ, որոնց կասկածում էին առաջադեմ գաղափարներ ունենալու մեջ, կանչվել են հարցաքննության: Նրանց հարցաքննում էին զատ-զատ խալեդ թագավորը, գահաժառանգ արքայորդի Ֆահդը, ազգային գվարդիայի հրամանատար Աբդալլահը և պաշտպանության մինիստր արքայորդի Սուլթանը: Կալանավորվածներից ոմանց հետագայում ազատեցին: Ուրիշներին բանտարկեցին:

Բանտարկությունների երկրորդ ալիքը ծագեց այն պատճառով, որ սեպտեմբերին երկրում հայտնվեցին բազմաթիվ թռուցիկներ: Դրանց մի մասը պահանջում էին երկրում վերականգնել ուղղափառ իսլամը: Մյուսները ժողովրդին կոչ էին անում տապալել «բռնատիրական և ծախու իշխանությունը»: Երրորդը պահանջում էր թագավորությունից դուրս վռնդել բոլոր օտարերկրացիներին:

Իշխանությունը չկարողացավ բացահայտել ո՛չ թռուցիկների հեղինակներին, ո՛չ նրանց, ովքեր տարածում էին դրանք, սակայն դրանց հայտնվելու փաստն ինքնին ուժեղացնում էր նյարդայնությունը: Սեպտեմբերի վերջին շաբաթվա մեջ ազգային գվարդիան և կանոնավոր բանակը մասնակի մարտական պատրաստության բերվեցին: Մեքքայի գլխավոր մզկիթի վրա հարձակվելուց հետո լրիվ մարտական դրություն հայտարարվեց:

Հակակառավարական հուզումները սկսվեցին Մեքքայի իրադարձություններից չորս օր առաջ, երբ ապստամբների ոչ մեծ զինված ջոկատները մտան մի քանի գյուղ և դիրքեր գրավեցին Մեդինայից ոչ հեռու գտնվող երկրորդական ճանապարհների վրա:

Նոյեմբերի 17-ի շաբաթ օրը Մեդինայի շրջանում բանակային ստորաբաժանումները զինված ընդհարման մեջ մտան ապստամբների հետ: Հետախուզական տեղեկություններից մեկում ասված էր, որ մի քանի զինվոր անցան ապստամբների կողմը: Կիրակի և երկուշաբթի օրը անկարգություններ սկսվեցին նաև մյուս շրջաններում:

Այդ ժամանակ ապստամբների հսկողության տակ անցավ Մեքքայի և Մեդինայի միջև ընկած տարածքի նշանակալից մասը: Տեղեկությունների համաձայն, նոյեմբերի 19-ին, երկուշաբթի օրը, նրանց շարքերն անցան կանոնավոր զորքերի և ազգային գվարդիայի զինվորները, որը և օգնեց նրանց վստահորեն առաջ շարժվել ճանապարհներով, գրավել ոստիկանական տեղամասերը և ռազմական ճամբարները: Ապստամբների ընդհանուր թիվը հաշվվում էր մինչև 3,5 հազար մարդ:

Երկուշաբթի տեղի ունեցավ շարժման ղեկավարների խորհրդակցություն: Նրանք որոշեցին բաժանվել երկու շարասյան: Մեկը ուղղվեց Մեքքայի կողմը, մյուսը՝ դեպի Մեդինա: Սակայն Մեդինայում և նրա ծայրամասերում կենտրոնացված էին լոյալ վարչակազմին պատկանող զորքեր: Երբ նոյեմբերի 20-ին, երեքշաբթի օրը ապստամբները հայտնվեցին քաղաքում, նրանց

հարձակումը ետ մղեցին։ Որոշ տվյալների համաձայն Մեդինայում զոհվեց ավելի քան 250 մարդ։

Սակայն Մեքքայում իշխանությունները հանկարծակիի եկան։ Մութ գիշերով քաղաք մտած մարդկանց խմբերը առանձնապես ուշադրություն չգրավեցին։ Գլխավոր մզկիթի վրա հարձակվողներից շատերը ժամանակին ծառայել էին բանակում։ Առավոտյան ժամը 5-ին, երբ Սաուդյան Արաբիայի կրոնական ավագ գործիչներից շատերը և նշանավոր պաշտոնատար անձինք եկան, որպեսզի ըստ իսլամական թվագրության նոր հարյուրամյակի սկսվելու կապակցությամբ կատարեն իրենց վաղ աղոթքը, ապստամբները ներխուժեցին Ալ-Խարամ։ Նրանք պահակներ կանգնեցրին այդ վիթխարի շենքի բոլոր 65 դարպասների մոտ և այնքան պատանդներ գրավեցին, որքան կարող էին, պատրաստվելով առևտուր անել երկրի կառավարության հետ։

Մայրաքաղաքում դրության ողջ լրջությունը գիտակցեցին, ինչպես երևում է, միայն կեսօրին։ Երեքշաբթի կառավարությունը որևէ լուրջ հակամիջոցառում ձեռք չառավ։ Այդ անգործությունը բացատրվում էր մի շարք պատճառներով։ Առաջին, Սաուդյան Արաբիայի «աչքի ընկնող դեմքը»՝ արքայորդի Ֆահդը, երկրում չէր, նա գտնվում էր Թունիսում։ Երկրորդ. մայրաքաղաքից բացակայում էր նաև ազգային գվարդիայի հրամանատար Աբդալլահը։ Էր-Ռիյադում մնացել էին միայն Խալիդ թագավորը և պաշտպանության մինիստր Սուլթանը, որոնք կարգին չէին հասկանում ինչ է տեղի ունեցել և ով է ապստամբել։

Սկզբում թագավորը ցանկանում էր խնդրել էր-Ռիյադի հոգևորականությանը, որպեսզի նա թույլ տա զորք մտցնել իսլամի սրբության սրբոցը։ Սակայն աստվածաբան-ուլեմաները, որոնք գտնվում էին նույնպիսի տանջալից անհայտության մեջ, ինչպես և թագավորը, չէին համարձակվում համաձայնություն տալ նման միջոցառմանը։ Միայն չորեքշաբթի առավոտյան Սուլթանը, Թունիսում գտնվող Ֆահդի ճնշման տակ, զորքերին հրամայեց նախապատրաստվել ռազմական գործողությունների։ Սահմանները փակվեցին, երկրի արևելքում ընկած նավթահանքերի շրջանում զորքեր մտցվեցին, խոշոր քաղաքների կայազորներն ուժեղացվեցին, բանակը գրավեց բոլոր ռազմական օբյեկտները և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները։

Թագավորական տունը հավաքագրեց բոլոր հնարավոր ուժերը մզկիթի վրա գրոհելու համար, քանի որ նա չէր կարող

ընդունել ապստամբների հետ բանակցություններ վարելու պայմանները։ Նրանք պահանջում էին կառավարության մեջ արմատական վերափոխություններ կատարել, մասնավորապես ղբաղեցրած պաշտոններից հեռացնել գլխավոր արքայորդիներին. արմատականորեն վերանայել քաղաքականությունը նավթի հանույթի և առևտրի բնագավառում (սկզբում ապստամբները պահանջում էին ընդհանրապես դադարեցնել նավթի վաճառքը Արևմուտքին). վերադառնալ «ճշմարիտ» իսլամի դոգմաներին. Սաուդյան Արաբիան հռչակել իսլամական թագավորություն, ինչպես նաև երկրից վռնդել բոլոր օտարերկրյա ռազմական խորհրդականներին։

Թունիսից վերադառնալով՝ Ֆահդը պնդեց, որ ապստամբությունն անմիջապես ճնշվի ուժի միջոցով։ Նա հասկանում էր, որ գլխավոր մզկիթի երկարատև պաշարումը կարող է թագավորական տան իշխանությունը տապալել և կրոնական շրջաններում խոր ճեղքվածք ստեղծել։

Մինչ պատրաստվում էր Ալ Խարամի գրոհը, երկրի արևվելքից լուրեր ստացվեցին, որոնք էլ ավելի սարսափելի էին վարչակազմի համար։ Հուզվել էր արևելյան նահանգներում կենտրոնացած նավթահանքերի շիա բնակչությունը։ Սաուդյան Արաբիայի պաշտոնական գաղափարախոսությունը սուննիզմի գերօրթոդոքս ձևն է՝ վահաբիզմը։ Սակայն արևելքում ապրում են իրանցիների նման նույն կրոնական համոզմունքներն ունեցող արաբներ։

Մեքքայի մզկիթի վրա կատարած հարձակումից հետո նավթահանքերի շուրջը տեղավորեցին ազգային գվարդիայի 12 հազար զինվոր։ Սակայն գործնականորեն անհնարին էր ապահովել անապատը հատող հազար կիլոմետր ընդհանուր երկարություն ունեցող նավթախողովակաշարերի պահպանությունը։

Երեք ստրատեգիական ամենակարևոր շրջաններում բնակեցված շիաները (300—350 հազար) քաղաքականապես ավելի զարգացած էին, քան Մեքքայի ապստամբ սուննիները։ Հատկապես այդ մարդիկ, որ արդեն մի քանի տասնյակ տարի առաջ նավթարդյունաբերության շնորհիվ դարձել էին պրոլետարներ և, որպես կանոն, կատարում էին սև աշխատանք, ստեղծեցին ընդհատակյա պրոֆմիություններ և ղեկավարեցին 1953, 1956 և 1967 թվականներին տեղի ունեցած քաղաքական ապստամբությունները ու ցույցերը (մասնավորապես՝ հակաամերիկյան)։

Շիաների հոսանքին պատկանելու պատճառով, որը էր-Ռիյադի սուննիների միապետները համարում էին հերետիկոսություն, նրանք կրկնակի հալածված էին։

Ոգևորված Մեքքայի ապստամբությամբ՝ շիաները որոշեցին խախտել կառավարության արգելքը, հրապարակայնորեն նշելով նոյեմբերի 27-ի աշուրի կրոնական սուգը, որի ժամանակ հավատացյալները շղթաներով ծեծում են իրենց։ Այս անգամ նա ազգային գվարդիան փորձեց ուժով խանգարել կրոնական այդ արարողությունը։ Այդ ժամանակ մարդկանց հոսանքները, Խոմեյնիի պատկերը ձեռքներին, լցվեցին էլ-Քաթիֆի և Արևելյան նահանգի մյուս բնակավայրերի փողոցները, հարձակվեցին զորանոցների վրա։ Հուզումները շարունակվեցին երեք օր, ցուցարարները հրդեհեցին գործարաններն ու բանկերը, բղավելով հակաթագավորական լոզունգներ։ Թուրքիկները ժողովրդին կոչ էին անում տապալել «շահագործող վարչակարգը» և հռչակել հանրապետություն։ Ազգային գվարդիան խիստ հաշվեհարդար տեսավ նրանց հետ. ականատեսների տեղեկություններով, տասնյակ ապստամբներ զոհվեցին և վիրավորվեցին։

Շիաների հուզումներից և Մեքքայի ապստամբությունից իրեն կորցրած կառավարությունն սկսեց և՛ հաշտարար, և՛ պատժիչ միջոցներ կիրառել։ Մի քանի գեներալներ, այդ թվում անվտանգության մարմինների վեց գեներալ, անձեռնահասության և անփութության պատճառով հեռացվեցին, Մեքքայի նահանգապետը արձակվեց աշխատանքից, Խալեդը, ինչպես նաև Ֆահդը և մյուս ավագ արքայորդիները շտապեցին այցելության գնալ ազդեցիկ շեյխերին և ռազմական բազաներ հաճախեցին։ Հազարավոր «կասկածելի» ներգաղթ-բանվորներ աքսորվեցին։ Բեյրութից փախած ձախ օպոզիցիայից քաղաքական ղեկավար Նասեր աս-Սաիդին գողացան, և նա անհետ կորավ։

Ուսանողներին ուսումնական տարվա եռուն պահին ետ կանչեցին արտասահմանյան ուսումնական հաստատություններից։ «Խիստ ուղղափառ» ուլեմներին հանգստացնելու համար փակվեցին գեղեցկության ինստիտուտները, կանանց վարսավիրանոցները, կանանց ակումբները։ Հեռուստատեսության հաղորդավարուհիները թեև հագնված էին բավականին համեստ, այնուամենայնիվ աշխատանքից ազատվեցին։ Նոր կանոնները արգելում էին աղջիկներին՝ կրթությունը շարունակել արտասահմանում։

Ընդառաջելով «մոդեռնիստների», տեխնոկրատների, ձեռնարկությունների ղեկավարների, «ռաղնոչինեցների» պահանջներին, որոնք ցանկանում էին մասնակից լինել իշխանության կազմավարությանը, գահաժառանգ արքայորդի Ֆահդը հաղորդեց «հիմնական օրենքի» մշակման մասին, որը նախատեսում էր «կոնսուլտատիվ» ասամբլեայի նշանակում։ Այդ խոսումը մենք անհետևանք առ այսօր։

Հետապնդվելով իրանական հեղափոխության ուրվականով, ամերիկյան ղեկավարները դեռ բոլորովին վերջերս վախենում էին, թե չլինի սաուդյան վարչակարգի «լիբերալացումը», այլ կերպ ասած՝ հնացած քաղաքական ինստիտուտների հարմարվելը սոցիալ-տնտեսական վերափոխություններին, շատ ուշ տեղի ունենա։ Համենայն դեպս, հատկապես 1980 թվականի հունվարին «Նյուսուիկ» շաբաթաթերթին և «Վաշինգտոն սթար» թերթին հենց դա էլ հաղորդեց ԿՀՎ-ի աշխատակիցը, անզգուշաբար մեջ բերելով նաև այն ժամանակվա պրեզիդենտ Քարտերի խոսքերն այն մասին, որ «սաուդյան վարչակարգի հետագա գոյությունը կարելի է երաշխավորել միայն մոտակա երկու տարվա ընթացքում»։ Այդ և մյուս գաղտնի տեղեկությունների «արտահոսքը» հանգեցրեց Սաուդյան Արաբիայից ԿՀՎ-ի ռեզիդենտի արտաքսելուն։ Ռոնալդ Ռեյգանի իշխանության գլուխ անցնելը «կանաչ լույս» տվեց «ծայրահեղ միջոցառումների» կողմնակիցներին, ընդհուպ մինչև սաուդյան վարչակարգը պաշտպանելու համար ինտերվենցիայի դիմելը։

Անվտանգության տեղական ծառայություններն ընդլայնվեցին և ամրապնդվեցին շնորհիվ, մասնավորապես, էր-Ռիյադ գործուղված ԿՀՎ-ի խորհրդականների և Գ.Ֆ.Հ-ի ու Ֆրանսիայի փորձագետների։ Ինչպես կանոնավոր բանակի, այնպես էլ ազգային գվարդիայի զինծառայողներին (որոնք հավաքագրվում էին ցեղերով) առատորեն նյութական բարիքներ էին պարգևում։ Մի քանի ամսվա ընթացքում նրանց աշխատավարձը կրկնակի ավելացավ։ Իշխանություններն աչք էին փակում շատ սպանների «առևտրական» գործունեության վրա։

Կանոնավոր ուժերը տարաձևորոնացված էին սահմանի երկարությամբ, տանկերը տեղավորված էին քաղաքից հեռու, իսկ ռազմամթերքը տրվում էր բավական ժլատորեն։ Բանակում, ազգային գվարդիայում և այնպիսի կարևոր մինիստրություններում, ինչպիսին պաշտպանության և ներքին գործերի մինիս-

տրություններն են, բոլոր հրամանատարական կետերը վստահում էին միայն թագավորական ընտանիքի անդամներին։ Դա արվում էր դիտավորյալ, որպեսզի դժվարացնեն հեղաշրջման փորձերը։

Որոշ մասնագետներ դնում են, որ զինված ուժերի մարտական մուսուլմանական տրամադրությունները մի գեղեցիկ օր կարող են խթանել հեղափոխությանը, ինչպես եղավ Լիբիայում։ «Խռովությունը կունենա կրոնական գունավորում, սակայն առաջին պլան կմղի Քադաֆիի նման մի մարդու,— ասաց Սաուդյան Արաբիայի գծով ամերիկյան հայտնի մասնագետներից մեկը։— Ես համոզված եմ, որ այդպիսի մարդ գոյություն ունի։ Նա աղոթում է և դավադրություններ նյութում, բայց նրա ժամանակը դեռ չի եկել։ Ինչքա՞ն կտևի այս իրադրությունը։ Հարցը սա է»։

Սակայն վերջերս և՛ Վաշինգտոնը, և՛ էր-Ռիյադը անհրաժեշտություն զգացին ճշտել, ռեռուշել «իմիջը»՝ թագավորության պատկերը միջազգային ասպարեզում։ Հայտարարությունների հեղեղ սկսվեց. իբր սաուդյան վարչակարգը «հաղթահարել է ճգնաժամը», «կայունացել է», «ձեռք է բերել դինամիզմ»։ Բնութագրական է այդ իմաստով 1981 թվականի մարտի հրապարակումը «Թայմ» հանդեսում։

«Մի ժամանակ թվում էր, որ Սաուդյան Արաբիան լողում է ալիքների կամքով, սպառնալով դառնալ նոր հիվանդ Մերձավոր արևելքում,— գրում է հանդեսը։— Նրա անհաջողությունների շրջանը սկսվեց արաբական աշխարհը բաժանող եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագրից, աշխարհ, որի հոգևոր դեկավարությունը սաուդցիները, որպես Մեքքայի պահապաններ, միշտ համարել են իրենց առանձնահատուկ խնդիրը։ Այնուհետև տեղի ունեցավ իսլամական հեղափոխությունը, որը տապալեց Իրանի շահին և անուղղակի կերպով վտանգ ստեղծեց բոլոր պահպանողական մուսուլմանական վարչակարգերի համար։ Երկրի ներսում մոլեռանդ մուսուլմանների հրոսակախումբը Մեքքայում գրավեց սրբազան մզկիթը և իր ձեռքում պահեց երկու շաբաթ, մինչև որ սաուդյան զինված ուժերը դուրս քշեցին նրանց այնտեղից։ Ի վերջո պատերազմ սկսվեց Իրանի և Իրաքի միջև, որը նոր պատակոում առաջ բերեց իսլամի համախոհների միջև և սպառնալիքի տակ դրեց շրջանի կայունությունը։ Սակայն ձեռնարկված միջոցառումներից հետո սաուդյան ղեկավարությունը էր-Ռիյադի պալատներից աշխարհին նայում է առավել վստահությամբ, քան անցյալ ժամանակաընթացքում»։

Դժվար է ասել, նման իրատեսական ասացվածքում ինչն է շատ՝ իրեն հանգստացնելու ձգտո՞ւմը, թե մյուս երկրներին հավատացնելը, որ էր-Ռիյադը «կայուն» է։ Հնարավոր է և՛ մեկը և՛ մյուսը։ Ուստի ավելորդ չի լինի քննել Սաուդյան Արաբիայում և Պարսից ծոցի երկրներում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքը, ավել կամ պակաս չափով կանխագուշակելու համար իրադարձությունների ապագա զարգացման տարբերակների հավանականությունը։

«Շահույթների պայթյունը»

Արաբական հող տեղափոխված նավթային արդյունաբերությունը XX դարի ինդուստրիայի ամենաառաջավոր ճյուղերից մեկն էր։ Նա այնքան բարձրարտադրողական էր, որ ընդգրկում էր ընդամենը բնակչության ոչ մեծ մասը։ Սաուդյան Արաբիայում գրեթե կես միլիարդ տոննա նավթի հանույթը և արտահանությունը ապահովում են 11—13 հազար մարդ, չհաշված կապալային ֆիրմաները (Քուվեյթում մոտ 4 հազար նավթագործներ կան)։ Նոր արդյունաբերությունը ավանդական տնտեսության ծովում երկար ժամանակ մնում էր որպես մի փոքրիկ կղզի, ֆեոդալատոհմային հասարակության մեջ՝ օտարածին մարմին։

Սակայն նավթի հանույթը արաբական պետության վրա ներգործում էր ամենից առաջ մշտապես աճող հատկացումներով, որոնք ընկնում էին նրանց կառավարող դասի ձեռքը։

Սաուդյան Արաբիայի նավթից ստացված եկամուտները 1938-ից մինչև 1973 թվականը աճեցին ավելի քան 8,5 հազար անգամ՝ կես միլիոնից մինչև մոտ 4,5 միլիարդ դոլար։ Դրանք 70-ական թվականներին նավթի գները գրեթե քսան անգամ աճելու հետևանքով շուրջ 25 անգամ մեծացան։ Պարսից ծոցի իշխանությունների մեծ մասում, հաշվի առնելով նրանց բնակչության փոքրաթիվությունը, եկամուտների աճը, հատկապես բնակչության մեկ շնչի հաշվով, առավել ևս արտակարգ էր։

Սաուդյան Արաբիան և նավթային մյուս միապետությունները 40—50-ական թվականներին եկամուտների ճնշող մասը ծախսում էին սպառման վրա։ Դա բացատրվում էր երկրի աղ-

քաոտությամբ, առաջներում հաղիվ ծայրը ծայրին հասցնող կիսաքաղց մակարդակով և նրանց սոցիալ-քաղաքական կառուցվածքի հետամնացությամբ: Այն տպավորությունն էր ստացվում, որ արաբ դրամատերերը՝ կառավարող դասերը, հարյուրամյակներ շարունակվող պասը դադարեցրին և մեծ ախորժակով ըրաղվեցին սպառումով: «Ստորին խավերին» այդ տարիներին գործնականում ոչինչ չէր հասնում նավթի եկամուտներից:

Եթե այդ երկրների պետական ապարատը նույնիսկ համապատասխանում էր միջնադարյան մակարդակով ֆեոդալատոհմային հասարակության պահանջներին, ապա բոլորովին չէր համապատասխանում ֆինանսական խոշոր միջոցներ տնօրինելու և նոր սոցիալ-տնտեսական ֆունկցիաներ կատարելու համար: 30—40-ական և նույնիսկ 50-ական թվականներին պետական գանձարանը փաստորեն առանձնացված չէր կառավարողների և նրա տոհմի մասնավոր գանձարանից: Այստեղ գոյություն չուներ ո՛չ պետական գանձարան, ո՛չ վալյուտային համակարգ, ո՛չ արդյունաբերական կամ առևտրական օրենսդրություն, ոչ պետական կամ հասարակական ինստիտուտներ, ո՛չ նախապատրաստված կադրեր, որ կարողանային եկամուտների նոր մակարդակից գլուխ հանել:

Եկամտի բացարձակ թվերը տնտեսական զարգացման բարձր մակարդակի վիճակագրական պատրանք են ստեղծում: Աշխարհում ամենուրեք ազգային եկամտի արագ վերելքը հնարավոր է եղել միայն նախորդ սոցիալ-քաղաքական փոփոխությունների հետևանքով: Այստեղ էլ ֆինանսական պայթյունը նախորդեց և՛ սոցիալական, և՛ քաղաքական, և՛ կուլտուրական հեղափոխությանը: Նավթային պետությունների մակարդակը մինչև նրանց զուտ ֆինանսական հնարավորությունները «ձգելու» փորձերը դեմ էին առնում ո՛չ միայն միջազգային մոնոպոլիաների քաղաքականությանը, ո՛չ միայն այդ շրջանների սակավամարդությանը, այլև Արաբիայի հասարակական կառուցվածքին և նրա բնակչության հոգեբանությանը:

Օգտագործելով «արաբական ֆեոդալիզմ» արտահայտությունը, այնուամենայնիվ չարժեր հավասարության նշան դնել շեյխի և միջնադարյան Եվրոպայի կալվածատիրոջ միջև, բեդվին ցեղի շարքային անդամի և ճորտի միջև: Տոհմական շեյխը ավելի մոտ էր կանգնած մինչֆեոդալական Եվրոպայի ռազմադեմոկրատական առաջնորդին, քան ճորտատիրոջը:

Շահագործման և հպատակության հարաբերությունները «ցեղնիվ» ցեղերի ներսում ավելի քիչ էին զարգացած, քան օազիսներում, և մեղմանում էին տոհմային համերաշխության ու փոխադարձ օգնության ավանդույթներում: Ցեղակիցներին որպես ռազմական ուժ օգտագործելով նստակյաց բնակչությանը կամ հարևանին թալանելու համար անապատի իշխանն իր պարտքն էր համարում ավարից կամ մշտական եկամուտներից բաժին հանել բեդվիններին: Բնական է, այս նահապետական հարաբերությունները որպես կանոն չէին տարածվում ոչ աֆրիկյան ծագում ունեցող ստրուկների, ո՛չ ազատ արձակվածների վրա, որոնք կիսաճորտական կախվածության մեջ էին մնում տերերից, ո՛չ գյուղացի ֆելլահների, ո՛չ էլ «ստորին» ցեղերի վրա:

Երբ անապատում խփեցին հեղուկ վառելիքի շատրվանները, ֆեոդալատոհմատիրական արիստոկրատիան սկսեց նավթից հսկայական եկամուտներ ստանալ, որն ըստ էության (ոչ թե չափերով) չէր տարբերվում նախկին ֆեոդալական rենտայից: Առաջին մղումը եղավ պալատների կառուցումը, որոնց հանդեպ խամրում են «Հազար ու մի գիշերվա» հեքիաթները, իսկ երկրորդը՝ իրենց ցեղակիցներին, միայն ցեղակիցներին պատշաճ բնակարաններ և այլ բարիքներ տալը:

Թե ինչպես սկսվեց այդ պրոցեսը, կարելի է տեսնել Արաբական Միացյալ Էմիրությունների օրինակով, որոնք մյուսներից ավելի ուշ հաղորդակից դարձան նավթային բիզնեսին: Տեղի երևելիներից շատերն ինձ թվում էին, թե նման են միմյանց: Եվ ոչ միայն նրա համար, որ դարերի ընթացքում փոքր տարածքում, որտեղ թարմ արյան հոսքը քիչ էր, նրանք բոլորը վաղուց հարազատացել էին և մեկը մյուսին բարեկամ ու ազգական էին գալիս: Նրանք նման էին միմյանց արագ ու կորուկ շարժումներով և դեմքի ողբերգականորեն դժգոհություն արտահայտող տեսքով: Նրանց աշխարհը մինչ այդ սահմանափակված էր անապատի ֆեոդալատոհմային հասարակության աշխարհայացքով: Եվ հանկարծ նավթ, ոսկի: Օտարերկրացի ժողովուրդ: Ճարպիկ գործարարներն ու արկածախնդիրները, որոնք առաջ աստծո կողմից մոռացված այդ վայրերին ուշադրություն չէին դարձնում, այժմ այստեղ խմբերով էին գալիս: Շեյխերը զգում էին, որ իրենց անխղճաբար թալանում են, բայց ոչինչ անել չէին կարող:

Պարսից ծոցի նավթային էպոպեայի ասելիք դարձավ Աբու-Դաբիի նախկին կառավարիչ Շահբուտ իբն Սուլթանը: 60-ական թվականների սկզբին երկիրը գտնվում էր նավթարդյունահանության արդյունաբերության պատմության մեջ առավել ֆանտաստիկ թռիչքներից մեկի շեմին, և դրամը հոսում էր էմիրի գրպանները: Կասկածամիտ և անհավասարակշիռ Շահբուտը կատաղությունից իրեն կորցրեց և սկսեց կամակոր երեխայի նման ճղճղալ: Շատերը կարծում էին, թե նա խելագարվել է: Էմիրը հրաժարվեց գործ ունենալ օտարերկրացիների հետ և մտադիր չէր իր հարստությունը ծախսել, գերադասելով ոսկե շարանների հավաքածու կազմել իր ներքնակի տակ: Իր կավաշեն պալատի խորքի սենյակներից մեկը լիքը լցրել էր խոշոր թղթադրամներով: Երբ նրան դուրս շպրտեցին, հայտնաբերեցին, որ առնետները կրծոտել էին համենայն դեպս 2 միլիոն դոլար թղթադրամ:

Շահբուտը հետաքրքիր է նրանով, որ նա բացառություն էր, հնարավոր է, որ նա յուրատեսակ խորհրդանիշն էր անապատի բեդվին ֆեոդալատոհմային հասարակության անհետացող արժեքների, որի «մաքրությունը» նա փորձում էր պահպանել այդքան անսովոր եղանակով:

Շեյխերը և էմիրները մարդիկ են իրենց ուժեղ և թույլ կողմերով, բարու և չարի, կյանքի բարիքների, շքեղության և դրախտային երջանկության մասին իրենց հասկացողությամբ (հիշեցնենք, որ մուսուլմանական դրախտը զգացմունքային հաճույքների, հուրի-փերիների, նրբաճաշակ և համեղ կերակրատեսակների, կարկաչուն աղբյուրների և արմավենիների ստվերաշատ պուրակների վայր է): Նրանք չեն կարող դիմադրել ժամանակակից աշխարհի բազում գայթակղություններին, որոնք բազմապատկվում են հինավուրց առասպելների հանդուգն երևակայությամբ, և անցնում են չափից ավելի մեծ ծախսերի ու շռայլության շրջանը ինչպես անձնական, այնպես էլ պետական մասշտաբով:

40-ական թվականներին և 50-ական թվականների սկզբին Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդել Ազիզ իբն Սաուդի կառավարման վերջին տարիներին նա արդեն ի վիճակի չէր հսկելու կաշառակերությունը, որը նրա իսկ ստեղծած սիստեմում այնպես առատորեն ծաղկում էր: Նրա տղաները, աղգականները, մինիստրները արագ տեմպերով ծախսում էին աճող եկամուտները: Մինիստրները, չինովնիկներն սկսեցին պահել լիբանանցի, պաղեստինցի, սիրիացի քարտուղարներ, որոնց միակ խընդիրն այն էր, որպեսզի պետական գանձարանի դրամը տեղափոխին շվեյցարական, ամերիկյան բանկերը կամ Բեյրութում անշարժ գույքի վերածեին: Երկիրն այնքան օծանելիք էր ներմուծել, որ առևտրականներից մեկը զարմացած բացականչել է. «Ինչների՞ն է պետք այդքան օծանելիք: Նրանք, երևի, լողանում են դրա մեջ»: Օծանելիքի, ինչպես նաև շամպայնի մեջ այդ պուրիտանական երկրում արիստոկրատներն իսկապես լողացնում էին իրենց թանկարժեք եվրոպացի հարճերին:

Երբ 1953 թվականին գահ բարձրացավ Սաուդ իբն Աբդել Ազիզը, նա գերազանցեց հորը: Նրա հարեմը հոր հարեմից ավելի մեծ էր, իսկ նրա գործակալները թափառում էին Կահիրեում, Թեհրանում, Կարաչիում, Բեյրութում, աղջիկներ գնելով (իսկ երբեմն էլ նաև տղաներ) սաուդյան արիստոկրատների համար: Նրանց գործողությունները սկանդալային բնույթ ստացան: Սաուդյան Արաբիայում մինչև 50-ական թվականների վերջը բյուջեի մասին հասկացողություն և անձնական ու պետական ծախսերի բաժանում գործնականորեն գոյություն չուներ: Չնայած նավթից ստացված եկամուտների աճին, երկրի պարտքերը հասան աստղաբաշխական գումարների: Սակայն Սաուդը և նրա շրջապատը չէին մտածում կրճատել պալատների, ավտոմեքենաների, հարեմների, ինքնաթիռների ծախսերը:

Քուվեյթի կառավարչին շնորհակալություն հայտնելու համար նրա աղգականներից մեկը խնջույք կազմակերպեց, որտեղ ծրագրի հիմնական մեխը խոշորագույն արժեթղթերով խարույկ վառելն էր: Այնուհետև շեյխին նվիրեց զուտ ոսկուց պատրաստված նավթաշտարակի մոդելը:

Մինչև օրս էլ Քուվեյթում կարելի է հանդիպել այդպիսի խելացնոր ծախսումների մնացորդների. ավերված պալատներ՝ եվրոպական ամենաթանկ խանութներից գնված «մոդեռնիստական» կահույքով լցված մարմարե սենյակներով:

Այդ ժամանակները կարծես թե անցել են և գործնականում նախկին բոլոր կառավարողները, որոնց գլուխները պտտվում էին ոսկու հոսքից, փոխարինվել են ավելի ռեալիստորեն մտածող միապետներով: Շռայլությունը դարձել է ոչ այնքան բացահայտ և շատ դեպքերում փոխարինվել է հարստության սիստե-

մատիկ կուտակումներով ու բազմապատկումով։ Սակայն հեղինակության նկատառումներով կատարվող շատ «պետական» միջոցառումներ նույնպես հասնում են շռայլության։

Արքայորդիներն ու աստվածաբանները

30-ական թվականների սկզբին Սաուդյան Արաբիայում ստեղծված մերձավորարևելյան տիպի բացարձակ միապետական իշխանությունը պահպանվեց մինչև 80-ականների սկիզբը։ Սակայն այն ենթարկվեց զգալի փոփոխությունների։ Սաուդների տոհմը իր ճյուղավորումներով, որն առանց այն էլ բավականաչափ բազմաքանակ էր արաբական հողերը էր-Ռիյադի շուրջը հավաքելու ժամանակաշրջանում, օգտվելով բազմակնությունից, այնքան աճեց, որ վերածվեց կարծես թե «տիրապետող ցեղի»։ Սաուդյան Արաբիայի հիմնադիր Աբդ ալ-Ազիզ իբն Աբդուռահման իբն Սաուդը ամուսնացել էր գրեթե հարյուր հիսուն անգամ՝ դինաստիական և զուտ սիրային կապերով։ Երբ նա 1953 թվականին վախճանվեց, նրանից հետո կենդանի մնացին նրա 38 որդիները։ Միայն մեծահասակ տղամարդիկ այժմ տոհմում հաշվվում են 2-ից մինչև 5 հազար։ Հատկապես Սաուդիդներն են տիրում երկրի հիմնական ռեսուրսներին, նրա նավթային եկամուտներին, հենց նրանց են ծառայում զինված ուժերը և անվտանգության մարմինները, պետական ապարատը, որոնց վերնախավին կառավարում են նրանք։ Սակայն հենց ինքը՝ պետական մեխանիզմը, աճել ու բարդացել է, որոշ չափով արդիականացվել, նոր ֆունկցիաներ ձեռք բերել։

Բնականաբար, թագավորը մնում էր կենտրոնական դեմքը իշխանության սիստեմում, միաժամանակ լինելով իմամ, այսինքն՝ հավատացյալների համայնքի գլխավորը, զորապետը, գերագույն դատավորը և քոչվոր ցեղերի գլխավոր շեյխը։ Թեև ձևականորեն նա օրենսդիր չէր համարվում, քանի որ շարիաթում բոլոր օրենքները շարադրված էին մեկընդմիշտ, նա հրապարակում էր իրադրությունը կարգավորող դեկրետներ, որոնք շարիաթում չէին ընդգրկված։ Միապետը համատեղում էր բարձրագույն գործադիր, օրենսդրական և դատական իշխանությունները։ Գործնականում թագավորը այդ ֆունկցիաները հանձնում է պետական հիմնարկներին, ինստիտուտներին, Մինիստրների խորհրդին կամ պալատական դիվանին պատկանող անձնավո-

րություններին, Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալին, եթե թագավորը կառավարության գլուխ է կանգնած, Մինիստրների խորհրդին և արդարադատության մինիստրությանն առընթեր բողոքների բյուրոյին, պաշտպանության մինիստրությանը, զինված ուժերի շտաբի և ազգային գվարդիայի հրամանատարին, կոնսուլտատիվ խորհրդին, որը մշակում է թագավորական դեկրետների հիմքում ընկած հանձնարարականները։

Տոհմի միասնությունը ձեռք էր բերվում համաձայնության մեթոդով՝ նրա գլխավոր ներկայացուցիչների կոնսենսուսով։ Սակայն կարևորագույն որոշումներ ընդունելիս նրա 2—5 հազար անդամներից մասնակցում էին համեմատաբար թվով ավելի քիչ՝ հարյուրից ոչ ավելի մարդ։ 68 ստորագրությունները, որ 1964 թվականի նոյեմբերի 2-ին հայտնվեցին թագավորական ընտանիքի որոշման մեջ՝ գահը Ֆեյսալին հանձնելու և նախկին միապետ Սաուդին վտարելու մասին, ցույց են տալիս մոտավոր չափերը այն խմբի, որը որոշում էր քաղաքականությունը և «ընտրում» այդ քաղաքականությունն իրականացնող գլխավոր անձանց։

«Թագավորներ արտադրող» այդ հարյուրյակի մեջ մտնում են Սաուդիդների բազմաքանակ «ցեղի» ազդեցիկ ճյուղերի հեղինակավոր առաջնորդներ, որոնց միջև գաղտնի պայքար է գնում, որպեսզի թույլ չտան խմբավորումներից որևէ մեկը իշխանության մենաշնորհն իր ձեռքը վերցնի։

Ընթացիկ գործերով ամենակարևոր որոշումներն ընդունում է թագավորին շրջապատող մարդկանց ոչ մեծ խումբը։ Ֆեյսալի օրոք այդ խմբի մեջ, բացի նրա հորեղբորից, մտնում էին խորթ եղբայրները՝ գահաժառանգ արքայորդի Խալեդը, էմիր Ֆահդը, ազգային գվարդիայի հրամանատար Աբդալլահը, պաշտպանության և ավիացիայի մինիստր Սուլթանը։ Այս խումբը, Սաուդիդների տոհմի մի քանի տասնյակ առաջատար ներկայացուցիչներին հավաքելով, Ֆեյսալի սպանությունից հետո կարողացավ առանց դժվարության ապահովել իշխանության հանձնումը՝ թագավոր և պրեմիեր մինիստր նշանակելով Խալեդին, գահաժառանգ արքայորդի և պրեմիեր մինիստրի առաջին տեղակալ՝ Ֆահդին, ազգային գվարդիայի հրամանատար՝ Աբդալլահին, Աբդ ալ-Ազիզի կենդանի մնացած որդիներից վեցերորդին։

Ֆեյսալին սպանեցին 1975 թվականի մարտի 25-ին առավոտյան, մուսուլմանական կրոնական տոնակատարության ժա-

մանակ, Մուհամեդ մարդարեի ծննդյան օրը, երբ նա ընդունելություն էր կազմակերպել իր ազգականների, տոհմի շեյխերի և աստվածաբանների համար: Նրան մոտեցավ իր ազգական Ֆեյսալ Իբն Մուսաիդը և, հանելով ատրճանակը, ամբողջ պատունակը դատարկեց հորեղբոր վրա: Երբ պահապանները դահլիճ մտան, թագավորը արդեն մեռած էր:

Մարդասպանի հայրը թագավորության հիմնադրի 14-րդ որդին էր: Երիտասարդ արքայազնը նոր էր վերադարձել Միացյալ Նահանգներից, որտեղ մի քանի տարի սովորում էր դպրոցում և համալսարանում: Նա նշանված էր Ֆեյսալի կողմից տապալված Սաուդ թագավորի աղջկա հետ:

Էր-Ռիյադի ռադիոն, ընդհատելով մարգարեին նվիրված ծրագրի հաղորդումը, հայտարարեց Ֆեյսալի մահվան մասին: Առաջին հաղորդման մեջ ապացուցում էին, որ արքայազն Իբն Մուսաիդը խելագարվել է: Սակայն մի քանի ամսից հետո իբր թե բժիշկները նրան ճանաչեցին հոգեպես նորմալ, և աստվածաբանական դատարանը նրան դատապարտեց մահվան:

Հունիսի 18-ին աղոթքից հետո բազմահազարանոց ժողովրդի աչքի առաջ դահիճը գլխատեց Ֆեյսալ Իբն Մուսաիդին:

Ով էր Իբն Մուսաիդին իր ձեռքին գործիք դարձրել, մնաց անհայտ: Ենթադրություններ էին արվում, որ գործին խառնված է ԿՀՎ-ն, որը դժգոհ էր ծեր թագավորի անհնազանդությունից և վրեժ էր լուծում 1973 թվականին մտցված նավթի էմբարգոյի համար: Չէր բացառվում նաև վրեժխնդրության մոտիվը. երիտասարդ արքայազնի եղբայրը զոհվել էր 1966 թվականին մի խումբ ֆանատիկոսների հետ ռադիոկայանը բռնագրավելու փորձ կատարելիս, որը, նրանց կարծիքով, ծրագրել էր իսլամի հետ չհամատեղվող հաղորդում: Համենայն դեպս, Ֆեյսալը բնավ էլ առաջինը չէր Սաուդիների դինաստիայից, որ ընկնում էր մարդասպանի ձեռքով:

Ֆեյսալից հետո միապետ դարձած և 1982 թվականի հունիսի 13-ին վախճանված Խալեդը մոր կողմից կապված էր Ջիլյուվի հզոր ճյուղին, Արևելյան նահանգների կիսանկախ ժառանգական կառավարիչներին:

Ներկայիս Ֆահդ թագավորը ղեկավարում է այսպես կոչված «Սուդայրիի յոթնյակը»: Նրա հետ միասին «յոթնյակի» մեջ մտնում են յոթ հարազատ եղբայրներ՝ Աբդ ալ-Ազիզի որդիները Սուդայրիի հզոր ֆեոդալական նեջդիական տոհմից սերվող

կնոջից: Սերտորեն միմյանց հետ կապված՝ նրանք ստեղծել են ազդեցիկ խմբավորում: Աբդ ալ-Ազիզի 12-րդ որդին՝ Սուլթանը, պաշտպանության և ավիացիայի մինիստրն էր. Թուրքին՝ 20-րդ որդին, նրա տեղակալը. Նայիֆը՝ 23-րդ որդին, ներքին գործերի մինիստրը. Սալմանը՝ 26-րդ որդին, էր-Ռիյադի նահանգի նահանգապետը. Ահմադը՝ 28-րդ որդին, Մեքքայի նահանգապետի տեղակալը. Սաթամը՝ 29-րդ որդին, էր-Ռիյադի նահանգապետի տեղակալը: Աբդալ-Ազիզը մի քանի անգամ ամուսնացել է Սուդայրիի կանանց հետ և բացի այդ յոթնյակից նա վեց տղա ևս ուներ այդ տոհմի մյուս կանանցից:

Ներկայումս թագավորության երկրորդ դեմքը՝ Աբդալլահ էմիրը, հարազատ եղբայրներ չունի, բայց նրա մայրը սերում է շամարների հզոր հյուսիսային ցեղից: Պրեմիեր մինիստրի տեղակալի պաշտոնից բացի, նա շարունակում է ղեկավարել ազգային գվարդիան, որը կոչված է պահպանելու վարչակարգը ռազմական հեղաշրջում կատարելու փորձերից:

Աբդ ալ-Ազիզի թոռները հատուկ խումբ են կազմում, որոնք կշիռ են ձեռք բերել շնորհիվ ստացած կրթության: Սրանք այսպես կոչված «թագավորական տեխնոկրատներն» են: Նրանցից առանձնանում են Ֆեյսալ թագավորի որդիները, որոնք համալրում են իշխանության կազմը: Նրա որդին՝ Սաուդ ալ-Ֆեյսալը որ կրթություն էր ստացել Պրինստոնում, դարձավ արտաքին գործերի մինիստր, մյուս որդին՝ Խալեդը, Ասիրի հարավարևմտյան մարզի նահանգապետը, Մուհամեդը ղեկավարում է իռիգացիայի դեպարտամենտը, Աբդուռահմանը հակատանկային բրիգադի հրամանատար է, Թուրքին՝ ներքին հետախուզության դեպարտամենտի դիրեկտորի տեղակալ:

Սաուդիները ազգակցական կապի մեջ էին Սալ-ադ-Շեյխ աստվածաբանական տոհմի, վահաբիզմի հիմնադրի սերունդների, Սուդայրիի ֆեոդալական ընտանիքի և Արաբիայի «ամենազորություն» ֆեոդալատոհմային արիստոկրատիայի հետ:

Թագավորական կորպորացիայի ներսում կարող է պայքար գնալ, սակայն այն չպետք է հասարակական քննարկման առարկա դառնա: Կրոնական, վարչական և դատական իշխանությունները գործնականում թագավորական տոհմի անդամներին վերաբերվում են որպես օրենքից վեր կանգնած անձանց:

Արքայորդիներից շատերը զբաղված են մեծ բիզնեսով: Նրանք հարստանում են հողի սպեկուլյացիայով և միջնորդա-

դրամ են վաստակում կառավարական պատվերներից ու պայմանագրերից։ Արքայազների համար օրինական բան է համարվում որպես գործընկեր մասնակցել առևտրական և արդյունաբերական ընկերություններին և միլիարդավոր դոլար գումարի դրամ ստանալ արտասահմանյան գործարքներից։

80-ական թվականների սկզբին Սաուդիների տոհմը աշխարհի ամենահարուստ «ընտանիքը» դարձավ։ Նա փաստորեն վերահսկում էր երկրի տարեկան մինչև 100—120 միլիարդ դոլարի հասնող ազգային եկամուտը, և նա էլ հենց սաուդյան կապիտալների հոսքը ուղղում էր դեպի արտասահման։

Նավթային պետությունների կառավարողների հիմնական հոգսը, բնականաբար, Արաբական թերակղզու անկայուն ավազուտներում անվտանգությունը, կայունությունը պահպանելն էր։ Նրանք տեղական մասշտաբով մեծաթիվ բանակ ունեին և անվտանգության ուժեր, որոնց հավաքել էին բեդվիններից, նախկին սորուկներից կամ ուղղակի վարձկաններից, գաղտնի ոստիկանության և լրտեսական ցանց։ Սակայն բնավ միայն մերկ ուժի վրա չէր հիմնված նրանց վարչակարգի ամրությունը։ Նավթի միապետները փնտրում են հաստատուն հասարակական հենարան և այդ նպատակով իրենց հայացքները ուղղում են ցեղակիցներին։ Հիմնական բնակիչները ապահովվում են «տաք տեղերով» պետական, վարչական ապարատում և առևտրի ցանցում, անվճար դպրոցներով և հիվանդանոցներով, սոցիալական այլ բարիքներով, էժան բնակարաններով։ Հենց նրանցից էլ կազմավորվում էին զինված ուժերը։

Արաբական բոլոր պետություններում դրությունը միատեսակ չէր։ Տարբերություններ կային նավթային եկամուտների մակարդակի, ավանդույթների, բնակչության թվի, նրա կրթվածության, ֆեոդալիզմի զարգացման աստիճանի հարցում։

Բահրեյնում 1972 թվականի դեկտեմբերին սկսվեցին առաջին ընտրությունները և ստեղծվեց ժամանակավոր սահմանադիր ժողով։ Այնուհետև 1973 թվականի դեկտեմբերին տեղի ունեցան Ազգային ժողովի ընտրությունները, և առաջադեմ հայացքների տեր մի քանի մարդ դարձան տեղական օրենսդրական մարմնի անդամ։ «Բահրեյնի պառլամենտը, իհարկե, չի համարվում բառիս իսկական իմաստով պառլամենտական դեմոկրատիայի օրինակ,— գրում էր «Ֆայնենշըլ թայմսը», որին դժվար է կասկածել տվյալ հարցի անգիտության մեջ։— Իսա իբն

Սալման ալ-Խալիֆա կառավարիչը մնում է որպես բարձրագույն իշխանություն և դեկավարում է։ Կարևոր պաշտոնները նրա ընտանիքի անդամների ձեռքումն են»։ Չնայած այն բանին, որ շեյխը իր ձեռքում պահեց ազդեցիկ իշխանությունը և վետոյի իրավունք ուներ ցանկացած օրենսդրության վերաբերմամբ, Ազգային ժողովը կարող էր միջամտել որոշումների ընդունման պրոցեսին։ Այդ պատճառով էլ այն վերածվեց քաղաքական ակտիվության առանցքակետի, մի ամբիոնի, որտեղից ժամանակ առ ժամանակ հնչում են քննադատությունը ունևորների իշխանության հասցեին։ Էմիրի ընտանիքը չէր ցանկանում հաշտվել դրա հետ, և 1975 թվականին Բահրեյնի «պառլամենտը» ցրվեց, իսկ նրա ձախ դեպուտատները ձերբակալվեցին։

Քուվեյթում իշխանության հարմարվելը նոր նավթային եկամուտներին՝ դա պատմությունն է այն բանի, թե ինչպես էր ձևավորվում ֆեոդալատոհմային միապետությունը, ինչպես էին ստեղծվում ավելի ժամանակակից պետականության ինչ-որ ձևեր։ Չէ որ Արաբիայում «պետական ծառայող» հասկացությունն ինքնին խորթ էր տեղական ավանդույթներին և սոցիալ-քաղաքական կառուցվածքին։ Սակայն սերունդը դեռ չէր փոխվել, իսկ Քուվեյթը արդեն ձեռք բերեց ժամանակակից պետության արտաքին հատկանիշներ և նույնիսկ պառլամենտ։ Ընտրությունները մատչելի դարձան գրագետ բոլոր քաղաքացիների՝ 21 տարեկանից մեծ տղամարդկանց համար։ Դա նշանակում էր, որ ընտրություններին մասնակցում էր բնակչության միայն 10 տոկոսը։ Օպոզիցիան բողոքում էր, որ օկրուգում, որտեղ նա հնարավորություն ուներ ստանալու ձայների մեծամասնություն, անապատից բերել էին քոչվորներին, և նրանք քվեարկեցին իշխող տոհմի թեկնածուների օգտին։

«Իշխանությունը երկրում մնում է շեյխի գլխավորությամբ կազմավորված կառավարող ընտանիքի օլիգարխիայի ձեռքում,— գրեց անգլիացի ժուռնալիստ Ստեֆանդը «Արաբների նոր բնագիծը» գրքում։ Այնտեղ կազմը համալրել են վաճառականության մի քանի ներկայացուցիչներ։ Սակայն այդ իշխանությունը ասամբլեայում որոշ չափով սահմանափակված է ու հաշվեկշռված օպոզիցիայի կողմից և կրթված դասի ու մամուլի աճով, որը ավելի ազատ է, քան արաբական ուրիշ շատ պետություններում»։ Թողնենք հեղինակի խղճին «կրթված դաս» արտահայտությունը։ Սակայն փաստը մնում է փաստ, որ կըր-

թության տարածումը և քաղաքական գիտակցության բարձրացման մակարդակը Քուվեյթի ղեկավարներին ստիպում են ավելի ճկունորեն անցկացնել իրենց քաղաքականությունը, հաշվի առնելով հնարավոր օպոզիցիան։

Պարսից ծոցի մյուս իշխանապետությունները, բացի Բահրեյնից, առայժմ գերադասում են ընտրական մարմիններին փորձարկման չենթարկել։

Սուլթան Մասկաթ Սաիդ իբն Թեյմուրի ֆեոդալական բռնապետությունը նույնիսկ արաբական պատկերացումներից դուրս էր։ Նրա սևեռուն գաղափարը դարձավ պայքարը ամեն տեսակ հասարակական առաջընթացի դեմ, կատաղի դիմադրությունը փոփոխությունների նկատմամբ «Սուլթանը ցանկանում էր թույլ չտալ, որպեսզի XX դարը վարակի XV դարին, որի մեջ փակել էր իր ժողովրդին»,— ասել է անգլիացի չինովնիկներից մեկը ֆրանսիական «Մոնդ» թերթի թղթակցին։ Սուլթանը արգելել էր թերթերը, ռադիոն, կինոն, ֆուտբոլը, ավտոմեքենաների և մանկական խաղալիքների ներմուծումը։ Նրա տիրույթներում արաբներին չէր կարելի չհագնել ավանդական հագուստը, կրել հովանոց, մոդայիկ սանրվածք։ Լուսավորության «կործանիչ հեռևանքներից» խուսափելու համար նա դպրոցների քանակը հասցրեց երեքի, իսկ սովորողների թիվը՝ հազարի։ Եվ ի՞նչ։ Երկրում սկսվեց ապստամբություն, որը ղեկավարում էր Ազգային ճակատը, և վարչակարգը կանգնեց կործանման եզրին։

Անգլիացիները կեղծ պետական հեղաշրջում կազմակերպեցին և սուլթանին երկրից վտարեցին։ Գահին նստեցրին նրա որդի Քաբուսին, որը Սանդհերստ արտոնյալ զինվորական քոլեջի շրջանավարտ էր, ժամանակակից աշխարհի պահանջներին լավատեղյակ։ «Լիբերալ միապետն իր հոր առավել տհաճ արգելքները վերացրեց, սկսեց կառուցել դպրոցներ և հոսպիտալներ, որպեսզի թուլացնի սուլթանության հարավարևմտյան նահանգների ապստամբական շարժումները։ Այնուամենայնիվ Քաբուսը երկար չմնաց լիբերալի իր դերում, բացեիբաց հայտարարելով, որ ինքը Հիտլերի երկրպագուն է։ (Հայտնի է, որ նա շատ բարձր գներով ձեռք բերեց ֆյուրերից մնացած անձնական իրերը։) Անգլիան Օմանում պահպանեց ոչ միայն իր զորքերը, այլև կառավարություն կազմելու անմիջական ազդեցության և որոշումներ ընդունելու լծակները։ Հիմնականում վարձ-

կաններից բաղկացած բանակը մնում էր անգլիական սպաների հրամանատարության ներքո։

Սաուդյան հասարակության մեջ տիրապետող ավանդական ուժը մնում է իսլամը։ Այն թափանցում է սոցիալ-քաղաքական կառուցվածքի մեջ, որը կազմվել է նրա կանոններով, իրավունքի, կենցաղի, սոցիալական հոգեբանության սիստեմով։ Կրոնական քարոզը պաշտոնական պրոպագանդայի հիմնական տարրն է։ Հեռուստատեսությամբ օրական չորս անգամ ցուցադրվում են Մեքքայի միևնույն վիթխարի տեսարանները ուխտագնացության շրջանում, որոնք ուղեկցվում են Ղուրանի ընթերցանությամբ։ Վառ կարմիր տառերով գրված սուրբ գրքի ոտանավորները ակոսում են էկրանը։

Իսլամը Սաուդյան Արաբիայի հասարակական կյանքի վրա ավելի ինտենսիվ և մշտական ներգործություն թողեց, քան մուսուլմանական աշխարհի որևէ ուրիշ երկրում, քանի որ կրոնը հատկապես ծագել էր այստեղից և մեկուսացված էր մնում մրցակցող գաղափարախոսական ու կուլտուրական ներգործությունից։ Սաուդյան Արաբիան երբեք իր վրա այնպես չի զգացել օտարերկրյա կուլտուրայի ազդեցությունը, ինչպես Մաղրիբը և Լիբանանը՝ ֆրանսիական, Եգիպտոսը՝ ֆրանսիական և անգլիական, նույնիսկ Պարսից ծոցի իշխանապետությունը կամ Հարավային Եմենը՝ անգլիական։ Միայն 60-ական թվականների վերջին և 70-ական թվականների սկզբին ամերիկյան տիպի սպառողական արժեքների մասսայական ներթափանցումը և ԱՄՆ-ում մի քանի հազար սաուդացիների ուսումնառությունը նշանակում էին, որ սաուդյան հասարակությունը ենթարկվում է ամերիկյան ազդեցությանը, բայց այն մնաց սահմանափակված։

Այն հարցը, իսլամը միջին դարերում կապիտալիստական հարաբերությունների ծագման և զարգացման համար ինքնին խոչընդոտ համարվել է թե ոչ, համաշխարհային գիտության համար մնում է չբացահայտված։ Սակայն Սաուդյան Արաբիայում իսլամը վահաբիզմի ձևով զուգորդվում է և՛ ավանդական հասարակական ինստիտուտներին (ինչպիսին, օրինակ, պետական գանձարանի ծախսերի բաշխման հնացած սիստեմն է), և՛ իշխանության հնաոճ սիստեմին հանձինս Սաուդիդների տոհմի ու նրանց հարող խմբավորումների, և՛ իր դարն ապրած իրավունքի սիստեմին, և՛ ավանդական կրթությանը՝ իր աստվածաբա-

նական առարկաներով, և՛ միջնադարյան մտածողությանը, ֆատալիզմին, Ալլահի կողմից կանխորոշված ճակատագրին հա-մակերպվելուն։

Ինչպես և առաջներում, սաուդյան թագավորական ընտանիքը կենտրոնական իշխանությունն ամրապնդելու համար փաս-տարկներ է քաղում մուսուլմանական ավանդություններից, հատ-կապես XIV դարի սիրիացի աստվածաբան, դաժան օրթոդոքսի կողմնակից Իբն Թահմիյիի ուսմունքից։ Տարիմաստ իրադրու-թյո՞ւն։ Սակայն այդպիսին են այսօրվա Սաուդյան Արաբիայի ռեալները, նրա հասարակության զարգացման մակարդակը։ Այդ միջնադարյան աստվածաբանի կարծիքով իդեալական հասարա-կությունը պետք է բաժանված լինի հեղինակություն վայելող անձանց երկու խմբի՝ ուլեմների՝ շարիաթի օրենքի պահա-պանների, և էմիրների, որոնք օժտված են օրենքները կենսա-գործելու համար անհրաժեշտ քաղաքական իշխանությամբ։ Սա-կայն էմիրների պարտականությունն էր ուլեմների, ինչպես նաև մյուս սոցիալական խմբավորումների հետ խորհրդակցել։ Էմիր-ների հպատակները պետք է բացարձակապես և անվերապահորեն ենթարկվեին նրանց։ Էմիրը պատասխանատու է կրոնական պար-տականությունների ճիշտ կատարման համար, որ ընկնում է բոլոր մուսուլմանների վրա, իրականացնում է դատավճիռները, բարիքների բաշխումը ամբողջ համայնքի միջև, հետևում է հասարակական ծառայության աշխատանքին։ Էմիրները իրենց վարքագծով կապված են Ղուրանին և սուննիներին այն չափով, թե դրանք ինչպես են մեկնաբանվում ու մատուցվում ուլեմ-աստվածաբանների կողմից։ Դա ուլեմներին տալիս է, թեև սահ-մանափակ, մեծ ազդեցության և հսկողության լծակներ։

Ուլեմները թագավորության հիմնադիր Իբն Սաուդին օգնեցին ամրապնդել կենտրոնացումը և կրոնական հեղինակությամբ ու քարոզներով հզորացնում էին նրա սուրը։ Երբ վերջապես դեռ կես դար առաջ ժամանակը եկավ թեկուզև մասնակիորեն ար-դիականացնելու կենտրոնական ֆեոդալական պետությունը, ուլեմները վճռականորեն դեմ դուրս եկան փոփոխություններին, և այդպիսին են մնում մինչև օրս։ 1930 թվականի հունվարին Մեքքայում հավաքված աստվածաբանները բողոքեցին այն ժամանակ կրթության դիրեկտորատի կողմից ստեղծված ծրագրի մեջ այնպիսի առարկաներ մտցնելու դեմ, ինչպիսիք էին աշխար-հագրությունը, օտար լեզուները և գծագրությունը։ Նրանք ապա-

ցուցում էին, որ գծագրությունը դա նույնն է, ինչ որ կրոնի կողմից արգելված նկարչությունը, լեզուները՝ անհավատների կրոնական կարծիքը իմանալու միջոց, աշխարհագրությունը զայրացնում էր նրանց, որովհետև ապացուցում էր, որ Երկիրը կլոր է։

Սաուդյան Արաբիայում ուլեմների ազդեցությունը որոշ չափով պակասեց «նավթային դարաշրջանի» երեք-չորս տաս-նամյակների ընթացքում կրթության տարածման շնորհիվ, ժա-մանակակից արդյունաբերության ճյուղերի տնտեսական և վար-չական գործունեության նոր տեսակների ի հայտ գալով, հա-ճախակի արտասահման մեկնող սաուդացիների թվի աճով, օտարերկրացիների ժամանման, տրանզիստորային ռադիոընդու-նիչների օգտագործման շնորհիվ։ Սակայն կրոնական օրթոդոքս-ների պահապանների և շարիաթի գիտակների, Սաուդիդների տոհմի հետ կապված կրոնական վերնախավի գլխավոր դիրքերը մնացին անձեռնմխելի։

Սաուդ թագավորի տապալումը և 1964 թվականին Ֆեյսալին թագավոր հռչակելը սկզբում հավանության արժանացավ առավել բարձր հեղինակություն վայելող 12 ուլեմների ստորագրած ֆետ-վայով։

Որպես իմամ, սաուդյան մուսուլմանների ղեկավար՝ թագա-վորը միշտ ընդգծում էր իր հավատարմությունը կրոնին, որը ենթադրում էր խորհրդակցել ուլեմների հետ և ընդունել նրանց բարձր հեղինակությունը։ Ուլեմներն իրենց ձեռքում էին պահում հասարակության վրա ներգործելու ուժեղ զենքը՝ առաքինությունը խրախուսելու և հանցանքը դատապարտելու կոմիտեները (Հա-սարակական բարոյականության լիգա)։ Ստեղծվելով 20-ական թվականներին, այդ կոմիտեները առաջվա նման հասարակու-թյանը թելադրում էին բարոյականության, կենցաղի, վարքի նորմեր, հետևում էին կանանց պարտադիր խտրականությանը, արգելում ծխելը, ոգելից խմիչքները և պարերը։ 60-ական թվա-կաններին Սաուդյան Արաբիայում հայտնվեցին երաժշտական նվագարկիչներ, սկսեցին ծխախոտ վաճառել, կազմակերպվում էին մասնավոր կինոդիտումներ, կանայք հայտնվեցին ռադիո-յում, թերթերը և ամսագրերը սկսեցին հարուստ նկարազարդվել։ Սակայն ավելին աստվածաբանները թույլ չտվեցին։

Դեռևս 1962 թվականին Ֆեյսալը հայտարարեց, որ ինքը մտադիր է սահմանափակել Հասարակական բարոյականության

լիգայի ֆունկցիաները, որովհետև խանգարում է իրեն՝ «արդիականացնելու հասարակությունը» կանանց ազատագրման հարցում, ներդնելու ռադիո, հեռուստացույց և որոշ զվարճություններ: Սակայն նրա «արդիականացումը» սահմանափակվեց այն ժամանակ միայն ռադիոյում հաղորդավարուհու հայտնվելով: 1979 թվականի Մեքքայի ապստամբությունից հետո ուլեմները հասարակության վրա խստացրին հսկողությունը:

XX դարում մուսուլմանական երկրների մեծ մասում հաստատվեցին նոր առևտրական, քրեական և նույնիսկ քաղաքացիական օրենսգրքեր: Անձնական ստատուսը (ամուսնություն, բաժանություն, ժառանգություն) ամենուրեք, բացառությամբ Թուրքիայի և Թունիսի, գտնվում էր շարիաթի ձեռքում, բայց նա նույնպես ձևափոխված էր: Սաուդյան Արաբիան միակ երկիրն է, որտեղ շարիաթը պահպանվել է իր «սկզբնական մաքրությամբ»:

Ուլեմների դաժանությունը դրսևորվեց թագավորական տան արքայադստեր՝ Մուհամեդ թագավորի ավագ եղբոր թոռան ողբերգական ճակատագրում: Ամուսնուն դավաճանելու համար նրան դատապարտեցին մահվան և հրապարակորեն քարկոծեցին, իսկ նրա սիրեցյալին գլխատեցին: Այդ սյուժեով նկարահանված «Արքայադստեր մահը» անգլիական ֆիլմը դիվանագիտական ճգնաժամ առաջացրեց Լոնդոնի և Էր-Ռիյադի միջև:

Սաուդյան Արաբիայի ֆեոդալական կենտրոնացված պետությանը համապատասխան դատական և իրավունքի համակարգը պատրաստ չէր իր ֆունկցիաները կատարել արաբական հասարակության զարգացման շնորհիվ ստեղծված նոր սոցիալ-տնտեսական պայմաններում: Սաուդյան իրավագետները փորձում էին XX դարի պրոբլեմների լուծումը փնտրել մեր դարաշրջանի VII, VIII և IX դարերի ավանդույթների մեջ, որը անխուսափելիորեն նրանց կանգնեցրեց փակուղու առջև: Մեկ օրինակը կարող է ցույց տալ միջնադարյան իրավունքի կիրառման դժվարությունը XX դարի իրադրության համար: Ղուրանը արգելում է շահույթը, արգելում է տոկոսներ վերցնելը, սակայն ժամանակակից կապիտալիստական էկոնոմիկան չի կարող գործել առանց դրամական շուկայի, որին ղեկավարում է շահույթի մեխանիզմը: Սաուդյան Արաբիայի վալյուտային գործակալության կանոնադրությունը (փաստորեն կենտրոնական և էմիսիոն բանկի) պարզորոշ արգելում է տոկոսներ վերցնելը: Օրենսդրության մեջ առևտրական բանկերի հետ կապված տոկոսների հարցը ուղղակի անտեսվում

է: Կրոնական դոգման շրջանցելու համար հնարվեց այսպիսի ձևակերպում՝ «անդամավճար» սպասարկման համար, որը ծառայում է որպես ուղղակի էվֆեմիզմ՝ շահույթ-տոկոսի համար:

Սաուդյան ուլեմները, այնուամենայնիվ, շարիաթի մեջ սողանցք գտան էկոնոմիկայի և հասարակության գործունեության համար անհրաժեշտ նոր իրավական նորմերը խրախուսելու: Վաղ իսլամի իրավագետների դասակարգմանը համապատասխան մարդկային բոլոր գործողությունները բաժանվում են հինգ կատեգորիայի. այն գործողությունները, որոնք Ալլահը պարզ պահանջում էր, առաջարկում, անտարբեր էին (իրավաբանորեն)՝ դատապարտում էր կամ արգելում: Այսպիսով, պետության համար մնում էր օրենսդրության մի բնագավառ՝ այն, որտեղ Ալլահը անտարբեր էր, անհետաքրքրական: Սաուդյան Արաբիայում, օգտագործելով այդ սողանցքը, դեռևս 20-ական թվականներին մտցվեցին կյանքի զանազան կողմերն ընդգրկող մի քանի հարյուր «դրույթներ», կամ թագավորական դեկրետներ՝ աշխատանքային օրենսգրքից մինչև փողոցային երթևեկության կանոնները:

Նոր բուրգեր

Արաբիայի կառավարող դասի թեկուզև առավել հեռատես մասը հասկանո՞ւմ է արդյոք իր դրությունը: Հանձն եմ առնում պնդելու, թեև ոչ վճռականորեն, որ այո, հասկանում է: Մի քանի տարի առաջ Քուվեյթում լուր տարածվեց, թե «Քուվեյթ օյլ» նավթային ընկերությունը չափազանցում է հեղուկ վառելիքի պաշարներին վերաբերող տվյալները, որ իբր թե նրա հանույթի արագ աճի դեպքում նավթահորերը տասնհինգ տարի հետո կցամաքեն: Սկսվեց խուճապը: «Քուվեյթ օյլ կոմպանին» հանգստացնող հայտարարություն արեց, բայց հոգու խորքում քչերն էին դրան հավատում: Շատերն էին մտածում իրենց երկրի ապագայի, նաև իրենց սեփական ապագայի մասին:

Տեղական թատրոններից մեկում այն ժամանակ դիտեցի մի սիրողական ներկայացում՝ «Քուվեյթը 2000 թվականին», որտեղ ցույց էր տրված առանց նավթի մնացած երկիրը. նավթահորերը ցամաքել էին, ոսկու հոսքը սպառվել, անհետացել էր շիկացած անապատում մեծ քաղաքի գոյության հնարավորությունը: Քարուքանդ էին լինում շենքերը, ավտոճանապարհները, ջարդվում էին ավտոմեքենաները, դադարում էին աշխատել ջրե-

րը աղազրկող կայանները, շարքից դուրս էին գալիս հեռուպատ-
ցույցները, կոնդիցիոներները, քանի որ մասնագետ ներգաղթող-
ներին ոչինչ չունեին վճարելու, և նրանք հեռանում էին... Ամեն
ինչ ժանգոտվում էր, անկում ապրում, կործանվում։ Եվ այդ
ժամանակ քուվեյթական «պատրիկները» վերադառնում էին
իրենց նախահայրերի զբաղմունքին՝ ուղտ, ոչխար և այծ պահել,
ձուկ որսալ, մարգարիտի արդյունագործությամբ զբաղվել։

Որպեսզի ինքն իր վրա այդպես դառնորեն ծիծաղի, հա-
սարակության մի մասը դրա համար պետք է հասունանար, թեև
ներկայացումը բեմադրել էին ոչ թե քուվեյթցիները, այլ ներ-
գաղթողները։ Ռեալիստորեն մտածող արաբները և արաբացի-
ները հասկանում էին, որ նրանց կյանքի բարեկեցությունը նավ-
թի հատկացումների ոսկու հեղեղի տակ վաղ թե ուշ կարող է դա-
դարել։ Այն ժամանակ կսկսվեն բեկումները, հասարակական
համաղետները։ Սակայն այդ երկրները կարող են փրկվել, եթե
նրանք ունենան նաև սեփական կադրեր, և նավթից անկախ էկո-
նոմիկա։

Ընդհուպ մինչև մեր դարի 60-ական թվականները Արաբիա-
յում «ազգային արտադրությունը» սահմանափակվում էր առա-
ջին անհրաժեշտության ավանդական առարկաներով և ներկա-
յացվում էր տնայնագործ արհեստավորներով ու տնային ար-
հեստներով։ Պրոֆեսիոնալ արհեստավորները, ինչպես նախկի-
նում, սպասարկում էին հողագործների համայքներին օազիս-
ներում, որտեղ նրանք ապրում էին, կամ բեդվինների հետ թա-
փառում էին։

Առավել ընդլայնված շուկաների հետ կապված էին Հիջազի
խոշոր առևտրական կենտրոնների արհեստավորները, որտեղ
նրանք կողմնորոշվում էին դեպի ուխտագնացները, սեզոնային
տոնավաճառների հետ կապված Նեջդայի ու Արևելյան նահանգ-
ների, ինչպես նաև Պարսից ծոցի ափին գտնվող փոքր քաղաք-
ների արհեստավորները։

Արաբիայի ավանդական էկոնոմիկան իր արտադրողական ուժե-
րի զարգացման նախնադարյան մակարդակով, աղքատությամբ,
համաճարակներով, բնակչության անգրագիտությամբ անկում էր
ապրում դեռ մինչև նավթային ընկերության հայտնվելը։ Ժա-
մանակակից կապիտալիստական ձեռնարկությունների ներխու-
ժումը և մասսայական ներմուծությունը, որ տեղական արհեստ-

ների համար (ինչպես նաև էկոնոմիկայի գյուղատնտեսության
սեկտորի համար) կործանիչ էր, արագացրին այդ պրոցեսը։

Նավթահանքերը, հսկայական կապիտալիստական ձեռնար-
կությունները, որ շրջապատված էին միջնադարյան կամ նախա-
միջնադարյան տնտեսությամբ, անմիջական ազդեցություն թո-
ղեցին արաբական հասարակության վրա, ներդնելով կապիտա-
լիստական կացութաձև։ Նրանք ներգրավում էին վարձու բան-
վորական ուժ, կառուցում էին ժամանակակից ավաններ ու
քաղաքներ, ստեղծում էին օժանդակ ծառայություններ և արհես-
տանոցներ տեղական կապիտալի մասնակցությամբ, կառուցում
էին ճանապարհների ցանց։ Եվ Արաբիայի էկոնոմիկայի, և՛
նրա սոցիալական զարգացման համար առաջընթաց նշանակող
այս բոլոր փոփոխությունները թելադրված էին ամենևին էլ ոչ
ամերիկյան կամ անգլիական մոնոպոլիաների ինչ-որ մարդա-
սիրական նպատակներով, այլ ԱՐԱՄԿՈ-ի նորմալ գործունեու-
թյան համար տարրական տնտեսական, տեխնոլոգիական և այլ
պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ։ «Կապիտալի ար-
տահանումն այն երկրներում, ուր նա ուղղվում է, ազդեցություն
է գործում կապիտալիզմի զարգացման վրա, չափից դուրս
արագացնելով այն*»,— գրում էր Վ. Ի. Լենինը։

Տեղական կապիտալի օգնությամբ Պարսից ծոցի ափին սկսե-
ցին հայտնվել նավթային ընկերություններին ծառայող ար-
դյունաբերության և շինարարության երկրորդական ճյուղեր
Որոշ կապալառուներ բացեցին իրենց շինարարական գրասենյակ-
ները, ստեղծեցին տրանսպորտային ֆիրմաներ, ունենալով
տասնյակ ավտոմեքենաներ, ավտոնորոգման արհեստանոցներ։
Հենց այստեղ էլ հայտնվեցին շինարարական նյութերի, շշերի,
թթվածնի, սառույցի, զովացուցիչ ըմպելիքների արտադրության
փոքր գործարաններ, էլեկտրակայաններ, կահույքի արհեստա-
նոցներ։ Աճեց առևտրական ֆիրմաների, տարբեր տեսակի խա-
նութների և կրպակների թիվը։

Սակայն 60-ական թվականների սկզբին արաբական նավ-
թային միապետություններում գործնականում գոյություն չուներ
ազգային արդյունաբերություն։ Եթե չհաշվենք նավթաթորման
գործարանները, որ պատկանում էին օտարերկրյա կապիտա-

* Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժող., հ. 27, էջ 440։

վին, Սաուդյան Արաբիայում, օրինակ, չկար ոչ մի ձեռնարկություն, որ ունենար հարյուրից ավելի բանվոր:

Արաբիայի նավթային միապետությունների ղեկավար դասերը, որոնք շահագրգռված էին անձնական հարստությամբ, աճող ագահությամբ սպառելով և «մսխելով» նավթի եկամուտները, 40-ական թվականներին և 50-ական թվականների սկզբին ուղղակի չէին հետաքրքրվում ազգային արդյունաբերության և արհեստների ճակատագրով: Նրանց առավել հեռատես և լուսավորված ներկայացուցիչների մոտ միայն աստիճանաբար հասունացավ էկոնոմիկայի մեջ պետական միջամտության վերաբերյալ միտքը թեկուզև նրա օրենսդրական կարգավորման և խրախուսման նպատակով: Այդ գաղափարները ծագում էին ինչպես առաջադեմ արաբական երկրներում տեղի ունեցող պրոցեսների ներգործությամբ, այնպես էլ երկրի ներսում ազգային-դեմոկրատական ուժերի կողմից վարչակարգի քննադատության հետևանքով:

Սկսած 60-ական թվականներից պատմության մեջ առաջին անգամ այստեղ կուտակման ընդհանուր ազգային ֆոնդի արագ մեծացման համար առաջացավ ամուր, մշտապես ընդարձակվող բազա: Ֆեոդալական և կիսաֆեոդալական կացութաձևեր ունեցող երկրների համար, որոնք իրենք չեն կարող կուտակման բազա ծառայել, այդ փաստը համեմատաբար հազվագյուտ է: Պետության ձեռքում հսկայական ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը, ոչ միայն բուրժուազիայի ամրապնդվող դասի շահերը պաշտպանելու, այլև նրա համար ճանապարհ բացելու, անհրաժեշտությունը ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելը՝ այս բոլորը բացատրվում է 60-ական թվականների կեսերին նոր պետական-կապիտալիստական կացութաձևի ի հայտ գալով: Թեև 60-ական թվականներին ևս ազգային ձեռնարկությունները հանգում էին դարձյալ զովացուցիչ ըմպելիքների, սառույցի, թղթի, աղյուսի, ցեմենտի, այլ շինարարական նյութերի, կահույքի, կենցաղային քիմիկատների, բրոյլերյան ճաների արտադրությանը:

Պետությունն սկսեց զգալի միջոցներ տրամադրել քաղաքային շինարարության, բարեկարգման, էլեկտրիֆիկացիայի, կոմունալ ծառայության, ինֆրակառուցվածքի զարգացման համար: Դա ստեղծեց էլեկտրաէներգիայի և շինարարական նյութերի աճող պահանջարկ:

Սակայն Սաուդյան Արաբիայի և իշխանապետությունների

արդյունաբերական բուրժուազիան 80-ական թվականների սկզբին ևս մնում էր սաղմնային վիճակում և չուներ ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական կշիռ: Արդյունաբերական գործունեությունը չափազանց ցածր շահույթ էր տալիս և հանդես եկավ զուգորդված չափազանց մեծ ռիսկի հետ, որպեսզի ներգրավի նրանց, ովքեր կապիտալ ունեին: Նրանք գերադասում էին կապիտալը տեղափոխել արտասահման, դրամը ներդնել ներմուծվող առևտրի մեջ, հողի սպեկուլյացիայում, տնաշինության մեջ, լավագույն դեպքում՝ կապալային և շինարարական ֆիրմաներում:

Իշխանությունները կանգնեցին արդյունաբերական զարգացման խնդիրն իրենց վրա վերցնելու անհրաժեշտության առջև: Իր դասակարգային էությամբ ֆեոդալական պետությունը ստիպված է ձեռնարկել էկոնոմիկայի պետական-կապիտալիստական սեկտորի, մասնավորապես արդյունաբերության կապիտալիստական ճյուղի ստեղծմանը: Այդ նպատակով հիմնադրվեցին պետական ընկերություններ, ձեռնարկություններ, ֆիրմաներ, սկրսվեց ճանապարհների, օդանավակայանների, հեռուստակոմունիկացիաների ինտենսիվ շինարարություն:

Երբ արդեն 1973 թվականից հետո արաբական միապետությունների վրա թափվեց դրամի հեղեղը, դրանք մասամբ ներդրվեցին զարգացման նախագծերում, որոնք թղթի վրա այնքան վիթխարի էին երևում, որ, հավանորեն, կիսաֆեոդալական հասարակությունը, կատապուլտով պետք է նետեին XXI դար:

Սաուդյան Արաբիայի առաջին հնգամյա պլանի համար 1970 թվականին առանձնացվել էր 16 միլիարդ դոլար, երկրորդին՝ 140 միլիարդ դոլար, երրորդին, որ սկսվել է 1980 թվականին՝ 236 միլիարդ դոլար:

Ո՞ւր և ինչպե՞ս են գնում այդ դրամները:

Միջոցների վատնում և անհարկի դիգանտիզմ՝ ահա զարգացման սաուդյան շատ նախագծերի բնորոշ գիծը: Այսպես, օրինակ, Ջիդդայի նոր օդանավակայանը իր մակերեսով մեկուկես անգամ ավելի մեծ է, քան Նյու Յորքի (Քենեդու և Լա Գարդիայի անվան), Չիկագոյի և Լոս Անջելեսի օդանավակայանները միասին վերցրած: Այդ օդանավակայանի բոլոր շենքերում օդը կոնդիցիոնացված է, հատակները և պատերը երեսապատված են իտալական սպիտակ մարմարով, ամենուրեք՝ ուլտրաժամա-

նակակից սարքավորում է, իսկ շրջապատում մզկիթներ, ավազաններ, ավտոկանգառներ, հյուրանոցներ, հանրախանութներ, ռեստորաններ, բանկեր և, վերջապես, աղազատ: Ամերիկյան ճարտարապետների կառուցած այդ ամբողջ համալիրը պետք է զարդարվի արևադարձային երկրներից բերված 72 հազար ծառ և 2,5 միլիոն այլ բուսականություն ունեցող անտառով: Օդանավակայանը նախատեսված է 1985 թվականին 8,5 միլիոն, իսկ 2000 թվականին՝ 10 միլիոն ուղևոր ընդունելու համար: Էր-Ռիյադում կառուցվող օդանավակայանը նախատեսված է 15 միլիոն ուղևորների համար, որը երեք անգամ գերազանցում է թագավորության հիմնական բնակչությանը:

Համաձայն պաշտոնական տերմինաբանության, որը չի տարածվում համեստությամբ, ներկայումս Յանբոյում և Էլ-Ջուբայլում իրականացվում է «մարդկության պատմության մեջ ամենավիթխարի շինարարությունը: Այդ քաղաքներում են կառուցվում հսկայական արդյունաբերական կոմբինատներ, ամենից առաջ մետալուրգիական և նավթաքիմիական, որոնցից մեկը գտնվում է Կարմիր ծովի ափին, մյուսը՝ Պարսից ծոցի ափին: Ասում են, որ այստեղ ավազների մեջ պետք է կառուցվի երկու քաղաք՝ համապատասխանաբար 150 հազար և 350 հազար բնակչությամբ. սակայն առայժմ այդ շինարարությունում զբաղված 30 հազար բանվորների և մասնագետների 95 տոկոսը հավաքված է քառասուն երկրներից: Նախագծային աշխատանքների և ինֆրակառուցվածքի ոչ մեծ մասի շինարարության վրա արդեն ծախսված է 15 միլիարդ դոլար: Նույնքան էլ կծախսվի առաջիկա հինգ տարում: Մետալուրգիական և նավթաքիմիական ձեռնարկությունները, որոնք պետք է կառուցվեն լրացուցիչ բազմամիլիարդ ծախսերի շնորհիվ, արտասահմանյան փորձագետների կարծիքով, զուտ էկոնոմիկական տեսակետից աննպատակահարմար են, որովհետև, հավանական է, նկատի ունենալով համաշխարհային շուկայի գների մակարդակը, շահութաբեր չեն լինի:

Շինարարությանը մասնակցող արևմտյան ֆիրմաները ուռճացնում են իրենց սարքավորումների գները մի քանի անգամ, ապագա ձեռնարկությանը նախապես դատապարտելով վնասաբեր աշխատանքի: Կատարվում է նոր բուրգերի շինարարություն, պատմության մեջ միջոցների չտեսնված շռայլություն, որոնց կողքին 40—50-ական թվականների նավթի միապետների «խա-

ղահեղությունը» թվում է պաղպաղակով և լիմոնադով տղայական «խնջույք»:

Սաուդյան թագավորությունը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի բոլոր երկրներից արևմտյան ապրանքների ամենախոշոր սպառողն է: Նա էլ հենց ապահովում է խոշոր արտասահմանյան ֆիրմաների կողմից շահույթների ամենաբարձր մակարդակը: Սաուդյան պետությունը նրանց առատորեն անտոկոս փոխառություն է հատկացնում (համաձայնեցված նախագծի արժեքի մինչև 50 տոկոսը), հողամասեր, սիմվոլիկ գներով էլեկտրականություն և ջուր, իր վրա է վերցնում մասնագիտական պատրաստության գծով ծախսերը, արտասահմանյան ինվեստորներին ազատում է հարկերից 5 տարվա ընթացքում և թույլ է տալիս ամբողջությամբ հայրենիք փոխադրել շահույթները և կապիտալները:

Տեղն է նաև հարգանքը: Չնայած իր արևմտաեվրոպական և ճապոնական մրցակիցների զգալի հաջողություններին, ԱՄՆ-ը իր ձեռքում է պահում սաուդյան շուկայի առյուծի բաժինը. թագավորության կողմից ներմուծվող ապրանքների 20 տոկոսը կրում է «Պատրաստված է ԱՄՆ-ում» դրոշմը: Եթե վերցնենք ռազմական հատկացումները, որոնք չեն հիշատակվում պաշտոնական վիճակագրության մեջ, ապա այդ տոկոսն ավելի բարձր կլինի: Ամերիկյան ավելի քան 400 ֆիրմաներ, որոնց թվում են արդյունաբերական հիմնական հսկաները, բաժանում են պայմանագրերի առյուծի բաժինը այնպիսի հիմնական սեկտորներում, ինչպիսիք են պաշտպանական, էլեկտրաէներգետիկական, նավթային, գազային, մետալուրգիական, նավթաքիմիական արդյունաբերությունը, հատկապես էլ-Ջուբայլի և Յանբոյի համալիրների համար: Ֆրանսիան, ԳՖՀ-ն, Ճապոնիան, Անգլիան, Իտալիան լավ դիրքեր են գրավում մյուս բնագավառներում:

Սաուդյան Արաբիան արդյոք ունի՞ ինդուստրիալ ապագա: 10 տարի առաջ էր-Ռիյադում հաստատված մի բանկիր համոզված չէ դրանում: Նա գտնում է, որ գործարանների և որակյալ բանվորական ուժի բարձր արժեքը գրեթե ոչնչի է հանգեցնում էներգետիկ առավելությունը: «Բացառությամբ նավթաքիմիայի որոշ ճյուղերի, ես միջոց չեմ տեսնում սաուդյան արտադրանքի գինը մրցակցության ընդունակ դարձնելու,— ասաց նա ֆրանսիական «Մոնդ» թերթի թղթակցին:— Եթե նույնիսկ արտահա-

նության գների հատուկ համակարգ սահմանվի, ապա դա կլինի Դանայան տակառ»:

Իսկ ի՞նչ կլինի ներքին շուկայի համար աշխատող ճյուղերի վիճակը: Այդ շուկայի սահմանափակությունը չի՞ հանգեցնի արդյոք նրա կործանմանը: «Դեմոգրաֆիա» բառի վրա այստեղ արգելք է դրված: 1976 թվականի բնակչության մարդահամարի տվյալները այդպես էլ չհրապարակվեցին: Պաշտոնական տվյալների համաձայն, Սաուդյան Արաբիայում ավելի քան 8 միլիոն բնակիչ կա: Սակայն մի բարձրաստիճան պաշտոնյա, հոգնելով «անօգուտ ստից», հայտնում է մարդահամարի գաղտնի թիվը. «1976 թվականին մենք 3,5 միլիոն էինք»: Այսօր հաղիվ թե 4 միլիոնից ավելի լինեն, եթե ենթադրենք, որ նախկին մարդահամարը չի ընդգրկել բոլոր բնակիչներին:

Փորձագետները գտնում են, որ արևելյան ափին էլ-Ջուբայլում և արևմտյան ափին Յանբոյում ծանր արդյունաբերության պլանով նախատեսված ձեռնարկությունները, որոնց համար առանձնացվում են հսկայական կապիտալ ներդրումներ, շահույթ չպետք է տան:

Արաբական նավթային միապետություններում տնտեսական նախագծերը անարդյունավետ են նաև այն պատճառով, որ նրանց իրականացման համար առանձնացված դրամը յուրացվում է, դուրս է հոսում որպես կաշառք և «վաճառադրամ», վճարվում է հողի տերերին: Կաշառակերությունը, օբյեկտիվ հետազոտողների խոստովանությամբ, ներսից քայքայում է Սաուդյան Արաբիայի ամբողջ հասարակական կառուցվածքը, ինչպես, ասենք, նաև իշխանությունը, վերից վար: Գլխավոր արքայաղնեներից մեկը հողի վաճառքից «վաստակեց» 2 միլիարդ դոլար, որն օգտագործվում է Ջուբայլի արդյունաբերական համալիրի շինարարության համար, մյուսները ստացան 8 միլիարդ դոլար հողի սպեկուլյացիայից, որը օգտագործվեց Էր-Ռիյադի նոր օդանավակայանի համար: Բնական է, որ այդ 10 միլիարդը մտցված է թագավորության «զարգացման» ծախսերի սյունակում: Տնտեսական զարգացման պլանին ծանոթ արքայորդիները էժան գներով գնում են չյուրացված հողամասեր, իսկ այնուհետև ստանում են միլիարդների եկամուտներ՝ «օրինական» ճեղվով դրանք վաճառելով պետությանը:

Չնայած Սաուդյան Արաբիայի պաշտոնատար անձինք չեն ցանկանում ընդունել կաշառակերության գոյությունը, արքայական ընտանիքի ղեկավարները հաճախ ցույց են տալիս, թե ցանկանում են վերջ դնել կասկածելի և անօրինական ֆինանսական մեթոդներին: Սաուդյան Արաբիայի ֆինանսների մինիստր Մուհամեդ Աբա ալ-Հեյլի խոսքերով, որը հարցազրույց ունեցավ Վաշինգտոնում, նոր թագավոր Ֆահդը «նպատակասլաց փորձել է» օրենքներ սահմանել կաշառակերության դեմ:

Սակայն Սաուդյան Արաբիային ծանոթ ամերիկյան պաշտոնատար անձինք և ձեռնարկատերերը գտնում են, որ այդ կասկածելի մեթոդներն այնքան խոր են արմատավորվել և այնքան լայն տարածում են ստացել, որ դրանցից ազատվելու և դժգոհության աճը կանխելու համար ժամանակավոր միջոցառումները հեռու են բավարար լինելուց.

«Սաուդյան Արաբիայի ֆինանսական մեթոդների կապակցությամբ կատարված հարցուփորձերը,— գրում էր «Նյու Յորք Թայմսը»,— բացահայտեցին հետևյալ փաստերը. անցած տասնամյակում այն ընկերությունները, որոնք ձգտում էին պատվերներ ստանալ, միլիարդավոր դոլարներ էին ծախսում կաշառքների համար, երբեմն խախտելով ինչպես Սաուդյան Արաբիայի, այնպես էլ ԱՄՆ-ի օրենքները: Սաուդյան Արաբիայի բազմամիլիոն կոմիսիոն առևտրական գործակալների վճարումները, որոնցից շատերը առաջարկում են միայն իրենց աղդեցությունը, հաճախ անհրաժեշտ պայման են ծառայում Սաուդյան Արաբիայի շուկան թափանցել փորձող ընկերությունների համար: Ձեռնարկատերերն ասում են, որ նրանք այդ վճարումները համարում են թույլ քողարկված կաշառքներ: Արքայական տոհմի հիմնական ստորաբաժանումների առնվազն մեկ դյուժինը ապրում է կասկածելի կոմիսիոն վճարումներով:

Կաշառակերությունը բառացիորեն ընկած է Սաուդյան Արաբիայի տնտեսական զարգացման հնգամյա պլանների հիմքում: Պլաններում մտնում են հսկայական անպետք շինարարական նախագծեր, ինչը երաշխավորում է մշտական առկայությունը որևէ խոշոր օբյեկտի, որը բարեբեր հող է ստեղծում կաշառքի համար»:

Կարևոր է ևս մի մանրամասն: Կասկածելի մեթոդները տարածվում են նաև նավթի արտահանությունն ընդգրկող գործարքների վրա, մի բնագավառ, որը երկրի բարգավաճման համար մեծ նշանակություն ունի, ավանդաբար խիստ հսկողության տակ

է գտնվում Սաուդյան Արաբիայի ու ԱՐԱՄԿՈ-ի պաշտոնատար անձանց կողմից, ուստի երկար ժամանակ համարվում էր անխոցելի չարաշահման համար: Լոնդոնում և Նյու Յորքում նավթի գծով ձեռնարկատերերը և մասնագետները հաղորդեցին, որ Սաուդյան Արաբիան մեծ քանակով նավթ է նետել կանխիկ ապրանքի շուկան, ձգտելով խուսափել այն պաշտոնական գնով վաճառելու անհրաժեշտությունից: Դա արքայորդիներին և մյուս պաշտոնատար անձանց հնարավորություն է տվել նավթը վաճառել ուռճացած գներով և յուրաքանչյուր բարելից լրացուցիչ ստանալ 5-ից մինչև 7 դոլար:

Կաշառակերության փաստի հետ համակերպվել են, ոչ ոք դրա դեմ չի առարկում, գտնում են Թոմաս Բարջերը և Ֆրենկ Ջանգերսը՝ ԱՐԱՄԿՈ-ի նախկին նախագահները, որոնք երկար տարիներ ապրել են Սաուդյան Արաբիայում: Սակայն Սաուդյան Արաբիայում ամերիկյան նախկին դեսպան Ջեյմս Էյկինսն ասաց, որ «առանց ներքին արմատական ռեֆորմների այդ երկիրը կկանգնի լուրջ պրոբլեմների առջև, քանի որ կաշառակերության նկատմամբ վերաբերմունքը դառնում է այնպիսին, ինչպիսին Իրանում էր 1976—1977 թվականներին»:

«Որտե՞ղ է այն սահմանը, որը բաժանում է միջնորդական վարձատրությունը կաշառքից, արադարացի վաստակը՝ կաշառակերությունից,— հարցնում է ֆրանսիական «Մոնդը»:— Նման հարցը, ըստ երևույթին, ծիծաղելի է երևում Սաուդյան Արաբիայի ֆինանսատնտեսական իրադրության պայմաններում: Գործարար աշխարհի բարքերի առիթով... Արևմուտքում այն առաջացնում է պաշտոնական շրջանների միայն խիստ հեգնանքը: Այնուամենայնիվ սաուդացիներից շատերն են զգում իսլամական մաքրակրոնության, որի մասին պնդում է վահաբիության թագավորությունը, և նրա որոշ ղեկավարների վարքագծի միջև գոյություն ունեցող աճող անդունդը: Նրանց, մասնավորապես, բոլորովին դուր չի գալիս այն փաստը, որ բարձրաստիճան անձինք նորմալ կամ նույնիսկ օրինական են համարում պետության կողմից վաճառվող նավթից ստացված գումարից հասույթ բռնագանձելը էր-Ռիյադում գործող պաշտոնական գնի և ՕՊԵԿ-ի սահմանած ավելի բարձր գների միջև եղած տարբերության հաշվին. որ բարձրաստիճան արքայորդու տղան 500 միլիոն դոլարի չափով «միջնորդական վարձատրություն» է պահանջում կառավարության և արտասահմանյան ֆիրմաների միջև սարքավորումների պայ-

մանագրի կնքմանը աջակցելու համար. որ գոյություն ունի մի քանի հարյուր միլիոն դոլար գումարով գաղտնի բյուջե՝ ամենամյա դոտացիա հատկացնելու արքայորդիներին և նրանց ընտանիքի մյուս անդամներին, որոնց թիվը հասնում է շուրջ 17 հազար մարդու: Ի վերջո դրությունը կարող է դառնալ շատ վտանգավոր: Դրանից էլ վախենում են միապետության կրթված կողմնակիցները, այդ թվում նաև հենց արքայական ընտանիքի անդամները»:

Վաճառականներ, բանվորներ, ներգաղթներ

Արաբական նավթային պետությունների ամբողջ կյանքը, նրանց տնտեսության և հասարակության նորմալ աշխատանքը կախված է ներմուծումից: Նրանք ներմուծում են արդյունաբերական և էներգետիկ սարքավորումներ, մեքենաներ, պահեստամասեր, շարժիչներ, գործիքներ, քիմիկատներ, դեղամիջոցներ, գրեթե բոլոր լայն սպառման ապրանքներն ու պարենամթերքի մեծ մասը: Սաուդյան էկոնոմիկան իրեն ապահովում է միայն նավթամթերքներով, մասամբ՝ շինանյութերով և հանքային պարարտանյութերի որոշ տեսակներով: Բացարձակապես արգելված է ոգելից խմիչքների ներմուծումը, ինչը և հանգեցրեց այդ ապրանքների ծաղկող մաքսանենգության առաջացմանը:

Սաուդյան Արաբիայի ներքին առևտուրը (ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ) իրականացնում է գլխավորապես սաուդյան վաճառականությունը:

Ներմուծման աճը և ընդլայնվող ապրանքների պահանջարկի մեծացումը հանգեցրին առևտրական գործունեության ծաղկմանն: Առևտուրը բոլոր մուսուլմանական երկրներում միշտ համարվել է շատ պատվաբեր զբաղմունք: Մուսուլմանները գտնում են, որ Մուհամեդ մարգարեն մի ժամանակ վաճառական է եղել: Հատկապես դեպի առևտուրն էլ (ինչպես նաև հողի սպեկուլյացիան և տնաշինությունը) ձգտում էր սաուդյան, ամենից առաջ հիջազյան, մասնավոր կապիտալը: Այդ գործունեության համար կային և՛ կադրեր, և՛ ավանդույթներ, և՛ կապեր: Հիջազի և Արևելյան նահանգների առևտրական տների կազմի մեջ մըտնում էին որոշ թվով հպատակություն ընդունած սիրիացիներ, պաղեստինցիներ և խադրամաուտցիներ (գաղթած Հարավային Եմենից):

50-ական թվականներին արաբական մյուս երկրներից առև-

տրականների հոսքը առաջ բերեց տեղական վաճառականության դժգոհությունը։ 60-ական թվականների սկզբին արաբական մյուս երկրներից գաղթածների համար առևտրի հնարավորությունները սահմանափակող դեկրետներ հրապարակվեցին։ Յուրաքանչյուր օտարերկրացի վաճառական (մուսուլման, որ համարվում է արաբական մյուս երկրների քաղաքացին) պետք է իրեն սաուդացի գործընկեր վերցնի, նրան տրամադրելով ամենաքիչը կապիտալի 51 տոկոսը։

Սաուդյան Արաբիայում ներմուծման գործարքներին մասնակցում էին առևտրական մեծ տները՝ «Ալի Ռեզա», «Ալ-Հուսայբի», «Ջուֆալի», «Բուգշան», «Ջումայհ», «Աս-Սուլեյման», «Խաշոգջի», «Փարավոն»։ Այս ֆիրմաները հանդես են գալիս որպես կապալառուներ, կառուցում են բնակելի տներ, հյուրանոցներ, կազմակերպում են ծովագնացության և տրանսպորտային ընկերություններ, սուպերմարկետներ, միջոցներ են ներդնում արդյունաբերության մեջ։ Որպես կանոն, դրանք ընտանեկան ձեռնարկություններ են, այլ ոչ թե բաժնետիրական ընկերություններ։ Նրանցից ամենախոշորների կապիտալի տարեկան շրջանառությունը հասնում է մեկ միլիարդ դոլարի։ Նրանց շուրջը գործում են տասնյակ և հարյուրավոր մանր ներմուծողներ, ունեն ոչ մեծ կապիտալ և երկու-երեք գործակալ։ Առևտրի գործում իրադրությունը վճռականորեն փոխվել է, եթե հիշենք, որ մեկ-երկու սերունդ առաջ վաճառականները զբաղվում էին բոմբեյից պարենամթերքներ, գործվածքներ և հագուստներ ներմուծելով կամ Մալաբարայից գերաններ տեղափոխելով։

Ալի-Ռեզա առևտրական ընտանիքը Ջիդդայի շտաբակայանով, ըստ երևույթին, իրանական ծագում ունի։ Այդ առևտրական տունը հիմնադրվել է անցյալ դարի 60-ական թվականներին և զբաղվում էր ներմուծումով ու արտահանությամբ։ 1941 թվականին «Ալի-Ռեզա» ֆիրման «Ֆորդի», պատերազմից հետո՝ «Վեստինհաուզի», ԻՏՏ-ի, «Օմեգա» և «Տիսսո» ժամացույցի ֆիրմաների ներկայացուցիչն էր։ Ընտանիքի անդամները ղեկավարում էին առևտրի մինիստրությունը, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դեսպանությունները, զբաղեցնում էին արտաքին գործերի մինիստրի տեղակալի պաշտոնը։ Տոհմի սեկցիաները մասնակցում են կառավարության համար մեծ կապալային աշխատանքներին, դրամ են ներդնում անշարժ գույքի, արդյունաբերության, ծառայությունների ոլորտի, էլեկտրաէներգիայի, տրանսպորտի, նավթային արդյունաբերության մեջ։

Հարստանալու եղանակներից մեկն այն է, որպեսզի դառնան «երաշխավոր անձ» արտասահմանյան ֆիրմաների միջև, որը գործարք է կնքում ճանապարհների շինարարության, նավահանգիստների, հյուրանոցների, քաղաքների բարեկարգման համար։ Ջուֆալի ընտանիքի ուժեղ թռիչքը սկսվեց այն բանից հետո, երբ նա ստացավ էֆ-Թայիֆի էլեկտրիֆիկացիայի պայմանագիրը անգլիական ֆիրմաներից մեկի համար։ Այնուհետև Ջուֆալիները դարձան Սաուդյան Արաբիայի «Մերսեդես» ֆիրմայի ներկայացուցիչները, զբաղվում էին անվադողերի և պահեստամասերի արտահանությամբ, գնեցին մի քանի գյուղատնտեսական ֆերմաներ։

Խոշոր առևտրասպեկուլյացիոն բուրժուազիայի ձևավորման մյուս եղանակը անշարժ գույքի օպերացիան է։ Դեռևս 1955—1956 թվականներից մեծ քաղաքներում փոխվեց հսկողությունը հողի և բնակարանների վարձավճարի գների նկատմամբ։ Վարձավճարը այն ժամանակ աճեց 300—400 տոկոսով և մինչև օրս տասնյակ անգամ ավելացել է։ Քաղաքներում խլխլում են հողամասերը, քանդում են աղքատների թաղամասերը, որպեսզի տներ կառուցեն և վարձով տան կամ վաճառեն։

Ապրելով ավելի գրգռիչ շքեղության մեջ, քան տեխասյան միլիարդատերերը, ունենալով դղյակներ և զբոսանավեր, պալատներ, շքեղ առանձնատներ Եվրոպայի և ԱՄՆ-ի տարբեր տեղերում, որտեղ նրանք ավելի հաճախ են լինում, քան հայրենիքում, այնպիսի ընտանիքներ, ինչպիսիք են Փարավոնի, Ջուֆալիի, Ռաջաբի, Սիլսիլահի, Բինլադենի, Օլայանի, Բինզագերի, ինչպես նաև Աբդալլահ իբն Ֆեյսալի (հանգուցյալ թագավորի որդին) ընտանիքները հսկայական միջոցներ են դիզել մեծ մասամբ վերջին քսան տարում, ամենից առաջ շնորհիվ կառավարության կամ, որ նույնն է, թագավորական ընտանիքի ազդեցիկ անդամների հովանավորությամբ, որոնց հետ նրանք սերտորեն կապված են, ծառայելով նրանց համար երբեմն որպես փոխանձեր։

Պետությունը, որպես երկարաժամկետ անտոկոս փոխառություն, կապիտալ ներդրումների համար առատորեն նրանց շնորհում էր առաջնահերթ պայմանագրեր և դրամ, փաստորեն ձրի ապահովում էր նրանց ինֆրակառուցվածքի ձեռնարկու-

թյունները, ազատում էր մաքսատուրքից, որը հետո բռնագանձում էին իրենց արտադրանքի հետ մրցակցող ապրանքներից։ Գներն ու շահույթները ոչնչով չէին սահմանափակվում։ Բացի դրանից, ներդրող սաուդացիները ոչ մի հարկ չէին վճարում, այդ թվում նաև եկամտահարկ։ Եթե, չնայած այդ բոլորին, նրանց ձեռնարկություններից որևէ մեկը ընկնի դժվար կացության մեջ, պետությունը բարձր փրկագնով այն հետ կգնի կամ կծածկի դեֆիցիտը, ինչը տեղի ունեցավ վերջերս, օրինակ, մի մասնավոր ֆիրմայի հետ, որ իր վրա էր վերցրել Հիջազին էլեկտրաէներգիայով ապահովելու կոնցեսիան։ Ամբողջությամբ մասնավոր սեկտորի գործունեությունը, ըստ լուրերի, 60 տոկոսով ֆինանսավորվում էր պետական միջոցների հաշվին։

Սակայն, միևնույն է, մասնավոր սեկտորը ընդամենը տալիս է ազգային համախառն արտադրանքի 5,5 տոկոսը։ Արտասահման, մասնավորապես ԱՄՆ տեղափոխվող մասնավոր կապիտալների ծավալը տարեկան կազմում է 10-ից մինչև 15 միլիարդ դոլար։ Առձեռն դրամի ավելցուկը ներքին շուկայի սահմանափակությունը, դրանք արտասահմանում ավելի ձեռնտու տեղավորման հնարավորությունները՝ այս բոլորը խթանում է սաուդյան կապիտալը որպես ավանդ օտարերկրյա բանկեր տեղափոխելը և արժեթղթեր գնելը։

Միջազգային ասպարեզում ակտիվ դեր խաղալը նրա մյուս իրավունքների հետ միասին սաուդյան վաճառականներին դժվարությամբ էր տրվում։ Բացառությամբ չորս խոշոր սաուդյան բիզնեսմենների, որոնք միջազգային մասշտաբով դարձան մուլտիմիլիոնատերեր։ Դրանք են Խաշոգչին և Գեյս Փարավոնը՝ երկուսն էլ թագավորի նախկին բժիշկների որդիներ, Սուլեյման Օլայանը՝ ԱՐԱՄԿՈ-ի նախկին ծառայողը, որը ղեկավարում էր «Սաուդի-Բրիտիշ բանկը», և Ակրամ Օջեհը, որ ծնվել է Սիրիայում, բայց ընդունել է սաուդյան հպատակություն։ «Սաուդյան թագավորական ընտանիքը և կառավարության անդամները փորձում են խուսափել այդ բիզնեսմենների հետ հրապարակային ասոցիացիայից, բայց գտնում են, որ որոշ անտիպարենյորներ ծառայում են թագավորական ընտանիքի անդամների և կառավարության առևտրական գործունեությունը ծածկելու համար»,— գրում էր «Միդլ իսթ էկոնոմիկ դայջեսթը»։

Խաշոգչին շահույթ էր դիզում որպես միջնորդ սաուդյան բանակին սպառազինություն մատակարարելու ժամանակ, «դրա-

մավճար» ստանալով ամերիկյան ռազմարդյունաբերական ֆիրմաներից, Լյուքսեմբուրգում «Տիրադ Հոլդինգ կորպորեյշընն» անվան տակ շտաբակայանի հետ ստեղծել էր 400 միլիոն դոլար կապիտալով ընկերություններ մի կոնգլոմերատ։

Փարավոնը դարձավ «Սաուդյան կորպորացիայի հետազոտության և զարգացման» նախագահը։ Նրա գործունեությունը ընդգրկում էր բիզնեսի լայն շրջան՝ մեքենաշինության արտադրանքի առևտրից մինչև սննդի և մյուս սպառողական ապրանքների արտադրության ու ապահովագրության գործին մասնակցելը։ Օջեհը իր ընկերության միջոցով նույնպես գործում է Լյուքսեմբուրգի «Թեքնիկ դը Ավանգարդ» շտաբակայանի հետ։ Նրա ամենամեծ աղմուկ հանած օպերացիան եղավ «Ֆրանս»-օվկիանոսային լայների գնումը, որը նա ամբողջությամբ լցրեց անտիկվարային ֆրանսիական կահույքով։

Սաուդիդների տոհմին սերտորեն կապված սաուդյան առևտրական բուրժուազիան ստեղծել է յուրօրինակ առևտրաֆինանսական օլիգարխիա։ Այն ստեղծվել է ջերմոցային պայմաններում, որ պաշտպանված է արտաքին մրցակցությունից, աճում է հիմնականում ներմուծման հաշվին, որի համար վերջիվերջո վճարում են նավթից ստացված եկամուտներից։ Սաուդիդների տոհմի և նրանց ընտանիքի հետ կապված ղեկավարների ձեռքով նավթի արդյունահանումից ստացված հատկացումները բաշխվում էին բյուրոկրատական ապարատի միջև, որտեղ կաշառակերությունը դարձել էր կիսալեգալ հասարակական ինստիտուտ, ծախսվում էին բանակի և ոստիկանության վրա, հարստացնելով և՛ նրանց վերնախավին, և՛ միջնորդներին, գլխավորապես օտարերկրյա ֆիրմաներին, ծախսվում էին տարբեր հասարակական աշխատանքների և տնտեսական նախագծերի վրա, կթու կով դառնալով նրանց համար, ովքեր դրա համար պատասխանատու էին, օտարերկրացիներին և դարձյալ միջնորդներին։ Սաուդյան վաճառականությունը հարստանում էր նաև սաուդյան հասարակության հետամնացությունից, կլանելով երկրի նավթից ստացված եկամուտների ղգալի մասը՝ դրանք երկրորդ անգամ բաշխելիս։

Վարձու բանվորական ուժի շուկայի առաջացումը ենթադրում է մինչկապիտալիստական հասարակության ընդերքում նրա հասունացման երկար պրոցես՝ տանանամյակների և նույնիսկ հարյուրամյակների ընթացքում անմիջական արտադրողների

բաժանումը արտադրության միջոցներից, արդյունաբերությամբ և առևտրով զբաղված բնակչության աճը, համապատասխան պրոֆեսիոնալ ունակություններով և սոցիալ-հոգեբանական խառնվածքով, աստիճանաբար վարձու աշխատանքի կիրառման ոլորտը ընդլայնելով: Արաբիայի նավթային միապետություններում այդ պրոցեսը տեղի է ունեցել չափազանց արագ, մեկ-երկու սերնդի ընթացքում, և ուղեկցվել է հին կացութաձևի հիվանդագին խորտակումով:

ԱՐԱՄԿՈ-ն առաջին իսկ քայլերից զգում էր տեղական բանվորական ուժի կարիքը, բայց հայտնաբերեց, որ ֆեոդալատոհմատիրական հասարակության մեջ նրա իրական շուկան չկար: Սակայն ընկերության կողմից առաջարկվող աշխատանքը ենթադրում էր բնակչության մի որոշ խմբի նյութական դրության և ստատուսի բարելավում, որոնք թողել էին նախկին զբաղմունքը և արտադրության միջոցները, եթե դրանք ունեին, և կազմել բանվորական ուժի կմախքը, Սաուդյան Արաբիայի տեղական բանվոր դասակարգի ապագա միջուկը:

Նավթային ընկերությունների բանվորներ դարձան «ստորին» տոհմերի ներկայացուցիչները, ֆելլահ հողագործները, Արևելյան նահանգների շիա բատրակները կամ արհեստավորները: Նրանք չէին խուսափում «անհավատ» օտարերկրացիների համար «արհամարհված» ֆիզիկական աշխատանք կատարելուց: Ինչ վերաբերում է «ազնիվ» բեդվիններին կամ նստակյաց մոլեռանդ վահաբիտներին, ապա նրանց ԱՐԱՄԿՈ-ի կողմը ձգեց տարրական աղքատությունն ու սովից փրկվելու ձգտումը: Բեդվինները հաջողությամբ կատարում էին պահակների, վարորդների, ինչպես նաև էլեկտրիկների ֆունկցիաներ, սակայն ծանր, հոգնեցուցիչ կամ միալար, տխուր ֆիզիկական աշխատանքին նրանք հարմարված չէին:

Սկզբում ԱՐԱՄԿՈ-ն ստիպված էր սաուդացիներից որակյալ մասնագետներ պատրաստելու համար ստեղծել հատուկ դպրոցներ և դասընթացներ: Սակայն սկզբնական փուլում նրանց նախապատրաստությունը սահմանափակ էր, քանի որ ընկերությունը վախենում էր նրանց ձեռքը տալ հիմնական ֆունկցիաները, ինչպես գործնական, այնպես էլ քաղաքական նկատառումներից ելնելով:

Երիտասարդ բանվոր դասակարգի կուտակումը մի ձեռնարկությունում, աշխատանքի ծանր պայմաններն ու ցածր աշխատավարձը՝ այդ բոլորը նպաստեցին իրենց իրավունքները պաշտպանելու համար բանվորների կազմակերպվածության և պայքարի գործի առաջին քայլերին: Ավելի բարձր պրոլետարական գիտակցություն և կազմակերպական ունակություն ունեցողները մեծ մասամբ արաբական մյուս երկրներից եկած բանվորներն էին: Ե՛վ ԱՐԱՄԿՈ-ի ղեկավարները, և՛ սաուդյան իշխանությունները 1953 և 1956 թվականների բանվորական հուզումներից դաս քաղեցին: Բանվորների նկատմամբ դաժան ռեպրեսիաներ էին գործադրում: Վարչակազմն սկսեց կազմել քաղաքականապես անհուսալիների «սև ցուցակները» նրանց աղատել աշխատանքից:

Սակայն ճնշումները, հետամտումը, պատիժները, խտրականությունը ընկերության և սաուդյան իշխանության գործունեության միայն մի կողմն էր բանվորական ելույթները կանխելու համար: Սաուդյան Արաբիայում ստացված շահույթները այնքան բարձր էին, նավթահորերը այնքան արդյունավետ, վարձված բանվորների թիվը այնքան աննշան (11—13 հազար), որ ընկերությունը կարող էր կտրուկ բարձրացնել նրանց աշխատավարձը: Դա վերաբերում էր ամենից որակյալ բանվորներին: Արդեն 50-ական թվականների վերջում նրանք շատ էին ստանում ցածր կարգի պետական ծառայողներից, ոստիկանությունից և 4—6 անգամ շատ սեագործ բանվորներից: Հետագա տարիներին ԱՐԱՄԿՈ-ում զբաղված անձանց աշխատավարձի և ընդհանուր կենսամակարդակի աճը նույնպես խիստ առաջ էր անցնում վարձու աշխատողների եկամուտների աճից:

Բազմամյա «անբասիր» աշխատանքի համար ընկերության ղեկավարությունը սկսեց հատուկ պարգևավճարներ և հավելումներ տալ, հարմարավետ բնակարաններ հատկացնել, տարաժամկետ վարկ տալ տներ գնելու համար:

Տներ ձեռք բերելու համար վարկերի մարումը ընկերությունը վերցնում էր իր վրա: Այդ բոլորը բանվորներին դարձնում էր ընկերության պարտապաններ, գործնականում վերացնում էր բանվորական ուժի հոսունությունը: ԱՐԱՄԿՈ-ն բացեց նաև հիվանդանոցներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ: Ընկերության ղեկավարության կողմից խրախուսվող բանվորների մի մասը ընդգրկվում էր ձեռնարկության գործունեության մեջ:

ԱՐԱՄԿՈ-ի բանվորների մարտական տրամադրությունը խիստ նվազեց:

Տեղական իշխանությունների միջոցով ոչնչացնելով քաղաքականապես ակտիվ բանվորներին՝ ԱՐԱՄԿՈ-ն «փրկագին» տալով ազատվեց մնացածներից և քառորդ դարով հեռացրեց կապիտալիստական աշխարհի նավթահանության գլխավոր կենտրոններից մեկում կազմակերպված բանվորական - ելույթները: Սաուդյան պրոլետարիատի առավել առաջավոր ջոկատը ԱՐԱՄԿՈ-ի վարչակազմի նպատակաուղղված քաղաքականության և նրան «վերևից» աջակցելու հետևանքով իր զգալի մասով բուրժուալքվեց և վերածվեց «բանվորական արիստոկրատիայի»:

Մյուս զարգացող երկրների համեմատությամբ գյուղատնտեսությամբ զբաղված անձանց տոկոսն այստեղ ցածր է, իսկ ծառայությունների ոլորտում՝ բարձր: Քաղաքի սոցիալական կառուցվածքն աչքի է ընկնում արդյունաբերության մեջ բնակչության քիչ զբաղվածությամբ և չափազանց ուռճացած պետական ապարատով: Քաղաքային բնակչության ցածր շերտերի մեջ մտնում է տարբեր կատեգորիաների կիսապրոլետարիատը: Դրանք, որպես կանոն, գյուղական վայրերից եկած գաղթականներն են (գյուղացիներ և բեդվիններ), անգրագետները և որակավորում չունեցողները: Նրանց օգտագործում են որպես մշտական և ժամանակավոր ոչ որակյալ բանվորներ շինարարության մեջ, առևտրում, ծառայությունների ոլորտում, սակայն շատերն ապրում են կառավարական դոտացիայով:

Թագավորությունում պրոլետարիատի թեկնածու էին համարվում ենթավարպետները, ոչ որակյալ բանվորները, սննկացած ֆելլահները և բեդվինները: Սակայն բանվոր դասակարգի ձևավորման ճանապարհին կանգնած էին սոցիալ-հոգեբանական կարգի խնդիրներ:

«Աշխատելու կարողությունը կապված չէր Սաուդյան Արաբիայի հասարակության մեջ սոցիալական ստատուսի հետ,— կտրականապես պնդում էին արաբական հասարակության հետազոտության հիման վրա գրված ժողովածուի ամերիկյան հեղինակները:— Ավելի շուտ, նա, ով իրեն կարող էր թույլ տալ չաշխատել, ուներ ավելի բարձր սոցիալական ստատուս... Սաուդյան Արաբիայում աշխատանքը համարվում է ցածր ստատուս, մինչդեռ վերակացուի և քաղաքական որոշումների ընդունմանը մասնակցող մարդու ֆունկցիաները բարձր են գնահատվում: Ուստի ամենացանկալի զբաղմունքը մնում է պետական ծառայությունը: Նույնիսկ ամենացածր մակարդակի պաշտոն-

յան հարգանք է վայելում... Որպես կանոն, որքան մարդու դիրքը բարձր է այնքան նա քիչ է աշխատում: Դա հատկապես ճիշտ է պետական ծառայության համար: Ավելի բարձր ստատուսով պետական ծառայությունը կապված է աշխատանքի ուշ գալու, շուտ գնալու և տարբեր այցելուների վրա ավելի շատ ժամանակ ծախսելու արտոնությունների հետ»:

Ամբողջությամբ սաուդյան հասարակությունում պատերնալիզմը ռեալ գործոն է վարձակալի և բանվորի փոխհարաբերության մեջ: Տերը իրենով մարմնավորում է իշխանություն և հեղինակություն և միաժամանակ պետք է ուշադրություն դարձնի բանվորների կարիքների հանդեպ: Տերը կորցնում է հեղինակությունը, եթե պահանջկոտություն և խստություն հանդես չի բերում: Սակայն նա զրկվում է հարգանքից և համակրանքից, եթե չի օգնում բանվորին հիվանդության կամ նրա որդու ամուսնության ժամանակ: Բանվորները կրոնական տոներին պետք է այցելեն տերերին, որպեսզի նրանց նկատմամբ արտահայտեն իրենց հարգանքը:

Ավանդաբար բանվորական ուժը հավաքագրվում է անհատական հիմքով, տերը բանվոր է վարձում իր ընտանիքի անդամներից, անձնական ընկերներից և ծանոթներից, այն անձանց, ում կարող են նրաշխավորել: Ընտանեկան կապերը, սոցիալական ստատուսը, անձնական օրինապահությունը այդ սիստեմում կանգնած են աշխատանքի արդյունավետության և ձեռնահասության նկատառումների առջև: Անձնական, ընտանեկան կապերը կարևոր դեր են խաղում աշխատողներ ընտրելիս: Թեև ստեղծված պրակտիկան պահպանվում է մանր առևտրական կամ արդյունաբերական ֆիրմաներում, առավել խոշոր ձեռնարկություններում դեռևս 60-ական թվականներին սկսեց հանդես գալ, այսպես ասած, բանվորների «ոչ անհատական» վարձումը: Արաբիայի մասին գրված աշխատությունների ամերիկյան հեղինակները լռության են մատնում, որ սաուդացիները «պատերնալիստական հարաբերության» փոխարեն ԱՐԱՄԿՈ-ի ներսում հանդիպեցին դասդության տիպի վայրենի ու դաժան շահագործման: Արդեն հիշյալ ժողովածուի հեղինակները գերագնահատում են լուսին մասին, որ ընկերությունն իր գործունեության առաջին տասնամյակում, օգտվելով բնակչության ընդհանուր աղքատությունից, սաուդացիներին վճարում էր չնչին աշխատավարձ և նույնիսկ

բանվորների իրավունքների մասին մտածել չէր թույլատրվում։ Ե՛վ աշխատավարձի բարձրացումը, և՛ որոշ սոցիալական բարիքներ բանվորները պոկում էին ԱՐԱՄԿՈ-ից ու սաուդյան կառավարությունից համառ պայքարի գնով, դասակարգային ինքնագիտակցության ծիլերի երևան գալով։

Արաբական բնակչությունն ընդհանրապես չի ունեցել, այժմ էլ մեծ մասամբ չունի տնտեսական և աշխատանքային ունակություններ ժամանակակից կյանքի համար։ Սակայն որևէ մեկը պետք է շարժման մեջ դնի այն ոչ քիչ արտադրական մեխանիզմի թափանիվը, որ բերվել է Պարսից ծոցի և Սաուդյան Արաբիայի երկրները։ Որևէ մեկը պետք է որ կիրառի բնավ էլ ոչ արաբացիների հնարած տեխնոլոգիան, վերանորոգի ամերիկյան կամ ճապոնական ավտոմեքենաները, հեռուստացույցները, կամ կոնդիցիոներները, տներ, ստադիոններ, գործարաններ և նավահանգիստներ կառուցի, խրամատներ փորի, աղբ թափի, արկղեր տեղափոխի, աշխատի ֆունկցիոնալ ֆաբրիկայում, դասավանդի մաթեմատիկա, թերթեր տպի, ռեկլամային վահանակներ նկարի, դա, որպես կանոն, «պլեբեյների»՝ ներգաղթների գործն է։

Նավթային իրարանցումը արաբական նավթային պետությունների կողմը գրավեց ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքի ակտիվ տարրերին։ Որպես «սպիտակ» և «կապույտ օձիքավորներ» աշխատում են պաղեստինցիները, լիբանանցիները, սիրիացիները, իսկ որպես սևագործ բանվորներ՝ ավելի շատ եմենցիները, իրաքցիները, սաուդացիները, իրանցիները, պակիստանցիները, հնդկաստանցիները և օմանցիները, որոնք դեռ վերջերս «չափազանց հարուստ» հարևանների կողքին իրավազուրկ էին։ Ամերիկացիները և եվրոպացիները (50 հազար և 30 հազար մարդ համապատասխանաբար, ներառյալ ընտանիքի անդամները, Սաուդյան Արաբիայում) ֆիրմաների դիրեկտորներ են, գործարար աշխարհի վերնախավը, ռազմական խորհրդատուներ։ Բացառությամբ Սաուդյան Արաբիայի, Բահրեյնի և Օմանի սուլթանության, Արաբիայի բոլոր նավթային պետություններում բնակչության մեծամասնությունը, ներգաղթներ են։ Համեմատության դեպ Քուվեյթի և Կատարի բնակչության չորս հինգերորդը, Աբու-Դաբիի կամ Դուբայի ինը տասներորդը կազմում են եկվորները։

«Ձեռնարկատերերի ասոցիացիան հայտարարում է իր

պակիստանցի բանվորների (թվարկվում են անունները) փախուստի մասին և նախազգուշացնում է բոլորին, ովքեր ցանկանում են նրանց տրամադրել տանիք, սնունդ կամ աշխատանք։ Բոլոր ավյալները այդ փախստականների մասին պետք է անհապաղ հաղորդել մոտակա ոստիկանական տեղամաս կամ մեր ձեռնարկությանը հետևյալ հասցեով...»։ Այդպիսի հայտարարությունը, որ պատեղված է էր-Ռիյադի թերթերից մեկում, իրենից ոչ մի արտասովոր բան չի ներկայացնում։ Նման հայտարարությունները, որ հաճախ են երևում թերթերի էջերում, բանվոր-ներգաղթների վերաբերյալ 1969 թվականին հաստատված աշխատանքային օրենսդրության հետևանք են։

Իր հայրենիքում մեկ կամ երկու տարով հավաքագրված և երկու կողմից լուռ համաձայնությամբ երկարաձգված պայմանագրով աշխատող բանվորը պետք է հեռանա երկրից, հենց որ կորցնի իր տեղը։ Ինչպիսին էլ լինեն նրա ազատման պատճառները, նա կորցնում է իր սիրուջ «երաշխավորության» իրավունքը, որը «երաշխավորել էր» իշխանությունների առջև նրա «աղնվությունը» և «բարի բնավորությունը»։ Եթե նրան ազատել են ինչ-որ «լուրջ մեղքի» պատճառով մինչև նրա պայմանագրի ժամկետը լրանալը կամ անձնագրի պատճառով, նա չի կարող վարձվել ուրիշ տեղում։ Այդպես է նաև, եթե նա ժամկետից շուտ լքում է իր աշխատանքը սեփական կամքով, ընդ որում այդ դեպքում էլ նա իրավունք չի ունենա ոչ արձակման նպաստի, ոչ էլ վերադարձի տոմսի։

Ներգաղթողը, որին գայթակղել են բարձր աշխատավարձով, Սաուդյան Արաբիա ժամանելով, հայտնաբերում է, որ իր ոռճիկը չի համապատասխանում կյանքի գնին, որը, 1979 թվականին ՄԱԿ-ի գնահատմամբ, «ամենաբարձրն էր աշխարհում»։ Նա հասկանում է, բայց ուշացումով, որ իր աշխատավարձը չի աճում ինֆլյացիայի համամասնությամբ և կարող է փոփոխվել պայմանագրի ժամկետի ընթացքում միայն սիրուջ բարի կամքով։

Իհարկե, սաուդացիները իրավունք ունեն աշխատավարձի գոյություն ունեցող մակարդակի, արաբ ներգաղթողները վարձատրվում են ավելի լավ, քան Ասիայի մյուս երկրների բնակիչները, թուրքերին վճարում են ավելի շատ, քան հարավկորեացիաներին և տայլանդցիներին, իսկ ամերիկացի կամ եվրոպացի մասնագետները (որոնք, ինչպես ընդունված է, կազմում են հատուկ կատեգորիա) ստանում են ամենաբարձր ոռճիկը, երբեմն երկու

անգամ ավելի շատ նրանից, ինչի հավակնություն կարող էին ունենալ իրենց հայրենիքում: Ճշմարիտ է նաև այն, որ ներգաղթողները, անկախ իրենց աղգությունից, օգտվում են թագավորության քաղաքացիների մեծ մասին արամադրվող սոցիալական այնպիսի բարիքներից, ինչպիսին անվճար բժշկական օգնությունն է: Փոխարենը նրանք իրավունք չունեն էժան բնակարանների վարձակալությունից օգտվել, այն արամադրվում է միայն սաուդացիներին:

Ներգաղթ բանվորներից շատերը երազում են հեռանալ Սաուդյան Արաբիայից, հավիվ այնտեղ ժամանած, այնքան որ նրանց ճնշում են կյանքի պայմանները: Այդ մարդիկ, բաժանված իրենց ընտանիքներից (որոնց չի թույլատրվում նրանց ուղեկցել), ուղղահավատ իսլամի արգելքների պատճառով զրկված ամեն տեսակ ուրախությունից, ի դեպ ազատ ժամանակ էլ չունեն: Նրանց մեծ մասը ստիպված է աշխատել շաբաթական 60 կամ ավելի շատ ժամ, օրենքով սահմանված 48 ժամի փոխարեն:

Աշխատանքային օրենսդրությունը խիստ պատիժ է նախատեսում «քայքայիչ գործունեության» համար: Պրոֆմիությունները արգելված են, իսկ անօրինական ամեն մի ժողովի մասնակիցներին սպառնում է բանտարկություն վեց ամսից մինչև երկու տարի ժամկետով: Աշխատանքը դադարեցնելու վերաբերյալ կոչը պատժվում է բանտարկությամբ մեկ տարուց մինչև երեք տարի ժամկետով: Գործադուլավորներին կարող են բանտարկել մինչև վեց տարի ժամկետով: Մասսայական դիմադրության դեպքում իշխանությունները դիրադառնում են այնպիսի օպերատիվ մեթոդ, ինչպիսին անխտիր բոլոր մեղավորներին աքսորելն է: Այսպես, օրինակ, Դահրանից ոչ հեռու գտնվող շինարարությունում աշխատող մի քանի հարյուր հարավկորեացիների լցրին ինքնաթիռները և ուղարկեցին Սեուլ երկու օր հետո այն բանից, երբ նրանք դադարեցրին աշխատանքը՝ պահանջելով բավարարել իրենց կարիքները:

Օտարերկրացիներն այնքան շատ են Սաուդյան Արաբիայում, որ անհանգստացած կառավարությունը որոշից սահմանափակել ներգաղթը: Սաուդացիները հայտնվեցին որպես փոքրամասնություն Հիջազի գլխավոր քաղաքներում (Մեքքա, Մեդինա, Ջիդդա), Արևելյան գավառների քաղաքներում (Դահրան, Դամամ, էլ-Խուբար) և նույնիսկ մայրաքաղաք էր-Ռիյադում:

Օտարերկրացիների բաժինը երկրի բնակչության մեջ, սաուդյան ղեկավարների կարծիքով, այնպիսին է, որ կարող է «վնաս հասցնել համախմբվածությանը և իսլամական հասարակության արժեքներին» և, հետևաբար, վարչակարգի հաստատունությանը:

Սակայն նշված ծրագիրը կատարելու համար բանվորական ուժի պահանջարկը ամենամոտակա տարիներին պետք է աճի և ավելանա, գուցե, նույնիսկ կրկնակի, որի մասին վկայում են ԱՐԱՄԿՈ ընկերության ղեկավարների և էլ-Ջուբայիլի ու Յանբոյի արդյունաբերական համալիրների նախնական հաշվարկները: Արդեն հիմա խոստովանում են, որ սաուդացիների բաժինը ինքնուրույն գործող բնակչության մեջ պետք է կրճատվի, հատկապես պարենային սեկտորում: Բավական թվով որակյալ բանվորներ և ինժեներատեխնիկական աշխատողներ պատրաստելու համար կպահանջվի մի քանի տասնամյակ:

Սաուդյան Արաբիայի զարգացման երկրորդ հնգամյա պլանի անհաջողության ոչ վերջին պատճառը բանվորական ուժի պակասն էր: Թեև դրա վերաբերյալ ճիշտ տվյալներ չկան, պաշտոնատար անձինք գտնում են, որ բանվորական ուժը, որ հաշվվում է ներկայումս 2 միլիոն մարդ, 75 տոկոսով կազմում են օտարերկրացիները: Սակայն այս տվյալները ևս կարող են չափազանց լավատեսական լինել: Սաուդացիների մեծ մասը զբաղված է պետական ծառայությամբ: Ուստի արտադրությունը և արտադրողականությունը կախված են օտարերկրացիներից:

Ինչպե՞ս սաուդացիներին ներգրավել ֆիզիկական աշխատանքի մեջ: Բանվորների պրոֆեսիոնալ պատրաստման գծով ցուցադրական կենտրոնները չգրավեցին միայն համալսարաններում սովորել ձգտող սաուդացիներին: Սաուդացիները գործնականում դիմում չեն տալիս քարագործների, մետաղագործների, դերձակների դասընթացներում սովորելու համար: Ընդհանուր առմամբ պրոֆեսիոնալ նախապատրաստության դասընթացներին մասնակցում են միայն 2300 երիտասարդ, մինչդեռ միայն ԱՄՆ-ի համալսարաններում սովորում են 15 հազար սաուդացիներ: Թագավորության բոլոր վեց համալսարաններում էլ առաջին կուրսերը լրիվ զբաղեցված են:

Նրանք, ովքեր չեն կարող համալսարան ընդունվել, գերադասում են աշխատել այնպիսի հեղինակավոր կազմակերպություններում, ինչպիսին «Սաուդիա» ազգային ավիաընկերու-

թյունն է։ 1981 թվականին այնտեղ 450 տեղի համար տրվել էր 1650 դիմում։

Եթե երկրում նավթի արդյունաբերության երևան գալը, զեկավար վերնախավի եկամուտների մեծացումը, ներքին շուկայի ընդլայնումը հանգեցրին կապիտալիստական կացութաձևի և Սաուդյան Արաբիայում ժամանակակից պրոլետարիատի ստեղծմանը, ապա միաժամանակ նույն այս գործոնները, որքան էլ դա զարմանալի լինի, 40—50-ական թվականներին ժամանակավորապես ամրապնդեցին ստրկատիրական կացութաձևը։ Ստրուկների պահանջարկը մեծացավ։

Ստրկության վերացումը Սաուդյան Արաբիայում տեղի ունեցավ 1962 թվականին արտաքին և ոչ թե ներքին ճնշման տակ, թեև երկրում կային նաև բնակչության դեմոկրատականորեն տրամադրված խմբակներ, որոնք պահանջում էին վերացնել այդ խայտառակ հասարակական ինստիտուտը։ Փաստորեն ստրկությունը պահպանվում է Սաուդյան Արաբիայում նրա վերացումից հետո էլ, բայց ոչ որպես առանձին կացութաձև, այլ մեծամեծների տներում ստրուկներ և հարճեր պահելու տեսքով։

Ստրուկները ազատագրումից հետո էլ չդարձան Սաուդյան Արաբիայի իրավահավասար քաղաքացիներ։ Թեպետ, ինչպես և առաջ, նրանք կարող էին վեր բարձրանալ չինովնիկության հիերարխիայի աստիճաններով։

Արաբիայի «ստորին ցեղերը», որտեղ գոյություն ունի ցեղերի կիսակաստայական հիերարխիա «ազնվության» աստիճանով կամ նրա բացակայությամբ, պահպանել են իրենց անիրավահավասարությունը։

«Ստորին» ցեղերից դուրս են եկել բանվորներ և արհեստավորներ «ոչ հեղինակավոր» մասնագիտությունների համար՝ վարսավիրներ, մսավաճառներ, երաժիշտներ, կլայեկչիներ։ Որոշ «ստորին» ցեղերի ներկայացուցիչներ կարող են հարստանալ բայց առաջվա նման ամուսնությունն արգելված է «բարձրագույնների» հետ։ Բանու հադիր ցեղին պատկանող նշանավոր Աբդալլահ աս-Սուլեյման ալ-Համդանը Աբդ ալ-Ազիզի (Իբն Սաուդի) ֆինանսների մինիստրն էր։ Նրա որդիները՝ թագավորության ամենահզոր ձեռնարկատիրական ընտանիքը։ Սակայն, ինչպես և նախկինում, նրանց հետ խորշում են ազգակցական կապի մեջ մտնել անազի, ատայբի, շամարի կամ կուրեյշ

«զտարյուն» ցեղերի ծագում ունեցողները, էլ չենք խոսում սաուդիդ տոհմի և զտարյուն արիստոկրատիայի մասին։

Գաղթականների, «ստորին» ցեղերի, ազատարձակվածների, արհեստավորների, շիաների սոցիալական ստատուսն ունի նման շատ գծեր։ Նրանք կարծես թե մնում են «հասարակությունից դուրս», չեն օգտվում քաղաքական իրավունքներից։

Սաուդյան Արաբիայում սեփական բանվորական ձեռքերի պակասը առաջանում է նաև այն պատճառով, որ պահպանվում են կանանց աշխատանքի խիստ սահմանափակումները, որը լիակատար դարձավ 70-ական թվականների վերջին։ Կանանց վիճակը հասարակության մեջ որոշվում է շարիաթով իր ամենաուշկոմպրոմիսային ձևով, և ուլեմները, ղիջելով մյուս բնագավառներում, այս հարցում իրենց կարծիքը փաթաթում են իշխանությունների վզին։

Արաբիայի օազիսների ու քաղաքների բնակիչները ընդհանուր առմամբ գտնում են, որ կանանց համար հասարակության մեջ նախանշված է ավելի ցածր վիճակ, քան տղամարդկանց, քանի որ դա իբր թե որոշված է Ալլահի բարձրագույն կամքով, և վկայակոչում են Ղուրանը։ Այնտեղ նշված է, որ կինը բոլոր հավասար պայմանների դեպքում ժառանգում է միայն կեսը այն բանի, ինչ ժառանգում է տղամարդը։ Դատարանում մեկ տղամարդու վկայությունը հավասար է երկու կնոջ ցուցմունքին։ Ընդհանուր համոզմամբ, կանայք ենթակա են գայթակղության, և տղամարդիկ պետք է խիստ հետևեն նրանց։ Գրագիտությունը արաբուհիների մեջ դեռ մինչև վերջերս համարվում էր հազվագյուտ բացառություն։ Արաբուհու տեղը միայն տունն է, ոչ թե շուկան, հիմնարկը կամ հասարակական ժողովը։ Իհարկե «տուն» բառի տակ հասկացվում է ոչ թե ուղղակի ընտանիք, այլ նաև ավելի լայն տոհմական խումբ։

Եթե կինն աչքի է ընկնում ձեռներեցությամբ, և եթե նրա ընտանիքի տղամարդիկ չեն առարկում, ապա նա կարող է կրպակ բացել սեփական տանը, բայց վաճառել միայն կանանց համար։ Արաբիայում գնումների մեծ մասը կատարում է տղամարդը։ Եթե նույնիսկ շատ հարուստ կինը ցանկանա հիմնադրել որևէ ձեռնարկություն, նա պետք է հակառակ սեռից միջնորդ ունենա։

Որպես տնային ծառա արաբուհի վարձելը անհնարին է, քանի որ դա նշանակում է, որ նա պետք է ծառայի ուրիշ տղա-

մարդկանց։ Այդ դերը մինչև ստրկության վերացումը հարուստ տներում կատարում էին միայն ստրկուհիները։ Երբ մեծ թվով ստրկուհիներ ազատագրվեցին, շատերի համար կերակրվելու միակ միջոցը դարձավ անառակությունը։

Բնականաբար, երբ տարածվեց կրթությունը, կենցաղ մտավ հետուստացույցը, հայտնվեցին ավելի շատ օտարերկրացիներ, որոնք կնոջն այլ կերպ էին վերաբերվում, հին սովորույթները սկսեցին վերանալ։ Սակայն դա վերաբերում է միայն բնակչության փոքրամասնությանը։ Ծոցում առավել առաջադեմ համարվում են բահրեյնուհիները. նրանց մեծ մասը, շատ թե քիչ կրթություն ստանալով, զբաղվում է քարտուղարությամբ կամ այլ պաշտոնով։ Սակայն նույնիսկ Բահրեյնում մեզ համար այնպիսի ավանդական «կանացի» աշխատանքը, ինչպիսին ռեստորանի մատուցողն է, հետուստատիպավարը, հեռագրիչը, կատարում են միայն տղամարդիկ։

Սաուդյան Արաբիայում, որտեղ համառորեն փորձում են պահպանել կնոջ ստատուսը, այնուամենայնիվ սկսեցին միլիոնավոր դոլարներ ծախսել աղջիկներին կրթության տալու համար։ Սակայն միաժամանակ քիչ փող չի ծախսվում նաև այն բանի համար, որպեսզի անջատեն աղջիկներին տղաներից, պատանիներին՝ օրիորդներից։ Ջիդդա քաղաքի համալսարանում ուսանողուհիները դասի են գնում այնպես, ինչպես և աշխարհի մյուս բուհերում, սակայն նրանց չի թույլատրվում միևնույն լսարանում նստել պատանիների հետ։ Աղջիկները գտնվում են համալսարանի մյուս մասում և դասախոսություններին հետևում են հետուստացույցով։ Երբ նրանք հաճախում են գրադարան, ուսանող տղաներին այնտեղ թույլ չեն տալիս։ Սաուդիայում տղամարդկանց և կանանց արգելվում է աշխատել միևնույն հարկի տակ։ Ուստի նույնիսկ քարտուղարի պաշտոնը զբաղեցնում են միայն ուժեղ սեռի մարդիկ։ Կանանց արգելվում է ավտոմեքենա վարել, և նրանք չեն կարող սաուդյան ավիաընկերությունում ինքնաթիռի ուղեկցող աշխատել։

Աղջիկների դպրոցի կառավարման գլուխ կանգնած մարդը՝ նախկին դատավոր շեյխ Նասեր իբն Համադը, բառիս բուն իմաստով երբեք ոտք չի դրել այն ուսումնական հաստատության շեմին, որի համար նա պատասխանատվություն է կրում։ Նա ուսուցչուհիներին կարգադրություններ է անում հեռախոսով կամ գրավոր։

Թեև սոցիալական բուրգի ցածր շերտերի հիմնական մասը կազմում են օտարերկրացիները, «ստորին ցեղերը» և ազատ արձակվածները, բնավ էլ ոչ բոլոր սաուդացիներն են հարուստ կամ ապահովված։ Հասկանալի է, բնակչության մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտը անվանապես այստեղ ամենաբարձրն է աշխարհում՝ տարեկան 20 հազար դոլար, երկու անգամ բարձրը, քան ԱՄՆ-ում կամ Շվեդիայում։ Սակայն աշխատավարձի միջին մակարդակը 10 անգամ ցածր է, իսկ գյուղացիների բաժինը, որ կազմում է նախաձեռնություն դրսևորող բնակչության շուրջ մեկ քառորդը, ազգային համախառն արտադրանքում կազմում է ընդամենը մեկ տոկոս։

Խանութները լիքը լցված են պարենային ապրանքներով։ Սակայն երկրում առաջվա նման գոյություն ունի սով, մի բան, որը հաստատեց, մասնավորապես, «Ուկազ» թերթի կազմակերպած հարցումը։ Թերթի աշխատակիցների «Ո՞րն է ձեր հիմնական ցանկությունը» հարցին Ջիդդայի ծայրամասում ապրող ընտանիքների գլխավորների 11 տոկոսը պատասխանել էր. «Միջոց ունենալ շաբաթական մեկ անգամ միս գնելու համար»։

Վարչակարգը, նրա կողմնակիցները և հակառակորդները

Սաուդյան Արաբիայում, ինչպես նաև իշխանապետություններում կառավարող դասը, չնայած իր արխաիկությանը, ժամանակավորապես դուրս եկավ դիմացկուն ու համառ իշխանությունը պահպանելու հարցում և փորձում է հարմարվել փոփոխվող պայմաններին։ Ներկայումս Սաուդյան Արաբիայում նա ներկայացված է Սաուդիդների բազմաքանակ տոհմով, ֆեոդալացեղային և կրոնական վերնախավով, որի հետ կապված է սոցիալ-քաղաքական և ազգակցական կապերով, ինչպես նաև առևտրասպեկուլյացիոն բուրժուազիայով։ Հաշվեհարդար տեսնելով բանվորական շարժումների և հեղափոխական-դեմոկրատական օպոզիցիայի հետ, Սաուդիդները բավարարեցին կառավարող դասի մյուս օղակների, բյուրոկրատիայի, զինվորականության շահերը և ապահովեցին նրանց լոյալությունը։ Նրանք զգուշությամբ հաշվի են առնում կառավարող դասի մեջ գերակշռող պահպանողական շրջանների և ռեֆորմների ու որոշ չափով արդիականացման կողմնակիցների աճող թվի միջև։

Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև իշխանապետությունների,

կառավարող դասի յուրահատուկ, սակայն պարզ և աչքի ընկնող առանձնահատկությունն այն է, որ նա եկամուտների ճնշող մասը ստանում է ոչ թե արտադրության միջոցների և գործիքների մասնավոր սեփականությունից, դա լինի հող, անասուն, գործարաններ, ոչ թե ֆեոդալական ունեցվածքից, ոչ էլ արաբ աշխատավորական մասսաների շահագործումից: Հարստությունը նրա ձեռքն է հոսում շնորհիվ մերձավորարևելյան տիպի, իսլամով լուսավորված և շարիաթով օրինականացված ֆեոդալացեղային վերնախավի ունեցած դիրքի. վերջինս հենվում է պետական մեքենայի վրա, որի վերին էշելոնը կազմում է «Սաուդիդների ցեղը», ճնշման ապարատի՝ բանակի, ոստիկանության, դատարանի վրա, ռազմատոհմային կազմակերպությունների մնացորդների վրա: Նավթային միապետությունների վերնախավի եկամուտների հիմնական աղբյուրը ունիկալ հողային ռենտայի յուրացումն է, որ ստացվում է երկրի ընդերքում հսկայական քանակի նավթի առկայության շնորհիվ: Այդ հումքը մարդկային քաղաքակրթության զարգացման որոշակի փուլում դարձել է շատ անհրաժեշտ ապրանք, թեև արաբական հասարակությունը ոչ մի կապ չունի այն բանի հետ, որ մարդկությունը էներգիայի և քիմիական հումքի իր պահանջները սկսել է բավարարել հիմնականում նավթի հաշվին: Եթե այդ ժամանակ, անկասկած, իրագործվում է բանվորների համեմատաբար ոչ մեծ ջոկատի շահագործումը (մի քանի տասնյակ հազար կապալային ֆիրմաների հետ միասին), ապա նրանց աշխատանքի հավելյալ արտադրանքի բաժինը չնչին է արդյունահանվող հումքի ընդհանուր արժեքի համեմատությամբ: Սաուդյան Արաբիայի և իշխանապետության կառավարող դասը անուղղակի ձևով շահագործում է ամերիկյան, արևմտաեվրոպական և ճապոնական աշխատավորների նավթային սարքավորումների և տեխնոլոգիայի մեջ ներդրված աշխատանքը: Սակայն այդ նյութականացված աշխատանքը կազմում է արդյունահանված նավթի արժեքի աննշան մասը, որ օրենքով պատկանում է Արաբիայի ժողովրդին, բայց հափշտակվել է նրա կառավարողների կողմից:

Ֆեոդալացեղային վերնախավը սկսեց «բուրժուականանալ», այսինքն՝ մասնակցել հողի սպեկուլյացիային, ներմուծվել առևտրին, պետական կապալներին: Սակայն գործունեության այդ բոլոր տեսակները երկրորդական են, նավթի եկամուտնե-

րից ածանցված, իսկ հաճախ այդ «բիզնեսը» մակաբուծվում է նավթային ռենտայում:

Սաուդյան բարձր դասը, ինչպես նաև նավթային մյուս միապետությունների բարձր դասը, ձեռք բերեց մի հատկություն ևս:

Երկրի ներսում առավելապես մնալով որպես ֆեոդալական (թեև «բուրժուականացված») դաս, նրանք դարձան միջազգային ֆինանսական օլիգարխիայի մի մասը: Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի բանկերում և արժեթղթերում ներդրված վիթխարի չափերի միջոցները սաուդյան բարձր դասին դարձրին կապիտալիստական աշխարհի ազդեցիկ ֆինանսական խմբավորում, թեև կադրերի, բանակային ապարատի և փորձի պակասը նրա իրական ազդեցությունն ու կշիռը դարձնում են ավելի պակաս, քան նրա բանկային հաշիվների չափերն են: Սաուդիդների «սեփական» դրամի և պետական գանձարանի միջև եղած տարբերությունը երբեք այդ թագավորությունում այնքան էական չի եղել, որպեսզի հարցնեն, թե ում են պատկանում արտասահմանում ներդրված միջոցները: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների և տրանսազգային կորպորացիաների կանալների միջոցով սաուդյան կառավարող դասը մասնակցում է, թեև երկրորդական-երրորդական դերում, հաճախ որպես ռանտյե, զարգացած կապիտալիստական և զարգացող երկրների աշխատավորների շահագործմանը:

Նավթային ռենտայի բաշխումը Սաուդյան Արաբիայում իրականացվում է կենտրոնացված ուղիով՝ կամ եկամուտների մի մասը ուղղակի կառավարող դասի միջև բաշխելու, կամ կիսալեգալ պետական ինստիտուտ դարձած կաշառքի միջոցով: Միջոցների հիմնական շարժումը վերից վար է. միապետությունից դեպի նրա շրջապատը, ֆեոդալացեղային և կրոնական վերնախավը, վաճառականությունը: Դա նույնպես արաբական ֆեոդալական պետության նախկին գործունեության շարունակությունն է:

Առևտրում, հողի սպեկուլյացիայում, կապալներում, տնաշինության աղքատիկ արդյունաբերական գործունեության մեջ երկրում աճեց սեփական բուրժուազիան: Խոշոր առևտրական տների ստատուսը Սաուդյան Արաբիայի հասարակության մեջ 80-ական թվականներին արդեն հավասարվեց ազդեցիկ բեդվին շեյխերի ստատուսին, թեև առևտրականների հարստությունն

պատրաստի արտադրանք, հումք կամ սարքավորումներ ներմուծող, նրա գործակալը՝ կապալային աշխատանքների ժամանակ, և ձեռք է բերում բացահայտ կոմպրադորական բնույթ։ Ուստի Սաուդյան Արաբիայի և իշխանապետության խոշոր բուրժուազիայի վերաբերմամբ «ազգային» տերմինը կարելի է կիրառել միայն չակերտների մեջ առնելով կամ մեծ վերապահությամբ։

Ընդհանուր առմամբ լինելով ավելի լուսավորված և կրթված, քան «տիրապետող տոհմը», ուժեղացող սաուդյան բուրժուազիան պարզորոշ տեսնում է «վերևիններին» և «ստորիններին» միջև խորացող ճեղքի վտանգավորությունը և կարող է վախենալ նրանից, որ վարչակարգի աղաղակող արխաիզմը կհանգեցնի այնպիսի ուժի սոցիալական պայթյունի, որ կխորտակի ինչպես սաուդյան միապետության շենքը, այնպես էլ նոր ու հին վաճառականական տները։ Իրանի օրինակը չափազանց թարմ է։ Ուստի իր պահպանողականությամբ հանդերձ տեղական բուրժուազիան ռեֆորմների կողմնակից է։

Կա միայն կցկտուր ինֆորմացիա ազգային բուրժուազիայի միջին խավերի տրամադրությունների վերաբերյալ, որոնց կարելի է վերագրել ոչ խոշոր մեծածախ և մանրածախ առևտրականներին, ամրապնդվող հարուստ գյուղացիությանը, որը սկսել է տնտեսությունը վարել ֆերմերային ձևով, թեթև արդյունաբերության ոլորտի ոչ մեծ ձեռնարկությունների և արհեստանոցների, ավտոմեքենաների և կենցաղային տեխնիկայի նորոգման ծառայությունների տերերին։ Տնտեսական խառնաշփոթությունից կորզելով աճող եկամուտները, այդ խավերը դժգոհ էին քաղաքական իրավունքի լրիվ բացակայությունից։ Ի տարբերություն խոշոր առևտրական տների, նրանք ձայն չունեն նույնիսկ «տեխնիկական մակարդակով» ընդունված որոշումների համար։ Վատ կրթված, որպես կանոն ավանդապաշտներին հավատարիմ, ուժեմ աստվածաբանների ազդեցության տակ գտնվող այդ խավերը կարող են պահպանողական օպոզիցիա կազմել վարչակարգի դեմ, որը դժգոհ էր վերին դասի և՛ վարքագծի տարօրինակությունից, և՛ վատնողությունից, և՛ նրա չափավոր ռեֆորմներից, որոնք դիտվում են որպես անհանդուրժելի մոլորություններ։

Նավթի եկամուտներից ուղղակի կամ անուղղակի ձևով օգտվում էին միջին տիպի քաղաքային խավերը և խմբերը՝

անչափ մեծ է։ Նրա հիմքը առևտրի չարաշահումն է։ Սաուդյան խոշոր բուրժուազիան զգալի չափով մակաբուծվում է նավթի եկամուտներից, նավթային ռենտայից, յուրացնելով նրա մեծ մասը երկրորդ անգամ բաշխելիս և օգտագործելով սաուդյան հասարակության հետամնացությունը։ Հատկապես-դա է առաջացնում նրա սոցիալ-քաղաքական պահպանողականությունը։ Այն ամուր սերտաճել է վարչակարգի և անմիջապես Սաուդիդների «տիրապետող ցեղերի» հետ։ Գոյություն ունեցող վարչակարգը նրան հարմար է այնքանով, որքանով նպաստում է նրա արագ հարստացմանը, ճնշումների և կաշառքի միջոցով ապահովելով նրա անհրաժեշտ թեկուզև ժամանակավոր սոցիալական կայունությունը։ Պետությունը իրականացնում է սաուդյան ֆիրմաների ուղղակի կամ գաղտնի ֆինանսավորումը, նրանց տրամադրելով վարկեր և դրամական նպաստներ, շահավետ պատվերներ, ազատելով եկամտահարկից և ընկերության հարկից, մաքսից՝ սարքավորումներ, մեքենաներ և նյութեր ներմուծելիս։

Առևտրական տների միաձուլումը ֆեոդալացեղային դասի հետ տեղի է ունենում երկու ուղղությամբ։ Գայթակղիչ և բարձրաշահույթ շահադիտական-առևտրական գործունեությանը շրջվում է ամենից շատ ֆեոդալացեղային բարձր դասը՝ Սաուդիդների տոհմի ներկայացուցիչներից սկսած մինչև մանր ցեղային շեյխերը։ Սակայն Սաուդիդները ևս ստիպված էին «առաջ շարժվել» դեպի պետական ապարատի վերևները, հեղինակավոր և փողով պաշտոնները տրամադրելով վաճառականության ներկայացուցիչներին։ Մինիստրությունների, դեսպանությունների, խոշոր գերատեսչությունների ղեկավարների թվում հայտնվեցին առաջատար առևտրական տոհմի անդամներ կամ վստահելի անձինք։ Բավականին ճյուղավորված տոհմական ծառ չունեցող վաճառականական ընտանիքները և իր «զտարյունությամբ» ու հեռավոր նախնիներով հպարտ ֆեոդալացեղային բարձր դասի ներկայացուցիչները միմյանց հետ չեն ամուսնանում։ Սակայն դա չի խանգարում նրանց գործարար, սոցիալական և քաղաքական համագործակցությանը։

Միայն ներքին պատճառները չեն որոշում առևտրական բուրժուազիայի բարձր խավերի պահպանողականությունը։ Ավանդաբար համագործակցելով արտասահմանյան կապիտալի հետ, նա դառնում է այդ կապիտալի ուղղակի ներկայացուցիչը որպես

բյուրոկրատական ապարատի ծառայողները, բանակը, ոստիկանությունը, տեխնիկական մասնագետները, ուսուցիչները։ Կառավարական նպաստների միջոցով նշանակալից օգուտ էր ստանում դինաստիային հավատարիմ «ազնիվ» քոչվոր ցեղերի մի մասը։ Սակայն, ինչպես ցույց տվեցին Մեքքայի իրադարձությունները, վարչակարգի հետամնացությունն ու կաշառքը նրանից վանում են ոչ միայն հասարակության իրավազուրկ սոցիալական «ցածր» խավերին, այլև «ազնիվ» ցեղերի, «միջին» խավերի որոշ ներկայացուցիչներին։

Հատկապես «միջնակա» կամ «միջին» քաղաքային խավերից դուրս են գալիս առանձին խմբեր, որոնք ընդունակ են քաղաքական կազմակերպություն ստեղծելու։ Նրանցից վարչակարգի դեմ դուրս են գալիս հեղափոխական-դեմոկրատական օպոզիցիայի ներկայացուցիչներ՝ երիտասարդ սպաներ, ժուռնալիստներ, ուսուցիչներ, ծառայողներ, մանր առևտրականներ։ Նրանցից, ինչպես նաև սաուդյան բանվորներից առաջացան մի քանի ընդհատակյա հեղափոխական կազմակերպություններ։ Երկրում ստեղծված է կոմունիստական կուսակցություն, որը գնալով ավելի է ակտիվանում։

Այդ խավերի մեջ տարածում են գտնում կրոնական գունավորմամբ ավանդապահական հոսանքի օպոզիցիոն տրամադրությունները։ Ե՛վ նրանց, և՛ մյուսների համար ընդհանուրը կառավարող դասի և հակաիմպերիալիստական զգացումների դատապարտումն է։

«Վերևիններին» հարստացումը և միջնակա խավերի ծաղկումը միայն աննշան չափով ազդեց բնակչության մեծամասնության վրա։ Քիչ հող ունեցող կամ անհող գյուղացիությունը, քիչ ունևոր կամ չքավոր կիսաքոչվորները, մանր արհեստավորները՝ բոլորն իրենց ուսերին տանում են հասարակության այլանդակ կապիտալիստական ձևափոխության ծանրությունը։ Նրանց կենսամակարդակն ավելի քիչ բարձրացավ, քան թույլ են տալիս պետության աճող եկամուտները։ Պարենամթերքի ներմուծումը քայքայում է նստակյացներին և քոչվորներին։ Նրանց նոր զբաղմունքի՝ պրոլետարիատի շարքերն անցնելն ուղեկցվում է նախկին կացութաձևի, ապրելակերպի դժվար խորտակումով և բոլորովին էլ չի նշանակում կենսամակարդակի բարելավում։ Սաուդյան Արաբիայի բնակիչների մեծ մասի համար շահագործման մինչկապիտալիստական ձևերը համընկնում են կապիտալիստականի հետ։

Բարձր որակավորում ունեցող օտարերկրացիներն իրենց վրա վերցրին հասարակական-տնտեսական դերը, որը պետք է խաղային սաուդյան հասարակության «միջին խավերը», սակայն միաժամանակ կարծես թե հասարակությունից դուրս մնացին։ 80-ական թվականների սկզբին ինչպես որակյալ ներգաղթները, այնպես էլ սեագործ բանվորները կազմում էին արդեն վարձու աշխատողների ճնշող մեծամասնությունը ոչ միայն «միջին խավի», այլև բանվորների մեջ։ Որպես կանոն, նրանք տեղացիներ չեն դառնում և նոր պատմական ու սոցիալ-տնտեսական պայմաններում ժառանգում են մի դեր, որը ավանդապահ արաբական հասարակության մեջ հատկացվում է արհեստավորների, ազատարձակվածների, «ստորին ցեղերի» կաստային։ Ե՛վ մեկը, և՛ մյուսները կարող էին ձեռք բերել հարստություն ու ազդեցություն իրենց բնագավառում, սակայն երբեք չհավասարվեցին կառավարող արիստոկրատիային, չօգտվեցին քաղաքական իրավունքներից։

Դա ստեղծում է նոր բնույթի սոցիալական լարվածություն, չնայած առայժմ ներգաղթողները մնում են քաղաքականապես պասսիվ, քանի որ նրանք շահագրգռված են աշխատավարձով և գտնվում են ոստիկանության ու անվտանգության մարմինների խիստ հսկողության ներքո։

Նավթի միապետների հասարակության ընդհանուր բնութագիրը և կապիտալիստական հարաբերությունների զարգացման աստիճանը որոշելիս դժվար է գտնել գնահատման սանդղակ։ Եթե որպես չափանիշ ընդունենք կապիտալիստական տիպի ձեռնարկություններից ստացված եկամուտների բաժինը, այդ թվում նավթի հանույթը, ազգային համախառն արտադրանքի մեջ, ապա, թվում է, թե Սաուդյան Արաբիայի և իշխանապետությունների հասարակությունը կարելի է անվանել «կապիտալիստական» դեռևս 40-ական թվականների կեսերից, ինչը ակընհայտորեն անընդունելի է։ Իսկ եթե խոսենք մինչկապիտալիստական կացութաձևի հետ կապված անձանց քանակի կամ բաժնի մասին, ապա 80-ական թվականների սկզբին նրանք կազմում էին սաուդյան բուն բնակչության կեսից ավելին և իշխանապետության բնակիչների զգալի մասը։ Նավթի եկամուտները կառավարող դասի միջև բաշխելու ձևը նույնպես մեծ

մասամբ մինչկապիտալիստական է։ Երևի, տրամաբանական է 80-ական թվականների սկզբի Սաուդյան Արաբիայի և Պարսից ծոցի իշխանապետությունների մասին խոսել որպես ֆեոդալա-կապիտալիստական հասարակություն։ Բնական է, որ այդպիսի հասարակության մեջ, որտեղ կապիտալիզմը հիմնվել է կիսա-կաստայական կառուցվածքով բարդացված ֆեոդալացեղային հարաբերությունների վրա, սոցիալական սահմանները խորտակ-ված են և հաճախ ողողված-քշված։

Կենտրոնացված պետության ստեղծումը, միջցեղային պա-տերազմների և ասպատակությունների արգելքը, որպես անկախ քաղաքական միավոր ցեղերի կամ նրանց համադաշնակիցների գոյության դադարեցումը՝ այս բոլորը Սաուդյան Արաբիայի ցե-ղային կառուցվածքը թուլացրել էին դեռևս 30-ական թվական-ներին։ Ցեղային համերաշխության թուլացման պրոցեսը և այն ուրիշ սոցիալական կապերով փոխարինելը խիստ ուժեղացավ բեդվինների նստակեցությամբ, քաղաքների աճով, արդյունա-բերական և առևտրական գործունեության մեջ ցեղերի խառնը-վելով, բնակչության տեղափոխությամբ։

Սակայն Սաուդյան Արաբիան և իշխանապետությունները, ինչպես նաև ուժեղ ցեղային ավանդույթներով ուրիշ շատ եր-կրներ, ցույց են տալիս, որ արյունակցական կապերը պահ-պանվում են նաև սոցիալ-տնտեսական պայմաններում և ան-համեմատ ավելի կապրեն նրանց ծնող տնտեսական, հասարա-կական, աշխարհագրական, ռազմաքաղաքական և այլ պայման-ներից։ Արյունակից ազգակցությունը, տոհմին կամ ցեղին պատկանելը դեռևս որոշում են անհատի տեղը հասարակության մեջ, նրա առաջխաղացման հաջողությունը կամ անհաջողու-թյունը ինչպես ավանդական, այնպես էլ գործունեության նոր բնագավառներում։ Առաջնությունը հասարակության մեջ տըր-վում է ազգակցական խմբի շահերին և համերաշխությանը ընդդեմ անհատի և նրանց շահերի, ովքեր գտնվում են այդ խմբից դուրս։ Ընտանիքի անդամների, տոհմի, ցեղի նկատ-մամբ հովանավորությունն ու խնամիական վերաբերմունքն իշ-խում է էկոնոմիկայի բնագավառում, պետական բյուրոկրատիա-յում, զինված ուժերում։ Ընտանիքի պատվի և վարքագծի պահ-պանումը համարվում է կարևոր պատասխանատվություն, իսկ արյան վրեժի պարտականությունը կապում է նույնիսկ հեռա-

վոր ազգականներին։ Շեյխերի և ցեղի վերնախավի հեղինա-կությունը շատ բարձր է։

Մենք դիտավորյալ չենք օգտագործում Սաուդյան Արաբիային և իշխանապետություններին համապատասխան «տրայբալիզմ» բառը, քանի որ այդ տերմինը հաստատուն կերպով վերաբերում է Սահարայից հարավ գտնվող աֆրիկյան երկրների հասարա-կության հետազոտողներին, և կահմանափակվենք «արյունակ-ցական ու ցեղային կապեր» արտահայտությամբ։ Թեև իսլամը սկզբունքորեն ճանաչել է բոլոր մարդկանց հավասարությունը, բայց շատ հարյուրամյակների ընթացքում նա հաշտ ու խաղաղ ապրել է ցեղային և կիսակաստայական կառուցվածքի արաբա-կան հասարակության հետ։ Արյունակցական կապերը ներդրվել են իր էությամբ ֆեոդալական կառուցվածքի կենտրոնացված պետությունում՝ 30-ական թվականների սկզբին կազմավորված Սաուդյան Արաբիայում։ Բնական է, որ դրանք չէին կարող ան-հետանալ «նավթային դարաշրջանի» երեք-չորս տասնամյակի ընթացքում։ Սակայն կապիտալիստական հարաբերությունների և ամբողջությամբ վերցրած ամեն մի արդիականացման զար-գացմանը չեն կարող նպաստել իրազեկությունից, աշխա-տասիրությունից և այլ գործնական հատկություններից վեր դասված տոհմական կապերի ավանդույթները. անձնական վստահությունը և համակրանքը բարձր են հաշվապահական ճշգրտությունից։

Արյունակցական կապերը առաջվա նման սքողում են և՛ դասակարգային շահագործումը, և՛ դասակարգային սահմանա-գծերը արաբական հասարակության մեջ։ Ցեղային փոխօգնությու-նը, տիրոջ և հաճախորդի հարաբերությունը, տոհմի կամ ցեղի գլխավորի նահապետական հեղինակությունը հաճախ ավելի ուժեղ են նոր սոցիալական կապերից և դասակարգային պատ-կանելությունից։

Սակայն թեև սաուդյան հասարակության մեջ ընտանեկան կապերը մնում են զորավոր, նրանց բնույթը կամաց-կամաց փոխվում է։ Ցեղային միավորումները աստիճանաբար տեղը զի-ջում են առավել սահմանափակ չափերի ընտանեկան խմբերին։ Այդ փոփոխությունները հատկապես զգացվում են ժամանակա-կից կրթություն ստացած խավերի, չինովնիկների, առևտրակա-նների, մտավորականության, որակյալ բանվորների միջև։ Կրթե-ված սաուդացիներն ավելի շատ ձգտում են միամուսնության։

Բազմակնությունը աստիճանաբար անհետանում է այդ միջավայրում ոչ միայն այն պատճառով, որ ամուսնության գինը դառնում է անչափ բարձր, այլ նաև այն պատճառով, որ միամուսնությունը ավելի շատ է համապատասխանում նոր ապրելակերպին և ժամանակակից մարդու գործունեությանը: Նույն այդ ընտանիքներում կողմնակից են այն բանին, որ կրթության տան իրենց աղջիկներին և նույնիսկ կանանց: Նման ընտանեկան օջախների գոյությունը արտացոլում է ապրելակերպի և մտածողության էվոլյուցիան, որն առաջանում է և՛ կրթության ու փորձի նոր ձևերով, և՛ սերունդների կոնֆլիկտներով:

Հիշեցնենք, որ ինքնին «արաբներ» բառը Արաբիայում նշանակում էր առաջին հերթին քոչվորներ, բեդվին ցեղեր: Այն չէր տարածվում տոհմական հողագործ-ֆելլահների և ազատ արձակվածների «ստորին ցեղերի» ու արհեստավորների վրա: «Արաբ» բառի լայն կիրառումը արդեն XX դարի արդյունք է:

Ազգային գիտակցությունը, այսինքն՝ այն գիտակցությունը, որ ինքը պատկանում է «սաուդաարաբական ազգին», Սաուդյան Արաբիայում քիչ է զարգացած: Պարսից ծոցի իշխանապետությունների համար, բացառությամբ Օմանի, այդ միտումների մասին չարժե խոսել: Դա հաստատեցին նաև արևմտյան հետազոտողները: Կոմունիկացիայի և ինֆորմացիայի նոր միջոցների հանդես գալը, տարբեր մարզերի տնտեսական փոխկախվածության ուժեղացումը, շփումը օտարերկրացիների հետ և ուղեվորություններն արտասահման, որոնք ցուցադրում էին Սաուդյան Արաբիայի և նրա սահմաններից դուրս մշակույթի ու ապրելակերպի տարբերությունը, արագացրին և՛ ազգի կազմավորումը, և՛ ազգային պատկանելության զգացումի ի հայտ գալը: Սակայն «սաուդական ազգի», նույնիսկ աղոտ որոշված «ալումմա», «ալ-արաբիյա», «համաարաբական ազգի» իրական կազմավորումը դեռ հեռու է այն մակարդակից, որին հասել են, օրինակ, Եգիպտոսում կամ Սիրիայում: Ջնայած լեզվի, մշակույթի, պատմության ընդհանրությանը, տարածքի միասնությանը, ստեղծված տնտեսական միասնությանը, ընտանեկան-ցեղային և կրոնական կապերը մնում են ավելի հզոր, քան «ընդհանուր ազգայինը»:

Ազգային տարածքային պետության՝ հայրենիքի, գաղափարն իսկ նոր է արաբ ժողովրդի համար: «Հայրենիքի» ըմբռնումը, որին իր նվիրվածությունը մարդը ցուցադրում է ամենից առաջ,

հակասում է իսլամի ոգուն, որը շեշտը դնում է հավատացյալների համակողմանի ընդհանրության վրա ի հակադրություն ոչ մուսուլմանների, և ոչ թե ազգային խմբերի վրա, որոնք տարբերվում են մեկը մյուսից:

Սաուդյան Արաբիայում ազգային գիտակցությունը և ազգայնական զգացմունքները մինչև վերջերս սահմանափակվում էին տնտեսության, ժամանակակից սեկտորի, քաղաքացիական և զինվորական բյուրոկրատիայի ու կրթության համակարգի հետ կապված բնակչության ոչ մեծ խավերով: Նրանք, ովքեր իրենց կոչում էին «ազգայնականներ», ավելի շուտ ռեֆորմիստներ էին և մոդեռնիստներ: Սակայն այդ զգացմունքներն այնքան աղոտ էին, որ «ազգայնականների» ձախ թևը մերժեց նույնիսկ նրանց ժողովրդին և ազգին անվանել «սաուդյան», գտնելով, որ այն կապված է Սաուդիների դինաստիայի հետ:

Սաուդյան Արաբիայում և իշխանապետություններում փոփոխությունները տեղի էին ունենում ավելի արագ, քան Մերձավոր արևելքի մյուս երկրներում: Հին հասարակական հաշվեկշիռը խախտված է և ընդմիշտ կորսված: Նավթի միապետությունները բախվեցին մինչ այդ իրենց անհայտ ներքին սուր հակասությունների հետ: Դա բացատրվում էր դասակարգային կառուցվածքի փոփոխություններով, բուրժուազիայի աստիճանական հզորացմամբ, բանվոր դասակարգի աճով, արյունակցական և ցեղային կապերի թուլացումով, տարբեր դասակարգերի և սոցիալական խմբավորումների շահերի բախմամբ, ավանդական հասկացությունների և նոր սոցիալ-քաղաքական գաղափարների, ժամանակակից և ավանդական օպոզիցիայի աճով: Սակայն թագավորությունում և նրա հարևանների մոտ սոցիալական լարվածության աստիճանը մեզ համար դժվար է որոշել: Սաուդյան մամուլը, օրինակ, բոլորովին չի արտացոլում հասարակական պրոբլեմները, քաղաքական կուսակցությունները, արհմիությունները, ակումբները, ժողովները արգելված են, հեղափոխական-դեմոկրատական օպոզիցիան քշվել է ընդհատակ կամ արտագաղթել է, ուստի վկայություններն ու փաստերը կարող են լինել միայն անուղղակի և եզակի:

Մինչև Մեքքայի և Արևելյան նահանգների դեպքերը թվում էր, թե Սաուդյան Արաբիայում և իշխանապետություններում պայթյունավտանգ իրադարձություններ չկան: Ապստամբների ջախջախումը ցույց տվեց, որ կառավարող դասերը մնացին իշ-

խանության գլուխ և ցուցադրեցին, որ մտադիր չեն բաժանվել նրանից։ Որոշ ռեֆորմներ իրականացնում են հատկապես նրանք և ոչ թե «միջին խավի», բանակի կամ բյուրոկրատիայի, բուրժուական կամ բուրժուադեմոկրատական «ռազնոչինեցների» ներկայացուցիչները։ Փոփոխությունները կատարվում են զգուշությամբ, բյուրոկրատական ապարատում, զինված ուժերում և գործարար շրջաններում, ժամանակակից կրթություն ստացած խավերի ճնշման տակ, որպեսզի պատասխան տան նոր սոցիալ-տնտեսական պահանջներին։ Ներքին «մոդեռնացման» օգնությամբ կառավարող դասերը փորձում են իրենց զերծ պահել ավելի վատից, իրենց համար վտանգավոր սոցիալական ցնցումներից։ Գիտակցելով, որ առանց ժամանակակից գիտելիքների յոլա գնալ չեն կարող, կառավարող տոհմերը սկսեցին իրենց անդամների համար գնել ամենալավ կրթությունը և դրա հետ միասին բյուրոկրատական ապարատի վերնախավը համալրել կրթված, բայց վարչակարգի նկատմամբ օրինապահ մյուս սոցիալական խմբերի, հատկապես առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներով։

Ճնշված դասակարգերին և բնակչության խավերին (սկած բանվորներից մինչև ազատարձակվածները և շիաներից մինչև ներգաղթողները) հնազանդության մեջ պահելու համար կառավարող դասը կատարելագործում ու ամրապնդում է ճնշումների ապարատը և զինված ուժերը։ Անվտանգության մարմինները և զինված ուժերն առանց տատանվելու ձեռնամուխ են լինում դաժանորեն ճնշելու հեղափոխական-դեմոկրատական և ամեն մի այլ օպոզիցիա։

Տիրապետելով նավթային եկամուտներին, որը հսկայական չափեր էր ընդունել, միապետները մինչև վերջին ժամանակները հաջողությամբ «փրկվում էին» արմատական փոփոխություններ կատարելու պահանջներից։ Մշտապես դժգոհ և քաղաքականապես ակտիվ անձանց կլանում էր ուռճացող, անարդյունավետ, բայց հեղինակավոր և լավ վարձատրվող պետական ապարատը։ Տնտեսական իրարանցման մեջ հարստություն էին դիզում բավական լայն խավերը։ Վարչակարգերը առայժմ իրենց համար ապահովում էին բավական ամուր և լայն սոցիալական բազա՝ հանձինս «միջին» քաղաքային խավերի և թագավորական նպաստ ստացող «ազնիվ» քոչվոր ցեղերի ու բյուրոկրատիայի, պահպանողականորեն տրամադրված վաճառականության և առաջացող

արդյունաբերական բուրժուազիայի։ Սակայն նավթային միապետություններում հասարակության առանձնահատկությունն այն է, որ ճնշվածների, շահագործվող դասերի և բնակչության այն խավերի զգալի մասը, որ կարող էր պոտենցիալ թշնամի լինել վարչակարգին, երկար ժամանակ մնում էր խավարում և տգիտության մեջ, գտնվում էր ցեղային շեյխերի և մյուս ավանդապահ լիդերների, ուլեմ-աստվածաբանների ազդեցության տակ, որոշ չափով «կերակրվում էր» իշխանության կողմից և պահպանողականորեն էր տրամադրված։

Հենց այդ վերևից տեղի ունեցող ռեֆորմների, ճնշումների, բնակչության զգալի մասի կաշառման և արաբական հասարակության պահպանողականության զուգակցումն էլ առժամանակ ապահովում էր երկրագնդի ամենահետամնաց վարչակարգերից մեկի կայունությունը։ Սակայն հասարակության մեջ տեղի ունեցող հենց սոցիալ-տնտեսական փոփոխությունները և նույնիսկ վերևից հարկադրաբար մտցված արդիականացման տարրերը կոնֆլիկտի համար լայն բազա են ստեղծում վարչակարգերի և այն հասարակական դասակարգերի ու խավերի միջև, որոնք ձգտում են ավելի խոր ռեֆորմների, իսկ վերջին հաշվով՝ իշխանության գրավման։

Սաուդյան Արաբիայում և իշխանապետություններում հին հասարակական հաշվեկշիռը խախտված է, սակայն նորը, չնայած բոլոր հենարաններին ու մասնավոր միջոցառումներին, չի ստեղծված։ Նման վիճակը անկայուն է և հղի ամենաանսպասելի սոցիալական պայթյուններով։ Մեքքայի իրադարձությունների դասերը դրա վառ վկայությունն են։

Խաբուսիկ հզորություն

Սաուդյան Արաբիայի զինված ուժերը սկսեցին բուռն կերպով աճել 60-ական թվականներին, իսկ 80-ականների սկզբին նրանց ծախսերն ընդունեցին ուղղակի ֆանտաստիկ չափեր, նույնիսկ եթե անտեսենք կաշառակերությունն ու կոռուպցիան։ 1977 թվականին թագավորությունն առաջ անցավ Իրանից որպես աշխարհում ամերիկյան զենքի առաջին գնորդ, իսկ 1981 թվականին ռազմական բյուջեում ներդրվեց ավելի քան 20 միլիարդ դոլար։ Դա նշանակում էր, տարեկան 4—5 հազար դոլար յուրաքանչյուր տղամարդուն, կնոջը, երեխային և ծերունուն՝ շուրջ

տասն անգամ շատ, քան ՆԱՏՕ-ի բարձր ռազմականացված երկրներում: Իհարկե, այդ միջոցների նշանակալից մասը գնում է ինֆրակառուցվածքների և զինվորական ավանների (անխուսափելիորեն միլիարդները գնում էին իշխանավորների գրպանները), ճանապարհների և ուսումնական հաստատությունների շինարարության վրա: Բայց այն, ինչ մնում էր, ոչ բոլորն էր ներդրվում «օրինական պաշտպանության» խնդիրների մեջ:

1965 թվականին երկրի զինված ուժերում հաշվվում էին շուրջ 40 հազար մարդ, ներառյալ բանակը, ոչ մեծ ՌՕՈՒ-ն, շատ փոքր նավատորմը, ինչպես նաև ազգային գվարդիան: Կանոնավոր բանակը և ազգային գվարդիան ունեին մոտ 20-հազարական մարդ:

Բանակի և ազգային գվարդիայի բարձրագույն հրամանատարներն ընտրվում էին թագավորական ընտանիքի անդամներից, որոնք նվիրված էին թագավորին անբասիր հավատարմությամբ: Բանակային սպաները հավաքագրվում էին հատկապես մայրաքաղաքի մերձավոր շրջանից՝ Աբհդից: 1960 թվականի մարտի 20-ի հատուկ դեկրետով բանակին արգելված էր զբաղվել քաղաքականությամբ:

Շատ արագաշարժ և լավ զինված ազգային գվարդիան մինչև 60-ական թվականների սկիզբը անմիջապես ենթարկվում էր թագավորին, իսկ հետո Սաուդիների ազդեցիկ տոհմի անդամ Աբդալլահ իբն Աբդ ալ-Ազիզին: Այդ գվարդիան ոստիկանությանն օգնում էր կարգ ու կանոնը և անվտանգությունը պահպանելու գործում և ծառայում էր բանակի ազդեցությունը հավասարակշռելու համար: Ազգային գվարդիայի անդամներին հավաքում էին թագավորին հավատարիմ «ազնիվ ցեղերից», մինչդեռ ոստիկանությունն ու բանակը հավաքագրվում էր բնակչության բոլոր խմբերից: Ազգային գվարդիայի սուորաբաժանումները սովորաբար մեկուսացվում էին բնակչությունից:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սպառազինության գլխավոր աղբյուրը ԱՄՆ-ն էր: Նա էլ ուղարկում էր հրահանգիչների մեծ մասին: 1951 թվականին ԱՄՆ-ը և Սաուդյան Արաբիան օգնության և փոխադարձ պաշտպանության վերաբերյալ համաձայնություն կնքեցին: ԱՄՆ-ը պահպանեց Դահրանում գտնվող բազան և նոր զենք ու հանդերձանք տրամադրեց: 1952 թվականին անգլիական ներկայացուցչության փոխարեն, որ ետ էր կանչվել էլ-Բուրայմիում ծագած կոնֆլիկտի հետևանքով, ԱՄՆ-ը հատուկ ներկայացուցչություն ուղարկեց սաուդյան բանակին նախապատրաստելու համար: 1957 թվականին հինգ տարով երկարաձգվեց Դահրանի վարձակալությունը, և ԱՄՆ-ը շարունակում էր մասնակցել սաուդյան զինված ուժերի նախապատրաստությանը: 1962 թվականին սաուդյան կառավարությունը հրաժարվեց Դահրանի բազաները վարձակալության տալ: Բայց ամերիկյան հրահանգիչների ռազմական ներկայացուցչությունը պահպանվեց:

80-ական թվականների սկզբին բանակում կար 45 հազար մարդ, ունենալով 75 միջին և ծանր տանկ, 150 թեթև տանկ, 400 զրահատրանսպորտյոր, ավիացիայում՝ մոտ 15 հազար մարդ (հարյուր հիսուն ժամանակակից մարտական ինքնաթիռներ, 33 տրանսպորտային, 40 ուղղաթիռ), ՌՆՆ-ում կար մոտ 2500 մարդ, մեկուսի կանգնած ազգային գվարդիան հաշվվում էր 25—30 հազար: Սպառազինությունը հիմնականում ներմուծվում էր ԱՄՆ-ից, ինչպես նաև Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից:

Սաուդացիները սկսեցին միլիարդավոր դոլարների հասնող ռազմական կուտակումներ կատարել, այն հաշվով, որպեսզի 80-ական թվականներին արդիականացնեն իրենց զինված ուժերը: Ռազմական համալիրներ են հայտնվում ամբողջ երկրում, ռազմածովային բազաներ են կառուցվում Կարմիր ծովում և Պարսից ծոցում, նոր ավիաբազա է ստեղծվում Թաբուկում, Սաուդյան Արաբիայի հյուսիսարևմտյան մասում, բացի դրանից, ժամանակակից զենքի պատկառելի տեսակակազմը ճանապարհ է գրտնում դեպի սաուդյան պահեստները: Սաուդյան զինանոցում արդեն երկու էսկադրիլիա անգլիական արտադրության «Լայթնինգ» գրոհային ինքնաթիռ կա, երկու էսկադրիլիա F—5 ինքնաթիռ, «Հոկ» հրթիռային համակարգ, «օդ-օդ» դասի «Սայդուինդեր» և «Մավերիկ» հրթիռներ, ինչպես նաև ժամանակակից տանկեր և հրանոթային համակարգեր: Աճող ռազմական մեքենայի նոր լրացնողներն են՝ էր-Ռիյադի մոտերքում գտնվող տակտիկական հրթիռներ արտադրող գործարանը և ամերիկյան արտադրության «F—15» կործանիչները:

«Չնայած ամբողջ մարտական տեխնիկային, որ նա ունի, Սաուդյան Արաբիան մնում է երկրորդական կարգի ռազմական պետություն,— դեռևս 1978 թվականի ապրիլին գրել է ամերիկյան «Նյուսուիկ» հանդեսը:— Նրա մշտական բանակն ավելի փոքր է, քան Հորդանանինը: Սաուդացիները զինվորական ավանդությ-

ներ չունեն ժամանակակից առումով, և զինվորներին, որոնք ոչ շատ վաղուց ավազուտների միջով ուղտեր էին քշում, առաջարկում են գլուխ հանել էլեկտրական սարքավորումներով հանդերձված հրթիռային համակարգերից ու գերձայնային հրթիռային կործանիչներից։ Որպեսզի նրանց ռազմական մեքենան «չճռռա», նրանք պետք է հենվեն ամերիկյան խորհրդատուների և տեխնիկական մասնագետների վրա, և այդ վիճակը կշարունակվի դեռ շատ տարիներ»։

«Ոչ ոք լրջորեն չի սպասում, թե կանոնավոր զինված ուժերը, ինչպես նաև կիսազինվորական կազմավորումները կկարողանան պաշտպանել թագավորության հսկայական տարածքը և նրա հիմնական նավթահանքերը հակառակորդի խոշոր ու լավ զինված ուժերի ներխուժման դեպքում, էլ չենք խոսում արդեն լուրջ հարձակողական գործողությունների մասին,— 1980 թվականի մայիսին գրում էր «Ֆայնենշըլ թայմսը»։— Սաուդյան զինված ուժերը հազիվ թե կարողանան դիմակայել Իսրայելի հարձակմանը հյուսիսարևմտյան շրջանում, հյուսիսարևելյան շրջանում Իրաքի հարձակմանը կամ երկու եմենների համատեղ հարձակմանը հարավարևմտյան շրջանում։ Նրանք կկարողանան կասեցնել միայն մեկ եմենի հարձակումը։ Սակայն այս բոլորը խիստ տեսական ենթադրություններ են։ Ավելի հավանական սպառնալիք են ներկայացնում սաուդյան քաղաքների վրա օդային հարձակումների հնարավորությունը, սահմանային ընդհարումները, նման նրանց, որոնք ժամանակ առ ժամանակ բռնկվում են ԵԺԴՀ-ի, իսկ վերջերս ԵԱՀ-ի սահմանում, ինչպես նաև տեռորիստական հարձակումները սահմանամերձ շրջաններում, հարձակումները օազիսների վրա և շեյխերի սպանությունները»։ Այս բոլորը պրովոկացիոն երանգ ունեցող դատողություններ են. ո՛չ երկու եմենները, ո՛չ Իրաքը չեն հարձակվել և մտադիր չեն հարձակվելու Սաուդյան Արաբիայի վրա։ Սակայն նրա զինված ուժերի թուլության ճանաչումը գերածախսերի դեպքում բազմանշանակ է։

Թագավորությունում առաջին պլան է քաշվում թագավորական ընտանիքի պաշտպանության անհրաժեշտությունը։ Գրտնում են, որ նրա շահերը պահանջում են, որպեսզի զինված ուժերը չափազանց արդյունավետ չլինեն, որպեսզի նրանց միջև չափազանց սերտ փոխգործողություն չլինի և որ նրանք նախաձեռնության հանդես չբերեն։ Պարտադիր չէ, որ թագավորական

ընտանիքի շահերին հակասի այն հանգամանքը, թե զինված ուժերի ղեկավարությունը հնարավորություն է ընձեռում հարստանալու նրանց, ովքեր գլխավորում են վիթխարի բյուջե ունեցող ռազմական գերատեսչությունը։

Սաուդացիները վատ չեն տիրապետում տեխնիկային, բայց չափազանց վատ կարող են պահպանել կամ վերանորոգել այն։ Ուստի նրանց կախվածությունը օտարերկրյա մասնագետներից իսկապես կմնա մշտական։ «Ներկայումս երկրում ընդամենը միայն ԱՄՆ-ի ռազմական ներկայացուցչությանը կից գտնվում է 10 հազար ամերիկացի։ 2 հազար մասնագետ ունի «Բրիթիշ էյրսփեյս կորպորեյշընը» (սպասարկում է սաուդյան ՌՕՈՒ-ին)։ Նրանց դերը հնարավոր ռազմական գործողությունները կամ ներքին անկարգությունները ճնշելու գործում անորոշ է»,— գրում էր «Ֆայնենշըլ թայմսը»։

Կարգապահությունը զորքերում և ազգային գվարդիայում հիմնականում թույլ է։ Միայն վերջերս զինվորներին արգելեցին աշխատել որպես տաքսու վարորդ, մի բան, որ նրանք կատարում էին ծառայության ժամերին։

Արևմտագերմանական «Շպիգել» հանդեսը 1980 թվականի ապրիլի 14-ի համարում հրապարակել էր մի հարցազրույց, որ տվել էր նրան Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի մինիստրը Սաուդ ալ-Ֆեյսալը։

Հարց։ Արտասահմանյան որոշ դիվանագետներ ասում են, որ Սաուդյան Արաբիան՝ Արևմուտքի հիմնական հենարանը Մերձավոր արևելքում, կարող է քաղաքական առումով դիմանալ երկուսից մինչև հինգ տարի, ոչ ավելի, եթե ենթադրենք, որ Պարսից ծոցի մյուս պետություններն ավելի շուտ չկործանվեն։ Դուք ի՞նչ կարող եք ասել այս մարգարեությունների կապակցությամբ։

Պատասխան։ Դրանք ճիշտ չեն։ 50 տարվա ընթացքում մեկ միջադեպը չի կարող ամբողջությամբ խախտել կայունությունը։ Չեզ մոտ՝ Գերմանիայում (ԳՖՀ), ավելի շատ տեռորիստական գործողություններ են եղել, քան մեզ մոտ՝ Սաուդյան Արաբիայում։ Չէ որ դուք չեք մտածում, որ դրա պատճառով ձեր կառավարական սիստեմը անկում է ապրում։

Սաուդյան Արաբիայում կառավարող դասի երկակի բնույթը՝ «բուրժուականացված» ֆեոդալները երկրի ներսում և յուրահատուկ ֆինանսական բուրժուազիան միջազգային ասպա-

րեղում, որոշում է նրա արտաքին քաղաքականության երբեմն թվացող, երբեմն իրական հակասությունը։ Որպես ԱՄՆ-ի դաշնակից և կլիենտ, որպես շահերի ընդհանրությամբ միացած միջազգային ֆինանսական կապիտալի բաղկացուցիչ մաս, սաուդյան թագավորական վարչակարգը պետք է աջակցեր ամերիկյան արտաքին քաղաքական գործողություններին։ Սակայն որպես պահապան իսլամի սրբազան վայրերի, մուսուլման—«միասնվածության» համայնքների իմամի, Սաուդյան Արաբիայի ուղղահավատների գլխավոր հրամանատար թագավորի (կառավարող տոհմի շահերի արտահայտիչը, որ շահագրգռված է վարչակարգի ներքին կայունությամբ), ստիպված էր հանդես գալ իսրայելական ագրեսիայի, սիոնիզմի դեմ, նավթային էմբարգո հայտարարել Միացյալ Նահանգներին, աջակցել Պաղեստինի արաբական ժողովրդի արդար գործին, պահանջել Արևելյան Երուսաղեմը իր Ալ-Աքս մզկիթի հետ միասին ազատել «անհավատների» ազդեցությունից, դատապարտել Քեմփ-Դեվիդի համաձայնագիրը, սեպարատ հաշտությունը Եգիպտոսի և Իսրայելի միջև։

Իր արտաքին քաղաքական կապերի մեջ ԱՄՆ-ը ամենից շատ ուշադրություն է դարձնում Էր-Ռիյադին։ Նրա կախվածությունը Վաշինգտոնից ամենից առաջ հաղթում է արտաքին քաղաքականության կարգի ամեն տեսակ նկատառումներ։ Վաշինգտոնի թելադրանքով, որը պնդում է, որ իբր թե Սաուդյան Արաբիային արտաքին վտանգ է սպառնում, և իբր թե ինքը պատրաստ է նրան «պաշտպանել», նա ձեռք է բերում զգալիորեն ավելի շատ նավթ, քան պահանջում են նրա տնտեսական շահերը, որպեսզի օգնի աշխարհում ամենախոշոր էներգասպառողին և կայունացնի հեղուկ վառելիքի գինը։

«Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության անկյունաքարը նրա սերտ և փոխշահավետ կապերն են Միացյալ Նահանգների հետ,— 1978 թվականի մարտին գրում էր ամերիկյան «Նյուսուիք» հանդեսը։— Սաուդացիների համար տեղ է հատկացված ամերիկյան ռազմական հովանոցի ներքո, նրանց համար ապահովված է տեխնիկական օգնության մշտական հոսքը և առաջնությունը առևտրական գործերում։ Դրա փոխարեն ԱՄՆ-ը ստանում է Սաուդյան Արաբիայում ներդրված դոլարների զգալի բաժինը՝ ամենապակասը 35 միլիարդ դոլար միայն հիմնական գանձատան փոխառության բաժնետոմսերով և միլիարդավոր դոլարների այլ դոլարային ավուարներ, ինչպես նաև բավական որոշակի երաշխիք նավթի նրանց ապագա պահանջարկի նկատմամբ։ Արդեն հիմա Սաուդյան Արաբիան 20 տոկոսով ապահովում է ԱՄՆ արտահանվող նավթի մատակարարումները, և այդ տոկոսը, դատելով եղած բոլոր կանխագուշակումներից, խիստ կաճի 80-ական թվականներին։ Դա այն փաստի հետ միասին, որ սաուդյան «նավթադոլարների» միլիարդները ԱՄՆ-ում գտնվում են շրջանառության մեջ, սերտ կապերը բացառիկ կարևոր է դարձնում ամերիկյան տեսանկյունով։ Բացառությամբ Մերձավոր արևելքում խաղաղ կարգավորման պայմանների, Սաուդյան Արաբիան և ԱՄՆ-ը հայացքներով փաստորեն միջազգային ամենակարևոր բոլոր հարցերում համընկնում են»։

Սաուդիների տոհմի ավանդական և ամուր կապերը ամերիկացիների հետ կազմում են ամերիկա-սաուդյան միության կենդանի հյուսվածքը։ Թագավորական ընտանիքի կրտսեր սերընդի մեծ թվով ներկայացուցիչներ կրթություն են ստացել ԱՄՆ-ում՝ Հարվարդում, Պրինստոնում, Կալիֆոռնիայի համալսարանում, Լոս Անջելեսում։ Սաուդյան նավթի հանույթի մեծ մասը արտահանող ԱՐԱՄԿՈ-ն այստեղ ամուր և հին կապեր ունի։ Եվս մեկ կամուրջ՝ ամերիկյան ռազմական մեծ միսիան, որի ներկայացուցիչները աշխատում են սաուդյան ցամաքային զորքերում և ՌՕՈՒ-ում։ ԿՀՎ-ի ներկայացուցիչները հսկում են Սաուդյան Արաբիային, օգնելով վարչակարգի ամրապնդմանը։

Սաուդյան կառավարող դասի կարծիքով Վաշինգտոնը բավական ակտիվորեն չմիջամտեց շահի փրկության գործին, և Էր-Ռիյադում սկսեցին հարց տալ. իսկ ինչպե՞ս կդրսևորեն իրենց ամերիկյան հովանավորները թագավորությունը խարխլվելու դեպքում։ Ռեգիոնում ԱՄՆ-ի ագրեսիվության ուժեղացումը, նրա «ռազմական ներկայությունը», «արագ ծավալման ուժերի» ստեղծումը առաջ են բերում Էր-Ռիյադի և՛ հավանությունը, և՛ երկյուղը։

Սաուդյան Արաբիայի պաշտոնական կառավարությունը պնդում է, որ ինքը չի ցանկանում ամերիկյան զորքերի ներկայությունը Պարսից ծոցի շրջանում կամ հենց թագավորությունում, և որ այդ շրջանի երկրները, ներառյալ Սաուդյան Արաբիան, հաջողությամբ կարող են իրենք իրենց պաշտպանել։ Սակայն իրականում նա դեմ չէ, որ ԱՄՆ-ը ռազմական բազաներ

ունենա Օմանում, Սոմալիում և Քենիայում, այնտեղ ամերիկյան զորքերի առկայությամբ, և որ «արագ ծավալման ուժերի» ավիացիոն և ծովային զորամասերի համար ստեղծվեն հանդերձանքի պահեստներ ու պաշարներ: Սաուդյան Արաբիան կարող է օգնել ֆինանսավորելու այն երկրների ռազմական գործարքները, որոնք նույնպիսի միջոցներ կձեռնարկեն ԱՄՆ-ի զինված ուժերի համար:

Ինչ վերաբերում է ամերիկացիների կողմից հենց թագավորությունում ռազմական կառույցները օգտագործելուն կամ նրա տարածքում ամերիկյան զորքերի տեղաբաշխմանը, ապա դա հանդիսավորապես մերժվում է: Կառավարող տոհմը ամերիկացիներից լավ է հասկանում, թե օտարերկրյա զորքերի ներկայությունը թագավորության տարածքում ինչպես է ապակայունացնում իրադրությունը:

Սակայն, Սաուդյան Արաբիայի զինված ուժերում ունենալով մոտ 10 հազար զինվորական և քաղաքացիական մասնագետներ, որոնք գտնվում են բոլոր ռազմական բազաներում, ԱՄՆ-ը կարող էր շատ հեշտությամբ դրանք օգտագործել իր ռազմական ինքնաթիռների և նավերի համար, այստեղ «արագ ծավալման ուժերի» անմիջապես հայտնվելու համար:

Էր-Ռիյադում հասկանում են, որ վարչակարգի ներքին և արտաքին անվտանգությունը կախված է նաև հենց արաբական աշխարհի կայունությունից, թեև այդ տեսակետը ԱՄՆ-ի կառավարությունը հաշվի չի առնում: Այդ շրջանում հիմնական ապակայունացնող գործոնը արաբա-իսրայելական կոնֆլիկտն է, պաղեստինյան պրոբլեմը, որի նկատմամբ Սաուդյան Արաբիան, որպես իսլամի սրբավայրերի պահապան, չի կարող անտարբեր մնալ:

Եգիպտոսի և Իսրայելի միջև քեմփդևիդյան համաձայնագիրը ԱՄՆ-ի հովանու ներքո էր-Ռիյադում ընդունվեց որպես սաուդյան քաղաքականության պարտություն: 1973 թվականի ընթացքում թագավորությունը Եգիպտոսին տարբեր նպատակների համար տրամադրեց մի քանի միլիարդ դոլար («Ֆայնենշլ թայմսի» տվյալներով՝ 7 միլիարդից ոչ պակաս): Սակայն նա չկարողացավ Սադաթի նկատմամբ ռազմական և բարոյական ներգործություն հանդես բերել, որպեսզի նրան ետ կանգնեցնի: Թագավորությունը բոլոր կապերը չէր կտրել Եգիպտոսի հետ, չնայած պրեզիդենտ Սադաթի հասցրած խիստ վիրավորանքին: Նա չէր փակել օդային հաղորդակցությունը Եգիպտոսի հետ, տուն

չուղարկեց երկրում աշխատող մի քանի հարյուր հազար եգիպտացիների, չարգելեց նրանց հայրենիք փոխադրել դրամը, եգիպտական բանկերում չբռնագրավեց այնտեղ ներդրված սաուդյան միջոցները (իմիջիայլոց, եգիպտացիները կարող էին ուղղակի սառեցնել այդ ավուրները), չարգելեց Եգիպտոսում սաուդցիների մասնավոր ներդրումները կամ այնտեղ ձեռք բերած մասնավոր սեփականությունը: Սակայն Սադաթի սպանությունը Սաուդյան Արաբիայում հանգիստ ընդունեցին:

Սաուդյան Արաբիայում դիրքերի թուլության պատճառը ուժեղացող կախվածությունն է ԱՄՆ-ից այն իրադրության մեջ, երբ և՛ կրոնական, և՛ աշխարհիկ օպոզիցիան առաջ է քաշում հակաամերիկյան կոչեր:

70-ական թվականների վերջին Ծոցի գոտում իրադրության սրումը ստիպեց Սաուդյան Արաբիային ավելի լրջորեն վերաբերվել իր արտաքին անվտանգությանը: Նա համաձայնագիր կնքեց Իրաքի հետ անվտանգության վերաբերյալ, որի հետ տարաձայնություններ ուներ գաղափարական պլանով, ինչպես նաև կոորդինացրեց ներքին անվտանգության միջոցառումները Պարսից ծոցի երկրների հետ:

Սաուդցիները պատրաստակամություն են հայտնում նոր օգնություն ցույց տալ Պակիստանին աֆղանական իրադարձությունների հետ կապված և ֆինանսավորում են աֆղանական խռովարարներին: Թուրքիային միջոցներ տրամադրելով՝ նրանք անմիջականորեն օգնություն են ցույց տալիս ՆԱՏՕ-ին:

ՕՊԵԿ-ի տվյալներով, 1979 թվականին Սաուդյան Արաբիայի կողմից ուրիշ երկրներին տրամադրված օգնության գումարը կազմում էր 1,9 միլիարդ դոլար 1978 թվականի 1,5 միլիարդ դոլարի համեմատությամբ: Ավելացումը տեղի է ունեցել ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի օգնության գծով: Դրա կարևոր պատճառը եղավ արաբական ճակատամերձ պետություններին՝ Սիրիային և Հորդանանին, ինչպես նաև պաղեստինցիներին 1978 թվականի նոյեմբերին Բաղդադի հանդիպման որոշմանը համապատասխան օգնության ավելացումը: Այնուամենայնիվ 1979 թվականի արտաքին օգնության գումարը քիչ էր 1977 թվականի ռեկորդային մակարդակից, երբ այն հասել էր 2,4 միլիարդ դոլարի:

Բացի ճակատամերձ պետություններին և պաղեստինցիներին տարեկան 1 միլիարդ դոլարի չափով անհատույց օգնությունից,

համաձայն 1979 թվականի հունիսի պայմանագրի, ամեն տարի նախատեսվում է մոտ 100 միլիոն դոլար առանձնացնել Եմենի Արաբական Հանրապետության բյուջեն ֆինանսավորելու համար:

Սաուդյան Արաբիան մեծ ներդրումներ է կատարում օգնության բազմակողմանի ֆոնդերում՝ արաբական, իսլամական, ինչպես նաև ՄԱԿ-ին և ՕՊԵԿ-ին կից: 1980 թվականին նա համաձայնվեց 55 միլիոն դոլար հատկացնել ՄԱԿ-ին 1980 և 1981 թվականների պարենային օգնության ծրագրերի համար:

Զարգացման սաուդյան ֆոնդը օգնության մեծ մասը բաշխում է կոնկրետ նախագծերի համար: Մինչև 1978 թվականի հունիսը այդ օգնության ընդհանուր գումարը կազմում էր շուրջ 3 միլիարդ դոլար:

Սաուդյան Արաբիայի կշռի մեծացումը միջազգային գործերում որոշվում է ոչ միայն նրա գլխավոր նավթ արտադրողի դերով սոցիալիստական երկրների սահմաններից դուրս, այլև որպես կապիտալի խոշորագույն արտահանող: Այդ երկրի հզորությունը նրա դրամապանակի մեծությունն է:

Թագավորությունը հատուկ առատաձեռնություն է հանդես բերում երկրների երեք խմբի վերաբերմամբ. որոշ արաբական երկրների (Հյուսիսային Եմեն, Թունիս, Սոմալի, Մարոկկո, Մավրիտանիա, Հորդանան). որոշ մուսուլմանական երկրների, ամենից առաջ Պակիստանի, ինչպես նաև Ինդոնեզիայի, Մալայզիայի, Մալիի ու Նիգերիայի. որոշ արևմտյան երկրների, որտեղ նկատվում է ձախ սպառնալիք:

Սաուդյան Արաբիան արդեն անվերապահորեն փոխառություն չի տալիս: Օգնություն խնդրող յուրաքանչյուր երկրից նա պահանջում է էկոնոմիկայի վերակառուցում: Եգիպտոսը, որտեղ Սաուդյան Արաբիան ֆինանսավորել էր սադաթյան վարչակազմի շրջադարձը էկոնոմիկայում և քաղաքականության մեջ կարուկ դեպի աջ, դրա լավագույն օրինակն է: Էր-Ռիյադի մոտեցումը ամենից հաճախ համաձայնեցվում է Միջազգային վալյուտային ֆոնդի պատվերների հետ, որին Սաուդյան Արաբիան մասնակցում է իր կապիտալներով:

Ինչպիսին էլ լինեն օգնության գումարները, սաուդացիների «առատաձեռնությունները» լայն տարածում են գտնում: Սև Աֆրիկայի ավելի քան 10 երկիր զարգացման համար ֆոնդեր են ստանում, ընդ որում մեծ բաժին է ընկնում Ուգանդային, Մալիին, Նիգերիային, Զաիրին և Գվինեային: Ասիայում Էր-Ռիյադը

օգնում է նաև Բանգլադեշին, Հարավային Կորեային, Մալայզիային և Ֆիլիպիններին: Մինչև իր կործանումը նույնիսկ սայգոնյան վարչակարգը օգնություն էր ստանում սաուդացիներից:

Սաուդյան Արաբիայի ֆինանսական կապերը Արևմտյան Եվրոպայի հետ բացառիկ ամուր են: Էր-Ռիյադի կառավարությունը վիթխարի ներդրումներ ունի անգլիական, շվեյցարական, գերմանական բանկերում և մոտավորապես 20 միլիարդ դոլար է ներդրել եվրոպական անշարժ գույքի և առևտրաարդյունաբերական ձեռնարկություններում:

Փաստորեն սաուդյան ամբողջ օգնությունը գունավորված է հակակոմունիստական մոտիվներով և իսլամի քարոզի խընդիրներով: Սաուդյան կառավարողների հակակոմունիզմը և հակասովետիզմը, որ ձևավորվել է արևմտյան պրոպագանդայի ազդեցության տակ ոչ վերջերս, խոչընդոտում է նրան ճիշտ գնահատելու և՛ իր երկրի շահերը, և՛ Մերձավոր ու Միջին Արևելքի ռեգիոնին սպառնացող վտանգի իսկական բնույթը:

Սաուդյան Արաբիայի իսկական կշիռը միջազգային ասպարեզում այնուամենայնիվ անհամատեղելի է նրա կապիտալի չափերի և այդպիսի «գերիշխանության» «իմիջի» հետ, որ ստեղծել է նրա համար ամերիկյան պրոպագանդան: Դա որոշվում է չորս հիմնական տարրերով: Առաջինը զուտ ռազմական է. չնայած ռազմական տեխնիկային և սպառազինությանը հատկացվող հսկայական ծախսերին, սաուդյան բանակը զգալի ազդեցություն չի ցուցաբերում ռեգիոնի ուժերի հարաբերակցության վրա: Այն ամենից առաջ կոչված է երկրի ներսում օպոզիցիան ճնշելու համար: Երկրորդ խոչընդոտը՝ դեմոգրաֆիկ բնույթ ունի: 4—5 միլիոնանոց հիմնական բնակչություն ունեցող Սաուդյան Արաբիան ուղղակի կադրեր չունի միջազգային ասպարեզում իր քաղաքականությունն իրականացնելու համար: Երրորդ խոչընդոտը էկոնոմիկական կարգի է: Ունենալով այդքան փոքրաթիվ բնակչություն և 2250 հազար քառակուսի կիլոմետր տարածք, ընդ որում ներկայումս մշակվում է այդ մակերեսի միայն 0,2 տոկոսը (այսինքն՝ 4500 քառակուսի կիլոմետր), երկիրը ի վիճակի չէ հասնելու իսկական տնտեսական վերելքի կամ ամբողջությամբ օգտագործելու իր ֆինանսական հնարավորությունները: Վերջապես, չորրորդ տարրը, ոչ պակաս էական, քան նախորդ երեքը, հենց իր վարչակարգի արխաիկությունն է: Սաուդյան «հզորությունը» միջազգային ասպարեզում չափազանց

խաբուսիկ է, ուստի ընդունվում է որպես ինչ-որ անցողիկ, ժամանակավոր, անկայուն մի բան։

Արաբական պետությունները նավթային էկոնոմիկայի համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ մտցնելը նրանց ավելի շատ է պահում կախվածության մեջ միջազգային կոնյունկտուրայի տատանումներից։ Նավթի գների այժմյան անկումը անխուսափելիորեն կրճատում է «նավթադոլարների» հոսքը, ձախողելով տնտեսական պլանները և կառավարող դասի համար նեղացնելով այդ փոփոխություններից հաջողությամբ «աղատվելու» հնարավորությունը։ Այդ երկրներում էականապես իրադրությունն ապակայունացնում է նաև Վաշինգտոնի քաղաքականությունը իր անսքող կայսերական խնդիրներով ու մեթոդներով։ Այդ քաղաքականության անխուսափելի հակազդեցությունը Արաբիայում ժողովրդական շարժումների պարբ արտահայտված հակաամերիկյան բնույթն է, շարժումներ, որոնք անցնում են ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական լոզունգներով։

ՎԵՐՋԱԲԱՆ

Ե՛վ «արագ ծավալման ուժերի», և՛ ԱՄՆ-ի ստրատեգիական ուժերի շտաբներում կա «վերջին ափ» արտահայտությունը։ Ոմանց համար դա նշանակում է Պարսից ծոցի իրական ափագիծը, որը նրանք մտադիր են գրավել։ Մյուսների համար՝ միջուկային աղետ ըստ Նեվիլ Շյուտի «Վերջին ափին» վեպի և Սթենլի Կրամերի՝ միջուկային հայտնության հնարավորության մասին նախազգուշացնող համանուն ֆիլմի։ Սակայն սխալ կլիներ կարծել, թե «արագ ծավալման ուժերի» ենթադրվող օգտագործումը իր մեջ չի ներառում միջուկային զործողությունների անընդհատ և աստիճանական ծավալման պլաններ։ Գնալով շատ է կուտակվում վկայությունը այն բանի, որ ինտերվենցիոնիստական կորպուսի ապագա գործողությունները նախատեսում են առաջինը օգտագործել միջուկային զենքը։ Խոսքը վերաբերում է դրա կիրառմանը նաև զարգացող ժողովուրդների, ոչ միջուկային երկրների դեմ։

Առաջ ամերիկյան զինված ուժերի կանոնադրությունները նախատեսում էին մասսայական ոչնչացման զենքին դիմելու հնարավորությունը, եթե սովորական միջոցները անարդյունավետ դուրս գան։ Ներկայումս, «պատերազմ ցամաքում և օդում» դոկտրինայի համաձայն, որ մտցվել է 1982 թվականին նոր «ԱՄՆ-ի ցամաքային զորքերի 100-5 դաշտային կանոնադրության» մեջ, նախատեսվում է մարտի դաշտում առաջինը օգտագործել միջուկային զենք, որպեսզի նվազագույնի հասցնեն ամերիկացիների կորուստները և շատ վնասներ հասցնեն հակառակորդին։ Պենտագոնի պաշտոնական ներկայացուցիչների խոսքերով, կանոնադրության դրույթները նախատեսված են նաև Պարսից ծոցի ավազանում և Մերձավոր արևելքում պատերազմի համար։ Սակայն, ինչպես խոստովանում են նույնիսկ այդ պլանների հեղինակները, ոչ մի վստահություն չկա, թե միջուկային կոնֆլիկտը կարելի է սահմանափակել որոշակի շրջանակներով և թույլ չեն տա նրան վերածվելու ընդհանուր միջու-

կային պատերազմի։ Միջուկային զենքով զինված «արագ ծավալման ուժերը» ուղղելով Ամերիկայից հեռու գտնվող ափերը՝ ամերիկյան վարչակազմի վերնախավը ամբողջ ժողովուրդների, եթե ոչ ամբողջ մարդկության, հրում է դեպի «վերջին ափը»։

Այսպիսին է պայթուցիկ իրադրության ամենավտանգավոր, հրեշավորության չափ վտանգավոր տեսակետը Պարսից ծոցի գոտում, աշխարհի այդ նավթի շտեմարանում։ Սակայն, եթե նույնիսկ մի կողմ թողնենք միջուկային աղետի հնարավորությունը, միևնույն է, ոչ ոք չի համարձակվի ենթադրել, թե այդ ռեգիոնում իրադարձությունները կարող են հանգիստ զարգանալ։ Ռեգիոնը այնքան ռազմականացված է, այնքան կրքերը շիկացած, այնքան բարձր են Վաշինգտոնի կողմից արված հայտարարությունները։

Պարսից ծոցի վերաբերյալ պատմությունը չի կարող ո՛չ սպառիչ լինել, ո՛չ ավարտուն։ Ժամանակը նոր փաստեր և վկայություններ կբերի, որոնք լրացուցիչ լույս կսփռեն հայտնի իրադարձությունների վրա կամ կբացահայտեն առայժմ չոր կնիքով կնքված փաստերի ետևում գտնվող մանրամասեր։ Փոփոխությունների գլխապտույտ տեմպը հնացած է դարձնում այս գրքում շարադրված որոշ եզրակացություններ և դիտողություններ։ Սակայն եթե ընթերցողը զգա Պարսից ծոցի գոտում իրադարձությունների բուն բարդությունը, բազմաշերտությունը, խճճվածությունը, եթե պարզվի, որ հեղինակին հաջողվել է գտնել այդ ռեգիոնի պրոբլեմի կծիկը կազմող գլխավոր թելը, ապա կարելի է համարել, որ նրա խնդիրը կատարված է։

Մի բան ևս։ Եթե տասնհինգ տարի առաջ Պարսից ծոցի վերաբերյալ մեզ մոտ գրում էին երկու-երեք հետազոտողներ, ապա հիմա հայտնվել են ոչ քիչ նոր անուններ։ Տեքստում հիշատակված սովետական հեղինակները չեն սպառում ցուցակը։ Սակայն, նկատի ունենալով տվյալ գրքի բնույթը, այն, որպես կանոն, չի ծանրաբեռնվել մեջբերումներով։

Պարսից ծոցի գոտու միջազգային նշանակությունը, մեր ընթերցողի հետաքրքրությունը նրա հանդեպ, անկասկած, երևան կբերեն այդ թեմային նվիրված նոր աշխատանքներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
1. «Յոթ քույրերը» ՕՊԵԿ-ի դեմ	7
2. Էներգետիկ ճգնաժամ I	39
3. Էներգետիկ ճգնաժամ II	61
4. ՕՊԵԿ-ի ֆինանսական հնարավորությունները	**97**
5. Վաշինգտոնի նոր ստրատեգիայի որոնումները	118
6. Իրաք. ստորերկրյա ցնցումներ	135
7. Իրաք. «Սիրամարգի գաճի» խորտակումը	167
8. «Քարտերի դոկտրինան»	186
9. Ամերիկյան պատանդները	211
10. Իրան-Իրաք. անհմաստ, եղբայրասպան պատերազմ	244
11. Ռեյգանը խստացնում է կուրսը	256
12. Արաբիան արխաիզմի և այժմեականության միջև	**282**
Վերջաբան	357

Ալեքսեյ Միխայլովիչ Վասիլև

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԸ ՓՈԹՈՐԿԻ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Алексей Михайлович Васильев

ПЕРСИДСКИЙ ЗАЛИВ В ЭПИЦЕНТРЕ БУРИ

(На армянском языке)

Ереван, «Айастан», 1986

Խմբագիր՝ Շ. Ա. Գրիգորյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Ս. Սարգսյան
Նկարիչ՝ Հ. Ս. Մալխասյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Գևորգյան

ИБ—4677

Հանձնված է շարվածքի 23. 10. 1985 թ.։
Ստորագրված է տպագրության 4. 07. 1986 թ.։
Թուղթ տպագրական՝ № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 18,9 պայմ. տպագրական մամ.։ 19,11 պայմ. ներկ. թերթ, 17,45 հրատ. մամուլ։ Տպաքանակ՝ 20000։ Պատվեր՝ 2515։ Գինը՝ 70 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

9(55)
Հ-26

Պարսից ծոցի ավազանի երկրները ծանրաբեռնված են տարբեր բնույթի կոնֆլիկտներով, նրանցում ներգրավված են գլխավոր իմպերիալիստական պետություններ և տեղականտոհմացեղային միավորումները, հետախուզական ծառայությունները և գաղտնի կրոնական համայնքները: Վաշինգտոնի չանհերով ռեգիոնը այնքան ռազմականացված է, կրճերև այնքան շիկացած, որ ոչ ոք չի կարող նրա համար իրադարձությունների հանգիստ զարգացում կանխագուշակել: